

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**X X
2 0 1 7**

Գյումրի 2017

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998)*

ISSN 1829-4316

Գլխավոր խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ.(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր), Ավետիսյան Պ.Ս.(ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ, պատմ. գիտ. դոկտոր), Բաղիկյան Խ.Գ.(բան. գիտ. դոկտոր, պրոֆե-
սոր), Եզանյան Լ.Գ.(պատմ. գիտ. թեկնածու), Խաչատրյան Լ.Մ.(բան. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր), Խաչիկյան Գ.Վ.(բան. գիտ. դոկտոր), Հարությունյան
Հ.Հ. (արվեստագ. թեկնածու, պատասխանատու քարտուղար), Մելքոնյան
Ա.Ա. (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Պետրոս-
յան Ս.Գ.(պատմ. գիտ. դոկտոր), Սահակյան Կ.Ա.(հոգեբ. գիտ. թեկնածու),
Քոսյան Ա.Վ.(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

Ժողովածուն ընդգրկված է ՀՀ ԲՈՂ-ի թեկնածուական ատենախոսությունների հիմնա-
կան արդյունքների և դրույթների հրապարակման համար ընդունելի պարբերական հրա-
տարակությունների ցանկում:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5
Հեռ. +374 /312/6 94 77, +374/94/411-228

Էլ. փոստ՝ hkentrion@mail.ru
կայքէջ՝ www.shirakcenter.sci.am

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
X X
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2017 Gyumri

“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)

The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998)

ISSN 1829 - 4316

Главный редактор: доктор филологических наук
С. А. АЙРАПЕТЯН

Редакционная коллегия: Абрамян Л. А.(член-кор. НАН РА, кандидат ист. наук, профессор), Аветисян П.С.(член кор. НАН РА, доктор ист. наук), Арутюнян А.Г.(кандидат искусствовед., ответственный секретарь), Бадибян Х.Г.(доктор фил. наук, профессор), Еганян Л.Г.(кандидат ист.наук), Косян А.В.(доктор ист. наук, профессор), Мелконян А.А (академик НАН РА, доктор ист. наук, профессор), Петросян С.Г.(доктор ист. наук), Саакян К.А(кандидат псих. наук), Хачатрян Л.М.(доктор фил. наук, профессор), Хачикян Г.В.(доктор фил. наук)

Editor-in –chief: Doctor of Philological Sciences
S. A. HAYRAPETYAN

Editorial board: L.H. Abrahamyan(Corresponding member of NAS RA, Candidate of Historical Sciences, professor), P.S. Avetisyan(Doctor of Historical Sciences), Kh. G. Badikyan(Doctor of Philological Sciences, professor), L.G. Yeganyan (Candidate of Historical Sciences), L.M. Khachatryan (Doctor of Philological Sciences, professor), G.V. Khachikyan (Doctor of Philological Sciences), H.H. Harutyunyan(Candidate of Art Studies, responsible secretary), A.A Melkonyan(Academican of NAS RA, Doctor of Historical Sciences, professor), S.G. Petrosyan(Doctor of Historical Sciences), K.A. Sahakyan (Candidate of Psychological Sciences), A.V. Qosyan (Doctor of Historical Sciences, professor)

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5

Address: 3101, 5 V. Sargsyan Street Gyumri, RA

тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228

E-mail: hkentron@mail.ru

hppt: www.shirakcenter.sci.am

Միրելի՛ ընթերցող,

Ուղիղ 20 տարի առաջ սեղանիդ հայտնվեց անձանթ մի գիրք, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նորաստեղծ կառույցի՝ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի անդրանիկ հատորն էր: Դու նրան կանաչ ճանապարհ ցանկացար:

Գիտական այս հրատարակության ծնունդը Գյումրիում ջերմորեն ողջունեցին նշանավոր հայագետներ Վլադիմիր Բարխուդարյանը, Լևոն Հախվերդյանը, Արամ Քալանթարյանը, Սարգիս Հարությունյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Մեն Արևշատյանը և ուրիշներ՝ նաև հուսալով, որ ոչմայրաքաղաքային ակադեմիական կառույցի պատվախնդիր ու հաստատակամ երիտասարդ գիտնականների հանրային ջանքերով ժողովածուն շարունակական կլինի՝ դառնալով հիրավի առաջին հայագիտական պարբերականը Շիրակի պատմության մեջ:

Այդպես էլ եղավ. Շիրակի Հայագիտականի յուրաքանչյուր գիտաշխատողի համար այն ավելին է, քան ինչ-որ ժողովածու, այն իր ինքնության մի մասն է, իր հպարտությունը, շատերի համար՝ իրենց գիտական կենսագրության սկիզբն ու ընթացքը: Նրա հատորներում տեղ են գտել Կենտրոնի գիտաշխատողների երեք հարյուրից ավելի հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ: Այդ հատորներում «հյուրընկալվել են» նաև հանրապետության բազմաթիվ անվանի բանագետներ ու ազգագրագետներ, լեզվաբաններ ու գրականագետներ, պատմաբաններ ու հնագետներ, ակադեմիական և բուհական համակարգերի երիտասարդ գիտական կադրեր, արտերկրի շուրջ հինգ տասնյակ հայ և այլազգի գիտնականներ: Ժողովածուի հաջողվածության գաղտնիքը նաև նրա խմբագրակազմի աշխատանքի մեջ է, որում քիչ չեն հանրապետությունում ճանաչված հայագետները՝ Աշոտ Մելքոնյան, Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Լալիկ Խաչատրյան և այլք:

Ժողովածուն եղավ նաև արգասաբեր հարթակ այս բոլոր տարիներին Կենտրոնում իրականացված բուռն հրատարակչական գործունեության համար. նրա հիմքի վրա ձևավորվեց «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» մատենաշարը, և տպագրվեցին նրա՝ ամբողջական ու ավարտուն աշխատանքներ պարունակող առաջին պրակները, շուրջ 3 տասնյակ մենագրություններ, առանձին գրքերով լույս տեսան Կենտրոնի ուժերով Գյումրիում պարբերաբար գումարվող Շիրակի պատմաաշխատության ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովների կուրսերը: Ժողովածուն այսօր հայագետների շրջանում վաստակած հեղինակություն վայելող, որոշակի գեղագիտական սկզբունքներ դավանող ու բարի ավանդույթներ ունեցող հրատարակություն է՝ ընդգրկված ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունված պարբերական ժողովածուների ցանկում:

Միրելի՛ ընթերցող, այսօր քո սեղանին է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իր քսանամյակը բոլորած Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի արդեն քսաներորդ՝ ասել է թե՛ հոբելյանական հատորը: Իբրև արդարադատ բարեկամ ու անկաշառ ընդդիմախոս՝ նորանոր հատորներ մաղթիր ժողովածուին....

*Գլխավոր խմբագիր՝
բան. գիտ. դոկտոր Սերգո ՀԱՅԼՄԱՆԵՏՅԱՆ*

*Էսթեր ԽԵՄՉՅԱՆ**ԱՌԱԾ-ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐԸ, ԵՐԴՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՐՉՎԱԾՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ԱՏԱԴՁ ԿԱՐՄԻ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ*

Առածային մտածողության ինքնատիպությունը հնարավորություն է ստեղծում հեքիաթապատման դրվագների խորքային, թաքնված հատկանիշների վերհանմանն ու մեկնաբանմանը՝ ըստ պատումի տեղայնացված պահանջների: Ըստ այդմ, պատմագագադրական յուրաքանչյուր տարածաշրջան առաջադրված խնդիրը լուծում է սեփական բարբառի և խոսվածքի հնարավորության սահմաններում կիրառելով տեղական ասույթաբանական-բանաձևային միավորներ: Այս տեսակետից Կարսի տարածաշրջանի հեքիաթներում ասույթաբանական բանահյուսության ժանրերը հմտորեն կիրառվել են հեքիաթի համատեքստում՝ նպաստելով պատումի հերոսների գործողությունների և անհատական բնութագրումների դրական ու բացասական պատկերմանը:

Քննության առնելով ասույթաբանական ժանրերի՝ առած-ասացվածքների, երդումների, դարձվածների և բարբառային տարաբնույթ արտահայտությունների կիրառությունը Կարսի հեքիաթներում՝ փորձենք բացահայտել դրանց կիրառման դրդապատճառներն ու խաղացած դերը հեքիաթի կառուցվածքում:

Առած-ասացվածքները համայնում են հեքիաթային կայուն բանաձևերի շարքը և իրենց իմացական ու ճանաչողական բնույթով հնարավորություն են տալիս բնորոշելու հեքիաթի հերոսների վարքագիծը, գործողություններն ու իրադարձությունները գնահատելու և ամփոփելու եզրակացություն-բանաձևով:¹ Առած-ասացվածքների այլաբանական իմաստի, վերաիմաստավորված փոխաբերական արժեքի, փաստերի ընդհանրացման կարողությունների բնույթը նպաստում է դրանց առատ կիրառմանը հեքիաթների թե՛ սկզբնամասում, թե՛ միջնամասում և թե՛ եզրափակիչ հատվածում:

Կարսի հեքիաթներում հիմնականում կիրառվում են հերոսի վարքագծի դրական և բացասական հատկանիշների բարոյախրատական գնահատմանն ուղղված առած-ասացվածքներ, որոնք լավագույնս բնութագրում են տվյալ պահն ու հերոսին: Օրինակ՝ «Տղեն փոր ու փոշման կերթա տուն, չայրեն կախ, էնպես, օր

¹ Խեմչյան Է., *Տավուշի ասույթաբանական բանահյուսությունը (ըստ 1970-90-ական թթ. հավաքած նյութերի)*, Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի հողվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2015, էջ 189-205:

լուն երեսից ընկնի, հազար կըտոր կեղնի»:² Կամ՝ «Շատ լավ կեղնի, մենձի խոսքը անկաջ չէնողի ոտքը քարին կուքա: Հըլը էնքան բալ-բալեք քաշես եղ ճուղի էրեսեն»:³ Դժվար է պատկերացնել, թե իր միկրոսկոպիկ չափերով լուն ինչպես պետք է հազար կտոր լինի, սակայն երեսից գետնին ընկնելու տարածության և անկման արագության մասին ժողովրդափորձառական գիտելիքներն ապահովել են համեմատության եզրը՝ հնարավորություն տալով ընդգծելու հերոսի անկումային տրամադրության գերադրական չափը, որը հակադարձ համեմատական է լվի մեկ հազարերորդական մասի հետ:

Հաջորդ օրինակում այլաբանական բանաձևը մատնանշում է այն հերոսին, որը, անտեսելով տարեցի ու փորձառուի խորհուրդը, անհաջողության է մատնվում: Իր էությանբ այս բանաձևը «չգրված օրենքի» նշանակություն ունի, որը ոչ միայն բանավոր ավանդվել է, այլև կիրառվել է կենցաղում, ընտանեկան և հասարակական հարաբերություններում:

Որոշ առած-ասացվածքներ իրենց նշանակությամբ ու հեքիաթային իրադրությունները բնութագրող առանձնահատկությամբ ձեռք են բերում կայուն բանաձևի արժեք և դառնում ցանկացած հեքիաթի նմանօրինակ երևույթների ներկայացման չափանիշ և կարող են նույն ձևակերպմամբ կրկնվել տարբեր հեքիաթներում: Օրինակ՝ «Դամրդողորան, էսօր ես մենե, թե՛ էրեկ, ուշքը կերթա»:⁴ Կամ՝ «Մերը կըսե.՝ Ես քեզի չըսեցի՞, օր հում կաթնակերին էյթիբար չկա, տեսա՞ր, օր իմ ըսածը էղավ»:⁵ Ժողովրդական պատկերացումներում և ասույթաբանության մեջ կաթնային սնուցումը դիտարկվում է ն՝ դրական, և՛ բացասական մոտեցումներով, ըստ որի՝ տարբերակվում են «հալլա կաթնակեր», այսինքն՝ առաքինի և «հարամ կամ հում կաթնակեր», այսինքն՝ տհաս և անվստահելի անձ: Այս դեպքում հեքիաթի հերոսի վարքը ներկայացվում է այլաբանորեն:

Հասարակական սանդղակում կնոջ ստորակարգ և իրավագուրկ վիճակը ցայտունորեն արտահայտվել է նաև առած-ասացվածքներում: Այդ իսկ պատճառով կին-հերոսների վարքագիծը, բացասական հատկանիշները, հասարակության մեջ ստորադաս վիճակն ընդգծելու համար հեքիաթներում բանասացները հաճախ դիմում են առած-ասացվածքների օգնությանը, օրինակ՝ «...խընդա գը: «Դորդ կըսեն, օր կընկա մագերը էրկան է, խելքը՝ կարճ, ավելի մեջ հոգի կեղնի»,- կըսե Ջանսրզը»:⁶ Կամ՝ «Էն ծեր մարդը էլի կուգա, ժամի պատը կպակե, կըսե.՝ Աստված, դու կնկա շատից հեռու պահես:

Փինաջին կըսե.-Ամեն, ամեն»:⁷ Կամ՝ «Էդոր համար կըսեն՝ կընգա բերանը չիր չի թըռչըվի»:⁸ Ըստ ժողովրդական պատկերացումների՝ խելքը, խելացիու-

² Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Կազմողներ՝ Ս. Հարությունյան, Է. Խեմյան, Մ. Խեմյան, Ա. Պողոսյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013 (հետայսու՝ Կարս), «Չոփճու տղի հեքիաթը», № 5(5), էջ 59:

³ «Չոփճու տղի հեքիաթը», № 5(5), Կարս, էջ 59:

⁴ «Օխտ ախպոր քուրը», № 10(10), Կարս, էջ 90:

⁵ «Ասլանգադեի հեքիաթը», № 11(11), Կարս, էջ 102:

⁶ «Ջանսրզը», № 8(8), Կարս, էջ 78:

⁷ «Կնկա շատը», № 59(59), Կարս, էջ 294:

թյունը (նաև անհեռատեսությունը) պայմանավորված են կնոջ մագերի երկարությամբ, հետևաբար կարճամագ տղամարդն առավելություն ունի և գերադաս է: Մա պատմականորեն ձևավորված և կնոջը պարտադրված սոցիալական անհավասարության կարծրատիպն է, որը կինը խորամանկությամբ, խաբեությամբ, լաչառությամբ, բամբասկոտությամբ փորձել է հաղթահարել:

Մակայն պատումներում հաճախ ընդգծվում է, որ կինը ոչ միայն խորամանկ է, բամբասկոտ ու անզգամ, այլև կարող է համադրել իր ազահ ամուսնու և խեղճուկրակ մշակի անտրամաբանական գործողությունների հետևանքով առաջացած տրագիկոմիկ վիճակի փաստերը և դիպուկ եզրակացություն անել. «Աղի կընիզը մըջկին աշեց, աշեց, ըսավ.– *Հա քու խելքը, հա աղի խելքը ու իմ պորդի խելքը մեկ է*»⁹ Դրանով իսկ հավասարության նշան դնելով տարաբնույթ անհեթեթ արարքների միջև՝ ընդգծելով դրանց ոչ տեղին լինելը և կասկածի տակ դնելով տղամարդու կարծեցյալ առավելությունը:

Մեծ մասամբ Կարսի հեքիաթներում կիրառվում են բարոյախրատական առած-ասացվածքներ՝ որպես հեքիաթային գործողությունների եզրափակիչ ամփոփում, որը միաժամանակ նաև ուսուցողական նպատակ է հետապնդում, օրինակ՝ «Թագավորը կըսէ.– Աղջիկս, ի՞նչս կրնամ խրատէ: *Կաթի հետ մտածը հոգու հետ դուս կուգա, սնին սապոնը ի՞նչ անէ, խնին՝ խրատը*»:¹⁰ Կամ՝ «...Էսման օյին խաղցավ գըլխուս: *Աստծու արդարութենը չի կորի, լավութեն էնողի լավութենը չի կորի, գուլում էնողին գուլում ռաստ գուգա*»:¹¹

Հեքիաթի ընթացքից բխող եզրակացություն-առած-ասացվածքներն առավելապես բնորոշ են հեքիաթապատումի ավարտին: Հեքիաթի եզրափակիչ կայուն բանաձևերին հավելելով՝ դրանք արժևորում են հեքիաթի դերը՝ դրան վերագրելով նաև բարոյախոսությամբ ու խրատներով բարոյական արժեքներ ուսուցանելու կարևոր ու գործնական առաքելություն, օրինակ՝ «Թագավորը կընիկն էլ, էշն էլ կուտա էս մարդուն, ճամբու կը դնէ: Քոռին էլ կը վոնդէ, թե.– Կորի, գնա, էդոր հըմար են ըսել՝ *քոռից, թոփից, քաչալից հեռու փախեք*»:¹² կամ՝ «Ղորթ է ըսած՝ *լավութեն էրա՝ դենդը գուգա*: Էդ չոփչին կատվի ձագին, շան թուլին ու օձի ձագին հացի փարեն տըվել է էդ խուլիկաններին, իրանք անոթի էին մընացէ, էդոնց փըրկէ կը: Հըմը են էլ ըսեմ՝ շունը, կատուն ու օձը՝ էդոնք էլ, *տակը չը մընացին, իրանք էլ իրանց լավութենը էրին: Բարին բարության հետ է, չարը՝ չարության*»:¹³

Հեքիաթային եզրափակիչ բանաձևերում կիրառվող առած-ասացվածքները կառուցված են «բումբերանգի էֆեկտի»՝ չարի ու բարու ելման կետին վերադառնալու առանձնահատկությամբ, սովորաբար լավատեսական տրամադրվածություն ունեն, ավետում են բարու հաղթանակը և չարի կործանումը:

⁸ «Էրկու կըճուճ օսկին», № 68(68), Կարս, էջ 308:

⁹ «Չախորդ մարդը», № 66(66), Կարս, էջ 301:

¹⁰ «Թագավորի աղջկա և գող Ասլանի հեքիաթը», № 24(24), Կարս, էջ 155:

¹¹ «Չոփչին», № 20(20), Կարս, էջ 145:

¹² «Քոռի շարը», № 57(79), Կարս, էջ 292:

¹³ «Չոփչին», № 20(20), Կարս, էջ 145:

Արդեն կիրառությունից զրեթե դուրս եկած չափածո եզրափակիչ բանաձևերում ևս առած-ասացվածքները մեծ դեր են ունեցել: Դրանք ոչ միայն ամբողջացրել ու հստակեցրել են ասվելիք եզրակացությունը, այլև հնարավորություն են տվել միտքը չափածո վերարտադրելու: Օրինակ՝ «Մեկն էլ վերցնե՛ կրսե՛:

Օջխար ու կով բիթթուն կթուկ,
Ասիկ ալ ան չէ, ատիկ ալ ան չէ,
Խուփ գլորավ, գտավ պուտուկ,
Ասիկ ալ ան չէ, ատիկ ալ ան չէ:

Նոր կը տեսնին, *օր գեշը գեշին գտել է*, պսակեն, կտոնեն կերթան»¹⁴:

Բնագրերի դիտարկումից ակնհայտ է դառնում, որ Կարսի հեքիաթներում առած-ասացվածքները իրագործել են բարոյախրատական, ուսուցողական, գեղարվեստական խնդիրներ և ծառայել որպես ատաղձ ավանդական կայուն բանաձևերի ձևավորման ընթացքում:

Կարսի հեքիաթներում բանասացները երբեմն օգտագործել են նաև թուրքերեն առածներ, որոնք փոխադարձ շփումների և ազդեցությունների հետևանք են: Ինչպես հավաստում է Կարսի առածներից մեկը. «Թուրքը անիձած է, խոսքը օրշնած է»,¹⁵ որում ընդգծված է խոսքի դրական դերը՝ անկախ ազգային պատկանելությունից: Թուրքերի հետ ունեցած պատմական, քաղաքական, կենցաղային շփումներն անդրադարձել են բանահյուսական սյուժեների վրա:

Բանասացներից ոմանք կա՛մ տիրապետել են թուրքերենին, կա՛մ էլ վերարտադրել են այնպես, ինչպես լսել են, ուստի երբեմն պատումներում օգտագործել են թուրքերեն բառեր, արտահայտություններ, առած-ասացվածքներ, օրինակ՝ «Թագավորի աղջիկը էս օր կը տեսնի, ճըչա ու կընկնի գետին, կուլա, կը ողբա, մագերը կը պոկոտե, հըմա ի՞նչ կրնա էն: *Գետտի գյուլ, գետտի բըլբուլ, իստար աղլար, իստար գյուլ* (գնացողը գնաց, էլ ետ բերել չի էղնի)»:¹⁶ Կամ՝ «Կերթան Շեհրուտունը, կը տեսնին, օր դուռ ու փանջիրա՝ փակ, մարդ չկա՝ *լալա քոչմիշ, յուրդի բոշ* (կակաչը գաղթել է, տեղը դատարկ է)»:¹⁷

Հեքիաթներն ու սիրավեպերը կազմում էին Կարսի աշուղների կատարողական երկացանկի զգալի մասը: Շրջիկ հայ և թուրք աշուղները հավասարապես հանդես էին գալիս թե՛ հայկական, թե՛ թուրքական գյուղերում, հետևաբար իրենց պատումներով նպաստում էին հայերենի և թուրքերենի միախառնմանը: Բանասացներից ոմանք որպես իրենց պատումի սկզբնաղբյուր մատնանշում էին շրջիկ կամ տեղացի աշուղից լսած և սովորած լինելու հանգամանքը, որով և պայմանավորված էր թուրքերենի առկայությունը հեքիաթապատման մեջ: Ավագ սերնդի բանասացների պատումներում հանդիպող թուրքերեն առած-ասացվածքներն ու արտահայտությունները կրտսեր սերնդի բանասացների պատումներում իրենց տեղը զիջել են հայերեն համարժեքներին:

¹⁴ «Ասիկ ալ ան չէ», № 72(72), Կարս, էջ 312:

¹⁵ Կարս, Առած-ասացվածքներ, № 291(833), էջ 552:

¹⁶ «Փիր Ահմադի հեքիաթը», № 4(4), Կարս, էջ 54:

¹⁷ «Մեհրի և Շեհրի», № 46(46), Կարս, էջ 276:

Կարսի հեքիաթներում ասույթաբանական ժանրերից օգտագործվում են նաև երդումները: Երդումները՝ որպես ցանկության խոսքեր, կոչված են դիմացինին հավաստիացնելու ասացողի իրավացիությունը: Դրանց հիմքում նույնպես ընկած է խոսքի հմայական գործության գաղափարը, որին հենվելով՝ ասացողը վկայակոչում է անտարկելի ու հանրության կողմից ընդունված սրբություններ: Հեքիաթասացությունը միաժամանակ ունկնդրին գիտելիքներ է հաղորդում տարաբնույթ երդումների գոյության մասին, ըստ որի՝ ենթադրվում է, որ կան երդման բանաձևեր՝ դիմացինին մոլորության մեջ գցելու, ճշմարտությունը կեղծելու համար (կեղծ կամ սուտ երդում) և կան սուրբ արժեքներ, որոնց վկայակոչումն արժանահավատ է դարձնում երդվողի խոսքը, օրինակ. «Ինչքան երդում կուտե, թե թող, ես քուկդ եմ, դու՝ իմը, չհավատաս: Եթ օր կըսե՝ *հացն ու գինին, տեր կենդանին վկա*, բան չես ըսե»:¹⁸

Երդման հմայական բնույթը ենթադրել է տալիս, որ այն ուղեկցվել է խոսքը լրացնող ծիսական շարժումներով: Դրա կիրառման տեղը, ժամանակը, միջավայրը խիստ կանոնակարգված չեն և օգտագործվում են ըստ պահի անհրաժեշտության: Դատելով հեքիաթներում առկա երդումներից՝ ակնհայտ է դրանց կապը հնագույն հավատալիքներին, հատկապես դրանց կիրառությունը պայմանավորված է բազմաբնույթ ոգիների գործության նկատմամբ ունեցած երկյուղի ու հավատի գիտակցությամբ: Որպես երկրագործական մշակույթի տարրեր՝ հայկական միջավայրում հացի ու գինու պաշտամունքի արմատներն աղերսվել են նախնական բնապաշտական ըմբռնումներին:¹⁹ Հաց, գինի, տեր կենդանի եռամիասնությամբ երդման գործառույթը եռակի համոզիչ ու արժանահավատ է դարձնում երդվողի խոսքը: Հացը մեռնող և հարություն առնող ցորենհատիկի վերջնական դրսևորումն ու սրբազան կենդանություն պարգևողն է: Գինին, ըստ ավանդության²⁰ ու հնագույն ընկալումների, մարդասպան և ոչնչացնող էության կրող է, որի հետագա օգտագործման փորձառությունը հանգեցրել է չափավոր քանակի կիրառման օգտակարությանը: Գինու կենդանարար հատկությունն ամփոփված է չափավոր քանակի մեջ: Վերոհիշյալ հատկությունների շնորհիվ հացն ու գինին ընկալվել են որպես հավատալիքային այնպիսի սրբազան արժեքներ, որոնց վկայակոչումն ամրապնդում է երդման բանաձևի ցանկալի հետևանքը: Ուստի հացի և գինու վկայակոչմամբ երդումներն առաջնային դեր ունեն և խարսխված են դրանց կենդանություն պարգևող հատկանիշի վրա, օրինակ. «Էս հաճը վրգա», «Էս տակ հաճը հաչկերըս քոռնե», «Տակ հաճի կարող էղնիմ»,²¹ «Գինին հայի հավատն է»²²: Կենդանության բաղձալի գործառույթի գերադրական աստիճանն ամփոփված է «տեր կենդանի» բանաձևման մեջ, որը երդումը եռակի գորավոր է դարձնում: «Տեր կենդանի» արտահայտության տակ ընկալվում է հավերժական կենդանությամբ ու

¹⁸ «Յաշիֆիդան և Չնաշիարիկ», № 3(3), Կարս, էջ 49:

¹⁹ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 232:

²⁰ Տե՛ս ՀԱԲԲՍ, Ա. Հովակիմյանի ֆոնդ, «Աշտարակի բանահյուսություն» հավաքածու:

²¹ Կարս, Երդումներ, № 5(1585), 7(1587), 22(1602), էջ 572-573:

²² Ղանալանյան Ա., Առաձանի, ՀՄՄՈՒ ԳՍ հրատ, Եր., 1960, էջ 286:

գորությամբ օժտված աստվածային էությունը: Ոգիների ու աստվածների ամենուր անտեսանելի ներկայության հավատալիքը մարդուն հնարավորություն է տվել երդմամբ վկայակոչելու նրանց՝ իր ճշմարտացիությունը հաստատելու և խոստացված գործն ազնվորեն ավարտելու համար, օրինակ. «Հավատա, *երդվում եմ իմ ու քու արևով, երդվում եմ աստու աննով*, օր ես էնոր հետ լեզու չը թաթխեմ: Առավոտ բերեմ թափիմ էնեմ քեզի»:²³ Երդման համատեքստում արևի և աստծո վկայակոչումն այն բարձրակետն է, որ անառարկելի է դարձնում երդվողի խոսքը:

Երդում-բանաձևերի հատուկ խումբ են կազմում հերոսի անտեղյակությունը հավաստող կայուն կաղապարները. «Ախպերը ային-բեյին կեղնի, կըսէ-*Երկինք-գետինք, ես էս բանից խաբար չեմ*»:²⁴ Երդման սույն տարատեսակը բաղկացած է երկու մասից. առաջին մասում ներկայացվում է վկայակոչվողը, որի հեղինակությամբ պայմանավորված են խոսքի արժանահավատությունն ու ճշմարտացիությունը, երկրորդ մասը՝ «ես էս բանից խաբար չեմ», ներկայացնում է երդվողի անտեղյակությունը, որը նրան ազատում է պատասխանատվությունից:

Կարսի հեքիաթներին բնորոշ են նաև հավատարմության երդումների կիրառումը, օրինակ. «Էրդում կուտեն՝ *մեռնին՝ իրար հետ, ապրին՝ իրար հետ*»:²⁵

Այսպիսով՝ ծիսահմայական բանաձևերի գերբնական գործության հավատալիքով է պայմանավորված հեքիաթի համատեքստում դրանց կիրառությունը: Երդում-բանաձևերը նոր երանգ են հաղորդում հեքիաթին և անհրաժեշտ հավաստիություն՝ հերոսի խոսքին:

Հայերենի բառակազմական եղանակներից մեկը բառահարադրությունն է, որը բառազանձը համալրելու ու հարստացնելու տեսակներից մեկն է:²⁶ Իմաստային և իմաստաբանական լայն ընդգրկում ունեցող մի քանի բառերի միավորմամբ ձևավորված և նոր իմաստ ձեռք բերած լեզվական բանաձև-կաղապարները հեքիաթի համատեքստում ծառայում են պատկերավորման, համեմատության, հոգեվիճակի բացահայտման, այլաբանության, ծածկախոսության և այլ առումներով: Նմանօրինակ վերաիմաստավորված կայուն կապակցություններն ընդունված է անվանել դարձված:²⁷ Կարսի հեքիաթներն առանձնանում են դարձվածների բազմազանությամբ, որոնք տեղական լեզվամտածողության և բառակապակցությունների ձևավորման հարուստ ավանդույթի արդյունք են: Կարսի տարածաշրջանի ժողովրդախոսակցական լեզվին և բարբառին բնորոշ դարձվածների բազմազանությունը հեքիաթներում ներկայացված է մի քանի տարատեսակներով.

ա) Ծածկախոսություն-այլաբանություն, որը փոխաբերական իմաստով է արտահայտում ասելիքը՝ կարծես նպատակ ունենալով կա՛մ մեղմացնել, կա՛մ ու՛մանց համար բուն ասելիքը քողարկել, օրինակ. «Կանցնի խելի վախտ, ախճկա վի-

²³ «Իմաստուն Խիկարի խրատը», № 77(74), Կարս, էջ 314:

²⁴ «Աղունիկի հեքիաթը», № 27(27), Կարս, էջ 175:

²⁵ «Հարամը բինա չի բոնէ», № 49(49), Կարս, էջ 283:

²⁶ Մարգարյան Ալ., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 69:

²⁷ Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., էջ 5-12:

ճակը կը փոխվի. օրից օր *գոգնոցը կը կարճնա*,²⁸ կամ «Զաթի ինքըն էլ պատվըցել էր, *արևը կուտա սաղ մընացողներին*, տըղեն էլ դառնա կը թաքավոր»²⁹:

բ) Զգացմունքների արտահայտման վերախմաստավորված ձևեր, օրինակ. «Տեսնում եմ էտոնք ձիանը քշում են հերկերի միջով, չամոների միջով, *աչքիս լուսը թափվում է առաջս*, համա ի՞նչ կրնամ էնե»:³⁰ «Օր տեսնում եմ, *կրակը լցվում է ջանս*, համա ի՞նչ էնեմ, ձեռս ճար չկա»,³¹ «Պատավը օսկին օր կը տեսնի, *ուրախությունից ոտները գետնից կը կտրի*»:³² Բերված օրինակներում մարմնի մասերի օգտագործմամբ ձևավորված դարձվածները ոչ միայն դրանց ֆունկցիոնալ գործունեությունն են արտահայտում, այլև ընդհանրացված և վերացարկված նշանակության իմաստային տարատեսակներ են ի հայտ բերում:³³

գ) Հավատարմության, երախտագիտության, տրված խոստումը պահպանելու անհրաժեշտության՝ իմաստների այլաբանական դրսևորումներ, օրինակ. «Ումուտը հարի մեռնելը *հալալ-գուլալ դուլուղ կենե* էր թաքավորին»:³⁴ «Էլնրմ, գալըմ է ու մղաձըմ է ինքն իրան, թե. «Իսանն էլ կոդոշ ունենա՞»: *Կերցավ է էղնրմ, ընգնրմ է ջանր*, օրեցօր մաշըմ, էլնրմ է չոփ»:³⁵ Ժողովրդական մտածողությամբ և չգրված օրենքներով արված լավության երախտագիտությունը մեկ սերնդի փոխհատուցմամբ հնարավոր չէ մարել, հետևաբար հետագա սերունդներն էլ են պատասխանատվություն կրում. «Է՛, աղա ջան, էս լավությունն օր դու ընձի կենես, էս *քանի սաղ ու կենդան եմ*, էտր տակից չեմ կրնա դուս գա: *Պորտոց պորտ քեզ պարտական կը մնանք*»:³⁶

դ) Համեմատություն, որը պատկերավոր ձևով արտահայտում է տվյալ հեքիաթային պահի դրամատիզմը, օրինակ. «Հըմա Շահենշահի *սրտին դանակ գարկեյին, արուն չէր գա*»:³⁷ Կամ՝ «Համա *աղջիկը էրկու ոտը դրել է մե մաշիկի մեջ*.– Չէ՛, օր չէ, էդ բանը չի էղնի»³⁸:

ե) Կարսի հեքիաթներին բնորոշ են նաև կրկնվող բաղադրիչներով դարձվածները, որոնք շեշտում, սաստկական իմաստ են հաղորդում արտահայտված մտքին՝ ընդգծելով դրա կարևորությունը տվյալ համատեքստում, օրինակ. «Կերթա կը տեսնի, *ային-բեյին կէղնի*, կըսե...»³⁹, «Պատավը կայնե, էր տըղին *մաթա-մաթա կաշե...*»⁴⁰, կամ՝ «Մերը շատ *յալվար-յախար կընկնի*, օր էր բանը չէնե»⁴¹, «Էսի *փոր-փոշման* կերթա հոր քովը»⁴² և այլն:

²⁸ «Թափումի հեքիաթը», № 28(28), Կարս, էջ 176:

²⁹ «Փոնցիանոս թագավորի տղեն», № 32(32), Կարս, էջ 210:

³⁰ «Մինամ թագավորի հեքիաթը», № 9(9), Կարս, էջ 85:

³¹ Նույն տեղում, էջ 85:

³² «Ասլանգադեի հեքիաթը», № 11(11), Կարս, էջ 98:

³³ Մարգարյան Ալ., նշվ. աշխ., էջ 216:

³⁴ «Հարամը բինա չի բոնե», № 49(49), Կարս, էջ 281:

³⁵ «Կարսավերի պատմությունը», № 78(78), Կարս, էջ 318:

³⁶ «Հարամբաշին ու աղբատը», № 35(35), Կարս, էջ 234:

³⁷ «Շահենշահ և Սալվի», № 31(31), Կարս, էջ 199:

³⁸ Նույն տեղում, էջ 199:

³⁹ «Ճաշիֆիդան և Չնաշխարիկ», № 3(3), Կարս, էջ 46:

⁴⁰ «Օխտ ախպոր քուրը», № 10(10), Կարս, էջ 91:

զ) Կարսի հեքիաթներում հաճախ օգտագործվող արտահայտություններից է *«հալ-հեքիաթ»* բառակապակցությունը, որի տակ ընկալվում է հեքիաթային իրողություն հիշեցնող կամ հեքիաթին համագոր պատում, օրինակ. «Էդ հարիֆը սաբախթան թեզ քընեն գէլնի, կընգան կըսէ.– Կընիզ ջան, *հալ-հեքիաթ*, էսման, էսման էրծիս տեսա, ես բըղի էրթամ էդոր ըսած քաղաքը...»⁴³:

Դարձվածներն ունեն նաև եղանակավորող առանձնահատկություն և բացահայտում են տեղական պատկերավոր լեզվամտածողության առանձնահատկություններն ու դրսևորման ձևերը:

Կարսի խոսվածքում առօրյա-խոսակցական արտահայտությունները նույնպես ենթարկվում են ոճավորման, կիրառվում են համեմատություններ, դիմացինին սիրաշահում են քաղցրախոսությամբ և այլն: Հեքիաթապատման ընթացքում բանասացն ըստ նպատակահարմարության օգտագործում է նմանօրինակ բարբառային տարաբնույթ արտահայտություններ՝ ավելի ընդգծելով և պատկերավոր դարձնելով տվյալ պահը, հերոսի վարքագիծը կամ գործողությունը, օրինակ. «Վերջապես դառա: «Էլի,-ըսի,- էրթամ *մեր տան մոխիրը քցեմ բերանս*, էլ էսաներ չը ման գամ»:⁴⁴ «Ա՛յ հազար բարի ձգի, դարվեջ բաբաներ, *դուք իմ հայիս վրա*»⁴⁵, «Էման էր զաբընել, *կաշին օր չեղնիր, էդոր օսկըռները թափիր գը*»⁴⁶: Հեքիաթապատմանը բնորոշ են հատկապես համեմատությունները և դրանց հիման վրա կատարված եզրահանգումները, որոնք ուղղորդում են հերոսի հետագա քայլերը, օգնում են ճիշտ գնահատելու պահը և կայացնելու անհրաժեշտ որոշումը. «...Էդ ի՞նչ կըսես: *Փուշը օր փուշ է, դուշը իրան քցում է էդոր տալտեն, փուշը դշին պաշտպանում է: Դու մէ փշիմ չափ էլ չկա՞ս...*»⁴⁷: Բարբառային տարաբնույթ արտահայտությունները ցայտունորեն բացահայտում են կարսեցիների բնավորության առանձնահատկությունները, զգացմունքները, լեզվական դրսևորման ձևերը, սրամտությունը, խայթող բնութագրումները, շռայլ համեմատությունները, այլաբանական պատկերների վարպետությունը: Հեքիաթների համատեքստում կիրառված ասույթաբանական ժանրերի հիման վրա ըստ պահանջի և անհրաժեշտության ձևավորվել են կայուն բանաձևեր, որոնք իրենց բնութագրական նշանակությամբ բնորոշ են հեքիաթներին, օրինակ. «Տանին գը ավագակապետի քովը, էղիկ օր աղջկան տեսնի գը, *բերենն ջուրը կէրթա, թե էրկու աչք ուներ, դառնա գը չորսը*»⁴⁸, կամ՝ «Հերը կտեսնի, օր իրան աղջիկն է, թագավորը կտեսնի, օր թագուհին է, *ըստեղ լացն ու ծիծաղը կը խառնվին իրար, կփաթթվին, կհամբուրվին: Մենակ մուլեն ու վագիրը կուռ ու էրկաթ էղած կմնան:*»⁴⁹

⁴¹ «Չոփճու տղի հեքիաթը», № 5(5), Կարս, էջ 58:

⁴² «Ժլատ թագավորի հեքաթը կամ հազարան բիլբուլ», № 1(1), Կարս, էջ 38:

⁴³ «Էրկու կըճուճ օսկին», № 68(68), Կարս, էջ 307:

⁴⁴ «Մանուկի արկածները» № 67(67), Կարս, էջ 307:

⁴⁵ «Մուլթան Մուրադի ու չորանի պատմությունը» № 77(77), Կարս, էջ 316:

⁴⁶ «Խորոզ ախպերը» № 29(29), Կարս, էջ 184:

⁴⁷ «Մեհրի և Շեհրի» № 46(46), Կարս, էջ 276:

⁴⁸ «Հարամը բինա չի բըռնէ» № 49(49), Կարս, էջ 283:

⁴⁹ «Հաջի Սայադի հեքաթը» № 30(30), Կարս, էջ 192:

Կարսի հեքիաթների քննությունը ցույց է տալիս, որ հեքիաթի պատումի և կայուն բանաձևերի ձևավորմանն ակտիվ մասնակցություն են ունենում ասույթաբանական ժանրերը, որոնք թեև ծավալով փոքր են, սակայն իրենց մեջ խտացնում են իմաստային մեծ կարողություն: Առած-ասացվածքները, երդումները, բարբառային ասույթաբանական արտահայտությունները, դարձվածները հաճախ դառնում են կայուն բանաձևերի բաղադրամասեր՝ նպաստելով դրանց իմաստի ընդլայնմանը և գործառույթների տեսակների շատացմանը: Առած-ասացվածքները ինքնատիպ «չգրված օրենքներ» և կենսափորձի վրա խարսխված իմաստուն եզրահանգումներ լինելով, ոչ միայն ձեռք են բերում կայուն բանաձևի արժեք, այլև որպես ատաղձ կիրառվում են նոր բանաձևերի առաջացման ընթացքում: Դրանք իրենց նշանակությամբ և հեքիաթային իրադարձությունների բնութագրման առանձնահատկությամբ իրագործում են մի շարք գործառույթներ (ընդհանրացնում են փաստերը, ընդգծում են հերոսների դրական և բացասական հատկանիշները, բարոյախրատական գնահատմամբ բարձրացնում են պատումի գործնական ազդեցության արժեքը և այլն): Հմայական երդումները՝ որպես կայուն բանաձևի լրացուցիչ բաղադրամաս, հեքիաթներում ներկայացնում են նախնական ընկալումների և հավատալիքների շերտը: Դրանց առկայությունը հեքիաթում խոսքի հմայական ազդեցությամբ հավաստիություն և ճշմարտացիություն է հաղորդում հերոսի խոսքին ու գործին:

Կայուն բանաձևերի ձևավորման գործընթացում անփոխարինելի դեր են խաղում դարձվածներն ու առօրյա ասույթաբանական արտահայտությունները: Դրանց կիրառումը լայնացնում է բանաձևի իմաստաբանական սահմանները, հնարավորություն է տալիս ինքնատիպ համեմատությունների, այլաբանությունների, ծածկախոսությունների, սաստկական կրկնությունների միջոցով վերաիմաստավորելու և բազմազան դարձնելու այն:

Ի մի բերելով Կարսի հեքիաթներում ասույթաբանական ժանրերի քննությունը՝ կարելի է ասել, որ դրանք նպաստել են կայուն բանաձևերի ձևավորմանը, միևնույն ժամանակ որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ ոճավորել և պատկերավոր են դարձրել հեքիաթապատումը:

ПОСЛОВИЦЫ-ПОГОВОРКИ, КЛЯТВЫ И ФРАЗЫ КАК МАТЕРИАЛ УСТОЙЧИВЫХ ФОРМУЛ В СКАЗКАХ КАРСА

___ Резюме ___

___ Э.Хемчян ___

Пословицы-поговорки, клятвы, диалектные паремиологические выражения и фразы иногда становятся составными частями устойчивых формул, способствующими расширению их смысла и увеличению видов функций. Пословицы и поговорки, будучи своеобразными “неписанными законами” и мудрыми выводами, основанными на жизненном опыте, приобретают не только значение устой-

чивой формулы, но и применяются как материал в ходе образования новых формул. Они, своим значением и особенностью охарактеризования сказочных событий, осуществляют ряд функций (обобщают факты, подчеркивают положительные и отрицательные качества героев, поднимают практическое воздействие сказки посредством моральной оценки и т.д.). Магические клятвы, как дополнительная часть устойчивой формулы, в сказках представляют собой первоначальных пониманий и верований. Их присутствие и магическое воздействие в сказке обеспечивает передачу достоверности и правдивости слова и дела героя.

В процессе формирования устойчивых формул фразы и повседневные паремиологические формулы играют незаменимую роль. Их применение расширяет семантические границы формулы, дает возможность сделать ее многообразной и переосмыслить с помощью своеобразных сравнений, аллегорий, арготизмом, усилительных повторений.

Обобщая исследование паремиологических жанров карских сказок, можно сказать, что они способствовали формированию устойчивых формул, одновременно, как художественные выразительные средства, стилизовали и делали сказки выразительными.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խենիչյան Էսթեր Հայկի -բ.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության

և ազգագրության ինստիտուտ, E-mail: ekhemchyan@yandex.ru

Աշոտ Հայկազուն ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԱՏԱՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԱՁԵՎ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐԻ

ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԻՐ-ԵՐԿԻՆՔ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Հայ ժողովրդի կողմից սիրված և լայն զարգացում գտած հուշադրական կոթողների (մենհիրներ, վիշապներ, ուրարտական կոթողներ, արտաշեսյան սահմանաքարեր, քառանիստ և կլոր սյունաձև հուշարձաններ և այլն) շարքում առանձնանում են խաչքարերը: 301թ. քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունելուց հետո խաչը տարբեր դրսևորումներով դառնում է քրիստոնեության խորհրդանշան: Այն պատկերվում է պաշտամունքային կառույցների, հուշադրական կոթողների, կիրառական արվեստի գործերի վրա:

Ըստ Մղ. պատմիչ Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորչի ջանադրությամբ, պաշտամունքային նպատակով փայտե, մետաղե և ապա քարակերտ «թևավոր» խաչեր՝ տերունական խաչի սուրբ նշաններ են կանգնեցվում Վաղարշապատում նահատակված սրբերի վկայարանների, ավերված մեհյանների տեղերում, գյուղերում, փողոցներում, ճանապարհների կեամաններում և հրապարակներում՝ որպես պահապան և ապավեն¹:

Նոր կրոնի տարածման գործընթացում, քրիստոնեական հավատի հիմնարար գաղափարների ակտիվ քարոզությանը զուգահեռ, կարևորագույն տեղ էր հատկացվում սրբազան (ծիսապաշտամունքային) տարածքի ստեղծմանն ու կազմակերպմանը՝ ի դեմս քրիստոնեական տաճարի ու բացօթյա կոթողի²: Բացօթյա կոթողի գործառույթը, անշուշտ, կրելու էին նախ՝ IV-VIIդդ. քառակող, բազմակող և կլոր սյունաձև կոթողները՝ դրված աստիճանաձև խարխիսների վրա, և ապա՝ VIIդ. կեսերից լայն տարածում գտած խաչքարերը:

Խաչքար-կոթողը մի կողմից՝ հայտարարում և հաստատում էր նոր կրոնի (քրիստոնեության) հաղթանակը հին (հեթանոսական) կրոնի նկատմամբ, մյուս կողմից՝ սրբազործում էր այն տարածքը, որտեղ պիտի կառուցվեր նոր հավատքի տաճարը, և որտեղ պիտի ապրեին նոր հավատքը դավանողները:

Հարկ է նշել, որ մինչ քրիստոնեությունն էլ Հայկական լեռնաշխարհում արդեն կային սրբազան տարածքի գաղափարները, ինչպես նաև «տաճար» և «կոթող» հակադրությունները³:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Սաղումյան Ս., Գուգարքի մեմորիալ կոթողները, Եր., 1980, էջ 3:

² Պետրոսյան Հ., Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 10:

³ Նույնը:

Մինչ քրիստոնեական շրջանն էլ այստեղ մեր նախապապերի աշխարհընկալման, փիլիսոփայական պատկերացումների շրջանակներում արդեն հստակ տարբերակվում էին երկիր-երկինք, երկնքին մոտ, դեպի երկնային անսահմանները ձգտող սար-գագաթների (Արարատներ՝ որպես Նոյյան տապանի, մարդկության փրկության սար, Արագած, Նեմրուժ, Բյուրակն լեռներ և այլն), աղբյուրների, գետերի, լճերի (ծով)՝ որպես սրբազան տարածքների մասին հստակ դիրքորոշումներ և համոզմունք, որի արդյունքում այդ վայրերում (սարի գագաթներին, բլուրների բարձրադիր մասերում, քարաժայռերի վրա, գետի ակունքներում, լճերի հարևանությամբ) պիտի կառուցվեին զոհասեղաններ, տաճարներ և պաշտամունքային այլ տիպի կառույցներ:

Այս ավանդույթը փաստորեն շարունակվում է նաև քրիստոնեության շրջանում: «Խարսխաձև ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծն մի բլուր, և ի վերայ նորա սին մի հրեղեն բարձր մինչև յոյժ, և վերայ նորա թակադաղ մի ամպեայ, և խաչն լուսոյ, ի վերայ նորա»⁴: Հայտնի է, որ լույսը (աստվածային էություն) և ոսկին (աստվածային լույս՝ ինչպես կործանարար, այնպես էլ արարչագործ)՝ իբրև մարդու կողմից շրջակա աշխարհը, երկիրն ու երկինքը ճանաչելու, երկրային ու երկնային երևույթները հասկանալու և կառավարելու հենակետային տարրեր, ավելի վաղուց էին հայտնի Հայկական լեռնաշխարհի բնակիչ մեր նախապապերին⁵: Այնպես որ խաչքարերը՝ որպես հավատոս հանգանակներ, նրանց տարածք և տարածանք զարդաքանդակներն ու պատկերաքանդակները կրում են նախորդ ժամանակների կուլտուրայի ու մշակույթի ազդեցությունը: Բացի այդ՝ կոթողների հարդարանքում գերիշխողը հայկական ավանդույթներից, նախասիրություններից բխող աշխարհիկ ու կրոնական թեմաներն են⁶:

Նշանակում է, որ խաչքարերի վրա պատկերված խաչ, քառակուսի, շրջանակ, եռանկյունի և այլ երկրաչափական պատկերները, բուսական և կենդանական հորինվածքները պիտի ունենային նախատիպեր և նախնական իմաստներ, մինչ դրանց վերաիմաստավորված կիրառությունները արդեն քրիստոնեական շրջանում:

Մեզ հետաքրքրողը այս դեպքում խաչատուրյան աստիճանաձև հորինվածքն է: Խաչքարի վրա այսպիսի պատկերներ են հայտնվել VII դարից սկսած և հետագայում պարբերաբար կիրառվելով, վերածվել են զարդարիկ տարրերի (հիմնականում շրջանակաձև «Կյանքի ծաղիկների») և աստիճանաբար կորցրել իրենց նախնական նշանակությունն ու պատկերը: Աստիճանաձև խաչատուրյան հորինվածքների ենք հանդիպում՝ Դսեղի կոթողի, VIIդ. աստիճանային պատվանդանի, (Յուդղան), թևավոր խաչի (XIIIդ.) աստիճանաձև պատվանդանի, Ախթալայի Մարիամ Կյուրիկյանի խաչքարի (1188թ.), եռաստիճան խաչատուրյան տակդիրի, Մանահինի Սարգսի խաչքարի (1215թ.) երկաստիճան խաչատուրյան տակդիրի, Մանահինի

⁴ Տե՛ս Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 375:

⁵ Հայկազուն Ա., Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Եր., 2005, 175 էջ, 106 աղ.:

⁶ Մաղունյան Ա., նշվ. աշխ., էջ 3 - 4:

Հովհաննես քահանայի խաչքարի (1227թ.), ուղղանկյունից բլրատիպի (եռանկյունաձև) անցումով զարդարիկ խաչատակի տակդիրի, Հաղբատի գրատան միջանցքի (XII-XIIIդդ.) խաչքարի խաչատակի եռաստիճան տակդիրի, Հաղբատի մեծ գավթի խաչքարի (XIIIդ.) քառաստիճան գնդիկավոր խաչատակի տակդիրի, Քոբեքի Տերունական խաչքարի (Այգեհատի ձորում), 1291թ., խաչատակի քառանկյունաձև ճակտոնով տակդիրի, Արդվիի գերեզմանատան խաչքարերից մեկի (1581թ.) խաչատակի տաճարատիպ տակդիրի և այլ տասնյակ (ի դեպ, Հայաստանի գրեթե բոլոր շրջանների, ինչպես նաև պաշտամունքային կառույցների պատերի մեջ ագուցված) խաչքարերի վրա: Այսչափ հաճախ կրկնվող մեկ, երկու, երեք, չորս, հինգ, յոթ, ինը և այլ քանակի աստիճաններով հորինվածքները, ինչպես նաև քառանկյուն, տաճարատիպ, հետագայում գնդիկավոր, ապա զարդարիկ շրջանակաձև (գծված քառանկյան մեջ), բուսական (կենաց ծառի խորհրդանշանային իմաստով) պատկերների կրկնությունը խաչի (կենտրոնական, առանցքային, շեշտադիր) հորինվածքի ներքնամասում, պատահական չէր կարող լինել (նկ. 1-3):

Եթե խաչ-խաչքարերը տեղադրվում էին ի նշան հին պաշտամունքի վերացման և նոր քրիստոնեության հաղթանակի, և եթե խաչանշանն արդեն ընկալվում էր որպես քրիստոնեության խորհրդանշան, ապա խաչատակի տակդիրն էլ համապատասխանաբար պիտի խորհրդանշեր այն հին հավատքը, դրա բնորոշ, ճանաչելի խորհրդանիշը, որին որ հաղթել էր քրիստոնեությունը:

Մուրեն Սաղումյանը կարծում է, թե խաչատակի աստիճանաձև հորինվածքները Գողգոթան են խորհրդանշում, Գողգոթայի բլուրը, որտեղ խաչվեց Քրիստոսը: Նկատենք, որ Քրիստոսին խաչեցին (երկնային ամենահզոր, պայծառ, լուսատու աստղի՝ Արեգակի խորհրդանշան խաչով), և խաչը տեղադրված էր Գողգոթայի բլրի գագաթին (դեպի վեր՝ երկնային սահմանին մոտ): Գաղտնիք չէ նաև, որ քրիստոնեական բազմաթիվ նշան իմաստներ, հասկացություններ, խորհրդանշաններ ավանդվել են հեթանոսական շրջանից (խաչ, քառանկյուն, շրջանակ, կետ, աշխարհի չորս կողմ, երկիր, երկինք, կենդանակերպի նշան պատկերներ և այլն և այլն):

Մակայն հիշենք, որ մեր նախնիները սար-գագաթի վերաբերյալ ավելի վաղնջական պատկերացումներ են ունեցել: «Հին Հայկագունիները իրենց գերագույն Աստված ճանաչում էին Նոյին, որ Երկինքն է, և Արետիա (մի թե Արարատ) անվամբ նրա կնոջը՝ Երկրին, որը երկնքից բեղմնավորված, ծնել կամ գոյավորել է բոլոր Աստվածներին»⁷: Խոսքը, անշուշտ, այն Արարատի մասին է, որտեղից (ջրհեղեղից փրկված) պիտի վար իջներ Նոյի սերունդը: Այսինքն՝ Արարատը արդեն իսկ Աստծո կողմից ընտրված մարդու փրկության երկնամերձ սար-գագաթ է, փրկության տաճար:

Ըստ Համլետ Պետրոսյանի՝ սրբազան կառույցի երևան գալու առաջին ընթացակերպը (սցենարը) կապվում է հնի, հեթանոսականի կործանման և նրա տեղում նոր տիեզերակարգի ստեղծման հետ: Ըստ էության, սա նաև ծրագրային մի

⁷ Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 20:

ցուցում էր, որին հետևելով՝ հետագայում Տրդատն ու Գրիգորը կործանում էին հեթանոսական մեհյանները և նրանց տեղը խաչեր կանգնեցնում⁸:

Չմոռանանք, որ հեթանոսական մեհյանները՝ որպես հորինվածքներ, նախատիպեր չէին, դրանք արդեն կառուցված էին աստիճանաձև հզոր խարիսխների վրա (օրինակ՝ Մուծածիբի տաճարը) և իրենց հորինվածքային ձևերով վերարտադրում էին իրենցից ավելի վաղ հորինվածքները՝ բլուր-տաճարները, որոնք էլ իրենց հերթին իրենց մեջ խտացրել էին մեկ այլ նախատիպի կերպարային առանձնահատկությունները (սար, գագաթ, երկիր-երկինք կապ և այլն):

Բլուր-տաճարների գոյության մասին հետաքրքիր տեղեկությունների կարելի է հանդիպել Թ. Թորամանյանի⁹, Ս. Սարգսյանի¹⁰, Ա. Քալանթարի¹¹, Խ. Մամուլեյանի¹² և այլոց մոտ: Ըստ այդ տեղեկությունների՝ մինչ Արարատյան թագավորության շրջանը Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել բլուր-տաճար պայմանական անվանումով ճարտարապետական պաշտամունքային կառույցներ: Դրանցից շատերի ավերակները պահպանվել են մինչև օրերս, որոշ մասը մասնակի պեղվել և նկարագրվել է: Զարմանալիորեն դրանց ճարտարապետաբանական տիպաբանական տարատեսակ շղթայում իրենց տեղը չեն գտել: Բլուր-տաճարների և բլրագագաթների վրա կառուցված ամրոցների նկարագրությունը ինքնին հետաքրքիր է¹³: Ընդ որում, հարկ է նշել, որ Թ. Թորամանյանը և այլք մի շարք բլուր-տաճարներ նկարագրելիս դրանք անվանում են ամրոցներ՝ հավանաբար պարսպապատերի բազմաշերտությունը նկատի ունենալով: «Այդ ամրոցների պարիսպները, որոնք իրարից այնքան էլ մեծ տարբերություններ չունեն, կառուցված են ըստ կարելիվույն դժվարամերձ բլուրների վրա և ներկայացնում են միաշար կամ երկշար անտաշ, կոպիտ քարեր, որոնք մեծ մասամբ վիթխարի ծավալի են հասնում՝ ունենալով մինչև 4 մետր երկարություն, մեկ մետրից ավելի լայնություն ու բարձրություն, և շարված են առանց որևէ շաղախի, որ մի ամբողջ լայնությունը շատ անգամ հասնում է 5-7 մետրի¹⁴»: Կամ «Ապառաժի կտորները միանգամայն, բնականորեն, ինքնաբերաբար պայթած վիճակի մեջ դասավորված են պատերուն մեջ, եթե նույնիսկ

⁸ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 10:

⁹ Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1942, էջ 14-18:

¹⁰ Սարգսյան Ս., Հայաստանը քաղաքակրթության օրրան, Եր., 2004, էջ 443:

¹¹ Քալանթար Ա., Հայաստանը քարե դարից միջնադար, Եր., 2007, էջ 198-206:

¹² Նույն տեղում, էջ 143-145:

¹³ Տե՛ս Գրիգորյան Ա., Բնապաշտական և խորհրդաբանական ընկալումների դրսևորումները Ղևոնդ Այլիշանի երկերում, Բազմավեպ, հայագիտական, բանասիրական, գրական հանդես, ՃՀԲ տարի, թիվ 1-2, Վենետիկ, Ս. Ղազար, 2014, 242 էջ, էջ 15-30: Գրիգորյան Ա., Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական նախատիպերի գուգահեռների համեմատական վերլուծությունը, հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան – Ստեփանակերտ, 2012, 228 էջ, էջ 178-179:

¹⁴ Մամուլեյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Եր., 1941, էջ 35-36:

կարելի լինի շարք անվանել, քան թե շարված»¹⁵: Այս կարգի ամբողջը բաղկացած են լինում մի քանի շարք, 3-4-5, համակենտրոն պարիսպներից, որոնք շրջապատում են բլրի լանջերը և ապա գագաթի վրա վերջավորվում միջնաբերդով: Բացի այդ՝ հիշյալ ամրությունների առանձնահատուկ գիծը, որ անշուշտ ծառայում է ստրատեգիական նպատակների, այն շտապվիղաձև պատաշարերն են, որոնք ձգվում են գագաթից լանջն ի վար դեպի բլրի ստորոտները:¹⁶ Կարևոր է այն հանգամանքը, որ այս «ամրոց բլուրների» տարածքում պեղումների ընթացքում ոչ մի արտիֆակտ չի հայտնաբերվել, որն ապացուցեր դրանց բնակելի կամ ռազմական կառույց-տարածք լինելու հանգամանքը: Թերևս սա է հիմք հանդիսացել Ս. Մարդանյանին ենթադրելու, որ այս հորինվածները բլուր-տաճարներ են¹⁷: Ս. Մարդարյանը բլուր-տաճարներ է համարում Արդար Դավթի, Միծեռնակաբերդի, Գառնիի, Օաղկահովտի, Լեռնակերտի, Դաշտադեմի, Բագնայրի, Թահմազ-թափայի և այլ պաշտամունքային կառույցները (նկ. 4-5): Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այս բլուրների ստորոտներին, նրանց հարևանությամբ հայտնաբերվել են հաճախ պարսպապատեր չունեցող բնակավայրեր: Բլուր-տաճարի հորինվածքը հաջորդել է բլուր-բնակավայր հորինվածքին՝ պայմանավորված հասարակության մեջ դասերի բաժանման համակարգի առաջացումով:

Բլուր-տաճար ճարտարապետական հորինվածքի՝ որպես պաշտամունքային կառույցի նախատիպի կայացումը մինչև նրա պատկերային կամ առարկայական դրսևորումները՝ որպես մարդու մտավոր գործունեության դրսևորում և արդյունք, հստակ մեկնաբանված են Անտուան Մեյեի կողմից այսպես. հայերենը զուգահեռ երկու ձև է ստեղծել «երկնքի» և «երկրի» համար: Այս զուգահեռությունը համապատասխանում է նրան, ինչը մեզ հայտնի է հին հնդեվրոպական լեզուներում այդ երկու հասկացությունների տարածման մասին: Վեդայական երգերում երկինքը «հայրն» է, երկիրը՝ «մայրը»...¹⁸: Հեշտ է նկատել, որ այս նախնական պատկերացումները երկնքի ու երկրի, արականի ու իգականի մասին դարերի ընթացքում հասել են քրիստոնեական շրջան. Հայր Աստվածը երկնքում է, որդի Քրիստոսը համբարձվեց երկինք և նստեց հոր (Աստծո) գահի աջ կողմում, Մարիամ Աստվածածինը երկրի վրա ծնեց Քրիստոսին, Քրիստոսը հայտարարեց, որ այսուհետև ինքն է ճշմարիտ արեգակը և այլն: Արևի հնագույն խորհրդանշանը, աշխարհի չորս կողմերը լույսը (հավատ և ճշմարիտ խոսք) տարածող խաչանշան-խաչապատկերը դարձավ քրիստոնեության խորհրդանշան և՛ իբրև հաղթանակի նշան, դրվեց բլուր տաճար¹⁹ խորհրդանշանային պատկերի աստիճանավոր բլրի

¹⁵ Թորանյանյան Թ., Նախաքրիստոնեական հայ ճարտարապետությունը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», Գիրք Ա և Բ, 1921-22թթ., էջ 207-225:

¹⁶ Տե՛ս Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 35-36:

¹⁷ Մարդարյան Ս., նշվ. աշխ., էջ 442-445:

¹⁸ Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևանի պետական համալսարանի հրատարակություն, Եր., 1978, էջ 229:

¹⁹ Տե՛ս Գրիգորյան Ա., Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական նախատիպերի զուգահեռների համեմատական վերլուծությունը, Հայկական լեռնաշխարհի պատմամշակու-

(զիկկուրատ) վրա՝ ավերելով հեթանոսական հավատքի տաճարը և այլն: Ինչ²⁰, որովհետև Հայաստանում քրիստոնեության ընդունման վաղ շրջանում և դրանից հետո էլ շատերը դեռ դավանում էին հին հեթանոսական հավատքը: Դեռ տեսանելի և հիշվող էին այն գագաթներն ու վայրերը, որտեղ տեղադրված էին բլուր-տաճարներին փոխարինած մեհյաններն ու սրբատեղիները: Ուստի խաչքարեր կանգնեցնելը ավերած մեհյանների տեղում և այլուր՝ որպես նոր հավատքի խորհրդանշան ապացույցներ, իրենց հորինվածքներում ուղղակի թե անուղղակի պիտի ցուցեին հին հավատքի խորհրդանշանների տապալումը, որի լավագույն բնորոշիչներից մեկը կարող էր լինել սար-գագաթ, երկինքը խորհրդանշող բլուր-տաճար, զիկկուրատ հիշեցնող աստիճանաբարգաձև նշան պատկերը, որի վրա տրամաբանորեն վեր պիտի բարձրանար խաչը:

Ընդհանրապես խաչը (խաչապատկեր, խաչքար և այլն) դիտարկել որպես միայն քրիստոնեության, նոր ուսմունքի «գերագույն խորհուրդը կազմող խաչելությունը՝ որպես մեղքի հաղթահարում ու մահվան հանդեպ հաղթանակ», ինչն էլ ըստ էության ցուցում էր խաչելության (և խաչի) փրկագործական հեռանկարը»²⁰, նշանակում է չնկատել խաչի (խաչապատկերի) բազմատեսակ ու բազմաբնույթ շարունակական կիրառման փաստը արվեստի և մշակույթի բոլոր տեսակներում, Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության գանձարանում, քարի դարից սկսյալ մինչ քրիստոնեության ընդունումն ու տարածումը Հայաստանում:

Ընդ որում, այս անցումն առավել հստակ տեսանելի է պաշտամունքային կառույցների ճարտարապետության մեջ: Եթե նախնական պաշտամունքային ծեսարարողությունը կարող էր կատարվել ուղղակի բնության մեջ (սար, գագաթ, բարձունք, քարածայր, ջուր, ծառ և այլն), ապա դարերի ընթացքում արդեն «սրբացված», առանձնացված, բնական տարածքներում անհրաժեշտ էր ձեռակերտ զոհասեղաններ կառուցել, ապա բնական բլուրների գագաթներին պարզունակ (կլոր կամ քառանկյուն հատակագծային լուծումներով) պաշտամունքային կառույցներ կանգնեցնել՝ «ամրացնելով» բլուրի լանջերը շրջանակաձև դեպի բլուրի գագաթը փոքրացող պարիսպներով²¹, հետագայում՝ տաճարները կառուցել բարձր աստիճանաձև խարիսխների վրա (օրինակ՝ Տեկորի տաճարը), իսկ արդեն քրիստոնեության տարածման վաղ շրջանում (նույն Տեկորի տաճարի օրինակով)²² միանավ կամ եռանավ պաշտամունքային սրահները «ծածկել» գմբեթներով: Այսինքն՝ նախնական հավատքի ցուցիչները դեպի երկինք էին ձգտում, հետո դրանց ձեռա-

թային ժառանգությունը, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2012, էջ 178-179:

²⁰ Տե՛ս Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 19:

²¹ Տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, էջ 291:

²² Ակնհայտ է, որ Տեկորի՝ ինն աստիճանով պատվանդանի վրա հենված տաճարի հորինվածքային նախատիպը պետք է փնտրել բլուր-տաճարի կերպարում (բլուրի՝ զիկկուրատի) գագաթին շինված փոքրիկ պաշտամունքային կառույցի նմանությամբ: Տեկորի տաճարի հորինվածքում նկատելի է նաև, թե ինչպես սրահավոր (բազիլիկ) տիպը վերափոխվում է գմբեթավորի, այս դեպքում կարծես թմբուկ-վեղարը նույնպես կրկնում է բլուր-տաճարի նախատիպը, և ինչպես խաչքարի դեպքում այստեղ «Աստծո երկրային տունը» ևս ավարտվում է խաչանշանով:


կերտ հորինվածքները աստիճանաբար «իջան» դեպի երկիր (Աստծո երկրային տուն), սակայն խարիսխների և գմբեթների (խաչի ավարտով) հորինվածքներում պահպանեցին երկրից դեպի երկինք և հակառակը՝ փոխկապակցվածության բնափիլիսոփայական և խորհրդաբանական ընկալումների նախատիպային տարբեր դրսևորումները: Ասվածից հետևում է, որ խաչատակի աստիճանաձև տակդիրը, Գողգոթան խորհրդանշելուց զատ, իր հորինվածքում խտացված կարող էր պարունակել հեթանոսական բլուր-տաճարի գոնե արտաքին բլրակոնաձև հորինվածքի արձագանքները:

Ուստի խաչքարային արվեստի՝ որպես հայ մշակութային ուրույն տեսակի, հորինվածքային ձևերի, տիպերի և նախատիպերի բազմակողմանի ուսումնասիրումն ու դրանց խորհրդաբանակ ստուգաբանությունը կօգնեն խորացնելու և լրացնելու հայ ինքնության ապացույցների անընդհատելի գիտատեսական հիմնավորումների տեսական շղթան: Քանզի «միտքը երբեք հոժար չէ հրաժարվել իմանալ այն, ինչ որ կարող է իմանալ իր նախնիների և հին հայրերի գիտեցածից»²³:



Նկ. 1


²³ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 9.



Նկ. 2




Նկ. 3 Տաճարի մանրակերտ (բլուր-տաճարի վերնամասում)



1. Արդար Դավիթ պաշտամունքային բլուր-տաճարի վերակազմությունը, ըստ Աշ. Գրիգորյանի
2. Ծաղկահովտի բլուր-տաճարի և բնակատեղիի սխեմատիկ վերակազմությունը, ըստ Աշ. Գրիգորյանի

Նկ. 4



Միժեռակաբերդի բլուր-տաճար և բնակատեղի համալիրի սխեմատիկ վերակազմությունը, ըստ Աշ. Գրիգորյանի

Նկ. 5

**СИМВОЛИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ СТУПЕНЧАТЫХ ОСНОВАНИЙ
КРЕСТА В КОМПОЗИЦИЯХ ХАЧКАРОВ В КОНТЕКСТЕ
НАТУРФИЛОСОФСКИХ ПРЕДСТАВЛЕНИЙ ЗЕМЛЯ-НЕБО**

___ *Резюме* ___

___ *А. Айказун-Григорян* ___

В статье рассмотрены вопросы типологической взаимосвязи ступенчатых оснований креста в композициях хачкаров с распространёнными в армянской культуре древнейшими культовыми сооружениями – храмами-холмами, в качестве логического продолжения натурфилософских представлений о человеке-земле-небе и композиционных форм переходов от их символических прототипов к типам.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գրիգորյան Աշոտ Հայկազի - ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, Ճարտարապետության
ազգային թանգարան-ինստիտուտ, E-mail: ashothaykazun@gmail.com

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԵՐԳԱԼ – Ս. GUR ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ

ԿԵՆՊԱՐԻ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Շումերական առասպելաբանության մեջ Ներգալ աստվածը համարվում էր անդրշիրիմյան աշխարհի տիրակալը:¹ Նա նաև ռազմիկ աստված էր՝ զինված մանգաղաձև թրով և մարտական մահակով, անձնավորում էր համաճարակը, երաշտահարույց կիզիչ արևը (բայց ո՛չ արևն ընդհանրապես), խորհրդանիշներ ուներ ցուլը, առյուծը, վիշապը, ագռավը և կարիճը:² Աքադական առասպելաբանության համաձայն՝ Ներգալը անդրշիրիմյան աշխարհ մտնելուց առաջ կոչվել է Erra:³ Nergal, U.GUR, Erra դիցանունները հայ-շումերական առասպելաբանական կապերի և դրանց խորին հնության վկաներն են:

Nergal (<Ner-gal) դիցանվան մեջ շումերերեն gal «մեծ» բառը Շումերում է հավելվել դիցանվան արմատին՝ Ner-ին, որը, մեր կարծիքով, նույնն է հայերեն *Նեռն* (<* ներ-ն) «չար ոգի, չարագործ», «անտիքրիստոս» բառի հետ՝ ծագած հ.-ե. *ner- «վարը, ցածր», «մեջը, ներսը» արմատից:⁴ Ազգակից լեզուներում այս արմատով կազմված բառերից են՝ հին հնդկ. Naraka «ստորերկրյա աշխարհ, դժոխք», Nāraká «ինչ-որ դև», հուն. ενέρερος/νέρερος «ամենաստակի», «դժոխային», հուն. կապ. Νήρια «Քարոն, Սյուս աշխարհը», «մահ», ռուս. нора «փոս, ծակ, որջ» և այլն:⁵ Ուրեմն, Nergal<*Ner-gal դիցանվան նախնական իմաստը եղել է «մեծ ընդերք», «մեծ Ստորին (աշխարհ)»: Ներգալի նախատիպի (նախատիպերից մեկի)՝ Հայկական լեռնաշխարհին առնչվելու հարցում ուղենշային կարող է լինել այն հանգամանքը, որ Միջագետքը միավորած Աքադի Նարամ-Սուեն թագավորը «Էրլա և *Արման* (ուս)» *հյուսիսային* պետությունները մ. թ. ա. 2225թ. նվաճել է Ներգալ աստծու առաջնորդությամբ:⁶

¹ Գիլգամեշ. Հին Արևելքի դրամագրավեպ, թարգմանությունը և ներածականը՝ Ն. Մարտիրոսյանի, Եր., 1963, էջ 113:

² Khazai Khorso, *Les grandes étapes des l' archéologie mesopotamienne, "De Sumer à Babylone"*, Bruxelles, 1983, p. 45-46; Афанасьева В., Нергал, "Мифология. Золотой фонд. Энциклопедия" (այսուհետև՝ *МЗЭ*), М., 2003, стр. 394.

³ Афанасьева В., *Эрра*, *МЗЭ*, стр. 640.

⁴ Պետրոսյան Ս., Մասիսը և Արտավազդի առասպելը (հայ-շումերական) պատմամշակութային փոխառնչությունների պատմությունից), ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVI, Գյումրի, 2013, էջ 7, 8-9:

⁵ "Wörterbuch Sanskrit-Deutsch", von Prof. Dr. Dr. habil Klaus Mylius, *Verlang Enzyklopädie, Leipzig*, 1980, S. 236, 240; Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ *ՀԱԲ*), հ. III, Եր., 1977, էջ 443-444; Фасмер М., *Этимологический словарь русского языка*, т. III, М., 1971, стр. 82. Հայ ներ արմատի «ցածր, տակը» և «մեջը, ներսը» նշանակությունները, ըստ Հ. Աճառյանի, պայմանավորված են հ.-ե. *en-er և *ni-er > *ner տարբեր նախաձևերից ծագելու հանգամանքով: Դրանք *er վերջածանցով կազմություններ են *en- «մեջը» և *in «տակը» արմատներից (*ՀԱԲ*, հ. III, էջ 444):

⁶ Дьяконов И., *Значение Эблы для истории и языкознания, "Древняя Эбла (раскопки в Сирии)"*, М., 1985, стр. 16, 335, կամ նվաճել է 2300-2250 թթ. մ. թ. ա. միջև (стр. 13),

Այս դեպքում կարևորվում է այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություններից մեկի՝ Հայասայի գերագույն աստվածը ներկայացվել է Պ. GUR գաղափարագրի, այսինքն՝ այն նույն գաղափարագրի միջոցով, ինչև ն Ներգալ աստվածը:⁷ Մրա Պ Բաղադրիչը մերձավորարևելյան ամպրոպաբնույթ աստվածներին վերաբերող գաղափարագիր է,⁸ որը բնավ հարմար չէ Շումերի նման տափարակ և գրեթե ամպրոպագուրկ երկրի կարևոր աստծու նշելու համար: Բայց դա հարմար էր նշելու համար և նշում էր բարձրալեռնային այնպիսի մի երկրի գերագույն աստծուն, ինչպիսին էր Հայասան: Հայասայի այդ աստվածը որպես Պ.GUR հայտնի է մ.թ.ա. XIV դարի կեսերով թվագրվող խեթ թագավոր Սուպիլիուլումայի արձանագրությունից:⁹ Դիցանվան մեջ Ս և GUR Բաղադրիչների համատեղման համար իրական հիմք է գոյություն ունեցել: Իսկ թե ո՞րն է եղել դա, ցույց են տալիս «որոտ և կայծակ» պատասխանն ակնկալող հայկական հնագույն հանելուկները: Ահա դրանցից երկուսը.

1. Էն ի՞նչն ա ինչ.
Կովը բռանչի,
Ֆորթը փախչի:
2. Գարմիր եզ մը ունիմ,
Պոլոկելով (բառաչել)
խեղը (հող) մղնու գու:¹⁰

Հայտնի է, որ երկնային-տիեզերական երևույթներին վերաբերող մեր հանելուկներից շատերը նախնադարյան պատկերացումներից եկած հնավանդ արմատներ ունեն: Լոռիում գրի առնված առաջին հանելուկում ամպրոպային էակը հանդես է գալիս որպես կով, որի բառաչը ամպերի որոտն է, իսկ փախչող հորթը՝ կայծակը: Կրասնոդարի շրջանի հայերից գրի առված երկրորդ հանելուկում կայծակը հանդես է գալիս որպես կարմիր եզ, որը բառաչելով հողն է մտնում: Եթե բնականից կայծակն ու որոտը միասնության մեջ էին ընկալվում, ուրեմն նրանց

⁷ Капанцян Г., Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 89-90.

⁸ “Keilschrifturkunden aus Boghazköi”, Hf 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV, 26, 29, 32; Նույն տեղում, VI, 45, II, 64 (Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, стр. 148, 162).

⁹ “Keilschrifturkunden aus Boghazköi”, XXVI, 39, IV, 26. Հայասական Ս. GUR-ին մեռնող-հառնող աստվածությունն են համարել (Արայի, Ատտիսի, Արոնիսի նման) Գր. Ղափանցյանը (նշվ. աշխ., էջ 88-89, 306) և Գ. Վարդույանը (Вардумян Г., Дохристианские культы армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», 18, Եր., 1991, էջ 66): Վերջինն ընդգծում է նաև նրա անվան Պ Բաղադրիչի ամպրոպային բնույթը (էջ 67): Գ. Ջահուկյանը, Ս. GUR-ին համարելով «որոտի և կայծակի» աստված, հնարավոր է համարում համեմատությունը հեթանոսական Վահագն աստծու հետ, իսկ (Գր. Ղափանցյանի հետևողությամբ) նրա անվան՝ հնչյունական ընթերցումը (Джаукян Г., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, стр. 57): Բ. Դյակոնովը, մերժելով դիցանվան հնչյունական ընթերցումը, այն համարում է գաղափարագիր տրված մերձավորարևելյան ընդերքային աստվածներին (Дьяконов И., Предыстория армянского народа, Ер., 1968, стр. 213, пр. 57):

¹⁰ Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ (այսուհետև՝ ՀՇՀան), Եր., 1965, էջ 12:

խորհրդանշող գաղափարագրերը կարող էին միասնաբար մատուցվել, այսինքն՝ դրանց միասնությունն անձնավորող աստվածությունը կարող էր հանդես գալ «Ս. GUR բաղադրյալ գաղափարագրի տակ: Ըստ որում, Ս-ն նույնական է լինում *ni(h)* բնաձայնի հետ, որով մեր հեռավոր նախնիներն արտահայտել են կայծակի՝ իրենց մեջ առաջացրած հիացմունքի և սարսափի զգացումը: Միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում *ni(h)*-ը հանդիպում է իր *n(h)* տարբերակի բացատրության մեջ. «Ոհ- միջարկութիւն ցառողի. աւաղ, կամ վահ, կամ ուհ», իսկ «Ո- միջարկութիւն է հիացական եւ կոչական...»¹¹ (հմմտ. իմաստով մոտ *հի* արմատից ծագած *հիանալ* բառի իմաստները՝ «սքանչալով, վախեցած և զարմացած մնալ, երկյուղախառն զմայլվել»):¹²

«Ս. GUR դիցանվան GUR բաղադրիչն էլ նախապես բնաձայն արմատ է եղել, ապա նշել է նաև «որոտ» հասկացությունը:¹³ Հայերենում սա պահպանված է *գոռ* և *գուռ* տարբերակներով: *Գոռ* նշանակում է «գոչյուն, բղավոց, բռռալու ձայն», որից՝ *գոռալ* «գոչել՝ գետի, առյուծի, ցուլի համար ասված», «երկնքի որոտալ», *գոռ*-ը նաև «կոխի, պատերազմ», «խրոխտ, սարսափելի» է նշանակում, որից ունենք նաև *գոռալ* «խիզախել, կովել»:¹⁴ *Գոռ* արմատի վերաբերյալ եղած ստուգաբանությունները մերժած Հ. Աճառյանը, այդուհանդերձ, բնաձայն էր համարում *գոռոչ* «բղավոց, բարձր ձայն» բառը,¹⁵ որն, անտարակույս, *գոռ* արմատից է ծագում: Նրա *գուռ* տարբերակը հայերեն բարբառներում նշանակում է նաև «ամպի, կրակի ձայն»:¹⁶ *Գոգո բարբա* էին կոչում Հայոց ձորի բնակիչները ամպրոպի անձնավորում առասպելական կերպարին.¹⁷ *Գոգո բարբա* // «գոգոացող հայր» (Գոգո-**գուռ-գուռ*):

Ներգալի խորհրդանիշ կենդանիներից առաջինը եղել է ցուլը: Դրա վերհուշն է նրա Gugalanna մակդիրը, որի հիմքում շումերերեն GU(D) «ցուլ», GAL «մեծ» և AN «երկինք» բառերն են: Այս մակդիրը խոսում է Ներգալի նախապես երկնային աստվածություն լինելու մասին:¹⁸ «Երկինք»/«բարձր լեռ» և «բարձր լեռ»/«ցուլ» առասպելաբանական համադրումների հետևանքով լեռնաբնակ ժողովուրդների հավատալիքներում ցուլը համարվելով մարմնավորումը որոտի ու կայծակի, դարձել էր տոտեմ նախատիպը, ապա՝ խորհրդանիշը ամպրոպաբնույթ աստվածներին:¹⁹ Ս. GUR/Ներգալի փոխակերպումը երկնային, ամպրոպային աստվածությունից անդրշիրիմյան խավար աշխարհի դաժան տիրակալի պայմանավորված է եղել հենց «կայծակ» երևույթով՝ նրան որպես կայծակի մարմնավորում ընկալու-

¹¹ «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 253, 254:

¹² ՀԱԲ, հ. III, էջ 92:

¹³ Պետրոսյան Ս., Հին հայոց եռամասն ամսուայ խորհուրդը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1996, էջ 420-439: Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 153-160:

¹⁴ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 580, 581:

¹⁵ Նույն տեղում, էջ 582:

¹⁶ Նույն տեղում, էջ 600:

¹⁷ Արեղյան Մ., Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 78, ծան. 1:

¹⁸ Афанасьева В., Нергал, МЗЭ, стр. 394.

¹⁹ Արեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 65 – 66, 72:

մով: Այսպիսի առասպելաբանական պատկերացումը հատուկ էր հնդեվրոպական հին ժողովուրդներին: Խեթական աղբյուրների համաձայն՝ Ներիկ քաղաքի Ամպրոպի աստվածը մի անգամ անհետացել էր՝ մտել էր «Սև հողը»²⁰ (հմմտ. հայկական անեծքներում հանդիպող *Սև հողը*, *Սևանասակը* < *սև-անհատակը* բառակապակցությունները):

Ներիկի Ամպրոպի աստծու անհետանալու և «Սև հողը» մտնելու պատկերացման հետ ուղղակի կապի մեջ են Nerik տեղանունը և նրա տեղադրությունը: Ner-ik անվան -ik բաղադրիչը նույնն է լինելու հայերենի ծագում և պատկանելությունն ցույց տվող *-իկ* վերջածանցի հետ:²¹ Իսկ քաղաքանվան Ner- արմատը նույնական է վերոհիշյալ *h.-ե.* *ner- «վարը, ցածր», «մեջը, ներսը» բառի և Nergal < *nergal ու *Նեռն* < *ներ-ն դիցանունների առաջին բաղադրիչների հետ: Ներիկը տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհի հենց այն մասում,²² որտեղ գտնվում էր հետագա Մեծ Հայքի Դարանաղի գավառը՝ հեթանոս հայերի գերագույն աստված ամպրոպային Արամազդի (Ջևս- Արամազդ) պաշտամունքի կենտրոնը: Անհետացած Ներիկի ամպրոպի աստծուն (ճՄ ^սNerik) հետ բերելու համար, խեթական մի տեքստի համաձայն, նրան գոչում կանչում են ամսի 13-րդ օրը,²³ իսկ հայոց հին տոմարում 13-րդ օրը ձևաված էր Պարխար (Արևելապոնտական) լեռնաշղթային և կրում էր նրա *Պարխար* անունը: Մրա հիմքը դրափոխված ձևն է *պախրայ* բառի հիմքի. *Պարխար* < **պախր-ար* (վերջածանցի համար հմմտ. *կերպ-ար*, *մթ-ար*, *մլ-ար*, *պալ-ար* և այլն): *Պախրայ* նշանակում է «տավար, արջատ, նախիր», «եզ, եղջերու, պախրա»²⁴ և կազմված է *-այ* վերջածանցով (հմմտ. *արք-այ*, *բոր-այ*, *կր-այ*, *սաւ-այ* և այլն) **պախր* հիմքից (հմմտ. *եզ-ր*, *մեղ-ր*, *կող-ր*, *ման-ր* և այլն): *Պախ* արմատը նշանակում է «պատռել, ճեղքել», որից՝ *պախել* «կտրվել, ճեղքվել», բայց նաև՝ «վառվել, բորբոքվել (կրքերից)»:²⁵ Իսկ ցուլերն առհասարակ թե՛ «ճեղքող, պատռող» են (երբ հարու են տալիս) և թե՛ «կրքերից բորբոքվող»:

²⁰ Haas V., *Der Kult von Nerik*, "Studia Pohl", 4, Roma, 1970, S. 142-144, Герни О. Р, Хетты, М., 1987, стр. 123, 155. Խեթ թագավոր Խաթուսիլի III-ը (1289-1265 թթ. մ. թ. ա.) Ներիկի Ամպրոպի աստծուն և Սամուխայի Իշտար/Ինաննա դիցուհուն (հմմտ. նույն տարածքում հետագա Արամազդ և Անահիտ) միասին է հիշատակում որպես դատավորներ իր կողմից գահընկեց արված եղբոր և իր միջև (Герни, նշվ. աշխ., էջ 155):

²¹ Բացառված չէ, որ Nerik նախապես կոչվել է տեղի Ամպրոպի աստվածը, ապա այդ անունը փոխանցվել է նրա պաշտամունքի կենտրոնին: Հմմտ. հայաստանյան Baltaik դիցանունը, որի -ik բաղադրիչը նույնն է լինելու հայերենի ծագում և պատկանելությունն ցույց տվող *-իկ* վերջածանցի հետ (Джаукян Г., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, стр. 48):

²² Տեղադրությունը Հալիսի ակունքների շրջանից մինչև Երզնկա քաղաքի մատույցներ (Хачатрян В., նշվ. աշխ., էջ 44-49) ավելի հավանական է, քան Խեթական թագավորության կենտրոնին մոտ տեղորոշումը, որովհետև «Ուղևորություն Ներիկ» արքայական ուխտագնացությունը ավելի քան 20 օր էր տևում (Ардзинба В., Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, стр. 19):

²³ "Keilschrifttexte aus Boghazköi", Leipzig-Berlin, 1923, II, 4, Vs. 23-27:

²⁴ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 7:

²⁵ ՀԱԲ, հ. IV, էջ 6: Մալխայանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Եր., 1945, էջ 36:

Խեթական մեկ ուրիշ տեքստում «Ամպրոպի աստծու մարդը» (նրա քուրմը) Ներիկի Ամպրոպի աստծուն կանչում է Խախարվա լեռներից, Յիտխարունուվա լեռից և Դախաստա գետից:²⁶ Դրանք լինելու են Պարխարը, նրա գազաթներից մեկը և Գայլ գետը: Դրանք համարվելու էին Ամպրոպի աստծու անհետացման հավանական վայրերն իրենց ունեցած հյուսիսային դիրքի պատճառով: Հյուսիսը՝ աշխարհի խավար կողմը, համարժեքն էր ստորերկրյա խավար աշխարհի: Նույնպիսի մտածողությամբ հյուսիսի գետը՝ Գայլը, համարժեքն է դիտվել հյուսիսի ծովի (նրա ջրերը հյուսիսի ծով՝ *Սև ծով* են հոսում), ուրեմն, նաև ստորերկրյա աշխարհի: Ի դեպ, գետի հայերեն *Գայլ* և հունարեն *Լյուկոս* (Λύκος) անունները «գայլ» են նշանակում, իսկ գայլ գազանը ևս «ստորերկրյա-ընդերքային» կենդանիների շարքին էր դասված:

Հնդեվրոպական նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհում տեղադրումով է պայմանավորված «լեռ»/«ամպրոպային երևույթներ»/«Ամպրոպի աստված» հասկացությունների լեզվաբանական և իմաստաբանական փոխկապվածությունը հնդեվրոպական լեզուներում:²⁷ Դրա դրսևորումներից են *Գրգուռ/Գորգոռ/Գոռոզ* լեռնանունները՝ տրված Վանա լճից արևմուտք գտնվող միևնույն լեռանը:²⁸ Դրանցում առկա է վերոհիշյալ *գուռ/զոռ* արմատը՝ առաջին լեռնանուններում կրկնությամբ, իսկ երրորդում՝ *-ոզ* վերջածանցի հավելումով: Երրորդ լեռնանվան հետ նույնական *գոռոզ* բառը «խրոխտ, հպարտ», «թագավոր, կայսր», «բռնակալ», «սատանա» է նշանակում:²⁹ Մրա *-ոզ* վերջածանցի համար հմմտ. բարբառային *լոլոզ, խոխոզ, կոկոզ, ճոլոզ, պոլոզ* բառերը: *Գոռոզ* բառի «սատանա» իմաստը կարող է պայմանավորված լինել Գոռոզ լեռան անձնավորում աստվածության մասին գոյություն ունեցած առասպելաբանական այն պատկերացմամբ, որ Ներիկի Ամպրոպի աստծու նման նա էլ ժամանակին եղել է ստորերկրյա աշխարհում, սակայն նրա պես էլ վերադարձել էր երկինք՝ լեռնագագաթ: Այլ կերպ Գրգուռը սրբազան լեռ չէր համարվի, իսկ նրա անունը տեղ չէր գտնի հայոց հին տոմարում՝ որպես 21-րդ օրվա *Գրգուռ* անուն: Անշուշտ, ամսի այդ օրը ձևոված է եղել այս լեռան և նրա անձնավորում ամպրոպաբնույթ աստծու պաշտամունքին: Շիրակցի (անեցի) նախնիներից սերած, Կրասնոդարի երկրամասի (Հյուսիսային Կովկասում) հայերի «կայծակ» պատասխանն ակնկալող հանելուկները բացահայտում են այդպիսի պատկերացման իրական հենքը: Դրանցից առաջինը վերոբերյալ «Գարմիր եզ մը ունիմ, / Պոլոկելով (բառաչել) ինեղը (հող) մղնու գու» հանելուկն է, իսկ

²⁶ *Keilschrifturkunden aus Boghazköi, XXVIII, 92, I, 4-8. Հավանաբար, քուրմը իր մոզական գործողություններում օգտվել է նաև կայծքարից, որովհետև հայ ժողովրդական հավատալիքների համաձայն՝ «կրակը կայծակից մնացել է կայծքարի մեջ, և հետո մարդիկ գայլախագուրվ (չախմախ) խփել հանել են» (Լալայան Ե., Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 158):*

²⁷ *Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. II, стр. 667-668.*

²⁸ *Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 78, Յովհան Մամիկոնեան, Պատմություն Տարօնոյ, Եր., 1941, էջ 207:*

²⁹ *ՀԱԲ, հ. I, էջ 581-582:*

երկրորդ հանելուկում ասվում է. «Էրզնկեն ընկավ/Կեդինը մղավ»:³⁰ Մրանք ցույց են տալիս, որ կայծակն ըմբռնվել է երկնային ծագումով երևույթ, իսկ նրա երկիր հասնելն ու անհետանալը բացատրվել են հողը (գետինը) մտնելով:

Այդուհանդերձ, մեր լեռնաշխարհի բարձունքներում կրկին ամպեր էին կուտակվում, կրկին կայծակում ու որոտում էր լեռը, կրկին անձրև էր հողում: Դրանցով մեր նախնիները համոզվում էին, որ Ամպրոպի աստվածը վերադարձել է: Մեր նախնիների կողմից ստորերկրյա աշխարհի հետ կապի մեջ են պատկերացվել թե՛ Հայաստանի գերագույն աստված Ս. GUR–ը, թե՛ հեթանոս հայերի գերագույն աստված Արամազդը, թե՛ սրանց իջեցված կարգավիճակով ժառանգորդ դարձած Մեբեն: Դա են վկայում հետևյալ հայտնի փաստերը: Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի ամրոցում էին գտնվում «զբազինն Ջեւս դիցն Արամազդայ» և «թագաւորաբնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց»:³¹ Եթե Հայոց Ջեւս–Արամազդը վերջինից վերադարձել է հայոց «Օլիմպոս», ապա նրա իջեցված կարգավիճակով ժառանգորդ Մեբեն ընդմիջտ մնացել էր անդրշիրիմյան աշխարհում: Ինչպես Գ. Սրվանձտյանցն էր իր ուղևորությունների ընթացքում լսել, Բարձր Հայքի Մեպուհ լեռան վրա «կա ուխտատեղի մը Մեբե անուն և գերեզման մը, ուխտ կընեն հոն: Այս Մեբենն մերթ ընդ մերթ կարձակվին կայծակունք և որոտունք և լույս, և կտարածին Մեպուհ ամբողջ մասերուն վրա: Տեղացիք կհավատան, թե այն գերեզմանեն կելլեն այդ նշանները »:³²

Եթե Մեբեն, ընդերք–անդրշիրիմյան աշխարհում մնալով հանդերձ, պահպանել էր իր ամպրոպային բնույթը, ապա Ներգալ դարձած Էրբան ընդհանրապես կորցրել էր ամպրոպային աստվածներին բնորոշ գծերը՝ որպես անցյալի հուշ պահպանելով *Գուգայաննա* մակդիրը և մանգաղաձև կեռ թուրը: Պատճառը Շումերի տափարակ բնաշխարհն էր՝ առանց լեռների, ամպրոպագուրկ և ծովահայաց: Ճիշտ է, Ներգալը մեկ անգամ դուրս էր եկել Լույս աշխարհ և կրկին կոչվել Էրբա, բայց երբ երկրորդ անգամ էր հայտնվել անդրշիրիմյան աշխարհում, Երկնքի աստված Անուի (Ան) հրամանով ընդմիջտ մնացել էր այնտեղ:³³ Ամպրոպագուրկ երկրի ժողովուրդը ինչու՞ պետք է վերադարձներ նրան (խոնավություն ու ջուր նրանք ստանում էին Պարսից ծոցից և Տիգրիս ու Եփրատ գետերից) և ո՞ր չեղած լեռան վրա բնակեցներ նրան: Իսկ որպես «երկնային հուր» առաքող աստծու, նրան գրկելով շանթային գծերից, դարձրեց նաև արևի կիզիչ ջերմության և երաշտաբեր տապի աստված: Ներգալը պահպանել էր մանգաղաձև կեռ թուրը, որը, բնականաբար, չէր կարող խորհրդանշել արևի ուղիղ ճառագայթները, որովհետև

³⁰ ՀԺՀան. Էջ 12-13:

³¹ Ագաթանգեղայ պատմություն Հայոց, Եր., 1983, ՃԹ, 785:

³² Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. II, Եր., 1982, էջ 348: Մեբեի՝ երկնքից հայտնված լինելու մասին է խոսում իր կրած Մեբե անունը: Մեր կարծիքով, սա մաշված ձևն է երկնային հրեշտակների մի դասի Մերովբե անվան: Քրիստոնեության հետ Հայաստան մտած այս անվանումը հայոց մեջ կիրառվել ու կիրառվում է որպես անձնանուն: Հմմտ. սրա, ավելի գործածական կրճատ ձևերը. Մերոբե, Մերոբ, Մեպպե//Մեբբե (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Եր., 1948, էջ 482):

³³ Афанасьева В., Нергал, МЗЭ, стр. 394.

խորհրդանշում էր կայծակի կեռումեռ լույսը: Բայց Ներգալն այն պահպանել էր շնորհիվ իր խորհրդանիշ ցուլի (Gugalanna) կեռ եղջյուրին համադրված լինելու:

«Թուր» «կեռ թուր» հասկացության զուգորդումը խոշոր եղջերավոր անասունի հետ ևս ամրա է հայկական հանելուկներում: «Թուր և պատյան» պատասխանն ակնկալող հետևյալ հանելուկներում ասվում է. «Մի գոմեշ ունենք./Ինքը միջի կռանը (կողմ),/Պոզերը դրսի կռանը», «Իմ հերանց մի եզ ունեն./Ինքը գոմն ամտնում./Համա (սակայն) իրա պոզերը չեն մտնում», «Ինքը մեջը./Պոզերը դուրսը»:³⁴ Որ կեռ թուրը՝ որպես խոցող-փլուզող զենք կարող էր համադրված լինել կեռեղջյուր կենդանու եղջյուրին, ցույց է տալիս *թուր* բառի ստուգաբանությունը: *Թուր* «սուր, սուսեր» բառի հնդեվրոպական *ter- նախաձևը նշանակում էր նաև «ծակել, ծակ բացել», որից են ծագում հուն. τороδ «դուր», τρόπον «ծակիչ գործիք (վիրաբույժի կամ քաղաքի պարիսպների համար)», լատին. terebra «ծակիչ, գչիր, շաղափ, պարիսպ ծակելու գործիք» և այլն:³⁵ «Պարիսպ ծակող գործիքը» պաշարողական այն մեքենան էր՝ ծակող-փլուզող զենքը, որը *խոյ* էր կոչվում՝ վայրի ոչխարի արուի նմանությամբ: Իսկ սա վկայում է, որ նախնադարյան մարդու համար ծակող-փլուզող զենքի՝ թրի նախատիպը ևս եղել է եղջյուրը՝ Ներգալի դեպքում ցուլի կեռ եղջյուրը:

Ամպրոպաբնույթ աստվածությունները միայն կործանիչ շանթեր արձակողներ չէին, նրանք նաև կրակի ու կայծակի նման բռնկուն, անկախատեսելի, զայրացկոտ ու կռվարար էին:³⁶ Այս տեսանկյունից ուշագրավ է շումերերեն *girgir* «կայծակ» և հայերեն *գրգիռ* (<*գիր-գիր> «հակառակություն, դրդում, կռիվ» (>*գրգռել* «կռիվ կամ բարկություն հուզել») բառերի միջև նշմարվող կապը, իսկ հայերեն բառի հիմքում ենթադրվում է *գիր անծանոթ արմատը:³⁷ Այս նույն արմատից է մեր կարծիքով, ծագում աքաղ. Girra դիցանունը, որի կրողը շումեր. Գիրիլն էր՝ լույսի և կրակի աստվածը, Մարդուկի «իշխանության նշանակները» մաքրողը, բայց և Էնլիլի աջակիցը Ուր քաղաքի կործանման գործում:³⁸ Պատահական չէ, որ նրա հայրը համարվում էր Հայկական լեռնաշխարհի հետ սերտ կապեր դրսևորող Էնլիլ/Հայա աստվածը:

Անկախատեսելի էր նաև Էրրա աստվածը: Կարծում ենք, թե ուղղակի կապ գոյություն ունի Erra դիցանվան և հայ. *հեռ* «հակառակություն, ոխ, կռիվ», «կռվարար», *եռ* «եռալ, եփվել» բառերի միջև: Հ.-ն. *ers-ից ծագած բառեր են նաև *եռալ* «եփվել, վատվել (հոգին, եռանդը)», *եռանդն* «կրակի վատվելը», «ներքին հուզմունք, խանդ», հին սաքս. irri «կռվարար», փոյուգ. ἄρισ «կռիվ», հուն. Άρης դիցանունը և

³⁴ ՀԺՀան., էջ 191-192:

³⁵ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 208.

³⁶ Անհետացած Ամպրոպի աստծուն կանչելու խեթական ծեսում նրա քուրմը անհրաժեշտ հմայությունների միջոցով պիտի զսպեր ստորերկրյա աշխարհից վերադարձած աստծուն և մեղմեր նրա զայրույթը (Арджинба В., նշվ. աշխ., էջ 124):

³⁷ Իշխանյան Ռ., Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Եր., 1989, էջ 66: ՀԱԲ, հ. I, էջ 604:

³⁸ Афанасьева В., Гибил, МЗЭ, стр. 153-154; Նույնի, Эрра, МЗЭ, стр. 640.

այլն:³⁹ Ս. GUR // Ներգալի GU. GAL. AN. NA մակդիրի GU//GUD բաղադրիչով նշվում էր կարճեղջյուր ցուլը, իսկ վայրի գուրբի ու տուրի համար գործածվում էր AM նշանագիրը՝ բաղկացած GUD նշանից, նրա մեջ գծված KUR «լեռ» նշանով:⁴⁰ Պատճառն, անշուշտ, եղել է վերջին տեսակի ցուլերի լեռնային ծագումը (հմմտ. նույնպիսի մոտեցմամբ ստեղծված ANŠE. KUR. RA սեպախմբի «ձի» նշանակությունը, երբ այն բառացի «լեռնային էջ» է նշանակում): Ըստ երևույթին, գուրբը և տուրը դիտվել են Erra-ի տոտեմ նախատիպերը դեռևս Հայկական լեռնաշխարհում: Այս դեպքում Erra դիցանվան հնդեվրոպական– հայկական ծագման օգտին կարող է վկայել նաև հետևյալը: Ուրարտական դարաշրջանում հայոց Ամարոպի աստվածը պաշտոնական արձանագրություններում կոչվում էր ԴՄ//Թեյշեբա: Բայց նրա պաշտամունքի լեռը՝ Միփանը, կոչվում էր Eritia, իսկ այստեղ գտնվող նրա արբավայր քաղաքը՝ Eridia:⁴¹ Այս նույնական անունների մեջ մենք տեսնում ենք Eri-di-ia բաղադրիչներից բաղկացած Ամարոպի աստծու բուն անունը և -ia տեղանվանակերտը: Ընդ որում, *Eri-di դիցանվան երկրորդ բաղադրիչը հայերենի *դի-ք* «աստված» բառն է, իսկ առաջինը նույնն է լինելու հիշյալ *եռ/հեռ* արմատի և Erra դիցանվան հետ: Ի դեպ, Erra-ն՝ որպես օտար աստվածության անուն, նախապես գրվում էր առանց դիցանվանական ցուցիչի:⁴²

Ներգալի խորհրդանիշներից երկրորդը առյուծն էր: Ներգալը հաճախ ինքն էր դառնում կատաղի առյուծ: Նրան մարդկերպ աստված պատկերացնելիս օժտում էին փարթամ մորուքով, եղջերազարդ թագ-գլխանոցով, մարտական մեկ-երկու մահակով, որոնց վերնամասերն ավարտվում էին առյուծի գլխով:⁴³ Ներգալի և նրա նախատիպի (նախատիպերից մեկի) խորհրդանիշ առյուծը ևս առասպելաբանական մտածելակերպով համադրվել էր թրին, անշուշտ, կեռ թրին: Հայկական ավանդույթներից մեկում «Արևը առյուծի մեջքին նստած պաննում է երկնականարի վրայով և երեկոյան գնում հանգստանում է մոր գրկում: Առյուծն իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից»:⁴⁴ Իսկ որ նա համադրվել է թրին, պարզվում է «Թուր և պատյան» պատասխանն ակնկալող հանելուկներից. «Փտած փետր փորեցին,/Ապլանը (առյուծ) մեջը հորեցին», «Տախտակե տուն շինեցի,/Ապլանը մե-

³⁹ ՀԱԲ, հ. II, էջ 29-30: *Ամենայն հավանականությամբ, սեպագիր Erra-ն արտացոլում է հ.-ե. *ers-/*s->հայ. *րր>ռ օրինաչափ հնչյունափոխության միջին օղակը. հմմտ. հայ. առն/հուն. ἄρην, ἄρρην «այրական, առնական»<հ.-ե. *rsen-, հայ. թառ-ամ < հ.-ե. *tr-s-, թոռում<*tors- (ՀԱԲ, հ. I, էջ 261, հ. II, էջ 155-156):*

⁴⁰ Афанасьева В., Гильгамеш и Энкиду, М., 1979, стр. 52, пр. 14.

⁴¹ Арутюнян Н., Топонимика Урарту, Ер., 1985, стр. 259, 261. Միփանի անարոպային լեռ լինելու իրողությունը իր արտացոլումն է գտել ինչպես իրեն տրված անուններից մեկը ևս Գոռոգ-ը լինելու մեջ, այնպես էլ հետևյալ արտահայտություններում. «Միփանա սարի գլուխը սաստիկ փոթորիկ է», «Միփանա սարի գլուխը դուման ու մրժ է», «Դուման բռներ Միփանա սար» (Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., հ. I, Եր., 1978, էջ 506, 570):

⁴² Афанасьева В., Эпра, МЗЭ, стр. 640.

⁴³ Comte Fernand, Larousse des mythologies du Monde, Editions France Loisirs, Paris, 2004, p. 148-150. Նկարը տե՛ս Ions Veronica, The World's mythology in colour, Book Club Associates, London, 1974, fig. p. 14 (Nergal Terracotta relief from Kish, Ashmolean Muzeum).

⁴⁴ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 4:

ջը թաղեցի», «Նեղ գերեզման,/Առյուծը մեջը թաղած»:⁴⁵ Այս հանելուկների ընդարձակ աշխարհագրությունը՝ Ախալցխա, Արցախ, Խարբերդ, Կարին, Մուշ, Շիրակ, Մալմաստ, Սյունիք, Վաղարշապատ, Վան, խոսում է դրանց և «առյուծ»/«թուր» համադրման համահայկական բնույթի մասին:

Հրեղեն Ներգալի խորհրդանիշ առյուծը իր մորթու շիկագույն երանգի պատճառով ևս առասպելաբանական մտածելակերպով համադրվել էր կրակին: «Անթեղված կրակ» պատասխանն ակնկալող շիրակյան հանելուկում ասվում է. «Փութ-փութ փորին,/Ասլանը մեջը հորին (թաղել)»:⁴⁶ Այս դեպքում, անկասկած, առասպելաբանական մտածելակերպով համադրված են եղել երկրագնդի ընդերքի/թոնրի խորքում անթեղված կրակը և առյուծը: Ուրեմն, «երկնքից ընկած և գետինը մտած» կայծակը ընդերքում չէր հանգել, այլ անթեղվել էր, ինչպես հրաբխի լավան: Անտարակույս, այդպիսի պատկերացման արգասիք է մեր *Թոնդրակ* (Թոնրիկ, Թոնիր) լեռնանունը,⁴⁷ որի հիմքում *թոնիր* (բարբառներում *դ-ի* հավելումով) «գետնափոր փուռ» բառն է: Թոնդրակը Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագումով լեռներից մեկն է, որ շարունակում է արձակել ծծմբային գազ և ջրային գոլորշիներ:

Ներգալի խորհրդանիշներից մեկի՝ վիշապի կերպարը ևս կարող էր ունենալ հայկական ծագում և արտացոլել ծուխ, կրակ արտաշնչող և լավա արձակող հրաբխային լեռան ցնորական ընկալումը: Եթե Թոնդրակը այսօր էլ լրիվ հանգած չէ, ապա հեռավոր անցյալում թե՛ նա, թե՛ մեր լեռների ուրիշ հրաբխային գագաթներ այդպիսի վիշապներ էին ընկալվելու: Նախապես դրանց կարող էին վերաբերել հետևյալ երկու հանելուկները: «Հորը մութն ա,/Ուշաբը (վիշապը) մեջն ա,/Դժարը պտիտ գալն ա»:⁴⁸ Լոռիական այս հանելուկը ակնկալում է «թուր և պատյան» պատասխանը, բայց ավելի հարմար է գալիս ննջող հրաբխին: «Քարեն էլավ ուշապ դարձավ,/Աշխարհք կերավ, չըկրթացավ (կշտանալ)»:⁴⁹ Խոտրջուրյան այս հանելուկն էլ ակնկալում է «կրակ» պատասխանը, բայց հարմար է գալիս նաև կրակ արտանետող և լավա արձակող հրաբխին:

Ներգալի մանգաղաձև թուրը առասպելաբանորեն համադրված էր մանգաղին, ուստի «մանգաղ» պատասխանն ակնկալող հետևյալ հանելուկում ասվում է. «Դամա, դամա, լեզգու դամա (դաշույն),/Լավ ձիու պես փոնգում ա»:⁵⁰ «Մանգաղ» նշանակող հայ. *անկիւղ* բառում առկա են *անկ* (<հ.-ե. *ang-/*ank- «ծռել, թեքել» արմատը և *-իւղ* վերջածանցը (հմմտ. *երկ-իւղ*, *ընձ-իւղ*): Հնդեվրոպական լեզուների արմատակից բառերից մերինի ճիշտ իմաստակիցն է հին մակեդոներեն *ἀγκάλς* «մանգաղ» բառը:⁵¹ Արմատի *ang- տարբերակը՝ որպես պաշտամունքի ոլորտի

⁴⁵ ՀԺՀան., էջ 191:

⁴⁶ Նույն տեղում, էջ 21:

⁴⁷ Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., հ. I. Եր., 1978, էջ 56, 398: Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 46, 53:

⁴⁸ ՀԺՀան., էջ 191:

⁴⁹ Նույն տեղում, էջ 21:

⁵⁰ Նույն տեղում, էջ 126:

⁵¹ Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 34:

բառ անփոփոխ պահպանված է անդրշիրիմյան աշխարհի տիրակալի հայկական *Անգեղ* անվան⁵² մեջ: Ընդերքի տիրակալից անբաժան այդ իրն այնքան կարևոր էր և տարողունակ իմաստ ուներ, որ «թուր, սուր» նշանակող արքադերեն *namšaru* բառը Միջագետքում երբեմն գործածվում էր Ներգալ/U.GUR անունների փոխարեն:⁵³ Ըստ այսմ հասկանալի է դառնում հայերեն *նրան* «թուր»⁵⁴ բառի մեջ նույնպիսի հենքի որոնումը: Մեր կարծիքով, *նրան* < *նիր-ան, որում -ան-ը վերջածանց է (հմմտ. *բերան, գերան, դուրան* և այլն), իսկ *նիր արմատը տարբերակն է Nergal անվան հիմք *ներ* < հ.-ե. *ner- արմատի: Ուրեմն, *նրան*-ը կեռ թուր էր լինելու՝ Անգեղ աստծու կեռ թուրը:

Անգեղ դիցանունը կազմած *անգ*- և *-եղ* բաղադրիչներից երկրորդը ծագում է հ.-ե. *-elo/*-ilo վերջածանցից և առկա է նաև *անծեղ, բորեղ, մաթիլ, ոջիլ, տառեղ-ն* բառերում (հմմտ. ռուս. նույնածագում -ел վերջածանցը *дятел, козел, орел, осел* բառերում): Ըստ երևույթին, *Անգեղ* դիցանվան **անգ* արմատը ևս ժամանակին թե՛ «թուր», թե՛ «հնձի գործիք», թե՛ «անգղ» է նշանակել, որովհետև հնդեվրոպական *ang- արմատի «ծռել, թեքել» իմաստները հարմար էին գալիս սրանց տեսքին (հմմտ. հուն. ἄγκυλος «ծոված, կոր», ὄγκως «կեռ», լատին. uncus «կարթ», հրգ. angō «ձկնորսական կարթ» և այլն). *անգղ* թոչնանունը ծագել է թոչնի կեռ կտուցի պատճառով:⁵⁵ Ի դեպ, *Անգղ* դիցանունը պետք չէ շփոթել այս թոչնանվան հետ: Վերջինից են ծագում առասպելական Տորքի *Անգեղեայ* մակդիրը և *Անգեղտուն* գավառի անունը:

Ներգալ/U.GUR-ը, լինելով ստորերկրյա թագավորության տիրակալ, սերտ կապի մեջ էր բուսական աշխարհի և բերքատվության հետ: Միջագետքի խուռիական Արապխայում նրան ձոնված ամիսը կոչվում էր «հնձի» ամիս:⁵⁶ Այս գործում առանձնահատուկ դեր էր վերապահված նրա կեռ թրին, որովհետև առասպելաբանական մտածելակերպով հացահատիկի՝ մանգաղով կատարվող հունձը հասկերի գլխատումն էր, իսկ հասկի գլխիկը նույնացված էր մարդու գլխին: Ըստ այսմ, պատահականության արդյունք չէ հայերեն *հասկ* «հասած ցորենի ցողունի գլուխը» և *հասկանակ* «հասու լինել, իմանալ, ըմբռնել» բառերի արմատակիցներ լինելու փաստը:⁵⁷ Հասկի գլխիկի և մարդու գլխի առասպելաբանական նույնացվածության մասին առասպելներից և սովորույթներից հիշարժան է փոյուզացիների հետևյալ սովորույթը. «Փոյուզացիները հնձի ժամանակ դաշտում հայտնված որոշ մարդկանց, հատկապես օտարերկրացիներին... բռնում, խրձերով փաթաթում և

⁵² Աստվածաշունչ, Դ թագաւորաց, ԺԷ 30 (հունարեն Աստվածաշնչում՝ Έργελ է):

⁵³ Капанцян Г., նշվ. աշխ., հ. I, էջ 89-90: Խեթական մեհենագրության մեջ ևս առկա է նույնպիսի մոտեցում: ⁵⁴ U.GUR գաղափարագրի համարժեքն այստեղ մի բաղադրյալ մեհենանշան է, որի վերնամասն գրադեցնում է «աստված» նշանակող, իսկ ստորին մասը՝ ձախ ձեռքով դաշույն բռնած մեկ ուրիշ նշան (Güterbock H., Les hiéroglyphes de Yazılıkaya, A Propos d'un travail Récent, "Recherche sur les grandes civilisations", N 11, Paris, 1982, tabl. I-IV).

⁵⁴ ՀԱԲ, հ. III, էջ 477:

⁵⁵ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 233:

⁵⁶ Янковская Н., Ашшур, Митанни, Аррапхэ, "История древнего мира. Ранняя древность", М., 1989, стр.196.

⁵⁷ ՀԱԲ, հ. III, էջ 46, 48:

գլխատում էին, որից հետո հասկերով փաթաթված նրանց մարմինները գցում էին ջուրը»:⁵⁸

Հայկական հնագույն հավատալիքներն արտացոլող հանելուկներում գերանդին ու մանգաղը համարվում են նաև մահվան գործիք, իսկ անդրշիրիմյան աշխարհի տիրակալը՝ իր սևության պատճառով, փոխարինված է արաբ կամ գնչու անձնավորությամբ: Ահա «գերանդի» պատասխանն ակնկալող հանելուկներից երկուսը.

1. Արաբ-օղլին բեղը հըլորեց,
Հազար ու մի ջան կըտորեց (Լոռի):
2. Ղարաճօղլանը (գնչու) պեխը ոլորեց,
յոթը հազար մարդ կլորեց (Ախալցխա):⁵⁹

Մանգաղի առթիվ էլ կա հետևյալ ասացվածքը. «Մանգաղը շուռ տուր, հոգին կուլ տուր»:⁶⁰ Այստեղ պարզ արտացոլված է մանգաղի՝ որպես հոգեառի զենքի դերը:

Այսուհանդերձ, մանգաղն ու գերանդին համարվել են նաև կայծակի խորհրդանիշներ: Դա փաստվում է հետևյալ հանելուկների համեմատության միջոցով:

1. Մարեն կուգա սըլվըլալեն,
Օսկի պեխեր պըլպըլալեն,
Կաթնաղբբեն ջուր կը խմե,
Օովանակեն ձեն կը հանե:⁶¹
2. Մարեն կգա սըլվըլալեն,
Ոսկի բեղեր պըլպըլալեն:⁶²

Ախալցխայում գրի առված առաջին հանելուկն ուղղակի «Որոտ և կայծակ» պատասխանն է ակնկալում, իսկ երկրորդի պատասխանն է «Գերանդի»: Այս վերջինն իր տարբերակներով հայտնի էր Լոռիում, Շիրակում, Ալաշկերտում, Հարքում (Բուլանըխ), Բասենում, Կոտայքում և Ջավախքում:⁶³ Գերանդու նախատիպը ևս մանգաղն է՝ ամենահին հնձի գործիքը, որը նրանից տարբերվում է ավելի նեղ բացվածք ունեցող շեղբով:

Ներգալի խորհրդանիշներից մեկն էլ ագռավն էր:⁶⁴ Կարծում ենք, թե սա ևս հիշողությունն է Ներգալի նախատիպ ամպրոպային աստվածության՝ Erca-ի հայրենիքի: Ս.GUR դիցանվան GUR բաղադրիչի վերաբերյալ վերևում նշվեց, որ նրա հիմքում ընկած բնաձայն արմատը հայերենում առկա է *գոռ* և *գուռ* տարբերակներով:

⁵⁸ Ֆրեզեր Ջ., Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 499:

⁵⁹ ՀԺՀան., էջ 125:

⁶⁰ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., հ. III, Եր., 1944, էջ 250: Մահվան ոգին եվրոպական ժողովուրդների հավատալիքներում գերանդին ուսին շրջող մի կմախք էր (Токарев С., Смерть, "Мифы народов мира", т. II, М., 1988, стр. 457):

⁶¹ ՀԺՀան., էջ 12:

⁶² Նույն տեղում, էջ 125:

⁶³ Նույնը:

⁶⁴ Khazai Khosro, նշվ. աշխ., էջ 46:

րով, որ վերջինից է ծագում ամպրոպի անձնավորում առասպելական կերպարին Հայոց ձորի բնակիչների տված *Գոգո բարա* անունը: Նույն այդ տարբերակն է ընկած *գոգոսլ* բայի հիմքում, որը նշանակում էր ոչ միայն «ամպի, փոքի, կրակի, կառքի ձայն», այլև «ագռավի հանած ձայն»՝ դեռևս գրաբարում:⁶⁵ Ընդ որում, *ագռաւ* բառն արդեն իսկ բացահայտում է *գուռ* բնաձայն արմատի հետ իր ունեցած կապը, որը նկատել էր դեռևս Գրիգոր Տաթևացին, իսկ Հակոբ Ղրիմեցին նաև բացատրում է. «վասն *գոգոսլոյն* ագռաւ ասեմք»:⁶⁶ Իսկապես էլ, *ագռաւ* <*ա-գուռ-հաւ*, որում *ա-ն* նախահավելվածական ձայնավոր է, *հաւ-ը*՝ «հավք, թռչուն» բառը, իսկ *գուռ-ը* խոսքի առարկա բնաձայն արմատը: *Ագռաւ* բառում օրինաչափորեն սղվել է *ու* ձայնավորը և ընկել *հ-ն* (հմմտ. *արմաւ* «փյունիկ թռչունը» <*արմ-հաւ, կաքաւ* <**կակ-հաւ*):

Հայոց ստուգաբանական-բացատրական այն ավանդություններում, որոնցում ագռավի ու օձի հակամարտությունն է առանցքային տեղում, ագռավը բացահայտում է ամպրոպաբնույթ աստվածության հետ իր ունեցած խորհրդանշանային կապը: Ահա այդ ավանդազրույցներից մեկը. «Գրիգոր Տաթևացին երեխա ժամանակ արածեցնելիս է եղել Տաթևի վանքի գառները: Մի օր աղբյուրից ջուր խմելիս օձը ուզում է խայթել նրան: Տեսնելով այդ, ագռավը նետում է իրեն աղբյուրի մեջ: Օձը Գրիգորի փոխարեն խայթում է ագռավին: Տաթևի վանահայրը օրհնում է անձնագոհ ագռավին և թաղել է տալիս նրան աղբյուրի կողքին, որի անունը դրանից հետո տեղացիները Ագռավի աղբյուր են դնում»:⁶⁷ Նույնպիսի ավանդություններ են պատմվել քրիստոնեական խորհրդանշաններին և սրբերին առնչվող այնպիսի վայրերի վերաբերյալ, ինչպիսիք են Ագռավավանքը (Աշտարակի շրջան), Ագռավախաչը (Տաթևի մոտ), Ագռավի գերեզմանը կամ Լուսավորչի ագռավը (ԼՂՄարտունու շրջան), Ագռավի գերեզմանը (Լոռու Հաղբատաձոր վայր):⁶⁸ Դրանցում ագռավը պաշտամունքի արժանացած թռչուն է:

Ներգալի խորհրդանիշ կարիճը, ըստ երևույթին, այդպիսին համարվել է նրա տեղական ինչ-որ նախատիպի միջոցով և առնչություն չի ունեցել այս աստծու հայկական նախատիպի հետ: Միջազետքը Հայկական լեռնաշխարհից տարբերվում էր նաև իր չորային կլիմայով: Ի տարբերություն խոնավ Հայկական լեռնաշխարհի՝ դա կարիճների կենսաձևին հարմար կլիմա էր: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի այն իրողությունը, որ կենդանիների՝ մասնավորապես միջատների մասին հայկական բազմաթիվ հանելուկներում կարիճն անտեսված է:⁶⁹ Ցերեկները գետնախորշերում ու ճեղքերում թաքնվող կարիճը համարվել է ընդերքային էակ, իսկ նրա կեռ խայթոցը, առասպելաբանական մտածելակերպով,

⁶⁵ ՀԱԲ, հ. I, էջ 600:

⁶⁶ Նույն տեղում, էջ 79:

⁶⁷ Ղանայանյան Ա., Ավանդապատում, էջ 97:

⁶⁸ Նույն տեղում, էջ 224, 262-263, 264, 269:

⁶⁹ ՀՄՀան., էջ 54-84:

համադրվել է Ներգալի կեռ/մանգաղաձև թրի հետ (հմմտ. *կոր* «ծուռ, կոր» և նրա հետ նույնական *կոր* «կարիճ» բառերը):⁷⁰

Այսպիսով, շումերների Ներգալ աստծու նախատիպ առասպելաբանական կերպարի հայկական գծերի բացահայտումը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ միջագետքյան առասպելաբանությունն ունեցել է ոչ միայն բուն շումերական և սեմական-աքադական, այլև հնդեվրոպական-հայկական բաղադրատարր: Այսպիսի եզրակացությունը համահունչ է մ.թ.ա. V–III հազարամյակների հնագիտական նյութի ուսումնասիրությունից բխող այն եզրակացությանը, ըստ որի՝ մ.թ.ա. V–III հազարամյակների Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում գոյություն է ունեցել հնդեվրոպական էթնիկական տարրը ներկայացնող բնակչություն:⁷¹

К ОСНОВЕ МИФОЛОГИЧЕСКОГО ОБРАЗА НЕРГАЛ – U. GUR

___ *Резюме* ___

___ *С. Петросян* ___

Мифологический прототип шумерского бога Подземного царства–Нергала формировался, по нашему мнению, на Армянском нагорье. Это божество являлось громовержцем и олицетворением огня как на вершине высокой, тучевой, молниеносной горы, так и внутри земли. Этот прототип Нергала формировался под влиянием образа главного бога индоевропейских предков армян – бога громовержца, бога подземного огня. На основе этого образа в дальнейшем формировался также образ главного бога Хайасы – U. GUR.

Теоним Nergal < Ner-gal, где *ner- < u.- e. *ner- *ner- “внутри, внутренний”, “вниз, нижний” + шумер. gal “большой” (для *ner- ср. имя арм. злого духа *Нерн*). Нергал носил эпитет Gugalanna (шумер. GU “бык”+GAL “большой”+ AN “небо”), т. е. “большой бык небес”, а на одной из старовавилонских печатей он изображен на горе: ср. мифологические сопоставления “бык/гром, молния” и “бык/гора”. Позже у шумерийцев–жителей южной, равнинной страны, страны без гор, Нергал сохранил черты своего огненного прототипа, но он уже не громовержец (Ерра), а стал олицетворением палящего солнечного огня.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Մարգիս Գարեգինի - պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
 հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
 E-mail: Vahe1996@mail.ru

⁷⁰ ՀԱԲ, հ. II, էջ 643–644:

⁷¹ *ИЯИ*, т. II, стр. 891–894:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) *

Վերածնունդը եվրոպական պատմամշակութային իրողություն է, որոշակի մի շրջափուլ, որ՝ որպես գաղափարագեղագիտական շարժում, խորհրդանշում է անցումը միջնադարից նոր ժամանակների: Վերածնունդն առավել ամբողջական արտահայտվել է իտալական գրականության մեջ և արվեստի մյուս ճյուղերում՝ կերպարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն: Այն ձևավորվեց Իտալիայում 14-րդ դարի սկզբներին և գոյատևեց մինչև 16-րդ դարի վերջը: Եվրոպական մյուս երկրներում այդ ալիքը տարածվեց քիչ ավելի ուշ՝ 14-րդ դարի կեսերին և երբեմն հասեց 17-րդ դարի սահմանագիծը: Անվանակոչվեց Ռենեսանս, Ռեստավրացիա, Իտալիայում՝ Rinascimento – Ռինասչիմենտո, Կվիկվիչենտո և ըստ հարյուրամյակների ստացավ տարբեր անվանումներ՝ Դուչենտո (1200-ական թթ.), Տրիչենտո (1300-ական թթ.), Կվատրոչինտո (1400-ական թթ.), Չինկվեչինտո (1500-ական թթ.): *Վերածնություն* եզրույթը 1550 թ. իր «Կենսապատում» գրքում օգտագործել է գրող և նկարիչ Ջորջո Վազարին, ինչը համաշխարհային ճանաչում ձեռք բերեց ֆրանսերեն Renaissance - Ռենեսանս ձևով: Ժամանակակից կիրառությամբ այդ եզրույթը 19-րդ դարում կիրառել է ֆրանսիացի պատմաբան Ժ.Միշլեն:

Վերածնունդ եզրույթն իր հիմնային իմաստով նշանակում է վերածնել: Այսինքն՝ հաղթահարել կաթոլիկ եկեղեցու հազարամյա բռնատիրությունը՝ դոգմաներ, հավատաքննություն, ազատամիտ գաղափարների հալածանքներ, որ սկիզբ առավ քրիստոնեությունը պետական-պաշտոնական կրոն հռչակելուց հետո, և կամուրջ նետել դեպի 4-րդ դար՝ հեթանոսության և անտիկ գրականության վերջը, դրանով իսկ վերածնել ու շարունակել մոռացված դասական արժեքները և շարունակել նրանց ավանդույթները: Այս վերադարձի հիմքում բնության ուսումնասիրությունն էր՝ որպես արժեհամակարգի վերականգնման հիմունք:

Վերածնունդը գաղափարական շարժում էր, որ ընդգրկել էր ոչ միայն ամբողջ արվեստն ու մշակույթը, այլև տնտեսական կյանքը: Փոխվում էր մի ամբողջ հասարակարգ. ավատատիրությունը տեղը զիջում էր ձևավորվող կապիտալիզմին: Զարգացան քաղաքները, արհեստները, առևտուրը, եղավ գրատպության գյուտը, սկսվեցին աշխարհանվաճ ճանապարհորդությունները, արվեցին աշխարհագրական մեծ հայտնագործություններ:

Վերածնունդի դարաշրջանի եվրոպական գրականությանը, ընդհանրապես՝ արվեստին բնորոշ են նաև այլ հատկանիշեր: Գրականություն մտավ ազատ մարդու կերպարը, գրական հերոսը խորապես անհատականացվեց: Մտավոր, հոգևոր զարթոնքի ժամանակ էր, մարդը հարգանք էր պահանջում իր հան-

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

դեպ՝ առաջ մղելով իր անձը, անհատական շահը: Կենդանի իրական մարդը քայլում էր գրականության պարտեզներում: Եվ այդ պարտեզներն էլ իրենց տեղն ունեին, որովհետև կենդանի բնությունն այլևս անպակաս էր գեղարվեստից: Միջնադարի կրոնամիստիկական մտածողությունը ճանապարհ հարթեց դեպի իրականություն՝ աստիճանաբար պայմանավորելով նաև իրապաշտության վերածնունդը որպես ստեղծագործական մեթոդ:

Սա այն է, ինչը բնորոշ է եվրոպական Վերածնունդին, ինչն առանձին երկրներում՝ Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, եվրոպական մի քանի այլ երկրներ, դրսևորեց իր յուրահատկությունները, և որոնց մասին կա հսկայական գրականություն: Միաժամանակ նշենք, որ Վերածնունդը լիարժեք դրսևորվել է միայն Իտալիայում, որովհետև տեղական ազգային շարժում էր: Վերածնունդն արևմտյան իրողություն է, արևելյան վերածնունդ հասկացությունը պայմանական է: Տեղական ներքին վերափոխությունները, որ նկատվեցին Չինաստանում, Հնդկաստանի հյուսիսում, Պարսկաստանում, հարավկովկասյան և միջինասիական երկրներում, կապ չունեն եվրոպական Վերածնունդի հետ: Ինչքան էլ միջնադարյան պարսկական քնարերգությունը նոր շունչ ու երանգ բերի թե՛ ազգային և թե՛ համաշխարհային գրականության մեջ, ինչքան էլ տրվեն Ռուսթավելու, Ալիշեր Նավոյի անունները, միևնույն է, այդ ամենը բացարձակապես կապ չունի եվրոպական Վերածնունդի հետ և որպես ինքնուրույն, ինքնատիպ, ինքնակա, ինքնաբավ արժեք պետք է գնահատվի տվյալ երկրների ազգային կյանքի յուրահատկությունների շրջանակում: Այս դեպքում վերածնունդ բառը պետք է օգտագործել ոչ թե որպես եզրույթ, դարաշրջանի անուն և գրել մեծատառ, այլ բնորոշիչ բառ, որի հումանիշներ կարող են լինել զարգացումը, ծաղկումը, առաջադիմությունը, սկզբնավորումը, վերընթացը, վերստեղծումը, վերակենդանացումը:

Բուն եվրոպական Վերածնունդ եզրույթի իմաստաբանությամբ ե՞րբ է սկզբնավորվել հայկական վերածնունդը և կամ ընդհանրապես՝ կա՞ այդպիսի բան, թե՞ ոչ: Հայագետների մի մասն օգտագործում է *հայկական վերածնունդ* արտահայտությունը, ընդունում հայկական վերածնունդի գոյությունը, և ժամանակային սահմանները հասցնում են մինչև 10-րդ դար, երբեմն նախավերածնունդ և վաղ վերածնունդ արտահայտություններով հասնում մինչև 9-րդ, 7-8-րդ դարեր և եզրափակում 14-րդ դարով: Գրեթե բոլորը մատնանշում են նույն նախադրյալները՝ հայոց թագավորությունների վերականգնում, քաղաքների զարգացում, առևտրի աշխուժացում, տնտեսական առաջընթաց, անցում գրաբարից միջին հայերենի, գրականության աշխարհիկացում, և տալիս են Նարեկացու, Շնորհալու, Իմաստասերի, Գրիգոր Տղայի, Լամբրոնացու, Ֆրիկի, Երզնկացիների, Գոշի, Այգեկցու անուններ: Բայց արդյոք այս ամենը վերածնունդ է՞ բառի բուն եվրոպական իմաստով և ոչ թե պայմանական նշանակությամբ: Ո՛չ, դա վերածնունդ չէ, այլ ընդունված արտահայտությամբ՝ աշխարհականացում, աշխարհիկացում: Իսկ ինչո՞ւ վերածնունդ չէ, որովհետև հայ գրականությունը չունեցավ ընդհատում, ինչն ունեցավ եվրոպական գրականությունը 4-14-րդ դարերի միջև: Հայ գրականության մեջ ինչ 5-րդ դարում էր, նույնը, ավանդույթների բնականոն շարունակությամբ ու աստի-

ճանական զարգացումով, հասավ Նարեկացուն ու Շնորհալուն, իսկ Ֆրիկից և հաջորդներից սկսած՝ խորացավ աշխարհիկացման գործընթացը, ինչն արտահայտվեց գրաբար-միջին հայերեն լեզվական փոփոխությամբ և պատկերվող նյութի մասնակի աշխարհիկացմամբ՝ սեր, բնություն, իրական կյանքի ազդակներ, մարդկային գործոն և այլն: Հայ գրականությունը, ինչպես 5-րդ դարում, այնպես և հետագա դարերում, ներառյալ նաև 10-14-րդ հարյուրամյակները և հետո, առանձին բացառություններով հանդերձ, եկեղեցու մենաշնորհն էր: 5-ից 15-րդ դար՝ փոփոխություն ու զարգացում, առաջընթաց ու նորոգում, անշուշտ, կա, բայց դա ընդհատումներ չունեցող ներքին միասնական ընթացքով առաջացող ամբողջական գրականություն է, որի համար վերածնունդ արտահայտությունը խորթ է և տեղավորվելու միջակայք չունի: Քաղաքական պայմանները կարող էին բարենպաստ լինել կամ չլինել, բայց գրականության բուն ազգային յուրահատկությունը դրանից չի փոխվել: Եվ եթե փոխառած *եվրոպական Վերածնունդ* եզրույթով չենք արժեքավորում հայ գրականությունը՝ ամենևին չի նշանակում կրճատել կամ սեղմել մտավոր տարածությունը, ընդհակառակը՝ դա միայն կարող է նպաստել ազգային գրականության բուն ինքնատիպ բնույթի բացահայտմանը:

Վերածնունդը՝ որպես շարժում, ենթադրում էր անտիկ գրականության վերածնունդ, մինչեռ հայ իրականության մեջ անտիկ շրջանի գրականության նմուշները ոչնչացվել էին, իսկ հնագույն բանահյուսական պատառիկներն այդ շրջանում գրականություն չմտան: Այսինքն՝ բառի բուն իմաստով, ինչպես եվրոպական գրականության մեջ էր, հայկական վերածնունդ տեղի չունեցավ:

Նույնը վերաբերում է նաև տիեզերախոս Գրիգոր Նարեկացուն:

Հայկական վերածնունդը՝ որպես այդպիսին, եզրույթի բուն նշանակությամբ, տեղի է ունեցել ավելի ուշ՝ 18-րդ դարում և հիմնավորապես կապվում է Մխիթարյան միաբանության ծրագրած հայագիտական գործունեության հետ: Նրա՛նք էին, որ վերածնեցին ազգային գիտակցությունը, հատկապես հայագիտությունը որպես ամբողջական համակարգ՝ գիտություն, արվեստ, մշակույթ, նրա՛նք էին, որ վերածնեցին արդեն իսկ մեռած գրաբարը, նրա՛նք էին, որ վերածնեցին և գիտական ծանրակշիռ աշխատասիրությամբ հրատարակեցին հնագույն մատենագիրների երկերը, նրա՛նք էին, որ լատինական ազդեցություններից մաքրեցին հայ գրավոր և բանավոր խոսքը և նոր կյանք պարզեցին հայոց բառազանձին՝ այդ ամենն ի մի բերելով բառարանների մեջ, դարձյալ նրա՛նք էին, որ հարություն տվեցին բանահյուսությանը՝ ստեղծելով Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն»-ի պես ուղենիշ երկ, որից հետո հայ գրականությունն զգալիորեն շրջվեց դեպի բանահյուսությունը (Աբովյան, Հովհաննիսյան, Պռոշյան, Աղայան, Թումանյան...), նրա՛նք էին, որ Հովհան Վանանդեցու վիպերգերով, մյուսների տարատեսակ երկերով նոր կյանք հաղորդեցին հայոց առասպելաբանությանն ու ավանդապատումներին և նոր հուն բացեցին հայ գրականության մեջ, նրա՛նք էին, որ վերածնեցին հայոց թատրոնը, որ դեռևս 5-րդ դարից լռեցվել էր եկեղեցու հայրերի պարտադրանքով՝ որպես հավատը թուլացնող անիմաստ զվարճանք, նրա՛նք էին, որ նոր հիմքերի վրա դրեցին թարգմանական գործը՝ հայերենի վերածելով եվրոպական

գրականության լավագույն էջերը, նրա՛նք էին, որ մշակեցին հայոց բանավեստի տեսությունը, որ գիրք ու դասագիրք տվեցին ժողովրդի ձեռքը և վերստին հայոց գործը շարունակող աշակերտներ կրթեցին, ի վերջո, նրա՛նք էին, որ ավերակ վանքերի փլատակների միջից հավաքեցին հայոց ձեռագրերը, վերականգնեցին դրանք և սրբությամբ պահեցին մատենադարաններում: Սա արդեն իսկական վերածնունդ էր՝ հայկական կյանքին բնորոշ առանձնահատկություններով:

Թատերական ներկայացումների կապակցությամբ չնոռանանք, որ 5-րդ դարից հայոց եկեղեցին (Խորենացի, Մանդակունի, Մայրավանեցի) բանադրեց թատրոնը՝ որպես աշխարհիկ անիմաստ զվարճանք, կործանարար խեղկատակություն, իսկ կաթոլիկ եկեղեցին պահեց թատրոնը: Միայն Անգլիայում Շեքսպիրից հետո պատլամենտը 1642 թ. սեպտեմբերի 2-ի որոշմամբ արգելեց թատրոնների գործունեությունը՝ որպես սատանայության որջ¹: Թատրոնը՝ որպես արվեստի տեսակ, 18-րդ դարում վերականգնվեց նախ հայ կաթոլիկ միջավայրում, այնուհետև 19-րդ դարում՝ ամբողջ հայ իրականության մեջ:

Ահա սա՛ է եվրոպական Վերածնունդի հայկական համարժեքը, իսկ 9-14-րդ դարերում հայոց թագավորությունների վերականգնումը, խաղաղ շինարարության հարյուրամյակը, քաղաքների, այդ թվում՝ քաղաքամայր Անիի ծաղկումը, Կիլիկիայի հայոց պետության ստեղծումն իր ամբողջ համակարգով, հիմնականում 13-րդ դարից հայ գրականության մեջ սկզբնավորված աշխարհականացման գործընթացը՝ միջին հայերեն, գրողի անհատականությունը՝ որպես գրական կերպար, սիրային քնարերգություն, ահա այս ամենը միասին պատմամշակութային ա՛յլ շարժում է, ունի ա՛յլ բացատրություն, և եթե անգամ վերափոխումների այդ ժամանակների համար օգտագործվում է նույն *վերածնունդ* եզրույթը, ապա դա միանգամայն ա՛յլ վերածնունդ է, արմատապես տարբեր եվրոպականից: Դա ոչ լավ է, ոչ էլ վատ է, դա ազգային մշակութաբանության յուրահատկությունն է:

Հայ գրական-մշակութային իրականությունները՝ պայմանավորված հայ ժողովրդի պատմական ճակատագրի առանձնահատկություններով, շատ դեպքերում համահունչ չեն եվրոպական զարգացումներին: Դրա նախադրյալները շատ են, և եվրոպական կաղապարները կուրորեն պատճենահանելու դեպքում, մենք կկորցնենք բուն ազգային առանձնահատկությունները: Կարող են չհամընկնել գրապատմական օրինաչափությունները՝ հին, միջնադարյան, նոր և նորագույն շրջանների գրականության շրջանաբաժանումները, գրական մեթոդների տարածման և կենսունակության ժամանակները, լեզվական փոփոխությունների փուլերը և այլն: Օրինակ՝ եվրոպական Վերածնունդի յուրահատկություններից մեկը լատիներենին փոխարինող ազգային լեզուներն էին՝ իտալերենը, ֆրանսերենը... Մեր իրականության մեջ գրաբարը 13-րդ դարում թեև փոխվեց միջին հայերենի, բայց չվերացավ, և ահա 18-րդ դարի սկզբին գրաբարը վերստին վերականգնելու պահանջ առաջացավ, որ հետո արդեն պետք է հաղթահարվեր աշխարհաբարով:

«Հայ գրականության գալիք օրը « զեկուցման մեջ (1914), անդրադառնալով հայ գրականության պատմական զարգացման օրինաչափություններին, Վահան

¹ Այս մասին տե՛ս Դ. Գասպարյան, *Հայ գրականություն*, գ. 4, Եր., «Ձանգակ», 2010, էջ 312-315:

Տերյանն ասում էր, որ մեր իրականության մեջ գրական դարերը խառնվել են իրար: Նա բերում է իր շատ ցայտուն և համոզիչ օրինակները, իսկ ես կներկայացնեմ իմ դիտարկումները. հայոց միջնադարի վերջին ներկայացուցչի՝ Մայաթ-Նովայի «Դավթար»-ը լույս տեսավ 1852-ին, իսկ նրա անունն ու արվեստը Հովհ. Թումանյանի և Գ.Բաշինջաղյանի ջանքերով ժողովրդականացավ Տերյանի վերոհիշյալ զեկուցման օրերին՝ մի կողմից «Մթնշաղի անուրջներ» (1908), գրական բարձր հայերեն ու խորհրդապաշտություն, մյուս կողմից՝ Մայաթ-Նովա ու Թիֆլիսի բարբառ: Այս տեսակետից շատ հանգուցային է 1858 թվականը, երբ միաժամանակ լույս տեսան հայկական դասականապաշտության (կլասիցիզմի) գլխավոր երկը՝ Արսեն Բագրատունու «Հայկ Դյուցազն» վիպերգը, հայ նոր գրականության առաջնեկը՝ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը և առաջադիմության հիմնական ձայնավորը՝ «Հյուսիսսփայլ» ամսագրի առաջին համարը: Իրոք որ գրական դարերը խառնվել են իրար: Մա էր հայ գրականության պատմական վիճակը, ինչն էլ գրականության պատմաբանին պարտադրում է ի՛ր, մի՛միայն իր օրինաչափությունները, որոնք տարբեր են թե՛ ֆրանսիական, թե՛ ռուսական գրապատմական զարգացումներից: Այդ իսկ պատճառով այդ գրականությունների տեսական կադապարները կիրառելի չեն: Մինչդեռ մեր գրականության պատմագրությունը միշտ էլ հարմարեցվել է հիմնականում ֆրանսիական, գերմանական, ռուսական տեսական մտքին, որտեղից էլ՝ ազգային գծից շեղումները, վրիպումներն ու սխալները: Նույնը անա վերաբերում է նաև եվրոպական Վերածնունդին:

Ասենք նաև, որ *Վերածնունդ* եզրույթի օգտագործումը հայ գրականության համար նոր երևույթ է: Նախկին պատմագիրներն այն չեն օգտագործել: Այդ եզրույթը չէք հանդիպի Հակոբոս Նալյանի և Գաբրիել Ավետիքյանի՝ Գրիգոր Նարեկացուն նվիրված աշխատություններում, հայ գրականության պատմագիրների ու պատմաբանների գրքերում (Ս.Սումալյան, Կ.Նոյման, Ս.Նազարյան, Մ.Նալբանդյան, Գ.Զարպիանալյան, Մ.Չամչյան):

Վերածնունդ եզրույթը Կոստանդին Երզնկացու առիթով առաջին անգամ հանդիպում է Վալերի Բրյուսովի «Հայ պոեզիայի անթոլոգիա» գրքի առաջաբանում (Մոսկվա, 1916), ավելի զուգորդության, ընդհանուր նմանության ձևով. «Միջնադարյան հայ տաղերգուներից առաջինն էր Կ.Երզնկացին, որ շոշափեց սիրո մոտիվները, որոնք դրանից հետո դարձան հայ պոեզիայի գերիշխող թեմաներից մեկը: Նրա «Բան գարնան» պոեմը, չնայած առաջին տան մեջ հիշատակված Երկնավոր հոր ողորմածության, համակված է գրեթե հեթանոսական ոգով, դրանից հառնում է կեցության անգուսպ ուրախություն: Միջնադարի անդեկ իդեալը, այս երկրային կյանքը որպես վշտի հովիտ դիտելը, այն հավատը, թե կյանքի ուրախությունը ապականություն են ու մեղք՝ մնացել էր հեռու, անցած մի տեղ: Չափածոյի ու լեզվի ուժով և ավյունով՝ այս պոեմը պատիվ կբերեր այդ Արևմտյան Եվրոպայի ամեն մի գրականության, իսկ Եվրոպան նույնիսկ ոչինչ չունի դրան հակադրելու: Իսկ պոեմի համակող ոգին իր բոլոր մասնիկներով պատկանում է Վերածնության վեհ շնչին, երբ դա այն ժամանակ հագիվ էր ծագում Արևմուտքի առաջավոր

երկրներում և անհայտ ուղիներով տարածվել էր Հայաստանի հեռավոր լեռները»²: Առարկության տեղ հեղինակն է թողնում. եթե Վերածնունդը հազիվ էր ծագել Արևմուտքում, այդ ի՞նչ «անհայտ ուղիներով» տարածվեց Հայաստանի լեռներում: Երզնկացու տաղը (և ոչ թե պոեմը, վրիպումը թարգմանչինն է) միջնադարի հայ քնարերգության զարդերից է, բայց ինչո՞ւ պետք է անտեսել «Երկնավոր հոր ողորմածությունը», արհեստականորեն խմբագրել հեղինակին և գործը զրկել համակարգային ամբողջությունից:

Երկրորդ անգամ *վերածնունդ* եզրույթը կիրառել է Մ. Աբեղյանը՝ «Ազգագրական հանդես»-ում (1917) տպագրած «Գրիգոր Նարեկացի» հոդվածի մեջ: Աբեղյանը հայ հին և միջնադարյան գրականությունը բաժանում է երեք շրջանի՝ ա) Նախնական առասպելապատմական բանահյուսություն, բ) Եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն, գ) Վերածնության գրականություն: Այս վերջին շրջանն, ընդգրկում է 10-15-րդ դդ.: Այս կապակցությամբ հիշատակենք նաև նրա «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» ուսումնասիրությունը:³

«Հայոց հին գրականության պատմություն» (1-ն գիրք, Եր., 1944) աշխատության մեջ «Ազգագրական հանդես»-ում 1917-ին տպագրած վերոհիշյալ «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությունը ներգրավվեց որոշ փոփոխություններով: Այստեղ 14-րդ ենթագլուխը վերնագրված է «Վերածնության շունչը», և այն վերագրվում մի քանի տաղերի՝ «Ծննդյան», «Հայտնության» (որ, ըստ Աբեղյանի՝ «Ծննդյան» տաղի շարունակությունն է), «Վարդավառի», որոնցում կյանքի և բնության հորձանքով հեղինակն իբր «կենդանի զգացած պատկերներով» հաղթահարում է շարականների ավանդույթը:

Ըստ Աբեղյանի՝ 11-րդ դարում «կրոնա-ձգնավորական ոգին տեղի էր տալիս մի ուրիշ ոգու դիմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնություն...»⁴: Շարունակության մեջ կարդում ենք. «Այս «վերածնություն» տերմինն առնված է արևմտյան եվրոպական գրականությունից...», այնուհետև մի քանի խոսքով ներկայացնում է դրա նշանակությունը եվրոպական գրականության մեջ⁵: Ետայդու. «Իսկ մեր հայկական վերածնությունն ինքնուրույն է: Դա ազգային կուլտուրայի ու գրականության շարունակական զարգացման մի իրակություն է, արդյունք հայկական քաղաքային կյանքի բարգավաճման, դրա հետևանքով և ներքին ուժերի այն ռեալիստական շարժման, որ առաջ էր եկել հարյուրամյա խաղաղության միջոցին: Եթե «վերածնություն» բառով է անվանվում այստեղ մեր գրականության այս վերափոխված շրջանը՝ որովհետև այդ ժամանակ «վերածնվել» է հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգին և աշխարհայեցողությունը՝ հակառակ կրոնա-եկեղեցականի և որովհետև այդ շրջանի գրականության հատկություններն ընդհանրապես նույնն են, ինչ որ եվրոպական վերածնությանը: Դա գլխավորապես

² Բրյուսով Վ., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., ԳՍ հրատ., 1967, էջ 86-87:

³ Աբեղյան Մ., Վերածնությունը հայոց հին գրականության մեջ, «Տեղեկագիր», Եր., 1941, թիվ 5-6:

⁴ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, 2-րդ գիրք, Եր., 1946, նույնն է՝ Երկեր, Եր., ԳՍ հրատ., 1970, էջ 17:

⁵ Նույն տեղում, էջ 1:

հայ քաղաքացության, հայ բուրժուազիայի գրականությունն է»⁶: Դժվար է հավատալ ինչպես Աբեղյանի նշած «հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգու և աշխարհայեցողության» վերածնունդի, այնպես և «հայ քաղաքացության, հայ բուրժուազիայի գրականության» տեսակետին:

Վերածնունդի առկայությունը հիմնավորելու նպատակով առաջիկա էջերում Աբեղյանն անդրադառնում է «Քաղաքներ և քաղաքացիական կյանք ու կուլտուրա», «Թոնդրակեցոց աղանդը», «Գաղափարախոսության զարգացման դանդաղ ընթացքը» հարցադրումներին: «Վերածնության գրականություն» խորագրի ներքո և «Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ» ենթախորագրով անդրադառնում է Մազիստրոսի, Լաստիվերցու, Իմաստասերի, Դավիթ Ալավկա Որդու երկերին, «Աշխարհիկ ոգու վերածում» ենթախորագրով՝ Շնորհալուն: Նրա ուրվագծած վերածնության շրջափուլի մեջ են նաև առակագիրները, տաղերգուները, ժամանակագիրները:

Վերածնունդի՝ Աբեղյանի այս տեսությունը խորապես արտացոլվեց Մ. Մկրյանի «Գրիգոր Նարեկացի» մենագրության մեջ: «Ներածության» առաջին իսկ տողերում կարդում ենք. «Հայ գրականության զարգացման պատմության մեջ Նարեկացին կատարել է հսկայական դեր. նա հանդիսացել է հայ վերածնության սկզբնավորման շրջանի գրականության խոշորագույն դեմքը»⁷: Հետագա էջերում գրականագետը հաստատում է վերածնության շրջանի առկայությունը և ներկայացնում իր հիմնավորումները: Միաժամանակ նա փնտրում է հայ հին գրականության նախկին ուսումնասիրողներին, որոնք «գաղափար անգամ չեն տվել և ուշադրություն չեն դարձրել վերոհիշյալ հարցերի վրա»⁸: Բանը հասնում է նաև Աբեղյանին, որը «Մատյան ողբերգության» պոեմը դիտել է կրոնակեղեցական բանաստեղծության շրջագծում, մինչդեռ... Այդ մասին ստորև՝ համապատասխան մեջբերումներով:

Որքան էլ վերապահություն անենք, բայց չպետք է մոռանանք խորհրդային գաղափարախոսության հակակեղեցական կողմը, ինչի կրողն էին բոլորը՝ նգամ քիմիկոսն ու մաթեմատիկոսը, էլ ո՞ր մնաց գաղափարական հալածանքների արյունոտ հիշողությունը կրող հումանիտար ոլորտը, այդ սպարեզում ահա նաև գրականագիտությունը, գեղագիտությունը և փիլիսոփայությունը: Հասկանալի թաքնված մի մտայնություն կար՝ Նարեկացուն կտրել եկեղեցուց, որպեսզի խորհրդային գաղափարախոսության համակարգում պաշտոնապես չդիտվի որպես հոգևոր-կրոնական բանաստեղծ, և այդպես փրկել, պահպանել նրա անունն ու գործը գրականության պատմության մեջ ու դասագրքերում: Մկրյանի գիրքն այդ մտայնության ցայտուն արտահայտություններից մեկն է՝ գրված ստալինյան ժամանակներում և տպագրված նրա մահից հետո, համենայնդեպս դեռևս շարունակվող Ստալինի պաշտամունքի օրերին և խրոշոփյան ձևալից առաջ: Ահա այդ մտայնությամբ են պայմանավորված նրա այս արտահայտությունները. «Նա առա-

⁶ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, 2-րդ գիրք, էջ 20:

⁷ Մկրյան Մ., Գրիգոր Նարեկացի, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1955, էջ 5:

⁸ Նույնը:

ջինն է մեր մեծ բանաստեղծներից, որ գրականության մեջ լիրիկայի ժանրը ազատեց եկեղեցուց ունեցած ենթակայական կախումից և խիզախեց այն պատկերացնել անկախ արարողություններից՝ իր ինքնություն արժեքով ու նպատակներով: Նարեկացու տաղերից լավագույնները թե՛ իրենց իդեական բովանդակությամբ և թե՛ պոետիկական մշակությամբ հայ գրականության մեջ վերածնության սկզբնավորումը նշող՝ լիրիկայի առաջին փայլուն նմուշներն են»⁹, միջանկյալ նաև ճշտենք՝ լիրիկան ժանր չէ, այլ սեռ): Այնուհետև. «Նրա համար գոյություն չունեն երևակայության թռիչքի դավանաբանական կաշկանդումներ...»¹⁰: Շեշտադրվում է բնությանն ու մարդուն ուղղված հայացքը. «Նարեկացին առաջինն է մեր բանաստեղծներից, որ շարականների հեղինակներից հիմնովին տարբերվելով՝ արժեքավորեց ու երգեց բնությունը և մարդուն...»¹¹: Իսկ մի թե նույն այդ հայացքը բնորոշ չէր Նարեկացու նախորդներին. նույն մարդն ու նույն բնությունն են Սողոմոնի «Երգ երգոց»-ում, Մաշտոցի, Պարթևի, Խորենացու, Մանդակունու շարականներում, անգամ քիչ չեն կրկնվող, զուգորդվող պատկերներն (օրինակ՝ ծովի, նավաբեկության) ու համեմատության եզրերը (ծառ ու ծաղիկ, թանկարժեք քարեր): Իբր Նարեկացին անտեսել է «եկեղեցական դոգմաների կաշկանդիչ շղթաները»¹², իբր «Ծննդյան» տաղերից մեկում «երգում է մարդկանց դեպի երջանկության մղող ու տանող սերը և այդ սիրո երգը...»¹³:

Աշխարհիկ կյանքից վերցրած բոլոր ապրումներով ու սպավորություններով հանդերձ՝ Նարեկացին սրբակրոն հոգևոր բանաստեղծ էր՝ կտրականապես հեռու ամեն տեսակի մեղավոր գայթակղություններից: Նրա 40-ից ավելի տաղերը նվիրված են եկեղեցական 18 տոների և բնությամբ ուրախության երգեր են՝ ցնծեղեր, որոնց հակառակն է «Մատյան...»-ը՝ որպես ողբերգ: Նարեկացին, ինչպես պատկերային մտածողությամբ, այնպես և գեղարվեստական համակարգով հակադրությունների միասնություն է, որ համատեղում է մարդկային կենսագոյության երկու ծայրերը՝ ցնծությունը և ողբը¹⁴: Ուստի միանգամայն անհիմն է Մկրյանի պնդումը «Վարդավառի», «Ծննդյան» տաղերի կապակցությամբ, թե այս բանաստեղծությունների մեջ «կրոնական զգացմունքի որևէ հետք չկա»¹⁵: Ըստ Մկրյանի՝ «Նրա ստեղծած գրական պատկերները հաճախ հիշեցնում են վերածնության մեծ վարպետների նկարները: Իրոք, եթե Նարեկացին նկարիչ լիներ և նկարեր այնպես, ինչպես նկարագրում է, կստացվեր, անշուշտ, Ռաֆայելի վրձնին արժանի մի գործ: Նա այնքան մանրամասն ու համարձակ է կանացի գեղեցկության իր նկարագրությամբ, որ հիշեցնում է կրոնական երկյուղածությունից հիմնականում զերծ հետա-

⁹ Մկրյան Մ., *Գրիգոր Նարեկացի, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1955, էջ 140:*

¹⁰ *Նույն տեղում, էջ 136:*

¹¹ *Նույն տեղում, էջ 141:*

¹² *Նույնը:*

¹³ *Նույն տեղում, էջ 147:*

¹⁴ *Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր՝ Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն (Եր., 2009) գրքի համապատասխան բաժնում:*

¹⁵ *Մկրյան Մ., Գրիգոր Նարեկացի, էջ 148:*

գա դարերի բանաստեղծներ Նահապետ Քուչակին և Նաղաշ Հովնաթանին»¹⁶: Այստեղ ևս Մկրյանին պետք է առարկենք: Նախ բանաստեղծական բառանկարը հայ պոեզիայի բնորոշ հատկանիշն է, Նարեկացու բառանկարները զուտ նարեկացիական են և շատ տպավորիչ, դրանց համեմատության եզրը Թորոս Ռոսլինի ու Սարգիս Պիծակի մանրանկարներն են, այնպես որ Ռաֆայելին հիշելու անհրաժեշտություն չկա, Ռաֆայելը թող մնա իր երկրում: Իսկ հակառակ Քուչակի և Հովնաթանի, որոնցից հատկապես վերջինը շատ հաճախ անցնում է կնոջ պատկերման պարկեշտության սահմանը, Նարեկացին, շատ զունեղ ու պատկերավոր լինելով, որ բացարձակ հանճարի արգասիք է, նաև չափազանց զուսպ է: Նա ոչ թե կնոջ աչքերի մեջ է նայում, այլ հայացք է ուղղում նրա կերպարին, հագուկապին, շարժունակին: Իսկ սրանք տարբեր բանվածքներ են: Բանը հասնում է կասկածանքի Քրիստոսի կերպարի կապակցությամբ, քանի որ «եկեղեցական վարդապետությունը չէ, որ կազմում է Նարեկացու տաղերի բովանդակությունը: Այժմ դժվար է հասկանալ, թե ինչ կապ ունի այդ տաղը իբրև այլաբանություն Քրիստոսի հարության հետ...»¹⁷: Այսպես Մկրյանը Նարեկացուն ուղղում է Նարեկացու դեմ՝ խորհրդային գաղափարախոսության պայմաններում փորձելով փրկել նրան եկեղեցապատկան հեղինակ լինելուց¹⁸: Մկրյանը շատ ուռճացրել է նաև բանահյուսության հետ կապը, և դա այն դեպքում, երբ բանահյուսության էին վերածվել նաև աստվածաշնչյան պատումները, այսինքն՝ Աստվածաշնչի ժողովրդականացված քարոզչությունը վերափոխված ձևով արդեն վերադառնում էր որպես բանահյուսություն:

Ըստ Մկրյանի՝ նույն վերածնության շնչով «Մատյան...»-ի մեջ «Հանձինս իրեն» հանդես է գալիս մարդը իր հոգու ամենամարդկային, ամենախորունկ ու ամենանուրբ ծայրերով...»¹⁹ (միջանկյալ շտկենք՝ ոչ թե «հանձինս իրեն», այլ հանձին իրեն): Այո, մարդը՝ «հանձինս իրեն»՝ Նարեկացու, այսինքն՝ սրբակրոն հոգևորականի և ոչ թե հանձին քաղաքացիական անձի: Իսկ ո՞վ ասաց, որ հոգևորին բնորոշ չեն այն խորունկ մարդկային ապրումները, որոնք ամբողջ պոեմի էությունն են, և որոնք թվարկում է գրականագետը: Նարեկացու Մարդը՝ իրենով մարմնավորված քնարական հերոսը, նույն հավաքական սուրբն է, որ ի խորոց սրտի Աստծուն խոսք էր ուղղում ինչպես Աստվածաշնչի սաղմոսներում, այնպես և 5-րդ դարի հայ հոգևոր բանաստեղծների ապաշխարանքի երգերում, ապան՝ Նարեկացուն նախորդած շատ բանաստեղծների և հատկապես Մտեփանոս Մյունեցու բազմաբնույթ երգերում: Հաջորդող էջերում՝ «...հանձինս նրա լիրիկական հերոսի ամենացայտուն ու ամենախոր պատկերումն է գտել իրական մարդը, իր ներքին բարդ ապրումներով: Մինչդեռ շարականների բանաստեղծները ներկայացնում էին գերազանցապես Աստծուն և Քրիստոսին, Նարեկացին ներկայացնում է գերազանցապես իրեն»²⁰: Արդյոք Նարեկացին «գերազանցապես իրեն» է

¹⁶ Մկրյան Մ., *Գրիգոր Նարեկացի*, էջ 151:

¹⁷ *Նույն տեղում*, էջ 141:

¹⁸ *Նույն տեղում*, էջ 153-154:

¹⁹ *Նույն տեղում*, էջ 172:

²⁰ *Նույն տեղում*, էջ 194:

ներկայացնում, թե՞ իրենով անհատականացված հավատացյալի հավաքական կերպարը: Գրում է. «...հաճախ հակադրվում են մարդն ու աստվածը»²¹: Բայց այս հակադրությունն ընդդիմությունն ու բողոք չէ, այլ մեղքերի խոստովանությամբ մաքրագործվելու և Աստծուն մերձենալու ձգտում: Եվ այս ամենն այն դեպքում, երբ Նարեկացին «Ներսից ու դրսից Աստծուն էր հագել»:

Այս ճանապարհին Մկրյանը երբեմն հասնում է խորհրդային գրականագիտությանը բնորոշ գոեհիկ սոցիոլոգիզմի՝ Նարեկացու ողբը պայմանավորելով մե՛կ «գյուղացիության ֆեոդալական կեղեքումով»²², մե՛կ «աշխատավորության (գյուղացիության) բողոքի արտահայտությամբ»²³, մե՛կ արտաքին քաղաքական հանգամանքներով: Իսկ մեկ այլ առիթով էլ ավելացնում է՝ 12-րդ դարում «...հայ վերածնությունը, զուգադիպելով վրացական և ադրբեջանական գրականությունների աննախընթաց զարգացմանը (Ռուսթավելի և Նիզամի), նորից վերելք է ապրում»²⁴: 12-րդ դարում հայ գրականությունը ոչ թե զուգադիպում է վրաց և չեղած ադրբեջանական գրականություններին, այլ զարգանում է իր բնականոն հունով՝ առաջ մղելով այնպիսի նշանավոր մի բանաստեղծի, որպիսին Շնորհալին է և, ընդհանրապես, ամբողջ կիլիկյան գրական դպրոցը: Ի՞նչ ընդհանրություն կարելի է գտնել մի կողմից՝ Շնորհալու, մյուս կողմից՝ Ռուսթավելու և ոչ թե ադրբեջանցի (Գանձակում ծնված լինելը դեռևս ոչինչ չի նշանակում), այլ պարսիկ բանաստեղծ Նիզամու միջև: Կարծում եմ՝ ոչ մի:

Ի վերջո, այս գաղափարները մարմնավորվեցին առանձին գրքում՝ նախ ռուսերեն, ապա հայերեն լույս տեսավ Վազգեն Չալոյանի «Հայկական Ռենեսանս» աշխատությունը: Գրքի նպատակադրումը ձևակերպված է այսպես. «Այս աշխատությունը, ըստ էության, առաջին խոշոր մենագրությունն է ոչ եվրոպական ժողովուրդների Ռենեսանսի՝ Վերածնության վերաբերյալ, որտեղ հեղինակը բազմակողմանիորեն՝ կրոնի, փիլիսոփայության, գրականության և արվեստի նյութերի հիման վրա քննարկվող հայկական Վերածնության հարցերը կապում է երկրի սոցիալ-տնտեսական պատմության համապատասխան էտապների հետ»²⁵:

Ելակետն այս է. «Եվրոպայում իրոք վերածնվեց անտիկ աշխարհի հոգեկան կյանքը...», և ըստ Ուլրիխ ֆոն Հուտտենի՝ «մտքերը արթնացան, կյանքը դարձավ հաճույք», նպատակը՝ այս. «Հայկական Վերածնությունը պատմականորեն այնպիսի նշանակալից երևույթ է, որ ոչ միայն չի կարելի անտեսել, այլև պետք է բացահայտել իր ողջ լիակատարությամբ և խորությամբ որպես առաջադիմության մի շրջան այդ երկրի կուլտուրայի պատմության մեջ»²⁶:

Մարքսիզմի դասականներից արված մեջբերումներով հեղինակը բացահայտում է ժամանակաշրջանի հանրային գիտակցության ձևերը որպես պատմա-

²¹ Մկրյան Մ., Գրիգոր Նարեկացի, էջ 194:

²² Նույն տեղում, էջ 198:

²³ Նույն տեղում, էջ 202:

²⁴ Նույն տեղում, էջ 255:

²⁵ Չալոյան Վ., Հայկական Ռենեսանս, Եր., Հայպետհրատ, 1964, էջ 2:

²⁶ Նույն տեղում, էջ 8:

մշակութային երևույթ, անդրադառնում սոցիալ-տնտեսական հիմունքներին: Այն տպավորությունն է, որ եթե մարքսիզմի դասականները դրական արտահայտված չլինեին Վերածնունդի մասին, խորհրդային հետազոտողներն ընդհանրապես կըրջանցին այն կամ կտային այլ՝ գուցե ոչ առաջադիմական բացատրություն:

Հեղինակն իր քննությունն ի մի է բերում հետևյալ վերնագրերի ներքո՝ «Ակնարկ Անիի ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության», «Հայկական վերածնության սոցիալ-տնտեսական հիմունքները», «Վերածնության կուլտուրան Հայաստանում»: Վերջին դեպքում դասակարգային միջամտությունն ակնհայտ է՝ «Աշխատավոր ժողովրդի կուլտուրայի գաղափարական հիմունքները» առանձին են դիտված, «Շահագործող դասակարգերի առաջադիմական խավերինը» առանձին՝ որպես իրար լրացնող ուժեր:

Թոնդրակյան շարժումը դիտվում է որպես «Ռեֆորմացիա»՝ եկեղեցու դոգմաների ռեֆորմ», «Ֆեոդալական հասարակության իշխող սոցիալական կարգի դեմ ուղղված պայքար»²⁷: Եվրոպայում դա արտահայտվեց նրանով, որ «աշխատավոր մասսաները դուրս եկան» կաթոլիկ եկեղեցու դեմ: Նույն սկզբունքով դիտվում է թոնդրակյան շարժումը, որին պետք է հաջորդեր պավլիկյան շարժումը: Ըստ նրա՝ «Բյուզանդական-կովկասյան աշխարհը Արևելքի և Արևմուտքի միասնական ամբողջական աշխարհի բաղկացուցիչ մասն էր: Այդ աշխարհի մասերի փոխազդեցության ոլորտի մեջ էր մտնում նաև Հայաստանը, որը ազդում էր նրա վրա, կրում նրա ազդեցությունը, որը արժեքներ մտցրեց այդ աշխարհի ընդհանուր գանձարանը և այնտեղից ընդունեց համընդհանուր արժեքներ: Փոխազդեցության այս պրոցեսում Հայաստանի կուլտուրայի պատմության մեջ ամենանշանակալից երևույթը Վերածնունդն էր»²⁸: Սա ընդհանուր հայացք է, որտեղ որոշակիությունը, խոսքի առարկայականությունը բացակայում են: Չալոյանն այնուհետև փիլիսոփայական դատողություններով փորձում է Վերածնունդի շուրջ հաշտեցնել Արևմուտքն ու Արևելքը, որից հետո առանձնացնում է Արևելքի Վերածնության տարբերությունները, ըստ որի՝ հայկական «Վերածնությունն սկսվեց Արևմուտքի Վերածնության երևան գալուց շատ առաջ»: Եվ երկրորդ՝ «Հայաստանում Վերածնությունն իր զարգացման ընթացքում բնավ չհասավ Արևմուտքի ավելի ուշ շրջանի Վերածնության մակարդակին»²⁹: Այսքանից հետո՝ էլ ինչ Վերածնության մասին կարող է խոսք լինել եվրոպական չափանիշերով:

Ժողովրդական գծի վրա նա հիշում է «Մասնա ծոեր» դյուցազներգությունը, հայրենները, աշուղական պոեզիան, գրական դեմքերից տալիս Գոշի, Այգեկցու, Ֆրիկի անունները, այնուհետև անցնում Նարեկացուն, Մագիստրոսին, Շտր-հալուն, Որոտնեցուն, երկու Երզնկացիներին, Հերացուն, Իմաստասերին, Աղթամարցուն, Թլկուրանցուն, քննում մի քանի մանրապատումներ, անդրադառնում մանրանկարչությանը, ճարտարապետությանը և անվերապահորեն հաստատում հայկական Վերածնունդի գոյության իր հիմնական դրույթը: Միջանկյալ նշենք, որ

²⁷ Չալոյան Վ., նշվ. աշխ., էջ 55:

²⁸ Նույն տեղում, էջ 68:

²⁹ Նույն տեղում, էջ 70:

աշուղական պոեզիան և գոնե Քուչակին վերագրվող հայրեններն ավելի ուշ ժամանակի գրական-մշակութային իրողություններ են:

Գրքին կցված Նիկոլայ Կոնրադի (1891-1970) «Վերջաբան»-ում Վերածնությունը դիտարկվում է որպես Արևմուտքի լույսի ներքո զարգացման ու վերափոխությունների ընդհանուր պատկեր. «Կարելի է մտածել, որ մենք կգանք այն եզրակացության, թե Բուսալիայի պատմության մեջ «Վերածնության էպոխա» կոչվող էտապը հանդիսանում է ոչ միայն Բուսալիայի, այլև այն բոլոր երկրների ժողովուրդների պատմության պատկանելությունը, որոնք ունեն երկար, անընդհատ զարգացող, կուլտուրական բովանդակությամբ հարուստ պատմական կյանք, հետևաբար, նրանց պատմության համար Վերածնունդը «մասնավոր դեպք» չէ, այլ ընդհանուր պատմական օրինաչափություն: Կարելի է մտածել,- շարունակում է նա,- որ զանազան երկրների «Վերածնության էպոխաների» համեմատությունը մեզ ցույց կտա, որ այդ էպոխաների համար հիմնականը հանդիսանում է ոչ թե իր երկրի անցյալին, իր «անտիկ շրջանին» դիմելը, այլ հումանիզմը <...>, այսինքն՝ մարդուն դիմելը»³⁰:

Վերածնունդ եզրույթի այսպիսի ազատ օգտագործումն այն դարձնում է խիստ պայմանական ինչպես նմանությունների մատնանշումով, այնպես և տարբերությունների: Ժամանակատարածական ազատ սահմաններ ունեցող այսպիսի Վերածնության դրույթը հաստատելու համար Կոնրադը դիմում է տարատեսակ լրացյալ միջամտությունների և, ի վերջո, առանձնացնում ««ինքնուրույն» և «արտացոլված» «Վերածնության էպոխաներ»³¹ ըստ ամենայնի ոչինչ չասող ձևակերպումները: Չմոռանանք՝ Կոնրադը ճապոնական, չինական և կորեական գրականության մասնագետ էր և հակված էր եվրոպական Վերածնունդի սահմաններն ամեն կերպ ձգել մինչև ծայր Արևելք, որտեղ այդ մասին համապատասխան դարաշրջանում պատկերացում անգամ չեն ունեցել: Այստեղից էլ նրա պատկերացրած Վերածնունդի անվերջ առաձգականությունն ու կատարյալ անորոշությունը:

Պետք է վերացնել նաև հարևան ժողովուրդներից իբր թե հետ չմնալու կեղծ մրցակցային վիճակի մտայնությունը: Եթե 1947-ին Շ. Նուցուբիձեն հրատարակել է «Ռուսթավելին և արևելյան Վերածնունդը» գիրքը, ապա նախ՝ պետք չէ այն նմանակել և այնուհետև, խանդով լցված, համարժեքը որոնել սեփական գրականության մեջ, որովհետև «արևելյան Վերածնունդ» արտահայտության «Վերածնունդ» եզրույթը պայմանական է: Այս տեսակետից տեղային առանձնահատկությունների այլ բնութագրով պետք ընկալել ու գնահատել Վ.Չալոյանի «Հայկական Ռենեսանս» գրքին կցված Ն. Կոնրադի հիշյալ վերջաբանը, ինչպես նաև Վլադիմիր Ժիրմունսկու «Ալիշեր Նավոյին և Վերածնունդի խնդիրը արևելյան գրականություններում» (1961, ռուսերեն) հոդվածը: Միանգամայն տեղին է ռուս հին գրականության պատմաբանի՝ բուն Վերածնունդի էությունից բխող ձևակերպումը. «...Վերածնությունը միջանկյալ մշակութային տեսակի՝ միջնադարի վրայով կամուջ է

³⁰ Չալոյան Վ., նշվ. աշխ., էջ 228:

³¹ Նույն տեղում, էջ 229:

նետում անտիկ շրջանին»³²: Ինչպես Ս. Լոսնի «Վերածնունդի գեղագիտությունը», այնպես և Ն. Կոնրադի «Արևելք և Արևմուտք» աշխատություններում Վ. Չալոյանի գրքի կապակցությամբ թեև անդրադարձներ կան նաև հայկական վերածնունդին, բայց երկու դեպքում էլ հիմքում նույն մարքսիզմն է: Կոնրադը տեսակետ է հայտնում. «Հայաստանի համար, օրինակ, լիովին իրական են նույն դասական, այսինքն՝ հունահռոմեական ժառանգությունը, ինչ որ և Իտալիայի համար...»: Նա այդ չափազանցված հարազատությունն այնքան է խորացնում, որ, ի վերջո, հանգում է այսպիսի հարմարեցված դատողության. «Հայաստանի պատմությունը հնուց նույնքան պատկանում է Արևմուտքին, որքան Արևելքին: Այդ պատճառով Վերածնության դարաշրջանի սկզբնավորումը, ծագումը Հայաստանում անգամ կարող է մեկնաբանվել որպես Արևմուտքի Վերածնության շրջանակների անհրաժեշտ քննություն»³³:

Մկրյանի, Չալոյանի նույն այս տեսակետը շարունակվում է Հրանտ Թամրազյանի «Հայ քննադատություն» (գիրք Բ) աշխատության մեջ: Նա առանձնացնում է «Հայաստանը 10-րդ դարում և վաղ վերածնունդը», իսկ Կոստանդին Երզրնկացու կապակցությամբ՝ «Վերածնության մեղեդիները» բաժինները և հիմնավորապես պաշտպանում շրջանառված տեսակետը: Այստեղ ևս քաղաքական և տնտեսական զարգացումը բնորոշվում է *վերածնունդ* բառով, որը վերածվում է դարաշրջան բնութագրող եզրույթի: Գրականագետը հարցնում է. «Վե՞ճը հատկապես ծավալվում է հայկական վերածնունդի շուրջ: Եղե՞լ է, թե՞ չի եղել հայոց վերածնունդ, համապատասխանո՞ւմ է արդյոք այդ վերածնունդ կոչվածը այն չափանիշներին, որ նկատել են մարքսիզմի դասականները»³⁴: Ըստ նրա՝ նույն մարքսիզմի հիմունքներով ոմանք (Բարկեն Առաքելյան) պնդել են, որ «...Հայաստանում տեղի է ունեցել ոչ թե վերածնունդ, այլ սովորական զարգացում, քանի որ մեր կյանքի երևույթները չեն համընկնում եվրոպական վերածնունդի բնորոշ գծերին»³⁵: Բայց Թամրազյանը նույն մարքսիզմի տեսությամբ ապացուցում է հակառակը:

Մարքսիզմի դասականներն ինչ էլ ասած լինեն, ինչպես էլ ասած լինեն, նրանց խոսքը չի կարող վերաբերել Հայաստանին, որովհետև նրանց տեսադաշտում Հայաստան չի եղել: Ուստի նրանցից ինչ մեջբերում էլ արվի, ինչպես էլ մեկնաբանվի՝ սոսկ հարմարեցում պետք է համարել:

Արևելյան վերածնունդի ընդհանուր համապատկերի մեջ Թամրազյանն ահա տեղադրում է նաև հայկական վերածնունդը և ոչ միայն Աբեղյանի, այլև Ալիշանի ու Մամի որոշ մտքերի ապավինությամբ խորացնում իր տեսակետը: Փաստարկները նույնն են՝ «տնտեսական անսովոր վերելք, կառուցվում և ընդարձակվում են քաղաքները, ոտքի է կանգնում գյուղական քայքայված տնտեսությունը, ստեղծվում են բազում ագարակներ»³⁶: Թոնդրակյան շարժումը դիտվում է որպես

³² Լիխաչով Դ., 10-17-րդ դարերի ռուս գրականության զարգացումը, Լենինգրադ, 1973, էջ 10 (ռուսերեն):

³³ Կոնրադ Ն., Արևելք և Արևմուտք, 1966, էջ 22 (ռուսերեն):

³⁴ Թամրազյան Հ., Հայ քննադատություն, գիրք Բ, Եր., «Սովետական գրող», 1985, էջ 27:

³⁵ Նույն տեղում, էջ 27:

³⁶ Նույն տեղում, էջ 37:

ռեֆորմացիա, ավելանում են կենտրոնաձիգ պետությունը, դրա հետ կապված «...բուրժուական հարաբերությունների նախանշաններն ու աշխուժացումը», ավատական դարաշրջանի կապանքների թուլացումը, անհատի տեսակարար կշռի ուժեղացումը, գրական երկերի շարքում հիշատակվում է նաև էպոսը, ոչ միայն քաղաքային, այլև գյուղական կյանքի դերի ուժեղացում, կյանքի վերածնություն... Անգամ բանը հասնում է «նախավերածնություն», որին 10-րդ դարում հաջորդում է «վաղ վերածնությունը, որն ուրույն էտապներով շարունակվում է մինչև 12-րդ դարը, ապա մի շարք բնագավառներում նոր թռիչք ապրում 13-14-րդ դարերում»³⁷: Նախավերածնությունն էլ հասցվում է մինչև 7-րդ դար՝ Զվարթնոց և Հռիփսիմե տաճարների շինարարություն, Շիրակացի, Սյունեցի ու Դավթակ Քերթող... Մա եղավ համատարած վերածնունդ ութ դար շարունակ՝ 7-14-րդ դարեր: Զգալով, որ ժամանակային սահմանները շատ ձգվեցին՝ Թամրազյանը հավաքում է խոսքի փեշերը. «Այսպես թե այնպես, 10-12-րդ դարերում, շուրջ հարյուր հիսուն տարվա խաղաղ աշխատանքի, անկախության և տնտեսական վերելքի մթնոլորտում, ծաղկում է հայկական վերածնությունը՝ դառնալով յուրօրինակ նախերգանք եվրոպական վերածննդի համար»³⁸: Մա արմատապես վիճելի տեսակետ է բուրժուատյանը, առավել ևս՝ որպես եվրոպական Վերածնունդի «նախերգանք»:

Ըստ էության գործ ունենք երկրի տնտեսական վերականգնման, նորոգման, զարգացման ու կառուցման հետ, որտեղ *վերածնություն* բառը միմիայն պայմանական կիրառություն ունի՝ որպես կյանքի ընդհանուր վերածնություն, ծաղկում, զարգացում, կենսամակարդակի բարձրացում, ապահովություն: Ինքը՝ հեղինակը ևս երբեմն կասկածամիտ է, բայց ընդամենը սոսկ այդքանը. «Եվ թեև կյանքի վերածնությունը և եվրոպական կոչված *վերածնությունը* շատ կողմերով ուրույն երևույթների ծնունդ են և ունեն մեծ տարբերություններ, սակայն մի շարք կողմերով էլ հարազատ են միմյանց»³⁹: Եվ որպես «հարազատ»-ության նախանշաններ նշվում են կյանքի վերածնության հիշյալ դեպքերը՝ շինարարություն, կառուցում՝ Անի, Աղթամարի եկեղեցի: Նույն կասկածանքներից են ծնվել նաև այս տողերը. «Մեզանում, հասկանալի պատճառներով, վերածնությունը ավարտուն պատկեր չի ստացել, այսինքն՝ չի անցել եվրոպական վերածնության տևական ու բնական ճանապարհը, ի վերջո կիսատ է մնացել: <...>: Մենք չունենք շեքսպիրյան դրամատուրգիա և Սերվանտեսի արձակը, չունենք Ռաֆայել, Լեոնարդո դա Վինչի, Ռեմբրանդտ, այսինքն՝ մեր կյանքը չէր տալիս այն հզոր տևական լիցքերը, որոնք անհրաժեշտ էին նման նվաճումների համար: Բայց մեզանում էլ զարգացման առաջին հզոր լիցքերի շնորհիվ դեռ Եվրոպայից առաջ ստեղծվել է աշխարհիկ պատմագրություն ու փիլիսոփայություն, կյանքի ներթափանցումով՝ ճարտարապետություն և մանրանկարչություն, կրոնական դոգմատիզմից ազատագրված հարուստ հույզերի և խոհերի մեծ քնարերգություն է հումանիզմի գաղափարախոսությամբ, *վերջապես գեղագիտական-քննադատական նորագույն հայացքների մի*

³⁷ Թամրազյան Հ., *Հայ քննադատություն*, գիրք Բ, էջ 36:

³⁸ Նույնը:

³⁹ Նույն տեղում, էջ 38:

ինքնատիպ համակարգ՝ մի շարք կողմերով հարազատ ավելի ուշ երևան եկած եվրոպական վերածննդի գեղագիտությանը և քննադատությանը»⁴⁰։ Այս ամենից մեկ հետևություն կարելի է անել՝ ցանկալի է, բայց ձգել, հասցնել հնարավոր չէ։

Իսկ արդեն Կոստանդին Երզնկացու առիթով կարդում ենք. «Թերևս հարմար կլինի Երզնկացու պոեզիայի էությունը բնորոշել այսպես՝ *վերածնության* երգ։ Եվ դա պետք է հասկանալ լայն առումով՝ որպես *բնության ու հոգու զարթոնքի և սիրո ծաղկման* հավերժական մեղեդի»⁴¹։ Այս ամենը գրականագետը համարում է «ստեղծարար սիրո» զգացում, ինչը գեղեցիկ է հնչում, բայց, ավա՜ղ, վերստին կապ չունի եվրոպական Վերածնունդի առանձնահատկությունների հետ։

Հարցին թեթևակի անդրադարձ կա նաև Ժենյա Քալանթարյանի «Հայ գրականագիտության պատմություն. 5-19-րդ դարեր» մենագրության մեջ։ Նա հիշում է հայկական վերածնունդն ընդունողներին, տալիս Աբեղյանի, Չալոյանի, Մկրյանի անունները, առանց անուններ տալու, ակնարկում ժխտողներին և իր խնդրից դուրս համարում «...հայկական վերածննդի գոյության հարցի պարզաբանումը», մինչդեռ դա հենց գրականագիտության պատմության հանգուցային հարցերից մեկն է, եթե ոչ ամենահանգուցայինը։ Անմիջապես ավելացնում է. «Հայերի համար պետականության վերականգնումն ինքնին քաղաքական վերածնունդ էր»⁴², բայց սա արդեն ուրիշ բան է։

Վերածնունդի գաղափարաբանության շրջանակներում խորհրդային գրականագիտությունը Նարեկացուն շատ է ենթարկել կամայական մեկնաբանությունների։ Ինչպես ասացինք՝ նպատակը մեկն էր՝ Նարեկացուն փրկել ... Նարեկացուց։ «Փոքրիկ գլուխգործոցներ» վերլուծական շարքում Վահագն Դավթյանն անդրադարձել է «Մեղեդի ծննդյան» տաղին։ Ըստ նրա՝ Նարեկացին «Մատյան...»-ի «...հատկապես մարդու փառաբանության հատվածում, հավանաբար տարերայնորեն և ոչ գիտակցաբար, տուրք է տվել թոնդրակյան որոշ գաղափարների»⁴³։ Այնուհետև՝ տաղերի մեջ «...առկա են մեղավոր զգացմունքներ հարուցող նկարագրություններ ու պատկերներ»⁴⁴։ «Երգ երգոց»-ի մեկնության կապակցությամբ Նարեկացուն վերագրում է աշխարհիկ «տոփական» զգայնություններ, որոնք միայն իր՝ նորոյր բանաստեղծի մտքով կանցնեին, բայց ոչ Նարեկացու։ Իբր երիտասարդ տարիներին վանքի բակում Նարեկացին տեսել է մի գեղեցկուհու, նայել նրա աչքերի կապույտին, կիսաբաց օձիքի տակից ցուլցացող թրթռուն կրծքին, գերվել, տարվել, նրա հանդեպ տածել «մեղսամած» զգացմունքներ և գրել «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ...» և հետագա տողերը։ Դավթյանը շարունակում է երևակայության թռիչքը. «Ինչ իմանար երիտասարդ աբեղյան, որ դարեր հետո Ռաֆայել անունով մի ուրիշ հանճար, մի ուրիշ երկնքի տակ, հենց այդպես է

⁴⁰ Թամրազյան Հ., Հայ քննադատություն, գիրք Բ, էջ 49։

⁴¹ Նույն տեղում, էջ 494։

⁴² Քալանթարյան Մ., Հայ գրականագիտության պատմություն. 5-19-րդ դարեր, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 71։

⁴³ Դավթյան Վ., Ի սկզբանե էր Բանն..., Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 202։

⁴⁴ Նույնը։

նկարելու Աստվածամորը, այդ նույն գույնով, նույն լուսափայլ կրծքով»⁴⁵: Եվ իբր այդ տաղի բաց պատկերների պատճառով Նարեկացին ահ է ունեցել հավատաքննիչներից, թոնդրակեցի համարվելու մեղադրանքից ու աստյան կանչվելու սարսափից և տաղը վերնագրել «Մեղեդի ծննդյան», իսկ վերջում էլ ավելացրել «փրկարար» տողեր. «Քեզ պսակող թագավորին // Ու նորածին այն փրկչին փառք // Հավիտյանս հավիտենից. Ամեն»⁴⁶: Եվ իբր մեղքի այս գիտակցումն է դրդել «Մատյան...»-ում գրելու այս տողերը. «Ո՛վ դու անարժան անձ իմ հանցավոր, // Չարագործ, պոռնիկ, բազմաբիծ, համակ // Ապականության անդ ու անդաստան»: Դավթյանը համոզված է, որ ամեն ինչ «մոտավորապես հենց այդպես էլ եղել է», և որ Նարեկացու միակ մեղքը սերն է: Վերածննդյան մտայնությամբ տոգորված այս մեկնաբանությունն, իհարկե, սուկ բանաստեղծական վառ երևակայության արգասիք է՝ հեռու բնագրի հարազատությունից, պատմական ժամանակի յուրահատկությունից: Այսպես կարող է դատել 20-րդ դ. աշխարհիկ բանաստեղծը, բայց ոչ աստվածամերձ սրբակրոն քահանան:

Այսպես, հայ գրականագետների կարծիքով Նարեկացին վերածնունդի ներկայացուցիչ էր:

Անդրադառնանք ևս մեկ աշխատության՝ Պ. Խաչատրյանի «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը»: Ըստ ուսումնասիրողի՝ Մկրյանը թեև նկատելիորեն անտեսել է Նարեկացու ստեղծագործության կրոնական կողմը և ծայրահեղորեն բևեռացրել աշխարհիկ միտումները, պայմանավորված՝ ժամանակի «գաղափարական խեղդիչ մթնոլորտով <...>, այդուամենայնիվ, անհնար է ուրանալ այն դերը, որ ունեցավ Մկրյանի աշխատությունը հայկական վերածննդի տեսության հետագա զարգացման գործում»⁴⁷:

Պ.Խաչատրյանն անդրադառնում է նաև վերածնունդի ժխտման տեսակետին՝ ավելացնելով, որ այդ «...ժխտումն արտահայտվել է հենց այնպես, «ոտի վրա», առանց գիտական լուրջ հետազոտության: Հակադրվել են, քանի որ մտովի նրա մեջ տեսել են եվրոպական Ռենեսանսի հետ նույնացման վտանգ, մի բան, որից զգուշացնում էր և ինքը՝ Աբեղյանը...»⁴⁸: Հաջորդում է Աբեղյանից քաղվածք՝ «...մեր հայկական վերածնությունն ինքնուրույն է», «առաջ էր եկել հարյուրամյա խաղաղության միջոցին», որին ավելի ամբողջական ընդգրկումով քիչ վերը անդրադարձել ենք նաև մենք և տվել համապատասխան բացատրություն: Շարունակության մեջ ասվում է, որ եվրոպական և հայկական «...վերածնունդի զարգացման միտումները միմյանց հետ ունեցել են շփման կետեր», և թվարկվում են գրքից գիրք անցած կրկնված մտքերը. «...մասնավորապես երկուսն էլ արդյունք են կյանքի և աշխարհայեցողության մեջ կատարված արմատական փոփոխությունների, մարդու նկատմամբ նոր հայացքի ձևավորման, մարդու կերպարը իբրև անհատականություն ըմբռնելու, բնության հետ նրա կապի հայտնաբերման ու սխտ-

⁴⁵ Դավթյան Վ., *Ի սկզբանե էր Բանն...*, էջ 207:

⁴⁶ Նույն տեղում, էջ 208:

⁴⁷ Խաչատրյան Պ., *Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը*, էջմիածին, 1996:

⁴⁸ Նույն տեղում, էջ 6-7:

լաստիկայի աստիճանական թոթափման, որին մեզանում ինչ-որ չափով ուղեկցել է նաև եկեղեցական բարեպաշտության թուլացումը: Բայց հայկական վերածնությունը, հակառակ բարեհաջող սկզբի, հետագայում լիարժեք զարգացում չունեցավ, չհասավ իր օրինաչափ բարձրակետին»⁴⁹: Դրա պատճառ է համարում պետականության վերացումը, շարունակական պատերազմները և դրանցով պայմանավորված մշակութային անկումը: Այդ դեպքում բոլոր հաղթող, կայացած պետությունները պետք է գտնվեն մշտական վերածնունդի մեջ: Բայց այդպե՞ս է արդյոք: Իհարկե, ոչ, քանի որ վերածնունդը՝ որպես մտավոր շարժում, միմիայն որոշակի գաղափարախոսության արտահայտություն է՝ բնորոշ միմիայն եվրոպական գրականությանը, այն էլ ոչ թե եվրոպական բոլոր երկրներին, այլ մի քանիսին:

Տրամաբանական է, երբ գրականագետի խոսքն ընդունում է այսպիսի ուղղվածություն. «... «վերածնունդ» եզրն ունի և կիրառության իր մասնավոր դեպքերը՝ իբրև անվանում ավելի նվազ նշանակությամբ նույնորակ շարժումների»⁵⁰: Այո, «նույնորակ շարժումների», բայց ոչ հարմարեցված, իսկ նույնորակը, որ գաղափարագեղագիտական որոշակի հիմք է ենթադրում, կարող է միմիայն հաջորդել, բայց ոչ բնավ նախորդել: Իսկ նախորդող դեպքերը, որոնց օրինակներ նշում է գրականագետը, արդեն այլ երևույթ են, և եթե անգամ օգտագործվում է վերածնունդ եզրույթը, ապա դա միանգամայն այլ վերածնունդ է, նմանությամբ անգամ՝ ազգային կառուցվածքի այլ արտահայտություն, որն ուղեկցվում է մշակութային վերելքով, ինչը բնորոշելու համար ավելի հարմար և դիպուկ եզրույթ չգտնելու պատճառով անվանում ենք ընդունված և սովորական դարձած վերածնունդ բառով: Այդպիսի պայմանական վերածնունդներ համաշխարհային պատմության մեջ տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, դիտարկվել են 8-րդ, 9-րդ, 10-12-րդ և հետագա դարերում և կոչվել են՝ Մակեդոնյան, Կոմենյան, Պալեոլոգյան, Կարոլինգյան, Օտտոնյան⁵¹: Նախորդող նշված շարժումները չէին կարող նախապատրաստել եվրոպական վերածնունդը, իսկ վերածնունդի անդրադարձն անցյալի վրա արդեն միանգամայն այլ բան է: Այս կապակցությամբ գրականագետը ավելացնում է. «Ինչ վերաբերում է հայ միջնադարյան վերածնությանը, ապա եթե իր նվաճումներով, արվեստի ու գրականության բնագավառներում ստեղծած իր արժեքներով այն համեմատելի չէ եվրոպական մեծ Վերածննդի հետ, ապա իր էական հատկանիշներով ու առաջընթացի միտումներով մերձավոր վիճակի մեջ է նրա հետ: Հայկական վերածնությունը միջնօդակ է, և նախապատրաստում է այն որակը, որն իր ամբողջական արտահայտությունն ստացավ նոր ժամանակների հայ գրականության ու արվեստի մեջ»⁵²: Այո, համեմատելի չէ, և լրացուցիչ առընչություններ որոնելը ծանոթ սխալը կրկնելու պես մի բան է: Եվ ապա, սա արդեն միջանկյալ, գրականությունն արվեստի տեսակ է և չպետք է առանձնացնել ար-

⁴⁹ Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 7:

⁵⁰ Նույնը:

⁵¹ Տե՛ս 4-9-րդ դարերի միջնադարյան լատինական գրականության հուշարձաններ, Մոսկվա, 1970, էջ 223 (ռուսերեն):

⁵² Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 8:

վեստի ընդհանուր համակարգից, այսինքն՝ ճիշտ չէ «արվեստ ու գրականություն» տարածված սխալ արտահայտությունը, որ հանդիպում է հիշյալ մեջբերման մեջ: Եվ քանի որ Խաչատրյանը սողանցք է թողնում, ուստի պատահական չեն նաև արդեն սովորույթի ուժով կրկնվող այս մտքերը. «...Նարեկացու միջնադարյան ընկալման մեջ, թեև մեղմ ու շատ անգամ աննկատ, սակայն, այնուամենայնիվ, ի հայտ է գալիս վերածնության ոգին, նաև այս վերջինի պահանջով է, որ մեկնաբանվում ու գնահատվում է նրա ստեղծագործությունը»⁵³: Գրականագետի օգտագործած «վերածնության ոգին» արտահայտությունը դեռևս Վերածնունդը չէ: Ամենինի պատահական չէ, որ եվրոպական գրականության զարգացման ընթացքներին քաջատեղյակ այնպիսի մի գրական-մշակութային գործիչ, ինչպիսին Արշակ Չոպանյանն է, իր «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրության մեջ չի օգտագործում «Վերածնունդ» եզրույթը:⁵⁴ Ի՞նչ է, նա այդ դարաշրջանի տեղը չգիտե՞ր:

Այսպիսով, այս կամ այն չափով հայկական վերածնունդի կողմնակիցներ են Սառը, Աբեղյանը, Հ. Օրբելին, Ադոնցը, Թորամանյանը, Մանանդյանը, Մկրտչյանը, Չալոյանը, Թամրազյանը, Դավթյանը, Խաչատրյանը, որոնց բոլորի փաստարկներն էլ ըստ էության նույնն են: Սակայն այդ վերածնունդը և եվրոպական Վերածնունդը տարբեր են:

Հայագիտության մեջ Մխիթարյանների գործունեությունը, ցավալիորեն, միշտ չէ, որ հիշատակվում ու գնահատվում է ըստ ամենայնի: Մխիթար Մեբաստացին միաբանությունն ստեղծել է 1701 թ. սեպտեմբերի 8-ին Կոստանդնուպոլսում: Այնուհետև տեղափոխվել է Հունաստանի Պելոպոնես թերակղզի: Հռոմը կանոնադրությունը հաստատել է 1712-ին: 1717-ին միաբանությունը վերջնական հանգրվանել է Սբ Ղազար կղզում, որը պատկանում էր Վենետիկի Հանրապետությանը: Ինքը՝ Մխիթարը, սկզբում լուսավորչական էր, որ ցանկանում էր գործունեությունը ծավալել Հայաստանում՝ Էջմիածնում, Սևանում, Կարինում, բայց որոնումները նրան դարձրեցին կաթոլիկ եկեղեցու աբբա, միաբանության հիմնադիր: Նրա և համախոհների գերագույն նպատակը ազգին ծառայելու առաքելությունն էր՝ կործանարար ժամանակների մեջ հայոց գիրն ու հայոց լեզուն փրկելու անհրաժեշտությունը: Ազգին ծառայելու, ազգային գիտակցությունն արթնացնելու բուն ցանկությունը դարձան հայագիտական ծրագրեր, որոնք կյանքի կոչվեցին գիտական, գեղարվեստական, թարգմանական իրագործումներով, տպագրական գործով, որակյալ հրատարակություններով: Միաբանությունը դարձավ ակադեմիա և արժանացավ Նապոլեոնի բարեհաճությանը՝ հակառակ նրա կողմից փակվող միաբանությունների՝ շարունակելու գործունեությունը: Նապոլեոնի 1810 թ. սեպտեմբերի 8-ի հրամանով միաբանությունը ճանաչվել է անձեռնմխելի, նրա մեկ այլ հրամանով Փարիզում բացվել է հայոց լեզվի ուսուցման բաժանմունք 26 ուսանողով: Սա արդեն հայագիտության դարբնոց էր նաև օտարների համար՝ Ֆ. Նոյման, Հ. Պետերման, Վ. Լանգուա, Հ. Հյուբշման, Ն. Մառ, Ա. Մեյե... Մխիթարյանները հայեցի դաստիարակությամբ վարժարաններ ստեղծեցին տարբեր մայրցա-

⁵³ Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 8:

⁵⁴ Տե՛ս Ա. Չոպանյան, Երկեր, Եր., «Հայաստան», 1966, էջ 271-303:

մաքնեքում ու երկրներում՝ Պարսկաստան, Հունգարիա, Ռուսաստան (Ղրիմ), Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Իտալիա (նաև Տրիեստում), Թուրքիա (Պոլիս, Զմյուռնիա, Պարտիզակ, Մուշ, Տրապիզոն, Կարին), Ամերիկա, Արգենտինա: Նրանք շատ լավ գիտեին զրի ու զրքի աշխարհակալ ուժը: Եվ գիտեին՝ ինչ է հայրենիքը, հայրենի հողը, ուստի ամեն կերպ ջանում էին պահպանել կապը մայր հայրենիքի հետ: Նրանց հայրենապաշտ ոգին էր, որ մարմնավորվեց բազմաթիվ գրողների երկերում, միաբանության անդամներից մինչև Պեշիկթաշյան ու Վարուժան:

Հրատարակվում են Մխիթարյանների, նաև ժամանակի առաջադիմությունն ապահովող այլ հայ կաթոլիկ հոգևոր գործիչների աշխատությունները: Հիշատակենք մի քանիսը, որոնք նպաստեցին ազգային վերածնունդին. Մխիթար Մեբաստացի՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» (1727), «Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռի» (1730), «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ.Ա, 1749, հ. Բ, 1769): Նա հայոց խոսքն ու լեզուն մաքրեց ամեն տեսակի լատինական ազդեցություններից ու զավառաբանություններից: Մ. Չամչյան՝ «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամի Տեառն 1784», (հհ. 1-3, 1784-1786), Խ. Էրզրումցի՝ «Համառոտական իմաստաբանութիւն» (1711), Մ. Ավգերյան՝ «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց» (հհ. 1-12, 1810-1815), Ղ. Ինճիճյան՝ «Դարապատում» (հհ. 1-8, 1824-1828), Ս.Ազունց և Ղ.Ինճիճյան՝ «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (հհ.1-11, 1802-1808), Ս.Ազունց՝ «Ճարտասանութիւն» (1825), Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, 1836-1837), Է. Հյումյուզյան՝ «Առձեռն բանաստեղծութիւն» (1839), «Առձեռն ճարտասանութիւն» (1939), Գ.Զարբանայան՝ «Պատմութիւն հայերէն դպրութեանց» (հհ. 1-2, 1865-1878): Ավելացնենք Պ.Մինասյանի, Ա.Բագրատունու պատմական ողբերգությունները, Հ.Վանանդեցու առասպելածին պոեմները, «Բազմավեպ» ամսագրի հրատարակությունը 1843-ից:

Նույն գործունեությունը միաբանության պառակտումից (1773) հետո շարունակում են նաև Վիեննայի Մխիթարյանները. Հ.Գաթըրճյան՝ «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս» (հհ. 1-2, 1849-1852), Պ. Հովնանյան՝ «Մարդկային լեզուին սկզբան» (1857), Ա. Այտընյան՝ «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866), «Եվրոպա» (1847-1863) շաբաթաթերթը, «Հանդէս ամսօրեայ» (1887-ից) ամսագիրը:

Բացառիկ կարևորություն են ստանում «Մատենագիրք նախնեաց», նույնի համառոտ «Ընտիր մատենագիրք», «Ազգային մատենադարան» մատենաշարերը: Թարգմավում են. Հովերոս՝ «Բլիական» (1843), «Ողիսական» (1848), Վերգիլիոս՝ «Էնեական» (1845), «Մշակականք» (1847), Հորացիոս՝ «Արվեստ քերթության», նաև Կորնելի, Ռասինի, Վոլտերի երկերը: Ավելի ուշ երկու թարգմանությամբ լույս է տեսնում Տոբկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» վիպերգը: Նրանց թարմացնող ներգործությամբ թարգմանական գրքեր են լույս տեսնում նաև Նոր Նախիջևանում. Ֆենելոն՝ «Տելեմաքի արկածները» (1774), Մադրասում. Վոլտեր՝ «Մահ Յուլիոսի Կեսարու» (1818), Մոսկվայում. Ռասին՝ «Գոթադիա» (1834):

Մխիթարյանների գործունեությունը Թամրազյանը գնահատում է որպես «անցյալի վերակենդանացում»: Այնուհետև. «Նրանք դարերի փոշիների միջից հանեցին, խմբագրեցին, ծանոթագրեցին և ընթերցողի առջև դրեցին հայ ողջ դպրությունը, պատմագրությունը, մասամբ էլ պոեզիան: Դա վիթխարի լիցք տվեց ժամանակակիցներին, ստացավ ժամանակակից շեշտ, ջերմացրեց հայ մարդկանց, բորբոքեց անդեկ ու անզուլի սերնդին»: Շարունակության մեջ՝ «Ուրեմն ինչ-որ բան վերածնվում էր...»⁵⁵: Իր հերթին Քալանթարյանն այսպիսի գնահատական է տալիս. «Նրանք իրենց գործունեությունն սկսեցին՝ վերականգնելով մոռացված ավանդները և հասցրին մինչև այնտեղ (իրենք էլ շարունակելով), ուր գործում են նոր ժամանակի եվրոպական գրականության սկզբունքները: Հատկապես 18-րդ դարը և 19-րդ դարի առաջին կեսն առանց Մխիթարյանների ամայի կմտար ինչպես հոգևոր, այնպես էլ մասնավորապես գրական մտքի զարգացման իմաստով»⁵⁶:

Կան նաև այլ գնահատություններ:

Մխիթարյանների գործունեության իրական գնահատությունն ավելին է: Նախամաշտոցյան հայոց դպրության հարցն առայժմ թողնենք մի կողմ: Ինքը՝ Մաշտոցը, համաշխարհային նշանակությամբ ժամանակի տարածաշրջանային մեծագույն գործիչներից մեկն էր, որ ծնեց, ստեղծեց, ընթացք տվեց մեր նոր, իր անունով կոչվող Մաշտոցյան քաղաքակրթությանը: Մա մեր ծնունդի դարաշրջանն է, որին ասում ենք նաև Ոսկեդար:

Մեր երկրորդ ծնունդը՝ արդեն իսկ վերածնունդը, պայմանավորված է Մխիթար Սեբաստացու գործունեությամբ, որը նոր թափ հաղորդեց ազգային ինքնագիտակցությանը և վերականգնեց մեր ինքնության նախահիմքերը: Այդ իսկ պատճառով նրա և նրա կազմակերպական բուն գործունեությամբ է պայմանավորված հայոց իրական վերածնունդը:

Ամփոփելով շարադրանքը՝ պիտի ձևակերպենք առաջնորդող գաղափարը: Ինչպես ասում են՝ Արևմուտքը Արևմուտք է, Արևելքը՝ Արևելք, ինչքան էլ հանդիպեն իրար, այնուամենայնիվ ոզին, ավանդույթներն ու արժեքները տարբեր են: Եվրոպական Վերածնունդը պատմահասարակական և գաղափարագեղագիտական մի համակարգ է, արևելյան զարգացումները՝ այլ: Ընդհանրություններով, նմանության գծերով հանդերձ՝ դրանք տարբեր քաղաքակրթություններ են: Իսլամական Արևելքը, արվեստի ամենաազատամիտ դրսևորումներով անգամ, չհեռացավ Ղուրանից, մինչդեռ Արևմուտքում եկեղեցին հիմնավորապես զիջեց դիրքերը ազատ բարքերի առաջ: Հայ իրականության մեջ վերածնունդի դարաշրջան համարվող ժամանակաշրջանում եկեղեցին բնավ չզիջեց դիրքերը, քանի որ պատմականորեն չէր դրված նաև այդ պահանջը. անգամ թոնդրակյան ադանդավորական շարժման տարիներին եկեղեցին վերստին հաստատուն իր տեղում էր, որի սպասավորներն էլ՝ քարոզիչ քահանայից ու վարդապետից մինչև եպիսկոպոս ու կաթողիկոս ստեղծում էին հայոց միջնադարի խորապես ազգային արվեստ:

⁵⁵ Թամրազյան Հ., Հայ քննադատություն, գիրք Գ, Եր., «Նաիրի», 1992, էջեր 15, 23:

⁵⁶ Քալանթարյան Տ., Հայ գրականագիտության պատմություն. 5-19-րդ դարեր, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 158:

տը՝ գրում էին տաղեր ու առակներ, ծաղկում ձեռագրեր, հորինում հոգևոր երաժշտություն և «Սուրբ սուրբ»-ի պես երգեր: Նրանց անմիջական մասնակցությամբ ու թելադրանքով կառուցվում էին տաճարներ, կանգնեցվում էին խաչքարեր:

Չուզահեռ ծաղկում էր նաև ժողովրդական արվեստը՝ երգը, խաղն ու խաղիկը, հայրենն ու անտունին, գորգագործությունն ու քաղաքաշինությունը: Նոր թափ էին առնում արհեստները:

Այս հայացքը նաև հայ գրականության շրջանաբաժանման պահանջ է առաջադրում: Ըստ այդմ՝ հայ գրականության նոր շրջանը պետք է սկսենք 18-րդ դարի սկզբից՝ Մխիթարյանների գործունեությունից, բայց Սայաթ-Նովային, ժամանակային կապի խզումով հանդերձ՝ պայմանավորված մեր գրապատմական զարգացումների անկանոնությամբ, թողնենք միջնադարում: Արտառոց կարող է թվալ՝ Թիֆլիսի աշխարհաբարը թողնել միջնադարում և Մխիթարյանների վերականգնած գրաբարով սկսել նոր շրջանը, բայց այդպես է: Դեռ պիտի զար լեզվական հարցերի շուրջ ծավալվող գրապայքարը, որ պետք է դիտենք որպես նոր շրջանի բնականոն իրողություն:

Հայոց միջնադարյան արվեստն ունի իր դարպասների բանալիները, և մեր տան դռները պետք է բացենք մեր գաղտնագրերով և ոչ թե ուրիշներից փոխ առած թեկուզև գայթակղիչ, անգամ ազգայինը համաշխարհայնացնող, բայց նաև ուժացնող տեսություններով:

АРМЯНСКИЙ РЕНЕССАНС (Время и особенности)

___ Резюме ___

___ Д. Гаспарян ___

Ренессанс – литературно-культурно-историческое явление, сформировавшееся в начале XIV века в Италии, а затем распространившееся в европейской литературе. Ренессанс имеет свои как исторические, общественные, так и эстетические особенности. Литературоведы используют также термин “восточный Ренессанс”. В армянской действительности подобную точку зрения разделяли М. Абебян, М.Мкрян, П.Хачатрян и др. Вышла в свет также отдельная монография В. Чалояна на русском и армянском языках под названием “Армянский Ренессанс”. Предыдущие исследователи не использовали выражение “армянский Ренессанс”, что отражало идеологию советского литературоведения, обусловленного высказываниями классиков марксизма.

В статье подробно анализируется термин “восточный Ренессанс”, и отрицается факт существования армянского Ренессанса. Термин Ренессанс имеет абсолютно другое значение в европейской литературе, а ренессанс, как явление, обусловленное возрождением армянской государственности в X в., изменением грабара на среднеармянский и становлением светской литературы, представляет собой другие реалии и не соответствует европейскому. Кроме того, это явление в армянской действительности рассматривается в X-XIV вв., а европейская – начинается с XIV в., что, естественно, не могло иметь обратного процесса.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գասպարյան Դավիթ Վազգենի - ք.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԿԳՆ

մանկավարժության ազգային ինստիտուտ, E-mail: gasparyan.1947@mail.ru

Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ժամանակի գերտերությունների՝ Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի նշանավոր գրողները՝ Գ. Զոհրապը, Հ. Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Լ. Շանթը, Վ. Տերյանը, Ա.Ահարոնյանը և ուրիշներ, չափազանց զգայուն ու նպատակասլաց են վերաբերվել իրենց ժողովրդի իրավունքները պաշտպանելու, ազատագրական պայքարի խրախուսման գործընթացներին: Օտար տերությունների լծից հայրենիքն ազատագրելու գաղափարը նրանք արձարծել են թե՛ իրենց գեղարվեստական ստեղծագործություններում և թե՛ հրապարակախոսական հոդվածներում ու զանազան բնույթի այլ գրվածքներում: Բացի այդ, ակտիվորեն մասնակցել են պետականություն չունեցող իրենց ազգի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին, ոմանք (Ա.Ահարոնյան, Լ.Շանթ) հետագայում գործուն դերակատարություն են ունեցել ազգային ինքնիշխան պետության կայացման գործում: Վերոհիշյալ գործընթացներում իր ուրույն ներդրումն է ունեցել գրող, հրապարակախոս, Հայաստանի առաջին Հանրապետության հայտնի պետական գործիչ Ավետիս Ահարոնյանը /1866-1948/:

1880-ական թվականներին իր գեղարվեստական, ազգագրական ու հրապարակախոսական հոդվածներով թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ իրականության մեջ աչքի ընկած գրողը հետագայում՝ 1898-1902թթ., բարձրագույն կրթություն ստանալով Լոզանի (Շվեյցարիա) և Փարիզի Սորբոնի համալսարաններում, մտնում է ժամանակի ամենաճանաչված ազգային-քաղաքական կուսակցության՝ Հայ հեղափոխական դաշնակցության շարքերը, մտերմանում կուսակցության առաջնորդ Ք.Միքայելյանի հետ: 1917 թվականին Ռուսաստանում ժամանակավոր կառավարության հաստատման շրջանում ընտրվել է Հայոց ազգային խորհրդի նախագահ, իսկ երբ ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, 1919թ. ընտրվեց Ազգային խորհրդի (պառլամենտ) նախագահ:

Երիտասարդ Ա.Ահարոնյանի աշխարհայացքում, գեղարվեստական ստեղծագործություններում ու հրապարակախոսության մեջ իր ժողովրդի ազատության և ինքնիշխան պետականություն ունենալու գաղափարները ծնվել ու հասունացել են աստիճանաբար:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարի դրվատմանը գրողը հանգեց ստեղծագործական, գրական ուսումնառության, կենսաճանաչողության դժվար ու բարդ ճանապարհ անցնելու շնորհիվ: Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայության օրհասական վիճակի մասին 1894-96 թթ. կոտորածներից ազատված գաղթականների հետ շփումների ու գրույցների

միջոցով իմանալուց հետո, այդ ամենն իր պատմվածքներում և վիպակներում պատկերելով՝ Ահարոնյանը Րաֆֆուց հետո մի անգամ ևս հայ ընթերցող հանրության առաջ բացեց արևմտահայ իրականության ողբերգական ու հերոսական պայքարի տեսարանների մի անծայրածիր թվացող թատերաբեմի վարագույրը: Օսմանյան կայսրության տեղական իշխանությունների, թուրք ու քուրդ մանր ու խոշոր իշխողների դեմ ազատագրական պայքար մղելու գաղափարների մասին գավառահայության մեջ եղած հակասական պատկերացումների բացահայտումներին համադրվում և զուգահեռաբար գեղարվեստորեն պատկերվում էին հայ-քրդական հարաբերությունների կնճռոտ խնդիրները: Հայտնի է, որ քաղաքակրթական զարգացմամբ հայ ժողովրդից ցածր մակարդակի վրա գտնվող թուրք ու քուրդ ազրեսիվ ցեղերի հարևանությամբ ապրող գավառահայության կյանքը վտանգված էր նաև այն պատճառով, որ թուրքերն ու քրդերը նույն կրոնն էին դավանում, իսլամադավան էին: Բացի այդ՝ քոչվոր, ավարառու քրդական ցեղերը զինված էին, իսկ քրիստոնյա հայերին չէր թույլատրվում բացահայտ կերպով զենք կրել: Օսմանյան կայսրության մեջ քրդական ցեղերը, մեծաքանակ լինելով իրենց հայրենիքում, ցանկանում էին ինքնիշխանության հասնել: Ազատագրական պայքար մղելով թուրքերի դեմ՝ ինքնիշխանության էին ձգտում հասնել նաև հայերը: Հայ գործիչները փորձում էին համագործակցել քրդերի հետ ընդդեմ սուլթանական Թուրքիայի տիրապետության, սակայն, ինչպես հայտնի է, հայ-քրդական միասնական դաշինք չի հաջողվում ստեղծել:

Թուրքական իշխանությունները թե՛ գաղտնի և թե՛ բացահայտ քրդական ցեղերի առաջնորդներին հրահրում էին հարձակվել հայերի բնակավայրերի վրա վերջիններիս թալանելու, կոտորելու, հողերն ու տարածքները նվաճելու համար: Օսմանյան կայսրության նման քաղաքականությունը ձեռնտու էր քրդական վերնախավին: Հետևաբար պետք է ասել, որ այդպիսով քրդերը միայն գործիք չէ, որ դարձան սուլթանական Թուրքիայի ձեռքին հայերին ամեն կերպ ճնշելու, իսկ 1915 թվականին՝ նաև զանգվածային կոտորածներին մասնակցելու գործընթացներում: Քրդերի նկատմամբ թուրքական իշխանությունների նման վերաբերմունքն ըստ էության համապատասխանում էր նաև վայրենաբարո, ազահ ու ընչաքաղց քուրդ ցեղապետերի, ավատատերերի շահերին ու ցանկություններին:

Ժամանակակից հայ ճանաչված պատմաբան, ակադեմիկոս Ն. Հովհաննիսյանը, առաջադեմ քուրդ պատմաբան Քամալ Ահմադի հայ-քրդական հարաբերությունների մասին աշխատություններից մեկի մասին գրում է. «Հայերի ցեղասպանությանը քրդերի մասնակցության մյուս դրդապատճառը Քամալ Ահմադը համարում է քրդական ցեղերի ավագանու ազահությունը և ընչաքաղցությունը, որը ձգտում էր հարստանալ հայերի հաշվին: Նա նշում է, որ համիդիե գործերը և քուրդ որոշ ֆեոդալներ, աղաներ, ցեղապետներ, շեյխեր կարծում էին, թե հայերի սպանությունը ամենահարմար հնարավորությունն էր իրենց ձեռքը զցելու նրանց պատկանող հողատարածքները, արոտավայրերը, անասունները, գույքն ու ունեցվածքը և այդ պատճառով էլ մասնակցում էին հայերի ցեղասպանությանը: Քամալ Ահմադի այս վկայությունը, անշուշտ, օգնում է ճիշտ հասկանալու, թե ին-

չու էին քրդերը դեմ հայերի անկախությանը և դրա մոտիվացիան: Քրդական ավագանին՝ ֆեոդալները, շեյխերը, ցեղապետները վախենում էին, որ Հայաստանի անկախության դեպքում իրենք կզրկվեն հայերին կողոպտելու ու թալանելու, հայերի հաշվին հարստանալու և նրանց հողերին տիրանալու հնարավորությունից»¹: Ինչպես ասում են, մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

Հայ-քրդական հարաբերությունները վերոհիշյալ իրողությունների դիտանկյունից մեր գրականության մեջ գեղարվեստորեն առավել տպավորիչ ու ակնառու կերպով Րաֆֆուց հետո թերևս պատկերել է Ա.Ահարոնյանը 1890-900-ական թթ.գրած «Հարևանները», «Բաշո», «Դարավոր կաղնիին», «Մև օրեր», «Ռաշիդ» վերնագրերով պատմվածքներում ու վիպակներում և հատկապես «Ազատության ճանապարհին»/1906/ ժողովածուի երկերում:

«Հարևանները»/1898/ պատմվածքում Ռեզգոյի միջոցով բացահայտվում է այն իրողությունը, որ քրդերի ասպատակությունները քրիստոնյա հայ ազգաբնակչության բնակավայրերի նկատմամբ իրականացվում էին Ստամբուլից եկած (այն է՝ թուրքական իշխանությունների կողմից ուղարկված) հրամաններից խրախուսվելու և դրանք գործնականում կատարելու անձնական շահագրգռվածության շնորհիվ: Եվ ահա երախտամոռ Ռեզգոն իրեն բուժած հայ գյուղացի Հովակի և նրա հարևան Մարտոյի եզները վարատեղում լծից հանում և տանում է՝ իր արարքը հիմնավորելով հետևյալ կերպ. «Քիրվա Հովակ, մենք աղուհաց ենք կերել միասին, ես չեմ կարող մոռանալ. աղուհաց մոռացողի աչքերը կը կուրանան: Երեկ մի բան իմացա, Ստամբուլից հոհմ (հրաման) է եկել, որ մեր կուրմանջները (քրդեր) ֆլաներին (հայերին- Գ.Խ.) թալանեն: Էսօր է, էգուց է, ձեր գյուղում էլ մալ, ապրանք չի մնա: Ուղիղ ասած, սիրտս շատ է ցավում քեզ համար. Դե ես մենակ ի՞նչ կարող եմ անել մեր սաղ էլիաթի դեմ. միտք արի, վճռեցի գալ գոնե այս բանը քեզ հայտնել, որ զգույշ լինես. մեկ էլ... մեկ էլ... ասացի՝ գնամ քիրվայիս եզները բերեմ: Դե միևնույն է, որ ես չտանեմ, ուրիշները կըտանեն, ափսո՛ս են, լավ եզներ են, ինչո՞ւ ուրիշները տանեն. Մստո՛, դու եզներն արձակիր. Քիրվայի մալը քիրվային է հալալ, այնպես չէ՞, քիրվա՛ ջան»²: Իրեն բուժող Հովակի նկատմամբ նման «սրտացավ» վերաբերմունքն իր հերթին վկայում է հայերի և քրդերի հարաբերություններում վերջիններիս ոչ միայն քաղաքակրթական ցածր մակարդակի մասին, այլև թուրքական իշխանությունների կողմից հայերին թալանելու խրախուսանքի ձեռնադրի ներքին քրդերի համար:

Այս շրջանում Արևմտյան Հայաստանի գավառներում տեղի ունեցող նման իրողություններն ու փաստերը Ա.Ահարոնյանին պարզապես բերել էին այն համոզման, որ թուրքական իշխանությունների և քրդական ցեղերի դեմ պայքարում հայերը, դժբախտաբար, հավատարիմ ոչ մի դաշնակից չունեն: Այդ իսկ պատճառով Հովակի ու Ռեզգոյի փոխհարաբերությունները, Հովակի ու Մարտոյի՝ քրդերի

¹ Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, հրատ. Ռամկավար ազատական կուսակցության, Եր., 2016, էջ 20:

² Ահարոնյան Ա., Երկերի ժողովածու, հ. 1, Թեհրան, 1982, էջ 267:

նկատմամբ ունեցած հակադիր վերաբերմունքը և դրա հետևանքները պուժեի շղթայում հանգեցնում են նաև այն հետևությանը, որ քրդական ցեղերի շահերը համընկնում էին սուլթանական Թուրքիայի հայահալած քաղաքականությանը. դա էր պատճառը, որ հայ-քրդական բարեկամությունն հաստատելու բոլոր ջանքերը (եթե նկատի չունենանք առանձին դեպքերը) ապարդյուն եղան: Ահարոնյանի «Հարևանները» պատմվածքն արտացոլում էր ահա այս իրողությունը: Հետևաբար, գրողը ևս հակված էր ինքնօգնության, ժողովրդի մարտունակ ուժերի միջոցով բռնության դեմ ամեն մի կոնկրետ դեպքում հակահարված տալու գաղափարին: Մակայն մյուս կողմից՝ առանձին անհատների, օրինակ «Բաշոն» վիպակում Ղզրոյի՝ քրդերի դեմ վրիժառության տարերային դրսևորումների պատկերմամբ ևս ցուցադրվում է իրենից մեծ ուժերի դեմ հայ մարդու միայնակ ընդվզելու թուլությունը: Իսկ վրիժառության պատճառն այն էր, որ քրդերը Ղզրոյի որդուն վարատեղում սպանել և Բաշո եզը տարել էին, իսկ հետագայում քուրդ հրոսակները առեվանգել էին աղջկան ու հարսին: Նման դեպքերը լավագույնս են վկայում հայ մարդու տեսակի՝ ստրկության դեմ պայքարելու և արժանապատվորեն իր հայրենիքում ապրելու կամքի ու ունակության դրսևորման անհատական ներուժի մասին:

Անհրաժեշտ էր նման ներուժ ունեցողներին համախմբել իրենց հայրենիքը զավթած օտար ցեղերին (քրդերին ու թուրքերին) հակահարված տալու, հայ մարդուն կողոպտելու, սպանելու և անպատիժ մնալու նրանց ախորժակը սանձելու համար: Եվ ահա 1898 թ. մարդկային ու գաղափարական շփումները Զ.Միքայելյանի հետ, ուսումնառությունը եվրոպական երկրներում նրան մղում են օտարների տիրապետության դեմ ազատագրական պայքար մղելու հնարավորությունը տեսնելու Արևմտյան Հայաստանի տարածքում հայդուկական-ֆիդայական պայքար իրականացնելու ձևով: Հայ մարդու մեջ համազգային չարիքի դեմ անհատական կամ խմբակային ռոմանտիկական ընդվզման մասին պատկերացումը Ահարոնյանի ձևավորվող աշխարհայացքում ամրապնդվել էին նաև գերմանացի փիլիսոփաներ Ֆ.Նիցշեի՝ գերմարդու, մարդկային ճակատագրին ընդդեմ գնալու գաղափարներով և Ա. Շոպենհաուերի՝ գիտակցության նկատմամբ կամքի գերակայության մասին իրեն հոգեհարազատ գաղափարները յուրացնելու շնորհիվ:

Գեղարվեստական ստեղծագործություններում նեոռոմանտիկական և ռեալիստական պատկերավոր մտածողության համադրությամբ է Ահարոնյանն ստեղծել իր «Ազատության ճանապարհին» /1906/ ժողովածուի պատմվածքները, որոնք մեր գրականության մեջ պատմվածքի ժանրի բնագավառում առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացրին Արևմտյան Հայաստանում կռվող հայ ֆիդայիների՝ այդ խիզախ հայրերի կատարած անձնագոհ սխրանքի հերոսական ու ողբերգական կենսադրվագները, կերպարներին բնորոշ բարոյաճեղճության տարբեր բարդություններով: Ուշագրավ է, որ գրողը, ֆիդայական պայքարի ընթացքը պատկերելով, ցույց է տվել, թե ինչպես ահեղ թշնամու դեմ կռվի գնացող հայ ազատամարտիկներն ընդհանուր առմամբ ձգտում էին առաջնորդվել մարդասիրական սկզբունքներով և ոչ թե հակառակորդի դեմ ունեցած կույր ատելության ու վրիժառության զգացումով: Մեր ժողովրդի քաղաքակրթական մակարդակի նման տար-

բերությունը ոսոխից (մասնավորապես քրդերից) ակներև է պատկերված ժողովածուի «Լուսաբացին» պատմվածքում: Նախորդ օրը քրդերի դեմ մղած ծանր մարտերից հետո՝ մյուս օրվա լուսաբացին գոհեր ու վիրավորներ ունեցած ֆիդայիների խմբի առջև է անսպասելիորեն հայտնվում մի զինված երիտասարդ քուրդ, որն այցելության էր գնում իր հարսնացուին: Վայրի քրդի ինքնօրինակ գեղեցկությունը տեսնելով և տվյալ պահին նրան իրենց թշնամի չհամարելով՝ հայրուկապետը քրդին սպանելու հրաման չի կարողանում տալ: Երբ երիտասարդ քուրդն իրեն զինաթափ անող, իր տոկունությամբ աչքի ընկած, վիրավոր Խաչոյին հրում է, վերջինս կրակելով սպանում է քրդին: Հայրուկապետի զայրույթն ուղղվում է Խաչոյի դեմ, և խմբի մյուս անդամները հագիվ են զսպում նրան, որպեսզի հայրուկ Խաչոյին մահապատժից ազատեն: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող նման կռիվների ժամանակ կերպարների դրսևորած հոգեբանական բազում բարդությունները վկայում են ֆիդայական-պարտիզանական մարտերի ընթացքում տեղի ունեցող հակասական իրողությունները: Թեև հակառակորդը մեծ ուժեր ուներ ու կազմակերպված էր, բայց և այնպես հայկական գավառներում ընթացող ֆիդայական խմբերի մարտերը, այնուամենայնիվ, զսպում էին թուրք ու քուրդ բաշխրզուկների կամայականությունները հայ բնակչության նկատմամբ և պատվախնդիր ու ազատասեր հայրորդիներին կոփում ապագա նորանոր կռիվների համար:

Պետական գործիչ և գրող Ահարոնյանը, ինչ խոսք, չէր ժխտում հայ ժողովրդի ճակատագրում, մասնավորապես ազատագրական պայքարում և ինքնիշխան պետականություն ունենալու գործում հարևան երկրների, միջազգային դիվանագիտության, առաջադեմ գործիչների դերակատարության նշանակությունը: Նա այդ մասին գրում է և՛ «Քրիստափոր Միքայելյան» կենսագրական վիպակի արժեք ունեցող երկում՝ դաշնակցական առաջնորդի քաղաքական հայացքների բացահայտումների կապակցությամբ, և՛ իր քաղաքական օրագրում, որը հայտնի է «Մարդարապատից մինչև Սևր և Լոզան» վերնագրով: Ահարոնյանը մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական ու հերոսական իրադարձությունների ժամանակակիցը եղավ: Ֆիդայական ձախողված պայքարին հաջորդեց 1915 թ. Եղեռնը: 1917թ. Ռուսական կայսրության մեջ միապետության տապալումը նպաստեց Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծմանը: Բայց և այնպես, պատմաքաղաքական դաժան իրադարձությունների բովով անցած հայ ժողովրդի իրական կեցությունը Ահարոնյանին մղում էր ուշադրությունը սևեռել իր պատմական, հինավուրց հայրենիքում ապրող հայ բնակչության իրական ներուժի օգտագործմանը: Քանզի Հայաստանի առաջին Հանրապետությունն ստեղծվեց խիզախ հայրորդիների անձնագոհության, կամավորների ու ողջ մնացած նախկին հայրուկների՝ դարավոր թշնամու դեմ վերստին ինքնամոռաց ազատագրական պայքարի մեջ մտնելու շնորհիվ: Վերոհիշյալ թեմաներն ու գաղափարները նա արծարծել է 1920-ական թվականներին գեղարվեստական հրապարակախոսության, վավերագրության, հուշագրության համադրումներով գրած «Կամավորը», «Անդրանիկ», «Ավարայրի ոգեկոչումը» և այլ երկերում:

«Կամավորը» քնարական արձակ ստեղծագործության մեջ գրողը ներբողում է ընդհանրապես կամավոր մարտիկի բարոյական պահվածքի նշանակությունը ժողովրդի ազգային ազատագրական պայքարում: Կամավորը նրա պատկերացմամբ «սուկ զինվոր չէ. նա ավելի է, քան զինվորը»³: Կամավորը հայրենիքի, մարդկային ազատությունների իրական, անդավաճան, բոլորանվեր պաշտպանն է: «Միակ արդար պատերազմը հայրենիքի և առհասարակ մարդկային ազատության համար մղված պատերազմն է: Ազգերի բոլոր մեծ հեղաշրջումները կամավորների գործ է: Բոլոր լեգենդաները, որոնցով ապրում է մարդկությունը՝ կապված իդեալին, կամավորների կերտածն է»⁴:

Հին հունական դիցաբանության մեջ, իբրև կամավորի մասին իր պատկերացումների մարմնացում, նա հիշատակում է Պրոմեթևսի անունը, իսկ իրական գործիչներից՝ իտալական ազգային-ազատագրական պայքարի առաջնորդ Գարիբալդիին: Հայ իրականության մեջ նրա ճանաչած առաջին կամավորը Գոլոշյանն էր (Ալեքսանդր Գոլոշյան): Ըստ էության կամավորներ էին նաև բոլոր հայդուկ-ֆիդայիները, որոնց նկատմամբ խորին ակնածանքով ու դրվատելու մեծագույն ցանկությամբ էր լցված նրա հոգին: Ահա այդ կամավոր-հայդուկների մեջ նա առանձնահատուկ վերաբերմունք ունի Անդրանիկ Օզանյանի՝ զորավար Անդրանիկի նկատմամբ: Նրա կերպարը Ահարոնյանը գեղարվեստորեն ստեղծել է «Հազրեն» պատմվածքում, ապա մահվան կապակցությամբ «Անդրանիկ»/1927/ վերնագրված հուշակնարկում: Գրողը մտերիմ էր Անդրանիկի հետ, ուստի նրան ներկայացրել է ն՝ մոտիկից դիտված, ն՝ ժողովրդի ընկալումներով, ն՝ պատմական իրադարձությունների մեջ իր կատարած ներդրումով: Այստեղ էլ գրողը կարևորում է այն առնչությունը, որ կար կամավորական-հայդուկական պայքարի և Հայաստանի առաջին Հանրապետությունը կերտող հայկական բանակի ստեղծման ու արևելահայության փրկության գործում: «Եթե 1917-18 թվերին, - գրում է Ահարոնյանը, - ափ հափռ, հնիհն հնարավոր եղավ արշավող թշնամու մահահոտ շնչի տակ այդ բանակը կազմել և ճակատի հանել, դա միայն և միայն պարտական ենք շուրջ քառասուն տարի իրար հաջորդող կամավորական խմբերի անձնուրաց ինքնագոհության: Հայ բանակը հայ ժողովուրդի հոգու մեջ թառած էր և շարժվեց ու դուրս ելավ առաջին իսկ ահագանգին»⁵: Ապա, նկատի ունենալով 1918թ. մայիսին թուրքերի առաջխաղացման կասեցումը հայկական բանակի կողմից դեպի Արևելյան Հայաստան, ավելացնում է. «Երբեք մենք չէինք ունենա այսօրվան Հայաստանը իր մեկ միլիոն հոծ հայությամբ, եթե չլինեին Ղարաքիլիսս ու Մարդարապատ»⁶:

Խոհուն ու խորիմաստ ոգևորությամբ, տեղի ունեցածի ողբերգական ու հերոսական ելևէջները ներկայացնելով է գրողը «Ավարայրի ոգեկոչումը»⁷ հերոսապատում-ակնարկում նկարագրել 1918 թ. մայիսին տեղի ունեցած հայկական բա-

³ «Վարուժան» /թերթ/, փետրվար, թիվ 2 /15/, Եր., 1994:

⁴ Նույնը:

⁵ Ահարոնյան Ա., Երկերի ժողովածու, հ. Ե, Բոստոն, 1948, /Թեհրան, 1983/, էջ 429:

⁶ Նույնը:

⁷ Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը, Անդրանիկ, Եր., 1991:

նակի ճակատամարտերը թուրքական հորդաների դեմ հանուն Արևելյան Հայաստանում ինքնիշխան, անկախ պետականության կայացման: Այդ հերոսապատում-ակնարկում նա իրողությունները ներկայացրել է ժամանակակցի լավատեղյակությամբ ու ահարոնյանական գեղարվեստական խոսքին բնորոշ պատկերավորությամբ, հերոսականի ու ցավի հուզականորեն ազդեցիկ պատումով:

Փարիզում, 1920թ. օգոստոսի 10-ին՝ Հայաստանի կառավարության ղիվանագիտական առաքելությունն իրականացնելիս, իբրև պատվիրակության նախագահ՝ նա ստորագրեց Սևրի հայտնի պայմանագիրը, որը, ինչպես հայտնի է, հայանպաստ էր, որովհետև Արևմտահայաստանն իր մեծ մասով դուրս էր բերվում Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի տիրապետության տակից: Պայմանագիրը ստորագրելու կապակցությամբ Ահարոնյանն իր քաղաքական օրագրում գրել է. «Կյանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ: Թուրքական դաշնագիրն ստորագրվեց, և բոլոր Դաշնակից պետությունների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սևրի սրահում»⁸: Ճիշտ է, պատմաքաղաքական նորանոր հանգամանքների բերումով այս պայմանագիրը թղթի վրա մնաց, և, դժբախտաբար, չիրականացավ Արևմտյան Հայաստանի մեծ մասի ազատագրումը: Իսկ Լոզանի կոնֆերանսից /1922-23/ հետո Ահարոնյանը, ինչպես հայտնի է, իր դժգոհությունն արտահայտելով դրա արդյունքների նկատմամբ, հեռացավ քաղաքականությունից: Բայց և այնպես, իր ու իր սերնդի կենսափորձից ելնելով, նա կարողացավ նաև մեր ժողովրդի պատմությունից ու ներկայից կատարված իմաստուն եզրակացություններով դասեր փոխանցել եկող նոր սերունդներին՝ մասնավորապես գրելով. «Զենքի հաջողությունը փոփոխական է. հաղթանակի հետ և պարտությունը կա, բայց ձեռքի մեջ փշրված սուրը հեղափոխության և ազատության մահը չէ, քանի որ կա ու եռում է հոգիների ալեկոծող հեղափոխությունը: Ազգերի ազատությունը իր արտաքին ռազմական արտահայտությունից առաջ՝ հոգեբանական երևույթ է: Բռնության դեմ ծառայող և սուր բարձրացնող ազգը նախ հոգեպես ազատագրված է ստրկության բոլոր կաշկանդումներից: Այս է, որ կատարեցին մեր բոլոր հայտնի ու անհայտ հայդուկները իրենց մահով, նրանք բարձրացրին մեր ցեղի մեջքը, նրանք ազատագրեցին հայ ռզին նախապաշարումների, հնագանդության, համակերպության մրուրից, նրանք կերտեցին մեր ապագա բանակի կռու ու գաղափարական զանգվածը»⁹:

«Մարդարապատից մինչև Սևր և Լոզան» վերնագրված քաղաքական օրագրում ակներև են երևում այն ջանքերը, որ գործադրեց Ահարոնյանը Հայաստանի առաջին Հանրապետության սահմանները դաշնակից պետությունների աջակցությամբ ընդարձակելու համար: Մակայն դաժան իրականությունը ցույց տվեց, որ անկախացած առաջին հանրապետության սահմանները հնարավոր էր պահ-

⁸ Ահարոնյան Ա., Մարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր, 1919-1927, ԵՊՀ հրատ., Եր., 2001, էջ 117:

⁹ Ահարոնյան Ա. Երկերի ժողովածու, հ. Ե, Բոստոն, 1948, /Թեհրան, 1983/, էջ 428:

պանել գեթ սեփական բանակ ունենալու, սեփական զինվորների հայրենասիրության շնորհիվ:

Այսպիսով, կարելի է ասել, որ մեր ժողովրդի մարտունակ ոգու մասին Ահարոնյանի կատարած դիտարկումները յուրովի հաստատվեցին նաև մերօրյա իրադարձությունների միջոցով: Հայ կամավորների՝ ֆիդայի-հայդուկների պայքարի ձևերն իրենց ուրույն արտահայտություններով, ոգով ու գաղափարներով դրսևորվեցին նաև Հայաստանի երրորդ Հանրապետության հաստատման և Արցախի ազատամարտի ընթացքում:

ИДЕИ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ И ВОССТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В ПОВЕСТЯХ А. АГАРОНЯНА

___ Резюме ___

___ Г. Хачикян ___

В мировоззрении и художественных произведениях выдающегося армянского писателя, председателя парламента первой РА Аветиса Агароняна (1866 – 1948) идея свободы и независимости Армении сформировалась и созрела постепенно. Исходя из художественных и идеологических традиций, сформировавшихся в армянской и мировой литературе, писатель, во-первых, в сборнике «По пути свободы» (1906г.) впервые рассказывает о борьбе фиданов в Западной Армении. Затем в своей письменной речи (в различных статьях) подчеркивает значимость освободительной борьбы, как пути к освобождению от иноземного ига и созданию независимой республики.

В своих рассказах он вновь открывает занавес трагической и героической борьбы армянской действительности. Наиболее сильно выразил идеи национально-освободительной борьбы в своих произведениях в студенческие годы (1898г.), в швейцарском городе Лозанне. В эти годы он общался с лидером партии "Дашнакцутюн" Х. Микаеляным, с представителями армянской интеллигенции газеты "Дрошак", с национал-революционерами и фиданнами.

Мысль освобождения от иноземного ига и создания независимого государства сопровождала его на протяжении всей его жизни. Писатель излагает свои мысли не только в своих литературных произведениях, но и в публичных выступлениях, статьях, путевых заметках.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչիկյան Գագիկ Վահեի– Բ.գ.դ., Շիրակի պետական համալսարան,

E-mail:gagikkhachikyan@gmail.com

Մարինե ՂԱԶԱՆՅԱՆ

ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՆՔԻՑ» ՇԱՐՔՈՒՄ*

*Մանկությունը լցվում է աչքերիցդ ներս
և սեղմում է սիրտդ... սեղմում է սիրտդ...
Հովհաննես Գրիգորյան*

Հովհաննես Գրիգորյանը 1960-ականներին ասպարեզ իջած բանաստեղծական սերնդի նշանակալից ներկայացուցիչներից է, որն ուրույն տեղ ունեցավ հայ պոեզիայում: Դժվարին մանկությունն ու պատանեկությունը, անկասկած, իրենց կնիքը թողեցին Հովհաննես Գրիգորյան բանաստեղծի վրա՝ նրա պոեզիան դարձնելով առավել ինքնատիպ ու յուրօրինակ, անբռնազբոս և սրտառուչ: Նրա ստեղծագործությունը կարելի է համարել թախծի և հումորի յուրօրինակ շաղախ, որտեղ գույները մեկ մզանում են, մեկ բացվում:

Տեսաբանները կարծում են, թե գրողի վարպետությունը նաև ստեղծագործության վերնագրի ընտրության մեջ է, և շատ հաճախ ստեղծագործության ճակատագիրը կախված է վերնագրի ընտրությունից¹: Հովհ. Գրիգորյանը իր բանաստեղծությունների համար ընտրել է դիպուկ վերնագրեր, ինչը ևս խոսում է արվեստագետի ճաշակի և զգացողության մասին: Մրա շնորհիվ նրա բանաստեղծությունների վերնագրերն առանձնանում են հայ գրականության համապատասխանում: Դրանք արտահայտված են բառով, բառակապակցությամբ, երբեմն՝ նախադասություններով, որոնք հիշեցնում են միջնադարյան բանաստեղծությունների վերնագրեր («Այս գիշեր և վաղը ցերեկը», «Հայ ժողովրդի պատմության համառոտ ձեռնարկ՝ անհրաժեշտ հետևություններով»): Այս դեպքում վերնագիրը դառնում է բանաստեղծության բովանդակության համառոտ արտահայտություն, անոտացիա: Գրիգորյանի երկերի վերնագրերի պոետիկայի մասին խոսելիս կարող ենք առանձնացնել հետևյալ տեսակները. վերնագրեր, որոնք արտահայտում են քնարական հերոսի կյանքի ճակատագրական պահերը, հոգեվիճակը («Երբեք չմեռնես», «Կցկտուր խոսքեր», «Վերջին խոսք»), մետաֆորիկ («Սովորական մի ծառ», «Նոր վերադարձ», «Նոր տողից»), սոցիալական դիրք մատնանշող («Երեք գունաչի»), հարցադրումով արտահայտված վերնագրեր («Եվ ի՞նչ է ողբերգությունն առանց անձրևի», «Quidnam futurum est?», «Ովքե՞ր են այս մարդիկ»):

Հովհ. Գրիգորյանի բանաստեղծությունները, իրենց յուրատեսակ վերնագրային ընտրությամբ, մեր առջև բացում են մարդ-գրողի ներաշխարհը: Այս առումով գրականագետ Պ. Դեմիրճյանը գրում է. «Հովհ. Գրիգորյանի բանաստեղծու-

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ *Տե՛ս Դավիճովա Թ. Փրոնին Բ. Փոէտիկա զաղաւիյա. Թորիյա լիտերատուրի, Մ., 2003, ժր. 204:*

թյուններում, ի տարբերություն նրա սերնդակիցներից շատերի, ավելի հստակ նկատելի է իր կենսագրությունը, կյանքի ճանապարհը, հոգեբանության զարգացման կորագիծը, որն, անկասկած, նպաստում է նրա կերպարի առավել ամբողջական ընկալմանը»²:

Գեղարվեստաարտահայտչական ավանդական տարբեր ձևերի կիրառությունից բացի (համեմատություն, հակադրություն, նվազաբերություն, փոխաբերություն և այլն)՝ նրա ստեղծագործության մեջ որպես գեղարվեստական հնարանք պետք է առանձնացնել հատկապես ժամանակի պյուրեալիստական ընկալումը: Կան բանաստեղծություններ, որոնք գրված են վերհուշի ձևով, բայց ներկա, անցյալ, ապառնի ժամանակները միախառնված են: Եվ դա արված է այնքան վարպետորեն, որ ստեղծում է ն՝ կոնկրետ, ն՝ տևական ժամանակների պատկեր:

Իր հարցազրույցներից մեկում Հովհ. Գրիգորյանը խոսում է մի երկրորդ աշխարհի մասին, որը «անցյալի պրոդուկցիան է»³: Բանաստեղծի անցյալը կենդանանում, որոշակի է դառնում նրա հիշողություններով՝ մեզ համար բացելով այդ տարիների ու նրա սերնդակիցների հուզաշխարհի պատկերը: Ու թեև «Վազք՝ պատվիրանների հաղթահարումով» բանաստեղծության մեջ Գրիգորյանը գրում է, թե «Հաճելի քիչ բան կա հիշողությունների մեջ», այնուամենայնիվ այդ հիշողությունները իրական կյանքում, ինչպես բանաստեղծն է բնորոշում, «թույնի և մաղձի այս օվկիանոսում» ապրելու համար մի կողմի են դառնում: Իսկ երբ հետադարձ հայացք է նետում այդ կողմն, իրերն ու երևույթները այլ են թվում:

Հեռավոր կարոտի և սիրո աշխարհ է բանաստեղծի մանկությունը, որի պատկերը առավել տեսանելի է դառնում «Հրեշտակներ մանկության երկնքից» շարքի մի քանի բանաստեղծություններում: Դրանց զգալի մասը հեղինակը կառուցում է վերհուշի սկզբունքով՝ փոքր հատվածների մեջ մի ամբողջ կյանք պատկերելով:

Հովհ. Գրիգորյանի կենսագրությունից մեզ հայտնի է, որ նա ծնվել է 1945 թ.՝ սովի և աղքատության տարիներին: Նրա մայրը որդու հետ լույս աշխարհ է բերել նաև մի աղջիկ, որ մահացել է ծնվելուց հետո: Կենսագրական այս փաստը հեղինակի գրչի տակ դարձել է բանաստեղծություն՝ ցույց տալով միաժամանակ զավակ ունեցած և զավակ կորցրած մոլորված ընտանիքի հոգեվիճակը, քրոջ և եղբոր միջև եղած անխզելի կապը, քրոջը կորցրած եղբոր ավստասանքը.

Ծնվել եմ առավոտ շուտ,
լենինականյան մի աղքատիկ առավոտ:
Ինձ հետ ծնված քույրս մահացել է մի քանի ժամ հետո,
Երբ օգոստոսի արևը վաղուց արդեն դուրս էր եկել
և անտարբեր նայում էր մեր մոլորված ընտանիքին,
որը մեկ ժպտում էր և մեկ էլ լալիս էր սրտակեղեք⁴:

² Դեմիրճյան Պ., Բայց պիտի ապրես, «Սովետական գրականություն», 1987, թիվ 1, էջ 129:

³ Անավարտ գրույց կամ մենախոսություն, «Գրական թերթ», 2013, թիվ 3, 15 փետրվարի:

⁴ Գրիգորյան Հ., Հրեշտակներ մանկության երկնքից, Եր., 1992, էջ 123: Այսուհետ նույն աղբյուրից արված մեջբերումների էջերը կնշվեն տեղում:

Բանաստեղծի կյանքի առաջին առավուտը, առաջին արևը, նոր կյանքի խորհուրդ ունենալով, իրենց հետ միաժամանակ բերել են ն' ծնունդ, ն' մահ: Գուցե սա է նաև պատճառը, որ «Այս գիշեր և վաղը ցերեկը...» բանաստեղծությամբ հեղինակը հաստատում է ուրախության և դժբախտության միախառնված լինելը՝ գրելով, որ երջանկությունից միշտ էլ դժբախտության հոտ է գալիս: Այսինքն՝ բանաստեղծի կյանքի սկիզբն արդեն իսկ ցավոտ է եղել. ցավը ծնվել է նրա հետ և ուղեկցել նրան ամբողջ կյանքի ընթացքում: Հետագայում՝ ողջ գիտակցական կյանքում, բանաստեղծը միշտ հիշել է քրոջը և իր կյանքի լավագույն շրջանը համարել մոր արգանդում նրա հետ միասին ապրած ինն ամիսները: Ընտանիքի մյուս անդամների կողմից վաղուց մոռացված քույրը հաճախ է ստիպել նրան արթնանալ սրտի ցավից՝ թաց աչքերով:

Կյանքի անցողիկության փիլիսոփայությունը յուրատիպ մեկնաբանություն է գտել գրիգորյանական պոեզիայում: «Մարդու կյանքի շարժումը նա (Հովհ. Գրիգորյանը – Մ. Ղ.) ենթարկում է որոշակի պարբերացման՝ առավուտ, ցերեկ, իրիկուն և գիշեր (կամ՝ զարուն, ամառ, աշուն, ձմեռ), որը, բացի կոնկրետ օրվա կամ տարվա եղանակների մասնավոր պարբերացումից, ունի առավել լայն՝ մանկություն, հասունություն, ծերություն, փիլիսոփայական որոշակի բեռ կրող շերտը»⁵: Գեղարվեստական մի հնարանքով՝ կյանքի առավուտներից մեկի նկարագրությամբ, հեղինակը բացում է քնարական հերոսի, ինչպես նաև մարդ-էակի աննկատ անցնող և կարծես մի ակնթարթում ծերացնող տարիները, ողջ կյանքի պատկերը՝ ի ցույց դնելով այն օրորոցում պատկած «դեռ ոչ մի տարեկան» մանկան, հետո շրխկոցով փակվող ու բացվող դռների, քույրերի՝ դպրոց գնալու պատկերներով.

Եվ դեռ աչքերդ փակ սթափվում ես քիչ-քիչ,
քո լացի ձայնը, որն ականջիդ մեջ է...
քո լացի ձայնը... աղջիկդ է լալիս... օրորոցի մեջ,
կնոջդ քայլերը... ինչ-որ դռներ են փակվում ու բացվում
խոհանոցից ներս... Եվ սթափվում ես վերջնականապես,
հետո ծերանում
մի ակնթարթում... (էջ 124)

Հակիրճ ու դիպուկ նկարագրություններով, ինչը բանաստեղծի ոճի բնորոշ հատկանիշներից է, հեղինակը կարողանում է վերակենդանացնել իրենց աղքատ, բայց ուրախ Նոր տարիները՝ լիմոնադի և օդու փոխարեն ջրով լցված շշերով, թղթե շոկոլադներով, թղթե խնձորներով ու թղթե մանդարիններով: Նա ընթերցողին տեղափոխում է իր մանկության խաղերի և առաջին սիրո աշխարհը՝ դպրոցի պատերից ներս՝ դեպի ցուրտ դասարան, դասի առաջին ժամերը՝ «Թվաբ, Աշխարհ, Բուսաբ»: Բացվում է հեղինակի մանկության երկինքը՝ լի օդում թևածող ծիծեռնակներով, զանգերով, թվերով ու գնահատականներով սկսվող առավուտներով, պարերով ավարտվող ժողովներով, հեռավոր էքսկուրսիաներով: Ուրախ և անուրախ

⁵ Դեմիրճյան Պ., նշվ. աշխ., էջ 129:

հուշերում ծնվում է «ֆակուլտատիվ առարկա» համարվող «սերը, որի էտնից ընկած, ինչպես ճանճի էտնից/ ուսուցչական կոլեկտիվը քշում էր օրնիբուն./ պայքարում քիմիական պրեպարատներով./ թակարդներով զանազան...» (*«Թղթե Նոր տարի»*, «Դասամիջոց»):

Հայ գրականության մեջ շատ են տղամարդ բանաստեղծների՝ մորը նվիրած սիրառատ բանաստեղծությունները: Հոր մասին բանաստեղծությունները մեզանում այնքան էլ շատ չեն: Հավանաբար տղամարդու համար հորը բանաստեղծականացնելը ավելի դժվար է, և պատճառներից գլխավորը որդու՝ տարիներ հետո հորը նմանվելու կամ նրա կերպարի մեջ իր իդեալները մարմնավորելու ձգտումն է: Ինչ վերաբերում է Գրիգորյանի պոեզիային, հոր կերպարը նրա պոեզիայի կարևոր մոտիվներից է: Նրա ստեղծագործության կենտրոնում կանգնած է հայրը, իսկ մայրը դառնում է օժանդակ կերպար:

«Հրեշտակներ մանկության երկնքից» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ հոր նկատմամբ անկեղծ և պաշտամունքի հասնող սիրո դրսևորումներ են, որոնցում բավականին կենդանի երևում է բանաստեղծի հայրը: Եվ ի տարբերություն Հովհ. Շիրազի, որի «Հուշարձան հայրիկիս» շարքը հայ գրականության մեջ հայրերգության լավագույն օրինակն է, Հովհ. Գրիգորյանի բանաստեղծություններում առավել է ընդգծվում հոր և որդու կապը: «Ընդհանրապես, հայր-որդիթոռ ժառանգորդական կապը կարևոր նշանակություն է ձեռք բերում Հովհ. Գրիգորյանի պոեզիայում»⁶, - գրում է գրականագետ Պետրոս Դեմիրճյանը: Ահա այս ընդգծված կապն է մեզ թույլ տալիս ասել, որ եթե Շիրազի գործերում գծագրվում է առավելապես հողագործ հոր բարոյական նկարագիրը, Գրիգորյանի բանաստեղծություններում երևում է ոչ միայն հայրը, այլև հենց ինքը՝ բանաստեղծը:

Բանաստեղծի հայրը պատերազմի հերոս էր, նրա մեղալիները՝ որդու հպարտության առարկան: Ահա հայրը՝ «Պատերազմի մասին ոչ մի կերպ հնարավոր չէ խոսել» համոզմունքով, որ փորձում էր հիշողությունները վառված սիգարետի հետ միասին ճնշել մոխրամանում և լռել: Բայց պատերազմի մասին պատմում են նրա սպիները, խոնավ հայացքը, դողդողացող մատները, անճարակ շարժումները: Հոգեբանական հետաքրքիր անցումներով հեղինակը ցույց է տալիս կնոջ ու երեխաների վերապրած վախը, ցավն ու ուրախությունը. կարծես հենց նոր էր ավարտվել պատերազմը, և հայրն էլ հենց նոր էր տուն մտել: Հեղինակը խոսքը կառուցում է այնպես, որ բանաստեղծությունն սկսվում է դրամատիկ շեշտով, բայց աստիճանաբար տողերի արանքից կարծես լսելի են լինում հաղթանակի բացականչություններ: Կարող ենք ասել, որ «Շարադրություն» բանաստեղծությունը դաժան պատերազմի սկզբի և հաղթանակած ավարտի բանաստեղծական մարմնավորումն է: Եվ եթե նրանում բացակայում են պատերազմական դեպքերի անմիջական նկարագրությունները, ապա «Ես նորից խոսում եմ պատերազմի մասին» բանաստեղծության մեջ պարզորոշ երևում են նրա թողած սարսափելի հետևանքները՝ միտանի հենակավոր տղամարդիկ, թերսնված ու թուլակազմ, գունատ ու

⁶ Դեմիրճյան Պ., նշվ. աշխ., էջ 131:

ամբած կանայք, հենակների ու պրոթեզների արանքում՝ կարկատած հագուստով երեխաներ: Հայրը նորից տնքում է տողերի արանքում՝ հիշողության մեջ ասֆալտին խփվող հենակների չոր թխկթխկոցը, մեղալների գնզգնզոցի տակ տնքացող գետինը: Պատկերն ամբողջացնում են կյանքն ու մահը խորհրդանշող գույները՝ կանաչն ու կարմիրը, որոնք օգնում են ընթերցողին՝ տեսնելու հենակներին հենված տղամարդկանց արցունքները՝ կանաչ-կարմիր, զգալու հաղթանակի հրավառությունը՝ կանաչ-կարմիր:

Մանկության տարիներն անցել էին աննկատ, միևնույն կարգով՝ կարծես ոչինչ չփոխելով կյանքում.

...Եվ մինչ ըսիկ-ընիկ ասելով՝ մեծանում էի

Լենինականի փողոցներում-անվերջ նույնն էին մնում

Մենյակային ծաղիկները, անվերջ նույնն էին մնում (էջ 131):

Հոր ներկայությունը նույնպես տևական մի բան էր թվացել: Հայրն անընդհատ քայլել է, որդին էլ անընդհատ չի հասել ետևից, թնկթնկացել, իսկ ծանրացած լսողության պատճառով հայրը չի լսել նրան: Բայց ահա կյանքի սովորական ընթացքի մեջ ներխուժած ողբերգականը բանաստեղծի հոգում առաջացնում է անդառնալիության, անգորության, կարոտի ու տառապանքի զգացումներ: Կորցնելով հորը՝ բանաստեղծը հոգեկան ծանրագույն դրամա է ապրում: Նրա համար խախտվում է հորով պայմանավորված աշխարհի հավասարակշռությունը: Հոր համար ծանր էր մեռնելը, երբ աշխարհը ողողված էր ցերեկվա պայծառ լույսերի մեջ, երբ կյանքը եռում էր իր բնականոն ընթացքով. ինչ-որ կին դիմացի պատշգամբից կախում է իր մաքրամաքուր վացքը, ինչ-որ տեղ գնում է սխալված հեռախոսը, և զրուցում են երկու հոգի, վերևի հարկում շրխկոցով բացվում է դուռը, լսվում է երեխաների ճիչ ու ծիծաղը: Այս ամենը ավելի է ընդգծում երկնքի կապույտը, կարելի է ասել, ապրելու տենչը և միևնույն ժամանակ կորստի դառնությունը: Բայց որդին պիտի ապրեր, ինչը նրա համար ավելի ծանր էր, քան մեռնելը հոր համար: Պիտի ապրեր, որովհետև հայրը մահվան մահճում պատվիրել էր երբեք չմեռնել (*«Հրաժեշտի բանաստեղծություն հայրիկիս»*, *«Երբեք չմեռնես»*):

Բանաստեղծի հորը մենք տեսնում ենք երկու վիճակում՝ հայրը կենդանի և հոր կենդանի ներկայությունը մահից հետո: Ու երբ հայրն այլևս դադարում է ապրելուց այս աշխարհում, որդին փորձում է հոր ֆիզիկական բացակայությունը լցնել նրա հոգևոր ներկայությամբ: Տարիներ հետո, երբ հայրն այլևս չկար, բանաստեղծը մեծ պահանջ էր զգում այցելելու հորը, «խոսքը նրան հասցնելու», միզուցե շարունակելու այն տարիների կիսատ զրույցը: Բայց հայրն առաջվա պես չէր լսում, որդու համար էլ խոսելը դարձել էր անտանելի ու անհնարին: *«Գյումրի, քաղաքային գերեզմանոց, հայրիկիս»* բանաստեղծությունը տառապած որդու և քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված մարդու հոգեվիճակի նկարագրությունն է: Այստեղ անձնական ցավը և ազգային ողբերգությունն արտահայտված են միաձուլվել: Բանաստեղծին տանջում է ոչ միայն հոր բացակայությունը, այլև պատերազմական տագնապալի մթնոլորտը, իր ժողովրդի սոցիալական դրությունը. օրվա մի կեսը հացի հերթում և միտինգներում անցկացրած հայրենակիցներ,

թաղման տխուր թափորներ, և որ ամենասարսափելին է, հարազատ ժողովրդի հոգևոր անկում: Այս իրողությունները բանաստեղծի հոգում լռեցնում են անձնական ցավը, բացահայտում մեծ մարդասերի և հայրենասերի նկարագիրը:

Հայ և համաշխարհային գրականության մեջ շատ գրողների է հուզել մահվան առեղծվածը: Մոտալուտ մահվան կանխագագումները իրենց բանաստեղծություններում պատկերել են շատ բանաստեղծներ: Այս թեմային անդրադարձել է նաև Հովհ. Գրիգորյանը: «Մահը մի ամբողջ մոտիվ է գծում Գրիգորյանի պոեզիայում, մահը հոր կերպարով և նրա մահից հետո»⁷, - գրում է գրականագետ Ս. Մարինյանը: Մահը մեզ ներկայանում է նաև բանաստեղծի կերպարով, և Գրիգորյանի մահերգությունն այլ է: Հիշյալ բանաստեղծների երկերում նկատվում են բողոքի ալիք, սիրելու, ապրելու, չմոռացվելու մեծ ցանկություն: Իսկ Գրիգորյան բանաստեղծը, որ ըմբոստանում է հոր մահվան դեմ, զարմանալիորեն իր մահվան մասին խոսում է արդեն իսկ դրան հոգեբանորեն պատրաստ, ներքին հանդարտությամբ, առանց տագնապի՝ հասկանալով կյանքի անցողիկությունը, մահվան անխուսափելիությունը, կյանքի շարունակականությունը, որդու ապրելով հոր հարատևությունը: Ասվածի վկայությունը կարող է դառնալ բանաստեղծական հետևյալ պատկերը. հոր՝ գերեզման իջնելու հետ որդին դանդաղ-դանդաղ խրվում է հողի մեջ, դառնում արմատներով հողին ամուր կառչած մի ծառ՝ խորհրդանշելով հայր-որդի-թոռ ժառանգորդական ամուր կապը (*«Երբեք չմեռնես», «Մովորական մի ծառ»*): Ինչպես շատերը, Գրիգորյանն էլ հանգում է այն մտքին, որ մարդու մահով սկսվում է մեկ այլ կյանք. ուրեմն աշխարհն անվերջ կրկնություն է: Բայց դժվար է հասկանալ՝ հոր մահվան փա՛ստն է նրան մղել գրելու անցողիկ կյանքի և մահվան փոխհարաբերության մասին, թե՞ դա ուղղակի միջոց է հավիտենական այդ փիլիսոփայությանն անդրադառնալու: Ինչևէ, Գրիգորյանի երկերը կյանքի և մահվան մասին հետաքրքիր խորհրդածություններ են, որոնց զուգահեռները հանդիպում են նաև «Գերեզմանիա» վիպակում: Պարզվում է, որ հեղինակի՝ մահվան ու կյանքի մասին ունեցած դատողությունները պայմանավորված են նաև գյումրեցիների աշխարհընկալմամբ: Գրիգորյանը գրում է. «...Նրա (Գյումրու – Մ.Ղ.) բնակիչները քիչ է ասել, թե խոր հարգանք, մեծ պատկառանք ու երկյուղածություն ունեն մահվան աշխարհի նկատմամբ, որտեղ ամեն ինչ հաստատուն ու կայուն է, իսկ այս ցեխագունդը, ուր մենք իբր ապրում ենք իսկական կյանքով, փոշոտ ու խարխուլ կիսակայարան է»⁸: Այս հատվածներում մեր առջև գծագրվում է նկարագիրը մեծ հավատացյալի, որը համոզված է, որ մարդու իսկական ազատությունն սկսվում է հանդերձյալ կյանքում, որտեղ նա իսկական տանտեր է, իսկ պատերազմներով, անարդարություններով, թույնով ու ատելությամբ լցված մարդկանց աշխարհում՝ ժամանակավոր հյուր: Եվ մարդն իրեն սահմանված ժամանակը պիտի ապրի առանց հոգու վրա մեղք կուտակելու, չխախտելով Աստծու ստեղծած ներդաշնակությունը...⁹:

⁷ Մարինյան Ս., Պայմանական աշխարհի բանաստեղծը, «Գրական թերթ», 2007, թիվ 2:

⁸ Գրիգորյան Հ., Գերեզմանիա, Եր., 2013, էջ 89:

⁹ Տե՛ս Գրիգորյան Հ., նշվ. աշխ., էջ 118:

«Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում Հովի. Գրիգորյանը բանաստեղծականացրել է Գյումրին: Ծննդավայրի մասին գրած նրա բանաստեղծությունները կարող ենք համարել Գյումրու մասին քաղաքերգություն, Հովի. Գրիգորյանի Գյումրի-Նամեն, որը գյումրեցիների՝ իրենց քաղաքի նկատմամբ ունեցած մեծ սիրո ապացույցն է, քաղաքի գեղարվեստական պատկերը: Եվ ինչպես յուրաքանչյուր գյումրեցու, այնպես էլ բանաստեղծի համար քաղաքն ունի կենսական նշանակություն.

Ես մոտենում եմ քեզ, ինչպես քնատ երեխա, որը մութ սենյակում,
աչքերը փակ դեպի իր անկողինն է գնում՝

ձեռքերն առաջ պարզած (էջ 125):

Բանաստեղծական տողերում զգում ենք գյումրեցիների հումորը, տեսնում քաղաքի սևտուֆ տների ուղիղ շարանը, փողոցներն ու մայրթերը, մայրթերին կանգնած երեք զուռնաչիների, լսում նրանց տխուր նվագը, տեսնում բաղնիք գնացող կարմրաթուշ պառավների հանդիսավոր խումբը: Հայտնվում ենք վարսավիրանոցի մոտ «գոլ տված» մարդկանց խմբում և հասկանում, թե ինչ խորհուրդ ունի կիրակին գյումրեցիների համար: Բանաստեղծի փոշոտ մանկության օրերի միջով անցնում են «Ժեշտանչի Վաղոն»՝ միշտ անտրամադիր, դաժան՝ ճամփին պատահած շների նկատմամբ, մսագործ Ավոն՝ նախ շներին, ապա կնոջը, զոքանչին ու հարևաններին հայեռող, վարսավիրների խումբը՝ խիստ գործնական, վարժ շարժումներով: Այս ամենն ստեղծում է հին Գյումրու ամբողջական պատկերը, նիստուկացը նրա բնակիչների, որոնք ապրում էին երջանկության ու դժբախտության մասին ունեցած իրենց պատկերացումներով՝ հայացքները միշտ ապագային հառած (*«Իսկ հայացքը միշտ նույնն է մնում», «Երեք զուռնաչի», «Հին գորգ», «Այս գիշեր և վաղը ցերեկը...»*):

1988 թ. ավերիչ երկրաշարժը իր արձագանքը գտավ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում: Գրականագետ Ա. Նիկողոսյանը նկատում է, որ նախաերկրաշարժյան այն բանաստեղծությունները, որոնք ուրախ-երգիծական-պարողիկ կերպընկալում ունեին, երկրաշարժից հետո ձեռք են բերում նոր որակ¹⁰: Գրիգորյանի բանաստեղծությունները դարձան երկրաշարժի և պատերազմի բերած սարսափները սեփական մաշկի վրա անմիջականորեն զգացող ցաված հոգու արտահայտություն, ցավ, որ ծնվել էր հայրենի քաղաքի և նրա բնակիչների հանդեպ ունեցած սիրուց: Նա գրեց մի շարք բանաստեղծություններ, որոնցում խոր ցավով պատկերեց հայրենի եզերքի անդառնալի կորուստը, համընդհանուր ցավի ու տառապանքի մթնոլորտում ապրող բնակիչների հոգեվիճակը: Հեղինակը պատմում է ցուրտ քաղաքում՝ վրանի տակ վխտացող առնետների հետ գիշերներ լուսացնող մոր, մեկ շիշ կաթի համար ժամերով հերթ կանգնած հոր, ամուսնուն և երեք զավակներին կորցրած ու վշտից արդեն իսկ խելագարության եզրին գտնվող ջահել կնոջ մասին: Ընդհանրացման մեծ ուժ ունի գեղարվեստական հետևյալ պատկերը.

¹⁰ Տե՛ս Նիկողոսյան Ա., *Գրառումներ ընթացքից*, Եր., 2007, էջ 47:

- չէ, հանկարծ ասաց կինը,-

մի փոսն հերիք է, ճիշտը մեկն է, թող բոլորը

իրար հետ լինեն, երեխեքս փոքր են, թող հայրը

հետները լինի, ինչքան չլինի երեխա են, չվախենան հանկարծ... (էջ 175):

Գրիգորյանը մարդկային ապրումը պատկերում է բնության հետ սերտ կապի մեջ: Պատկերավոր համեմատությունների և հակադրությունների միջոցով բանաստեղծը ցույց է տալիս ջահել կնոջ վշտի խորությունը, որի մագերը, ըստ էության, ճերմակում են ոչ թե ձյան շերտից, այլ վշտից:

Հովհ. Գրիգորյանը դիմում է հայ գրականության մեջ արդեն տարածված այն ձևին, երբ սիրած կինն ու հայրենիքը նույնանում են: Եվ հայրենիքի նկատմամբ ունեցած այդ մեծ սիրո և նվիրումի պատճառով էլ հեղինակը չի կարող ներել իր սիրո առարկային ծվատվելու, իր դեմքն ու դիմագիծն անճանաչելիության աստիճանի կորցնելու համար.

Բայց ես երբեք չեմ ների քեզ այս օրը,

երբ նայեցի դեմքիդ

և չճանաչեցի... (էջ 173):

Մի քանի հարցադրումներ բացահայտում են հեղինակի վշտի անչափելի խորությունը. ցավը սրտում, ողբն ու լացը ականջին, արցունքներն աչքերին՝ այսուհետ ինչպե՞ս պիտի ապրեր ինքը:

«Դեկտեմբերյան այն գիշեր...» բանաստեղծության մեջ քաղաքի և հոր կորստի ցավը նույնանում են: Քնարական հերոսը գրուցում է ինքն իր հետ՝ վերապրելով անցյալը, երբ դեկտեմբերյան մի գիշեր քաղաքի պարիսպների մոտ չէր թաքցրել արցունքները և լաց էր եղել, ինչպես տարիներ առաջ, երբ հայրը այլևս հրաժարվել էր այս աշխարհում ապրելուց: Տարիներ հետո, երբ փորձել է քաղաքի մասին բանաստեղծություններ գրել, հասկացել է, որ իր ամենակարևոր բառերն արտասվել է ավերված քաղաքի պարիսպների տակ:

Ուժգին հարվածից ցնցված բանաստեղծը երբեք չկարողացավ մոռանալ իր տեսածը՝ ավեր ու մահեր, թշնամու ատելությանը նորածիններին խեղդող ծննդատներ, մարդասպան շենքեր: Քաղաքը դարձավ բանաստեղծի սրտում փորված վիրիսարի գերեզմանոց, ինքը՝ ողբերգակ, իսկ նրա ողբը՝ գյումրեցիների և ողջ հայության ողբը: Լաց եղավ Հովհ. Գրիգորյանը, արցունքները դարձան հարազատ քաղաքի մասին պատմող բանաստեղծություններ, որոնցով նա անմահացրեց իր քաղաքը սերունդների հիշողություններում: Եվ ինչպես իր քաղաքն էր կյանք ու լիցքեր տալիս իրեն, նա էլ փորձեց իր երգերում կյանք տալ «անկյանք կյանքին»: Թեև նա երբեմն տրվում է հուսահատության, սակայն չի մոռանում երգել բացվող արշալույսների ուրախ երգը («Վերջին խոսք», «Նոր վերադարձ»): Ինչպես բանաստեղծի կյանքի առաջին ժամերին կյանքն ու մահը քայլեցին կողք կողքի, և «օգուտոսյան արևն էլ մեկ ժպտաց, մեկ աղեկտուր լաց եղավ», այնպես էլ նրա բանաստեղծությունները, որոնք նրա պարզ հոգու արտացոլանքն են, զարմանալիորեն մեկ կապույտ, մեկ կարմիր են, ինչպես երազն ու դաժան իրականությունը, ինչպես կյանքն ու մահը: «Այնուամենայնիվ, բանաստեղծի հոգու գույնը մոայլը չէ, այլ

կապույտը, այն զարմանալի կապույտ գույնը, որ խորհրդանշում է երազը, սպասումը, կարոտը, հավատն ու մանավանդ սերը»¹¹, - գրում է Պետրոս Դեմիրճյանը: Իսկ ճաշակել այդքան ցավ ու դառնություն, բայց պահպանել հոգու ամբողջությունը, կարող է միայն բարոյական բարձր նկարագիր ունեցող մարդը:

«Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում տեսնում ենք Հովհաննես Գրիգորյան բանաստեղծ-մարդուն, որը ձգվեց դեպի իր մանկությունը, ապրեց իր մանկության երկնքի հրեշտակների հետ, նրանց կողքին: Նա ուզեց ամեն ինչ սկսել նոր տողից («Նոր տողից»), նորից բռնել ընդամենը մի վայրկյան բաց թողած մոր ձեռքը («Կարմիր արյունը որ մարմին չունեք»), ուզեց թնկթնկալով հասնել հոր ետևից, տոնել թղթե նոր տարի («Թղթե Նոր տարի»), երգել «Առաջին սիրո երգը», ուզեց՝ ինչ-որ մեկը բաց անի իր քաղաքի դարպասները («Անվերջ վերադարձ»): Իսկ երբ փորձեց խոսել այս ամենի մասին, հասկացավ, որ իր ամենակարևոր բաներն արտասովել է ավերված քաղաքի պարիսպների մոտ («Ղեկտեմբերյան այն գիշեր»):

Իր բանաստեղծություններում Հովհ. Գրիգորյանը մնաց հասուն մի մանուկ, որն ապրել էր խենթություններով լի մանկության և պատանեկության տարիներ: Իրական կյանքից ծնված նրա բանաստեղծությունները դարձան նրա դեմքը, որը ուրախ պահերին հիշեցնում է մանկան դեմք, իսկ երբեմն էլ ակոսվում՝ ցույց տալով հոգու տառապանքը: Նա կառուցեց մի շենք, որը պիտի հայտնագործեն ապագա սերունդները, պիտի գտնեն նրան այդ շենքի փոքրիկ բնակարանում՝ սեղանի առջև նստած ծխելիս, իսկ ամենուր և ամեն տեղ՝ բառե՛ք, բառե՛ք, բառե՛ք, ասված ու չասված բառեր: Այս ամենը հուշում է, որ Հովհ. Գրիգորյանի բանաստեղծությունը կյանք է ապրել, կյանք է սովել, սովորեցրել է սիրել: Նա, ինչպես հայրն էր պատվիրել, երբեք չմեռավ, անմահացավ իր բանաստեղծություններով, իր բանաստեղծություններում, իսկ նրա պոեզիան դարձավ «մի քանի կաթիլ արցունք՝ ժպտալու համար բացված աչքերի մեջ»:

ОПИСАНИЕ МЕСТА РОЖДЕНИЯ И ДЕТСТВА В СБОРНИКЕ СТИХОВ ОВАНЕСА ГРИГОРЯНА “АНГЕЛЫ С НЕБЕС ДЕТСТВА”

___ Резюме ___

___ М. Казарян ___

Стихи Ованеса Григоряна своим своеобразным выбором названий раскрывают перед нами внутренний мир человека-писателя, выявляя его самые сокровенные и скрытые уголки.

Описание места рождения и детства писателя становится более наглядным в нескольких стихах сборника “Ангелы с небес детства”, большую часть которых автор воспроизводит в виде воспоминаний, изображая в маленьких от-

¹¹ Դեմիրճյան Պ., նշվ. աշխ., էջ 130:

рывках целую жизнь. Философия недолговечности жизни получила свою своеобразную интерпретацию в поэзии Григоряна.

Одним из наиболее главных мотивов прозы Григоряна является образ отца. Ряд стихотворений из сборника стихов “Ангелы с небес детства” выражают искреннюю любовь и поклонение отцу.

Ованес Григорян упоминает также идею неизбежности смерти. Удивительно то, что поэт, восстающий против смерти отца, говорит о своей смерти психологически готовым, с внутренним спокойствием, без тревоги, понимая не вечность жизни и неизбежность смерти.

Ованес Григорян в сборнике стихов “Ангелы с небес детства” поэтически представил Гюмри. Стихи, написанные о месте рождения поэта, можно представить как песни о городе Гюмри, что является доказательством большой любви гюмрейцев к своему городу. Поэзия Ованеса Григоряна откликнулась также и на разрушительное землетрясение в 1988 г. Он написал ряд стихотворений, в которых с глубокой болью выразил необратимую потерю родины. Тем не менее, его песни отличаются не темными, а яркими красками, обобщая в них жизнь и оптимизм, любовь и веру.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ղազարյան Մարինե Ղազարի - ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն,
E-mail: marine.kazaryan.81@mail.ru, marinekazaryan@ysu.am

**ՄՇՈ ԵՎ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(ընդհանրություններ և տարբերություններ) ***

Հայերենի ոչ մի բարբառ, այդ թվում՝ Մշո և Կարնո բարբառները մեր լեզվի զարգացման որևէ շրջանում իրենց բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չեն եկել: Նրանց հնչյունական, քերականական, բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ընթացքում՝ պայմանավորված պատմական որոշակի հանգամանքներով: Այս իրողությունների հստակեցումն էական է բարբառների միջև եղած տիպաբանական ընդհանրությունները և տարբերությունները որոշելու հարցում:

Մշո և Կարնո բարբառները հայերենի ամենամեծ բարբառների թվին են պատկանում, որոնք, հազարավյակների խորքից գալով, կենդանի են մինչ օրս: Նրանց պատմական փոխառնությունները, անտարակույս, գալիս են հնուց, ուստի և նրանց քննությունն արդիական է: Մշո և Կարնո բարբառները ձևավորվել են Կենտրոնական Հայաստանում ինչ-որ պատմական ժամանակահատվածում՝ զբաղեցնելով պատմական Հայաստանի Մեծ Հայքի Տարուբերանի (Մշո բարբառ) և Բարձր Հայքի (Կարնո բարբառ) նահանգները: Երկու բարբառները սահմանակից են: Խնուսի խոսվածքը՝ որպես Մշո բարբառի առանձին միավոր, Կարնո բարբառի արևմտյան հատվածում է և, ըստ ամենայնի, սահմանաբաժան է:

Հայերենի արևմտյան խմբակցության Մշո և Կարնո բարբառների ուսումնասիրությունն սկսվել է 19-րդ դարի վերջերից: Մշո բարբառի ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա են դնում հայագետներ Լ. Մսերյանցը և Հր. Աճառյանը: Լ. Մսերյանցի «Этюды по армянской диалектологии»¹ (1897-1901 թթ.) երկհատորանի աշխատության մեջ Մշո բարբառը ենթարկվել է տարածամանակային քննության: Ուսումնասիրության առաջին հատորում հեղինակը քննում է Մշո բարբառի հնչյունական համակարգը և համեմատում գրաբարյան դրսևորումների հետ, իսկ երկրորդ հատորում Մշո բարբառի ձևաբանական համակարգը համեմատության սկզբունքով դիտարկում է գրաբարի և միջին հայերենի ձևաբանական համակարգերի հետ: Լ. Մսերյանցը նպատակ է հետապնդել որոշել Մշո բարբառի հնությունը և առնչությունները հնդեվրոպական հիմք լեզվի օրինաչափություններ-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ SCS 15T-6B101 գիտական թեմայի շրջանակներում:

Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Мсерианц Л., Этюды по армянской диалектологии, часть 1, 1897, часть 2, 1901, М.

րի հետ²: Ըստ ամենայնի, այս մոտեցմամբ Լ. Մսերյանցը Մշոն բարբառը համարում է հայերենի հնագույն լեզվավիճակ: Հր. Աճառյանն առաջինն է, որ հայերենի բարբառների միահատկանիշ ձևաբանական դասակարգման մեջ հստակորեն որոշում է Մշոն և Կարնոն բարբառների դիրքը հայերենի բարբառների Կը ճյուղում՝ ուրվագծելով նրանց տարածման մոտավոր սահմանները 20-րդ դարի սկզբի լեզվական ու պատմական տվյալների հաշվառմամբ³:

20-րդ դարի ողջ ընթացքում հետազոտողները տարբեր առիթներով անդրադարձել են քննության ենթակա երկու բարբառներին: Մյուս կարևոր դասակարգումը տեսնում ենք հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ⁴: Գ. Ջահուկյանը հստակեցնում է երկու բարբառների տարածման մոտավոր սահմանները, և նրա ներկայացրած լեզվական միավորիչ և տարբերակիչ հատկանիշները խմբավորելիս հնարավոր է դառնում ոչ ամբողջապես ներկայացնել երկու բարբառների ընդհանրությունները և տարբերությունները և տալ նրանց տիպաբանական բնութագիրը:

Ըստ Գ. Ջահուկյանի վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Մշոն բարբառը Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբի ամենամեծ բարբառն է և ունի ինը խոսվածք՝ *Բաղեշը, Խյաթը, Արծկեն, Արձեշը, Մանազկերտը, Մուշը, Բուլանըրը, Խնուսը, Ալաշկերտը*: Իսկ Կարնոն բարբառը, ըստ նույն դասակարգման, ներառվում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում, որը ներկայանում է *Կարինի, Գյումրու, Բաբերդի, Խնդաձորի* խոսվածքներով:

Ի դեպ, Մշոն և Կարնոն բարբառների վերաբերյալ տարբեր ժամանակներում արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել ոչ միայն Լ. Մսերյանցն ու Հր. Աճառյանը, այլև Բ. Պատկանյանը, Ս. Բաղդասարյան-Թափալցյանը, Բ. Մաղաթյանը, Հ. Մկրտչյանը⁵ և այլք: Երկու բարբառները երբևէ չեն քննվել զուգադրահամեմատության, տիպաբանության համատեքստում: Նրանք միշտ ներկայացվել են առանձին-առանձին, ուստի և երկու բարբառների առանձնահատկությունների միասնական քննությունը, ըստ ամենայնի, կարևոր է: Նշենք՝ երկու բարբառների այսօրինակ քննությունը, որպես ուշադրության արժանի գիտական խնդիր, բացօղակ է տարածքային լեզվաբանության մեջ:

Մինչև 19-րդ դարի առաջին կեսերն ուսումնասիրվող բարբառների դասավորությունը հնարավորինս կայուն է եղել: Մշոն բարբառը զարգանում էր Մշոն դաշտում և նրա շրջակա գավառներում, քաղաքներում ու գյուղերում՝ Մուշ կենտրո-

² Մկրտչյան Գ., *Մշոն բարբառը հետազոտողների գնահատմամբ, Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2016, 2 (20), էջ 40*:

³ Աճառյան Հր., *Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների, Էմինեան ազգագրական ժողովածու, Ը հատոր, Մոսկուա-Նոր-Նախիջևան, 1911*:

⁴ Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972*:

⁵ Патканян К. *Материалы для изучения армянских наречий. Выпуск 2, Мушский диалект, Санкт-Петербург, 1875; Мсерянц Л., նշվ. աշխ. Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշոն բարբառը, Եր., 1958: Մկրտչյան Հ., Կարնոն բարբառը, Եր., 1952*:

նով, իսկ Կարնո բարբառը հանդիսանում էր Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտորչուրի, Բաբերդի, Սպերի խոսակցական լեզուն՝ Կարին կենտրոնով⁶: Կարնո բարբառի սահմանները տարածվում էին մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե (Գիրեսուն), իսկ Մշո բարբառը՝ Վանա լճի արևմտյան հատվածում: Ներառյալ Խնուսի, Բաղեշի, Ալաշկերտի խոսվածքները՝ Մշո բարբառը սահմանակցվում էր Կարնո և Արարատյան բարբառներին, արևելքից՝ Սոկսի ու Դիադինի բարբառներին, իսկ արևմուտքից՝ Տիգրանակերտի բարբառին (այժմյան Թուրքիայի Դիարբեքիրի նահանգ):

19-րդ դարի կեսից սկսած և 20-րդ դարի սկզբից Մշո և Կարնո բարբառների տարածական հիմքերը խախտվում են, իսկ նրանց բնականոն դասավորությունը՝ խաթարվում: Այս պահի դրությամբ Մշո բարբառն ամբողջությամբ և Կարնո բարբառը մասնակիորեն ցիրուցան են աշխարհի տարբեր հատվածներում: Երկու բարբառների կրողները հիմնականում վերաբնակվել են Հայաստանի Հանրապետության տարբեր հատվածներում, ինչպես նաև՝ Ջավախքում ու Վրաստանի տարբեր հատվածներում (Ախալցխա, Ախալքալաք, Թբիլիսի): Ջավախքում բացառություն են կազմում միայն Հեշտիա, Թորիա, Ուճմանա, Դիլիֆ և Փոկա գյուղերը, որոնց բնակիչները մշեցիներ են: Մշո բարբառի կրողները հանգրվանել են ՀՀ-ի տարբեր հատվածներում՝ Ապարան, Մարտունի, Հոկտեմբերյան, Լոռի, Կոտայքի մարզի զանազան գյուղեր և այլն, իսկ Կարնո բարբառը տարածված է Գյումրիում ու նրա հարակից քաղաքներում ու գյուղերում՝ Արթիկում, Ախուրյանում, Աղինում: Երկու բարբառների այս տեղաշարժերը գրեթե միշտ պայմանավորված են եղել ռուս-թուրքական պատերազմներով և 19-րդ և 20-րդ դարերի աշխարհաքաղաքական գործընթացներով: Երկու բարբառների զանգվածային գաղթերն ու տեղաշարժերը տեղի են ունեցել հիմնականում 1828թ. և 1915թ.:

Երկու բարբառների վերաբերյալ պատմական վկայությունները սակավաթիվ են, Մշո բարբառի մասին այդպիսիք գրեթե չկան: Կարնո բարբառի մասին հնամենի մի վկայություն է հասել՝ ավանդված 8-րդ դարի մեկնիչ Ստեփանոս Սյունեցու կողմից: Նա, կատարելով հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգման առաջին փորձը, գրել է. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՄիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և աւգտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեցի անընդել գոյով լեզուացն»⁷: Փաստորեն, Ս.Սյունեցին հայերենի եզերական (ծայրամասային) բարբառների շարքում դասում է նաև Սպերի խոսվածքը՝ որպէս առանձին բարբառ: Ս. Սյունեցին չի հիշատակում Կենտրոնական Հայաստանի բարբառները, ինչպիսիք են, օրինակ, Արարատյանը, Տարուբերանը, քանի որ նպատակ է հետապնդել ներկայացնելու

⁶ Աճառյան Հր., Հայերեն գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Թ., 1913թ., էջ 2:

⁷ Տե՛ս Ադոնց Ն., Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք, Պետերբուրգ, 1915, էջ 187:

եզրային բարբառները: Այս դեպքում Մշոն բարբառի պատմական սահմանները համընկնում են Մեծ Հայքի Տարուբերան նահանգի սահմաններին, որն արդեն Կենտրոնական Հայաստանն է:

Տիպաբանական տեսանկյունից դժվար է որոշել՝ արդյոք Մշոն և Կարնոն բարբառները զարգացման միասնական ընթացք ունեցել են: Որքան էլ երկու բարբառները տարածականորեն սահմանակից են, գոյակցել և զարգացել են Կենտրոնական Հայաստանում, այդուհանդերձ նրանց ունեցած լեզվական տարբերակիչ հատկանիշներն ակնհայտորեն վկայում են հակառակը: Թե՛ Մշոն և թե՛ Կարնոն բարբառներն ունեն այնպիսի լեզվական յուրահատկություններ, որոնք չեն ավանդվել հինհայերենյան լեզվական հուշարձաններում: Ասվածը վկայում են երկու բարբառներում գործող հատկապես հնչյունական օրենքները և քերականական կարգերի առանձին դրսևորումները: Երկու բարբառների տիպաբանությունը ներկայացնելիս հիմք ենք ընդունել Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման*, ինչպես նաև Մշոն և Կարնոն բարբառներին նվիրված ուսումնասիրությունների տվյալները: Ըստ ամենայնի, ժամանակակից բարբառների, այդ թվում ուսումնասիրվող բարբառների շատ գծեր հնարավոր է բացատրել հին հայերենի՝ գրաբարյան տեքստերում արձանագրված փաստերով. սակայն կան այնպիսի արխայիկ գծեր, որոնք ավելի մոտ են հնդեվրոպականին ու փոխատու աղբյուրներին, քան գրաբարի ավանդված ձևերը⁸: Նկատենք, որ Գ. Ջահուկյանի հենց այս դիտարկումն է, որ մեր ժամանակներում կարևորվում է հայերենի բարբառներն ուսումնասիրելիս, որոնց արդյունքները կարող են նպաստավոր լինել միասնական հայերենի նախագրային շրջանի բաց օղակները վերականգնելիս:

Տիպաբանական կարևորագույն հատկանիշը⁹, որով միավորվում են Կարնոն և Մշոն բարբառները, բառակերպի դիրքում շնչեղ ձայնեղների գոյությունն է՝ ի հակադրություն պարզ ձայնեղ պայթյականների և կիսաշփականների: Այս հատկանիշից զուրկ են Մշոն բարբառի *Մանազկերտի, Բաղեշի, Խյաթի, Արձեշի, Արձկեի* խոսվածքները: Կարծում ենք՝ այս հատկանիշն է վկայում երկու բարբառների հին լեզվական որակ լինելը: Այս հանգամանքն անվիճարկելի է այսօրվա պատմահամեմատական լեզվաբանության տվյալներով: Հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզուն ուներ քառաստիճան բաղաձայնական համակարգ՝ շնչեղ ձայնեղների առկայությամբ: Այդպիսի համակարգ ունեն նաև Մշոն և Կարնոն, ինչպես և՛

* Նշենք, որ Գ. Ջահուկյանի ընտրած հարյուր հատկանիշներից Մշոն և Կարնոն բարբառներում գործում են ընդամենը 61-ը: Ընդ որում, Կարնոն բարբառին հատուկ 11 հատկանիշ բացակայում է Մշոն բարբառում, իսկ Մշոն բարբառին հատուկ 17 հատկանիշ բացակայում է Կարնոն բարբառում: Ըստ որում, 61 հատկանիշից 50-ը առկա է Մշոն բարբառում, իսկ 44-ը՝ Կարնոն բարբառում:

⁸ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Երևան-Բեյրութ, 2000, էջ 214:

⁹ Հոդվածում սղության պատճառով չեն քննարկվում լեզվական բոլոր հատկանիշները. նախապատվությունը տվել ենք կարևոր և վիճահարույց հատկանիշներին:

Ոզմի, Արարատյան ու Նոր Ջուղայի բարբառները⁹, միայն այն տարբերությամբ, որ, ըստ Գ. Ջահուկյանի, հայերենում ու նրա բարբառներում հնդեվրոպական շնչեղ ձայնեղների և պարզ ձայնեղների հնչույթային հակադրությունը չի պահպանվել¹⁰: Հակառակ դեպքում հին հայերենում որևէ կերպ դրանք կարտացոլվեին: Պատմահամեմատաբանները, նկատի ունենալով գրաբարի (իմա՝ հին հայերեն-Գ. Մկրտչյան) տվյալները, կարծում են, թե հնդեվրոպական քառաստիճան բաղաձայնական համակարգը հայերենում յուրօրինակ տեղաշարժերի է ենթարկվել, որում շնչեղ ձայնեղները տվել են պարզ ձայնեղներ, ձայնեղները՝ խուլեր, իսկ պարզ խուլերը կա՛մ պահպանվել են, կա՛մ վերածվել շնչեղ խուլերի¹¹: Եթե հայերենի բաղաձայնական համակարգը ներկայացվում է այսպիսի տեղաշարժերով, ապա ինչու են անտեսվում հայերենի քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների տվյալները: Գուցե այս բարբառները նախալեզվյան համակարգի անմիջական կրողներն են, նրանց ժամանակակից ժառանգները, որը հավանական ենք համարում, և շնչեղ ձայնեղությունը հայերենի նշյալ բարբառներն ուշ շրջանում ձեռք չեն բերել, ինչպես ներկայացնում են պատմահամեմատաբանները՝ հիմք ընդունելով գրաբարի տվյալները: Շնչեղություն/ոչ շնչեղություն հակադրությունը հայերենում դրսևորվում է բացառապես շունչի առկայությամբ¹²: Շունչի առկայությունն իմաստատարբերակիչ գործառույթ չունի հայերենի՝ շնչեղ ձայնեղներով ներկայանալի բարբառներում, հետևաբար նույն իրողությունը կարող էր լինել նաև հին հայերենում: Ի դեպ, գրաբարի շնչեղ ձայնեղներ ունենալը հայագիտության մեջ շրջանառություն ունենալը նորություն չէ¹³:

Նման պայմաններում հիմնագուրկ են հայերենի քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների, այդ թվում Մշո և Կարևո բարբառների ծագումը պայմանավորել գրաբարի բաղաձայնական համակարգի կրած փոփոխություններով: Այս բարբառների բաղաձայնական համակարգերի գոյությունը որևէ կերպ չի կարող բացատրվել գրաբարի կրած փոփոխություններով: Մինչդեռ երկաստիճան և եռաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները կարող են ծագած լինել գրաբարյան բաղաձայնական համակարգերի փոփոխություններից: Հայերենի տվյալները ցույց են տալիս, որ բաղաձայնական շարքերի միավորում հնարավոր է, ինչպես եղել է խլագուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների պարագայում: Մինչդեռ՝ որևէ համակարգի վերակենդանացումը կամ ուշ շրջանում ի հայտ գալը հավանական չէ: Հայերենում

⁹ Այտրնյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 46, Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, էջ 195:

¹⁰ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, էջ 196:

¹¹ Մեյե Ա., Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ, Ժնն, 1988, էջ 20-27: Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, երկրորդ մաս, Եր., 1951, էջ 362-440:

¹² Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Եր., 1988, էջ 144:

¹³ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 6, Եր., 1971, էջ 845: Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, էջ 263:

շնչեղ ձայնեղների համակարգը չէր կարող ուշ շրջանում առաջացած իրողություն լինել՝ ղիտվելով գրաբարի կրած փոփոխությունների զարգացում: Հնչյունաբանության մեջ անժխտելի է, որ որպես համակարգ հանդես եկող հնչյունները գալիս են հազարամյակների խորքից: Այս հանգամանքն էլ վկայում է, որ շնչեղ ձայնեղները չէին կարող անհետանալ հին հայերենի շրջանում և հետագայում՝ վերականգնվել, այսինքն՝ այդ համակարգերը մեր լեզվում եղել են միշտ: Իսկ հինհայերենյան լեզվական հուշարձաններում դրանց չարտացոլվելն առանձին գրանշաններով օրինաչափ է, քանի որ շնչեղ ձայնեղներն ու պարզ ձայնեղները հնչույթային հակադրության մեջ չեն եղել:

Ե՛վ Մշո, և՛ Կարնո բարբառներում մինչ օրս, որպես տիպաբանական հատկանիշներ, գործում են շնչեղ ձայնեղները: Այս առումով խիստ կասկածելի և հակասական ենք համարում բարբառագետ Հ. Մկրտչյանի այն տեսակետը, որ Կարնո բարբառում «արդի հայերենի ազդեցությամբ ձայնեղ շնչեղները թուլացել են, և բարբառիս բաղձայնական համակարգը աստիճանաբար սկսում է դառնալ եռաստիճան»¹⁴: Հետագոտողը այս տեսակետը հայտնել է սոսկ այն պատճառով, որ Խորհրդային Միության տարիներին վերաբերմունքն այլ է եղել տարածքային միավորների նկատմամբ՝ ի սպաս գրական լեզվի առաջնահերթության:

Մշո և Կարնո բարբառներն ունեն ձայնավորների նույն համակարգերը, ինչն ունի հնդեվրոպական վերականգնված հիմնալեզուն: Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ Մշո և Կարնո խոսվածքներում ձայնավոր *ա, է (է), ի, ո (ո), ու* հնչյունները համընկնում են հինհայերենյան ձայնավորների բաշխվածությանը և հնչման օրինաչափություններին: Հին հայերենի հետ ունենցած համապատասխանությունները պատահական լինել չեն կարող, ընդամենը խոսում են նրանց միավորիչ հատկանիշների մասին՝ միասնաբար կապվելով հնդեվրոպական համակարգերին: Հին հայերենի հնչյունական որակները տարածվում էին Կենտրոնական Հայաստանի նահանգներում, որոնց կրողների գոյությունը, գոնե Մշո բարբառի դեպքում, կասկած չի հարուցում: Պատահական չենք համարում նաև այն, որ երկու բարբառներում էլ *ը* ձայնավորն ունի այն արժեքը և դրսևորումները, ինչ հին հայերենում և վերականգնված հնդեվրոպական հիմնալեզվում: Իզուր չէ, որ *ը*-ի լիաձայնության դրսևորում չկա ուսումնասիրվող ոչ մի խոսվածքում: Միայն Բաբերդի խոսվածքն է, որում *ը*-ի լիաձայնությունը, ըստ Գ. Ջահուկյանի, մահացող հատկանիշ է: Որպես ներկայացված համակարգին բացառում՝ ընդգծենք, որ Մշո, Բուլանրդի, Արճեշի, Արծկեի խոսվածքներում կան քմային կամ քմայնացած ձայնավորներ, մինչդեռ Կարինի, Գյումրու, Բաբերդի, Խնուսի, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշի խոսվածքներում այդպիսի ձայնավորներ կան միայն փոխառյալ բառերում: Խնդաձորում քմային ձայնավորներ չկան:

Ուսումնասիրվող երկու բարբառներում տիպաբանական կարևոր նշանակություն ունեն քերականական իրողությունները՝ հայտաբերելով և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը: Երկու բար-

¹⁴ Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 102:

բառները միավորվում են *-վի* և նրանով բաղադրված (*-վի, -վնի, -վներ, -վան, -վանք, -վողք*) հոգնակերտների առկայությամբ: Այս *-վի* մասնիկը, որպես երկակի թվի արտահայտման ցուցիչ, չի ավանդվել հինհայերենյան լեզվական հուշարձաններում, բայց կա հայերենի նշյալ բարբառներում: Մա կարևոր հատկանիշ է, որպեսզի ցույց տանք, որ հնդեվրոպական լեզուներին հատուկ հնագույն այս երևույթը կա նաև հայերենի բարբառներում, և այն ուղղակիորեն վկայում է այս բարբառների հնագույն ծագման հանգամանքը: Կարևոր բարբառը Մշո բարբառին հակադրվում է *-նի* և նրանով բաղադրված հոգնակերտների գործածություններով (*-նի, -նէ, -նին, -նիք*): Երկու բարբառները միավորվում են *-ան* (*-անք, ան/(ն)եր*) հոգնակերտներով: Այս հատկանիշը, ի դեպ, Խնդածորի խոսվածքում մահացող երևույթ է: Երկու բարբառները միավորվում են *-ստան, -ստար* և նրանցով բաղադրված հոգնակերտների գոյությամբ: Մշո բարբառը հակադրվում է Կարինի բարբառին *-ր, -եր, -ար, -երք, -անք, -այք>էք, -իք* տիպի բաղադրյալ հոգնակերտների գործածություններով: Վերոնշյալ հոգնակերտները համեմատաբար ուշ առաջացած դրսևորումներ են:

Մշո բարբառը հակադրվում է Կարևո բարբառին *զ* նախդրի գործածությամբ: Այն բացակայում է նաև Մշո Ալաշկերտի խոսվածքում: Մշո բարբառը տարբերվում է Կարևո բարբառից նրանով, որ ունի հետադիր կապերի նախադաս գործածություններ: Այս հատկանիշը ևս, կարծում ենք, վկայում է բարբառի հնությունը: Երկու բարբառների համար ընդհանրական է, որ սահմանական եղանակում ունեն *կու*-ով ներկա և անցյալ անկատար, իսկ Կարինը հակադրվում է բոլորին *կու*-ի (*կք, գք*) հետադաս գործածությամբ: Բարբերդի խոսվածքը ունի շարունակական ներկա (օրինակ՝ *կք գքեմ կոր*):

Ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման և մեր ունեցած լրացուցիչ տվյալների՝ Մշո և Կարևո բարբառների լեզվական ընդհանրություններն ավելի շատ են, քան տարբերությունները: Այդ ընդհանրությունները, կարծում ենք, վկայում են նրանց՝ նախապատմական և հնագույն շրջանում միասնական լեզվական որակներ ունենալը: Երկու բարբառների միջև եղած տարբերությունները ցույց են տալիս նրանց զարգացման ոչ միասնական ընթացքը: Այդ հանգամանքը կարելի է պատճառաբանել տարբեր կերպ: Եղած տարբերությունների մի մասը, ամենայն հավանականությամբ, առաջացել է այս բարբառների զարգացման հնագույն շրջանում, որոնց գատորոշման հարցը, անխոս, բարդ խնդիր է: Գ. Ջահուկյանը գրում է. «Բարբառային ձևերը կարելի է հնդեվրոպական և փոխատու աղբյուրների ձևերի հետ կապել հին հայերենի ձևերի միջնորդությամբ միայն...»¹⁵: Մշո և Կարևո բարբառների պարագայում այս անել չենք կարող, քանի որ համեմատության համապատասխան եզրերը, ցավոք, ավանդված չեն մեր լեզվի գրավոր հին աղբյուրներում: Եղած տարբերությունների մեծ մասը՝ և՛ հնչյունական, և՛ քերականական, պատմականորեն ավելի ուշ շրջանի իրողություններ են և մատնանշում են արդեն իսկ ձևավորված ու կազմավորված բարբառային որակների

¹⁵ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, էջ 201:

ներքին փոփոխությունները: Այդ տարբերությունները, որոնք հայերենի միջնադարյան գրավոր հուշարձաններում են վկայվում, կասկած չեն հարուցում պատմահամեմատական մեթոդով կատարված վերականգնումների շնորհիվ: Երկու բարբառների տարբերությունների ավելի փոքր մասը հարևան այլ լեզուների ազդեցությամբ է պայմանավորված:

Հակասություններով լի են երկու բարբառների լեզվական փոխառնչությունները հատկապես նախապատմական, հայերենի զարգացման հնագույն շրջանում: Տիպաբանորեն հիմնավորելի չէ, անորոշ է տարբերակիչ և միավորիչ լեզվական որոշ հատկանիշների պատճառաբանվածությունը և դրանց լեզվապատմական, ծագումնաբանական հիմքերը: Այս տեսանկյունից կարևոր են երկու բարբառների ծագման և մի շարք լեզվական հատկանիշների պատմաժամանակագրության հարցերի նորովի հետազոտումը: Դրանց վերականգնումը, ի դեպ, կարող է հիմք դառնալ հայերենի հնչյունական և քերականական տարաբնույթ իրողությունների սպառնիչ հիմնավորմանը:

Այս երկու բարբառները միանգամից չեն կազմավորվել: Նրանց լեզվական համակարգերը և առանձին բաղադրիչներն ունեն տարբեր հնություն: Հնչույթային համակարգով Մշոն և Կարնոն բարբառները գրեթե չեն տարբերվում հին հայերենից, իսկ հին հայերենը իր բոլոր առումներով՝ հնչյունական համակարգով և թեքական բնույթով, հնդեվրոպական հիմնալեզվի անմիջական ժառանգն է: Հնչյունական իրողությունների նույնությամբ այս բարբառները և հին հայերենը համընկնում են, հետևապես կարող են հավասարաչափ կապվել նախալեզվի տվյալների հետ:

Ըստ մեզ՝ Մշոն և Կարնոն բարբառները հավակնում են լինելու հայերենի հնագույն լեզվավիճակները՝ զերծ որոշակի այլ ենթաշերտերից: Այդ են փաստում ոչ միայն լեզվական իրողությունները, այլև բնապատմական, աշխարհագրական դիրքը: Հայագիտության մեջ վիճարկման ենթակա չէ, որ հայ ժողովրդի կազմավորման ու ձևավորման ակունքները գտնվում են Կենտրոնական Հայաստանում՝ համապատասխանելով այն վայրերին, որտեղ գոյակցել են Մշոն և Կարնոն բարբառները:

ТИПОЛОГИЯ ДИАЛЕКТОВ МУША И КАРИНА (СХОДСТВА И ОТЛИЧИЯ)

___ Резюме ___

___ Г. Мкртчян ___

Диалекты Муша и Карина относятся к самым значительным диалектам, которые сохранились из глубин тысячелетий до наших дней. Диалекты Муша и Карина были распространены в области Таруберан Большого Айка (диалект Муша) и в области Бардзр Айка (диалект Карина) исторической Армении. Их исторические связи, несомненно, идут из прошлого.

Исследования показывают, что данные диалекты сформировались неодновременно: их языковые системы и отдельные компоненты имеют различные степени давности. По фонематической системе диалекты Муша и Карина практически не отличаются от древнеармянского языка, а древнеармянский, по всем своим параметрам, включая звуковую систему и флективный характер, является прямым наследником индоевропейской языковой семьи. Эти диалекты и древнеармянский язык совпадают по однотипности звуковых реалий и, следовательно, могут в равной степени связываться с реалиями протоязыка.

Диалекты Муша и Карина претендуют на роль древнейших структур армянского языка. Об этом свидетельствуют не только языковые факты, а также естественный исторический статус и географическое положение. В арменоведении не подвергается сомнению, что источники формирования армянского народа находятся в центральной Армении и соответствуют тем территориям, где сосуществовали диалекты Муша и Карина.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մկրտչյան Գարիկ Գվիղոնի – ք. գ. թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան,
E-mail: garik.mkrtchyan@ysu.am*

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ (2015-2016 թվականներ)

Կայուն կապակցությունները (հետայսու՝ ԿԿ) պատրաստի վերարտադրելի լեզվական միավորներ են, բառակապակցություններ, որոնք լեզվի բառային կազմում յուրահատուկ տեղ են զբաղեցնում¹: Այդպիսի կապակցությունների մի զգալի մասը հանդես է գալիս բաղադրիչների փոխաբերական իմաստներով և լրացնում է լեզվի դարձվածքների (դարձվածային միավորների) համակարգը: Պայմանավորված իրենց բաղադրիչների փոխաբերական կամ ուղղակի իմաստներով՝ դրանք բաժանվում են երկու խմբի՝ դարձվածքներ և ոչ փոխաբերական կայուն կապակցություններ²:

ԿԿ-ների կամ դարձվածքների շարքը ժամանակի ընթացքում համալրվում է նոր արտահայտություններով. արդի ժամանակներում դրանք ձևավորվում են հիմնականում լրագրային ժանրում և աստիճանաբար լայն գործածություն են ձեռք բերում:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք այն ԿԿ-ներին, որոնք քաղել ենք «Ազգ» շաբաթաթերթի վերջին տարիների համարներից³: «Ազգ» շաբաթաթերթում նորակազմ բայական կապակցություններն ստեղծվել են որոշակի ուղղվածության հոդվածներում. դրանք առավելապես հանդիպում են առաջնորդող հոդվածներում (հեղինակ՝ Հակոբ Ավետիքյան), քաղաքական, ներքաղաքական, տնտեսաքաղաքական և ռազմական բնույթի վերլուծականներում (հեղինակներ՝ Նաիր Թան, Մարիետա Խաչատրյան, Հովիկ Աֆյան, Արա Մարտիրոսյան և ուրիշներ):

Համոզված կարելի է ասել, որ նորակազմություններն ապահովում են շաբաթաթերթի վերոնշված ուղղվածության հոդվածների իմաստային ճշգրտությունը, ասելիքի լիակատարությունը, արծարծած թեմաների անթերի մատուցումը՝ նրանց հաղորդելով ռճական որոշակի երանգ և պատկերավորություն: Սյուս կողմից՝ «Ազգ» շաբաթաթերթն իր զգալի ավանդն է բերում հայոց լեզվի մշակման, ինչպես նաև հայերենի բառային կազմի լրամշակման բնագավառներում:

Ձևավորվելով լրագրային ժանրի շրջանակներում՝ դրանք պահպանում են լեզվի բառաստեղծման (բառակազմական) օրինաչափությունները՝ արտահայտելով լեզվամտածողության ժամանակակից այնպիսի նրբերանգներ, որոնք պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փո-

¹ Տե՛ս Խաչատրյան Լ., *Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, Եր., 1996:

² Սուքիասյան Ա., Գալստյան Ս., *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Եր., 1975: Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Եր., 1986:

³ «Ազգ» շաբաթաթերթ, 2015 (հունվար) – 2016 (հունիս):

փոխություններով և խոսքային միջավայրում դրսևորվում են համապատասխան լեզվական կադապարներով:

Ըստ բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի՝ դրանք լինում են դարձվածքներ, դարձվածային միասնություններ և դարձվածային կապակցություններ, ըստ ծագումնաբանական գործոնի՝ բնիկ և փոխառյալ, ըստ իմաստային գործոնի՝ անվանական, բայական, մակբայական և այլն⁴:

Մեր ընտրանքում եղած ԿԿ-ները հիմնականում հանդես են գալիս բայական կառուցատիպերով, այլ կերպ ասած՝ դրանք բայական կապակցություններ են, դարձվածքներ, որոնց բաղադրիչներն, ըստ էության, հանդես են գալիս փոխաբերական իմաստներով: Այդպիսի կապակցությունների ուսումնասիրությունը կատարվում է որոշակի սկզբունքով, որի ընթացքում հնարավոր է վեր հանել դրանց ինչպես բովանդակային, այնպես էլ արտահայտության պլանի առանձնահատկությունները: Նորակազմ ԿԿ-ները ձևավորվել են որոշակի գործոնների հիման վրա, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական տեսակները.

- ա) ամբողջական ազատ կապակցության փոխաբերացում,
- բ) կապակցության բաղադրիչների դարձվածայնացում,
- գ) կապակցության որևէ բաղադրիչի դարձվածայնացում,
- դ) կապակցությունների դրական-ժխտական հակադրություն,
- ե) կապակցության որևէ բաղադրիչի՝ հումանշային տարբերակով փոխարինում,
- զ) կապակցության ծավալում՝ կամընտրական անդամներով և այլն:

Այժմ փորձենք նորակազմ ԿԿ-ները քննել ըստ վերոնշյալ իմաստային գործոնների՝ միաժամանակ կատարելով կառուցատիպերի արտահայտության պլանի քննություն:

Ա. Ամբողջական ազատ կապակցության փոխաբերացում.

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ԿԿ-ները ստուգաբանորեն սերում են ազատ կապակցություններից՝ ապրելով նախնական նշանակության մասնակի կամ լիակատար վերաիմաստավորման գործընթաց⁵: Այս ուղիով առաջացել և շարունակում են առաջանալ նորանոր ԿԿ-ներ: Այսպես, լեզվում ազատ կապակցություններ են հետևյալ կառույցները. *պատուհանից երևալ, վիրահատական գործողությունների դիմել, վերքին վիրակապ դնել, նույն թելին շարել, դիրիժորի ճիպոտին ենթարկվել, նետերն արձակել, սլաքներն ուղղել* և այլն:

Առաջնային դարձվածայնացման ուղիով այս կապակցությունները ձևով են բերել փոխաբերական նշանակություններ և համապատասխան իմաստներով գործածվում են շարահյուսական միջավայրում: Հմնտ.

1. *Պատուհանից երևալ* - «քաղաքական ծրագրում՝ տեսադաշտում լինել, հաշվի առնել»: Հմնտ. *Լավրովի պատուհանից չեն երևում* ադրբեջանական զինուժի կուտակումները Արցախի սահմանին (06.05.2016, 17 (5417): 2. *Վիրահատական գործողությունների դիմել* - «կտրուկ քայլեր ձեռնարկել»: Աստիճանական պայթա-

⁴ Старичёнок В. Большой лингвистический словарь. Ростов на Дону. 2008, стр. 686.

⁵ Խաչատրյան Լ., *Խոսքիմասային տարաբեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, էջ 219: Жуков В. Семантика фразеологических оборотов. М. 1978, стр. 131.

րի մասին են բարձրաձայնում և ոչ թե միանգամից *վիրահատական գործողությունների դիմելու* (27.05.2016, 20 (5420): 3. *Վերջին վիրակապ դնել* – «հարցին հպանցիկ անդրադառնալ»։ Կանցլեր Մերկելը խուսափում է նշել փախստականների խնդրի բուն էությունը և ... նախընտրում է սոսկ *վիրակապ դնել վերջին* (3.06.2016, 21 (5421): 4. *Նույն թելին շարել*–«իրար հետևից թվարկել, գույները խտացնել»։ Հայաստանի բազում մեղքերը թվարկում էր անկենդան, *նույն թելին շարում* իրենց ժողովրդավար երկրի գրավչությունները (10.06.2016, 22 (5422): 5. *Դիրիժորի ճիպոտին ենթարկվել* - «հլու-հպատակ՝ կամակատար դառնալ. մեկի քաղաքական կամքը կատարել»։ Թուրքիայի քաղաքական օրկեստրում յուրաքանչյուր նվագողից պահանջվում է հլու-հնազանդ ենթարկվել գլխավոր դիրիժորի ճիպոտին (17.06.2016, 23 (5423): 6. *Մլաքներն ուղղել* – «քննադատել, քննադատության ենթարկել»։ Ուղղակի առաջին իսկ հայացքից՝ հարցի սլաքները հակահերոսականի պատճառահետևանքային կողմն են ուղղվում (3.06.2016, 21 (5421):

Բ) Կապակցության բաղադրիչների դարձվածայնացում.

Ազատ կապակցությունները նախնական նշանակությունից կարող են անցնել դարձվածային նշանակության բաղադրիչների փոխաբերականության հիմքի վրա: Իմաստային տեղաշարժերի այս ուղին համարվում է հաջորդական վերաիմաստավորում, որի դեպքում դարձվածային յուրաքանչյուր նոր նշանակություն դիտվում է որպես նախորդ նշանակության փոփոխման հետևանք⁶:

Այդ ճանապարհով են առաջացել հետևյալ ԿԿ-ները. *թներին փետուր տալ* («ոգևորել՝ աջակցել մյուս կողմին»), *օրենքի մտրակով հարվածել* («հրապարակավ պարսավանքի ենթարկել»), *մեկի զգեստն իր հագով փորձարկել*– («ուրիշի քաղաքականությունն ընդօրինակել»), *թռչել ուրիշի թներով* – (ուրիշի պես մտածել՝ զգալ), *լռության պատնեշը փշրվել*– (հայտնի դառնալ, ամենուրեք տարածվել), *խոշորացույցով ներկայացնել*– («ճշմարտությունից հեռու լինել»), *ճնշող դարձնել շնչած օդը* («կաշկանդել՝ ազատ գործունեությունից զրկել»), *խոշորացույցի տակ առնել* («հատուկ ուշադրության առարկա դարձնել»), *այիքի վրա բերել* («պատեն իրավիճակից օգտվել») և այլն:

Հմնտ. Դատարանի այս վճիռը *նոր փետուր կտա սրանց թներին*, իսկ մե՞զ... լռակյաց ունկնդրե՞նք նրանց խոսքի ազատությունը (Էջ 10) (30.10.2015, 40 (5392): ԻՊ-ի ահաբեկիչներին անպայմանորեն *պետք է հարվածի միջազգային քրեական օրենքի մտրակը*, այլապես անպատժելիության մթնոլորտը կծնի էլ ավելի դաժան հանցագործություններ (12.02.2016, 5 (5405): Գրելիս փորձում ես զգալ հերոսիդ հոգեկան աշխարհի հուզումներն ու ելնեչումները, ջանում ես զգալ նրա զգացածը, *թռչել նրա թներով*... (12.02.2016, 5 (5405): 1965թ. ապրիլին ոտքի էլան ... միլիոնավոր հայկազունների ճնշման տակ *փշրվեց հենց լռության պատնեշը* (20.05.2016, 19 (5419): Ադրբեջանում մամուլն իհարկե ուրիշ *խոշորացույցով է ներկայացնում* հանդիպումների բովանդակությունը (10. 06. 2016, 22 (5422): Պատգամավորներից շատերն անընդունելի համարեցին մի շարք դրույթներ,

⁶ Кунин А. Фразеология современного английского языка, М. 1972, стр.20; Назарян А. Фразеология современного французского языка. М. 1976, стр. 227.

որոնք ավելի *ճնշող կդարձնեն* միջին ու մանր բիզնեսի *շնչած գործարար օդը*: (17. 06. 2016, 23 (5423): Բունդեսթագն ի թիվս այլ հարցերի 110-րդ նիստում *խոշորացույցի տակ էր առել* մարդու իրավունքների ոտնահարման խնդիրը Ադրբեջանում (10. 06. 2016, 22 (5422)):

Գ) Կապակցության որևէ բաղադրիչի դարձվածայնացում.

Ազատ կապակցությունները կարող են անցնել ԿԿ-ների ոչ միայն ամբողջ կառույցի գրեթե բոլոր բաղադրիչ անդամների դարձվածայնացման ուղիով, այլև որևէ բաղադրիչի փոխաբերացման ճանապարհով: Այս դեպքում որոշակի կապակցություններ, հարաբերվելով փոխաբերական իմաստով հանդես եկած որևէ բաղադրիչի, ձեռք են բերում վերաիմաստավորված նշանակություն՝ անցնելով դարձվածքների շարքը:

Այսպես, *քաղաքական դաշտ* ոչ փոխաբերական կապակցությունը *մերկացնել* բայական բաղադրիչի հետ կազմել է նոր ԿԿ-ն, որի իմաստային կառուցվածքում բայական անդամը հանդես է եկել դարձվածային նշանակությամբ՝ «բացահայտել, ցույց տալ»: *Քաղաքական դաշտը մերկացնել* - «քաղաքական դաշտի սնանկությունը բացահայտել»: Հմնտ. Ապրիլյան սահմանային լարումը դրան հետևող գործընթացները ավելի *մերկացրին մեր քաղաքական դաշտը* (27.05.2016, 20 (5420): Նմանապես, *քաղաքական քարտեզներ դակել ԿԿ-ն դակել* բաղադրիչի փոխաբերացման հետևանքով ձեռք է բերել «կեղծիքը վավերացնել, կեղծիքին օրենքի ուժ տալ» դարձվածային նշանակություն:

Հմնտ. Հայաստանում ընտրությունները մշտապես *նախապես գծված քաղաքական քարտեզները դակելու միջոց* են եղել (27.05.2016, 20 (5420): *Առաջարկներ անել գեներալի պատուհանից* դարձվածքի ձևավորման մեջ էական դեր է կատարել *պատուհան* բաղադրիչի փոխաբերական նշանակությունը՝ «տեսադաշտ, դիտանկյուն»:

Հմնտ. Դրանք Հայաստանի և Արցախի պաշտպանության կազմակերպման շատ կոնկրետ *առաջարկներ* էին, ոչ թե պահեստի *գեներալի պատուհանից*, այլ լծակներ ունեցողի հայացքով (3.06.2016, 21 (5421)):

Տապանաքար բաղադրիչի բացասական «մահարձան, զերեզման» նշանակությունը *տապանաքար լինել տնտեսության վրա* կապակցությանը հաղորդել է փոխաբերական նշանակություն՝ «տնտեսությունը թաղել՝ կրախի մատնել»։ Ըստ պատգամավորների՝ այս փաթեթը *տապանաքար է տնտեսության վրա*՝ մինչև վերջ քամելով հարկերը (17. 06. 2016, 23 (5423)):

Աշխարհագրություն մեծացնել ԿԿ-ի դարձվածային իմաստը պայմանավորված է *աշխարհագրություն* բաղադրիչի փոխաբերական իմաստով՝ «ընդգրկած երկրների քանակը» նշանակությամբ. Այս մրցույթը յուրաքանչյուր տարի ոչ միայն իր *աշխարհագրությունն է մեծացրել*, այլև կատարողական վարպետության չափանիշները (10. 06. 2016, 22 (5422)):

Պատասխան(ներ)ը տիրաժավորել նոր ԿԿ-ն արտահայտում է «լուրը՝ տեղեկատվությունը չտարածել՝ չմասսայականացնել»։ այստեղ փոխաբերական նշանակությամբ հանդես է եկել *տիրաժավորել* բայական բաղադրիչը. Մամուլի ասու-

լիսում Ալիևի հնչեցրած *պատասխանները ...* գերմանական որևէ լրատվամիջոց *չտիրաժավորեց* (17. 06. 2016, 23 (5423):

Դ) Կապակցությունների դրական-ժխտական հակադրություն.

Կայուն կապակցությունների (դարձվածքների) առաջացման հիմքերից մեկը իմաստային այն հակադրությունն է, որ ստեղծում է հականշային հարաբերություն երկու կապակցությունների միջև: Բայական կապակցությունների պարագայում նման հակադրություն ստեղծում են դրական և ժխտական բայական բաղադրիչները:

Հմնտ. *վառողի հոտ զգալ* (պատերազմի վտանգ զգալ) և *վառողի հոտ չզգալ* (պատերազմի վտանգ չզգալ), *դատը հար կուլ տալ* (ստիպված լինել մի բան անելու) և *դատը հարը կուլ տալ չկարողանալ* (ի վիճակի չլինել ստանձնած գործը կատարելու), *ձեռքերը պետության գրպանը մտցնել* (պետության եկամուտները սեփականել, պետությունից եկամուտները թաքցնել) - *ձեռքերը պետության գրպանից հանել* (պետության եկամուտներին ձեռք չտալ, հարկերը օրինավոր կերպով մուծել), *ձեռքը բաց վերքի վրա դնել* (ցավոտ խնդիր հիշեցնել՝ շոշափել) - *ձեռքը հեռու պահել բաց վերքից* (մեկի ինքնասիրությունը չվիրավորել) և այլն:

Հմնտ. Այս մի խնդրում հայ հանրությունը *չի կարող դատը հարը կուլ տալ*, ինչպես որ *կուլ է տալիս ...* անարդարության բևեռացման պատճառով (17. 06. 2016, 23 (5423): *Վառողի հոտ չզգացածների*՝ Բաքու հասնելու կոչերն էլ առանձնապես ոչ ոք լուրջ չի ընդունում (20.05.2016, 19 (5419): Ապրիլյան պատերազմից հետո մերոնք ... միգուցե *դանդաղորեն ձեռքները հանեն պետության գրպանից* (3.06.2016, 21 (5421): Մերօրյա մտավորական-արվեստագետը ... թող բարեխղճություն ունենա չնոտենալ ազգային թեմաներին, *թող ձեռքերը հեռու պահի մեր բաց վերքից* (3.06.2016, 21 (5421):

Ե) Կապակցության որևէ բաղադրիչի՝ հոմանշային տարբերակով փոխարինում.

Կայուն կապակցություններ կարող են առաջանալ բաղադրիչների՝ հոմանիշներով փոխարինելու ճանապարհով: Այդպիսի կապակցությունները դիտվում են բառական տարբերակներ, երբ նրանց բաղադրիչներից մեկը այլ կապակցության կազմում հանդես է գալիս հոմանշային անդամով⁷:

Այսպես, *նստել թախտին՝ սպասել բախտին* (անգործության մատնվել, հանձնվել բախտի քմահաճույքին) դարձվածքի *թախտ* բաղադրիչը փոխարինվել է *քար* անդամով, որ տվյալ շարահյուսական միջավայրում համարվում է տեքստային հոմանիշ. *նստել քարին՝ սպասել բախտին*: Կամ՝ *սառույցը կոտրվել* (անսպասելի զարգացումներ սկսվել, նոր իրադրություն առաջանալ) դարձվածքի բայական բաղադրիչը կարող է փոխարինվել *հալվել* բայական անդամով՝ կազմելով նույնիմաստ նոր դարձվածք. *սառույցը հալվել*: Այդպես նաև *սկուտեղ – սինի* հոմանիշ բառերն ստեղծել են դարձվածային տարբերակներ՝ *սկուտեղի վրա մատուցել – սինու վրա մատուցել* (առանց չարչարանքի ձեռք բերել, անակնկալ կերպով հաջողության հասնել), *ընդունել* և *ընդգծել* տեքստային հոմանիշներն ստեղծել են *զոհի*

⁷ Տե՛ս Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 214:

կերպար ընդունել և գոհի *կերպար ընդգծել* դարձվածային տարբերակները (մեղավոր լինելով հանդերձ՝ անմեղ ձևանալ) և այլն: Հմնտ.

-Է՛, չասիր՝ ո՞ր *քարին նստեմ, սպասեմ բախտիս* (29.01.2016, 3 (5403): Բսկ գնահատական տալ՝ Վիեննայում *սատույցը հալվեց*, Հայաստանի դիվանագիտության հաղթանակ. այս պահին ավելորդ է (20.05.2016, 19 (5419): Այդ մարդիկ մեր հայրենիքն են ենթադրաբար *սինու վրա մատուցել* Ապշերոնի նարկոբարոններին (3.06.2016, 21 (5421):

Մն կոստյումի մեջ *գոհի կերպար ընդգծած* Ալինին Մերկելի ... կապտականաչը պատասխանում էր խաղաղ երկնքի գույնով (17. 06. 2016, 23 (5423):

Հոմանշային այսպիսի տարբերակ են ստեղծում *ռոնաթաթ* և *բթամատ* կապակցական բաղադրիչները, որտեղ առկա է ոչ թե հոմանշային, այլ մասի և ամբողջի հարաբերություն. ինչպես՝ *արյունոտ ռոնաթաթի տակ գտնվել* – *արյունոտ բթամատի տակ գտնվել* (ծանր՝ անելանելի պայմաններում ապրել): Հմնտ. Թուրքիայում ապրող մեր հայրենակիցները տևապես *գտնվում են* իշխանության *արյունոտ բթամատի տակ* (17. 06. 2016, 23 (5423):

Չ) Կապակցության ծավալում՝ կամրնտրական անդամ(ներ)ով.

Կամրնտրական անդամներ են համարվում այն ազատ բաղադրիչները, որոնք էական դեր են խաղում դարձվածքի կազմավորման գործում. առանց այդ անդամների դարձվածքը թերի է կամ պարզապես գոյություն չունի⁸: Հայերենի դարձվածքների ձևավորման այդ սկզբունքով ժամանակակից մամուլում ձևավորվել են մի շարք կայուն կապակցություններ, որոնք բաղադրիչների փոխաբերական իմաստներով այլ գործածություն են ձեռք բերել:

Օրինակ, հետևյալ կապակցություններում դրանք արտահայտում են համեմատություն, ինչպես՝ *ականջներից կախել* և *լափշայի պես ականջներից կախել* (անիմաստ՝ դատարկ տեղը ցուցադրել, կեղծ բաներ թմբկահարել). Բսկ վերջին տարիներին բարձր ամբիոններից լսած ակնահաճո արտահայտությունը, թե տարածաշրջանում ամենամարտունակ բանակը մերն է, *լափշայի պես կախեցինք ականջներիցս* (15.04.2016, 14 (5414):

Հմնտ. նաև՝ *ազդեցություն ունենալ* և *կարմիր լաթի ազդեցություն ունենալ* (սաստիկ գրգռող տպավորություն թողնել). Ղարաբաղյան հարցի լուծման «Փուլային տարբերակ» որակումը *կարմիր լաթի ազդեցություն էր ունենում* հայ քաղաքական շրջանակների վրա (20.05.2016, 19 (5419):

Հետևյալ կապակցություններում կամրնտրական բաղադրիչներն ունեն որոշային գործառույթ, ինչպես՝ *թթվածին ստանալ* և *քաղաքական թթվածին ստանալ* (քաղաքական հրատապ լուրեր լսել՝ ստանալ). Հունիսի 2-ի առավոտյան, երբ քաղաքի թոքերը դեռ *քաղաքական թթվածին չէին ստացել*, հորդ անձրև տեղաց Բեռլինում (10. 06. 2016, 22 (5422):

Հմնտ. նաև՝ *հնարավորություն տալ* և *շունչ քաշելու հնարավորություն տալ* (մտածելու՝ գործելու հնարավորություն՝ միջոց ստեղծել). Նոր հարկային

⁸Բեդիրյան Պ., նշվ. աշխ., էջ 93:

սահմանադրությունը մի շարք հարկային թեթև ռեժիմներ է սահմանում՝ *շունչ քաշելու հնարավորություն տալով* ներքին արտադրողին (17. 06. 2016, 23 (5423):

Որոշ դեպքերում կամընտրական անդամները կարող են արտահայտել խնդրային հարաբերություններ՝ դառնալով բայական բաղադրիչի լրացումներ: Հմտ. *զանգը հնչել* և *զանգը մեկի ականջին հնչել* (հիշողության մեջ մնալ, մի բան տևական լինել): Մերկելի այդ *զանգը* դեռ *հնչում է ականջիս*: Հայաստանը միշտ ձգտել է հարցը լուծել բանակցային ճանապարհով (17. 06. 2016, 23 (5423):

Քննարկված կապակցությունների ձևավորման իմաստաբանական հիմքերը բացարձակ կամ միանշանակ չեն. այդպիսի կառույցների հիմքում կարող են ընկած լինել մեկից ավելի գործոններ, թեև այդ դեպքում էլ կարելի է հիմնական կամ էական գործոն համարել դրանցից միայն մեկը: «Ազգ» շաբաթաթերթի հարուստ ժանրային ընդգրկումը, թեմաների բազմազանությունը և նույնքան հարուստ լրագրային բառապաշարը քննության կարելի է ենթարկել լեզվաբանական տարբեր հայեցակետերով: Նոր կապակցությունների, այն էլ միայն բայական դարձվածքների բացահայտումն ու վերլուծությունը այդ խնդրի քննության մեկ դրսևորումն են, որ սահմանափակում ենք սույն հոդվածի շրջանակներով⁹:

НОВООБРАЗОВАННЫЕ ГЛАГОЛЬНЫЕ ФРАЗЕОЛОГИЗМЫ В НОМЕРАХ ЕЖЕНЕДЕЛЬНИКА “АЗГ”

____ *Резюме* _____

____ *М.Мирумян* _____

В статье рассматриваются новые глагольные фразеологизмы, встречающиеся в номерах еженедельника “Азг”.

При анализе таких единиц выясняются факторы, играющие важную роль во фразеологизации свободных словосочетаний, таких как: метафоризация свободного словосочетания, фразеологизация одного компонента, транс моделирование компонента с синонимичным вариантом, положительно-отрицательное противопоставление сочетаний, расширение словосочетаний с факультативным компонентом и т.д.

Новообразованные фразеологизмы со временем могут войти в фразеологическую систему языка, как особый (синхронический) пласт словарного состава.

Տեղեկություններ հեղինակի մասին

Միրումյան Մարգարիտ Վարդի- մ.գ.թ., դրոցենտ, Երևանի պետական համալսարան,

E-mail: mirumyan51@mail.ru

⁹ Մյուս կարգի՝ գոյականական, ածականական և մակբայական կապակցություններին, ինչպես նաև նորակազմ բառերին համակողմանիորեն կարելի է անդրադարձնալ առանձին հոդվածներով:

*Հովիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
Վարդան ՄԵԼՔՈՆՅԱՆ*

ՄԱԿՂԻՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍՏԵՂԾՍԳՈՐԾՍԿԱՆ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

Գեղարվեստական խոսքի հիմնական յուրահատկությունը պատկերավորությունն է, և վերջինիս ապահովման հարցում ամեննին էլ երկրորդական դեր չունեն խոսքի պատկերավորության միջոցները՝ մակդիր, համեմատություն և այլն:

Մակդիրը գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ չափածոյում, գործածության ամենաբարձր հաճախականություն ունեցող պատկերավորության միջոց է: Քնարերգությունում ոչ սակավ դեպքերում խոսքի բովանդակության հարըստությունը, պատկերավորությունը պայմանավորվում է հենց մակդիրների գործածությամբ: Բավական է, որ վերհիշենք Չարենցի անմահ բանաստեղծությունը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում...

Ընդգծված մակդիրների շնորհիվ սովորական, ամեն օր ու վայրկյան մեր շուրթերին գտնվող բառը բոլորովին նոր բովանդակությամբ է շնչել՝ արևահամ թարմ մակդիրի լույսի տակ, բանաստեղծության քնարական հերոսի ջերմ վերաբերմունքն է ընդգծվել հայրենիքի նկատմամբ /«անուշ Հայաստան»/, նրբին, ընդգրծված զգացական վերաբերմունքով են բանաստեղծորեն բնութագրվել մեր հին սագի լարը, հայրենի դժբախտ հողի վրա աճող ծաղիկն ու վարդը, նաիրյան աղջիկների պարը: Ի դեպ, հայ աղջիկների պարը «հեզ ու ճկուն» բառակապակցությամբ ավելի վաղ բնորոշված է եղել Վ. Տերյանի կողմից: Չարենցը բառակապակցությունը վերածել է բարդ բառի՝ հեզաճկուն: Բարդությամբ արտահայտված մակդիրն ավելի թարմ է, արտահայտիչ, քան բառերի կապակցությամբ արտահայտվածը:

Առհասարակ, խոսքի պատկերավորության միջոցների, նաև մակդիրի դրսևորումը պայմանավորված է բառի՝ փոխաբերական նշանակությամբ գործածությունով: Բառը կարող է մակդիրի դերով հանդես գալ միայն փոխաբերական նշանակությամբ օժտված լինելու դեպքում: Ուղղակի նշանակությամբ գործածված բառը սովորական որոշիչ է, տրամաբանական բնորոշում՝ ցույց տալով առարկայի, երևույթի որևէ իրական հատկանիշը /բարձր սար, հոտավետ ծաղիկ և այլն/: Փոխաբերական նշանակությամբ հանդես գալու շնորհիվ մակդիրն օժտված է լինում պատկերավորությամբ, հուզական վերաբերմունք առաջացնելու կարողությամբ:

Ինչպես խոսքի պատկերավորության միջոցների, այնպես էլ առհասարակ լեզվական իրողությունների ոճական նպատակադրումով ուսումնասիրության արդյունավետ ու լավագույն եղանակը պետք է համարել դրանք գրողի, բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայում դիտարկելը: Այսինքն՝ լեզվական համապատասխան իրողությունն ուշադրության առարկա պիտի դառնա ոչ թե իր միայն վերջնական դրսևորումով, այլև իր նախնական տարբերակներով, իհարկե,

եթե այդպիսիք ունի, եթե այդ վերջնական տարբերակը կյանքի է կոչվել ստեղծագործական աշխատանքի հետևանքով: Խոսքի մշակի վարպետությունը միանգամից չի ապահովվում, հաճախ բառի, տողի վրա ստեղծագործական աշխատանք է պահանջվում, որի դեպքում ուշադրության առարկա հանդիսացող լեզվական իրողությունը կդիտարկվի հոմանշային միջավայրում, կհեշտանան դրա արտահայտչական դերի ընկալումը, արժեքավորումը: Այս կապակցությամբ շատ ուշագրավ է Գյոթեի հետևյալ միտքը, թե բնության և արվեստի ստեղծագործությունները չի կարելի ուսումնասիրել, երբ նրանք ավարտված են, շատ թե քիչ հասկանալու համար նրանց պետք է բռնել ստեղծելու պահին:

Բառի կյանքը, արտահայտչական գորությունը խոսքում է դրսևորվում, երբ հանդես է գալիս որպես որոշակի մտքի, զգացմունքի արտահայտման միջոց: Լեզուն հարուստ է, ունի մտքի, զգացմունքի արտահայտման մեկից ավելի միջոցներ, բայց շոայլ չէ, որ դրանք հեշտությամբ ցուցադրի, գրողին տրամադրի իր բոլոր հնարավորությունները հեշտությամբ: Մասնավորապես՝ գեղարվեստական խոսքի մշակը ստեղծագործական աշխատանք պիտի կատարի այդ հնարավորությունից օգտվելու համար: Վերջինս դրսևորվում է հոմանշությամբ, ընդ որում, գեղարվեստական խոսքում հոմանշությունը բավական լայն բովանդակություն ունեցող հասկացություն է: Բառնարության հարցում գեղարվեստական խոսքի մշակն ասես ոճաբանի դերով է հանդես գալիս, հոմանիշներից լավագույնն է առանձնացնում համապատասխան մտքի, զգացմունքի արտահայտման համար: Իրենց ստեղծագործությունների լեզվի վրա աշխատելիս գրողի, քանաստեղծի համար կողմնորոշիչ կարևոր նշանակություն ունեցող հարցերն այն են, որ բառագործությունն ամենայն կատարելությամբ համապատասխանի իրենց ստեղծագործական մեթոդի ոգուն, լավագույն ձևով ծառայի իրենց ստեղծագործական խառնվածքի դրսևորմանը, գեղարվեստական խոսքի այնպիսի հատկանիշների ապահովմանը, ինչպիսիք են ճշտությունը, սեղմությունը, կենդանությունը և այլն:

Լինելով խոսքի արտահայտչականությանը նպաստող լավագույն միջոց՝ մակդիրները քանաստեղծների ուշադրության կենտրոնում են գտնվում նաև իրենց լեզվի ու ոճի վրա աշխատելիս: Օրինակ՝ Վ. Տերյանի «Հիվանդ» քանաստեղծության վրա կատարված ինը փոփոխություններից վեցը վերաբերում են մակդիրի գործածությանը: Նախապես եղել է «Մի քնքույշ երգ է իմ հոգում ննջել», դարձել է «Մի լուսե երգ է իմ հոգում ննջել»: Եղել է «Քո պայծառ գահից անմրմունջ իջիր...», դարձել է «Քո պայծառ գահից մեղմորեն իջիր»:

Բնական է, որ իր ստեղծագործությունների լեզվի վրա աշխատելիս քանաստեղծը պատշաճ կարևորություն պիտի տա ինչպես բնութագրական, այնպես էլ հուզական, քնարական մակդիրների գործածության բարելավմանը: Իհարկե, բազմաթիվ դեպքերում այնքան էլ հեշտ չէ որոշել, թե մակդիրը բնութագրական դերով է հանդես եկել, թե՞ հուզական վերաբերմունքի դրսևորմանն է ծառայում: Հաճախ այդ երկու իրողությունը համատեղված է հանդես գալիս: Շիրազը, հուզական վերաբերմունքի արտահայտման կարևոր միջոցից՝ կրկնությունից հրաժարվելով, տողն այսպիսի խմբագրման է ենթարկել. եղել է. «Հեյ, որբանոց, որբա-

նոց, Հուշերդ անգամ սրտախոց» /ՀՇ, ԳԽՍ, էջ 63/, դարձել է, «Հեյ, վշտի բույն որ-
բանոց, Հուշերդ անգամ սրտախոց» /ՔՀ, էջ 415/: Բայց այս վերջնական տարբերա-
կում մի թե խոսքի հուզականությունը որևէ չափով նվազել է. «վշտի բույն» մակ-
դիրը և՛ բնութագրական, և՛ հուզական հատկությամբ է հանդես գալիս:

Ստեղծագործության լեզվական մշակման ժամանակ երևան եկած քնարա-
կան բնույթի մակդիրները մեծապես նպաստել են խոսքի հուզականության, գեղա-
գիտական ներգործության գորեղացմանը: Նախ բերենք մակդիրի գործածության
նախնական տարբերակի օրինակներ.

Օտար երկրում հաց կուտեի,

Հանկարծ դեմս ելավ, կարծես,

Մեր ջրադացն Արփաչայի... /ՔՀ, էջ 23/:

Թող հրահրի հուրդ հար

Չյունե ճակտիդ, Արարատ... /ՎՏ, էջ 364/:

Անուշ երազով սիրտս պաճուճիր,

Չեղածի հուշով ամոքիր հոգիս... /ՎՏ, էջ 320/:

Վերը բերված տողերի վրա աշխատելիս ընդգծված բառերի փոխարեն
երևան են եկել հետևյալ մակդիրները. «Մուրք ջաղացն Արփաչայի» /ՀՇԵ, հ.1, էջ
58/, «Մեզ ճակատիդ, Արարատ» /ՎՏ, էջ 277/, «Ցնորք հուշերով ամոքիր հոգիս» /ՎՏ,
էջ 65/: Ինչպես կարելի է նկատել, հուզականությունն ապահովվել է ոչ թե ան-
հատական բնույթի, ընդգծված հուզական երանգավորումով օժտված, այլ սովորա-
կան բառերով՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ բառի արտահայտչակա-
նությունը դրսևորվում է տեղին, հմուտ գործածության շնորհիվ: Հայրենի ջրադա-
ցը սրբություն ներկայացնելն աշխարհընկալման շիրագյան, քնարական դրսևո-
րում է, որով համակվում է նաև ընթերցողը:

Մակդիրի գործածությանը վերաբերող փոփոխություններն արժևորելիս
կարևորվել է այն հարցը, թե այդ փոփոխությունների շնորհիվ որքանով են շահել
խոսքի թարմությունը, ինքնատիպությունը: Նկատվում են դեպքեր, երբ նախապես
գործածված մակդիրը ոչ միայն էապես չի նպաստել խոսքի թարմությանը, այլև
վնասել է դրան: Այդպիսի տպավորություն է թողնում քարե ածականի գործածու-
թյունը լռություն գոյականի հետ Վ. Տերյանի բանաստեղծություններից մեկում.

Թող շուրջս փովի քարե լռություն... /ՎՏ, էջ 319/:

Բնական է, որ Տերյանը չէր կարող անտարբեր մնալ այսպիսի բառագոր-
ծածության հարցում և քարե բառը փոխարինել է անանց մակդիրով, որը լռություն
հասկացությունը ներկայացնում է միանգամայն թարմ հատկանիշով. «Թող շուրջս
փովի անանց լռություն...» /ՎՏ, էջ 64/: Օրեր բառաձևի հետ պայծառ ածականի
հանդես գալը, իհարկե, ամեննին էլ այցի զարնող անհաջող բառագործածություն
չէ. «Պայծառ օրերի լույսը չեմ հիշում» /ՎՏ, էջ 47/: Բայց Տերյանն այս դեպքում էլ
պայծառ մակդիրը փոխարինել է անուրջ-ով, և լիովին շահել է խոսքի տերյա-
նականությունը. «Անուրջ օրերի լույսը չեմ հիշում...»:

Խոսքը գրքայնությունից ազատ պահելու, առարկան անսպասելի հատկությամբ չներկայացնելու նպատակադրումով են կատարված այսպիսի փոփոխությունները Տերյանի հետևյալ տողերում.

Ես ընկած էի օտար աշխարհում,
Անհամբույր երկնի կամարների տակ...

Ո՞վ էս դու, որ անգոր եմ քո դեմ
Եվ գերի ախտավոր քո կամփին... /Լուս., էջ 105/:

Ընդգծված մակդիրները հետագայում փոխարինվել են անարև, դիվային բառերով /«Անարև երկնի...», «Եվ գերի դիվային քո կամփին» /ՎՏ, էջ 81, 177/:

Խոսքի թարմությունը, ինքնատիպությունն առանձնապես շահել են այնպիսի փոփոխությունների շնորհիվ, երբ սովորական որոշիչը մակդիրով է փոխարինվել, ինչպես օրինակ, հետևյալ դեպքերում.

Եղել է՝ «Անձրևն անընդհատ մաղում է կաթ-կաթ, թաղումի կոծով» /ՎՏ, էջ 318/, «Օ՛, պայծառ երկնի անեզրական ծով...» /ՎՏ, էջ 323/:

Դարձել է՝ «Անձրևն անընդհատ մաղում է վհատ...» /ՎՏ, էջ 61/, «Լուսեղեն երկնի անեզրական ծով...» /ՎՏ, էջ 75/:

Մակդիրի գործածությամբ խոսքի բնականությունն ապահովելու ձգտման դրսևորումները համեմատաբար շատ են նկատվում Հ. Շիրազի ստեղծագործություններում: Ուշադրության արժանացնենք համապատասխան մի քանի օրինակներ, թե ինչպես նախապատվությունը տալով խոսքի բնականությանը, մեծ բանաստեղծը մասամբ հրաժարվել է խոսքի գրքայնությունից: Նախապես սաք գոյականը բնութագրված է եղել մանուշակ մակդիրով, դաշտ-ը՝ լուսաշող մակդիրով.

Ծագեց լուսինը մանուշակ սարից... /ՀՇ, ԵԳ, էջ 32/:

Ծագող արևն է նրանց համբուրում,

Թոցնում, տանում դաշտը լուսաշող... /ՀՇ, ԵԳ, էջ 75/:

Հետագայում մանուշակ-ը փոխարինվել է «իմ սիրած» կապակցությամբ /ՀՇԵ, հ. 1, էջ 28/, լուսաշող-ը՝ կապույտ ածականով /«դաշտերը կապույտ»/:

Հ. Շիրազի ստեղծագործություններում գրքային մակդիրների զգալի մասը հեղինակի կողմից կազմված նորաբանություններ են. «Լեռնահեղույս խաղաղություն, երկնքի պես գմբեթվիր...» /ԲՀ, Գիրք 2-րդ, էջ 213/: «Դառնավշտահեղձ սրտոց է վայել լեզուն էլ մեղրիկ...» /ԲՀ, Գիրք 3-րդ, էջ 139/:

Իրենց ստեղծագործությունների վրա բանաստեղծների կատարած լեզվա-ոճական բնույթի ստեղծագործական աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպիսի մանրակրկիտ աշխատանք է կատարված քնարական հերոսների հոգեկան վիճակը պատկերող մակդիրների տեղին գործածության հարցում: Թումանյանի «Պանդուխտ եմ, քույրի՛կ» բանաստեղծության քնարական հերոսն իր հասարակական և անձնական միջավայրը որպես բանտ է ներկայացրել, և դա նախապես բնութագրված է եղել անձուկ մակդիրով՝ «անձուկ բանտում»: Եթե այդ միջավայրում քնարական հերոսը հալածված է եղել վաղուց, ներկա օրերն էլ հանգիստ չեն տալիս, վաղուց հոգնած է նրա սիրտը, ուրեմն նրա կողմից այդ

միջավայրը պիտի բնորոշվի ոչ թե անձուկ, այլ իրողությունն ավելի բնորոշ ձևով ներկայացվող մակդիրով.

Չեմ եղել երբեք ես այնքան ըստոր,

Որ կարենայի այս դաժան բանտում

Լինել բախտավոր... /ՀԹ, էջ 202/:

Վ. Տերյանի քնարական հերոսն էլ իր հոգեկան վիճակը նախապես ներկայացրած է եղել որպես անձանոթ ծովերում գտնվող «հեռավոր ու մոլոր մի նավակ»: Հետագայում այդ քնարական հերոսի հոգեկան վիճակն ավելի բնորոշ դրսևորումով է ներկայացվել մենավոր մակդիրի գործածությամբ. «Իմ հոգին ծովերում անձանոթ Մենավոր ու մոլոր մի նավակ» /ՎՏ, էջ 44/:

Քնարական հերոսների էության, հոգեկան աշխարհի ճիշտ բնութագրման առումով բանաստեղծների կողմից առանձնակի կարևորություն է տրվել սիրտ, հոգի բառերի հետ հանդես եկող մակդիրների գործածությանը: Տերյանի քնարական հերոսի հոգին «հավետ մենավոր» չէ /«Ընդունիր հոգիս հավետ մենավոր»/, այլ «մոլոր, մենավոր» /«Ընդունիր հոգիս մոլոր, մենավոր...» ՎՏ, էջ 84/, այդ հոգին մեռած չէ, այլ՝ ցաված /«Դու վաղ ես լռել իմ ցաված հոգում» ՎՏ, էջ 130, 332/։ Թումանյանի քնարական հերոսի սիրտը երբևէ անհույս չի եղել, այլ՝ բեկված /«Մի սիրտ բեկված ու տրրտում...» ՀԹ, էջ 157/:

Այսպիսով՝ գրողի ստեղծագործությունների լեզվի ուսումնասիրության լավագույն եղանակներից մեկը լեզվական իրողությունները նախնական տարբերակների և վերջնական բնագրի համեմատությամբ քննելն է: Մույն հողվածում այդպիսի մոտեցումով է ուշադրության արժանացել մակդիրի գործածությունը Վ. Տերյանի, Հ. Շիրազի, Հ. Թումանյանի ստեղծագործություններում:

Համառոտագրություններ

1. ՎՏ – Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 1972, հ. 1:
2. ՀՇԳԽՍ – Հ. Շիրազ, Գիրք խաղաղության և սիրո, 1950:
3. ՔՀ – Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, 1958:
4. ՀՇԵԳ – Հ. Շիրազ, Երգերի զիրք, 1942:
5. ՀՇԵ – Հ. Շիրազ, Երկեր, հ. 1, 1981:
6. Լուս. – Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Ձեռագրի լուսապատճենային հրատարակություն, 1985:
7. ՀԹ – Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1988:

ЭПИТЕТ В ТВОРЧЕСКОМ ВИДЕНИИ ПОЭТА

___ *Резюме* ___

___ *Օ. Մելկոնյան, Յ. Մելկոնյան* ___

Одним из эффективных способов изучения языка и стиля писателя является сравнительное исследование начальных и окончательных версий лингвистических реалий оригинала. В рамках данной статьи с этой точки зрения исследуется использование эпитета в произведениях Теряна, Шираза и Туманяна.

Տեղեկություններ հեղինակների մասին

Մելքոնյան Հովիկ Մենեքերիմի – ք.գ.թ., Շիրակի պետական համալսարան,

E-mail: gspi1934@mail.ru

Մելքոնյան Վարդան Մենեքերիմի – ք.գ.թ., Շիրակի պետական համալսարան

Քրիստինե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԲ-ԴՈՍԻ «ՄԵՐ ԹԱՂԸ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐՈՒՄ

Գեղարվեստական գրականությունը պատկերավոր խոսք է, Նար-Դոսի բնութագրմամբ՝ պարզ, բայց գեղեցիկ շարադրանք: Նա այդ մասին գրել է. «Գեղեցկությունը կուտակված պաճուճանքի մեջ չէ, գեղեցկությունը պարզության մեջ է»¹:

«Մեր թաղը» պատմվածաշարի լեզուն և, մասնավորապես, լեզվական-ոճական միջոցներից մեկը՝ փոխաբերությունները բնութագրելու հիմքը պատմվածաշարի նովելների՝ հասարակ ժողովրդի կյանքից առած փոքր պատկերների գեղարվեստական արժեքն է, որոնց, հեղինակի խոստովանությամբ, ինքն անձամբ ականատես է եղել²:

Խավարի ու թշվառության միջավայրում մեծ չարիք են սնահավատությունն ու տգիտությունը, վայրագությունն ու կոպտությունը, հարբեցողությունն ու բարոյական անկումը: Ապշեցուցիչ ուժով են մերկացված եզորների, ասատուրների, արտեմների աշխարհի ներքին այլասերումն ու դատարկությունը: Գրողը երբեք չի կանգնում նահապետականության պաշտպանության դիրքերում: Այդ հայեցողյամբ չեն գնահատվում երևույթները: Նար-Դոսը գեղարվեստորեն բացահայտում է, թե ինչպես այդ ամենն ուղղվում է իր՝ մարդու դեմ, ծնում բազմապիսի ողբերգություններ: Իրադարձությունների ծանրությունը Նար-Դոսի հերոսները վերապրում են մի անքննելի սարսուռով, սրտի ամենանրբին թրթռոցով, հոգու աննշմարելի տատանումներով: «Մեր թաղը» պատմվածաշարի հերոսների ցավն ու թախիծը չի սահմանափակվում փոքրիկ դժբախտությունների շրջանակում. այն վերաճում է մարդու հոգևոր աշխարհի կորստյան իրական ողբերգության: Հեռու մնալով պոռթկուն նոտաներից՝ գեղարվեստական իսկական զսպվածությամբ ու չափով Նար-Դոսն այդ թեման բացահայտում է «Մեր թաղը» պատմվածաշարի բոլոր նովելներում³:

Պատմվածաշարում յուրաքանչյուր նովել մի դրամա է, որտեղ պատկերված կյանքի իրական դրվագները, իրար լրացնելով, ներկայացնում են մի աղքատիկ կյանքի պատկեր: Ստորին խավի այս նկարագրությունն արտացոլվում է համապատասխան լեզվով, որի գեղագիտությունն արտահայտող հզոր միջոցներից մեկը փոխաբերությունն է: Փոխաբերությունը «բառի կամ բառակապակցության փոխաբերական այնպիսի գործածություն է, որի հիմքում տարբեր առարկաների և երևույթների նմանությունն է կամ համեմատական լինելը»⁴: Անտիկ աշխարհի մեծ մտածող Արիստոտելը, գնահատելով փոխաբերության դերը,

¹ Սահակյան Վ., Ներսիսյան Ռ., Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Եր., 2005, էջ 63:

² Մարգարյան Ս., Նար-Դոս, Եր., 1973, էջ 63:

³ Տէ ու Հովհաննիսյան Գ., Նար-Դոս, Եր., 1959, էջ 15:

⁴ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գ. Բ, Եր., 1991, էջ 35:

նկատել է. «...Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի, այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»⁵:

Երբ գործ ունենք փոխաբերական խոսքի հետ, անհրաժեշտ է ընդգծել, որ փոխաբերական բովանդակությունը մեծապես կախված է խոսողի մտադրությունից, ավելի շատ, քան բառի ավանդական նշանակությունից⁶: Թափանցել փոխաբերության խորը էության մեջ և ամբողջությամբ ընկալել նրա պատկերավորությունն անհնար կլինի առանց գործի դնելու երևակայություն և զգացումներ: Որպես հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունք՝ փոխաբերությունը գեղարվեստական խոսքին տալիս է պատկերավորություն և արտահայտչականություն: Օրինակ՝ «Ինչպես բժշկեցին» նովելում նկարագրելով այն պատկերը, թե ինչպես է Մարթային բուժելու համար գրբաց Գրիգորը թերթում «Սողոմոնի գիրք» անվանվող գրքույկը, Նար-Դոսը հերոսի մտահոգ վիճակը նկարագրելու, խոսքն ավելի պատկերավոր դարձնելու համար կիրառել է *ծանր ու բարակ թերթել* փոխաբերությունը. «Երկար ժամանակ *ծանր ու բարակ թերթելուց* հետո վերջապես կանգ առավ մի երեսի վրա և սկսեց կարդալ կամացուկ»(23)*: «Մաքուլն ուխտ գնաց» նովելում երկնքի, երկրի, ամառայի պատկերն ավելի դիպուկ արտահայտելու համար հեղինակն օգտագործել է շատ գեղեցիկ կառուցված փոխաբերություն, որի փոխարեն սովորական նախադասության կիրառությունը ոչինչ չէր ասի. «Երեկոյան դեմ երկինքը թխպեց, արագորեն սևացավ, հրեղեն *կայծակներն սկսեցին պատռել ամպերի կուրծքը*՝ նախ հեռավոր ու խուլ, հետո ավելի ու ավելի մոտեցող և ուժգին որոտումներով. *երկինք ու երկիր խառնվեցին իրար* փոշով ու աղբով» (13): Մեկ այլ նախադասության մեջ («Ինչպես բժշկեցին» նովելում) Մարթայի պապանձվելն ավելի շեշտակի ընդգծելու համար Նար-Դոսն օգտագործել է *լեզուն փորը գցել* փոխաբերությունը՝ «...Մարթան բոլորովին հանգստացել էր, *լեզուն փորը գցել* և իր համար կար սուս ու փուս» (22): «Մաքուլն ուխտ գնաց» նովելում մահամերձ Մաքուլի ծայրահեղ ծանր վիճակն ավելի տիպական պատկերվել է հետևյալ փոխաբերությամբ. «Եվ երկար ժամանակ անասելի վշտով նայում էր *մարդու մաշված, դեղնած դեմքին*, որի վրա *հիվանդությունը մեռելային անզգայություն էր դրոշմել*» (4):

Իր նուրբ դիտողականության և պատկերավոր մտածողության շնորհիվ հեղինակն ասելիքը ներկայացնում է ոչ թե ուղղակիորեն, այլ «շուտ տված», որով դիմացիինն ևս մտորելու, վերլուծելու հնարավորություն է ընձեռվում: Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի «Հոպոպը» նովելի համանուն հերոսը մարմնավորում է շարունակաբար հարբող, անամոթաբար հայեոյող, ընտանիքին օր-արև չտվող, անլուրջ, արհամարհված մարդու կերպար, որի անհաշտվողական, հարձակվողական բնավորությունը, գինու գավից այն կողմ բան չտեսնելը, նորածին

⁵ Արիստոտել. Պոետիկա, Եր., 1955, էջ 202:

⁶ Ջոնսոն Մ., Փոխաբերության փիլիսոփայական տեսանկյունները, Եր., 1981, էջ 248-250:

*Այս և հաջորդիվ բոլոր օրինակները քաղված են Նար-Դոսի «Մեր թաղը». պատմվածքներ, /Մովեստական գրող հրատ., Եր., 1982/ գրքից:

երեխայով կնոջը անհավատարմության կասկած հայտնելը, անհիմն, անմիտ առիթից կատաղելը անտանելի կյանքի հետևանք են: Այս ամենի դեմ Հոպոպի գայրույթը ներկայացվում է հետևյալ կերպ. փոխանակ ասելու՝ Հոպոպը գայրացել էր, հեղինակը օգտագործում է «Աչքերը մթնեցին» (69), կամ «Հոպոպի աչքերը կրակ կտրվեցին» փոխաբերությունները (66), որով էլ խոսքը դարձել է ավելի գեղարվեստական և պատկերավոր: Կամ մեկ այլ տեղ աղմուկի դադարելը ներկայացվում է այսպես՝ «*Հռնոսցող փողոցը* հանկարծ լռեց և *քարացավ*» (Հ, 69), կամ՝ «...Արտեմն... այնպես էր բղավել նրա վրա, որ խեղճ պառավն իսկույն *ձայնը փորն էր գցել*» (ՄՓՏ, 48):

Փոխաբերության կարևոր գործառնություններից մեկն է՝ բնութագրել անձը կամ դեպքն ավելի հասկանալի, հակիրճ և միաժամանակ հեղինակային վերաբերմունքի հատու դրսևորմամբ: Օրինակ, «Հոգուն վրա հասավ» նովելում գլխավոր հերոսի՝ Դավիթի՝ տուն գնալու ճանապարհին ուժգին քամուց քշվող մեղկ պատկերն ավելի ցայտուն ներկայացնելու նպատակով հեղինակը գրում է. «Ցուրտ *քամին ծեծում էր* նրա մազակալ երեսը» (32):

Ինչպես գիտենք, բառի՝ փոխաբերական իմաստով գործառնությունը լինում է անհատական (հեղինակային) և ժողովրդական (ընդհանրական)⁷:

Գեղարվեստական խոսքին առանձնապես վառ արտահայտչականություն են տալիս անհատական, հեղինակային փոխաբերությունները: Վերջիններս գործածվում են միայն տվյալ հեղինակի կողմից, նրա ստեղծագործական երևակայության արդյունքն են և սովորաբար հասկանալի են միայն տվյալ համատեքստում: Անհատական փոխաբերությունների գնահատման հիմնական չափանիշը թարմությունն ու արտահայտչականությունն է: Դրանց կերտմանը միաժամանակ նպաստում են ն՝ գրողի գեղարվեստական մտածողությունը, ն՝ պատկերավոր վառ երևակայությունը, ն՝ վարպետ հեղինակի անձնական փորձն ու անմիջական տպավորությունները: «Ինչպես բժշկեցին» նովելում նկարագրելու համար տարածքում ամենատարբեր մարդկանց հավաքվելը՝ Նար-Դոսը գործածել է հետևյալ ինքնատիպ փոխաբերությունը. «Պատուհանի ապակիները *ծեփվել էին հետաքրքիր դեմքերով*» (25), կամ՝ «Հոգուն վրա հասավ» նովելում վառված լապտերի աղոտանալը, մարմրելը, խավարում անփայլ լույս տարածելը հեղինակը պատկերել է այսպես. «Փողոցի անկյունում արդեն վառված *լապտերը, հողմածեծ, ծռել էր գլուխը* և նայում էր շուրջը կեղտոտ ապակիների միջից...» (32):

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում հատկապես հաջողված են այնպիսի փոխաբերությունները, որոնք մտովի փոքր-ինչ վերլուծական աշխատանքից հետո են ըմբռնվում և նաև դրանով հաճույք են պատճառում ընթերցողին՝ որպես անհատական ինքնատիպ զգացումի արտահայտություններ: Ահա այդպիսի մի քանի օրինակներ. «Սաքունն ուխտ գնաց» նովելում Նար-Դոսը մեռնողի սենյակում տիրող բացարձակ լռության պատկերն ավելի ազդեցիկ նկարագրել է հետևյալ փոխաբերական նախադասությամբ՝ «Ու առժամանակ խանգարված չարա-

⁷ Մելքոնյանը Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 98:

գուշակ ծանր լռությունը գայիս է նորից թագավորելու մեռնողի սենյակում» (16), կամ «Մն փողերի տոկոսը» նովելում Արտեմի չուխայի փեշերի՝ չուստերին կաշե-լու պատկերը նկարագրել է հետևյալ փոխաբերությամբ՝ «...նրա (Արտեմի) շալի չուխայի ծանր փեշերը ծափ էին տալիս երկարաճիտ չուստերին» (53):

Ի տարբերություն անհատական փոխաբերությունների՝ ժողովրդական փոխաբերությունները, ճիշտ է, այքի չեն ընկնում ինքնատիպությամբ, բայց պակաս արտահայտիչ չեն: Եվ դա նախ այն բանի շնորհիվ, որ դրանք, հարազատորեն արտացոլելով ժողովրդական մտածողությունը, մեծապես նպաստում են խոսքի ժողովրդայնությանը: Օրինակ՝ «Մաքուլն ուխտ գնաց» նովելում հերոսի՝ մահվան շեմին կանգնած լինելը Նար-Դոսը նկարագրել է հետևյալ փոխաբերությամբ՝ «Եվ երկար ժամանակ անասելի վշտով նայում էր մարդու մաշված, դեղնած դեմքին, որի վրա *հիվանդությունը մեռելային անզգայություն էր դրոշմել*» (3): Կամ՝ «Ինչպես բժշկեցին» նովելում մարդու հոգում չարի բույն դնելը հեղինակը ներկայացնում է այսպես. «Բա ասիլ չեք, էս *խեղճի փորը սատանեք են մտել...*» (24):

Ժողովրդական փոխաբերությունները մի առանձին արտահայտչականությամբ են օժտվում այն դեպքում, երբ դրանց մեջ առաջին պլան են մղվում համագործածական բառերը: Ինչպես բոլոր գրողների, այնպես էլ Նար-Դոսի բառապաշարի միջուկը կազմում են համագործածական բառերը: Անգամ դրանք կիրառելիս «յուրաքանչյուր հեղինակ դնում է իր ինքնուրույնությունը և անհատականացնում ազգային լեզվի բառերն ու կապակցությունները նոր գույնով: Հենց այդ անհատականությունն էլ տվյալ հեղինակի ոճն է դառնում», - նշում է Վ.Առաքելյանը⁸:

Նար-Դոսը յուրովի է գործածում համագործածական բառերը՝ դրանցից ստեղծելով գեղեցիկ փոխաբերություններ, ինչպես, օրինակ՝ «Մաքուլն ուխտ գնաց» նովելում բնության երևույթներն օժտված են փոխաբերական նշանակություններով. «Երեկոյան դեմ երկինքը թխպեց, արագորեն սևացավ, հրեղեն *կայծակներն սկսեցին պատռել ամպերի կուրծքը* նախ հեռավոր ու խուլ, հետո ավելի ու ավելի մոտեցող և ուժգին որոտումներով. օդը սկսեց շարժվել և ցրտել, հետո հանկարծ այնպիսի մի ուժգին փոթորիկ բարձրացավ շրխկոցով ու թրխկոցով, որ *երկինք ու երկիր խառնվեցին իրար փռոցով ու աղբով*» (13):

Բնության երևույթի նկարագրության համանման օրինակ կա նաև «Հոգուն վրա հասավ» նովելում, որտեղ քամու սաստկությունը ներկայացված է անձնավորված պատկերով՝ «Կատաղի *քամին* վժժալով *ներս էր պրծնում* փողոցի մի բերանից, *թոցնում էր առաջին պատահած մարդու գդակը, լիզում էր գետնից աղբն ու փռոցին, ծեծում էր՝ դռներն ու պատուհանները, բարձրացնում, պատուվն էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված *ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից*» (32):*

«Ինչպես բժշկեցին» նովելում հերոսների հակասական և պրկված հոգեվիճակի պատկերավոր ու անչափ խոսուն արտահայտություն է հետևյալ փոխաբե-

⁸ Առաքելյան Վ., *Ավ. Բասակյանի պոեզիայի բառապաշարի ոճարանական առանձնահատկությունները*, Եր., 1954, էջ 47:

րությունը. «Թորոսը, Օսանը և մյուսները մի տեսակ հարցական հայացքով, կարծես խոսքը մեկ արած, լուռ նայեցին իրար երեսի, պարզեր, որ *կասկածի ու թերահավատության առաջին շողն էր այդ, որ վայրկենապես լուսավորեց նրանց խավար միտքը*» (26):

Փոխաբերությամբ հարուստ է ինչպես Նար-Դոս հեղինակի, այնպես էլ նրա հերոսների խոսքը, երբ փոխաբերությունը դառնում է կերպարի տիպականացման միջոց: «Հոպոպը» նովելի զինագործ Ասատուրն ու նրա կինը, «Մն փողերի տոկոս» - ում՝ Արտեմն ու նրա ծերացած մայրը, դրոգապան Յագորն ու Անանը «Թե ի՛նչ եղավ հետո...» նովելում, «Հոգուն վրա հասավ»-ի՝ Դավիթը, «Մաքուլն ուխտ գնաց»-ի՝ Մաքուլը ժողովրդական բառ ու բանով համեմված և հատկապես ժողովրդական լեզվամտածողությանն այնքան բնորոշ դարձվածքներով հագեցած խոսք ունեցող բարի ու չար, ազնիվ կամ ստոր բնագույների կրողներ են, որոնցից ամեն մեկի կերպարային դիմագծի հանգուցային շտրիխներից են գրողի գործածած բազմաթիվ փոխաբերությունները. «Աղջի, ըտենց որ խոսում ես, սաղ *ջանս կրակն անկնում* ախր, - ասաց նա լացակումած» (ԹԻԵ, 45), «Մի քիչ էլ մեզ խղճա է՛, *սիրտներս կրակն ես գցում*, փթոթում» (ՍՈՒԳ, 10), «Ինքը ծեծել ջարդել, *մսերս զզզել* ա, հերիք չի, տղեն էլ հարբած, տրաքված էկել ա, պակասը թամամցրել» (ԹԻԵ, 44), «Քու սաբաբ ըլողի *ջանը կրակն անկնի*, ոնց որ կրակն ա ընկել իմ ջանը: Ախր էն գիժ սրտամեռն ի՛նչ ա ուզում քեզանից, որ ըտենց *կրծում ա միտք...*» (ԹԻԵ, 44), «Հրացայտ այքերով լուռ ու անշարժ խեթում էր կնոջը, հետո ավելացրեց ծանր ու սպառնալից, - *ջանդ իմ քոր չի գալիս*» (ՀՎՀ, 37), «Բա չամաչեցի՞ ր սրա սպիտակ միրքիցը, բա էս *սուրբ միրքը խոռվ չկենա՞քու գլխին*» (ԻԲ, 31):

Հաջողված փոխաբերություններ շատ կան նաև հեղինակային խոսքում. «Այդ հարվածների ձայնը, ներսից լսվող Մարթայի աղեկտուր աղաղակները, դուրսն ամբոխված կանանց և երեխաների դժվժոցը մի կատարյալ Սողոմ-Գոմոր էին դարձրել փողոցը» (ԻԲ, 28), «Հոպոպի այքերը կրակ կտրվեցին» (Հ, 66), «... զգում էր միայն մի բան - սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի, զգում էր ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ, որից լեզուն ցամաքել էր բերանում, որկորը քերվում էր, աղիքները գալարվում էին փորում» (ՀՎՀ, 32), «...ամենքն էլ իր պես պարապ էին, ամենքի գրպանումն էլ մկներ էին խաղում» (ՀՎՀ, 33), «Երեխան տմբամբացրեց զլուխը և այքերը չորս շինած հառեց թասի ջրին» (ԻԲ, 25), «Ինչ վաստակում էր, իր փորն էր ածում» (ՀՎՀ, 34):

Նար-Դոսի կողմից անհատական և ընդհանրական փոխաբերությունների վարպետ կիրառությունը «Մեր թաղը» պատմվածաշարում նպաստել է կերպարների տիպականացմանը, նրանց շրջապատող աշխարհի գունավորմանը, միջավայրի կոլորիտի ապահովմանը, այլն՝ նկարագրվող ժամանակաշրջանի իրական պատկերի ավելի ազդեցիկ և ներգործուն վերարտադրմանը:

МЕТАФОРА В ЦИКЛЕ НОВЕЛЛ НАР-ДОСА «НАШ ДВОР»

*___ Резюме ___**___ К. Никогосян ___*

Статья посвящена рассмотрению места и роли метафоры в цикле новелл Нар-Доса "Наш двор".

Нар-Дос является мастером применения индивидуальных и народных метафор как в авторской речи, так и в речи героев. Благодаря его выразительному мышлению и яркому художественному воображению, множество общеупотребляемые слова приобрели эмоциональные, смысловые и выразительные нюансы, подчеркнули художественное своеобразие замысла произведения.

Метафоры, использованные писателем в цикле новелл "Наш двор", существенно способствовали типизации образов, добавили красочности в описания окружающего героев мира, передали колорит среды. Посредством метафор писатель ярко и многогранно представил эпоху.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Նիկողոսյան Քրիստինե Գագիկի – Շիրակի պետական համալսարան,
E-mail: qristinenikoghosyan@mail.ru*

Շուշանիկ ՏԵՐ-ԱՂԱՍՅԱՆ

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

Ըղձական եղանակը գերմաներենում դիտվում է որպես եղանակային ձևերի կազմած հակադրության նշույթավորված անդամ: Այն պարունակում է արտահայտության իրականության փաստի սահմանափակում՝ հաղորդելով իղձ, ցանկություն, հնարավորություն, պայման (իրական կամ անիրական): Թեպետ ըղձական եղանակի ուսումնասիրությունը գերմանական քերականագիտական գրականության մեջ առավել համակողմանի է ներկայացված, սակայն այն շարունակում է մնալ արդիական գերմաներենի գործնական դասընթացում հայերենի հետ որոշակի անհամաձայնությունների պատճառով: Հոդվածում գերմաներենի ըղձական ձևերը ներկայացվում են հայերենի համապատասխան ձևերի գույադրամբ, ինչը հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանել տվյալ ձևերի դրսևորած յուրահատկությունները և ստեղծել առավել ընդհանրական պատկեր երկու լեզուների համար: Ուստի, հայերենի լեզվական փաստերի ներգրավումը տվյալ ուսումնասիրության մեջ ունի զուտ գործնական նշանակություն և կարևորություն: Ներլեզվական ուսումնասիրության արդյունքները գույադրվում են հայերենի համապատասխան փաստերի հետ միայն ըստ անհրաժեշտության, ինչը կարող է էապես նպաստել այդ ձևերի գործածության և թարգմանության լեզվական անճշտությունների վերացմանը:

Գերմաներենում ըղձական եղանակն արտահայտության պլանում առավել համակարգված է և ունի առանձին ձևակազմական միջոց (ձևույթ)՝ e ածանցը, ի տարբերություն սահմանական եղանակի, որը զուրկ է նման ձևույթներից: Հայերենում նույնպես ըղձական եղանակի համար գոյություն ունեն հատուկ արտահայտման ձևեր, ինչը թույլ է տալիս ունենալ համապարփակ պատկեր սույն կարգի արտահայտության պլանում: Նույնը չի կարելի ասել, սակայն, բովանդակության պլանի մասին: Հայերենում ըղձական ձևերն իմաստային տեսակետից առավել հստակ են, քան գերմաներենում: Ուստի, հայերենի փաստերի ներգրավումն այստեղ էապես չի նպաստում գերմաներենի տիպաբանական յուրահատկությունների բացահայտմանը: Գերմաներենում ըղձականն այնպիսի յուրահատուկ գծերով է հանդես գալիս, որոնք քիչ համադրելի են հայերենի համապատասխան ձևերին: Պատճառներից մեկը նաև գերմաներենում ենթադրական կամ պայմանական եղանակի բացակայությունն է: Այստեղ տեղի է ունենում եղանակային իմաստների, այսպես կոչված, «կուտակում»: Այս պարագայում գերմաներենը դրսևորում է առանձնահատուկ մոտեցում՝ բաշխելով տվյալ իմաստները տարբեր ձևերի միջև՝ եղանակային ձև (Konditionalis I), եղանակավորող բայ (Modalverb), առաջին և երկրորդ սպառնի ձևեր (Futur I, Futur II):

Առավել հետաքրքրական և խնդրահարույց են գերմաներենի ըղձական ձևերն իմաստի և գործածության տեսակետից: Սույն ձևերը հաղորդում են ժամանակային իմաստներ, որոնք բաշխվում են ներկա-անցյալ-ապառնի պլաններում՝ ըստ նախորդող-համընկնող-հաջորդող դրվածքների: Այսպիսի տեղակայումը, սակայն, հնարավոր է միայն եղանակային ձևերի կազմության տեսակետից (Konj. Präsens, Konj. Präteritum, Konj. Perfekt, Konj. Plusquamperfekt, Konj. Futur I): Ըղձական ձևերը, ըստ դրվածքների, տեղակայվում են երկու հիմնական խմբերում՝ Konj. I և Konj. II (երկրորդ խումբը ներառում է նաև Konditionalis I, II ձևերը)¹: Սույն խմբերը բնութագրվում են նաև որպես «ըղձական ներկա» և «ըղձական անցյալ» սահմանումներով²: Այդպիսի դասակարգումը պայմանավորված է բացառապես սույն ձևերի կազմությամբ: Ընդ որում, այս խմբերում տեղակայված ձևերի միջև հնարավոր է տարաբնույթ հոմանիշային գործածություն: Այս ձևերը գերմաներենում դրսևորում են տարբեր եղանակային իմաստներ, որոնց գործածության ոլորտների սահմանները երբեմն հատվում են: Ըղձական ձևերի հիմքում ընկած է «իրականալի/ոչ իրականալի» գործողության գաղափարը, որով բնութագրվում են և որի հիման վրա հակադրվում են ըղձական եղանակի ձևերը: Այսպիսով, առաջին խումբը, որը ներառում է Konjunktiv Präsens, Konjunktiv Perfekt, Konjunktiv Futur I ձևերը, բնութագրվում է որպես «իրականալի» (realisierbar), իսկ երկրորդ խումբը՝ համապատասխանաբար Konjunktiv Präteritum, Konjunktiv Plusquamperfekt, Konditionalis I ձևերով՝ որպես «ոչ իրականալի» (unrealisierbar)³:

Հետաքրքրական են գերմաներենում սույն ձևերի ժամանակային գործառույթների իրացման հնարավորությունները: Ըղձական եղանակում ժամանակային ձևերի գործածությունը պայմանավորվում է մի քանի գործոններով: Ընդ որում, առաջնային կարևորություն է ներկայացնում գործածության ոլորտը և հաղորդման ձևը՝ իրադարձությունների, երևույթների անմիջական և ոչ անմիջական հաղորդում⁴: Գերմաներենում ըղձական ձևերի համար հատկանշական է ոչ անմիջական հաղորդման գործառույթը անուղղակի խոսքի ոլորտում: Սույն գործառույթով ըղձական ձևերի գործածությունն ունի ոճական նշանակություն և նախընտրելի է գրավոր խոսքում, ինչպես՝

Er sagt: “Ich bin schon enttäuscht”. → Er sagt, er sei enttäuscht.

Նա ասում է. «Ես արդեն հիասթափված եմ»: → Նա ասում է՝ արդեն հիասթափված է:

Anna sagt: “Sie schläft noch”. → Anna sagt, sie schläfe noch.

Աննան ասում է. «Նա դեռ քնած է»: → Աննան ասում է՝ նա դեռ քնած է: Այսպիսով, գերմաներենում ըղձականի ժամանակային ձևերի գործառույթների իրացումը ոչ անմիջական հաղորդմամբ պայմանավորված է արտահայտության բուն ժամանակային առնչությամբ: Անուղղակի խոսքում ըղձական ձևերը չեն հիմնվում իրականալի/ոչ իրականալի հակադրության վրա: Ըղձական ձևերի

¹ Գաբրիելյան Յու., Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 71:

² Hentschel E., Weydt H. Handbuch der deutschen Grammatik. Berlin, Walter de Gruyter, 2003, p. 118

³ Moskalskaja O. Grammatik der Deutschen Gegenwartssprache. Moskau, Hochschule, 1975, p. 116.

⁴ Գաբրիելյան Յու., նշվ. աշխ., էջ 71:

համար հիմնական համարվող իմաստային տարրն այս պարագայում մղվում է հետին պլան: Այդպիսով անուղղակի խոսքը բերվում է նոր ոճական մակարդակ՝ ներկայացնելով այն որպես իրականության վերարտադրության, հաղորդման առանձին տեսակ, որը բնորոշ է միայն գերմաներենին: Այս ոլորտում ժամանակային ձևերի գործածությունը որոշակիորեն համակարգվում է գերմաներենի ըղձական համակարգում գործող ժամանակային հարաբերություններով: Ըղձականի դաշտում նախաժամանակյա, միաժամանակյա, հետժամանակյա ժամանակային հարաբերությունների համաձայնության հստակ պատկերը ներկայացվում է ստորև համապատասխան լեզվական օրինակների վերլուծությամբ՝ հաշվի առնելով գերմանական քերականագիտական գրականության մեջ դրանց դասակարգման տարբեր մոտեցումները⁵: Նախաժամանակյա գործողության իմաստի հաղորդման նպատակով գերմաներենում գործում է հետևյալ ժամանակային հաջորդականությունը. անցյալի իմաստի համար գործածվում է Konjunktiv Perfekt, սակայն եզակի և հոգնակի թվի առաջին դեմքի, հոգնակի թվի երրորդ դեմքի ձևերի՝ սահմանական եղանակի համապատասխան ձևերին համընկնման պարագայում փոխարինվում են Konj. Plusquamperfekt ձևերով.


Sie sagt, er hat eine Jahresarbeit geschrieben. (Indikativ)

Sie sagt, er habe eine Jahresarbeit geschrieben. (Konjunktiv)


բայց՝ Er sagt, dass sie die Prüfungen gut bestanden haben. (Indikativ/Konjunktiv)

Er sagt, dass sie die Prüfungen gut bestanden hätten. (Konjunktiv)

Հետժամանակյա իմաստը գերմաներենում հաղորդվում է Konjunktiv Futur I/ Konditionalis I/werden +Infinitiv/ կամ Konjunktiv Präsens, Konjunktiv Präteritum ձևերով.



Այսպիսով, գերմաներենում ժամանակային իմաստների դասակարգման համար ըստ նախաժամանակյա, միաժամանակյա և հետժամանակյա պլանների գործում է հետևյալ ժամանակային հաջորդականությունը.



Գերմաներենում ըղձականի գործածությունն անուղղակի խոսքի ոլորտում, որպես ներլեզվական իրողություն, լիովին մեկնաբանված է: Խնդիրներն առաջանում են հայերենի հետ համադրման ժամանակ և օտար լեզվի գործնական

⁵ Գաբրիելյան Յու., նշվ. աշխ., էջ 72: Gabrieljan J., Manukjan H., Kopaljan N., Mnatsakanjan G. *Praktische deutsche Grammatik. Jerewan, Verlag der Universität Jerewan, 2007, p. 138.*

դասընթացում, քանի որ գերմաներեն տարբերակներում գործածված ըղձական ձևերը հայերենում համարժեք արտահայտություն չեն գտնում: Արդյունքում կարող են սույն ձևերը ձեռք բերել այս կամ այն իմաստային դրսևորումը և հայերենի թարգմանական տարբերակներում որոշ անճշտություններ առաջացնել: Հիմնական խնդիրն այն է, որ սահմանական և ըղձական ձևերով արտահայտված անուղղակի խոսք պարունակող արտահայտությունները հայերենում նույն կերպ են ընկալվում, ինչպես արդեն ցույց տրվեց վերևում՝ անուղղակի խոսքում ըղձականի տարբեր ժամանակային ձևերի գործածության օրինակով:

Հետաքրքրական է նաև գերմաներենում անուղղակի խնդրանք, անուղղակի հորդոր, անուղղակի հրաման, անուղղակի հարց պարունակող նախադասություններում ըղձականի դրսևորած առանձնահատկությունները, ինչպես՝

Ich bat ihn, dass er meinen Freund vom Bahnhof abholt.

Ich bat ihn, meinen Freund vom Bahnhof abzuholen.

Ich bat ihn, er möge meinen Freund vom Bahnhof abholen.

Բերված օրինակներում անուղղակի խնդրանքը հայերենում կունենա արտահայտման հետևյալ ձևերը՝

Ես խնդրեցի նրան, որ նա ընկերոջս կայարանում դիմավորի:

կամ *Ես խնդրեցի նրան՝ կայարանում դիմավորել ընկերոջս:*

Առաջին երկու օրինակներում անուղղակի խնդրանքը հաղորդվում է սահմանական եղանակի բայաձևերով, մինչդեռ վերջին նախադասության մեջ *mögen* եղանակավորող բայի ըղձական գործածությունը ոչ մի կերպ չի մեկնաբանվում: Անուղղակի հրաման, հորդոր արտահայտելու նպատակով գերմաներենում գործածական է *sollen*-ի ըղձական ձևը, որի գործածությունն առավել իմաստավորված է, քան *mögen*-ի գործածությունը համապատասխան կառույցներում: Այս առումով, սակայն, ըղձականի ձևերը մոտենում են հայերեն հարկադրական եղանակին, ինչպես՝

Ich habe ihm gesagt, er solle zu den Studenten freundlicher sein.

Ես ասել եմ նրան, որ նա պետք է ուսանողների հանդեպ ավելի սիրալիր լինի:

Այսպես, գերմաներենում *sollen*-ի գործածությունն անուղղակի հրամանի դեպքում կարող է համարժեք դրսևորում ստանալ հայերենում, սակայն ըղձականի ոլորտից դուրս, որպես հարկադրական եղանակի համարժեք ձև: Հետևաբար, գերմաներենում ըղձական եղանակի բայաձևերի գործածությունն անուղղակի խոսքի ոլորտում ոչ միշտ է հայերենում համապատասխան արտահայտություն գտնում: Ըղձականի գործածությանը որոշ դեպքերում կարելի է վերագրել գուտ ոճական նշանակություն:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Konj. II խմբի ձևերը, որոնք բնութագրվում են որպես «իրականում տեղի չունեցող» և «անիրականալի»⁶: Ուսումնասիրելով քերականագիտական գրականության մեջ ըղձական ձևերի գործածության բազմաթիվ տարբերակները՝ կարելի է սույն ձևերի համար առանձնացնել հետևյալ իմաստային դրսևորումները՝ անիրական ցանկություն,

⁶ Moskalskaja O. Grammatik der Deutschen Gegenwartssprache. Moskau, Hochschule, 1975, p. 122.

պայման, հետևանք, համեմատություն, բաց թողնված հնարավորություն, նպատակ, որտեղ մի կողմից հաղորդվում է անհրապակյա գործողություն, որի կատարումն անհնար է, մյուս կողմից՝ նշվում է որոշակի ժամանակային վերաբերություն անցյալի նկատմամբ: Այս նախադասություններում նույնպես պահպանվում է ըղձականի ժամանակային հաջորդականությունը նախաժամանակյա, միաժամանակյա, հետժամանակյա ժամանակային պլաններում, ինչպես օրինակ՝ *Da begann sie zu sprechen, als ob sie sich an die sie umgebende Luft wendete.*⁷

Ապա նա սկսեց խոսել, կարծես դիմեր իրեն շրջապատող օդին:

Այս առումով, սակայն, գերմաներենի ըղձական ձևերը հայերենի հետ թարգմանական խնդիրներ չեն ստեղծում: Այս պլանում պատկերն առավել պարզ է: Այստեղ առաջնայինը գործողության եղանակային իմաստն է, որը պարունակում է անհրապակյալիության իմաստային տարր: Ուստի, այս ձևերի գործածությունը բխում է անմիջապես արտահայտության նպատակից: *Mein bist du und wärft Hölle und Himmel sich zwischen uns!*⁸.

Իմն ես դու, թեկուզ դժոխք ու երկինք հայտնվեն մեր միջև:

Վերջին օրինակում *Konjunktiv Präsens*-ի փոխարեն գերմաներենում գործածվել է *Konjunktiv Präteritum* միայն սահմանականի համապատասխան ձևին համընկնման պատճառով, որին, սակայն, հայերենում զուգադրվում է ըղձական ներկա: Գերմաներենի ըղձական ձևերն անհրապակյա գործողության իմաստով հայերենին մեծ մասամբ համընկնում են:

Wäre ich nicht so alt! / Եթե ես այսքան ծեր չլինեի:

Այս խմբի ձևերը ցանկալի են նաև քաղաքավարի խնդրանք, հարց ձևակերպելիս, ինչպես՝ *Dürfte ich Ihren Drucker benutzen?*

Könnten Sie mir helfen?

Möchten Sie noch etwas?

Würden Sie das Fenster öffnen?

կամ՝ *Es wäre gut, wenn Sie mir dieses Bild noch einmal zeigen.*

Այսպիսով, ըղձական եղանակի համար գերմաներենում գործում են գործածության հստակ կանոններ և նախանշված են հստակ ոլորտներ, մինչդեռ ժամանակային ձևի ընտրությունը բնավ չի պայմանավորվում արտահայտության անմիջական ժամանակային առնչությամբ:

⁷ *Cronin A. J., Das Haus der Schwäne, Bertelsmann Lesering, Wien, 1962, p. 74.*

⁸ *Schiller F. Kabale und Liebe, Leningrad, Prosveshnie, 1975, p. 56.*

**СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ
СОСЛАГАТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ***___ Резюме ___**___ Ш.Тер-Адамян ___*

В данной статье комментируется ряд особенностей сослагательного наклонения немецкого языка с точки зрения ее семантических и функциональных проявлений. Цель статьи выявить проявления такого рода и сложные семантические отношения между сослагательным наклонением и времени, определить сферу их применения. Исследование проводится посредством сопоставления с соответствующими формами армянского языка. Соответствующая грамматическая категория армянского языка более объемная, а данная категория немецкого языка имеет три наклонения, чем и обусловлена сложность определения соответствующих семантических значений в немецком языке.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Տեր-Ադամյան Շուշան Վոլոդյայի – ք.գ.թ., Շիրակի պետական համալսարան,
E-mail:schuschan.teradamyam@gmail.com*

**ՕՐՈՆՏԵՍ-ԵՐՎԱՆԴԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ**

Վաղարշակ թագավորի ավանդական հավաքական կերպարի մեջ պետք է տեսնել ոչ միայն պատմական Արտաշես I-ին, Տրդատ I-ին և Հայոց այլ գահակալներին, այլև Հայաստանի նախկին աքեմենյան սատրապ Օրոնտես-Երվանդին բնորոշ գծեր: Վաղարշակի հավաքական կերպարի պատմական առաջին նախատիպի դերին հավակնող Հայոց թագավորներից միայն նա է ավանդական Վաղարշակի նման եղել մակեդոնական նվաճողների ժամանակակիցը և նրանց դեմ պայքարած Հայոց գահակալը: Միայն նա՝ Գավգամելայի մ.թ.ա. 331թ. ճակատամարտի մասնակից Օրոնտես-Երվանդն է, որ ավանդական Վաղարշակի նման եղել է Հայոց անկախ թագավորության վերականգնողը:¹

Մակեդոնական նվաճումների շրջանում Հայաստան էր ներխուժել Մենոն զորավարը, որը հասել էր հավանաբար Փոքր Հայքի վրայով մինչև Ճորոխի ավազանում գտնվող Սպերի ոսկեհանքերի շրջան²: Սրա դեմ պետք է ձեռնարկված լիներ Վաղարշակի առաջին արշավանքը: Պատմահայրը գրում է. «Միաբան է եւ Վաղարշակ զօր բազում յԱտրպատական է եւ ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանիս եւ քաջս... Հասան է ի միջոց աշխարհիս, վերագոյն քան զակունս մօրին Մեծի, յափն Երասխայ, մօտ յԱրմաւիր, որ ասի բլուր. աւուրս շատս առնելով անդ... Եւ աստի միաբանեալ զբոլոր կողմանս աշխարհիս՝ հասան է առ սահմանօրն Խաղտեաց»:³

Ինչպես տեսնում ենք, նախապես Վաղարշակի հրամանատարության տակ մեր աշխարհի կես մասի, այսինքն՝ միայն Մեծ Հայքի ուժերն են եղել, ինչպես էլ իրականում եղել է Օրոնտես-Երվանդի դեպքում: Միայն երկրի կենտրոնում հաստատվելուց հետո է, որ նրա մոտ գումարվում են մեր աշխարհի բոլոր կողմերի ուժերը, որոնք, ըստ երևույթին, բաղկացած էին թե՛ Մեծ Հայքի, թե՛ Փոքր Հայքի զորամասերից: Պատահաբար չէ, որ հայկական ուժերի մասին խոսելիս Մովսես Խորենացին առաջինը հիշատակում է Բագարատին՝ Բագրատունիների նախնուն և նրա հետ եղած քաջերին («զկոչեցեալն Բագարատ, եւ որք ընդ նովաւ քաջք»)⁴, որովհետև Փոքր Հայքի և Մեծ Հայքի սահմանագոտին կազմող Սյուսպիրիտիսում (Սպերը՝ Ճորոխի ավազանում) գտնվող նրանց տիրույթ էր ներխուժել Մենոնի

¹ Պետրոսյան Լ., Օրոնտես-Երվանդի հակամակեդոնական գործունեության արտացոլումը Մովսես Խորենացու երկում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Եր., 2010, էջ 71-78:

² Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, ԵՊՀ հրատ., Եր., 1940, էջ 61 (Strabo, XI, 14, 9):

³ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Բ, գլուխ 9, Եր., 1981:

⁴ Խորենացի, Բ, 9:

գորքը: Դա է ցույց տալիս նաև Վաղարշակի արշավանքի վերջնակետը՝ «հասանել առ սահմանօք Խաղտեաց»:⁵

Շարունակության մեջ Մովսես Խորենացին մանրամասնորեն արդեն խոսում է մակեդոնացիների դեմ Վաղարշակի սկսած պատերազմում ռազմական գործողությունները Փոքր Հայքի տարածք փոխադրելու մասին⁶, չանելով Խաղտիքի սահմանների մոտ ծավալված իրադրությունների նկարագրությունը: Այդ բացթողումն է լրացնում Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Հայաստան ուղարկված մակեդոնացիների կրած անհաջողության և Մենոնի սպանության մասին. «Կան ոսկու հանքեր Միսպիրիտիսի մեջ՝ Կաբալայում⁷, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից գորքով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից»⁸: Անկասկած, Մենոնի գլխավորած գորքը պարտություն էր կրել և նահանջել՝ գերի թողնելով իր հրամանատարին:

Պատմահոր շարադրմամբ հետևենք Վաղարշակի կողմից մակեդոնացիների դեմ ծավալված հաջող ռազմական գործողությունների ընթացքին, որոնք, մեր կարծիքով, արտացոլումներն են հույն հեղինակների հաղորդումների հիման վրա շարադրված վերոհիշյալ անցուղարձերի: Խորենացին գրում է. «Քանզի Ղազիկայ, Պոնտոս, Փոնդիայ, Մաժաք եւ այլք, ոչ գիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ առ Մակեդոնացոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին: Վասն որոյ ոմն Մորփիւղիկէայ միաբանեալ զասացեալ կողմանս զաստիկ, եւ գրգռի ի պատերազմ ընդ Վաղարշակայ: Բայց պատահեն միմեանց առ բարձրավանդակի միոջ բլրով քարագագաթնիւ, որ այժմ ասի Կողոնիայ. եւ մօտեալք առ միմեանս ձիգ ասպարիսօք միջոցացն՝ ամրանան կողմանքն երկոքին բովանդակ աուրս»⁹:

Պարզ երևում է, որ մակեդոնացիներին հաջողվել էր հպատակեցնել Փոքր Ասիան, որից հետո նրանք գրավել էին Փոքր Հայքը: Այստեղ էր գտնվում Կողոնիա/Կոլոնիան (այժմ՝ Կոլլի-հիսար)¹⁰: Այստեղ էլ տեղի ունեցած ճակատամարտում մակեդոնացի զորավարը սպանվում է, նրա գորքը՝ ջախջախվում, «Եւ յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, եւ մակեդոնացոցն դադարէր գոռն»¹¹: Մ. Չամչանցի կարծիքով, այս Մորփուղիկէաը որդին էր պատմական Արտաշես I-ի (189-160թթ. մ.թ.ա.) ժամանակակից և գոր-

⁵ Խորենացի, Բ, դ:

⁶ Պետրոսյան Լ., Օրոնտես-Երվանդի հակամակեդոնական գործունեության արտացոլումը Մովսես Խորենացու երկում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նյութեր (Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010), Եր., 2010, էջ 71-78:

⁷ Մա լինելու էր Փառանգհոնի ոսկու հանքը՝ Արսեաց փոքր գավառում (Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 40, 88):

⁸ Ստրաբոն, էջ 61 (Strabo, XI, 14, 9):

⁹ Խորենացի, Բ, դ:

¹⁰ Агонц Н. Армения в эпоху Юстиниана. Изд. Ереванского университета. 1971, стр. 60, 62, 89, 146:

¹¹ Խորենացի, Բ, է:

ծակից Մովսիսի թագավոր Զարեհի (ըստ նրա՝ Դարեհ) և իշխում էր Փոքր Հայքում¹²: Մորփյուղիկեսին նա նույնացնում է նաև Դիոդորոս Միկիլիացու հիշատակած Մιθροβουζαγγελ-ի հետ՝ այս անունը տառադարձելով «Միւրփիւկէն կամ Միւրփու-ճէն» տեսքով¹³ և ավելացնելով. «Մորփիւղիկէս գորդի Դարեհի ի վերայ աշխարհին Փոքուն Հայոց»¹⁴: Մ. Չամչանցի այս ենթադրությունները հետագայում մերժվեցին, և հանձին Մորփյուղիկեսի փորձ արվեց տեսնել մ.թ. I դարի 50-ական թվականներին Հայաստանն ասպատակած հռոմեացի զորավար Կորբուլոնին¹⁵: Ընդ որում, այս դեպքում որպէս հիմնավորում բերվում էր *Մորփիւղիկէս* և *Կորբուլոն* անունների հեռավոր հնչյունական նմանության հանգամանքը: Սակայն, *Մորփիւղիկէս* անունը լեզվաբանական որևէ օրինաչափությամբ հնարավոր չէ բխեցնել *Կորբուլոն* (լատին. Corbulō) անունից, որովհետև հնչյունական տեսակետից դյուրարտասանելի լատինական անունը չէր վերածվի ավելի երկար ու դժվարարտասանելի այդպիսի անվան:

Մորփյուղիկեսի դեմ տարած հաղթանակից հետո Վաղարշակը «Եւ այսպէս կատարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաքայ եւ զՊոնտացիս եւ զԵգերացիս»¹⁶: Վաղարշակի կողմից մակեդոնացիներից ազատագրված և կարգավորված երկրները հենց նրանք էին, որոնք հետագայում կազմում էին Պոնտական և Կապադովկիայի թագավորությունները: Թե՛ սրանց հպատակեցման, թե՛ դրան նախորդած և մակեդոնացիների դեմ Վաղարշակի տարած հաղթանակների մասին մեր պատմահայրը խոսում է նախքան Վաղարշակի թագադրումը նկարագրելը¹⁷: Պարզ է, որ դրանք վերաբերում են Օրոնտես-Երվանդի գործունեության այն ժամանակաշրջանին, երբ մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո նա Հայաստանի ինքնիշխան կառավարիչ էր, բայց դեռևս թագավոր չէր օծվել:

Աքեմենյան աշխարհակալության փլուզման, դիադոքոսների պայքարի, հարևան երկրներում նոր պետական կազմավորումների առաջացման հետևանքով վտանգվել էին Հայաստանի սահմանները: Իր թագավորության սահմանների պաշտպանությունն ամրապնդելու նպատակով Երվանդ թագավորն ստեղծել էր մի շարք սահմանամերձ ռազմավարչական միավորներ՝ կողմնակալություններ: Դրանց ստեղծումը նույնպես Մովսես Խորենացու երկում միահյուսված է ավանդական Վաղարշակի կերպարին¹⁸:

Ո՞վ կարող էր լինել Արտաշեսին նախորդած Հայոց թագավորը, որ պետականության կառուցման գործերում գերազանցել էր, իսկ բանակի կայացման հարցերում նախորդել պատմական Արտաշես I-ին: Այդ գործունեությունը սովորաբար վերագրում են Արտաշես I-ին: Բանակի և առհասարակ ռազմական ոլորտի մեջ

¹² Չամչանց Մ., Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հ. Ա, ԵՊՀ հրատ, Եր., 1985, էջ 206-207, 209:

¹³ Նույն տեղում, էջ 207:

¹⁴ Նույնը:

¹⁵ Агоны Н., նշվ. աշխ., էջ 432:

¹⁶ Խորենացի, Բ, գ:

¹⁷ Նույնը:

¹⁸ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 77-78:

Արտաշես I-ի իրականացրած բարեփոխումների առթիվ Գ. Մարգարյանը նկատում է, որ Խորենացու կողմից Արտաշեսին վերագրված «գորքը չորս մասի բաժանելու գաղափարն սկսում է արձարծվել դեռևս Վաղարշակի գործունեությանը վերաբերող գլուխներում, իսկ այստեղ տեսնում ենք նրա զարգացման սուկ հերթական փուլը»¹⁹: Անտարակույս, այս դեպքում ևս Վաղարշակի պատմական նախատիպը լինելու է Հայոց թագավորության անկախությունը վերականգնած և պետական կառույցները ստեղծած Օրոնտես-Երվանդը, որը և իրականում նախորդել է Արտաշես I-ին: Թագավոր դառնալուց հետո Արտաշես I-ին քիչ բան էր մնում անելու պետական շինարարության ասպարեզում, որովհետև նա անցել էր մի երկրի կառավարման գլուխ, որն իր թիկունքում ուներ 130 տարվա անկախություն և միայն վերջին 10-12 տարվա ընթացքում Մելնկյան պետությունից ունեցած որոշակի կախվածություն²⁰: Արտաշես I-ին մնում էր պահպանել Օրոնտես-Երվանդի ստեղծած պետական կառույցները:

Մովսես Խորենացին Վաղարշակի իրագործած զինվորական ոլորտի բարեփոխումների մասին խոսում է ոչ մեկ անգամ: Նրա հաղորդմամբ. 1. Վաղարշակը կարգավորել է և հոգացել «տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ համայն ասել՝ օրէն թագաւորութեան, եւ որ ինչ շուրջ զթագաւորութեամբն զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց, եւ որ նման այսոցիկ»²¹: 2. Վաղարշակը «Եւ գունդս եւ պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիրովք վառելովք ի նայն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնայն ի Հայկայ»²²: 3. «Եւ կարգս զինուորութեանց, եւ նոցունց առաջինս եւ երկրորդս եւ երրորդս, եւ որ ի կարգին»²³:

Մեծ Հայքի սահմանները թշնամական ներխուժումներից զերծ պահելու նպատակով Վաղարշակի ձեռնարկած միջոցառումներից ամենաարդյունավետը եղել է կողմնակալությունների ստեղծումը, որոնցում նշանակված կառավարիչները՝ կողմնակալները, օժտված են եղել ինչպես վարչական, այնպես էլ ռազմական գործառնություններով: Նրանցից առաջինը եղել է Բագրատունի նախարարական տոհմի վերոհիշյալ նախնի Բագարատը (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագարատ, ըստ Անանունի՝ Բագարատ Փառազեան): Արշակ Փոքրին, ըստ Անանունի, «ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զօրու»²⁴: Ըստ Խորենացու՝ «այս Բագարատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմունսն Արշակայ ընդ մակեդոնացիսն»²⁵: Հավանաբար, խոսքը Գավգամելայի ճակատամարտից հետո

¹⁹ Մարգարյան Գ., *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին*, ՀՄՄՀ ԳԱ ՊԲ, Եր., 1966, էջ 162:

²⁰ *Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ)*, ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 521, 525:

²¹ *Խորենացի*, Բ, է:

²² *Նույնը*:

²³ *Նույն տեղում*, Բ, ը:

²⁴ *Մեթոսի եպիսկոպոսի պատմություն, Բաղդատությունը ձեռագրաց, հանդերձ առաջարանի եւ ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց*, Եր., 1939, գլ. Բ, էջ 9:

²⁵ *Խորենացի*, Բ, գ:

ստեղծված դրության մասին է: Արշակ Փոքրը (Վաղարշակը) «Զսա արար... սս-պետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, եւ հայր արքայի, եւ եղբայր»²⁶ և նշանակվեց «ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիրուց եւ հագարաց, յարեւմտից կուսէ»²⁷: Անկասկած, Խորենացու «յարեւմտից կուսէ»-ի տակ հասկանալու ենք հյուսիսարևմտյան այն շրջանները, որոնք հարում էին Պարխար լեռներին: Դա ցույց են տալիս Ագաթանգեղոսի «Պատմության» հունարեն ավելի ուշ հայտնաբերված Վարքի այն տողերը, որոնցում հիշատակված են Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցած հայ մեծատոհմիկները՝ «թագավորներից հետո առաջին տեղում գտնվող Անգեղտան և Անձիտի կուսակալը, երկրորդ՝ Աղձնիքի մեծ բոլեշը, երրորդ՝ Մարդերի կուսակալը, չորրորդ՝ *ասպետության իշխանը, որը պաշտպանում է Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը*, հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը, սպարապետը...»²⁸: *Ճանիք//Ճանիկ//Ճանի* կոչվածը Պարխար լեռների և Սև ծովի միջև ընկած շրջանն է, որին հարևան էր Պարխարյան լեռների հարավային փեշերին գտնվող Բագրատունիների տիրույթ Սպերը՝ Ճորոխի վերնագավառում²⁹:

Ագաթանգեղոսի հունարեն Վարքի այս տեղեկությունը համահունչ է Դիոն Կասիոսի այն վկայությանը, որ վերաբերում է 163թ. Հայաստան ներխուժած հռոմեացիների դեմ մեր ժողովրդի մղած պայքարի մի դրվագին³⁰: Հայերի դիմադրությունը ճնշվել էր, բայց Մարկոս Ավրելիոս կայսրը իրավիճակի հետագա սրման չգնալու նպատակով համեմատաբար մեղմ վարվեց նրա կազմակերպիչների հետ: Ըստ Դիոնի. «Տրդատ սատրապին, որը Հայաստանում խռովություն էր առաջ բերել և սպանել էր հենիոխների թագավորին ու նաև սուրը հանել էր սպառնալով Վերոսին (կայսեր գահակից եղբորը-Լ.Պ.), որն այդ բանի համար նրան հանդիմանել էր՝ Մարկոս Ավրելիոսը փոխանակ սպանել տալու՝ աքսորեց Բրիտանիա»³¹: Ս. Երեմյանը ցույց է տվել, որ Տրդատ սատրապը Խորենացու հիշատակած Տրդատ Բագրատունին է³², իսկ նրա կողմից սպանված անձը «Մաքելոնների և հենիոքների թագավորության» արքայիկն էր, որի թագավորությունը գտնվում էր Պարխարյան լեռների հյուսիսային լանջերին և հարևան էր Սպերին³³:

Հայ և օտար վերոհիշյալ պատմիչների վկայությունները և Բագրատունիների գործակալական տիրույթ Սպեր գավառի՝ Մեծ Հայքի հյուսիսարևմտյան մասում գտնվելու իրողությունը մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ Ճորոխի

²⁶ Սեբեոս, գլ. Բ, էջ 9, 10:

²⁷ Խորենացի, Բ, գ:

²⁸ Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), Թարգմանությունը հունարեն բնագրից Հ.Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Էջմիածին, 1966, թիվ Թ-Ժ, էջ 79:

²⁹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 64, 103: ՀԺՊ, հ. 1, էջ 785:

³⁰ Պետրոսյան Լ., Հայաստանի հյուսիսային կողմնակալությունը ըստ հայ և օտար աղբյուրների, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, 2005, էջ 100-104:

³¹ ՀԺՊ, հ. 1, էջ 785:

³² Խորենացի, Բ, կգ: ՀԺՊ, հ. 1, էջ 784-785:

³³ ՀԺՊ, հ. 1, էջ 785, «Հայաստանը մ.թ.ա. 66 – մ.թ. 224 թվականներին» քարտեզը (ՀԺՊ, հ. 1):

ավագանի Պարխարյան լեռնաշղթային հարող շրջաններում գոյություն է ունեցել ռազմավարչական մի միավոր, որի գորավար-կառավարիչը լինում էր Բագրատունի տոհմից և կոչվում էր *կողմնակալ, ասպետ, ասպետության իշխան, սատրապ*³⁴: Ռազմավարչական այդ միավորի առաջին գորավար-կառավարիչը եղել է Բագրատունի նախարարական տոհմի հիմնադիր Բագարատը (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագարատ, ըստ Անանուն պատմիչի՝ Բագարատ Փառագյան), որը Վաղարշակ արքայից կողմնակալ էր նշանակված Մեծ Հայքի «արևմտյան կողմում»: *Կողմնակալ* տերմինի դիմաց, ինչպես տեսանք, Դիոն Կասիոսը բերում է աքեմենյան դարաշրջանից եկող *սատրապ*-ը: Անշուշտ այդ պաշտոնին *սատրապ* տերմինը հատկացված էր լինելու ո՛չ հելլենիզմի կամ Արշակունյաց դարաշրջաններում: Ամենայն հավանականությամբ, *սատրապ* տերմինը այդ պաշտոնին ամրագրվել էր նրա ստեղծման ժամանակ Օրոնտես-Երվանդի կողմից, երբ նա այլևս Հայաստանի սատրապ (մ.թ.ա. 351-331թթ.) չէր, այլ Հայոց թագավոր (մ.թ.ա. 331-309թթ.): Բագրատունի ասպետների կառավարման հանձնված ռազմավարչական այս միավորն է, որ հին հույներին հայտնի է եղել Սյուսպիրիտիս (Συσσιριτικός) անունով³⁵:

Մովսես Խորենացին Բագրատունի նախարարական տոհմի անվանադիր նախնի Շամբատ Բագարատին (ըստ Անանունի՝ Բագարատ Փառագյան) «Թագադիր, այլ եւ ասպետ» կոչելով³⁶, գատորոշում է նրա համատեղած երկու գործակալությունները: Այս առթիվ հիշենք, որ մերժելով թագադրի և ասպետի գործակալությունների նույնության մասին ենթադրությունը՝ Ստ. Մալխասյանցը գրում էր. «Մակայն Խորենացին շեշտում է տարբերությունը այս երկու պաշտոնների – «կոչել թագադիր, այլ և ասպետ»³⁷: Անանունի այս վկայության առթիվ Հ. Մանանդյանը գրում էր. «Բագրատունիների «ասպետ» տիտղոսի մասին, որ դեռ վերջնական կերպով մեկնված չէ, ուշագրավ է Սեբեոսի (Անանունի) վկայությունը, որը թեև առասպելական բնույթ ունի, սակայն հետաքրքիր լուսաբանություն է տալիս «ասպետություն» բարձր պաշտոնին»³⁸: Ի դեպ, «ասպետ»-ի ոչ թե տանուտիրական (նահապետական-ժառանգական), այլ գործակալական տիտղոս լինելու մասին է խոսում Բագրատունիների Սպերի ճյուղի կրած *Ասպետունի* (<ասպետ-ունի) տոհմանունը,³⁹ որովհետև Սպերը նրանց տանուտիրությունը (ժառանգական տիրույթը) չէր, այլ սոսկ ձեռական տիրույթը («երկիր ձեռական իշխանության»)⁴⁰:

³⁴ Պետրոսյան Լ., Երվանդյան Մեծ Հայքի չորս ծայրամասերի հարցի շուրջ (մ.թ.ա. IV դարի վերջ), ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VII, Գյումրի, 2004, էջ 19-26:

³⁵ Strabo, XI, 4, 9; XI, 14, 9; XI, 14, 12 (Մտրաբոն, էջ 33, 61, 63):

³⁶ Խորենացի, էջ 110, 117:

³⁷ Խորենացի, Բ, ը, էջ 281-282, ծան. 117:

³⁸ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Եր., 1957, էջ 328:

³⁹ Երենյան Ս., Բագրատունիների թագավորությունը IX դ. վերջին և X դ. առաջին կեսին, քարտեզ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Եր., 1976, էջ 200-201:

⁴⁰ ՀԺՊ, հ. 1, էջ 785:

Օրոնտես-Երվանդի օրոք է, անշուշտ, գործածության մեջ դրվել *արս («կողմ», «ծայրամաս») արմատը, որն առկա է հին Հայաստանի հյուսիսարևմտյան ծայրամասի հետևյալ տեղանունների մեջ. *Արսեաց փոր*=*Ասեաց փոր*. այսպես էր կոչվում Տայք նահանգի սահմանամերձ գավառը⁴¹, *Արսիք*=*Արսիս* (այժմ՝ *Էրսիս*). այսպես էր կոչվում նույն գավառի բնակավայրերից մեկը⁴², *Արսիանի*=*Արսիյան* (<հայ. **Արսեան*, այժմ էլ նույն անունով), այսպես էր կոչվում Տայք նահանգից մինչև Կողքիս ձգվող և Ճորոխի ստորին հոսանքի շրջանը Կուրի վերին հոսանքի շրջանից բաժանող լեռնաշղթան, *Արսիյան* (<հայ **Արսեան*). այսպես է այժմ կոչվում հիշյալ լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը (3165մ): Ս. Պետրոսյանի հետևողությամբ՝ **արս* բառի համար որպես նախաձև կարող ենք ընդունել հ.-ե. **perk-* արմատը, որը հայերենում օրինաչափորեն վերածվելու էր **արս*-ի (կամ **հարս*-ի)⁴³: Հ.-ե. Այս արմատից սերած նույն կամ մոտ իմաստներով բառերի հանդիպում ենք հնդիրանական գրեթե բոլոր լեզուներում. հին հնդկ. *párcus*, *parśu* «կող», *pārsva* «կողմ», ավեստ. *pərəsu* «կող», *parəsu* «կողմ», սկյուր. *pars* «կող, կողմ», սողդ. **parsāk* (*prs'kh*) «կող», պարս. *pahl* (<**parsu*) «կողք», օս. *fars* «կողմ» և այլն⁴⁴:

Վերոբերյալ հին և նոր տեղանունների մեջ **արս* արմատն առկա է ոչ թե ուղղակիորեն, այլ իրենից ածանցված **արսի* և **արսեան* (երկու դեպքում էլ «ծայրամասային» իմաստով) տերմինների միջնորդությամբ: Դա երևում է *Արսեաց փոր* (բառացի՝ «արսիների ձոր») և *Արսիք*=*Արսիս* (բառացի՝ «արսիներ») տեղանունների հոգնակի ձևերից: *Արսեաց փոր* և *Արսիք*=*Արսիս* տեղանուններից և դրանք կրած օբյեկտների ծայրամասային դիրքից ելնելով, կարելի է ենթադրել, որ «արսի»-ներ կոչվել են «արս»-ում (ծայրամասում) ծառայության մեջ գտնված արքունի սահմանապահ զորամասերը: Հին Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում սահմանամերձ-սահմանապահ վարչական միավորի՝ «արս»-ի գոյության և Բագրատունի ասպետներին այն ենթակա լինելու առումով հետաքրքրական է, որ *արս*- բաղադրիչը պարունակող հին հայկական տեղանունների ընդգրկած տարածքը մի կողմից սահմանակցում էր Բագրատունի-Ասպետունիների տիրույթը հանդիսացած (և սահմանամերձ) Սպերին, իսկ մյուս կողմից՝ նրանց վերահսկողությանը հանձնված (ըստ Ագաթանգեղոսի՝ հունարեն նորահայտ Վարքի) արևելապոնտական Խաղտիք ազգագավառին և կովկասյան երկրներից Կողքիսին ու Վիրքին⁴⁵:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ հին Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում ժամանակին գոյություն է ունեցել Օրոնտես-Երվանդի կողմից ստեղծված սահմանամերձ-սահմանապահ մի գոտի՝ «արս»-ը: Ռազմավարչական այս միավորը, ամենայն հավանականությամբ, ընդգրկել է «Աշխարհացոյց»-ի Սպեր, Ար-

⁴¹ *Արսեաց փոր առ Պարխար լեռամբն, ընդ որ իջանէ Յոհ (իմա՝ Ճորոխ – Լ. Պ.): Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40:*

⁴² Նույնը:

⁴³ Հմմտ. *հարսն, հարց* (*Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 62-63*):

⁴⁴ Պետրոսյան Ս., «Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման փորձ, *Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, 1983, էջ 82:*

⁴⁵ Պետրոսյան Ս., նշվ. աշխ., էջ 83:

սեաց փոր, Կղարջք, Շավշեթ, Աճարա և Սամցխե գավառները: Սրանցից երկուսը՝ Աճարան և Սամցխեն, մինչև 37թ. գտնվում էին Մեծ Հայքի կազմում, ապա անցան Վիր քին:⁴⁶ Սյուսներից Կղարջքը և Շավշեթը հետագայում մտնում էին Մեծ Հայքի աշխարհներից Գուգարքի, Արսեաց փորը՝ Տայքի, իսկ Սպերը՝ Բարձր Հայքի մեջ:⁴⁷

ВОЕННЫЕ И АДМИНИСТРАТИВНЫЕ МЕРЫ ОРОНТА-ЕРВАНДА НА СЕВЕРО-ЗАПАДЕ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

___ *Резюме* ___

___ *Л. Петросян* ___

Свидетельства армянских и зарубежных историков, а также тот факт, что домен нахарарского рода Багратуни был расположен в провинции Спер, на северо-западе Великой Армении, дают нам право сделать вывод, что у Пархарского хребта, в бассейне реки Чорох, в древности существовала военно-административная единица, во главе которой стоял князь Багратуни. Он назывался кохмнакал, т.е. “наместник, правитель пограничной области в древней Армении”, сатрап. Первым военачальником-правителем этой единицы был Багарат - основатель нахарарского рода Багратуни. Согласно Мовсесу Хоренаци и анонимному автору, он был назначен кохмнакалом на западе Великой Армении легендарным царем Валаршаком. Он был первым прототипом Оронта-Ерванда. Эта военно-административная единица у древних греков упомянута как Сиспирит (Σισπιρίτις). Там существуют топонимы, которые содержат корень **арс*, т.е. “край”, “окраина”. Наличие корня **арс* в этих топонимах позволяет предположить, что эту единицу называли “арс”, а служащих в ней царские пограничные войска- “арсийцами”. Охватывала она, по всей вероятности, северо-западные окраинные земли древней Армении, т.е. гавары Спер, Арсеац пор, Кларджк, Шавшет, Ачара и Самцхе.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Լուսինե Մարգարի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,

Շիրակի պետական համալսարան,

E-mail: Vah1996@mail.ru

⁴⁶ ՀԺՊ, հ. 1, էջ 720, 836:

⁴⁷ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34, 40, 59, 73, 79, 81, 104, 106, 110 և կից քարտեզը:

ԱՆԵՑԻՆԵՐԻ ԳԱՂԹԸ ՂԴԻՄ ԵՎ ԴԼԱ ԹՎԱԳՐՈՒՄԸ*

Ղրիմի հայությունը խայտաբղետ էր իր ներքին կազմով՝ բաղկացած տարբեր ժամանակներում պատմական Հայաստանի տարբեր վայրերից թերակղզի թափանցած հայ գաղթականներից: Տարածված կարծիք կա առ այն, որ վերջիններիս մեջ առանձնակի տեղ ունեին անեցի վերաբնակները, որոնք Ղրիմ էին մուտք գործել XIV դարի 30-ականներին՝ տասնյակ հազարների հասնող թվաքանակով¹: Ընդ որում, անեցիները թերակղզի էին փոխադրվել Սարայից, որտեղ մի ժամանակ հաստատվել էին «հրաման առեալ ի թաթար խանէն»²: Այսուհանդերձ, XIV դարի 30-40-ականների բազմապիսի աղբյուրներից և ոչ մեկն այս գաղթին չի անդրադառնում, նույնիսկ ակնարկ չի պարունակում: Անհասկանալի է հատկապես ղրիմահայ գրիչների «ռությունը» նշված ժամանակաշրջանի ձեռագրային հիշատակարաններում, որոնք մեծ թվով մեզ են հասել³: Դիտարկվող հարցի կապակցությամբ մեր ունեցածը XVII դարավերջի երկու աղբյուրներ են, որ բերված են ստորև, և սերունդների հիշողությունը: Հիշողություն, որը Ղրիմից տեղահանված և 1779 թվին Դոնի ափերին հաստատված հայերին մինչ օրս էլ թույլ է տալիս ասել, թե իրենք անեցիների հետնորդներ են:

Ակնարկված երկու աղբյուրները, որոնք պատմում են անեցիների դեպի Սարայ, իսկ այնուհետև՝ Ղրիմ կատարած գաղթի մասին, վերաբերում են 1672 և 1690 թվերին: Առաջինի հեղինակը Մարտիրոս Ղրիմեցին է, որն այս մասին գրում է իր «Պատմութիւն Ղրիմայ յերկրի, արարեալ Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցոյ ոտանաւոր չափով» ստեղծագործության մեջ: Ընդ որում, Մարտիրոսը նշում է, որ իրենից առաջ չեն ունեցել պատմագիրներ, որոնք գրի առած լինեին անեցիների գաղթի պատմությունը, այդ իսկ պատճառով էլ ստիպված է շարադրել անցյալի «պարզ ու հայտնի» իրադարձությունները՝ հիմնվելով ղրիմահայոց մեջ սերնդեսերունդ փոխանցվող բանավոր գրույցների վրա:

Քանզի պատմագրոց չունիմք նախնական՝
Գրեալ վասն նորին պարզ եւ յայտնի բան,
Այլ անզիր գրուցաց յարմար եւ պատկան

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Բժշկեան Մ. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկականց՝ սերելոց ի նախնեաց Անի քաղաքին. Վենետիկ, 1830, էջ 335-342: Տէր-Աբրահամեան Յ. Պատմութիւն Խրիմու. Թեոդոսիա, 1865, մաս 1, էջ 97: Քուշներեան Ք. Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց. Վենետիկ, 1895, էջ 189:

² Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան. Ձեռագիր 7442, թ. 281:

³ Саргсян Т. Переселение армян из Аксарая в Крым и его датировка // Историческое наследие Крыма (ИНК), № 20. Симферополь, 2007, стр. 172-176.

Առեալ, կամիմ լինել նորա պատմաբան⁴:

Ըստ նույն Մարտիրոսի՝ անեցիները, թողնելով իրենց բնօրրանը, շարժվել են դեպի Ջուղա և Վան, իսկ մյուսներն էլ, անցնելով Կասպից ծովը, հաստատվել են Հաճի Թարխանի՝ ներկայիս Աստրախանի մերձակայքում.

Յագգքն նետողական ելեալք ապաստան,

Եւ ի կայսր նոցին՝ թաթարի մեծ խան

Զտեղի առեալ, մնան մերձ Հաճի Թարխան՝

Ախսարայ կոչեցեալ տեղին աննշան⁵:

Հաճի Թարխանին՝ ներկայիս Աստրախանին մոտ լինելու հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ խոսքը Բաթու խանի օրոք՝ XIII դարի կեսերին հիմնադրված Մարայ-Բաթուի կամ Հին Մարայի մասին է: Վերջինս գտնվելիս է եղել Վոլգայի ստորին հոսանքում և հանդիսացել Ոսկե Հորդայի առաջին մայրաքաղաքը (բնակչությունը՝ 75 000 մարդ): Սակայն Մարտիրոս Ղրիմեցու ժամանակներում այն արդեն ոչ միայն մայրաքաղաք չէր, այլև, իրոք, «աննշան» մի վայր էր:

Երկրորդ հեղինակը՝ գրիչ Դավիթը, խնդրո առարկա թեմային անդրադառնում է 1690 թվի իր ընդարձակ հիշատակարանում, որը զետեղել է իր իսկ ձեռքով նույն թվին ընդօրինակած Հայսմավուրքում: Եթե Մարտիրոսն անեցիների գաղթի պատճառը տեսնում է Բագրատունյաց մայրաքաղաքի աստիճանական անկման մեջ, ապա գրիչ Դավիթն այն դիտարկում է որպես հետևանք 1236 թվին Չարմաղանի հրոսակների՝ Անիում գործած վայրագությունների և ավերածությունների. «բագումք թողով զոսկեգոծ պալատս և զծաղկավետ դաշտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպէս փախստական ի Յախսարայ, որ է ի մէջ Հաշտարխանու և Ղազանու⁶. ոմանք գնացին ի Ճուղայ, ոմանք ի Վան, և յայլք ի Միս»⁷: Այնուհետև գրիչ Դավիթը շարունակում է. «Եւ որք Յախսարայ եկին հրաման առեալ ի թաթար խանէն, բնակեցան անդ ոչ բագում ժամանակս...»⁸:

Փաստորեն, բերված աղբյուրների հեղինակները համակարծիք են, որ անեցիներն իրենց հոծար կամքով են դիմել խանին և, ստանալով նրա հավանությունը, տեղափոխվել Մարայ: Նկատենք, որ երկու հեղինակներն էլ գաղթականության ժամանան վայրի անվանումը հնչեցնում են որպես «Յախսարայ» (Աք-Մարայ, Մպիտակ պալատ, Մպիտակ քաղաք), որը նույն Մարայն է: Մենք նախընտրում ենք վերջին տարբերակը, քանի որ հենց այն է կիրառվում աղբյուրներում:

Մարայում հայերն առնվազն երկու եկեղեցի են ունեցել՝ օծված հանուն Սբ Աստվածածնի և Սուրբ Նշանի: Հայտնի է, որ այս եկեղեցիները 1319 թվին գործելիս են եղել⁹: Ավելին՝ հայերն այստեղ եկեղեցական թեմ ու արքեպիսկոպոս են ունե-

⁴ Մարտիրոսյան Ա., Մարտիրոս Ղրիմեցի, Եր., 1958, էջ 143:

⁵ Նույն տեղում, էջ 145:

⁶ Ներկայումս՝ Կազան:

⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան. Ձեռագիր 7442, թ. 281:

⁸ Նույնը:

⁹ Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, կազմեց՝ Հ. Հակովբոս Վ. Տաշեան. Վիեննա, 1895, էջ 885 (Ձեռագիր 434, թ. 441 ա): ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 155-156:

ցել, ինչի մասին վկայում են և՛ հայկական աղբյուրները, և՛ Կաթոլիկ եկեղեցու հովվապետի ուղերձները: Այսպես, Հռոմի պապ Հովհան XXII-ը 1321 թվի մի կոնդակում դիմում է «Սարայի եպիսկոպոս Ստեփանոսին» (Stephano, episcopo Saraicensi)¹⁰: Հաջորդ կոնդակում, որը նույնպես վերաբերում է 1321 թվին, նա արդեն դիմում է «Սարայի թեմի սիրելի հայրդիներին» (Dilectis filiis populo Armenorum per Saraicensem civitatem et dioecesim constitutis)՝ պահանջելով ետ ընդունել հալածյալ եպիսկոպոս Ստեփանոսին և վերադարձնել նրա ունեցվածքը¹¹: Հավանորեն այս եպիսկոպոսն իր կաթոլիկամետ հայացքներով գերադասելի էր պապության համար: Նույն պապի երրորդ կոնդակը՝ կազմված 1329 թվին, հասցեագրված էր «սիրելի եղբորն ի Քրիստոս՝ Պողոսին՝ հայոց եպիսկոպոսին Ուզբեկի թաթարական տիրույթներում» (Dilecto in Christo fratris Paulo episcopo Armenorum in imperio Tartarorum Iusbech): Այն նպատակ ուներ հիշեցնելու Պողոսին կաթոլիկություն ընդունած լինելու և Կաթոլիկ եկեղեցուն հավատարմության երդում տված լինելու մասին¹²:

Չխորանալով այս թեմայի մեջ՝ նշենք, որ հայ հոգևորականության այստեսակ ընկրկումը կաթոլիկ հայրերի առջև պայմանավորված էր Սսի կաթողիկոսության պաշտոնական կեցվածքով, 1316 թվի Ադանայի ժողովի ամրագրած Հայ եկեղեցին Կաթոլիկ եկեղեցուն ենթարկելու որոշումով: Ինչպես գիտենք, որոշումը վճռականորեն մերժվեց ինչպես հայ ժողովրդի կողմից, այնպես էլ հոգևորականության զգալի մասի: Այսուհանդերձ, կաթոլիկ հայրերը մի քանի տասնամյակ շարունակ հույս էին տածում էական հաջողությունների հասնել հայկական հեռավոր գաղթօջախներում:

Պողոս արքեպիսկոպոսին հիշատակում են նաև հայկական աղբյուրները: Այսպես, 1319 թ. մի հիշատակարանում, որը զետեղված է նույն թվականին Սարայում ընթրփինակված Ավետարանում, ասվում է. «... ողորմութեամբն Աստուծոյ սկսայ եւ շնորհաւքն Քրիստոսի կատարեցի ի խնդրոյ... արքեպիսկոպոսի Պողոսի եւ քաջ հովուապետի...: Եւ գրեցաւ սա ի թուաբերութեանս Հայկազան տումարիս ՉԿԸ (1319)... Յամս աստուածապատիւ եւ հոգևոր տեսան Ստեփանոսի՝ Արևելեան կաթողիկոսի Հայոց եւ տեսան Կոստանդեա՝ Կիլիկեցոյ կաթողիկոսի, եւ ի թագաւորութեանս Հայոց Աւշնի: ... Բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքիս Սարայ, որ է ի հիւսիսոյ կողմ, մերձ առ ծովուն Կասփիականի, ընդ որում շուրջ պատէ զնովսաւ մեծ և հզոր գետն Էթիլ¹³, եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսակիր սուրբ Նշանին»¹⁴:

Ուշագրավ է, որ գրիչն սկզբում հիշատակում է Արևելյան, կամ Աղվանի, կաթողիկոսության առաջնորդին և նոր միայն Կիլիկիո կաթողիկոսին: Այս հան-

¹⁰ *Acta Iohannis PP. XXII (1317–1334)//Pontificia Commissio ad redigendum codicem iuris canonici orientalis (CICO). Fontes, series III, vol. VII, t. 2. Città del Vaticano, 1952, nr. 50.*

¹¹ *Նույն տեղում, № 51:*

¹² *Նույն տեղում, № 112:*

¹³ *Վոլգայի հին անվանումն է:*

¹⁴ *Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վիեննա, հ. Ա, էջ 885 (Ձեռագիր 434, թ. 441 ա): ԲՂ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 155-156:*

գամանքը երկու բացատրություն կարող է ունենալ: Նախ, հավանորեն, Հյուսիսային Կասպիայի հայկական գաղթօջախների հոգևորականությունն առավել սերտ կապեր է ունեցել Ադվանքի կաթողիկոսության հետ, որը զուտ աշխարհագրական առումով ավելի մոտ էր: Եվ երկրորդ, հնարավոր է, Ադվանքի կաթողիկոսը, լինելով Հայ եկեղեցու ոգուն և ծեսին հավատարիմ, նախապատվելի էր գրչի համար:

Գասկածից դուրս է, որ Սարայ տեղափոխված հայերը քաղաքային բնակչության ներկայացուցիչներ են եղել՝ հիմնականում անեցիներ: Նրանք այս հողում իրենց ազատ են զգացել, արագ ստեղծել են գաղթօջախի ներքին կառավարման աշխարհիկ և եկեղեցական կառուցվածքները, հեշտությամբ ներդրվել տեղի առևտրատնտեսական հարաբերությունների մեջ: Գաղթի ստույգ ժամանակը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ, այն պարբերական բնույթ է կրել, և հայ վերաբնակների փոքր խմբեր սկսել են լքել իրենց բնօրրանն արդեն XIII դ. 40-ականներից, այսինքն՝ մոնղոլների կողմից Անի, Դվին, Կարս, Կարին քաղաքների ավերումից անմիջապես հետո: Աստիճանաբար, երբ առևտրական ուղիների և առևտրաարհեստավորական փոխգործակցության համակարգի փլուզումն իրեն զգացնել է տվել ողջ սրությամբ, արտագաղթն ավելի մեծ թափ է ստացել: Ի դեպ, հայ առևտրական խավին, որ քաղաքային բնակչության նկատելի մասն էր կազմում, հյուսիսկասպյան հողերը լավ ծանոթ էին: Հիշենք միայն Անիի թագավորության շրջանը, երբ հայկական քաղաքները միջազգային առևտրի (Մետաքսի ճանապարհի) կարևորագույն օղակներից էին՝ թե՛ անհրաժեշտ շուկաներ և ենթակառուցվածքներ տրամադրելու, թե՛ հայ վաճառական դասի մասնակցության առումով:

Այսպիսով, անեցիների գաղթը դեպի Սարայ ստիպողական չի եղել. այն արդյունք էր հյուսիսային մոնղոլական տիրույթների տիրակալի՝ Ոսկե Հորդայի խանի հետ համաձայնության: Մի կողմից՝ հայ քաղաքային բնակչությանը պատուհասած աղետն էր և նախկին իրավիճակը վերականգնելու անհնարինության գիտակցումը, մյուս կողմից՝ Ոսկե Հորդայի տիրակալների աճող ցանկությունը՝ առավել գործուն և շահութաբեր դարձնելու սայրանքափոխանակությունը իրենց տարածքներում: Այս խնդրում, կարելի է մտածել, նրանք հեռանկարային էին գնահատում հայ առևտրաարհեստավորական դասի ներկայությունը՝ տալով նրան Հայաստանից իր հետ նյութական արժեքներ բերելու, մայրաքաղաքում հաստատվելու և ազատ գործելու հնարավորություն: Հարկ է նշել, որ ժամանակային առումով անեցիների գաղթը համընկել է այդ մայրաքաղաքի կայացմանը: Հետևաբար, նրանց մուտքը կարող էր խրախուսվել նաև քաղաքաշինական գիտելիքներ, հմտություններ ու մեծ փորձ ունենալու հաշվարկով: Չի բացառվում, որ մասամբ հենց անեցի վերաբնակների ուժերով են կառուցվել Սարայի ջրամատակարարման և կոյուղու համակարգերը. այն, ինչ քիչ ավելի ուշ տեղի ունեցավ Կաֆայում՝ ներկայիս Թեոդոսիայում:

Մարտիրոս Դրիմեցու և Դավիթ գրչի պնդմամբ, թաթարների հետ հետագայում ունեցած անհաշտությունն է եղել պատճառը, որ երբեմնի անեցիները թողել են Սարայը և շարժվել դեպի Դրիմ: Այդ նպատակով նրանք վաղօրոք պայմանավորվածություն են ձեռք բերել ջենովացիների հետ, որոնք XIII դարի վերջին քա-

ռորդին, թաթար-մոնղոլներից վարձակալելով Կաֆան, իրենց առևտրական գաղութն էին հիմնել այնտեղ: Գաղութ, որը XV դարի կեսին արդեն զբաղեցնում էր թերակղզու գրեթե ողջ ափամերձ գոտին՝ Կերչից մինչև Բալակլավա, մասնաճյուղեր ուներ հյուսիս-սևծովյան բազմաթիվ բնակավայրերում՝ որպես կենտրոն ունենալով նույն Կաֆան.

Եւ անդ ոչ ախորժեն մնալ սեփեական,
 Զգուեալ դժնաբարու ազգաց հոնական,
 Ապա դեսպանս յդեն առ լատին իշխան,
 Որ էր տէր Կաֆայու նախնի բերթին այն:
 Առ որ ուխտ հաստատեն եւ դաշն ամրական,
 Չուեալ Ախսարայու եւ գան ի Կաֆայն.
 Կէսք ի Ղրիմ քաղաք¹⁵ ախորժեալ մնան,
 Միրելով զքաղցրայօղ լեառնամերձ վայր այն¹⁶:

Երկրորդ հեղինակը՝ գրիչ Դավիթը, այս կապակցությամբ գրում է. «Եւ որք Յախսարայ եկին հրաման առեալ ի թաթար խանէն, բնակեցան անդ ոչ բազում ժամանակս, որ էր զայս չխը [= 1299] թուին. վասն զի մինչ նեղեալ եղեն ի թաթարացն՝ դեսպան յդեն ի Ղրիմ առ իշխանն ջինիզաց, որ բնակէր ի մէջ Տոանկիսարին¹⁷ Ֆեօօսիու, ուխտ դնեն ընդ իշխանին Ֆեօօսիու. ելեալ ի Յախսարայէ իշխանք, և ազնիք, և հասարակ ժողովուրդք՝ վառելք զինու պատերազմելով ընդ թաթարացն, ճեխքեալ գան ի Ղրիմ և բնակին ի Ֆեօօսիա, ի Կազարաթ¹⁸, և ի Սուրխաթ¹⁹, և ի կողմանս սոցա. այս եղև չիթ [= 1330] թուին»²⁰:

Այսուհանդերձ, թաթարների հետ հայերի ունեցած անհաշտության մասին տեղեկությունը որևէ կերպ չի հաստատվում: Կարծում ենք՝ սա ուշ շրջանում՝ Ղրիմի թուրք-թաթարական վարչակարգի քրիստոնեահալած պահվածքի ազդեցության տակ ձևավորված տեսակետ է և բուն իրողության հետ շատ մակերեսային առնչություն ունի: Հորդայի խաները մահմեդականություն ընդունեցին XIII դարի 60-ականներին, և այն նոր էր արմատավորվում երկրում: Այնպես որ կրոնական խտրականությունը չէր, որ դուրս էր ուղղորդում հայերին: Վերջիններիս Սարայից Ղրիմ տեղափոխվելը տնտեսական նպատակ էր հետապնդում: Հարցն այն է, որ XIII դարի վերջից արդեն փոխվել էր իրավիճակը. Մև ծովի հյուսիսային ափերին սկսել էին հաստատվել իտալացիները՝ առաջին հերթին ջենովացիները: Մա մի շրջան էր, երբ Մերձավոր Արևելքում մեկը մյուսի հետևից փլուզվում էին խաչակրաց պետությունները, աստիճանաբար դիրքերն էր զիջում նաև Կիլիկիայի հայոց թագավորությունը: Միջազգային ապրանքափոխանակության այս կարևոր օղակը դուրս էր գալիս խաղից, ինչը թելադրում էր նոր, առավել բարենպաստ

¹⁵ Նույն Սուրխաթն է՝ ներկայիս Հին Ղրիմ քաղաքը:

¹⁶ Մարտիրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 145-146:

¹⁷ Ի նկատի ունի քաղաքի միջնաբերդը:

¹⁸ Հին Ղրիմ քաղաքի մեծակայքում: Ներկայումս գոյություն չունի:

¹⁹ Ներկայիս Հին Ղրիմ քաղաքը:

²⁰ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան. Ձեռագիր 7442, թ. 281:

ուղիների անհրաժեշտություն: Մրա արդյունքում էր հենց, որ կտրուկ աճեց հյուսիս-սևծովյան նավահանգիստների դերը:

Հայերն իտալացիների հետ առևտրական համագործակցության մեծ ու երկարամյա փորձ ունեին: Բավական է հիշել վերջիններիս արտոնյալ ներկայությունն ու արդյունավետ գործունեությունը կիլիկյան նավահանգիստներում: Այս համագործակցությունը շարունակելու, մեծ առևտրին լիարյուն հաղորդակից լինելու, դրան նոր շունչ ու թափ հաղորդելու ձգտումն էր, որ իտալացիներին հիշեցրեց հայերի մասին և Մարայից բերեց Ղրիմ: Եվ ուրեմն, պետք է ենթադրել, որ ընդհակառակը՝ հայ և իտալացի առևտրականների համագործակցությունը Ղրիմում պիտի որ նույնիսկ խրախուսվեր թաթարների կողմից: Նկատենք, որ Մարայի հայերը չլքեցին Ոսկե Հորդայի տարածքը և թերակղզի գալով հաստատվեցին ոչ միայն ջենովացիների վերահսկողության տակ գտնվող տարածքներում, այլև բուն թաթարական միջավայրում (Սուրխաթ-Ղրիմ, Կազարաթ, դրանց միջև ընկած գյուղեր):

Ըստ գրիչ Դավթի՝ Մարայի հայերի մուտքը Ղրիմ տեղի է ունեցել 1330 թվին, սակայն Վոլգայի ափերը նրանք թողել են դեռևս 1299-ին: Մարտիրոսն անեցիների գաղթը Ղրիմ վերագրում է հայոց «եօթն հարիւր ութսուն», այսինքն՝ 1331 թվին և նշում, որ նրանց մի մասը թերակղզուց անցավ ոչ միայն Լեհաստան, այլև Բեսարաբիա, ըստ իրեն՝ Ախքերման, որ ներկայիս Բելգորոդ-Չնեստրովսկն է Ուկրաինայում²¹: Նման տեղաշարժը ևս պատահական չէր, այլ թելադրված Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ նոր առևտրատնտեսական կապեր հաստատելու հնարավորություններով: Գաղտնիք չէ, որ «Մետաքսի ճանապարհ» ասվածը ապրանքափոխանակության առեղծվածի ու ինքնակառավարվող մի համակարգ էր՝ բաղկացած խոշոր առևտրական նավահանգիստներից, քաղաք-հանգույցներից, տարանցիկ ճանապարհներից, ուղիների և ենթաուղիների բարդ ցանցից: Այն դարեր շարունակ գործող կենդանի օրգանիզմ էր՝ մեծապես կախված աշխարհաքաղաքական իրավիճակից: Վերջինիս նվազագույն փոփոխությունն անգամ անդրադառնում էր համակարգի կառուցվածքի և պահանջների վրա:

Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը մեծ վերապահումով էր վերաբերվում Մարտիրոսի և Դավթի տեղեկություններին, սակայն ընդունում էր որոշակի պատմական հենքի առկայությունը դրանց տակ²²: Ակադեմիկոս Վ. Միքայելյանը, քննադատական մոտեցում հանդես բերելով հանդերձ, հավատ էր տածում այս աղբյուրների նկատմամբ²³: Ա. Ալպոյաճյանն անվերապահորեն վստահում էր դրանց և գտնում նույնիսկ, որ 1299 թվին Ախսարայից դուրս եկած հայերը մի որոշ ժամանակ (30 տարի) հանգրվանել են Տանայիսում՝ Ազախում: Որպես վկայություն՝ նա նշում էր այդ շրջանում հայկական եկեղեցու առկայությունն այնտեղ²⁴:

²¹ Մարտիրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 146:

²² Խաչիկյան Լ., Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, Բանբեր Մատենադարանի, № 13, 1980, էջ 26:

²³ Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն. Եր., 1964, էջ 68-130:

²⁴ Ալպոյաճեան Ա., Պատմություն հայ գաղթականության, Կ. Բ, Գահիրե, 1955, էջ 363:

Ազախի կամ Տանայիսի հայկական եկեղեցին՝ Մբ Գրիգորը, հիշատակում են ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրները՝ 1339, 1341, 1356 թվերին²⁵, բայց որևէ հիմք չկա ենթադրելու, թե Սարայի հայերը մինչև Ղրիմ մտնելը 30 տարի սպասել են այնտեղ: Առավել տրամաբանական է մտածել, որ հայերը գաղթել են ոչ թե մեկ ամբողջական խմբով և միանգամից, այլ փուլերով, և այս կերպ իրագործված տեղափոխությունը տևել է մի որոշ ժամանակ: Ավելին, Սարայի ողջ հայությունը չէ, որ տեղափոխվեց Ղրիմ: Շատերը մնացին տեղում և մասամբ շարժվեցին Վոլգայի հոսանքով վեր՝ դեպի Նոր Սարայ (Սարայ Բերկե, Սարայ ալ-Ջեդիդ), որը մայրաքաղաք հռչակվեց Ուզբեկ խանի օրոք (1313-1341 թվեր): Սա արդեն գտնվում էր դեպի Արևելք տանող առևտրական նոր ուղու վրա, որի կազմում մեծ էր Սև և Ազովի ծովերով կատարվող ապրանքափոխանակության դերը:

Այն, որ հայերն իրենց տեղափոխության հարցը համաձայնեցրել են ոչ թե թաթարների, այլ ջենովացիների հետ, խոսում է այս գործում վերջիններիս նախաձեռնող լինելու մասին: Սակայն նկատենք, որ այդ համաձայնությունը ձեռք է բերվել 1299 թվին, երբ Թոխթա խանի և բեկլերբեկ Նոդայի հակամարտությունն իր կիզակետում էր: Հնարավոր է, որ սկզբնական շրջանում հենց թաթարական վերնախավում տիրող այս խառնաշփոթն է հայերին բերել Ղրիմ գաղթելու որոշմանը: Ծրագիր, որի ընթացքը կասեցվեց՝ թերակղզում թաթարների և ջենովացիների միջև 1299 և 1308 թվերին ծագած խժոժությունների, ինչպես նաև, հավանական է, Թոխտա խանի անհամաձայնության պատճառով: Ավելի ուշ այն տեղավորվեց Ուզբեկ խանի տնտեսական քաղաքականության մեջ և անարգել իրագործվեց:

Ինչ վերաբերում է Ղրիմ տեղափոխվելու ճանապարհին թաթարների հետ հայերի ունեցած զինված բախմանը, ապա դրա մասին չի կարելի միանշանակ դատել: Կրկնենք, որ Սարայի հայերը չլքեցին Ոսկե Հորդայի սահմանները: Թերակղզի գալով՝ նրանք իրենց հետ անարգել բերեցին հսկայական կարողություն և հաստատվեցին ինչպես ջենովացիների վերահսկողության տակ գտնվող տարածքներում, այնպես էլ բուն թաթարական միջավայրում: Ուրեմն, որևէ զինված ձեռքումի մասին խոսք լինել չի կարող: Միննույն ժամանակ չի կարելի բացառել թաթարների հետ էպիզոդիկ բնույթի բախումը Նոդայի դրիմյան արշավանքի շրջանում՝ 1299 թվին:

Միանալով հնուց ի վեր թերակղզում բնակվող իրենց ազգակիցներին, ինչպես նաև հայրենակիցների անընդհատ ժամանող նորանոր խմբերին՝ Սարայի հայերը ոչ միայն ներգրավվեցին տնտեսական եռուն հարաբերությունների ոլորտ, այլև աննախադեպ չափերի հասնող շինարարական գործունեություն ծավալեցին Ղրիմում: Այս կապակցությամբ Մարտիրոս Ղրիմեցին գրում է.

Իսկ այնք, որ ի Կաֆայ կացին սեփեական

Եւ ի Ղրիմ քաղաք Սուլխաթ կոչական,

²⁵ ՏՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 321, 328-329, 330: Древние акты Константинопольского патриархата, относящиеся к Новороссийскому краю // Записки Одесского общества любителей истории и древностей (ЗООИД), т. VI. Одесса, 1867, стр. 449.

Եկեղեցովք լցին զվայրսն ամենայն
 Փռխան եկեղեացն, որք ի Շիրակվան:
 Հոյակապ վանորայք եւ կրօնաստան,
 Ի յայրս եւ ի լերինս սրբոց կայարան,
 Բագումք ի նոցանէ մինչեւ ցայսօր կան,
 Որպէս եւ փառագարդ վանքն Սուրբ Նշան²⁶:

Դավիթ գրիչն էլ հավելում է. «Յայնժամ զօրացաք մեք, և բազմացաք, և շինեցաք զգիւղս և զգաւառս, իշխանք և ազնուականք ի Ղարապազարէն²⁷ սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Ֆեոդոսիա ի լերինս և ի դաշտս լի արարին վանօրէիք և եկեղեցոք: Եւ շինեցաք տունք հարիւր հազար, և զեկեղեցիս հազար...»²⁸:

Ասվածը չափազանցություն չէ, և դրիմահայոց շինարարական ժառանգության փրկված ու մեր օրերը հասած նմուշները դրա վառ ապացույցն են: Ուրեմն, մեկ անգամ ևս շեշտենք. խոշոր ներդրումները, որ կատարեցին երբեմնի անեցիները Ղրիմ տեղափոխվելուց անմիջապես հետո, անհերքելիորեն վկայում են Սարայում նրանց ազատ գործելու, արհեստներով և առևտրով զբաղվելու, կարողություն ստեղծելու, ինչպես նաև այդ կարողությունն անարգել Ղրիմ բերելու հնարավորության մասին:

Այլ հարց է, թե Սարայի հայերը ե՞րբ թափանցեցին Ղրիմ: Չի բացառվում առաջին խմբի մուտքը թերակղզի արդեն 1299 թվին. այն չի հակասում նաև զինված ընդհարման պլոմեին: Սակայն հիմնական զանգվածն, անկասկած, զաղթեց ավելի ուշ: Այս կապակցությամբ հիշատակված 1330 (1331) թիվը ժամանակի հայկական աղբյուրների կողմից չի հաստատվում: Ինչ վերաբերում է ջենովական աղբյուրներին, ապա դրանք կողմնակիորեն, բայց հստակ, ցույց են տալիս, որ Սարայի հայերի հիմնական մասը Ղրիմ է տեղափոխվել Ուզբեկ խանի գահակալության սկզբում: Այսպես, Կաֆայի 1316 թվի կանոնադրությունը նախատեսում էր վարձակալության տալ քաղաքին հարող տարածքները: Անձեռնմխելի էին մնում միայն այն հողերը, որոնց վրա «հնուց ի վեր» գտնվում էին հայկական և հունական եկեղեցիները: Առանձին կետով շեշտվում էր այդ տարածքներում հայկական երեք եկեղեցիների գոյության փաստը²⁹: Այսպիսով, արդեն 1316 թվին ջենովացիները պայմաններ և իրավական դաշտ էին ստեղծում Կաֆան ընդարձակելու և այնտեղ մեծ թվով նոր վերաբնակներ տեղավորելու համար: Նույն կանոնադրությունը արգելում էր նաև փոխել «հայերի եպիսկոպոսի» կառուցած ջրմուղի ուղղությունը: Ակնհայտ է, որ ջրմուղի կառուցումը հին պատմություն չի ունեցել, հակառակ դեպքում կառուցողի ով լինելը չէր շեշտվի: Պարզ է նաև, որ ջրմուղն անցնելիս է եղել այն տարածքներով, որոնք ենթակա էին վարձակալման: Իսկ ո՞ւմ համար պիտի «հայերի եպիսկոպոսը» ջրմուղ կառուցեր, եթե ոչ հայերի:

²⁶ Մարտիրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 146: Մարտիրոսը նկատի ունի դրիմահայոց եպիսկոպոսանիստ կենտրոնը՝ Սուրբ Խաչ վանքը, որը մինչ օրս էլ գործում է:

²⁷ Ղարաաուբազար, ներկայումս՝ Բելոգորսկ:

²⁸ Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան. Չեռագիր 7442, թ. 281:

²⁹ Саргсян Т. О численности армянских духовных центров Кафы–Феодосии // ИНК, № 21. Симферополь, 2008, стр. 22–25.

Ահա տարածքների վարձակալության և ջրմուղի գոյության փաստերն ինքնին վկայում են Կաֆայում հաստատված և հաստատվող մեծաթիվ հայության մասին³⁰:

Նույնի մասին է վկայում նաև Հռոմի պապի 1318 թվի ուղերձը՝ հասցեագրված կաֆահայերի եպիսկոպոսին: Պապը հիշեցնում է կաթոլիկ ծեսին միանալու վերջինիս տված խոստման մասին և հույս հայտնում, որ նա իր հոտի հետ մեկտեղ կկատարի այն³¹: Ենթադրելի է, որ Կաֆայում հաստատվել ցանկացող սարայցի հայերին պարտադրվել է կաթոլիկ ծեսը, ինչը նրանք չեն շտապել ընդունել: Նման պարտադրանքի ակունքները պետք է փնտրել Սարայում, որտեղ կաթոլիկ եպիսկոպոսությունը հիմնվել էր 1315 թվին:

Այսպիսով, XIV դարի 30-40-ականներից մեզ հասած աղբյուրների հարուստ հավաքածուն չի անդրադառնում անեցիների՝ Սարայից Ղրիմ կատարած գաղթին, քանի որ այդ իրադարձությունից արդեն անցել էր տասնհինգ-քսան տարի, և այն կորցրել էր իր հրատապությունը:

Ինչպես արդեն ասվեց, Սարայի հայերի մյուս մասն էլ բարձրացավ Վոլգայի հոսանքով վեր՝ դեպի նոր մայրաքաղաք, որն արևելք բացվող դարպաս էր: Նոր Սարայում և դրան հարակից վայրերում հայերի ներկայությունը հաստատող բազմաթիվ փաստեր կան: Դրանց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում Կազանում և դրան մերձակա Բուլղար վայրում հայտնաբերված հայերեն տապանագրերը, որոնց մասին հիշատակում է Գաբրիել Այվազովսկին՝ հենվելով Ն. Կարամզինի տեղեկության վրա³²: Այս եպիտաֆիաներից չորսի թվագրերը ճշտել է Մ. Մենտ-Սարտինը՝ ընթերցելով դրանք որպես 1308, 1321, 1335, 1537 թվականներ³³:

Բուլղարում հայկական տապանաքարեր են հայտնաբերվել Սբ Աստվածածնի Ննջման եկեղեցում, «Հունական պալատ» կոչված շինության տարածքում, Ուսպենսկոյե-Բուլղարի գյուղի տարածքում: Սբ Աստվածածնի Ննջման եկեղեցում հայկական տապանաքարերն օգտագործված են եղել հիմքերում, հատակի սալերի մեջ և պատերի շարի կազմում, ինչը այդ շինության հայկական անցյալի վկայությունն է³⁴: «Հունական պալատ» կոչված կառույցի շուրջ տարածվող հայկական գերեզմանատունը նույնպես փաստում է, որ այստեղ ժամանակին հայկական եկեղեցի է եղել³⁵: Այս գերեզմանատան տապանաքարերի մի զգալի մասը Ուսպենսկոյե-Բուլղարի գյուղի բնակիչներն օգտագործել են իրենց տները կառուցելիս³⁶: Կազանում ևս հայերն առանձին թաղամաս ու եկեղեցի են ունեցել՝ շրջա-

³⁰ Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 66-67:

³¹ *Acta Iohannis PP. XXII (1317-1334)/Pontificia Commissio ad redigendum codicem iuris canonici orientalis/ed. A. L. Tăutu. Fontes, series III, vol. VII, t. 2. Città del Vaticano, 1952, nr. 10, 49.*

³² Айвазовский Г. Заметка о происхождении новороссийских армян // ЗООИД, т. VI, стр. 552.

³³ *Saint-Martin M. Note sur les inscriptions arméniennes de Bulgari / Bulletin de l'Académie des Sciences de St. Pétersbourg, III, 1838, p. 18-21.*

³⁴ Шпилевский С. Древние города и другие болгарско-татарские памятники в Казанской губернии. Казань, 1877, стр. 247.

³⁵ Шпилевский С., նշվ. աշխ., էջ 573:

³⁶ Миллер Б. Об армянских надписях в Болгарах и Казани // Известия Российской академии истории материальной культуры. Ленинград, 1925, стр. 75.

պատված գերեզմանոցով: Հայկական հետքն ակնհայտորեն երևում է նաև Կիրելյույե բնակավայրում, Վյատկա և Շաբանկի գետերի միախառնման տեղում, ինչպես և այլուր³⁷: Հանրագումարի բերելով թվարկված տեղեկությունները՝ Բ. Միլլերը եզրակացրել է, որ այս հայերը եղել են այն հայ առևտրականների գործի շարունակողները, որոնք ժամանակին առնչվել են խազարների հետ և զբաղվել ամենաթանկարժեք ապրանքների առևտրով, ինչպիսին, օրինակ, մետաքսն էր: Ըստ նրա, մետաքսի առևտուրը դարեր շարունակ կենտրոնացած է եղել հայերի ձեռքում և պատահական չէ, որ չուվաշներն այն կոչում են «երմեն պուրսան» (հայկական մետաքս)³⁸:

Այսպիսով, XIII դարի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհից դուրս եկած քաղաքային բնակչության հոծ զանգվածները հաստատվեցին Կասպից և Մև ծովերի հյուսիսային ափերին՝ աստիճանաբար տարածվելով դեպի հյուսիս և արևմուտք: Նրանք հզոր, քաղաքակրթական նշանակության ներուժ էին կրում իրենց մեջ՝ շատ ավելի զորեղ, քան իրենց նախորդած և հաջորդած հայ տարագիրների խմբերը: Ներուժ, որը, ցավոք, չծառայեց իրեն ձևավորած ու սնած բնօրրանին, այլ դրվեց ի նպաստ օտարի՝ մի քանի դար շարունակ շլացնելով իր փայլով:

ПЕРЕСЕЛЕНИЕ ЖИТЕЛЕЙ АНИ В КРЫМ И ЕГО ДАТИРОВКА

___ *Резюме* ___

___ *Т. Саргсян* ___

Есть распространенное мнение о том, что в 30-х годах XIV века произошла масштабная миграция бывших жителей Ани, столицы Багратидской Армении, в Крым. Причем, переселенцы проникли на полуостров из Сарая – столицы Золотой Орды, где, в свою очередь, обосновались в 50-х годах XIII столетия «с позволения татарского хана». Однако источники 30-40-х годов XIV века не отмечают данные события.

Наиболее ранние сообщения о переселении жителей Ани в Сарай, а впоследствии в Крым, относятся к 1672 и 1690 годам. Первое содержится в поэме «История страны Крымской, составленная Мартиросом Крымцем (Крымским)», а второе – в колофоне 1690 года, написанном писцом Давидом. Колофон помещен в Житийный сборник (Синаксарь), скопированном Давидом в том же 1690 году. Внимания заслуживает сообщение Мартироса о том, что до него не было летописцев, записавших историю переселения армян из Ани в Сарай, а далее – в Крым, поэтому он вынужден описать эти «известные всем» события, основываясь на устных рассказах, передаваемых из поколения в поколение.

Анализируя сообщения Мартироса и Давида, равно как и сведения генуэзских источников, приходим к следующим выводам: 1. Армяне, переселившиеся в Сарай, представляли городское население (большой частью из Ани), которое, пос-

³⁷ Миллер Б., *նշվ. աշխ.*, էջ 76-77, 80:

³⁸ Նույն տեղում, էջ 79:

ле разрушения монголами городов и городских инфраструктур в Армении, искало новые места для поселения. 2. Переселение армянского городского населения в Северный Прикаспий приветствовалось ордынской администрацией, о чем свидетельствуют предоставленные ему широкие возможности. 3. Переселение армян из Сарая в Крым было обусловлено появлением итальянских (в частности генуэзских) факторий на севере Черного моря и повышением роли крымских городов в международной торговле. Оно было выгодно как армянам и итальянцам, так и татаро-монголам. 4. Основная масса армян переселилась из Сарая в Крым в начале правления хана Узбека – в 1313-1316 годах. 5. Присоединившись к издавна проживавшим в Крыму своим соотечественникам, армяне Сарая внесли значительный вклад в экономическое и культурное развитие региона.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մարգարյան Տաթևիկ Էդիկի – պ.գ.թ., Ղրիմագիտության և Ղրիմի Հանրապետության մշակութային ժառանգության պահպանության գիտահետազոտական կենտրոն,
E-mail: statevik@mail.ru*

*Татьяна НЕВСКАЯ,
Аишен АКОБЯН*

***РОЛЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В ЭКОНОМИЧЕСКОМ
И ПОЛИТИЧЕСКОМ РАЗВИТИИ СЕВЕРНОГО КAVKAZA
В XVIII –НАЧАЛЕ XX вв. ****

Территория Северного Кавказа на протяжении столетий была полиэтничной и многоконфессиональной. Миграции армянского населения с территории исторической Армении впервые начались в VIII в. и продолжались в последующие столетия. Сниматься со своих мест армян вынуждали различные причины – войны, природные катаклизмы, нашествия кочевников, экономическая ситуация.

После вхождения территории Армении в состав Российской империи, одним из направлений армянской миграции стал Северный Кавказ. Переселение армян на Северный Кавказ происходило преимущественно в течение XVIII – первой четверти XIX в. Однако первые упоминания об армянских переселенцах встречаются в адыгских землях еще в XIII в.¹ Армянские купцы, начиная с XVI в., играли большую роль в экономических связях России и Северного Кавказа. Они, в первую очередь, были заинтересованы в закреплении России на этой территории. Экспансия Османской Турции на Южный Кавказ, усилившаяся в последние десятилетия XVI в., и особенно появление турецкого флота на Каспийском море нарушало установившиеся торговые отношения армянских купцов с Астраханью. Турки оккупировали прикаспийские города, население которых терпело «от турецких людей утеснение и обиду великую». Русское правительство получило донесение, что «арменя и бусурманя, в тех городах жительство люди, говорят и жадают все, чтоб им бытии за... царем и великим князем Федором Ивановичем...», так как тогда им «во все земли торги бы отворилися невозбранно».²

С первой четверти до конца XVIII в. армяне переселялись главным образом из Ирана в бассейн Терека. Российское правительство поощряло армянских купцов, способствовавших развитию торговли в крае, привлекало их для развития новых территорий. Так, Петр I, стремясь развить на Тереке шелководство, дал большие привилегии армянскому купцу Сафору Васильеву. При основании г. Ставрополя в 1777 г. были приглашены 30 семей армян для организации торговли и снабжения крепостей Кавказских укреплённых линий. В середине XIX в. в Ставропольской губернии имелось 2 армянских селения: Святой Крест Пятигорского уезда и Касаева Яма Кизляро-Моздокского уезда, где проживало 3772 человека. Привилегии армянскому населению проявлялись также в том, что их селения были навсегда освобождены от постоя войск. Проживали армяне также в

* Статья в качестве доклада была представлена на международной научной конференции «Историко-культурное наследие Ширака: актуальные вопросы арменоведения», состоявшейся 24-25 октября 2016 г. в Гюмри.

¹ Волкова Н. О расселении армян на Северном Кавказе до начала XX в. // «Историко-филологический журнал», 1966, № 3 (34). С. 257.

² Веселовский Н. Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией., т.1, СПб, 1890. С. 105, 284, 449.

Сосоплинской станице. Кроме того, в городах проживало 9229 армян.³ Занималось армянское население мелочной и оптовой торговлей, снабжая города, станицы и меновые дворы галантерейным, красным и колониальным товаром. В Кизляре армяне занимались садоводством, виноградарством.

Важную роль в процессе взаимодействия Российской империи и населения Северо-Западного Кавказа сыграли представители армянского народа. Постоянно сталкиваясь на дорогах своей истории с воинственными кавказскими племенами, армяне выработали уникальный опыт приспособления к окружающему социальному и этническому пространству, обзавелись переходящими из поколения в поколение навыками торговли, превратились во влиятельную и сплочённую прослойку негодичантов⁴. Поэтому посредничество между враждебными сторонами (Россией и горцами) на Кавказе было их естественным состоянием.

Многие исследователи сходятся на том, что армянский народ занимал компромиссное состояние на границе двух цивилизаций. Элементы такого пограничного состояния сохранялись даже тогда, когда масштабные геополитические столкновения всё же заставляли научившихся за столетия приравниваться к этносоциальному окружению армян, в конце концов, сделать свой исторический выбор в пользу одной из сторон.

Прежде всего, такой выбор сделали армяне Закавказья, вошедших в первой трети XIX в. в состав Российской империи. В их картине мира Россия воспринималась освободительницей и охранительницей «гайканского народа». Поэтому значительная часть армянского дворянства оказалась в среде офицерского корпоративного сообщества и даже генералитета Отдельного Кавказского корпуса⁵, а армянские сёла поставляли кадры для иррегулярных пеших и кавалерийских сотен милиции⁶. В наследии официальных идеологов самодержавия утвердился впоследствии образ «армянина, сделавшегося русским». «Армянин, пробивший себе дорогу и стяжавший себе имя в Кавказской армии, сделался русским, пока приобрёл в рядах такой высоко и художественно-доблестной армии как Кавказская, честное имя и славу», — отмечал князь В.П. Мещерский⁷. М.Т. Лорис-Меликов, — по мнению публициста, — не армянский генерал, а русский генерал из армян».

Однако имперская идентичность в условиях Кавказской войны не исключала пограничного состояния национальной идентичности. Особенно хорошо это прослеживается на примере начальника Черноморской береговой линии вице-адмирала Л.М. Серебрякова. «Он был родом из Карасубазара, где у него были торговая баня, дом, жена, ходившая по-армянски в шароварах, и куча детей, — писал о Лазаре Марковиче в своих воспоминаниях генерал Г.И. Филипсон. — Во флоте Серебряков играл очень скромную роль и не имел славы хорошего морского офицера <...>. Узнав, что Серебряков хорошо знает турецкий язык, князь Меншиков взял его с собою под Анапу <...>. Серебряков успел войти в милость у

³ Военно-статистическое обозрение Ставропольской губернии, СПб., 1851 // Исторический обзор Терека, Ставрополя и Кубани. М., 2008. С.165.

⁴ Виноградов В. Средняя Кубань: земляки и соседи. Армавир, 1995. С. 31.

⁵ Асадов Ю. Генералы русской армии армянского происхождения на Северном Кавказе в XIX в. // Дворяне Северного Кавказа в историко-культурном и экономическом развитии региона: Материалы региональной научно-практической конференции / Научн. ред. В. Чумаченко. Краснодар, 2002. С. 101-107.

⁶ Латин В. Армия России в Кавказской войне XVIII – XIX в. СПб., 2008. С. 345.

⁷ Мещерский В. Кавказский путевой дневник. СПб., 1876. С. 107.

князя Меншикова, который, как говорят, давал ему иногда довольно грязные поручения. Серебряков имел бойкие умственные способности, много азиатской хитрости, расположение к военному делу и торговле и эластическую совесть»⁸. Личное, не совсем беспристрастное отношение генерала к выдающемуся военно-административному деятелю российского Черноморья, одному из основателей Новороссийска и руководителю целого ряда масштабных военных операций на Северо-Западном Кавказе для нас важно в другом. Отмеченные Филипсоном «азиатская хитрость», «эластическая совесть», знание турецкого – языка международного общения в годы войны с горцами лишний раз подчёркивают естественное, традиционное для армянской идентичности состояние посредничества, пограничности мироощущения адмирала, посвятившего себя служению российской государственности. Эти качества не раз позволяли Л.М. Серебрякову находить компромиссные решения в, казалось бы, бескомпромиссной Кавказской войне. Генерал Н.Н. Раевский докладывал военному министру 15 ноября 1841г. об одном из движений войск Л.М. Серебрякова мимо враждебных шапсугских аулов: «Шапсуги, коих жилища весьма близко, в богатых долинах за хребтом Марткох, тотчас подняли тревогу и стали собираться, но не начали перестрелки. Контр-адм. Серебряков подозревал некоторых из них и приказал им объявить, что он идёт не для разорения их жилищ, а дабы ознакомиться с местностью и убедить их. Что их ущелья во всякое время доступны нашим войскам, если окажется нужным наказать их за враждебные действия. Толпа Шапсугов всё увеличивалась, они подъезжали с доверчивостью к отряду и провожали его мирно; но когда уже нужно было спускаться к Новороссийску, пешие горцы заняли перелесок и открыли огонь по арриегарду. Перестрелка сделалась довольно живою с обеих сторон, но как уже время было позднее и войска довольно утомлены. Контр-адм. Серебряков, не сочтя нужным возвращаться, чтобы наказать горцев за их вероломство, продолжал следование <...>. Следствием этого движения было то, что Шапсуги, живущие по той стороне хребта, опасаясь враждебного посещения нашими войсками их жилищ, стали приходить в Новороссийск для торговли и с уверениями в своих мирных расположениях»⁹.

Генерал Н.Н. Раевский писал о том, что «порядок и строгая дисциплина, которая контр-адм. Серебряков всегда содержит в войсках при этих движениях, вселяет особую доверенность к нему горцев и вполне заслуживает одобрения»¹⁰.

О хорошем знании мира своих противников свидетельствует обстоятельная многостраничная записка вице-адмирала Л.М. Серебрякова от 11 декабря 1852 г., посвященная анализу религиозных верований горцев¹¹. Изрядным владением информацией о набеговых традициях адыгов можно объяснить и случаи, когда Л.М. Серебряков занимал непримиримо жёсткую позицию в отношении неприятеля. Г.И. Филипсон вспоминал эпизод, когда «в 1842 году к начальнику отряда, действовавшего в стране натухайцев, контр-адмиралу Серебрякову, приехала депутация для переговоров. Из пяти человек четверо были седые старики, пятый безбородый юноша. Серебряков говорил с депутатами по-турецки без пе-

⁸ Филипсон Г. Воспоминания. 1837-1847 // *Осада Кавказа. Воспоминания участников Кавказской войны XIX века*. СПб., 2000. С. 116.

⁹ АКАК. Т. IX. Тифлис, 1884. № 440. С. 519-520.

¹⁰ Там же. № 441. С. 523-524.

¹¹ АКАК. Т. X. Тифлис, 1885. № 240. С. 233-237.

реводчика и начал с того, что упрекнул народ натухайский за то, что прислал для переговоров такого мальчика, которому следует молчать и слушать старших; я был при этом разговоре. Серебряков спросил меня, понял ли я ответ одного из старцев депутатов. Я сказал, если не ошибаюсь, старик говорит, что, хотя молодой человек действительно молод, но он сын очень почтенного родителя, которому 80 лет и который никогда не воровал. «Плохо же вы поняли, - сказал Серебряков, - он 80 лет воровал, но ни разу не был пойман; оттого его сыну и сделан такой почет»¹².

В начале 1841г. Л.М. Серебряков предлагал командованию воспользоваться тяжёлым продовольственным положением горцев и привести их в покорность. В отличие от генерала Н.Н. Раевского, который размышлял о гуманном отношении к черкесам на фоне истребления последними целого ряда обессиленными болезнями гарнизонов русских фортов, Л.М. Серебряков предполагал отпустить муку и сало в обмен на заключение мира. Такое отношение к проблеме обусловлено собственным опытом контр-адмирала: в марте 1840 г. в Новороссийске в помощь горцам он открыл для них меновую торговлю на муку, но вскоре узнал, что черкесы, «обеспечив себя запасами, отправлялись потом к враждебным сборищам»¹³. Не принадлежа, как Н.Н. Раевский, к представителям гуманистической идеологии «золотого века» русской культуры¹⁴, Л.М. Серебряков исходил не из красивых либеральных представлений, а из реальных знаний менталитета горцев в условиях спровоцированного английскими эмиссарами отказа от посевов зерновых культур и кровавого вооружённого нападения на русские гарнизоны.

Историк Я.А. Гордин, посвятивший специальную главу своего исследования проектам Л.М. Серебрякова о покорении Кавказа, пришёл к выводу, что адмирал принадлежал к новой для империи категории дворян. Несмотря на стремительную интеграцию этой сословной группы «в психологический и профессиональный контекст исконно русского дворянства, над ней не тяготела имперская психологическая традиция»¹⁵. В отличие от «романтика завоевания» генерала И.Р. Анрепа, плохо знавшего горцев и исходившего из общих схем, которые при всём их благородстве давали противоположный результат, Серебряков был классическим «кавказцем». Военачальник стратегического масштаба, адмирал прекрасно знал, что любой дружественный жест в данной ситуации будет восприниматься неприятелем как проявление слабости¹⁶.

Пограничное состояние армян в войне на Западном Кавказе хорошо характеризует в рамках категории «свои / чужие» так называемых черкесо-гаев. О «чужих» для России черкесо-гаев писал Теофил Лапинский, командир отряда польских авантюристов, действовавшего на стороне горцев. Живущие «в своих коммунах в стране адыгов» армяне, - отмечал он, - принимают участие во всех больших сражениях абазов с русскими¹⁷. Кроме того, в Закубанье черкесо-гаи занимались тем, с чем так отчаянно боролось русское командование –

¹² Филипсон Г. Указ. соч. С. 81.

¹³ АКАК. Т. IX. № 433. С. 498.

¹⁴ Блиев М. Россия и горцы Большого Кавказа на пути к цивилизации. С. 678.

¹⁵ Гордин Я. Кавказ: земля и кровь. Россия в Кавказской войне XIX века. СПб., 2000. С. 240.

¹⁶ Там же. С. 246-247.

¹⁷ Лапинский Т. (Тэффик-бей). Горцы Кавказа и их освободительная борьба против русских / Пер. В. Гарданова. Нальчик, 1995. С. 75.

работорговлей. «Главная торговля их была с турками, - сообщал в 1840 г. один из авторитетных источников, - у которых, выменивали большую часть товаров на русских пленных обоюго пола и на молодых азиаток, которых получали у горцев»¹⁸.

Переселение генералом Г.Х. Зассом черкесо-гаев на левый берег Кубани позволило не только сохранить последним свою идентичность и память о легендарном родоначальнике армян по имени Гайк, но и заполучить верных союзников. «Когда горцы, живущие на Белой речке, узнали силу нашего оружия, - писал Г.Х. Засс в «Журнале военных действий Лабинского отряда за 1840 год», - я заставил их выдать армян и поселил на Кубани. Теперь под щитом нашего правительства промышленность их свободно развивается, они составляют одно сообщество»¹⁹. Командующий Отдельным Кавказским корпусом генерал Е.А. Головин в рапорте военному министру от 30 января 1838г. отмечал: горские армяне, «пре-терпежая от владельцев своих разорение и будучи христианами, имели право на защиту нашего правительства. Больших трудов, однако же, стоило склонить хозяев аулов выпустить из под власти Армянские семейства, бывшие жертвою их корыстолюбия <...>. На предназначенном месте жительства Армяне найдут с избытком средства для земледелия и скотоводства; при предприимчивости своей в торговых оборотах и промышленности они скоро могут упрочить своё благосостояние и принести пользу даже в отношении распространения промышленности между Закубанцами. При навыках обороны, приобретённых ими между горцами, они, как полагает ген. Засс, с помощью небольшого гарнизона, легко могут защитить свои семейства от нападений хищников»²⁰.

Переселив черкесо-гаев под прикрытые крепости Прочный Окоп, русское командование на Западном Кавказе получило в свое распоряжение превосходную иррегулярную милицию, которая успешно охраняла участок границы между станицами Убеженской и Григорополисской, а также участвовала вместе с казаками и верными России горцами в походах против немирных аулов.

За черкесо-гаями прочно закрепился статус «своих». В мае 1852 г. Н.И. Евдокимов сообщал, что в борьбе с баракаевцами участвовала «партия из 80-ти чел. наших Прикубанских Черкес, Ногайцев и Армян»²¹.

Историк С.Н. Ктиторов отмечает: «Горские армяне прекрасно знали закубанский край, с торговыми целями они регулярно посещали различные черкесские племена, и поэтому армавиры очень ценились в качестве разведчиков и переводчиков»²².

Однако на Кавказе жили армяне, занимавшиеся контрабандной торговлей и поставлявшие оружие и боеприпасы черкесам и убыхам, в глазах русского командования принадлежали к неприятельскому лагерю. Армянские купцы доставляли в главную резиденцию наиба Шамиля на Западном Кавказе Мухаммед-Амина на реке Белой железо для подготовки артиллерийского парка²³. Генерал-лейтенант Н.Н. Раевский писал в апреле 1839 г.: «Армяне, живущие среди черкес,

¹⁸ ГАКК. Ф. 347. Оп. 1. Д. 2. Л. 5 об.

¹⁹ ГАКК. Ф. 347. Оп. 1. Д. 2. Л. 5 об.

²⁰ АКАК. Т. IX. № 385. С. 445.

²¹ АКАК. Т. X. № 566. С. 619.

²² Ктиторов С.Н. История Армавира (досоветский период: 1839-1918). Армавир, 2002. С. 58.

²³ Панеш А. Западная Черкесия в системе взаимодействия России с Турцией, Англией и имамом Шамиля в XIX в. (до 1864 г.). Майкоп, 2007. С. 159.

имели к ним свободный допуск, завладели всею торговлею, чтобы сохранить сию монополию, они всячески стараются удалить русских от соучастия в этом торге. Они имеют торговые отношения с контрабандистами, которые охотнее торгуют с ними, чем с горцами, потому что они имеют большие капиталы, не нарушат условий и не притесняют их, как то делают горцы. Армяне сии, хотя и не враги наши, но не желают примирения горцев, потому что это ослабит их влияние. Кроме того, армяне или по болтливости, или для поддержания доверенности в горцах, сообщают сим последним и предполагаемые нами военные действия. Например, цель вверенной мне экспедиции не может быть тайной, потому что всем шкиперам известно, куда будет подвозиться продовольствие»²⁴.

Однако и «чужие» армяне, выполняя во многом необходимую при всех военных конфликтах посредническую миссию, занимали буферное положение между пытающимися покорить горцев русскими войсками и отчаянно сопротивляющимися черкесами и их заморскими союзниками. Офицер Генерального штаба И.Ф. Бларамберг отмечал: «Эти армяне находятся в близких отношениях со многими черкесами вследствие своих торговых отношений; зачастую они выступают в качестве шпионов, будучи в курсе всего того, что происходит на Кавказской линии; поскольку у них есть лавки как в различных местах вдоль границ, так и в горах, они имеют возможность предупреждать черкесов о намерениях русских. Они занимаются тем, что выкупают русских пленных, платят за них своими товарами, а затем за определённую плату передают их русскому правительству, кстати говоря, с большой для себя выгодой, утверждая при этом, что поступают из соображений чистой гуманности и платят за пленных ту же цену, что требуют от правительства. В своё время они перепродавали выкупаемых таким образом пленников туркам в Анапе»²⁵.

Большую роль сыграли армяне в годы кавказской войны, выступая посредниками при выкупе российских пленных солдат и казаков у горцев. Так, в 1843-1845 гг. 8 нахичеванских и закубанских армян были представлены к золотым медалям и ордену Св.Станислава «за человеколюбивые подвиги, именно за выкуп 66 человек русских пленных».

Таким образом, ход исторического развития обусловил занятие представителями армянского народа в пространстве Кавказской войны особой ниши, которая способствовала превращению линии «фронта» на Северо-Западном Кавказе в контактную линию двух цивилизаций. Традиционное пограничное состояние армянских сообществ предоставляло им возможности для посредничества в обмене между враждующими цивилизациями.

Большое значение придавали армянские переселенцы духовной жизни. В 1810г. в Ставрополе была заложена Армяно-Григорианская церковь, достроенная в 1830г. В середине XIXв. всего в губернии насчитывалось 10 Армяно-григорианских церквей (2 каменных и 8 деревянных). В 70-е гг. XIX в. армянское общество г.Ставрополя было многочисленным и богатым, поэтому было решено возвести новую каменную церковь. Проект строения был получен в 1876г. из Армяно-Григорианского Синода, а в 1881г. церковь была готова. Благодаря щедрости меценатов Г.Термикелова и др. убранство поражало своим богатством. В

²⁴ ГАКК. Ф. 260. Оп. 1. Д. 62. Л. 22-23 об.

²⁵ *Культура адыгов (по свидетельствам европейских авторов) / Сост. Авт. предисл. и примеч. Х.М. Казанов. Нальчик, 1993. С. 193.*

начале XX в. много сделал для процветания армянской церкви благочинный Карапет Ягоянц, он жертвовал средства для ее убранства, привозил из Армении древние иконы.

В конце XIX – начале XX вв. шло массовое переселение армянского населения из Турции на Северо-Западный Кавказ. В этот период выделяются два типа миграции армян. Первый тип - экономическая миграция. Российское правительство привлекало малоазиатских армян из Османской Турции для освоения Черноморского побережья Северного Кавказа. Вторым типом была вынужденная или «стихийная» миграция армян, которая происходила вследствие политики геноцида, проводимой турецкими властями.²⁶

Таким образом, армянское население сыграло большую роль в развитии Северного Кавказа в имперский период.

ՀԱՅԵՐԻ ԴԵՐՈ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
XVIIIդ.-XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

___ Ամփոփում ___

___ S. Նևսկայա, Ա. Հակոբյան ___

Հոդվածում ուսումնասիրվում են հայ ազգաբնակչության տեղաշարժի հարցերը դեպի Հյուսիսային Կովկաս: Ցույց են տրվում Ռուսական կայսրությունում բնակվող հայերի և Հյուսիսարևմտյան Կովկասի ազգաբնակչության փոխազդեցության առանձնահատկությունները: Ընդգծվում է հայերի տնտեսական դերը այդ տարածքներում: Բացահայտված է հայ վերաբնակիչների կողմից հոգևոր արժեքների և սովորույթների պահպանման գործընթացը: Վերլուծվում է հայազգի ներկայացուցիչների դերը Կովկասյան պատերազմում, մասնավորապես՝ Հյուսիսարևմտյան Կովկասում, որտեղ «ռազմաձակատի» գիծը վերափոխվեց երկու քաղաքակրթությունների միջև գործող շփման գծի:

Сведения об авторах

*Невская Татьяна Александровна - доктор ист. наук, профессор, Северо-Кавказский федеральный университет (Ставрополь).
E-mail: nevskaya@yandex.ru*

Акобян Ашхен Артаковна - Северо-Кавказский федеральный университет (Ставрополь). E-mail: ashkhen.akopyan.94@mail.ru

²⁶ Симонян М. Армянская диаспора Северо-Западного Кавказа: конец XVIII — конец XX века [Электронный ресурс]. URL: <http://nashasreda.ru/armyanskaya-diaspora-severo-zapadnogo-kavkaza-konec-xviii-konec-xx-veka/> (Дата обращения: 18. 11. 2015).

Հասմիկ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ (1773-1800) *

Ռուսաստանի հայկական գաղթօջախը հարուստ պատմություն ունեցող հայկական գաղթավայրերից է, որին հայ պատմագրության մեջ նշանակալի տեղ է հատկացվել: Լինելով հայ քաղաքական մտքի օջախ, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու հայ մշակութային կյանքի կրող՝ այն ոչ միայն նպաստել է ռուսահայերի հայապահպանմանը, այլև պահպանել է կապը մայր հայրենիքի հետ, իր հսկայական նպաստը բերել հայ-ռուսական բազմաբնույթ հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

Ռուսահայ համայնքն էական զարգացում ապրեց XVIII դ. վերջին քառորդին, երբ թեմական գահը ստանձնեց արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Վերջինիս առաջնորդական ժամանակաշրջանը համընկավ Ռուսաստանի արտաքին քաղաքական կարևոր ուղղություններին, այն է՝ Ղրիմը, Անդրկովկասը և այլ տարածաշրջաններ միացնել Ռուսական կայսրությանը, ինչն ուղեկցվեց Ռուսաստանում հայկական բնակավայրերի ընդլայնմամբ: Ռուսահայ գաղթօջախը ոչ միայն մեծացավ նոր ներգաղթերի հաշվին, այլև բուռն զարգացում ապրեց:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և հետո Ղրիմը Ռուսական կայսրությանը միացնելու, տեղի թաթարական խանությունը թուլացնելու նպատակով ռուսական արքունիքը կարևոր նշանակություն էր տալիս քրիստոնյա բնակչությանը թերակղզուց դուրս հանելու խնդրին: Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Գ. Պոտյոմկինը հայերի վերաբնակեցման հիմնական ծանրությունը դրեց Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի ուսերին¹:

Ղրիմից Ռուսաստան տեղափոխված հայերի պատմության տարբեր անդրադարձներում վեր են հանված գաղթի առանձնահատկությունները, դրդիչ հանգամանքները, նոր վայրերում հաստատվելուց հետո սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում ձեռք բերված հաջողությունները և այլն: Սակայն, վերաբնակեցումների գործում առաջնայնացնելով քաղաքական դրդապատճառները, Ռուսաստանի տնտեսական ու ռազմավարական շահերը, փոքր-ինչ նսեմացել է հարցի պակաս տեսանելի կողմը, այն է՝ հայրենի վայրերը լքելու և նոր վայրերում հաստատվելու բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական դժվարությունները, դրանց հաղթահարումը, անհատի դերն ու մասնակցությունը գաղթօջախների հաստատման գործում և այլն:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ *Տե՛ս Արмяно-русские отношения в XVIII веке: сборник документов под ред. М. Нерсисяна, т. IV, Ер., 1990, док. 267, стр. 399:*

Ղրիմահայերի՝ իրենց տարածքները լքելուց հետո Արդուությանը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի լքված բնակավայրերն ու մշակութային արժեքները չավերվեն ու օտարների կողմից չյուրացվեն: Նրա հոգածության առարկան դարձավ հատկապես Սբ Խաչ վանքը, որն ավերման ու վանքապատկան տարածքի օտարման վտանգի տակ էր:

Ղրիմի թերակղզին (1783 թ. ապրիլի 8-ին ընդունվեց Ղրիմի միավորման մանիֆեստը, 1784 թ. հունվարի 8-ին կնքվեց ակտի վերաբերյալ Թուրքիայի հետ համաձայնագիրը) Ռուսաստանին միացնելուց հետո ռուսական կառավարությունը միջոցներ ձեռնարկեց թերակղզին կրկին քրիստոնյաներով բնակեցնելու համար: 1794 թ. աշնանը Արդուությանը գալիս է Ղրիմ՝ այնտեղ վերահաստատված հայերի վիճակին վերահասու լինելու, ինչպես նաև Սբ Խաչ վանքի վերանորոգման աշխատանքներն անձամբ վերահսկելու և այնտեղ միաբանություն կարգելու նպատակով: 1794-1797 թթ. ընթացքում Սբ Խաչի, Կաֆայի Սբ Աստվածածին և մյուս վանքերի վանքապատկան և առհասարակ հայկական հողերի վերադարձի հարցերով Արդուությանը հայ հոգևոր գործիչների հետ բազում անգամ դիմում է տեղի կառավարությանն ու ռուս քաղաքական գործիչներին²: Նրանց բազմաթիվ դիմումների արդյունքում 1799 թ. հոկտեմբերի 28-ի կայսերական հրովարտակով հայերին թույլատրվում է վերահաստատվել Հին Ղրիմ քաղաքում, Թեոդոսիայում վերաբնակված հայերին էին վերադարձվում մի շարք հայկական եկեղեցիներ, Սբ Խաչ վանքին էին հատկացվում մերձակա հողերը, հայերին շնորհվում էր դավանանքի ազատություն, հիմնվելու էին հայկական դատարաններ, հայերը դասվում էին պետական բնակչության շարքը, տասը տարով ազատվում հարկերից ու տուրքերից, ստանում առևտրով ու արհեստներով զբաղվելու լիակատար ազատություն և այլն³:

Ղրիմի բնակչության այն հատվածը, որ չվերադարձավ նախկին բնակավայրերը, 1778-1779 թթ. ընթացքում Արդուությանի աջակցությամբ հաստատվեց իրենց հատկացված տարածքում՝ Դոն գետի աջ ափին՝ հիմնելով Նոր Նախիջևան (ներկայիս Դոնի Ռոստով) և Գրիգորիոպոլ քաղաքները, իսկ շրջակայքում՝ մի շարք հայկական գյուղեր: «Յովսեփ արքեպիսկոպոսի յորդորմամբ Խրիմու հայերը մօտ 20000 անձինք... գաղթեցին Ազովեան դաշտերը և երկու տարի մեծամեծ նեղություններով վրանաբնակ լինելուց յետոյ, Դոն գետի հովտում բնակություն հաստատեցին, ուր շինեցին Նոր Նախիջևան քաղաքը և մի քանի գիւղ...»⁴:

Նպաստելով զրիմահայերի վերաբնակեցմանը՝ թեմական առաջնորդը մշտապես եղավ վերաբնակիչների կողքին՝ աջակցելով նրանց թե՛ հոգեպես, թե՛ նյութական բոլոր հնարավոր միջոցներով, քանի որ նորաբնակները նոր վայրերում հայտնվել էին սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Արքեպիսկոպոսը նրանց վիճակի բարելավման համար փորձում էր ռուսական իշխանություններից

² Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 2951, թթ. 36ա, 96ա, 116բ, 128ա-128բ, 135բ, 200բ:

³ Հայ գաղթաշխարհի պատմություն, իմբ.՝ Միքայելյան Վ., Եր., 2003, էջ 199:

⁴ «Արարատ», 1886, Էջմիածին, թիւ 7, էջ 172:

ձեռք բերել արտոնությունների թույլտվություն: Հայտնի է, որ 1779 թ. Պետերբուրգում Հ. Արղությանն ու ցարական արքունիքում բարձր դիրք զբաղեցնող Հ. Լազարյանը հանդիպում են Գ. Պոտյոմկինին: Առիթն օգտագործելով՝ Արղությանը «...խնդրեցաք վասն Ղոխմու եկեալ ժողովրդոցն զԱռաստով...»⁵: Նրա ջանքերի շնորհիվ 1779 թ. նոյեմբերի 14-ին ռուսական կառավարությունից ձեռք բերվեց Նոր Նախիջևան քաղաքի բնակիչների համար տասը տարով մշակված հատուկ արտոնագիր՝ «Պրելվելգե», Գրիգորիոպոլի և աստրախանաբնակ հայերի համար՝ բազմաթիվ արտոնություններ⁶:

1780-1795 թթ. ընթացքում մոսկովյան և պետերբուրգյան շրջագայությունից մի քանի անգամ վերադառնալով թեմական նստավայր՝ Աստրախան և շրջելով շրջակա հայկական բնակավայրերով, արքեպիսկոպոսն ականատես է լինում հայ բնակիչների ծայրաստիճան թշվառությանը: Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի, Ղզլարի և այլ բնակավայրերի հայերը հուսահատ վիճակում ընդառաջ էին գնացել հոգևոր հորը՝ նրանից ակնկալելով իրենց բարեկեցությունը. «Ընդ յառաջ ելին մեզ գիւղացիքն լալով և կոծով անկանեին առաջի մեր և ճիշտ բարձեալ աղաղակաւ պատմեին զաղետս տառապանաց և աղբատութեան իւրեանց...»⁷:

Նորաբնակների վիճակի բարելավման, պետության հաշվին անհրաժեշտ պիտույքներով ապահովելու, որոշ հարկերից ազատելու, նրանց հատկացված հողատարածքներն ընդլայնելու և այլ հարցերով Արղությանը դիմում է Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Չերսկովին, որը «...զպէսպէս խնդիրս մեր վասն ժողովրդեանն կատարել խոստացաւ և զանկարելիս գրեաց քնեագին...»⁸, Գ. Պոտյոմկինին, զորավար Պ. Զուբովին, զադունի խորհրդական Գ. Գագարինին⁹: Ռուսահայերի իրավիճակի մասին արքեպիսկոպոսը բարձրաձայնում էր նաև հայ քաղաքական ու մշակութային գործիչներին՝ Հ. Լազարյանին, Շ. Շահամիրյանին, Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն և այլոց¹⁰:

Արքեպիսկոպոսը գիտակցում էր, որ նոր արտագաղթը հայկական բնակավայրերից պետք էր կանխել տարածքի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման գնով: Նախնառաջ անհրաժեշտ էր նորաբնակներին ապահովել տներով, կենցաղային ու հոգևոր կառույցներով: Նրա հորդորներով այդ աշխատանքների մի մասն իրականացրին հնդկաստանցի հայ նվիրատուները: Վերջիններիս օժանդակությամբ և Արղությանի նախաձեռնությամբ մինչև 1788 թ. և հետո Նոր Նախիջևանում կառուցվեցին տներ, աշխարհիկ ու մշակութային բազմաթիվ շինություններ:

⁵ Աղանեանց Գ., Դիւան հայոց պատմութեան, գ. Թ, Թիֆլիս, 1911, էջ 23:

⁶ Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2951, թթ. 6բ, 13ա, 15ա, 283ա-283բ, «Ազդարար», 1794, Մադրաս, թիւ 1, էջ 21:

⁷ Աղանեանց Գ., նշվ. աշխ., էջ 38-39:

⁸ Մատենադարան, ձեռ. 9647, թ. 27բ:

⁹ Глинка С. Собрание актовъ, относящихся к обозрению армянского народа, ч. III, Москва, 1838, стр. 345, Армяно-русские отношения..., док. 126, стр. 207, док. 267, стр. 399.

¹⁰ Մատենադարան, ձեռ. 2951, թ. 168բ, ձեռ. 2699, թթ. 156ա, 173բ:

Հայկական բնակավայրերի՝ օրեցօր ծաղկման վերաբերյալ քաղվածքներ ենք կատարել Շ. Շահամիրյանին հղած նամակներից. «...Նախիջևանն Նոր, յօր ըստ օրէ պայծառանայ շինութեամբ և աղքատքն հետևին ապրուստի իւրեանց»¹¹, գրում է Արդուրյանը 1785 թ. սեպտեմբերի 10-ին, կամ՝ «Նախիջևան շատ շէնքն է աւելացեալ, բոլորն քարեայ և գեղեցիկ...»¹², ոչ առանց հպարտության ներկայացնում է թեմական առաջնորդը: Տարբեր վայրերի իր ծանոթներին ու բարեկամներին տեղեկացնում է, որ նորնախիջևանցիների հոգսն ամբողջովին իր վրա է, և այժմ նրանց վիճակը լավ է:

Մակայն 1787 թ. հունվարի 3-ին Նոր Նախիջևանից Շ. Շահամիրյանին գրած նամակից զգացվում է, որ բնակչության վիճակն, այնուամենայնիվ, շատ առումներով մնում էր անմխիթար: Քաղաքում ակնհայտ էր սոցիալական խորը շերտավորում, ինչի պատճառով բնակչության մի հատվածը վերածվել էր չքավոր խավի: 1793 թ. սեպտեմբերի 20-ին Հ. Լազարյանին գրում է, որ իր բացակայության ընթացքում Գիգորիոսյոլ քաղաքի բնակիչները ո՛չ հաց, ո՛չ էլ դրամ չէին ստացել, իսկ շինարարությանը, ինչ որ ինքը ժամանակին կառուցել էր, ոչինչ չի ավելացել. «Տակաւին ողորմելի աղքատացն ի գետնափորս են և ի հիւղս»¹³: Բացի այդ, թուրքերի հետ պատերազմական իրավիճակը մեծ վնաս էր հասցնում հայ բնակչությանը: «...Դա մի աղքատ, սոված ժողովուրդ էր, եթէ Արդութեանի պէս բարձր դիրքի հոգևոր հայր չունենար: Նրա միջնորդությունների շնորհիվ ռուսական կառավարությունը հանձն առավ ոչ միայն քաղաքի շինարարությունը, այլև ժողովրդի ապրուստի միջոցի ծախսերը», գրում է Լեոն¹⁴:

Բնակչության աղքատ խավի վիճակի բարելավման նպատակով Արդուրյանը ստեղծում է հանգանակության «դաւթար», որպեսզի տեղի ունենորներն ու դրսի հայ մեծահարուստները գումար հատկացնեին: Այդ մասին Արդուրյանը պատմում է. «...սահմանեցի զմեծ դաւթար մի և գրեցի ի նմա զպատշաճաւոր յորդորմունս... թէ ով որ կամի քաղաքիս չքաւոր աղքատացն և տնանկաց, կուրաց, կաղաց և ցաւագնելոց օգնութիւն ինչ առնել ի կենդանութեան իւրում ի սմին դաւթարոջն, որպէս ի կտակի ձեռն դիցէ...»¹⁵: Իսկ երբ 1789թ. լրացավ տասը տարին, ինչ ռուսական կառավարությունը Նոր Նախիջևանի հայերին ազատել էր հարկերից, հայ բնակչության խնդրանքով Արդուրյանի գլխավորությամբ նոր խնդրագիր է կազմվում՝ քաղաքի բնակիչներին ևս տասը արտոնյալ տարի շնորհելու, հարկերի զիջման և նոր հողերի տրամադրման առաջարկով: Արդուրյանն ուղևորվում է Ռուսաստանի մայրաքաղաք՝ անձամբ ներկայացնելու խնդրագիրը և վերահասու լինելու դրա իրագործմանը, չնայած այն հանգամանքին, որ շրջագայությունները խիստ ծանր էին անդրադառնում հոգևոր հոր առողջական վիճակի վրա:

¹¹ *Армяно-русские отношения в XVIII веке, док. 225, стр. 335.*

¹² *Մատենադարան, ձեռ. 2699, թ. 176բ:*

¹³ *Նույն տեղում, ձեռ. 2951, թթ. 29ա, 91ա:*

¹⁴ *Լեո, Յովսէփ կաթողիկոս Արդութեան, Թիֆլիս, 1902, էջ 89-90:*

¹⁵ *Մատենադարան, ձեռ. 2699, ձեռ. 2951, թ. 42բ:*

Սանկտ Պետերբուրգում գտնվելու ամբողջ ժամանակն արքեպիսկոպոսը ծախսեց վերաբնակիչ հայերի համար արտոնագրերի ձեռքբերման անդուլ աշխատանքների վրա. «...դեգերելն մէր աստ վասն երջանկութեանն նոցին և սպասելն գալստեանն պրվելէկի...»¹⁶: Նրա քայլերի մասին տեղեկանում ենք Ռուսաստանի մայրաքաղաքից Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի, Աստրախանի և այլ վայրերի հայ դատավորներին ու հոգաբարձուներին, երևելի անձանց, հոգևոր գործիչներին ուղարկած նամակներից, որոնցում տեղեկացնում է պետերբուրգյան յուրաքանչյուր օրվա գործունեության մասին: Արտոնագիրը հաստատման երկար ճանապարհ պետք է անցներ, հաստատվեր «թագաւորական էքսպէտիցիայի» կողմից, վերջում՝ արժանանար թագուհու վերջնական կնքմանը: Նոր Նախիջևանի օրինակով փոքր-ինչ ուշ կազմվեց նաև Գրիգորիոպոլի հայերի համար արտոնագրի նախագիծ, հաջորդը պատրաստվում էր աստրախանահայերի վերաբերյալ: Արղությանի ուշադրության կենտրոնում էին նաև Հյուսիսային Կովկաս-Մերձկասպյան շրջանների հայկական համայնքների (Դերբենդ, Ղզլար, Մոզդուկ և այլն) կյանքի հարցերը: Ռուս քաղաքական գործիչ Ա. Բեզբրոդկոյին ուղղած խնդրագրի մեջ Արղությանը խնդրում է Ղզլարի ու Մոզդուկի հայերին ևս արտոնություններ շնորհել:

Ի վերջո, 1797թ. նոյեմբերից մինչև 1798թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում Սանկտ Պետերբուրգից գրած նամակներով արքեպիսկոպոսը մեծ ուրախությամբ ավետում է Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի և այլ բնակավայրերի վերաբերյալ հրովարտակների հաստատման լուրը¹⁷: Ցարական կառավարությունը Դերբենդի հայերին ռուսական տարածքներ վերաբնակվելու թույլտվություն էր տալիս, մյուս հայաքաղաքների բնակիչները դարձյալ տասը տարով ազատվում էին հարկերից, թույլտվություն էին ստանում կառավարվել սեփական օրենքներով ու սովորույթներով, դրամական օժանդակություն էին ստանում և այլն:

Հ. Արղությանի ուշադրությունից դուրս չեն մնացել նաև եկեղեցական գործերի կազմակերպման աշխատանքները: Արքեպիսկոպոսն զգում էր, որ իր բացակայության ընթացքում թեմում իրավիճակը դուրս է գալիս վերահսկողությունից: Աշխատելով հեռավորությունից կարգավորել գործերը՝ 1797-1798թթ. ընթացքում Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի և շրջակա բնակավայրերի հայ հոգևոր գործիչներին ուղղած նամակներում պատվիրում է հոգևորականությանը միաբան պահել, հասարակության հետ սիրով լինել, դատավորներին հորդորում է միմյանց հետ հաշտ լինել, խոհեմությամբ կառավարել ժողովրդին ու ճշտապահորեն կատարել պարտականությունները, հոգ տանել գոյագուրկ գյուղացիների մասին¹⁸: Կոնդակներով դիմում էր թեմի իրավասության տակ գտնվող բնակիչներին՝ կոչ անելով ենթարկվել թեմի փոխանորդներին և չչեղվել հայ առաքելական եկեղեցու դրույթներից: Նրա շնորհիվ կանոնակարգվեց թեմում հոգևոր վարչական գործերի կառավարության կանոնադրությունը,

¹⁶ Մատենադարան, ձեռ. 2951, թ. 227բ:

¹⁷ Նույն տեղում, թթ. 138ա, 172ա-172բ:

¹⁸ Նույն տեղում, թթ. 133բ, 137ա-137բ, 184ա, 196բ, 227բ, 250ա:

ինչի նպատակն էր՝ հստակորեն տարանջատել հոգևոր և աշխարհիկ կառույցներն ու հստակեցնել դրանց իրավասությունների սահմանները, հստակեցնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ պարտականությունները, ստեղծել հայկական հոգևոր դատարան, վերահսկողության տակ պահել թեմին ենթակա հոգևոր կառույցների գործունեությունը, պայքարել ուղղադավանության, կաթոլիկության, դավանափոխության դեմ և այլն:

Հովվապետի հոգսերից մեկը հայերի ռուսանալու վտանգն էր, ինչի դեմ նա անձնուրաց պայքարում էր: Հայերը, տարբեր՝ հատկապես սոցիալ-տնտեսական դրդապատճառներից ելնելով, փոխում էին դավանանքը, իսկ տեղացի ռուս հոգևորականներն իսկույն մկրտում էին. «պարտքատերք և փախստականք գնան և նոքա ընկալնուն»¹⁹: Արդությանը դիմում է հղում տեղի ռուս եպիսկոպոսին, սակայն վերջինս ոչ միայն պատասխանի չի արժանացնում, այլև դատապարտում է. «...որպէս համարձակեցաւ հայոց արքեպիսկոպոսն ինձ գիր գրել և զիա՞րդ համարձակեցաք... կատարել զօրէնս ձեր»²⁰: Այնինչ, ինչպէս գրում է հոգևոր հայրը. «Ի մեկծն կա ուկազ...որ առանց հարցման չընդունեն և չմկրտեն: Բայց հրամանին ոչ ոք է ունկնդիր»²¹:

Արդությանի՝ ռուսահայ թեմում ծավալած բազմաբնույթ գործունեության կարևորագույն արգասիքներից էր մշակութային կյանքում կատարած բարեփոխումները: Նրա անմիջական մասնակցությամբ տեղի ունեցան տպարանի և դպրոցների բացում, եկեղեցաշինության և մշակութային մյուս ոլորտների կյանքի աշխուժացում: Նրա ջանքերով Սանկտ Պետերբուրգում գործող Խալդարյան տպարանը տեղափոխվեց նախ՝ Նոր Նախիջևան (1789թ.), ապա՝ Աստրախան (1795 թ.), որտեղ տպագրական-հրատարակչական ծավալուն աշխատանքներ իրականացվեցին²²: Այդ ամենը նպատակ էր հետապնդում վերահսկողության տակ առնելու հայ տպագրության գործը, նպաստելու նորարակ հայերի շրջանում ռուսաց լեզվի և ռուսական սովորույթների տարածմանը, հայկական գաղութներում ազգային արժեքների, հայոց լեզվի պահպանմանը, հայ բնակչությանը հասու դարձնելու հայոց պատմությանը և մշակույթին:

Իր թեմակալության ընթացքում Արդությանը կառուցել և օժել է բազմաթիվ եկեղեցիներ, որոնցից առանձնացնելի է Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքը՝ Ղրիմի համանուն վանքի տեսքով: Վանքի կառուցումն ուներ խորհրդանշական նշանակություն, այն է՝ մեղմացնել դրիմահայերի կարոտն իրենց նախկին բնակավայրերի նկատմամբ:

Արդությանը մեծ նպաստ բերեց ռուսահայերի կյանքում առևտրի և արհեստների, գյուղատնտեսության զարգացմանը: Նրա անմիջական վերահսկողությամբ թեմի տարբեր բնակավայրերում բացվեցին գործարաններ, խանութներ,

¹⁹ Մատենադարան, թ. 99բ:

²⁰ Նույնը:

²¹ Նույնը:

²² Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը, Եր., 1985, էջ 149:

հիմք դրվեց հողագործությանն ու անասնապահությանը, գինեգործության, օղեգործության զարգացմանը: Նրա միջնորդությամբ ռուսական կառավարության կողմից հայ առևտրաարդյունաբերական խավն ազատվեց հարկային պարտավորություններից: Նոր Նախիջևանի Կարապետ վարդապետին 1799 թ. ապրիլի 7-ին գրում է. «...յաղագս ապրանց մաքսն մեզ շնորհելոյն դնել ի հոգևոր դատարանի մերում»²³: 1799 թ. մայիսի 13-ին աստրախանահայերին գրած նամակում տեղեկացնում է. «...բոլոր հասարակութիւն Հաշտրախանու գրեցաք զհաստատութիւն կացութեանն նոցա յատուկ պրովէկկաւ զազատ վաճառականութիւն և ապրանաց չտալն զմաքս»²⁴:

Ամփոփելով կարող ենք ասել, որ իր ազգանվեր գործունեությամբ Արղուժյանը մեծ ավանդ է թողել ռուսահայ թեմի սոցիալ-տնտեսական ու հոգևոր-մշակութային կյանքում: Նրա գործունեության շնորհիվ աճեց ռուսահայ բնակչության թիվը, զարգացավ տնտեսական կյանքը, ընդլայնվեցին հայերի իրավունքները, պահպանվեց ու հարստացավ գաղթօջախի հոգևոր մշակույթը: Այս ամենը մեծ չափով նպաստեց հայ առաքելական եկեղեցապատկան ռուսահայ թեմի հեղինակության և դերի բարձրացմանն ու ռուսահայերի հոգևոր միասնության ամրապնդմանը:

ИОСИФ АРХИЕПИСКОП АРГУТЯН-ПРЕДВОДИТЕЛЬ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ РОССИИ (1773-1800)

___ Резюме ___

___ А. Амирджанян ___

Статья посвящена деятельности епархиального предводителя армянской церкви в России – архиепископа Иосифа Аргютяна. И. Аргютян играл важную роль в основании городов Новой Нахичевани, Григориополя и в деле организации переселения армян в конце XVIII в. Его усилиями были определены права и обязанности духовной власти Новой Нахичевани, Астрахани и других армянонаселенных районов, урегулированы духовные дела епархии. Его деятельность способствовала развитию интеллектуальной жизни епархии, его усилиями была открыта типография, были построены церкви. Таким образом, своей деятельностью И. Аргютян всячески способствовал не только социально-экономическому, но и духовно-культурному развитию русских армян.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ամիրջանյան Հասմիկ Հովհիկի - պ. գ. թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,

E-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

²³ Մատենադարան, ձեռ. 2951, թ. 260ա:

²⁴ Նույն տեղում, թ. 265բ:

Արկայդի ԱԿՈՊՈՎ

XIX ԴԱՐԻ II ԿԵՍԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐԶԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՏԱՅՔԸ*

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսների տարած հաղթանակից և 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումից հետո Ախալցխայի նախկին նահանգի Կիսկիմի, Օլթիի, Տայոցքարի (Թավուսքար), Մամրվանի (Նարիման), Բանակի (Փենեք) գավառները և նախկին Կարսի նահանգի Կոդի (Գյոլե) գավառը, որոնք տեղագրվում էին պատմական Տայք նահանգի տարածքում, հայտնվում են Էրզրումի էյալեթի (նահանգ) կազմում¹: Տայեցի հայերի մի մասը, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու և Եփրեմ վարդապետ Սեթյանի գլխավորությամբ, չցանկանալով այլևս մնալ օսմանյան տիրապետության ներքո, ելնելով Ադրիանուպոլսի պայմանագրի 13-րդ հոդվածի դրույթներից՝ 1830 թ. մայիս-հունիս ամիսներին վերաբնակեցվում են Ռուսական կայսրությանն անցած Հայկական մարզ և Ախալքալաքի ու Ախալցխայի շրջաններ: Սակայն Տայքի առանձին շրջաններից արտագաղթ տեղի չի ունենում, քանի որ Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրի կնքումից անմիջապես հետո ռուսները դուրս էին եկել գրավյալ շրջաններից, իսկ օսմանյան իշխանությունները զենքով ստիպել էին հայերին մնալ տեղերում², վախենալով, որ երկրամասը կզրկվի աշխատասեր հայ գյուղացիությունից, հմուտ արհեստավորներից և բանիմաց առևտրականներից:

Տայքում մնացած և Արևմտյան Հայաստանի ներքին միգրացիոն գործընթացների շրջանակներում Տայքում հաստատված հայության համար օսմանյան լուծը թոթափելու և քրիստոնյա վարչության ներքո ապրելու հերթական հույսը ծագեց 1853-1856 թթ. ռուս-թուրքական հերթական՝ Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ժամանակ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում մանրամասնորեն անդրադառնալ մի կարևորագույն գործողության, որը ռուսական բանակին հնարավորություն ընձեռեց ռազմավարական առավելություն ստանալու 1855 թ. երկրորդ կեսին: Խոսքը վերաբերում է ռուսական բանակի 1855թ. փենեքյան արշավախմբին:

Կովկասյան ճակատը, իր կարևորությամբ ստորադասվելով պատերազմի գլխավոր՝ Ղրիմյան ճակատին, այսուհանդերձ, մի շարք մարտավարական խնդիրներ էր լուծում ռուսների համար: Այստեղ ռուսական զորքերի առջև խնդիր էր դրված խորանալ Արևմտյան Հայաստանի տարածքում, ջլատել հակառակորդի ուժերը, թույլ չտալ կենտրոնանալ Ղրիմի ճակատի վրա, որտեղ Օսմանյան Թուր-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6A035 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Տե՛ս *Մալաժա Յ. Описаниe Эрзерумского вилайета, С-Петербург, 1874. էջ 5:*

² Տե՛ս *Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. I երեսնամյակին, Եր., 1994, էջ 140-141:*

քիան ու նրա դաշնակիցներ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան և Սարդի- նական թագավորությունը շոշափելի առավելություն ունեին:

1854 թ. Մ. Վոռնոցովի՝ Կովկասի փոխարքայի պաշտոնը լքելուց հետո ժա- մանակավոր սկզբունքով այդ պաշտոնը ստանձնած գեներալ Ռեսադը, տարածա- շրջանին անձանոթ լինելով, չէր ստանձնում որևէ նախաձեռնություն: Կովկասյան ճակատում ռուսական բանակի հրամանատար էր նշանակված գեներալ Վ. Բե- բուրովը, որը 1853-1854 թթ. կարևոր հաղթանակներ էր տարել թուրքերի նկատ- մամբ Բաշկադըքլարի և Քյուրուքդարայի ճակատամարտերում:

1854 թ. նոյեմբերի 29-ին Կովկասի փոխարքա է նշանակվում տարածա- շրջանին քաջածանոթ գեներալ Ն. Մուրավյովը, որն ակտիվորեն ներգրավվում է պատերազմական գործողությունների պլանավորման և ղեկավարման գործըն- թացի մեջ՝ քաղաքացիական հարցերի կարգավորումը հանձնարարելով գեներալ Վ. Բեբուրովին: Հենց Մուրավյովի՝ հրամանատարությունն ստանձնելու հետ են կապված Կովկասյան ճակատում ռուսական զորքերի աշխուժացումն ու նպատա- կաուղղված գործողություններն Օսմանյան կայսրության արևելյան հատվածի կա- րևորագույն հենակետերից մեկի՝ Կարսի գրավման ուղղությամբ, որն անընդհատ ձգձգվում էր մեծապես պայմանավորված այն հանգամանքով, որ թուրքերը, լավա- գույնս օգտագործելով պատմական Տայքի տեղանքը, կարողանում էին օգնություն հասցնել Կարսի կայագործին, առանց ռուսների կողմից հայտնաբերվելու: Թուրքա- կան կողմն անգլիական կոմիսար Վիլիամսի պահանջով մեծ ուժեր է կենտրո- նացնում Կարսում և ձեռնամուխ լինում հայոց հինավուրց բերդաքաղաքի պաշտ- պանությանը: Ռուսներն իրենց հերթին ձգտում էին ամեն գնով գրավել Կարսը և այն կտրել Էրզրումից: 1855 թ. օգոստոսին, պլանավորելով Կարսի գրավումը, Ն. Մուրավյովը կարևորագույն տեղ է հատկացնում Կարսի ամբողջական շրջափակ- ման օպերացիային: Այս պարագայում շրջափակումը ուղեկցվելու էր Արևմտյան Հայաստանի մի շարք շրջանների, այդ թվում պատմական Տայքի գավառների ռազմակալմամբ: Ինչպես ողջ Տայքը, այնպես էլ Տայքի՝ Կարսի հարևանությամբ գտնվող շրջաններն ունեին ռազմավարական կարևոր նշանակություն: Դա կապ- ված էր առաջին հերթին ունեցած դիրքի և բնական ամրության հետ³:

Կարսն Էրզրումին կապող ճանապարհներից մեկի՝ Մեծ Սողանլուղյան ճանապարհի գավթումը ռուսական զորքերի կողմից ստիպեց թուրքերին փորձել հաղորդակցությունը Կարսի հետ կազմակերպել Տայքի արևելյան հատվածով՝ Գյոլեի (Կոռ) սարահարթով, ուր հասնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել մի շարք լեռնանցքներ (Աղիտկոմ, Աղունդիր և այլն)⁴: Չնայած այն հանգամանքին, որ 1855 թ. օգոստոսին ռուսներին հաջողվում է օղակի մեջ առնել Կարսը և կտրել կայագործի կապն արտաքին աշխարհի հետ՝ զրկելով թուրքերին Էրզրումի հետ

³ Ղ. Ինձիճյանը, խոսելով Տայքի բնական պայմանների մասին, հատկապես կարևորում էր նրա ամուր դիրքը. «Բազում են ի Տայս տեղիք ամուրք և անքոյթ ի պատսպարուին ի թշնա- մեաց...»: Տե՛ս Ինձիճեան Ղ., Ստորագրութիւն Հին Հայաստանեաց, Վենետիկ, 1822, էջ 369:

⁴ Акты собранные Кавказской археографической комиссией (այսուհետ՝ АКАК), т. 11, Тифлиς, 1888, стр. 86.

ուղիղ հաղորդակցության հնարավորությունից, այսուհանդերձ թուրքերը դեռևս հույսեր էին պահպանում ինչ-որ կերպ կապ հաստատել մեկ այլ ճանապարհով՝ Օլթիի և Մամրվանի (Նարիման) վրայով:

Հայտնվելով բարդ կացության մեջ՝ Վիլիամսը որոշում է գաղտնի հարձակումներով կոթակապ միջոցներ հայթայթել: Այդպիսի գործողություններ նա փորձեց ծրագրել 1855 թ. օգոստոսի վերջին Տայքի Բանակի շրջանի Փենեք (Բանակ)⁵ և Բանջրուտ գյուղերի ուղղությամբ: Այստեղ թուրքերը կուտակել էին մեծ քանակությամբ պաշարներ, որոնց պաշտպանության համար առանձնացրել էին 1500-հոգանոց հեծելազոր և 1000-հոգանոց բաշիբոզուկների անկանոն զորաջոկատ՝ բերված Էրզրումից և սպառազինված հրետանիով: Մրանց առջև խնդիր էր դրված սրընթաց գրոհով ձեռքել պաշարումն ու Արդահանի ուղղությամբ շարժվել դեպի Կարս՝ օգնության հասնելու պաշարյալներին⁶:

Թուրքական զորքերի աշխուժացման և Փենեք ու Բանջրուտ գյուղերի ուղղությամբ տեղակայման մասին տեղի հայության շնորհիվ լուր է հասցվում ռուսներին⁷: Կովկասի փոխարքա Ն. Մուրավյովը, ձախողելու համար թուրքերի ծրագրերը դեռևս մշակման փուլում, հրամայում է գեներալ Կովալևսկու գլխավորած զորախմբին շարժվել Փենեք գյուղի ուղղությամբ: Զորախումբը կազմված էր 7 զունդ հետևակայիններից, 8 հեծելագնդից և սպառազինված էր 28 հրանոթներով: Նրա կազմում էին կազակական, մուսուլմանական և դրագունական զորքեր, իսկ առաջապահն էր գնդապետ Մ. Լորիս-Մելիքովի 200-հոգանոց հեծելաջոկատը⁸: Կովալևսկու համոզմամբ, այս ձեռնարկության հաջողությունը կախված էր լինելու առաջին հերթին անակնկալից, ուստի նա որոշում է արագ երթով զորքերը շարժել Սողանլուղից Փենեքի ուղղությամբ: 1855 թ. օգոստոսի 30-ին՝ առավոտյան ժամը 3-ին, դուրս է գալիս հետևակը, իսկ մեկ ժամ անց՝ հեծելազորը իշխան Դոնդուկովի հրամանատարությամբ: Սողանլուղից դեպի Փենեք տանող 70 վերստանոց ճանապարհն անցնելու էր պատմական Տայքի Պարտիզացիոնր գավառի Վարդանուտ գյուղից արևելք ընկած բարձունքով, որը հաղթահարելուց հետո ռուսական զորախումբը մտնելու էր Բերդացիոնր գավառ և ուղղություն էր վերցնելու դեպի Արսենիկ և Կոսուր գյուղերը⁹: Ն. Մուրավյովի վկայությամբ՝ ամբողջ ճանապարհը

⁵ Փենեքը (ըստ ռուս հեղինակների՝ *Пеняк*) համապատասխանում է պատմական Տայքի Բերդացիոնր գավառի Բանակ արքունի վայրին, ուր միջնադարում տեղակայված էր լինում հայոց զորքը: Փենեք անվանումը հենց Բանակ տեղանվան աղավաղված-թրքացված տարբերակն է: Այն ընկած էր նույնանուն գետակի աջ ափին՝ Օլթիից՝ 33, իսկ Արդահանից՝ 79 վերստ հեռավորության վրա: Այնտեղ է գտնվում VII դ. «զվարթնոցատիպ» տաճարը, որը կառուցվել է հայոց Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից, երբ վերջինս 652-658 թթ. գտնվում էր հայրենի Տայքում: Տե՛ս Ակոպով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը, Եր., 2013, էջ 108:

⁶ Богданович М. Восточная война 1853-1856 годов, т. 4, С.-Петербург, 1876, стр. 290-291.

⁷ Պողոսյան Ա., Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին// Տեղեկագիր Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի, Հասարակական գիտություններ, N 3, 1950, էջ 59:

⁸ Տե՛ս Богданович М., նշվ. աշխ., էջ 291-292:

⁹ АКАК, т. 11, стр. 87.

Մողանլուդից մինչև Փենեք քարքարոտ վերելքներով և վայրէջքներով էր և սարսափելի դժվարացնում էր ռուսական զորքի տեղաշարժը. շատ հաճախ զինվորները ստիպված էին լինում անցնել մեկ ձիավորի լայնությամբ կածաններով¹⁰:

Օգոստոսի 30-ին՝ կեսօրից հետո, ռուսական զորաջոկատը հասավ Արսենիկ, իսկ ժամը 5-ին՝ Կոսուր, որտեղ տեղացիները հայտնեցին, որ թուրքական զորքի ճամբարը տեղակայված է 10-12 կմ հեռավորության վրա՝ Փենեքում, և կազմված է կանոնավոր և անկանոն ջոկատներից: Ռուսական հետախուզությունը պարզեց, որ թուրքական 3000-անոց կայազորը ղեկավարում է Ալի փաշան: Երբ Լորիս-Մելիքովի առաջապահ ջոկատը ստիպված եղավ մարտի բռնվել թուրքական առաջապահ մի փոքր ջոկատի հետ և պարտության մատնելով՝ ստիպեց նահանջել դեպի Փենեք, ռուսական զորքերի տեղաշարժը բացահայտվեց¹¹: Ռուսական զորքի առաջխաղացման մասին տեղեկանալուն պես՝ Ալի փաշան, ենթադրելով, որ ռուսները փոքրաթիվ ուժերով են և առանց հրետանու՝ հրամայեց դիրքավորվել և պատրաստվել պաշտպանության, մանավանդ որ տեղանքն առավել քան նպաստավոր էր պաշտպանական գործողությունների համար¹²: Երեկոյան ժամը 6-ի մոտ սկսվեց բախումը ռուսական և թուրքական զորքերի միջև: Առաջինը գրոհի նետվեց իշխան Թումանովի ջոկատը: Չդիմանալով ճնշմանը՝ թուրքերը թողեցին Փենեք գյուղը, ինչպես նաև կիրճի ելքը փակող առաջին լեռնաշղթան: Շատ չանցած՝ ավագ Դեմիդովսկուն, որը աչքի էր ընկել առաջին լեռնաշղթայի գրավման ժամանակ, հաջողվում է վերցնել նաև կիրճի ելքը փակող երկրորդ լեռնաշղթան՝ ստիպելով այն պահող թուրքական զորաջոկատին նահանջել Օլթիի ուղղությամբ: Թուրքական զորախմբի մյուս մասն Ալի փաշայի հրամանով վերադասավորվեց՝ պատրաստվելով հակահարձակման¹³: Գեներալ Կովալևսկու խելամիտ որոշումները մարտի ընթացքում թուրքերին նոր խնդիրների առաջ կանգնեցրին, ուստի ռուսների ճնշման տակ թուրքական զորքի աջ թևն սկսեց նահանջել Օլթիի, իսկ ձախ թևը՝ Կոտիք գյուղի ուղղությամբ: Վիրավոր Ալի փաշային չհաջողվեց կանգնեցնել իր զորքի նահանջը, իսկ ինքը՝ փաշան, գերի վերցվեց կապիտան Ռոմանովսկու և եսաուլ Սերոյուկովի կողմից¹⁴:

Ռուսական մի քանի ջոկատներ սկսեցին հետապնդել հակառակորդին: Նպատակը ոչ այնքան գերի վերցնելն էր, որքան թույլ չտալ նրան հարմար դիրքեր զբաղեցնել, որոնք ներկայանում էին գրեթե ամեն քայլափոխին¹⁵: Օլթիի ուղղությամբ հետապնդելով հակառակորդին՝ ռուսները գրեթե հասնում են նրա մատույցներին, սակայն հնարավորություն չունենալով այն գրավել, երեկոյան ժամը 10-ի մոտ հետապնդումը դադարեցնում են: Թուրքերը տալիս են շուրջ 400 զոհ, այդ թվում՝ Օլթու միրլիվա Մամադ փաշան և անգլիացի սպա Մոյուարտը: Գերի ըն-

¹⁰ *Տե՛ս և Муравьев Н., Война за Кавказом в 1855 г., т. 1, С.-Петербург, 1877, էջ 244:*

¹¹ *Տե՛ս և Богданович М., նշվ. աշխ., էջ 293:*

¹² *ԱԿԱԿ, տ. 11, ժող. 88.*

¹³ *Նույն տեղում, էջ 89:*

¹⁴ *Տե՛ս և Богданович М., նշվ. աշխ., էջ 89:*

¹⁵ *ԱԿԱԿ, տ. 11, ժող. 89.*

կածների թվում, բացի Ալի փաշայից¹⁶, կային նաև 45 թուրք սպաներ: Ռուսական կողմն ունեցել էր ընդամենը 8 վիրավոր¹⁷: Բացի վերոնշյալից, ռուսները հակառակորդից կարողացել էին խլել նաև 4 հրանոթ, որից երեքը՝ հետապնդման ժամանակ¹⁸:

Օգոստոսի 31-ին ռուսական հետախուզական ջոկատը փոխգնդապետ Երմոլինսկու գլխավորությամբ պարզեց, որ Բանջրուտ գյուղի մերձակայքում տեղակայված թուրքական 1000-հոգանոց զորախումբը հապճեպորեն նահանջում է Փանագլեթս և Կյախ գյուղերի ուղղությամբ՝ Բանջրուտում թողնելով ողջ պարենը և մոտ 600 ոչխար: Թուրքերը լքել էին նաև Փերթևան գյուղում տեղակայված իրենց հոսպիտալը¹⁹:

Օգոստոսի 31-ին երեկոյան Փենեքում գտնվող Կովալսկուն են ներկայանում Օլթի ավանի բնակչության ներկայացուցիչներ՝ խնդրելով Օլթին ընդունել ռուսական հպատակության տակ, նաև հայտնելով, որ օգոստոսի 30-ին կրած պարտությունից հետո թուրքերը լքել են նաև Օլթին²⁰: Անշուշտ, գեներալ Կովալսկու կողմից Օլթիի գրավումը որոշակի առավելություն կտար ռուսներին, վտանգ կստեղծեր Էրզրումի համար: Առավել ևս, որ Էրզրումում գտնվող թուրքական հրամանատարությունն ավելի քան ահաբեկված էր ռուսների առաջխաղացման փաստից: Մակայն Օլթիում փոքրաթիվ կայագոր թողնելը վտանգավոր կարող էր լինել, քանի որ այն կտրված կլիներ ռուսական զորքի ճամբարից լուրջ տարածությամբ, ինչպես նաև՝ Տայքի դժվարանցանելի ճանապարհներով²¹: Նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր զորախումբը ֆիզիկապես հոգնել է երկարատև երթից, գեներալ Կովալսկին որոշում է Փենեքում թողնել հետևակի մի մասը, հրետանին և մի քանի կազակների, իսկ ինքը շտապում է Բանջրուտ՝ միանալու փոխգնդապետ Երմոլինսկուն:

Մեյստեմբերի 1-ին ռուսական ուժերի մի մասը Կովալսկու հրամանով շարժվում է Ադիսկում-Չոկամ ուղղությամբ՝ Փենեքից ուղղություն վերցնելով դեպի Գյուլե-Արդահան՝ բացառելու համար Բանջրուտից դուրս մղված թուրքական կայագորի տեղաշարժը Արդահան-Կարս ուղղությամբ, դրանով կազմակերպելով Կարսի լիակատար շրջափակումն ու բացառելով թուրքերի՝ օգնություն ստանալը²²:

¹⁶ Գերված Ալի փաշան սեպտեմբերի 4-ին գեներալ Կովալսկու կողմից ներկայացվում է Կովկասյան ռուսական զորքի գերագույն հրամանատար փոխարքա Ն. Մուրավյովին: Բ դեպ, ինչպես վկայում է Մ. Բոգդանովիչը, թուրքին բնորոշ պարծենկոտությամբ փաշան հայտարարում է Մուրավյովին, որ իրեն գերի վերցնելը հավասար է Կարսը գրավելուն: Տես Богданович М., նշվ. աշխ., 299:

¹⁷ АКАК, т. 11, стр. 90.

¹⁸ Տե՛ս և Муравьев Н., նշվ. աշխ., էջ 249:

¹⁹ АКАК, նույն տեղում:

²⁰ Տե՛ս և Муравьев Н., նշվ. աշխ., էջ 251:

²¹ Կովալսկին զգուշացավ նաև Օլթիից այն կողմ բնակչության շրջանում մոլեգնող խուլերայի մասին լուրերից: Տե՛ս և Муравьев Н., նշվ. աշխ., էջ 251:

²² АКАК, т. 11, стр. 90.

Գիտակցելով Փենեքյան արշավախմբի հաղթանակի կարևորագույն նշանակությունը՝ փոխարքա Ն. Մուրավյովը հրամայում է այդ առիթով հրավառություն կազմակերպել, իսկ ինքն անձամբ շնորհավորում է իրեն հանդիպող զինվորներին ու սպաներին: Ռուսները այնպիսի թափով են նշում հաղթանակը, որ թուրքերին թվացել էր, թե նշում են կայսեր տարեդարձը կամ նոր գերագույն հրամանատարի նշանակումը²³:

Փենեքյան արշավախմբի հաջողությունն ակնհայտ էր, ուստի ռուսական հրամանատարությունն շտապեց պարզևատրել աչքի ընկած զինվորականներին, որոնց մեջ պատկառելի թիվ էին կազմում հայերը: Աչքի ընկնող իրենց ծառայությունների համար պարգևատրվել են Դիմիտրի Օնիկյանը «Մուրք Մտանիսլավի 2-րդ աստիճանի մեդալով», տարբեր պարգևների են արժանացել միլիցիայի պողպորուչիկ Սահակ Ավանեսովը, վեքիլներ Դիմիտրի Մելիքովը, Մամեդադա Մինասովը, Ջախար Եղիազարովը, Գևորգ Մուրադովը, Կարապետ Էդիլխանովը, ճակատում գտնվող թարգմանիչներ Մանուկ և Մարտիրոս Բեհբութովները, Սերգեյ Վարշամովը, Սահակ Ավանեսովը, Սարգիս Բաղդասարյանը և Ստեփան Հարությունյանը²⁴:

Մակայն, Ղրիմի ռազմաճակատում թուրքերի և նրա դաշնակիցների տարած հաղթանակը կանխորոշեց պատերզմի ելքը, չնայած այն հանգամանքին, որ Կովկասյան ռազմաճակատում ռուսները շոշափելի առավելության էին հասել և փոխարքա Մուրավյովի գլխավորությամբ 1855 թ. նոյեմբերին հաջողությամբ պսակել Կարսի գրավման օպերացիան: Փարիզում 1856 թ. մարտին կնքված հաշտությունը հերթական հիասթափությունն առաջացրեց հայության շրջանում: Հերթական անգամ Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններն Օսմանյան կայսրությունն իրեն վերադարձրեց դիվանագիտական ճանապարհով: Այս անգամ կատարվեց Ղրիմի և Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքների փոխանակում:

Ղրիմի պատերազմի ավարտից հետո էլ Տայքը դառնում է այն հայերի հավաքատեղի, որոնք ձգտում էին որքան հնարավոր է մոտ բնակվել ռուս-թուրքական սահմանին, որպեսզի առաջին իսկ հնարավորության դեպքում անցնեին սահմանը և հաստատվեին ռուսական կողմում²⁵: Տեղեկություններ են պահպանվել Կարինից Տայք «երևելի անձանց» մի սովոր խմբի տեղափոխման վերաբերյալ²⁶, որոնք նամակագրական կապեր ունեին Վիրահայոց թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հետ:

²³ Տե՛ս *Богданович М.*, նշվ. աշխ., էջ 298:

²⁴ Տե՛ս *Պողոսյան Ա.*, Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին, էջ 59-60: *Кавказ, 1855, № 73*:

²⁵ Այդպիսի վերաբնակիչներից էին Օլթիի գավառի Բերդու գյուղի 50 տուն հայերը, Ագրակ գյուղի 270 հայ բնակիչները և բազմաթիվ ուրիշներ: Տե՛ս *Центральный государственный исторический архив Грузии (ЦГИАГ)*, ֆ. 415, Ժ. 21, և. 15:

²⁶ Տե՛ս *Դիվան Հայոց պատմութեան*, զիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 485: *Գեղամեանց Յ.*, *Կարապետ արքեպիսկոպոս*, Փորձ, 1876, թիվ 1, էջ 205:

Օսմանահպատակ հայության համար թուրքական լուծը թոթափելու հերթական հնարավորությունն առաջացավ ռուս-թուրքական հարաբերությունների հերթական լարման ժամանակ: 1877 թ. ապրիլի 12-ին Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը լայնամասշտաբ հարձակման անցան Ախալցխա-Արդահան, Ալեքսանդրապոլ-Կարս և Իզդիր-Բայազետ ուղղություններով: Ռուսական մի զորախումբ գնդապետ Կոմարովի գլխավորությամբ, մտնելով Տայք, 1877թ. մայիսի 20-ին գրավում է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Օլթին, ապա Բանակը²⁷: Տայքի գավառներից թուրքերը կարողանում են անառիկ պահել միայն Կիսկիմը և Պարխարի մի մասը:

Օլթիի գրավումից հետո թուրքական իշխանությունները լքում են քաղաքը: Ռուսների կողմից այնտեղ կազմակերպվում է ժամանակավոր վարչություն, իսկ բնակչությանը հայտարարվում է, որ Օլթին, Մամրվանը և շրջակա բնակավայրերը միանալու են Ռուսաստանին, հետևաբար Օլթիի գավառի բնակչությանը պարտադրվում է պարենամթերքով ապահովել ռուսական բանակին: Իր հերթին ռուսական հրամանատարությունը, հաշվի առնելով Օլթիի ռազմավարական կարևորությունը, փորձում է ուժեղացնել տեղի կայագործը՝ ներգրավելով Քութայիսյան 158-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը²⁸: Օլթիի՝ իբրև հենակետի ամրացումը մի քանի կարևոր նպատակ էր հետապնդում: Նախ, ապահովվում էր Կարսի և Ալեքսանդրապոլի հետ անխափան կապը, ապա, գրավելով հակառակորդից այդպիսի մի ընդարձակ տարածք, ռուսները պարենամթերքի հայթայթման այլընտրանքային ճանապարհներ էին ձեռք բերում:

Բոլոր ուղղություններով ռուսների տարած հաղթանակն ստիպում է թուրքական կառավարությանը հաշտություն խնդրել: 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում կնքված հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիան հոգուտ Ռուսաստանի է զիջում Տայքի տարածքների մեծագույն մասը՝ Կողի, Բանակի, Օլթիի և Տայոցքարի գավառներն ամբողջությամբ, ինչպես նաև Թորթումի և Մամրվանի գավառների հյուսիսային հատվածները²⁹: Սակայն «Մեծ տերությունների» ջանքերով այս պայմանագիրը 1878 թ. հուլիսի 1-ին Բեռլինում փոփոխությունների է ենթարկվում: Փոփոխվում է նաև ռուս-թուրքական սահմանագիծը: Եթե Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուս-թուրքական սահմանը լեռնազրական էր և անցնում էր բնական սահմանագծերով, ապա Բեռլինյան խմբագրմամբ այն դառնում է գլխավորապես երկրաչափական՝ միացնելով պետական սահմանի որոշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները: Այս փոփոխությունները հետագայում հանգեցնում են լուրջ դժվարությունների ռուս-

²⁷ *Տե՛ս Սեյդա Պոգոսյան Ա., Կարսկայա օբլաստը վաղ Բոսնիայում, Եր., 1983, էջ 46:*

²⁸ *Նույն տեղում, էջ 181:*

²⁹ *Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուս-թուրքական սահմանագծի, ինչպես նաև դրա Բեռլինյան ձևափոխումների վերաբերյալ տե՛ս Ն. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Եր., 1972, էջ 93-94, 127:*

թուրքական պետական սահմանների հստակեցման գործում³⁰: Տայքի՝ ռուս-թուրքական սահմանի երկայնքով ձգվող գյուղերի մի խումբ, որը Ման-Ստեֆանոյի պայմանագրով անցել էր ռուսական կայսրությանը, Բեռլինի պայմանագրով մնում է ռուս-թուրքական սահմանից այն կողմ: Թուրքերին է վերադարձվում Թորթումի գավառի հյուսիսային մասը՝ Թորթումի լճով, հանրահայտ ջրվեժով, Օշկվանքի և Խախուրի հոչակավոր տաճարներով, Աշմիշեն, Օսխա, Թև, Ծխիկ, Լեք, Ընկուզեկ և այլ գյուղերով, Տայցքարի գավառի արևմտյան մասը՝ Ավարես, Էրախանի (Իրխան), Օխորբերդ, Գելուտ և Իշխան գյուղերով՝ Իշխանի Ներսեսաշեն տաճարով հանդերձ, Օլթիի գավառի Անձավի գյուղախմբի մի մասը՝ Դիվաձոր, Ասփակ, Ոսկյան և Խուվոտ գյուղերով, ինչպես նաև Մամրվանի գավառի՝ մեծ մասը՝ հանրահայտ Իդ, Ախա, Արտոստ, Քարշեն և այլ գյուղերով:

Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին անցած շրջաններից Կարսը, Կաղզվանը, Արդահանը և Օլթին ընդգրկվում են նորաստեղծ Կարսի մարզի մեջ: Տայքի Կող գավառը հայտնվում է Արդահանի օկրուգի կազմում՝ իբրև Գյուլեի տեղամաս: Ռուսաստանին անցած Տայքի մյուս շրջանները՝ Օլթին, Մամրվանը, Բանակը, Բարդուսը, Փանազկերտը և Տայցքարն ընդգրկվում են 2627,2 քառ. վերստ (2800,6 քառ. կմ) տարածքով Օլթիի օկրուգի մեջ³¹, որն զբաղեցնում էր Կարսի մարզի հարավարևմտյան մասը³²: Առաջին չորսը միավորվում են Օլթիի տեղամասի (նախկին Օլթիի լիվայի Արևահայաց, Մովերոտ, Բարդուսի (Պարտեզ) և Անձավի (Անզով) նահիենները (գյուղախումբ)՝ Օլթի գետի միջին հոսանքի շրջանում, Բանակի գավառի Բանակի և Քիամխիսի (Կաղամախիի) նահիենները՝ Բանակ գետակի և նրա Բանջրուտ վտակի ավազաններում, Մամրվանի գավառի հյուսիսային փոքր մասը), իսկ Փանազկերտը և Տայցքարը՝ Տայցքարի տեղամասի մեջ (Օլթի գետի Փանազկերտ և Տայցքար վտակների ավազաններում):

³⁰ *Материалы для описания русско-турецкой войны 1877-1878 гг. на Кавказско-Малоазиатском театре, т. 3, Тифлиси, 1907, стр. 225.*

* Մամրվանի գավառից Ռուսաստանին են անցնում Մամրվան բնակավայրն ու նրա շրջակա մի քանի գյուղեր:

³¹ ЦГИАГ, ф. 1438, оп. 1, д. 323, л. 1.

³² Վրացի հնագետ Է. Թաղաշվիլիի կարծիքով՝ Օլթիի, ինչպես նաև Արդահանի օկրուգների ընդգրկումը Կարսի մարզի մեջ արհեստական էր ու սխալ, քանի որ թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական և թե՛ ազգագրական տեսանկյուններից այդ օկրուգները ոչ մի ընդհանուր բան չունեին Կարսի մարզի մյուս օկրուգների՝ Կարսի և Կաղզվանի հետ: Վերջիններիս Է. Թաղաշվիլիին պատմական և ազգագրական տեսանկյունից համարում էր բուն հայկական տարածքներ, ի տարբերություն «Վրաստանի անբաժանելի հատվածներ» Օլթիի ու Արդահանի, որոնց բնակչությունը միջնադարում «կրօնիս Վրացի» էր, չնայած որ նրանք «Հայի լեզուալ խօսեին» (Տե՛ս Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 18): Է. Թաղաշվիլին գտնում էր, որ Ճորոխի ավազանում ընկած Օլթիի օկրուգը պիտի կցվեր Բաթումի մարզին, իսկ Կուր գետի վերնագավառն զբաղեցնող Արդահանի օկրուգը՝ որպես Չավախքի մի մաս, Թիֆլիսի նահանգին: *Такайшвили Э., Археологическая экспедиция 1918 г. в южные провинции Грузии, Тб., 1952, стр. 17. Թաղաշվիլիի տրամաբանությամբ, անիմաստ էր Կարսի մարզի՝ որպես վարչական միավորի գոյությունն ընդհանրապես, քանի որ կարելի էր Կարսն ու Կաղզվանը միացնել Երևանի նահանգին՝ իբրև Ախուրյանի ու Արաքսի ավազաններում ընկած շրջաններ:*

Այսպիսով, XIX դ. II կեսի ռուս-թուրքական պատերազմների արդյունքում պատմական Տայքը բաժանվեց Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև՝ մեծապես տուժելով թե՛ ռուսական և թե՛ օսմանյան կառավարությունների վարած ոչ հայանպաստ էթնոժողովրդագրական քաղաքականությունից: Եթե Օսմանյան կայսրության կազմում տայեցի հայը բախվեց Ռուսական կայսրությունից գաղթած մահմեդականների հետ համակեցության պարտադրանքին, ապա նորաստեղծ Կարսի մարզում՝ Օլթիի օկրուգից Թուրքիա արտագաղթած մահմեդականների փոխարեն մեծ մասամբ ռուսների հաստատման խնդրին: Այսուհանդերձ, Օլթիի օկրուգում XIX դ. վերջին հաստատված հայությունը և տեղաբնիկ հայերը մի փոքր մեղմում են թուրքական տիրապետության շրջանում ձևավորված էթնկրոնական բացասական դիմագիծը:

РУССКО-ТУРЕЦКИЕ ВОЙНЫ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XIX ВЕКА И ТАЙК

___ Резюме ___

___ А. АКОПОВ ___

После подписания Адрианопольского мирного договора, часть армян исторической провинции Тайк Западной Армении в мае-июне 1830 г. переселилась в территории, которые перешли Российской империи согласно Туркменчайским и Адрианопольским договорам – Ахалкалак, Ахалцихе и Армянскую область. Во время Крымской войны 1853-1856 гг. Тайк оказался в эпицентре военных действий. В 1855 г. одна из знаменательных операций российской армии является Пенекская экспедиция во главе генерала Ковалевского. В этой экспедиции активное участие приняли многие армяне во главе с полковником М.Т.Лорис-Меликовым. В результате Пенекской экспедиции российские войска разбили турок, захватили Пенекский район, взяли в плен Али пашу, смогли окончательно окончить блокаду Карса, что в последствии поспособствовало взятию города в ноябре 1855 г..

Во время русско-турецкой войны 1877-1878 гг. российская армия захватила исторический Тайк. 20-го мая 1877 г. был взят г. Олти, далее – Пенек и остальные районы исторического Тайка, кроме Пархальского и Кискимского районов. В 1878г. согласно Сан-Стефанскому и Берлинскому трактатов Тайк был разделен между Османской и Российской империями. Тайкские районы, отошедшие России, вошли в состав Карсской области в качестве Ольгинского округа.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ակոպով Արկադի Արտյոմի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: arkadone@mail.ru

Анна ШПОРТ

АРМЯНСКАЯ ДИАСПОРА г. ХАРЬКОВА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX – НАЧАЛО XXI В.): ЭТНОДЕМОГРАФИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА

Полиэтничность и этническая маргинальность являются типичными чертами современных мегаполисов. К таким городам принадлежит по праву Харьков – один из самых многонациональных городов Восточной Европы. За всю многовековую историю существования здесь не было ни одного крупного столкновения между жителями на национальной, расовой или религиозной почве.

Именно в Харькове в 1999 г. была создана *Ассоциация национально-культурных объединений* Украины; плодотворно работают более 60 землячеств, деятельность которых охватывает сейчас больше 20 % харьковчан. Город известен далеко за пределами Украины своими национальными театральными и музыкальными коллективами, тематическими выставками, смотрами достижений этнокультур мегаполиса, многочисленными научными конференциями, симпозиумами, посвященными современным, весьма актуальным проблемам межнационального сосуществования.

Жители Харькова, где титульный этнос – *украинцы* – составляет более 60% населения, всегда интересовались и продолжают проявлять интерес к культурному наследию и образу жизни других этнических общностей, которые, возрождая и развивая свою культуру, язык, историю, традиции уже на ставшей для них родной харьковской земле, создают прочную базу для толерантности, добрососедства, созидания.

Объектом предлагаемого исследования выступает *армянская диаспора Харькова*. Традиционно исследователи-этнографы уделяют большее внимание сельскому населению, ибо изучение урбанистической тематики имеет, по-прежнему, свои сложности. Мы же выбрали Харьков – второй по численности город Украины, крупнейший экономический, научный, культурный центр, многонациональный мегаполис, где армянская диаспора насчитывает сегодня более 15 тыс. человек.

Хронологические рамки заданной тематики выбраны автором публикации не случайно: именно в 60-80-е годы XIX в. закладываются основы формирования *постоянной* армянской диаспоры в Харькове, а в начале XXI в. – 5-14 декабря 2001 г. – была проведена – пока единственная – *Всеукраинская* перепись населения.

Источниками при подготовке публикации послужили материалы *переписей* населения Харькова во второй половине XIX – начале XXI в., проведенные 13 марта 1866 г., 25 марта 1873 г., 29 апреля 1879 г., 28 января 1897 г., 8 декабря 1912 г., а также советских переписей населения: 28 августа 1920 г., 17 декабря 1926 г., 15 января 1959 г., 15 января 1970 г., 17 января 1979 г., 12 января 1989 г. и данные Всеукраинской переписи 5-14 декабря 2001 г.

Нашей целью является не столько сам анализ динамики численности армянского населения в Харькове – этим занимались в той или иной степени и

продолжают изучать демографы, историки Украины,¹ сколько анализ специфики процесса становления армянской диаспоры, как таковой, на новой родине.

«Материалы устной истории» – так зачастую украинские историки обозначают интервьюирование армянского населения в Харькове, а в ссылках добавляют следующее: «Интервью с таким-то респондентом, дата и продолжительность опроса, место хранения информации – Архив автора опроса». Естественно, что полученные таким образом материалы не учитывают многие важнейшие этноаспекты: конкретное место убывания из Армении, количество, половозрастной состав и степень родства переселяющихся, дату прибытия в Харьков; места оседания в Харькове и Харьковской губернии (области): доприселение к родственникам, землякам (другие варианты), продолжительность проживания, обратные переселенцы (если таковые имеются), сохранение этнического самосознания у разных поколений переселенцев, степень владения родным языком и языком титульного этноса (в нашем случае – украинским), другими языками, заключение браков (сохранение мононациональных, удельный вес браков с другими национальностями) и т.п.

Следует отметить, что в научной литературе, включая *этнологическую*, до сих пор не существует относительно единого, *однозначного* понимания термина «диаспора». Логично, что ученый-этнограф вправе рассматривать диаспору, как устойчивую совокупность людей единого этнического происхождения, как сохранившуюся *особую этническую общность*, вынужденную функционировать в иной этнической среде, в отрыве от материнского этноса, измененных климатических условиях, при соответствующей национальной политике, сформировавшемся культурном наследии новой родины.

Поэтому конкретные данные по численности армян в Харькове – прирост или убыль в определенный период, показатели по родному языку, количеству мужского и женского населения – анализировались автором предлагаемой публи-

¹ Багалея Д. История города Харькова за 250 лет его существования (1655–1905): в 2-х т. – Т. 1 / Багалея Д., Миллер Д. – Харьков, 1993; Т. 2 / Багалея Д., Миллер Д. – Харьков, 1993. Гончарова О. Національні меншини Харківщини в умовах здійснення політики коренізації (20-ті – початок 30-х рр. ХХ століття). Дис. канд. іст. наук: 07.00. 01 – Історія України / Гончарова Ольга Сергіївна – Харків, 2006. Дашкевич Я. Армянские колонии на Украине в источниках и литературе XV – XIX веков / Дашкевич Я. Ереван, 1962. Дашкевич Я. Розселення вірменів на Україні у ХІ – ХVІІІ ст./ Дашкевич Я.// Український історико-географічний збірник. Київ, 1971. Вип. І. стр. 150–181. Кочарян С. Вірменська громада Харкова (1863–2010 рр.). Дис.канд. іст. наук: 07.00. 01 – Історія України / Кочарян Сурен Гарнікович – Харків, 2011. Оноприенко Т. Из истории харьковских армян / Оноприенко Т. // Кеворкян К. Первая столица. Харьков, 2007. стр. 388–397. Пивоварська К. Вірменська Національна меншина в Україні у 20-ті – 30-ті роки ХХ століття. Дис. канд. іст. наук: 07.00.01–Історія України/Пивоварська Карина Борисівна – Полтава, 2003. Тер-Карпетянц Ж. Армянская община Харькова /Тер-Карпетянц Ж.//Община.1996. Вип.2. стр. 40–43. Шарібжанов Р. Етносоціальна структура населення Харкова в 20–30-ті рр. ХХ ст. / Шарібжанов Р.// Вісник Харківського національного університету. Харків, 2008. № 816: «Історія». Вип. 40. стр. 393 – 405. Якубова Л. Етнічні меншини УРСР і влада: динаміка соціально-економічних, політичних і культурних перетворень (1921–1935 рр.). Дис. ... доктора. іст. наук: 07.00. 01 – Історія України / Якубова Лариса Дмитрівна – Київ, 2007. Короткі підсумки перепису населення України 17 грудня 1926 року. Національний і віковий склад, рідна мова та писемність населення. – Харків, 1928.

кации как длительный процесс адаптации, приспособляемости армянской национальной культуры к новым, отличительным условиям.

Наличные статистические источники позволяют исследователю-этнологу выявить особенности формирования армянской диаспоры в Харькове с момента ее появления и по настоящее время. Как известно, первые армянские колонии на современной территории Украины возникают в Крыму в X – XI вв. в связи с захватом их территории арабами и турками-сельджуками, а также антиармянской политикой Византии. Наиболее компактно выходцы из Армении селились на западноукраинских землях, где за период с XIII-го до XVIII-го столетия количество армянских селений достигает 20.²

Приток армян на Слобожанские земли наблюдаем значительно позже, чем в Западную Украину – где-то в конце 60-х – 80-е гг. XIX в. Именно тогда начала формироваться *постоянная* армянская община в Харькове. Согласно материалам *однодневной* переписи 29 апреля 1879 г. «племенной состав» Харькова (так тогда обозначали национальную принадлежность) выглядел следующим образом: русские – 61529 чел., украинцы – 29673 чел., евреи – 5055 чел., немцы – 2059 чел., поляки – 1375 чел., татары – 331 чел., караимы – 267 чел., французы – 204 чел., армяне – 90 чел. (мужчин – 69, женщин – 21), чехи – 44 чел., итальянцы – 41 чел., грузины – 40 чел., англичане – 38 чел., персы (иранцы) и шведы – по 35 чел., греки – 31 чел. и др. (подано автором публикации согласно численности).³

К особенностям изначального расселения армян в Харькове следует отнести тот факт, что не наблюдалось кустового оседания – *селились по всему городу*. Также армяне-новоселы – а среди них доминировали ремесленники и торговцы – оседали не только в самом Харькове, но и в тогдашних уездных городах Харьковской губернии: Ахтырке, Богодухове, Валках, Волчанске, Изюме, Купянске, Лебедине, Старобельске, Сумах, Чугуеве и в сельской местности. В этом плане для исследователей весьма информативны ведомости (таблицы) «О числе жителей в Харьковской губернии за такие-то годы по вероисповеданиям». Для примера ознакомимся с некоторыми. К тому же при существующем сегодня «разночтении» (если не сказать – искажении) первоисточников подобный экскурс в прошлое будет полезен для дальнейших историко-этнологических изысканий.

Так, в «Ведомости о числе жителей Харьковской губернии по вероисповеданиям за 1880 год» читаем: в Харькове мужчин «армяно-григорианского исповедания» – 12, женщин – 6.⁴ В аналогичной таблице за 1884 год содержатся уже дополненные данные по Харькову: мужчин «армяно-григорианского исповедания» – 98, женщин – 87 и сведения о появлении армянских новоселов в Сумах: мужчин – 2, женщин – 1.⁵

Процесс *постоянного* притока армянского населения на территорию Харьковской губернии наглядно иллюстрируют данные за 1892 год: на тот момент в Харькове проживало мужчин «армяно-григорианского исповедания» – 190, женщин – 150; появились армянские новоселы и в уездах Харьковской губернии: Харьковском: мужчин – 8, женщин – 2, Валковском: мужчин – 5, женщин – 2, а также городах губернии: Славянске: мужчин -10, женщин-9, Лебедине: мужчин-1,

² Наулко В. *Етнічний склад населення України // Радянська школа. Київ, 1990. № 3. стр. 46.*

³ *Харьковский календарь на 1883 год. Год одиннадцатый. Харьков, 1883. стр. 144-159.*

⁴ *Харьковский календарь на 1882 год. Год десятый. Харьков, 1882. стр.80-86.*

⁵ *Харьковский календарь на 1886 год. Год четырнадцатый. Харьков, 1885. стр.279.*

Сумах: мужчин–15, женщин – 8; всего мужчин–231, женщин–171;общее количество армян-григорианцев–402 человек (выборка и подсчет автора публикации).⁶

Если в 1893 г. численность армян-григорианцев в Харькове и Харьковской губернии практически не изменилась – 406 человек,⁷ то 1895 год внес существенные коррективы: в самом Харькове мужчин «армяно-григорианского исповедания» уже проживало 250, женщин – 210 и значительно увеличилось армянское население в уездах Харьковской губернии: Харьковском: мужчин – 3, женщин – 4, Валковском: мужчин – 4, Змиевском: женщин-1, Изюмском: мужчин – 6, женщин – 4 и городах: Славянске: мужчин – 15, женщин – 10, Лебедине: мужчин – 1, Сумах: мужчин – 17, женщин – 1, Валках: мужчин – 2; всего мужчин – 308, женщин – 255. Таким образом, общее количество армян-григорианцев составило 563 человек (выборка и подсчет автора публикации).⁸

Для полноты этнодемографической картины следует ознакомиться и с данными за 1898 год, ибо активизировался приток (или внутренние перемещения) армян в уезды Харьковской губернии (при том, что в самом Харькове показатели не изменились): Харьковский уезд: мужчин – 13, женщин – 6, Валковский: мужчин – 3, Змиевской: мужчин – 1, женщин–1, Изюмский: мужчин–18, женщин–17, Купянский: мужчин–1 и в городах: Славянск: мужчин-32, женщин – 17, Сумы: мужчин – 16, женщин – 12, Валки: мужчин – 2, Ахтырку: мужчин – 3, Богодухов: мужчин – 1, Чугуев: мужчин – 1; всего мужчин – 341, женщин – 263, а общее количество армян-григорианцев – 604 чел. (выборка и подсчет автора публикации).⁹ Естественно, что по прибытии на место происходили дальнейшие перемещения – ведь процесс адаптации достаточно сложен и определяется многими факторами.

Статистика, особенно когда речь идет об этнодемографии, не всегда отличается точными показателями. Те же всеобщие переписи населения могут иметь отдельные погрешности. Иное дело, когда современные исследователи, не утруждая себя обращением к первоисточникам, вносят свои «правки», искажая тем самым, столь важные материалы.

На период проведения всеобщей переписи населения Российской империи 1897 г. все население Харьковщины составляло почти 2,5 млн. чел. Харьковский регион был родиной для представителей 45 этносов. Наиболее многочисленными являлись украинцы – 2009411 чел. (80,62 % от общей численности населения), затем следовали русские – 440936 чел. (17,69 %), евреи – 12650 чел. (0,51 %), белорусы – 10258 чел. (0,41 %), немцы – 9080 чел. (0,36 %), поляки – 5910 чел. (0,24 %), татары – 1358 (0,05 %), армяне – 615 чел. (0,02 %), цыгане – 425 чел. (0,01 %) и французы – 318 чел. В самом Харькове перепись зафиксировала армян – 468 чел. (украинцев – 45092, русских – 10991 чел., белорусов – 612 чел.).¹⁰ Сравнивая учетные данные со статистикой, помещенной в Харьковском календаре, видим, что имеются весьма незначительные расхождения в численности армян в Харькове и Харьковской губернии.

⁶ Харьковский календарь на 1894 год. Год XXII. Харьков, 1894. стр. 232-234.

⁷ Харьковский календарь на 1895 год. Год XXIII. Харьков, 1895. стр. 75.

⁸ Харьковский календарь на 1897 год. Год XXV. Харьков, 1897. стр. 114-116.

⁹ Харьковский календарь на 1900 год. Год XXVIII. Харьков, 1900. стр. 130-132.

¹⁰ Всеобщая перепись населения Российской империи, 1897 г. Т. 47. Харьковская губерния. СПб., 1904.

Следующая перепись – 8 декабря 1912 г. – охватывала лишь население, жившее в пределах городской черты (239904 чел.), ибо на подсчет населения пригородов Харькова «со стороны губернской администрации разрешение получено не было». Учету надлежало только наличное на 8 декабря население города. Не ограничиваясь одними количественными показателями жителей Харькова, эта перепись включала в число своих задач *изучение состава населения «по признакам пола, возраста, грамотности, вероисповедания, родного языка, месторождения и профессиональных занятий»*.¹¹

Полученные материалы в очередной раз подтвердили специфику формирования этнического состава такого города, как Харьков: население, родившееся здесь, составляло всего лишь 32,5 %, т. е., все остальное население – 67,5 % – было *пришлым!* Причем подобную тенденцию зафиксировали предыдущие однодневные исчисления харьковчан, проведенные губернским Статистическим комитетом *13 марта 1866 г.*, (всего харьковчан – 60797 чел.), *25 марта 1873 г.* (821333 чел.), *29 апреля 1879 г.* (102049 чел.). К примеру, однодневная перепись 1873 г. обнаружила в Харькове из общего числа его жителей 45 % уроженцев не Харьковской, а иных губерний. А материалы переписи 1897 г. показали, что из общего состава городского населения Харькова лишь 38,2 % явились уроженцами Харькова и его уезда.¹² Вот на таком пестром этнофоне происходило обустройство армян-новоселов, что создавало дополнительные сложности, но вместе с тем способствовало сплочению армянской общины, усиливало ее жизнеспособность, приспособляемость к условиям действительности и вынуждало формировать свое будущее успешнее других этносов-новоселов.

Первая советская перепись населения была проведена по состоянию на *28 августа 1920 г.* и охватила только 84 % всего населения Украины, так как в отдельных губерниях продолжалась гражданская война. В силу этих обстоятельств фиксировалось лишь наличное население. Учет внес некоторые коррективы в численный и этнический состав населения Харьковского региона: теперь наиболее многочисленными национальными меньшинствами были: русские, евреи, поляки, латыши, белорусы, немцы, *армяне (7-е место по численности: в Валковском уезде проживало 45 армян, Ахтырском – 29, Изюмском – 15, Лебединском – 14, Харьковском – 11, Змиевском – 6?, Купянском – 3, Чугуевском – 3, Волчанском – 1)*. В самом же Харькове армяне тоже занимали 7-е место, насчитывая 2033 чел.; их опережали русские – 136466 чел., украинцы – 57366 чел., евреи – 55474 чел., поляки – 7385 чел., латыши – 3721 чел., немцы – 2326 чел..¹³

Наверное, нам следует упомянуть и предвоенную перепись 1939 г., согласно которой в Харькове проживало 4056 армян [16, с. 270].¹⁴ Свою регистрацию

¹¹ Главные итоги переписи города Харькова 8 декабря 1912 г. Выпуск I. Харьков, 1914. стр.1.

¹² Там же, стр. 39, 41.

¹³ Статистика Украины. Серия I. Демография. Т. I. Вып.5. Население Харьковской губернии по данным переписи 1920 года. Численность населения. Возрастной состав. Грамотность. Национальный состав. – Харьков, 1922. стр. 12-13.

¹⁴ Харків. Збірник архівних документів і матеріалів. Серія «Старовинні міста Харківщини» / Головна ред. С. І. Посохов. – Харків, 2004. стр. 270.

харьковчан провели в 1941 г. немцы – 456639 жителей, среди которых армян насчитывалось 2970 чел. (0,65 % всего населения города).¹⁵

Объем предложенной публикации не позволяет проанализировать материалы всех послевоенных советских переписей – 1959 г, 1970 г., 1979 г. Однако данные переписи 12 января 1989 г. – они доступны для пользования – будут частично задействованы в нашем исследовании. Армянская история конца XX в. пестреет печальными датами – Спитакское землетрясение, трагические события в Сумгаите и Баку, война в Нагорном Карабахе – к очередному оттоку армян в Украину, в том числе и в Харьков. Если посмотреть состав населения Харьковской области по наиболее многочисленным национальностям в 1989 г., то армян проживало 8152 чел. – 0,26 % населения области (все население Харьковской области – 3174675 чел.: украинцев – 1992976 чел., русских – 1054207 чел., евреев – 48921 чел., белорусов – 22898 чел., азербайджанцев – 6541 чел., татар – 6021 чел.). Население самого Харькова, по переписи 1989г., составляло 1593970 чел.: украинцев – 803030 чел., русских – 695135 чел., евреев – 47885 чел., белорусов – 11946 чел., армян – 5960 чел. (0,37 % всех жителей города), татар – 4620 чел., поляков – 1829 чел. Интерес для исследователей армянской диаспоры представляет рас распределение по родному языку: наибольший процент наблюдаем у русских – 99,5 % считали родным русский язык, затем идут крымские татары – 57,9 %, украинцы – 56,9 %, татары – 41, %, армяне – 40,9 % в самом Харькове и 48,7 % в Харьковской области, белорусы – 29,3 %, поляки – 11 %.

Завершает наше исследование Всеукраинская перепись населения 5-14 декабря 2001 г., зафиксировавшая на территории современной Украины проживание представителей более 130 национальностей. По численности армяне занимают 11-е место, уступая, естественно, титульному этносу, а также русским, белорусам, молдаванам, крымским татарам, болгарам, венграм, румынам, полякам и евреям (подсчитано автором публикации). Тем не менее, армяне вошли в число этнических общностей, количество которых после 1989 г. возросло в Украине наиболее: лидируют крымские татары – в 5,3 раза, армяне (в 1,8 раза), грузины (в 1.4 раза), азербайджанцы (в 1,2 раза) и румыны (в 1,1 раза).

Если рассматривать данные по Харьковской области (всего населения – 2895800 чел.), где проживают представители 111 национальностей, то армяне в этом перечне занимают 5 место – 11100 чел., что в процентном отношении к 1989г. составляет 136,9 % ! (большой прирост только у грузин – 138,8 %). В самом Харькове на момент проведения переписи проживало 7214 армян (0,5 % всего населения города), уступая, кроме украинцев, русским, евреям и белорусам, т. е. сохранили и здесь 5- место. Языковой состав населения области, согласно проведенному учету, свидетельствует о том, что 45,7% армян считали родным языком армянский, 4,8 % – украинский, 49,1 % – русский и 0,4 % – другие языки.¹⁶

Доказательством того, что армянской общине удалось успешно справиться с поставленными задачами, является нынешняя, вполне сформированная, действенная армянская диаспора Харькова, органически вписавшаяся в жизнь украинского мегаполиса. В 1991г. в Харькове был открыт *Армянский культурный*

¹⁵ Скоробогатов А. Харків у часи німецької окупації (1941–1943) / Анатолій Скоробогатов. Харків, 2004. стр. 30.

¹⁶ Інформація Головного управління статистики у Харківській області від 05.04.2011, № 28.

центр. Спустя несколько лет – в 1995 г. – создан *Харьковский городской благотворительный фонд развития армянской культуры и образования* – «Україна – Вірменія», предназначенный всемерно содействовать развитию армянской культуры и образования, а также охране исторических и культурных ценностей. В июле 2001 г. вышел первый номер газеты «Канч», рассказывающей о жизни армян на новой родине – Харьковщине, с 2006 г. издается газета «*Армянский Вестник*». В городе функционирует армянская воскресная школа, проводятся совместные научные конференции «Вірменія – Україна: минуле, сьогодні, майбутнє. Перспективи взаємин»; с 2001 г. радуется харьковчан, гостей Харькова своими выступлениями ансамбль песни и танца «Вірменія».

Именно Харьков был выбран местом проведения в Украине убедительной конференции Союза армян Украины (1 июля 2001 г.). В самой области проводится большая работа по созданию филиалов Армянской национальной общины. Так, 9 сентября 2005 г. была сформирована армянская община Балаклеевского района, 14 апреля 2007 г. – города Изюма. В декабре 2006 г. в Харькове создана городская армянская община. Знаковым явилось открытие в сентябре 2009 г. Почетного консульства Республики Армения в Харьковской и Сумской областях, а в декабре 2009 г. при консульстве заработал Армянский культурно-образовательный центр имени Г. О. Алтуняна. В марте 2012 г. принято решение о создании Харьковской областной общественной организации «Армянская национальная городская община».

Поэтому дальнейшее научное комплексное этнологическое изучение армян-харьковчан, которые продолжают играть весьма существенную роль в современной политической, экономической и культурной жизни региона, будет целесообразным и сделает свой весомый вклад не только в исследование армянской диаспоры, но и института диаспоры вообще – ведь современные миграционные процессы очень специфичны и требуют постоянного или хотя бы регулярного этнонаучного мониторинга с целью оценки, сравнения и прогнозирования.

ԽԱՐԿՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ (XIX դ. երկրորդ կես – XXI դ. սկիզբ).
ԷԹՆՈՃՈՂՈՎԴՐԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

___ *Ամփոփում* ___

___ *Ա. Շարուն* ___

Բազմաէթնիկությունը և էթնիկ մարզինաությունն արդի մեգապոլիսների բնորոշ գծերն են: Այդպիսին է նաև Խարկովը Արևմտյան Եվրոպայի ամենաբազմազգ քաղաքներից մեկը, որի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացմանը մեծապես նպաստել է հայկական համայնքը: Պատահական չէ, որ այստեղ են անցկացվում Ուկրաինայի հայերի միության կարևոր հավաքներն ու մշակութային միջոցառումները:

Сведения об авторе

Шпорт Анна Михайловна – канд. ист. наук, Харьковский национальный университет, E-mail: tronkocentr@karazin.ua

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. ապրիլ) *

Թուրքական ռազմակալումից ազատագրված Լոռու պատկանելության շուրջ 1918թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության միջև առաջ եկած դիվանագիտական հակամարտությունը դեկտեմբերի 13-ին վերաճեց պատերազմի: Անդրկովկասում Անտանտի ներկայացուցիչների միջնորդությամբ դեկտեմբերի 29-ին Ղարաքիլիսայում կողմերը զինադադարի համաձայնագիր ստորագրեցին, որի հիման վրա դեկտեմբերի 31-ին ռազմական գործողությունները դադարեցին: 1919թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում տեղի ունեցած հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ընթացքում առերևույթ «լուծվեցին» հայ-վրացական տարածքային խնդիրները. Ախալքալաքում մտցվեց վրացական վարչակարգ, իսկ հայկական գորաջոկատների կողմից ազատագրված Լոռին վերաձվեց չեզոք գոտու: Հայաստանի և Վրաստանի հարաբերություններում առկա վիճելի մյուս հարցերի կարգավորումը տևեց մինչև 1919թ. մարտը:

Վերը թվարկված իրադարձությունների ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն Հայաստանի խորհրդի անդամ, ճանաչված դաշնակցական գործիչ ու մտավորական, հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Մարտիրոս Հարությունյանի շուրջ երեք տասնյակ նամակները: Դրանք ուղղված են Հայաստանի խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազունուն, վարչապետի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանին, Արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանին, Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին՝ ժամանակագրական տեսակետից ընդգրկելով 1918թ. դեկտեմբերից մինչև 1919թ. ապրիլը:

Թիֆլիսից Երևան վերադառնալուց հետո՝ 1919թ. ապրիլի 7-ին, Մ. Հարությունյանը և պատվիրակության մյուս անդամներն իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ ընդարձակ զեկուցում-հաշվետվություն են ներկայացրել վարչապետի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանին: Այս արժեքավոր փաստաթուղթը տարիներ առաջ հրատարակել ենք¹: Նշված նամակ-զեկուցագրերը հայ-վրացական հարաբերությունների տվյալ ժամանակափուլի պատմությունը հետազոտող մասնագետների (Ռ. Հովհաննիսյան, Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան,

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Տե՛ս Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918թ. դեկտեմբեր – 1919թ. մարտ), Պատմա-բանասիրական հանդես, 2009, N 1, էջ 185-206:

Կ. Սարգսյան, Ա. Մելքոնյան, Վ. Վիրաբյան, Վ. Հարությունյան և ուրիշներ) կողմից ուսումնասիրված չեն²:

Մ. Հարությունյանի նամակներում անդրադարձ է կատարվում զինադադարի շուրջ բանակցություններին, խաղաղարար կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներին, կոնֆերանսի ընթացքին, երկկողմ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման խնդրին, հայ-վրացական հարաբերություններին առնչվող այլ վիճահարույց հարցերի (Չեզոք գոտու երկաթուղու, անդրկովկասյան բռնության, անդրկովկասյան միասնական գույքի բաժանման խնդիրներ, Դաշնակիցների քաղաքականությունը, Վրաստանի հայերի դրությունը և, ընդհանրապես, հայության նկատմամբ վրացիների դիրքորոշումը, պատմվիրականության գործունեության արդյունավետության խնդիրը և այլն):

Մ. Հարությունյանի՝ մեզ հայտնի առաջին նամակը գրվել է 1918թ. դեկտեմբերի 23-26-ի միջակայքում: Այն Ղարաքիլիսայից ուղարկվել է Հայաստանի խորհրդի նախագահ Ավետիք Մահակյանին: Այստեղ ուշադրության արժանի վկայություններ կան վրացիներից վերցված ռազմավարի մասին: Այսպես՝ հայկական զինուժն առգրավել էր 300 վագոն, 15 շոգեկառք, գնդացիք, 16 թնդանոթ, 3 գրահագնացք (որից 2-ը անվնաս վիճակում. դրանցից մեկը մասնակցում էր վրացիների դեմ ռազմական գործողություններին), ռազմամթերք, երկաթուղային, հեռագրային և հեռախոսային գույք և այլն, գերել շուրջ 1000 վրացի զինվոր (այդ թվում՝ 40 սպա): Վրացիներն ունեին շուրջ 400 սպանված ու վիրավոր, հայկական կողմի կորուստներն անհամեմատ քիչ էին: Մ. Հարությունյանն առաջարկում էր ուղարկել փորձառու պաշտոնյաներ ու մտավորականներ՝ ազատագրված տարածքներում իշխանության մարմիններ ձևավորելու նպատակով, նաև զինական ուժ՝ ազատագրված տարածքներն ամրացնելու և նոր հաջողություններ արձանագրելու համար: Նա ցավով արձանագրում էր, թե Ղարաքիլիսա հասնելով՝ պարզել են, որ Վրաստանը ոչ միայն ներկայացուցիչներ չի ուղարկել, այլև որևէ պատասխան չի տվել զինադադարի վերաբերյալ Է. Գրինի առաջարկին³: Այս և այլ փաստերի համադրումից երևում է, որ Մ. Հարությունյանը կողմնակից էր ռազմական գործողությունների դադարեցմանը և երկու դրացի ժողովուրդների միջև եղած հակասությունները խաղաղ, բանակցային ճանապարհով հարթելուն:

² Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Եր., 2005: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Գալոյանի և Վ. Ղազախեցյանի, Եր., 2000: Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Եր., 2002: Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, Վիրաբյան Վ., 1918թ. վրաց-հայկական պատերազմը. ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., 2003: Նույնի՝ Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-2016թթ., Եր., 2016: Հարությունյան Վ., Հայ-վրացական պատերազմը (1918թ.), Եր., 2014: Ի դեպ, առաջիկայում պատրաստվում ենք այդ նամակները հրատարակել:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 368-369 շրջ.:

1919 թ. հունվարյան կոնֆերանսի ընթացքում և հաջորդ օրերին հայկական կողմի համար միջպետական խնդիրների շարքում առաջնային էր համարվում Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը: Մ.Հարությունյանի նամակների ընթերցումից պարզորոշ էրևում է, որ այս ուղղությամբ նրա գլխավորած պատվիրակության գործադրած ջանքերն արդյունք չէին ունենում: Խնդիրն այն է, որ վրացական կառավարության ներկայացուցիչները զանազան պատճառաբանություններով ձգձգում էին հարցի հանգուցալուծումը:

1919 թ. հունվարի 17-ին Երևան ուղարկված նամակում Մ. Հարությունյանը շեշտում է հետևյալ հանգամանքը. կոնֆերանսի ընթացքում և մասնավոր հանդիպումների ժամանակ հայ պատվիրակները փաստում էին, որ պատերազմը վերջացել է, ուստի երկու ժողովուրդներին ցույց տալու համար, որ խաղաղությունը վերջնական է, անհրաժեշտ է վերականգնել միջպետական նորմալ հարաբերությունները: Վրացիների փաստարկները հիմնականում բխում էին նրանց այն դիրքորոշումից, որ երկու երկրների միջև պատերազմը դեռևս վերջնականապես ավարտված չէ, այլ միայն զինադադար է կնքված: Ըստ այդմ՝ պետք է պարզել պատերազմի մեղավորին և ապա միայն վերականգնել դիվանագիտական կապերը⁴: Մրա պատճառներից էր այն, որ վրաց-հայկական դիվանագիտական հակամարտության և հատկապես երկշաբաթյա պատերազմի ընթացքում մենշևիկյան կառավարությունը վրացի ժողովրդին հակահայկական տրամադրություններ էր ներարկել, ուստի նրա համար դյուրին չէր կտրուկ փոխել տարվող քաղաքականությունը: Մասնավորապես նրա փետրվարի 14-16-ին կայանալիք Սահմանադիր ժողովի (այն գումարվեց 1919 թ. մարտի 12-ին) ընտրությունների ժամանակ այդ քայլը կարող էր օգտագործվել ընդդիմադիր ազգային-դեմոկրատական կուսակցության կողմից: Փետրվարի 2-ին այս մասին հաղորդելով ՀՀ կառավարությանը՝ Մ. Հարությունյանը պատկերավոր եզրափակում էր. «Իսկ այդ շովինիզմին ս[ոցիալ]-դ[եմոկրատիա]ն շատ նպաստել էր [իր] ընթացքով այս կոնֆլիկտի ժամանակ: Ս[ոցիալ]-դ[եմոկրատիա]ն իր դուրս կոչած չար ոգիներին այժմ ինքը չի կարողանում զսպել»⁵: Վրաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորին և վրացի մյուս պաշտոնյաները նման փաստարկներ էին բերում նաև կոնֆերանսի ընթացքում:

Մ. Հարությունյանն իր նամակներում բազմիցս վկայում է, որ վրացիները նշված պատճառաբանությամբ դեմ էին արտահայտվում Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացմանը: Հունվարի 21-ով թվագրվող նամակում նա գրում է, որ Ե. Գեգեչկորին իրեն ուղղակի առաջարկել է, որ վրաց-հայկական պատերազմի շրջանի նման, Վրաստանի տարածքում գտնվող Հայաստանի քաղաքացիների շահերը շարունակի պաշտպանել Թիֆլիսի պարսկական հյուպատոսը⁶:

⁴ ՀԱՄ, թ. 66 և շրջ.:

⁵ Նույն տեղում, թ. 90 շրջ.:

⁶ Նույն տեղում, թ. 70 և շրջ.:

ՀՀ հաշտարար պատվիրակության՝ Թիֆլիս ժամանելուց հետո այստեղ գտնվող հայերը, Մ. Հարությունյանի վկայությամբ, տարաբնույթ հարցերով արդեն դիմում էին պատվիրակությանը: Վերջինն էլ դրանք լուծելու համար ուղարկում էր Վրաստանի կառավարությանը կամ Թիֆլիսում գտնվող բրիտանական ներկայացուցչությանը⁷: Իր հերթին՝ բրիտանական ներկայացուցչությունը հայերին առընչվող դիմումներն ընդունում էր միայն ՀՀ պատվիրակության միջոցով: Փաստորեն պատվիրակությունը փաստացի դիվանագիտական ներկայացուցչության գործառույթներ էր իրականացնում:

Նման դրությունը ձեռնտու չէր նաև անգլիացիներին: Հունվարի 23-ին վարչապետ Հ. Քաջազունուն գրած նամակում Մ. Հարությունյանը նշյալ իրողությամբ, նաև հայկական պատվիրակության՝ անգլիացիներին ուղղված բազում դիմումներով էր պայմանավորում բրիտանական հրամանատարության այն մտքին հակվելը, թե Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչության վերաբացումն անհրաժեշտություն է: Հունվարի 22-ին հայկական պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ Արևմտյան Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ջորջ Ֆորեստիե-Ուոկերը կարծիք հայտնեց, թե Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները պիտի վերականգնվեն, քանի որ ոչ թե զինադադար, այլ խաղաղություն է հաստատվել⁸: Բացի այդ՝ Ուոկերը փետրվարի 15-ին վրացական կառավարության անդամներին ի գիտություն հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունն իրավունք չունի արգելելու Հայաստանի ներկայացուցչության գործունեությունը: Վրացական կառավարությանն ուղղված հորդորներն ու ճնշումը դրական արդյունք տվեցին⁹:

Մ. Հարությունյանն իր ղեկավարած պատվիրակության՝ Թիֆլիսում գտնվելը կարևորում էր մինչև այն պահը, երբ կվերաբացվեր Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Այսպես՝ փետրվարի 17-ին ՀՀ արտգործնախարար Մ. Տիգրանյանին ուղղված նամակում նա գրում էր. «Մենք կարծում ենք, որ, եթե միսիան վերաբացվի, Միք. Թումանյանը կարող է առժամանակ գործերը տանել մինչև ներկայացուցիչ նշանակվելը: Այնուհետև գուցե դեղեգացիան հնարավորություն ունենա իրեն ազատ զգալու և վերադառնալու»¹⁰: Փաստենք, պատվիրակությունը հասավ իր առջև դրված այս կարևոր խնդրի լուծմանը:

⁷ Նմանատիպ դիմումների օրինակները տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Ա. Զաքարյան, Եր., 2005, էջ 98-99, 103-104, 106:

⁸ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77:

⁹ Մուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 199: Մարդարյան Գ., նշվ. աշխ., էջ 103:

¹⁰ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 84:

1919 թ. փետրվարի վերջերին վրացական կառավարությունը դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցում այլևս չպնդեց իր նախկին տեսակետները և ի վերջո հայտարարեց, որ համաձայն է Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչության վերաբացմանը: Հայկական և վրացական պատվիրակությունների՝ փետրվարի 28-ին կայացած հանդիպման ժամանակ մի քանի ժամ անընդմեջ տևող բանակցությունների արդյունքում կողմերը կարողացան գտնել որոշ հարցերի լուծումներ և փոխհամաձայնության գալ: Չնայած որոշումների հիմնական մասը մնաց թղթի վրա, սակայն նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկու երկրների միջև դիվանագիտական կապերի վերականգնման համար¹¹:

Վրաստանի ղեկավարները համարում էին, որ անհրաժեշտ է պաշտոնապես հայտարարել երկու երկրների անկախությունը: Մրան համամիտ էր նաև ՀՀ պատվիրակությունը, ուստի այդ մասին տեղեկացրեց իր կառավարությանը: Բանն այն է, որ վրացիները մտավախություն ունեին, թե հայերը Վրաստանի անկախությանը կողմնակից չեն: Մարտ ամսվա ընթացքում Վրաստանի և Հայաստանի կառավարությունները միմյանց անկախության ճանաչման վերաբերյալ նույնիսկ փոխանակեցին¹²: Պատվիրակությունների հանդիպման ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց մարտի 1-ից պաշտոնապես բացված համարել Վրաստանում ՀՀ դիվանագիտական միսիան՝ նախկին դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանի գլխավորությամբ՝ մինչև ներկայացուցչի նշանակումը¹³:

Փետրվարի 17-ի և մարտի 4-ի նամակներում Ս. Հարությունյանը հայտնում էր, որ դիվանագիտական ներկայացուցչի հարցում վրացական կառավարության անդամները, ինչպես մասնավոր խոսակցությունների ժամանակ, այնպես էլ երկկողմ բանակցությունների ընթացքում, դիվանագիտական պրակտիկայում տարածված սովորույթը վկայելով, դեմ էին արտահայտվում Արշակ Ջամալյանի վերանշանակմանը՝ մինչև իսկ առաջարկելով փոխել ներկայացուցչության ողջ կազմը: Մասնավոր խոսակցությունների ժամանակ նրանք նաև ակնարկում էին, որ իրենց համար առավել ընդունելի կլինի ոչ դաշնակցական ներկայացուցչի նշանակումը: Նման մոտեցում ունեին նաև Անդրկովկասում բրիտանական հրամանատարության ներկայացուցիչները¹⁴: Հաշվի առնելով վրացիների դիրքորոշումը՝ ՀՀ կառավարությունը Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նախկին անդամ, անկուսակցական,

¹¹ Մուքիսյան Հ., Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական կապերի վերականգնման հարցը 1918թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող շրջանում, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», թիվ IX-X, Եր., 2014, էջ 552-553:

¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150, թ. 86-87, Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ер., 2012, с. 132.

¹³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 117:

¹⁴ Նույն տեղում, թ. 126 և շրջ.: Մուքիսյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 199-200:

իրավաբան Լ. Եվանգուլյանին: Վերջինիս թեկնածության դեմ վրացիները չառարկեցին¹⁵: 1919 թ. մարտի 8-ին Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչությունը վերաբացվեց:

Նամակներում փաստեր են բերվում նույնիսկ զինադադարի համաձայնագրի ստորագրումից հետո Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում և այլ բնակավայրերում հայ բնակչության թալանի, հալածանքների, զանգվածային ձերբակալությունների մասին: Օրինակ՝ հունվարի 8-ին վարչապետ Հ. Քաջազունուն ուղղված նամակում նա գրում էր. «Դեղեգացիայի անդամներն ունեն անգլ[իական] և ֆրանս[իական] միսիայի թղթեր, որ եկած են այստեղ նրանց հրավերով և գտնվում են այդ միսիայի հովանավորության տակ: Այլ կերպ այստեղ անհնարին էր ապրել. մի այնպիսի համիդական ռեժիմ է տիրում, որ մարդիկ վախենում են փողոց դուրս գալ: Ձերբակալություններ՝ մասսայական: Բանտերը և մեծ շենքերը լեփ-լեցուն են 19-45 տարեկան հայերով. առանց խտրության ձերբակալում [են], ապա, մեծ գումարներ առնելով, արձակում: Հայավաճառության մի օրգիա է ստեղծված, որ իր նմանը չունի ոչ մի երկրում և չի ունեցել պատմության որևէ շրջանում»¹⁶: Ի դեպ, վրաց-հայկական պատերազմի ժամանակ Թիֆլիսի հայկական միսիայի ծառայողներն աքսորվել էին Բաթում: Նրանք Թիֆլիս վերադարձան միայն 1919 թ. Հունվարի կեսերին: Հունվարի 17-ին իր կառավարությանն ուղղված նամակում Մ. Հարությունյանը տեղեկացրեց այս մասին¹⁷:

Նամակներում վկայություններ կան նաև հայերի նկատմամբ Դաշնակիցների քաղաքականության մասին: Կոնֆերանսի օրերին գրված նամակներում Մ. Հարությունյանն առավել քննադատորեն է արտահայտվում մասնավորապես անգլիացիների մասին՝ նրանց մեղադրելով հայության շահերն անտեսելու մեջ: Նշենք, որ 1919թ. ապրիլի 7-ին ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանին ներկայացրած ընդարձակ զեկուցում-հաշվետվության մեջ նա շեշտում էր, որ 1918թ. դեկտեմբերի վերջին և 1919թ. հունվարի սկզբներին անգլիացիները սպա-վորություն ունեին, որ պատերազմը հայերն են սկսել, ուստի նրանք էլ մեղավոր են: Նա դրանով է բացատրում զինադադարի պայմանների հարցում և 1919 թ. հունվարյան կոնֆերանսի օրերին Դաշնակիցների՝ կողմերի հանդեպ ունեցած կողմնապահ դիրքորոշումը, որի պատճառով «միատեսակ վերաբերմունք չկար

¹⁵ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77 և շրջ., Туманян М., նշվ. աշխ., էջ 133: Ի դեպ, Մ. Հարությունյանն արտգործնախարար Ս. Տիգրանյանին առաջարկում էր Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակել անկուսակցական Տիգրան Բեկզադյանին (ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77 շրջ., 109): Սակայն ՀՀ կառավարությունն առավել նպատակահարմար համարեց, համաձայն նախապես կայացված որոշման, վերջինիս նշանակել Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ:

¹⁶ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 55 շրջ.: Այս մասին տե՛ս նաև՝ Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 115-125, ապրիլ, էջ 135-139: Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 242-248: Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 130-133: Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., էջ 441-449:

¹⁷ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 68 և շրջ.:

դեպի Ախալքալաքի և Լոռվա հարցերը»¹⁸: Կարծում ենք՝ սա ուշադրության արժանի, միևնույն ժամանակ ոչ միանշանակ դիտարկում է: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակն ու նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» վորձ էին կատարել վրաց-հայկական պատերազմի առիթն օգտագործել սեփական ազդեցությունն անդրկովկասյան տարածաշրջանում հաստատելու նպատակով: Այս պատճառով վրացիների, վերջիններիս ջանքերի արդյունքում՝ նաև անգլիացիների մոտ թյուր տպավորություն էր ստեղծվել, թե պատերազմի ժամանակ հայերը դաշնակցել են ռուսների հետ¹⁹: 1919 թ. հունվարի վերջերից մինչև մարտի սկզբները Մ. Հարությունյանի՝ Երևան ուղարկած նամակներից տեսնում ենք, որ իրադարձությունների խորքային պատճառներին ծանոթանալուց հետո էականորեն փոխվել էր Դաշնակիցների դիրքորոշումը հայերի՝ պատերազմում մեղավոր լինել-չլինելու հարցում: ՀՀ և Վրաստանի պատվիրակությունների բանակցությունների ժամանակ անգլիական զինվորական ներկայացուցիչներն առավել հավասարակշիռ վերաբերմունք էին հանդես բերում: Դրա դրսևորումներից էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության վերաբացումը, ինչը ՀՀ հաշտարար պատվիրակության առջև դրված կարևոր խնդիրներից էր, որը վերջինս մեծ դժվարությամբ իրականացրեց:

Մ. Հարությունյանն անդրադառնում է նաև բանակցությունների երկարաձգման և իր ղեկավարած պատվիրակության՝ շուրջ երեք ամիս Թիֆլիսում մնալու պատճառներին: Նա դա պայմանավորում էր այն իրողությամբ, որ Վրացական Հանրապետության ղեկավարները գոյություն ունեցող երկկողմ հակասություններն ու խնդիրներն արագ և արդյունավետ լուծելու պատրաստակամություն հանդես չէին բերում, հաճախ էլ այդ հնարավորությունը չէին ունենում: Վրացական պատվիրակության անդամները կառավարության անդամներ և իշխող սոցիալ-դեմոկրատական կուսակցության բարձրաստիճան պարագլուխներ էին, որոնք առաջին հերթին զբաղված էին իրենց անմիջական պարտականությունների կատարմամբ: Բացի այդ՝ հաճախ նույնիսկ մանր հարցերը նրանք հետաձգում էին, քննարկում կառավարության նիստերի ժամանակ և նոր միայն հանդիպում ՀՀ պատվիրակության հետ²⁰: Հասկանալի է՝ հայ պատվիրակներն այլ աշխատանքներով ծանրաբեռնված չէին և ձգտում էին բանակցությունները շուտ ավարտել (սա նաև ՀՀ կառավարության հրահանգն էր):

Նամակներում տեղեկություններ կան նաև հայ-վրացական կոնֆերանսի նիստերում լուծում չստացած և այնուհետև հայ-վրացական երկկողմ բանակցություններում քննության առարկա տնտեսական խնդիրների (այն է՝ անդրկովկասյան միասնական գույքի բաժանման, Չեզոք գոտու երկաթուղու գործարկման և երկաթուղագծի տնօրինման, անդրկովկասյան բռնների թողարկման) վերաբերյալ:

¹⁸ Մուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 196:

¹⁹ Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., 2011, էջ 151-168:

²⁰ Մուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 203:

Զգձգումներով ուղեկցվող բանակցություններն ավարտելով՝ ՀՀ հաշտարար պատվիրակության նախագահ Մարտիրոս Հարությունյանը 1919 թ. մարտի 19-ին վերադարձավ Երևան:

Ամփոփելով՝ փաստենք, որ Մարտիրոս Հարությունյանի նամակներն առաջին հերթին աչքի են ընկնում հավաստիությամբ: Դրանք պետական մտածելակերպ, առկա միջպետական հակասությունները բանակցությունների ճանապարհով լուծելու հմտություններ ունեցող, սառը, առանց հույզերի դատողություններ կատարող քաղաքական գործչի և դիվանագետի հաղորդումներ, վերլուծություններ, եզրահանգումներ ու առաջարկներ են, որոնք իրենց արդիականությունը պահպանել են նաև մեր օրերում:

ОСВЕЩЕНИЕ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ В ПИСЬМАХ МАРТИРОСА АРУТЮНЯНА (1918 г. декабрь – 1919 г. март)

___ *Резюме* ___

___ *А. Сукьясян* ___

Для изучения армяно-грузинских отношений, последовавших за грузино-армянской войной в декабре 1918 г., важное значение приобретают около три десятка писем члена Совета Армении, выдающего деятеля партии АРФ Дашнакцутюн, председателя армянской делегации в армяно-грузинской мирной конференции Мартироса Арутюняна.

В письмах рассматриваются аспекты, касающиеся переговоров армяно-грузинского перемирия, подготовительных работ мирной конференции, хода конференции, проблемам восстановления двусторонних дипломатических отношений и другим спорным вопросам армяно-грузинских отношений. Отмеченные письма, в первую очередь, отличаются своей достоверностью. Содержащиеся в них выводы и анализы свою актуальность сохранили и в наши дни.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մուքիասյան Համո Կարենի - պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,

E-mail: hamosukiasyan@mail.ru

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՆՅՅԱԼԻՑ (Արամայիս Ազնավուրյան)

Մինչև XXդ. սկիզբը ՀՅԴ գերակա խնդիրը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Անդրկովկասում ստեղծելով ընդարձակ ու ճյուղավորված կազմակերպական կառույց՝ կուսակցությունը փորձեց տեղի հայության քաղաքական, տնտեսական ու մշակութային ներուժն օգտագործել արևմտահայության ազատագրությանը հասնելու համար:

1890-ականների սկզբներին Երևանի նահանգում ձևավորված ՀՅԴ կառույցներից ամենակտիվն Ալեքսանդրապոլինն էր: Վերջինիս հաջողության գաղտնիքը թաքնված էր այդ ավանդապաշտ հայկական ուստանում տիրող հայրենասիրական մթնոլորտի ու արհեստավորական քաղաքին բնորոշ՝ սոցիալական խոր բևեռացման բացակայության մեջ: Կարճ ժամանակահատվածում Ալեքսանդրապոլը վերածվեց ազգային արժեքների իսկական պահապանի ու հայ ժողովրդի երկու հատվածներն իրար կապող օղակի: Այն իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ առանձնահատուկ նշանակություն ստացավ XIXդ. վերջի և XXդ. սկզբի հայ ազատագրական զինյալ պայքարում: Քաղաքը վերածվեց դեպի Երկիր անցնող զինատար ու մարտական խմբերի հավաքատեղիի ու եղավ այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց մկրտությունը ստացան ազատագրական պայքարի նշանավոր շատ գործիչներ:

Ստեղծվելիք ՀՅԴ կուսակցության միջուկը դարձած՝ «Դրոշակ» խմբի Ալեքսանդրապոլի մասնաճյուղը հիմնվեց արդեն 1890թ. հուլիսին՝ Քրիստափոր Միքայելյանի կողմից, այստեղ գործուղված ալեքսանդրապոլցի Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանի ջանքերով: «Քար» կամ «Քարոտ» անունով կառույցը հետագայում ստացավ կենտրոնական կոմիտեի կարգավիճակ, իսկ նրա հիմնադիր անդամները՝ Թադևոս Խզմալյանը, Ավետիք Մալոյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (Պետո)¹, Ենովք Գյունջյանը, Վաղարշակ Ժամակոչյանը, Ավետիս Ղարիբյանը (Պաղվալի Վաղո), Տեր-Խորեն Աբգարյանը (Նոթաջի) դարձան հայտնի գործիչներ՝ խոր հետք թողնելով հայ ազատամարտի պատմության մեջ:

Իր գործունեության առաջին օրվանից կառույցը դարձավ Արևմտյան Հա-

¹ Հետաքրքիր է այն, որ թե՛ Ա. Ազնավուրյանը, թե՛ Մ. Շաթիրյանը Պետոյին (Ալեքսանդր Պետրոսյան), որը 1896թ. պիտի այցի ընկներ Վանի հերոսական ինքնապաշտպանության ժամանակ, համարում են ալեքսանդրապոլցի, ավելին՝ Ալեքսանդրապոլի ՀՅԴ «Քար» մասնաճյուղի հիմնադիր անդամ, մինչդեռ Ռուբենը «Հայրենիք» ամսագրում հրապարակված իր «Կարսի հնոցին մեջ» վերնագրով հոդվածաշարում Պետոյին ներկայացնում է իբրև կարսեցի (Մանրամասն տե՛ս Ռուբեն, Կարսի հնոցին մեջ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթրեն, 1951, ԻԹ տարի, թիւ 6, յունիս, էջ 67 ամբողջությամբ էջ 66-72:)

² Հանգոյց Ն., Մ. Շ-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթրեն, 1923, Ա տարի, թիւ 5, մարտ, էջ 37-39:

յաստանի ազատագրության գործի կազմակերպման համար զենքի կուտակման և առաքման հիմնական հենակետ: Ուսուլ Գրիգորի (Դուրգարյան), Վռամ Նալչաջյանի, ֆայտոնչի Վարոսի, Աթրենց Տիգրանի, սոցյուլեցի (Մառնաղբյուր) քահանա տեր Մեսրոպ Բաղդյանի, տանուտեր Տանո Ներսիսյանի, դոնախորանցի Մատիկի և այլոց ջանքերով ստեղծվեց զենք-զինամթերքի պատրաստման ու վերանորոգման արհեստանոցների և զինապահեստների ընդարձակ ցանց, ձևավորվեցին ու Երկիր անցան տասնյակ մարտական ու զինատար խմբեր:

Հատկապես մեծ հաջողությունների հասան ալեքսանդրապոլցի դաշնակցականները այստեղ տեղակայված ռուսական պետական զինապահեստները «դատարկելու» գործում: Ցարական ոստիկանության տոտալ վերահսկողության պայմաններում Պաղվալի Վաղոյի, Ուստա Գաբրիելի, Ուսուլ Գրիգորի, Վահան Ջալլաթյանի և այլոց ջանքերով 1894 թ.-ից սկսված Ալեքսանդրապոլի բերդի զինապահեստների պարբերաբար կրկնվող «մաքրագարումը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ տեղի դաշնակցական գործիչների հնարամտության և անձնագոհության բացառիկ դրսևորում: «Այնտեղի ընկերները յանդգնութիւնն ու անձնագոհութիւնը հասցրել էին անասելի չափերի,-հետագայում վերհիշում է ՀՅԴ հայտնի գործիչ Մարգիս Օհանջանյանը (Ֆարիսատ),-օրը ցերեկով սայլակը քշում էին պետական զենքերի մթերանոցը, իրենց ուներով շալակում էին փափուշտներով լի արկղերը, դարսում սայլակի մեջ և ազատ-համարձակ քշում տանում ՀՅ Դաշնակցութեան պահեստը, որպէսզի վաղը միւս օրը նոյն այդ փամփուշտներով կռուէին իրեն՝ պետութեան դէմ»³:

Արդեն իր գոյության առաջին հնգամյակում ՀՅԴ Ալեքսանդրապոլի կառույցն իր մասնաճյուղերը տարածեց նաև գավառի գյուղերում՝ ցարական իշխանություններին հիմք տալով պնդելու, թե հայկական շարժման ծավալման գործում «Ալեքսանդրապոլը նահանգի ամենակարևոր կետն է»⁴:

Հետաքրքիր է այն, որ չնայած իր ծավալած բուռն գործունեությանը, անցած հարյուրամյակի ընթացքում կառույցի պատմությունն այդպես էլ առանձին ուսումնասիրության առարկա չդարձավ: Խորհրդահայ պատմագրությունը հասկանալի պատճառներով այս խնդրին չանդրադարձավ: Առանձնակի ակտիվությամբ աչքի չընկավ նաև սփյուռքահայ պատմագրությունը: Հակառակ հրապարակի վրա առկա փաստավավերագրական բնույթի մեծաքանակ նյութին՝ վերջինս բավարարվեց լոկ մեկ-երկու հուշագրություններով: Այս ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարվեցին միայն հետխորհրդային շրջանում՝ շնորհիվ Գ. Խուրիդյանի⁵:

³ Օհանջանեան Մարգիս (Ֆար-Հատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1942, թիւ 6, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 53:

⁴ Մանրամասն տե՛ս և Խուրիդյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006, էջ 269:

⁵ Խուրիդյան Գ., ՀՅ Դաշնակցությունն Ալեքսանդրապոլում 1890-1895թթ., Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2003, N 2, էջ 149-154: Նույնի, Դաշնակցական ընդհատակի լեզենդը. Մի ուշագրավ վավերագիր Ավետիս Արիբյանի (Պաղվալի Վաղո) հեղափոխական

ՀՅԴ Ալեքսանդրապոլի «Քար» կոմիտեի XIXդ. վերջի XXդ. սկզբի գործունեության ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունեն Ա. Ազնավուրյանի հուշերը⁶: Մնված լինելով Թոփրակկալեում՝ նա որոշ ընդմիջումներով 1893-1907թթ. ապրել և գործել է Ալեքսանդրապոլում՝ քաղաքը համարելով իր երկրորդ հայրենիքը: «Ալեքսանդրապոլը, ... եղաւ իմ երիտասարդական յոյզերիս, յեղափոխական մտորումներիս ու նաեւ կուսակցական ընդվզումներիս ու զոհաբերութեանս նւիրական դարբնոցը,-գրել է նա,-պարզ, նահապետական մաքուր ու բարձր բարոյականով ապրող հայրենակիցների տները, նրանց մայրերը, քոյրերը տասնեակ տարիներ շարունակ հիւրընկալեցին ինձ հարազատ մօր ու քրոջ նման... աննախընթաց պարզամտութեամբ ու սիրով լուսցին կեղտոտ շորերս, կարկատեցին պատառոտած հագուստներս, գործեցին գուլպաներս եւ ամէն մի ասեղ ու ճաղ շարժելիս իրենց կարի ու հիւսուածքի մէջ անխառն թովչանքով դրին իրենց գորովի, սիրոյ ու հիացումի գուլպ զգացումները»⁷:

Իր հուշերում Ա. Ազնավուրյանը եզակի տեղեկություններ է հաղորդել հեղափոխական շարժման նկատմամբ հասարակ ալեքսանդրապոլցիների վերաբերմունքի, ՀՅԴ տեղի կառույցի կողմից գենք-զինամթերքի հայթայթման ու պահեստավորման, պետական զինանոցների «մաքրագարդման», զինատար ու մարտական խմբերի ձևավորման, դեպի Երկիր գենքի ներկրման ճանապարհների, կուսակցական առանձին ընկերների և այլնի մասին:

Ալեքսանդրապոլի և ալեքսանդրապոլցիների մասին Ա. Ազնավուրյանի առաջին հիշատակումները թվագրվում են 1890թ. մայիս-հունիս ամիսներով: Խուսափելով ռուսական իշխանությունների հետապնդումներից՝ նա՝ Քեռու (Արշակ Գաֆաֆյան) և դարաբաղցի Արշակի ուղեկցությամբ Կարսից անցնում է Ալեքսանդրապոլ⁸, որտեղ եղյակն անդամակցում է դեպի Երկիր անցնելու պատրաստվող Մարգիս Կուկունյանի արշավախմբին: Երիտասարդ հեղափոխականների հանդիպումները տեղի էին ունենում Ալմոյանի քարվանսարայում և Հարությունի «Տաշտ» անունով սրճարանում, ուր Ա. Ազնավուրյանը ծանոթանում է աշուղ Ջիվանու հետ: Արդեն առաջին այցելությունից հետո նա մեծ ջերմությամբ է խոսում ալեքսանդրապոլցիների հայրենասիրության մասին՝ քաղաքի սրճարանները համարելով «մի մի սրբազան օջախ ազգային կրթութեան ու դաստիարակու-

գործունեության մասին, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2015, թիվ 3 (51), հուլիս-սեպտեմբեր, էջ 188-197:

⁶ ՀՅԴ հայտնի գործիչ Արամայիս Ազնավուրյանը ծնվել է 1868թ.՝ Ալաշկերտի Թոփրակկալե (Վաղարշակերտ) քաղաքում: Հայրը՝ Բարեկ Ազնավուրյանը, սասունցի էր, զբաղվել է նախ երկրագործությամբ, ապա առևտրով, մայրը՝ թոփրակկալեցի Հակոբ Գրեյանի դուստրն էր: Ա. Ազնավուրյանի հուշերը գրի են առնվել 1931-1935թթ. (Թավրիզ-Թեհրան), ապա Ե. Հայրապետյանի կողմից 1936-1939թթ. հրատարակվել Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրում՝ «Արամայիս Ազնավուրյանի յուշերը» վերտառությամբ (Տե՛ս Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1936, թիւ 9, յուլիս, էջ 99-110):

⁷ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 3, յունուար, էջ 132-133:

⁸ Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1936, թիւ 11, սեպտեմբեր, էջ 122:

թեան»⁹:

Ա. Ազնավուրյանի հաջորդ այցելությունն Ալեքսանդրապոլ համընկնում է տեղի պետական զինապահեստների «մաքրագարդման» ծրագրի մշակմանը և իրագործմանը: Երիտասարդ հեղափոխականը, անձամբ մասնակցելով երկու դրվագների, բացառիկ տեղեկություններ է հաղորդել զինամթերքի հայթայթման ու պահեստավորման գործում ՀՅԴ տեղի գործիչների հանդգնության և անձնագոհության մասին:

Զինապահեստները թալանելու գաղափարը ըստ նրա, հասունացել էր 1893թ. վերջերին: Մինչ այդ զենքը գնվում էր մասնավոր անձանցից, բավականին թանկ գնով, օգտագործված ու շատ հաճախ մի քանի անգամ արդեն նորոգված վիճակում: Իրեն չէր արդարացրել նաև պետական հիմնարկությունները հսկող ռուս զինվորներից զենքը խլելու մարտավարությունը: Այդ կերպ ազատագրական շարժման հարածուն կարիքները բավարարելն անհնար էր, ոստիկանությունն էլ մեկ-երկու հաջողված դեպքից հետո ուղղակի կրկնապատկում էր ուժերը:

Զինապահեստները «դատարկելու» ծրագիրը մշակել էին Ալեքսանդրապոլի կոմիտեի վարչության անդամներ՝ ուսուցիչներ Ավետիք Մալոյանը, Թադևոս Խզմալյանը, ներկարարներ Գաբրիել Ժամհարյանը, Ալեքսանդր Քուպալյանը և ոսկերիչ Գևորգ Հալաճյանը: Որոշվել էր քաղաքի «Պոլիգոններ» թաղամասի զինապահեստներից մեկից մեծ քանակությամբ փամփուշտ հանել: Ծրագիրը տեղում իրագործել էին դարբին Վոսմ Լալաջյանը¹⁰, Քոռ Եղոն, Պաղվալի Վաղոն, դոնախորանցի Մարտիկը, Ուսուլ Գրիգորը, Ֆայտունչի Վարոսը, Աթրենց Տիգրանը (Մտեփանյան) և Ա. Ազնավուրյանը:

«Գործնական աշխատանքների ոգին ու դժուարին խնդիրները լուծողը Պաղվալի Վաղոն էր,-հիշում է Ա. Ազնավուրյանը,-մի պարզ ու համեստ մարդ, ով զարմանալիորեն գաղտնապահ էր, զիտեր իր մտածումներն իր մեջ պահել: Հետևողական աշխատանքի շնորհիվ նրան հաջողվել էր Մարգար անունով մի դարաբաղցու և մի ռուս սպայի կաշառելով պարզել, թե ո՞ր գորամասը, ո՞ր զինապահեստն է հսկում և զինանոցի ո՞ր մասում ի՞նչ զենք կա: «Պաղվալի Վաղոնի յամառ ու հետևողական աշխատանքներին ենք պարտական այն, որ հետագային Ալեքսանդրապոլի զորքի մեջ ծառայող զինուորներ և սպաներ ոչ միայն հարկաւոր աջակցութիւնը չխնայեցին մեզ, այլ և գործօն դեր ստանձնեցին զինապահեստներից ռազմամթերք դուրս բերելու դժուարին գործի մեջ»,-գրում է նա¹¹:

Զինապահեստի երկօրյա «մաքրագարդումը» տեղի էր ունեցել 1894թ. օգոստոսի վերջերին: Ռուս զինվորների միջոցով պահեստից դուրս բերվել և Մարտիկի ու Ֆայտունչի Վարոսի բեռնասայլերով Ղոնախորան էր տեղափոխվել 200 արկղ փամփուշտ (60000 հատ): Ամենապատասխանատու պահն այս գործո-

⁹ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 4, փետրուար, էջ 144:

¹⁰ Քաղաքում ուներ նաև խմիչքի փոքրիկ խանութ:

¹¹ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, թիւ 9, յուլիս, էջ 148:

դուրսի մեջ՝ ըստ Ա. Ազնավուրյանի, պահեստի մեղրամոմով կնքված դռները բացելն էր. «Փականքների միջով անցկացրած թելի երկու ծայրերը մեղրամոմով կնքում ու ամրացում էր դռան փեղկին: Այդ մոմը սուր դանակով կամաց պոկում էին, ապա թելերի ծայրերը պոկում էին մոմից, փականքները բաց անում նախապես շինուած բանալիներով ու յետոյ նոյն ձեւով թելին փակցնում մոմը ու նախապես պատրաստուած կնիքով էլ կնքում փակում բացած դռները»¹²:

Ա. Ազնավուրյանի մասնակցությամբ պետական զինանոցի երկրորդ «մաքրագարդումը» տեղի է ունեցել 1896թ.: Քաղաքի ռուսական զորակայանի հայ զինվորների ու սպաների մեջ համակիրներ գտնելուց հետո նա, դոնախոտանցի Մարտիկը, վարժապետ Թադևոսը, Սորոս Կարոն, Պաղվալի Վաղոն ու ներկարար Գաբրիելը մեկ շաբաթվա ընթացքում տարբեր զինապահեստներից հանել և Դահարլի, Ղոնախոտան ու Բայանդուր գյուղերում պահեստավորվել են օրական 4-5 բեռնասայլ բերդան տիպի հրացանի փամփուշտ (500000 հատ)¹³:

Քանի որ զինապահեստների թվանշանը շարունակվել էր նաև հաջորդ տարիներին, ՀՅԴ Ալեքսանդրապոլի մարմնի որոշմամբ կառուցվել էին նա երկու պահեստներ, Դահարլիում՝ վարժապետ Մարտիրոսի տան տակ, և քաղաքից ոչ հեռու՝ դամրջի (դարբին) Գեորգի Չախմախյանի խանութի տակ¹⁴: Իրենց զիջերային գործունեության հետքերը մաքրելու համար շինարար դարձած ՌԻսուլ Գրիգորը, Վոսադը, ներկարար Գաբրիելը և Պաղվալի Վաղոն փորված հողը լցրել էին հարևանությամբ հոսող գետակը, իսկ պահեստի պատերն ու հատակն ամրացրել ցեմենտի շաղախով¹⁵:

Ա. Ազնավուրյանին հատկապես զարմացրել է հասարակ ժողովրդի վերաբերմունքն իրենց արկածախնդրություններին: «Հակառակ խիստ գաղտնապահութեանը, ժողովուրդը բնագործով զգում էր, որ ինչ-որ խորհրդաւոր յանդուգն գործեր են կատարուած,-հիշում է նա,-ու երբ զիջերային աշխատանքները կատարած վերադառնում էինք Ալեքսանդրապոլ, մեզ իրար ձեռքից էին խլխլում հիւրասիրելու համար:

-Ախպեր ջան, հորդ հոգուն սասկիմ, էրթանք րախիմ խմենք: Ես ձեր եկած ճամբէքուն դուրբան: Սուրբ գործի տղէք, ձեր քէլած ճամբէքին դուրբան էլնինք»¹⁶:

Նրա հավաստմամբ՝ ալեքսանդրապոլցիները զարմանալի խանդավառությամբ թն ու թիկունք դարձան դաշնակցության տեղի կառույցին՝ անվերապահորեն օժանդակելով վերջինիս իր վրա դրված ծանր ու վսեմ պարտականություններին:

¹² Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, թիւ 9, յուլիս, էջ 150:

¹³ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 1, նոյեմբեր, էջ 138:

¹⁴ Նույն տեղում, թիւ 9, յուլիս, էջ 151:

¹⁵ Ազնավուրյանի հավաստմամբ այս պահեստները պահպանվել էին նույնիսկ բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո: 1924թ. նա Գևորգի հետ բացել էր դրանք ու մեծ քանակությամբ արդեն շարքից դուրս եկած զինամթերք հայտնաբերել (Տե՛ս Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 11, սեպտեմբեր, էջ 137):

¹⁶ Նույն տեղում, թիւ 10, օգոստոս, էջ 156:

րը կատարելու գործում: Հետագայում, երբ զինապահեստները թալանելու փաստը բացահայտվեց, իշխանությունները քաղաքն օդակեցին գորքերով: Մկավեցին խուզարկությունները, տասնյակ մարդիկ ենթարկվեցին դաժան տանջանքների, սակայն «այդ պարզ ու խորապես արի ծողովուրդից ոչ մեկը» երիտասարդ հայրենասերներին չմատնեց: Ավելին, վտանգի պահին ժողովուրդը արտակարգ զոհաբերությամբ տնից տուն փախցնելով փրկեց երիտասարդներին իշխանությունների վրեժխնդրությունից: Հետագայում, հիշում է Ա. Ազնավուրյանը, երբ կրքերը հանդարտվեցին, սրճարաններում հաճախ կարելի էր լսել նմանօրինակ պատմություններ. «Աղբեր ջան, մեջքիս կաշին զոլ-զոլ հանեցին սոխերը (ռուսները-Ա.Հ.), հըմը մե խօսքըմ չկրցան բերնէս հանեն»: Նրա կարծիքով, հենց այս պարզունակ խոստովանության մեջ էր գծագրվում ազնիվ ալեքսանդրապոլցու դիմադրական կամքն ու գաղտնապահությունը¹⁷:

Իր հուշագրություններում Ա. Ազնավուրյանը բացառիկ տեղեկություններ է հաղորդում նաև 1895-1904թթ. ընթացքում Երկիր անցած զինատար ու մարտական խմբերի (Ճարտար Հակոբ, Միհրան Բաբերդցյան¹⁸, Հարություն Սիրունյան, Արմենակ Լևոնյան (Երկաթ), խնուսցի Կոտոշ Աբրո (հնչակյան)¹⁹, շուշեցի Թուման Թումանյան (Թորգոմ)²⁰, Խան (Բարսեղ Թիրաքյան), Նևրուզ²¹) մասին: Դրանց մի զգալի մասը ձևավորվել է Ալեքսանդրապոլում՝ տեղի ՀՅԴ մարմնի ու անձամբ Ա. Ազնավուրյանի ջանքերով: Մի մասին նա օգնել է զենք-զինամթերքի հայթայթման ու փոխադրման գործում, իսկ մյուսներին՝ անդամակցել: Օրինակ, երբ 1895թ. ՀՅԴ Թիֆլիսի մարմնի հրահանգով Դժոխք Հրայրն (Արմենակ Ղազարյան) ու Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան) մարտական խմբեր կազմավորելու համար ժամանել էին Ալեքսանդրապոլ²², Ա. Ազնավուրյանը տեղացիներ դուրզյար Ուսուլ Գրիգորի, երկաթագործներ Վոամ Նալչաջյանի, Եգոր Վիրապյանի, դերձակ Գրիշ Գյուլեցյանի, թամբագործ Գրիշա Լոռեցյանի և ձիթհան վարպետ Քոռ Եղոյի հետ ոչ միայն միացել էր Սերոբի 33-հոգանոց խմբին, այլև նշանակվել տասնապետ: Ավելին, մինչև խմբի Երկիր անցնելը, նա Ուսուլ Գրիգորի ու Վոամի հետ՝ դոնախդանցի Մարտիկի քառաձի բեռնասայլով, Կարս-Բերնա-Դուլբանդու-Շատիվան-Ղոչաքիլիսա ճանապարհով Բաշ գյուղ տեղափոխել ու Գլավնի Միմոնի (գավառակապետ) անասնագումում պահեստավորել էր 33 հրացան (6 մոսին, 27 բեր-

¹⁷ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 10, օգոստոս, էջ 157:

¹⁸ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 4, փետրուար, էջ 158-163:

¹⁹ Նույն տեղում, թիւ 6, ապրիլ, էջ 134-136:

²⁰ Նույն տեղում, թիւ 7, մայիս, էջ 137-140:

²¹ Նույն տեղում, թիւ 8, յունիս, էջ 154-157:

²² Սերոբի, Հրայրի և Ա. Ազնավուրյանի պատմական հանդիպումը տեղի է ունեցել Վոամ Նալչաջյանի սրճարանում, ապա ընդլայնված կազմով՝ Ուսուլ Գրիգոր, Վոամ Նալչաջյան, Գարրիել Շամհարյան (Գենտ. կոմիտեի անդամ), շարունակվել Պաղվայի Վաղոյի ճաշարանում (Մանրամասն տե՛ս Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 11, սեպտեմբեր, էջ 136):

դան) և մոտ 12-13000 փամփուշտ²³: Ավելորդ կասկածներ չհարուցելու համար բեռնասայրը ներկայացվել էր իբրև մանրավաճառի ապրանքներ փոխադրող սայլ-զինամթերքով արկղերը դարսվել էին սայլի հատակին, իսկ դրանց վրա շարվել Ձիթողցյանների գործարանի գարեջրի արկղերն ու մանր-մունր այլ ապրանքներ:

Ցավոք, 1895թ. օգոստոսի վերջերին Երկիր անցած Սերոբի խումբը լուրջ հաջողությունների չհասավ²⁴: Համիդյան ջարդերի այդ դժնդակ օրերին հայկական գյուղերը, վախենալով իշխանությունների վրեժխնդրությունից, հրաժարվեցին ֆիդայական խմբերն ընդունելուց: Ուստի Բասենում իր մնալն անիմաստ համարելով՝ խմբի մի մասը զենքերը հանձնեց Գոմաձորի շՅԴ մարմնին և վերադարձավ Սարիղամիշ²⁵:

1896թ. Ա. Ազնավուրյանն անդամակցում է Ջալլաթի մարտական խմբին: Երվանդ Բաբերդցյանը՝ նույն ինքը Ջալլաթը, ալեքսանդրապոլցի ժամագործ էր, որը, 1890թ. թողնելով իր արհեստը, ամբողջովին նվիրվել էր հեղափոխության գործին և մեծ ներդրում ունեցել Բասենի շրջանում շՅԴ դիրքերի ամրապնդման գործում: Կարինի կենտրոնական կոմիտեն նրան էր վստահել Համիդի հրահանգով այստեղ հայերի կոտորածը կազմակերպած Շաքիր փաշային ահաբեկելու պատասխանատու գործը²⁶:

20 - հոգանոց խումբ կազմելու համար Ջալլաթը 1896թ. ժամանել էր Ալեքսանդրապոլ: Տեղի Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ նախապատրաստական աշխատանքներն իրենց վրա էին վերցրել Ա. Ազնավուրյանը, ՎոսաՆ Լալաջյանը և Ուսուլ Գրիգորը (Ջալլաթի խնդրանքով երեքն էլ անդամակցել էին խմբին): Հակառակ ռուսական իշխանությունների հարուցած խոչընդոտներին, նրանց հաջողվել էր երկու ամսում համապատասխան քանակությամբ զենք-զինամթերք ու փոխադրամիջոցներ կենտրոնացնել սահմանագլխին: Սակայն Ջալլաթի արշավանքը ձախողվեց, ըստ Ա. Ազնավուրյանի, խմբապետի մեղքով: Օժտված լինելով հռետորական ու կազմակերպչական մեծ ձիրքով, Ջալլաթն «իբրև մարտիկ թոյլ էր»²⁷: Կազմակերպչական բնույթի խնդիրները լուծելու փոխարեն նա հարբեցողությանն էր տրվել Ալեքսանդրապոլի, Կարսի ու Սարիղամիշի սրճարաններում և միայն չորս ամիս կորցնելուց հետո դուրս եկել արշավի: Իսկ երբ սահմանին թուրքերը երեք գնդակ էին արձակել խմբի ուղղությամբ նա շուտ էր տվել ձիու գլուխն ու փախել²⁸:

²³ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 12, հոկտեմբեր, էջ 127-128:

²⁴ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 1, նոյեմբեր, էջ 136:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 131:

²⁷ Նույն տեղում, թիւ 12, հոկտեմբեր, էջ 134:

²⁸ Նույն տեղում, թիւ 1, նոյեմբեր, էջ 140:

Ալեքսանդրապոլ վերադառնալուց հետո Ջալլաթը, հեռանալով հեղափոխական գործերից, ամուսնացել էր (Ազնավուրյանը եղել է նրա հարսանիքի քավորը)²⁹ և զբաղվում էր օդու վաճառքով:

Ջալլաթի անհաջողությունից հետո 1897թ. հունիսին Ա. Ազնավուրյանը մի խումբ ակեքսանդրապոլցի ընկերների հետ մասնակցում է Խանասորի արշավանքին³⁰: Ռազմերթին միանալ ցանկացող ակեքսանդրապոլցիների թիվը խիստ մեծ էր: Սակայն, տեղի Կեդրոնական կոմիտեն ու Բյուրոն երաշխավորեցին միայն «զենքին ու յեղափոխական չարքաշ կեանքին վարժ մարտիկներին»՝ Վոսմ Եալչաջյանին, Ուսուլ Գրիգորին, Եգոր Վիրաբյանին և Գրիշա Լոռեցյանին: «Շատերը անկեղծ յուզումով լալիս էին ու դժգոհում,-հիշում է Ա. Ազնավուրյանը,-որ իրենց հնարաւորութիւն չի տրվում սուրբ ու նուիրական գործին մասնակցելու»³¹:

ՀՅԴ ընդհանուր ժողովի որոշմամբ սա «փոխվրէժի ու ահաբեկման մի սրբազան ակտ պիտի դառնար ու պիտի լինէր, մեր պատասխանը այն զարհուրելի խժոժութիւնների, որ այս ցեղն (իսմա՛ Մազրիկ-Ա.Հ.) ու իր անարգ առաջնորդը շարունակաբար նիւթում էին հայ ժողովրդի գլխին»³²: Սակայն, արշավանքն իր բուն նպատակին չհասավ: Այն նոր լիցք հաղորդեց վայրէջքի շրջան ապրող ազատագրական շարժմանը, բայց Շարաֆ բեկին և նրա ենթականերին ոչնչացնել չհաջողվեց: Ավելին, երբ խումբը նահանջեց Մալմաստ, պարսկական իշխանությունները քանչորս մարտիկների ձերբակալեցին: Ռուսահպատակները (Արդուրյան, Ուսուլ Գրիգոր) հանձնվեցին ռուսական կողմին, իսկ մնացածները՝ օսմանյան իշխանություններին³³:

Խանասորի հիասթափությունից հետո Ալեքսանդրապոլ վերադարձած Ազնավուրյանը գրել է. «Բոլոր թափառումներիս վերջնական կայանը դարձել էր Ալեքսանդրապոլը: Այս քաղաքը վերադառնալիս ոչ միայն հանգստանում էի կատարելապէս, քաշածս յոգնութիւնները մոռանում այլևս չիշելու համար, այլ եւ այս քաղաքի արի, հերոս, պատրաստական, հիւրասէր ու եղբայրական ժողովրդի ու մանաւանդ կուսակցական ընկերների գրկում եւ հոգեպէս վերածնում, կազդուրում, գործելու նոր ոյժ ու թափ էի ստանում»³⁴:

²⁹ Նույն տեղում, էջ 141:

³⁰ Վանի 1896թ. հերոսական ինքնապաշտպանությունը շարունակվեց հունիսի 3-ից մինչև 8-ը: Մեծ Բրիտանիայի հյուպատոս Ուիլյամսի միջնորդությամբ Մաադեդդին փաշան պարտավորվեց զենքը հանձնելու դիմաց բոլոր ցանկացողներին թույլատրել անարգել անցնել Պարսկաստան: Երբ 1500 վանեցիներ փորձեցին հատել թուրք-պարսկական սահմանը, Ս. Բարդուղիմեոսի վանքի մոտ շրջապատվեցին կանոնավոր զորքերի և քրդերի կողմից ու գլխովին ջախջախվեցին: Խանասորի պատժիչ արշավանքը վրեժխնդրության պոռթկում էր՝ պայքարը շարունակելու հայի վճռականության մի նոր դրսևորում (Մանրամասն տե՛ս Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929):

³¹ Հայրապետեան Ե., Արամայի Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 1, նոյեմբեր, էջ 138:

³² Նույն տեղում, թիւ 2, դեկտեմբեր, էջ 137:

³³ Նույն տեղում, թիւ 3, յունուար, էջ 130:

³⁴ Հայրապետեան Ե., Արամայի Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 3, յունուար, էջ 136-137:

Ա. Ազնավուրյանի հուշագրությունները հատկապես հարուստ են ալեքսանդրապոլի դաշնակցականների մասին կենսագրական բնույթի տեղեկություններով: Օրինակ՝ 1903թ. ամռանը Թումանի (Թորգոմ) առաջին խմբի հետ Երկիր անցած Տիգրան Ստեփանյանի մասին նա գրում է. «Աչքառու, սակայն, անյայտ մնացած ընկերներից էր նաև Աթրենց Տիգրանը: Բնիկ ալեքսանդրապոլի էր, արհեստով դերձակ: Նա իր միջոցներով զինուել, ձի էր գնել եւ միացել Թումանի խմբին»³⁵: Տիգրանը նաև խմբի լավագույն հրաձիգներից մեկն էր, եռանդուն մասնակցություն էր ունեցել Ալեքսանդրապոլի կուսակցական աշխատանքներին, ապա Կարսում մասնակցել մի քանի ահաբեկիչ գործողությունների: «Աննման մարդ էր ու անզուգական ընկեր,-հիշում է Ազնավուրյանը,-նրա սեղանը միշտ բաց էր իր յեղափոխական ընկերների առաջ, մանաւանդ դրսից եկած և շրջանում աշխատող ընկերների առաջ»³⁶:

Ազնավուրյանին մեծ ցավ է պատճառել 1904թ. սկզբին Թումանի երկրորդ խմբին միացած Պաղվալի Վաղոյի՝ զինանոցների «ահ ու սարսափի» եղերական վախճանը: Ալեքսանդրապոլի «Քար» կառույցը Վաղոյին արգելել էր մարտական խմբերին միանալ՝ պահանջելով շարունակել զենքի ձեռքբերման աշխատանքը, սակայն սպառնալից պատասխան էր ստացել. «Հերիք, ախպեր, ինչքան ուրիշներին զենք տամ ու դրկեմ մեռնելու: Հիմի էլ սըրեն (իմա՝ հերթը-Ա.Հ.) ընձի է հասէ»³⁷:

Օլթիի կիրճով (Ղալաբողազ) Նարիման անցնելիս՝ Պուլիկ աղբյուր կոչված վայրում, խումբը, որին անդամակցել էր Վաղոն, հայտնվում է ռուս և թուրք սահմանապահների խաչաձև կրակի տակ: Խմբի անդամների մի մասը զոհվում է փոխհրաձգության ժամանակ, իսկ գերի ընկածներին ռուս սահմանապահների հրամանատար՝ ազգությամբ թաթար գնդապետ Բկովի հրամանով սպանում են թուրքերի ներկայությամբ:

Իր հուշերում Ա. Ազնավուրյանը հատկապես մեծ տեղ է հատկացրել «Ալեքսանդրապոլի Դաշնակցութեան ամենամաքուր, ամենայանդուզն ու ամենագոհաբերող անդամներից մեկի»՝ Ավետիք Մալոյանի կենսագրությանը: Մալոյանը բնիկ ալեքսանդրապոլի էր՝ երկաթագործի որդի, արտաքինով գեղեցիկ, սև աչքերով, միջահասակ՝ «երկաթէ կազմուածք ունեցող մեկը», բնավորությամբ չափազանց համեստ ու մեղմ, հոգով՝ արի ու հանդուգն: Մբ Փրկչի դպրոցի այս ուսուցիչը Ալեքսանդրապոլի Կեդրոնական կոմիտեի այն անդամներից էր, որ մասնակցել էր պետական զինանոցների «մաքրագարդման» բոլոր գործողություններին: Նա հայտնի էր նաև իր տոկունությամբ: «Ես իմ թափառումների ընթացքին քիչ եմ պատահել այնպիսի քայլողի, ինչպիսին էր մեր անզուգական Աւետիքը», - հիշում է Ա. Ազնավուրյանը և մի դեպք պատմում. 1895թ. վերջերին նա Ալեքսանդրապոլից 75000 փամփուշտ տեղափոխում է Աշտարակ և հանձնում 23Դ տեղի մարմնին: Վատ հսկողության պատճառով Լևոն Ղալճյան անունով մեկին հաջողվում է 1700

³⁵ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 7, մայիս, էջ 138:

³⁶ Նույն տեղում, թիւ 11, սեպտեմբեր, էջ 151:

³⁷ Նույն տեղում, Պոսթըն, 1937, թիւ 9, յուլիս, էջ 141:

փամփուշտ գողանալ: Տեղի ունեցածը շուտով բացահայտվում է, գողոնը վերադարձվում է, իսկ Լ. Ղալճյանը՝ սպանվում: Այս դեպքից անմիջապես հետո Ազնավուրյանն անցնում է Երևան, որտեղ, հանդիպելով Ա. Մալոյանին, որոշում են ոտքով վերադառնալ Ալեքսանդրապոլ: «Մենք Երևանից ոտքով մի օրում ուղիղ ճանապարհով հասանք Աբարանի Ալիքուչակ գիւղը, - հիշում է նա, - որտեղից Մալոյեանի պնդումով ուղիղ գծով պատմական Համբերդ բերդի վրայով իջանք Ղփչաղ՝ Հառիճի վանքը»³⁸:

Երիտասարդ հեղափոխականին մեծ վիշտ է պատճառել իր ընկերոջ ողբերգական մահը: Ջալլաթի անհաջողությունից հետո Ա.Մալոյանը՝ Բյուրոյի որոշմամբ պիտի անցներ Կարին: Մակայն այդ հանձնարարությունը կատարել նրան չի հաջողվում: Բասենի դաշտում՝ Տոս գյուղի մոտ, նա գետն է ընկնում: Ուղեկցող վալատները³⁹ հեռանում են՝ ձմռան ցրտին թողնելով Մալոյանին թաց շորերով: Հաջորդ առավոտյան մոտակայքով անցնող թուրք ոստիկանները նրան գտնում են կիսամեռ վիճակում, ուշքի բերում, ապա տանջանքների ենթարկելով, հարցաքննում: Հենց հարցաքննության ժամանակ էլ Ա. Մալոյանը մահանում է: Ըստ Ա. Ազնավուրյանի՝ նա թաղված էր Ղարաքիլիսա գյուղում: Տեղի հայերը նրա գերեզմանին մի մեծ տապանաքար էին դրել, որը 1914թ. արդեն կիսով չափ անցել էր հողի տակ⁴⁰:

Ազնավուրյանի հուշերում տեղեկություններ կան նաև Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի վերջին նշանավոր ներկայացուցիչ Ֆահրատի մասին⁴¹, որն անգնահատելի վաստակ ունեցավ երկրամասում ազատագրական գաղափարների տարածման, խորացման ու հիմնավորման դժվարին գործում: Ֆահրատը, ըստ Ա. Ազնավուրյանի, «փաստորեն աւելի գործ էր կատարում քան մեր պրոպագանդիստները, նա գիտեր ժողովրդի լեզուն, վարք ու բարքը, նախասիրությունները: Նրա պատմածների նիւթը մեծ մասամբ վերցուած էին մեր անցեալ հերոսամարտերից կամ Դաշնակցութեան հոյակապ ձեռնարկներից»⁴²:

³⁸ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 1, նոյեմբեր, էջ 142:

³⁹ Ձենքի ներկրման ժամանակ տեղանքին քաջածանոթ, ճանապարհների ծակուծուկը լավ սերտած, աշխարհագրական դիրքն ու մանրամասնությունները ճանաչող մարդիկ, որոնք մշտապես գտնվում էին զինատար խմբերի տրամադրության տակ:

⁴⁰ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թիւ 1, նոյեմբեր, էջ 141-142:

⁴¹ Ֆահրատ (Ֆեյրատի)-Խաչատուր Գևորգյան (1867-1921թթ.): Ծնվել է Ալեքսանդրապոլի գավառի Դիրաքլար գյուղում (այժմ՝ Կառնուտ): Կույր Խաչատուրին ծնողները հանձնել են աշուղ Ֆիզահու խնամքին, ով նրան սովորեցրել է սազ և ջութակ նվագել: 1884թ. նշանավոր աշուղներ Ջիվանին, Ջահրին և Ջամային նրան շնորհել են վարպետի կոչում՝ տալով Ֆեյրատի մականունը: Ստեղծագործել է հերոսապատման թեմայով, գրել է երգեր Ըաֆ-ֆու, Խ. Աբովյանի, Օերենցի, Սուրազանի գրվածքների հիման վրա: Ստեղծագործել է մաքուր գրական հայերենով՝ համեմված իր ժամանակի բարբառով: (Մանրամասն տե՛ս, Երգիչ Ֆահրատի ողբերն ու հառաչանքները, Ալեքսանդրապոլ, 1908, էջ 38):

⁴² Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 1, նոյեմբեր, էջ 150:

Կույր աշուղի հեղափոխական գործունեությունն այնքան վտանգավոր էր իշխանությունների համար, որ նրան արգելվել էր Արարատյան դաշտի գյուղերում հայտնվել⁴³:

Ա. Ազնավուրյանը հիշում է նաև Ավետիք Բասահայանի հետ իր հանդիպման մասին: Ինչպես գիտենք մեծանուն բանաստեղծն ի սկզբանե Հնչակյան կուսակցության անդամ էր և 1895-1902թթ. ընկած ժամանակահատվածում բավականին ակտիվ գործունեություն ծավալեց Ալեքսանդրապոլի հնչակյան «Արագած» մասնաճյուղի կազմում⁴⁴: Նրանց պատահական հանդիպումը տեղի է ունեցել 1903թ. (հավանաբար վերջինիս՝ դաշնակցությանը հարելուց անմիջապես հետո)⁴⁵, որից հետո ՀՅԴ Ալեքսանդրապոլի կառույցի կարգադրությամբ Ա. Ազնավուրյանը գործուղվել է Արևելյան Շիրակ՝ տեղի գյուղերում «աւագակ տարրերին գսպելու»⁴⁶: Այստեղ նա ականատես է եղել մի երևույթի, որը ոչ միայն վիրավորական էր հայի համար, այլև կարող էր անասելի բարդությունների հանգեցնել. հայ անասնագողերը, համաձայնության գալով զարիշատցի մահմեդական իրենց «գործընկերների» հետ, փոխանակում էին գողոնը՝ մահմեդականները Ջարիշատում վաճառում էին ալեքսանդրապոլցիների և կարսեցիների տավարը, իսկ սրանք էլ՝ զարիշատցիներին, բոպե անգամ չմտածելով, որ այս կերպ ազգամիջյան լարվածություն են առաջացնում⁴⁷: «Երեք ամիս ես շրջեցի շրջանի գիւղերը, -հիշում է Ա. Ազնավուրյանը, -ժողովրդի մատնանշումով բանտարկեցի յայտնի բոլոր աւագակներին. նրանցից ոմանց պատժեցի, ոմանց արքտրեցի Բագու, յետ առայ նրանց թալանած ապրանքները եւ յանձնեցի տէրերին»⁴⁸:

Ազնավուրյանը եզակի տեղեկություններ է հաղորդում նաև ՀՅԴ Ալեքսանդրապոլի կառույց-պետական ուժային մարմինների փոխհարաբերությունների մասին:

Ալեքսանդրապոլում կուսակցական և պետական ուժային կառույցների միջև գաղտնի կապեր հաստատելու ուղղությամբ աշխատանքները սկսվել էին դեռևս XIX դարավերջին և դրական արդյունք տվեցին, որովհետև հայերը մեծ թիվ էին կազմում տեղի ոստիկանության մեջ: Օրինակ՝ դեռևս 1896թ. կոմիսար Շահնազարյանը հանձնարարել էր իր հայ ենթականերին մատների արանքով նայել

⁴³ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 1, էջ 150:

⁴⁴ Պատմութիւն Ա. Գ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962թթ.), հ. Ա, խմբ. Ա. Կիտուր, Պէրրուր, 1962, էջ 254: Շամլեան Ա., Աւետիք Բասահայեան. Գուսանների գուսանը, Ծննդեան վաթսունամեակի առթիւ, «Հնչակ» ամսաթերթ, Պրավիտենս, 1936, թիւ 15, մարտ, էջ 12-15:

⁴⁵ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 12, հոկտեմբեր, էջ 135:

⁴⁶ Հավանաբար խոսքը վերաբերում է նաև կուսակցության հսկողությունից դուրս եկած անդամներին, որոնք շրջանի գյուղերի համար դարձել էին չարիք ինչպես, օրինակ, Ադրուծ Ավագը Կարսի և հարակից գյուղերի ազգաբնակչության համար (Տե՛ս Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 11, սեպտեմբեր):

⁴⁷ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 1, նոյեմբեր, էջ 147:

⁴⁸ Նույն տեղում, թիւ 12, հոկտեմբեր, էջ 135:

զենք հայթայթելու և փոխադրելու տեղի դաշնակցականների փորձերին⁴⁹: Լինելով պետական ծառայողներ՝ ազգությամբ հայ ոստիկանները մեծ համակրանք ունեին ՀՅԴ գործի նկատմամբ և գաղտնի տեղեկացնում էին Երևանից եկող կարգադրությունների ու սպասվելիք խուզարկությունների մասին: «Մի տեսակ լուռ, խորը համակրանքի վրայ հիմնուած դաշնադրութիւն էր կնքուել պետական՝ հայ պաշտօնէութեան եւ կազմակերպութեան միջեւ,-հիշում է նա,-եւ սա մեծագոյն հողն ու յարմարութիւններն էր ստեղծում կուսակցական բեղուն աշխատանքների համար»⁵⁰:

1904թ. Ա. Ազնավուրյանն անցնում է Կարս՝ կուսակցության դիրքերն Արևմտյան Շիրակում ամրապնդելու: Այս շրջանից սկսած՝ նրա հուշերում տիրապետողը ՀՅԴ Կարսի «Ջրաբերդ» կառույցի մասին տեղեկություններն են:

Ազնավուրյանի վերջին անդրադարձը ՀՅԴ Ալեքսանդրապոլի կառույցի գործունեությանը վերաբերում է հայ-թաթարական ընդհարումների ժամանակաշրջանին:

Ինչպես գիտենք, ազգամիջյան ընդհարումներն սկսվեցին 1905թ. փետրվարի 6-ին՝ Բաքվում, սպա ընդհարումների ալիքն անցավ Երևան, Նախիջևան, Գանձակ, Շուշի, Թիֆլիս և ընդգրկեց գրեթե ողջ Անդրկովկասը՝ բոլոր այն վայրերը, ուր հայ և թաթար բնակչությունը բնակվում էր շերտընդմեջ⁵¹: Ալեքսանդրապոլի գավառում ազգամիջյան բախումներ տեղի չունեցան: Հայերն այստեղ կազմում էին բնակչության ճնշող մեծամասնությունը՝ մոտ 90%, և տեղի «թաթար տարրը... թշնամական արարք չցուցադրեց,-հիշում է Ա. Ազնավուրյանը,-թէեւ մենք գիտէինք, որ նրանց մէջ էլ յուզումներ կային, եւ նրանք տենդագին պատրաստութիւններ էին տեսնում զինուելու»⁵²: Սա հնարավորություն տվեց ՀՅԴ տեղի կառույցին բախումների ողջ ընթացքում մեծ քանակությամբ զենք-զինամթերք մատակարարելու Երևան⁵³: Ալեքսանդրապոլի դաշնակցականները մասնակցեցին նաև ռազմական գործողություններին: Օրինակ, երբ Էջմիածնի գավառի թաթարները հարձակվեցին հայկական գյուղերի վրա, առաջինը օգնության հասան Խենթի տղա Արսեն Աղայի և ՌԻսուլ Գրիգորի խմբերը⁵⁴:

Հայ-թաթարական ընդհարումների շրջանում Ազնավուրյանը պարբերաբար այցելել է Ալեքսանդրապոլ և բաց չի թողել առիթը ևս մեկ անգամ իր գովեստի խոսքերն ուղղելու տեղացիների հասցեին: «Մօտ մեկ տարի մնացի այդ շրջանում..., շփում ունեցայ ու խորապէս կապուեցի ժողովրդի բոլոր խաւերի հետ,-

⁴⁹ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 1, նոյեմբեր, էջ 145:

⁵⁰ Նույն տեղում, էջ 145:

⁵¹ Մանրամասն տե՛ս Միմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Եր., 2003:

⁵² Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, թիւ 2, դեկտեմբեր, էջ 118:

⁵³ Դրո, Կենսագրական հուշեր, վկայություններ, Եր., 1991, էջ 183: Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը, Եր., 2010, էջ 127:

⁵⁴ Հայրապետեան Ե., Արամայիս Ազնաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1939, թիւ 3, յունուար, էջ 139:

հիշում է նա,-գործնական աշխատանքներին ընթացքին մի անգամ էլ համոզուեցի, թե Շիրակի մաքուր, նահապետական, պարզ կենցաղով ապրող ժողովուրդը իրապես խորը հայրենասիրության ու զոհաբերության պատրաստակամություն ունեցող ժողովուրդ էր: Տասնեակ տարիների թափառումներին ընթացքին ես տեսայ ու գործով համոզուեցի թե՛ բովանդակ Շիրակի հայ ժողովուրդը մեր ցեղի ու պատմության սրբությունները, ընտանեկան ու մարդկային բարոյական բարձր արժանիքները ոչ միայն դարերով պահպանել ու մեզ էր հասցրել, այլ եւ այդ սրբություններով ու արժանիքներով գիտէր հպարտանալ ու ապրել»⁵⁵:

Իր հուշագրությունների՝ Ալեքսանդրապոլին վերաբերող մասն Ա. Ազնավուրյանը ամփոփել է հետևյալ ուշագրավ եզրակացությամբ. «Կարելի է ասել, որ եթե 1890-ական թուականներից մինչև 1903-1904 թուերը Ալեքսանդրապոլի շրջանի Դաշնակցական կազմակերպության համար հոյակապ զոհաբերության, պատրաստակամության եւ հայրենասիրության արտայայտության տարիներ եղան, հետագայ 1905-1907 թուականները դարձան երիտասարդությունը ռազմականորեն կազմակերպելու եւ այն՝ կուսակցության ամուր յենարան դարձնելու տարիներ»⁵⁶:

ВОСПОМИНАНИЯ ИЗ РЕВОЛЮЦИОННОГО ПРОШЛОГО АЛЕКСАНДРОПОЛЯ (Арамаис Азнавурян)

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

Со дня своего формирования Александропольский комитет Армянской революционной федерации (АРФ – дашнакцутюн) был самым активным в губернии. Секрет успеха заключался в патриотизме, воцарившемся в традиционном армянском городе, в условиях отсутствия глубокой социальной поляризации, характерного для ремесленного уклада жизни. Александрополь стал хранителем национальных традиций и связующим звеном для двух частей армянского народа.

Для исследования деятельности комитета “Кар” (“Камень”) АРФ Александрополя в конце XIX в. и в начале XX в. имеют исключительную ценность воспоминания Арамаиса Азнавуряна. Будучи уроженцем Топраккала, он в 1893-1907 гг. с некоторыми перерывами жил здесь – в Александрополе, считая город своей второй родиной. В своих воспоминаниях А. Азнавурян передает редкие сведения об отношении простых александропольцев к революционному движению, о добывании и хранении оружия и боеприпасов силами АРФ, о “чистке” боеприпасов, из государственных складов, формировании вооруженных и боевых групп, о переправке боеприпасов в Западную Армению, об отдельных партийных товарищах и о многом другом.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Արմեն Մերգույի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, E-mail: armenani@mail.ru

⁵⁵ Հայրապետյան Ե., Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1939, թիւ 3, յունուար, էջ 139:

⁵⁶ Նույն տեղում, Պոսթըն, 1938, թիւ 1, նոյեմբեր, էջ 145:

1921 թվականի վերջին Հայաստանում կայացած խորհուրդների ընտրությունները կարևոր քայլ էին խորհրդային պետականաշինության գործընթացում: Խորհրդային իշխանության հռչակումից անմիջապես հետո ընտրություններ չէին նշանակվել, քանի որ մտավախություն կար, թե ընտրությունների պարագայում կհաղթեին դաշնակցականները: Դրա փոխարեն ստեղծվել էին իշխանության նշանակովի մարմիններ՝ հեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանության ամրապնդումն ու խորհուրդների ընտրությունների նախապատրաստելն էր,¹ այլ կերպ ասած՝ կոմունիստական կուսակցության հեղինակության բարձրացումը և խորհրդային իշխանության համար սոցիալական հենարանի ստեղծումը: Պատահական չէ, որ հեղկոմներից խորհուրդներին անցման այդ ողջ ընթացքում կուսակցության բոլոր ձախտումների պատճառները վերագրվում էին հեղկոմներին: Մասնավորապես, թուրքական ռազմակալման հետևանքով տնտեսական ծանր պայմաններում հայտնված Ալեքսանդրապոլի գավառում վերջիններս հաճախ դառնում էին քավության նոխազ:² Ռազմական կոմունիզմից ՆԷՊ-ի անցման շրջանում իրականացրած բռնագրավումների, ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակի մեղավորներ համարվող հեղկոմի անդամներն էլ հիմնականում դառնում էին խորհրդային պետականաշինության կարևոր գործիքներից մեկի՝ քաղաքական բռնությունների գոհերը: Ամենաբարձր պաշտոն զբաղեցնողներն անգամ ապահովված չէին դրանից: Նրանցից շատերը ոչ միայն հեռացվում էին կուսակցությունից, այլ նաև ձերբակալվում: 1920թ. մայիսի 23-ին Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահի պաշտոնից ազատվում է Լևոն Մարգարյանը: Հունիսի 23-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության ընդհանուր ժողովը որոշում է կուսակցությունից հեռացնել և բանտարկել Հեղկոմի ներքին գործերի բաժնի վարիչ Հ. Ամատունուն, նրա տեղակալ Մ. Ստեփանյանին և Ս. Մարգարյանին՝ մեղադրելով վերջիններիս պաշտոնական պարտականությունները պատշաճ չկատարելու մեջ:³ Օգոստոսին պաշտոնից հեռացվում է Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Մերո Մանուցյանը,⁴ որի հասցեին շարունակական մեղադրանքներ էին հնչում Ալեքսանդրապոլի կոմկուսակցության գավառային կազմակերպության կոնֆերանսում:⁵

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 144, ց. 3, գ. 23, ք. 189:

² Ալեքսանյան Կ., Խորհրդային պետականաշինության հիմնախնդիրներն Ալեքսանդրապոլի գավառում հեղկոմներից խորհուրդների անցման շրջանում, ՀՀ ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 19, Գյումրի, 2016, էջ 114-124:

³ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, ք. 201-203:

⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 114, ք. 30-32:

⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 2, ք. 1-49:

Ընտրություններին քանիցս նախորդում են կուսակցության մաքրման և վերացուցակագրման աշխատանքները, որոնք սկսվել էին դեռևս 1921թ. մայիսից: Հաճախակի իրականացվող վերացուցակագրումների ժամանակ առաջին հերթին կուսակցությունից հեռացվում են հեղկոմների անդամները, որոնք մեծ մասամբ մտավորականության ներկայացուցիչներ էին, հիմնականում նախկին մանրբուրժուական կուսակցությունների անդամներ, որոնց գիտելիքներն ու փորձը օգտագործել էին խորհրդային իշխանության հաստատման սկզբնական շրջանում:⁶ Փաստորեն վերացուցակագրումների հիմնական նպատակը խորհրդային իշխանության համար սոցիալական հենարանի ապահովումն էր: Պատահական չէր, որ ինչքան մոտենում էին ընտրությունները, դրանք ավելի խստանում էին: 1921թ. սեպտեմբերին սկսված հերթական վերացուցակագրումը տևում է երկու ամիս: Դեկտեմբերի 14-ին կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության ընդհանուր ժողովում վերացուցակագրման հանձնաժողովի նախագահ Ա. Հովսեփյանը, զեկուցելով հանձնաժողովի աշխատանքների մասին, նշում էր, որ գտումը տևել է երկու ամիս, քանի որ նախկինում շատ կուսակցականներ լրջությամբ չեն վերաբերվել գործին: Իսկ այս գտման ժամանակ կուսակցությունը բավականին խիստ է եղել: Բավական է նշել, որ 369 կոմունիստներից 159-ը հեռացվել են: Նշված զեկուցումից երևում է նաև, որ նյութեր են հավաքել բոլոր կոմունիստների մասին: Ըստ այդ նյութերի՝ կուսակցությունից հեռացվել են «խորհրդային կարգերի թշնամի տարրերը, մորթապաշտները և մեր կուսակցության համար խորթ էլեմենտները»:⁷ Այս վերացուցակագրումը առանձնահատուկ է եղել նաև նրանով, որ բացի մտավորականներից, որոնց թիվն ամենաշատն էր՝ 40 տոկոս, հեռացվել են նաև գյուղացիներ, բանվորներ և արհեստավորներ: Ինչպես նշում է զեկուցողը «...անգործ ընկերները հեռացված են, և կուսակցությունը դարձել է բանվորական»:⁸ Հասկանալի է, որ ի տարբերություն կուսակցական մյուս ժողովների, այստեղ զեկուցումները կրել են տեղեկատվական բնույթ և չեն ունեցել «հակաճառություններ»:⁹

Հեղկոմների և կուսակցության կազմը «վտանգավոր տարրերից» մաքրագործելուց հետո Հայաստանի կոմկուսը ձեռնամուխ է լինում ընտրական գործընթացի կազմակերպմանը: Քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրության և գավառային ու գավառակային խորհուրդների համագումարներին 1921թ. հոկտեմբերի 2-ին տրված հրահանգի համաձայն՝ գյուղական և քաղաքային խորհուրդների ընտրությունների համար յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 15-ից ոչ շուտ կազմվելու էին կենտրոնական, գավառական, գավառակային, և գյուղական ընտրական հանձնաժողովներ:¹⁰ Ըստ վերը նշված հրահանգի՝ 1921թ. նոյեմբերի 17-ին Կենտրոնական գործադիր կոմիտեին առընթեր կազմվում է հինգ հոգուց բաղկացած Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ Ավիս Նուրիջանյանի նախագա-

⁶ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 5:

⁷ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 77:

⁸ Նույնը:

⁹ Նույնը:

¹⁰ ՀԱՍ, ֆ. 131, ց. 1, գ. 131, թ. 43:

հույսամբ:¹¹ Նոյեմբերի 23-ին հետևում է վերջինիս հրահանգչական նամակը բոլոր տեղական հեղկումներին՝ խորհուրդների ընտրությունների անցկացման կարգի մասին: Գավառական, գավառակային և գյուղական ընտրական հանձնաժողովները կազմվում են ստորադասության կարգով, որը հնարավորություն է տալիս կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերահսկելու տեղական ընտրական հանձնաժողովների պարտականությունների կատարումը: Գավառական գործադիր կոմիտեները կազմում էին երեք հոգուց բաղկացած Գավառական ընտրական հանձնաժողովներ, նախագահին նշանակում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մի անդամը գավառական գործադիր կոմիտեի ներկայացուցիչն էր, և մյուսն էլ՝ ՀԽՍՀ արհեստակցական միությունների խորհրդի ներկայացուցիչը: Գավառակային ընտրական հանձնաժողովները կազմվում էին երեք հոգուց, նախագահին նշանակում էր գավառական ընտրական հանձնաժողովը, իսկ երկու անդամին՝ գավառակային գործադիր կոմիտեն: Գյուղական ընտրական հանձնաժողովները կազմված էին նախագահից, որին նշանակում էր գավառակային ընտրական հանձնաժողովը, և երկու ներկայացուցիչներից՝ գյուղական խորհրդի կողմից:¹² 18 տարին լրացած յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի կարող էր մասնակցել ընտրություններին՝ համապատասխան արհեստակցական միությունների միջոցով: Ընտրությունները կատարվում էին ընտրական ժողովներում: Ձեռնարկությունների և հիմնարկությունների ընդհանուր ժողովները պետք է 50 հոգուց ոչ պակաս աշխատող ունենային: Քաղաքի թաղերում կազմվում էին թաղային ժողովներ, գյուղերում՝ գյուղական: Չայնատվությունը կատարվում էր ձեռք բարձրացնելու միջոցով: Ընդունված համարվում էին ձայների մեծամասնությամբ ^{անցնող} ցուցակները:¹³

Չբավարարվելով վերացուցակագրումների միջոցով կուսակցության շարքերից շատերին հեռացնելով, ընտրություններում կոմունիստական կուսակցության հաղթանակը ապահովելու նպատակով սահմանվում է ակտիվ և պասիվ ընտրողական իրավունք, որով ընտրական իրավունքից զրկվում են կուսակցության համար անցանկալի բազմաթիվ մարդիկ: Այդ իրավունքից զրկված էին համարվում վարձու աշխատանք շահագործողները, առանց աշխատանքի եկամուտով ապրողները, մասնավոր առևտրականները և առևտրական հանձնակատարները, կուսակրոնները, կրոնական պաշտամունքների հոգևոր պաշտոնյաները, նախկին կառավարությունների անդամները, նախկին ոստիկանության և քաղաքական խուզարկության գործակալները, քաղաքացիական կովի ժամանակ խորհրդային իշխանութեան դեմ մասնակցություն ցույց տված խմբապետերն ու մաուզերիստները, սահմանված կարգով հոգեկան հիվանդ և խելագար ճանաչ-

¹¹ Հակոբյան Ա., Ընտրական համակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 2, Եր., 2015, էջ 91:

¹² ՀԱԱ, ֆ. 131, ց. 1., գ. 131, թ. 43:

¹³ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, թ. 118:

վածները, ինչպես նաև խնամակալության տակ գտնվածները և, վերջապես, օրենքով կամ դատական վճռով իրավունքներից զրկվածները:¹⁴

Ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակները կազմելու, ստուգելու և հրապարակելու էին ընտրական հանձնաժողովները՝ տեղական վարչական բաժնի կամ գավառակային գործկոմի կամ գյուղխորհրդի կամ դատաստանական հաստատությունների տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա: Կազմված և ստուգված ցուցակների օրինակները ուղարկվելու էին տեղական խորհրդին, վերադաս ընտրական հանձնաժողովին, այնուհետև հրատարակվելու էին՝ ի գիտություն բնակչությանը:

Ընտրական իրավունքից զրկվածները կարող էին երեք օրվա ընթացքում բողոք ներկայացնել ինչպես վերադաս ընտրական հանձնաժողովներին, այնպես էլ կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Գանգատը վերադաս մարմիններին 24 ժամվա ընթացքում ուղարկվելու էր այն մարմնի ձեռքով, ում դեմ որ զրկված էր բողոքը: Ընդ որում, այդ մարմինն էլ պարտավորվում էր բողոքն ուղարկել իր եզրակացության հետ: Իսկ կենտրոնական ընտրական հանձնաժողովի դեմ բողոքը տրվում էր Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեին: Ընտրությունից զրկվածների ցուցակները հրապարակվելու էին ընտրություններից մեկ շաբաթ առաջ:¹⁵ Սակայն հետագայում որոշվում է ցուցակներ չկազմել և հանձնաժողովի կողմից ընտրական իրավունքից զրկվածներին հետացնել ընտրական ժողովներից հենց ընտրության օրը՝ հնարավորություն չտալով վերջիններիս վերականգնելու իրենց իրավունքները: Ինչպես ենթադրվում էր, ձայնագուրկ համարվածները, չհամակերպվելով իրենց քաղաքացիական իրավունքների խախտման իրողությանը, բազմաթիվ բողոքներով փորձում էին վերականգնել իրենց իրավունքները: «Ձայնից զրկվածները,- գրում է Ալեքսանդրապուլի գավառային ընտրական հանձնաժողովի նախագահը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված զեկուցման մեջ, -անընդհատ դիմումներ էին ներկայացնում գավառային հանձնաժողովին՝ թույլ տալու մասնակցել ընտրություններին»¹⁶: Սակայն գործնականում դա հնարավոր չէր, քանի որ ընտրություններն արդեն վերջացած էին լինում: Այսպես, Թափաղուլյակ գյուղի բնակիչ Նազարեթ Գևորգյանը Ալեքսանդրապուլի գավառային 1921թ. դեկտեմբերի 16-ին ուղղված խնդրանքում թյուրիմացություն է համարում տան մեջ աշխատավոր պահելու համար ընտրական իրավունքից զրկելը, «... որովհետև ես ոչ թե աշխատավոր եմ պահում, այլ մի 15 տարեկան որբ, որը ոչ թե ծառայող է, այլ ընտանիքի անդամ: Ես կարծում եմ, որ իմ արածը բարեգործություն է և ոչ թե շահագործություն, եթե այդ պատճառով ինձ պիտի զրկեն ձայնի իրաւունքից, դա կլինի անարդարություն, ուստի ես խնդրում եմ քննութեան առնէք այդ հանգամանքը և չզրկէք ինձ իմ իրաւունքներից, որով և զրկված կլինէք այս որբին իր ապաստանից»:¹⁷ Նույն գյուղի այլ բնակիչներ՝ Բենիամին և Հովսեփ Նիկողոսյան-

¹⁴ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, ք. 118:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 131, ց. 1, գ. 131, ք. 43:

¹⁶ Հեղափոխական կոմիտեիները Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի հավաքածու, կազմ. Ս. Սահրաղյան, Եր., 1974, էջ 364:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, ք. 70:

ները, տանը աշխատող պահելը պատճառաբանում են ընտանիքի բազմանդամությամբ և իրենց ֆիզիկական թուլությամբ: «Խորհուրդների վերաբերեալ դեկրետը, - գրում են նրանք Ալեքսանդրապոլի գավառում իրենց քաղաքացիական իրավունքները վերականգնելու վերաբերյալ խնդրագրում, - կարծես թե մեր համար մի շատ ուրախալի բան էր, որովհետև մենք՝ աղքատ գիղացիներս, իրաւունք պիտի ունենայինք մեր խօսքը ասելու: Մենք հաւատացած էինք, որ կառավարութիւնը մերն է և մեզ վրայ հիմնած, սակայն կառավարութեան որոշումները թիրիմացութեան առիթ են տալիս»:¹⁸

Ալեքսանդրապոլի գավառային ընտրական հանձնաժողովն իր աշխատանքներն սկսում է 1921թ. նոյեմբերի 27-ից: Գավառում գավառային հանձնաժողովի նախագահ է նշանակում Աշոտ Շահմուրադյանին, անդամներ՝ Հովհաննես Բանահյանին, Գևորգ Հանեսոլյանին, Նահապետ Կուրդիյանին և Խաչիկ Օհանջանյանին: Դեկտեմբերի 2-ին գավառային հանձնաժողովն իր հերթին նշանակում է քաղաքային և շրջանային հանձնաժողովներ, հանձնարարում իրականացնել նախընտրական քարոզություն և բացատրել ընտրական իրավունքի ձևը: Նախընտրական քարոզությունը քաղաքում տարվում է Կարմիր բանակում, արհմիություններում: Ալեքսանդրապոլի յոթ գավառամասերում, համապատասխանաբար 27, 18, 29, 35, 22, 24, և 22 գյուղերով (ընդամենը՝ 172) կազմակերպվում են գյուղական ընտրական հանձնաժողովներ՝ երեք հոգուց: Գավառային հեղկումների անդամներից բացի՝ նախընտրական աշխատանքների համար գյուղերն են մոբիլիզացվում քաղաքից չորս ներկայացուցիչներ, որոնք այնտեղ են մնում մինչև ընտրությունների ավարտը:¹⁹

1921թ. նոյեմբերի 29-ին Ալեքսանդրապոլում գավառային հեղկումի նախագահ Շահգեղյանի նախագահությամբ տեղի է ունենում գավառամասային, գյուղ-հեղկումների և գյուղական ներկայացուցիչների առաջին համագումարը յոթ գավառամասերի պատգամավորների ներկայությամբ, որտեղ քննարկվում են նախապատրաստական աշխատանքները:²⁰ Ընտրություններն Ալեքսանդրապոլի գավառում անցկացվում են դեկտեմբերի 15-ին, իսկ քաղաքում՝ դեկտեմբերի 17-19-ին: Խորհուրդների ընտրության գավառային հանձնաժողովի հայտարարությամբ կոչ էր արվում մասնակցելու ընտրություններին՝ նշելով ընտրական ժողովների օրերը, ժամերն ու վայրերը:²¹ Ընդ որում, մինչև 1926 թվականը քաղաքային խորհուրդների ընտրություններ անցկացվել են միայն քաղաքի կարգավիճակ ունեցող Երևանում և Ալեքսանդրապոլում (1924 թվականից՝ Լենինական):²²

Ալեքսանդրապոլի ընտրողների ընդհանուր թիվը կարմիրբանակայինների հետ միասին կազմում էր 8000 հոգի, սակայն ընտրություններին մասնակցել է մոտ քառորդ մասը:²³ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ընտրողների

¹⁸ ՀԱՍ, ֆ.144, գ.3, զ.10, ք. 87-88:

¹⁹ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 363:

²⁰ ՀԱՍ, ֆ.144, գ.1, զ. 59, ք. 285-89:

²¹ ՀԱՍ, ֆ.144, գ.3, զ.148, ք. 150:

²² Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 40:

²³ ՀԱՍ, ֆ.144, գ.3, զ.10, ք. 87-88:

թիվը էական չէր ընտրությունները օրինական ճանաչելու համար: Ընտրությունները ամեն դեպքում համարվում էին օրինական՝ անկախ ընտրողների թվից: Ընտրական ժողովները օրինական էին համարվում, եթե առաջին անգամ ժողովին ներկա էր ընտրողների կեսը, իսկ երկրորդ անգամ՝ անկախ ընտրողների թվից:²⁴

Ինչպես նախատեսված էր, հիմնականում ընտրվում էին կոմունիստները և չքավոր գյուղացիները: Ալեքսանդրապոլի առաջին գավառամասի ընտրական հանձնաժողովի նախագահը խորհուրդների ընտրությունների մասին դեկտեմբերի 26-ի զեկուցման մեջ գրում է. «Խորհուրդների ընտրությունները կատարում էին ցուցակներով: Ցուցակները ներկայացնում էին կոմֆրակցիան և գիւղացիները, եթե չկար կոմֆրակցիա մի որևէ գիւղում, այդպիսի դեպքում, ներկայացնում էր միայն չքատր գիւղացիների կողմից սկզբում, և անցնում էր միայն սկզբի ցուցակը: Մի խոսքով առաջին գավառում խորհուրդների ընտրությունը անցաւ շատ յաջող, գիւղացիութեանը խորհուրդներում տեղ էին տալիս, միմիայն չքատր գիւղացիներին և կոմունիստներին»:²⁵ Փաստորեն ընտրվում էին միայն նրանք, որոնց ցանկանում էր կուսակցությունը: «Ընտրական ժողովներում ցուցակներ առաջարկվում էին ինչպես կոմբջիջի, այնպես էլ այլ անձանց կողմից: Բայց միշտ և ամենուրեք անցնում էին մեր ցուցակները, - գրում է Ալեքսանդրապոլի գավառական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված զեկուցագրում»:²⁶ Ընտրվածների մեջ մեծ թիվ էին կազմում անկուսակցականները: Այսպես, Ալեքսանդրապոլի երկրորդ գավառամասի 16 գյուղերից ընտրված 246 հոգուց (8 կին և 238 տղամարդ) չքավոր էին՝ 176-ը, կոմունիստ էին միայն 23-ը, թեկնածու՝ 5-ը, համակրող՝ 38-ը, մնացած 180-ը անկուսակցական էին:²⁷ Այս տվյալները բնորոշ էին բոլոր գավառամասերին: Ինչպես երևում է վերը նշված զեկուցագրից, շատ տեղերում մեծամասնություն կազմած անկուսակցականները միայն չքավորները կարող էին լինել, որոնք կուսակցության համաձայնությամբ էին ընտրվել. «...այնտեղ, որտեղ չկային կոմբջիջներ, ստեղծվեցին չքավորների ֆրակցիաներ՝ խորհրդի պատգամավորների ցուցակը ընտրական ժողովին առաջարկելու համար»:²⁸

Դեկտեմբերի վերջերին Ալեքսանդրապոլի գավառային ընտրական հանձնաժողովն ամփոփում է գյուղերի և Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրությունների արդյունքները: Հրավիրվում են գավառամասային համագումարներ, որտեղ ընտրված գավառային համագումարի պատվիրակները մասնակցում են 1922թ. հունվարի 17-ին Ալեքսանդրապոլի խորհուրդների գավառային 1-ին համագումարին: Համագումարին մասնակցած 177 պատգամավորներից կոմկուսի անդամներն էին 107-ը, անկուսակցական՝ 67-ը, հնչակյան՝ 3-ը:²⁹ Իշխանության եկած բանվորների և գյուղացիների մեջ մեծ թիվ էին կազմում անգրագետները: Պատգամավորներից

²⁴ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, ք. 122:

²⁵ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, ք. 19:

²⁶ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 364:

²⁷ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, ք. 22:

²⁸ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 364

²⁹ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, ք. 22:

գրագետ էին 108-ը, անգրագետ՝ 69-ը, 21-ը բանվոր էին, 54-ը՝ գյուղացի, 92-ը՝ խորհրդային ծառայող և 10-ը՝ մտավորական:³⁰

Այսպիսով, խորհուրդների առաջին ընտրություններում օրինականացվեց հեղկոմների իշխանությունը: Օրինական ճանապարհով հեղկոմներից հեռացվեց մտավորականությունը՝ հիմնականում ոչ կոմունիստական կուսակցության անդամները, որոնք իրենց գիտելիքներն ու կարողություններն ի սպաս էին դրել անցումային ծանր շրջանում: Դրվեցին միակուսակցական համակարգի հիմքերը: Հաստատվեց բանվորագյուղացիական իշխանություն, բայց ոչ ըստ բովանդակության, այլ ըստ ձևի:

ПЕРВЫЕ ВЫБОРЫ СОВЕТОВ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В ДЕКАБРЕ 1921г.

___ *Резюме* ___

___ *К.Алексамян* ___

В статье рассмотрены вопросы построения советского государства и создания социальной опоры для властей. В частности представлен процесс выборов органов советской власти в Александропольском уезде, выделено роль этих выборов в деле удаления интеллигенции из ревкомов законным путем, создание однопартийной системы и рабоче-крестьянского государства.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ալեքսանյան Կարինե Վանիկյայի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: karineal@mail.ru

³⁰ Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 40:

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԱՄՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՓԱՄԵՐԶ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐԸ*

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրերում արդեն իսկ ակներև էր պաշտպանվելու անհրաժեշտությունը, և բնակավայրերը կառուցված են դժվարամատչելի տեղանքում՝ սարերի, բլուրների, բարձունքների կամ հրվանդանների վրա: Մկսած մ.թ.ա. III հազարամյակից՝ արհեստական ամրություններով լրացվում և հզորացվում է ռելիեֆը, սկսվում է նաև բնակատեղիների պարսպապատումը: Պարիսպները կրկնում են ռելիեֆի ուրվագիծը՝ վաղբրոնզիդարյան շինարարական տեխնիկայի համար բնորոշ՝ առանց կապակցող շաղախի բազալտե անմշակ հսկայական քարերով շարվածքի օգտագործմամբ: Մ.թ.ա. III հազ. առաջինից երրորդ քառորդներն ընդգրկող հնագույն մի շարք ամրոցներում պարսպի կառուցման ժամանակ օգտագործված շարվածքի այս տեխնիկան դիտվում է կիկլոպյան¹:

Ամրաշինական կառույցներն ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս անցյալ դարի սկզբներին: Ամրոց-բնակավայրերը մասնագետների ուշադրությանն են արժանացել պատահական գտածոների հայտնաբերման կամ հետախուզական աշխատանքների իրականացման առիթներով: Ուսումնասիրությունները հիմնականում իրականացվել են հնագիտական պեղումներով և կառույցների ճարտարապետական հետազոտություններով: Գիտնականների մի քանի սերնդի տարիների աշխատանքի արդյունքում որոշակիացվել են ամրաշինական կառույցների տիպերը, ձևերը, կառուցողական սկզբունքները, ճարտարապետությունը և շինարարական տեխնիկան²:

Հայաստանի կիկլոպյան ամրոցների առաջին ուսումնասիրություններն անցյալ դարի 20-ական թվականներին կատարել է Թ. Թորամանյանը: Նա ամենահին ամրոցները դասում է նեոլիթյան մշակույթին³ և գտնում, որ մեծազանգված քարերով կառուցված և ոչ կանոնավոր շարված այդ պատերը, որոնց վրա չկան գործիքների հետքեր, ավելի շուտ քարերի կուտակումներ են և լարածիզ ուղղություն չունեն, ավելի ճիշտ կլիներ դրանք անվանել արգելափակ⁴: Արդեն 30-ական

* Աշխատանքն իրականացվել է «Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները» թեմայի շրջանակներում:

¹ Есаян Ст., Кафадарян К., О некоторых крепостях Шамшадинского района, Изв. АН Арм ССР, №11, 1965, стр. 80; Հայկական ճարտարապետության պատմություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հ.1. Եր., 1996, էջ 65:

² Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետություն, հ. 1, Եր., 1ՄСМХLII; Նույնի՝ Հայկական ճարտարապետություն, հ. 2, Եր., 1948; Ղաֆադարյան Կ., Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ, ՊԲՀ, 1972, №2, էջ 151-162: Есаян С, նշվ. աշխ.; Հայկական ճարտարապետության պատմություն, նշվ. աշխ., էջ 65; Микаелян Г., Циклопические крепости Севанского бассейна, Ер., 1968 և այլն:

³ Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 11-30:

⁴ Նույն տեղում, էջեր 12-13:

թվականներին հայ մշակույթով զբաղվող մի խումբ գիտնականների կողմից հետազոտվել են Հայաստանի տարբեր շրջանների կիկլոպայան ամրոցները⁵: Բ.Պիտոբովսկին, կարմիրբերդյան (թագաքենդյան) դամբարանադաշտը և կիկլոպայան ամրոցն ու ամրոցի շարվածքը կապելով դամբարանադաշտի վաղ նյութերի՝ գունազարդ խեցեղենի հետ, ամրոցը թվագրել է դրանց կենցաղավարման ժամանակով՝ մ.թ.ա. II հազարամյակով⁶: Ավելի ուշ, Կուֆտինը, Բեշտաշենի ամրոցի և Հայաստանի հնագիտական հուշարձանների (Շենգավիթ, Շրեշ-բուր) վրա հիմնվելով, կիկլոպայան ամրոցները դասել է մ.թ.ա. III հազարամյակի մշակույթին⁷: Վերջիններս բաժանվել են չորս հիմնական խմբերի, որոնցից երկուսը վերաբերում են բրոնզի դարաշրջանին, մեկը՝ Վանի թագավորության շրջանին և մյուսը՝ միջնադարին⁸: Այդ ամրոցներն ունեն ռելիեֆի ուրվագիծը կրկնող, չոր, առանց կապակցող շաղախի, իրար մեջ մտնող և իրար ագուցվող շարվածքով պարիսպ: Կիկլոպայան պաշտպանական պարիսպներ ունեն Շենգավիթը⁹, Շրեշ-բուրը¹⁰, Մուխանաթ-թափայի ստորին շերտը¹¹, Աղթամիրը¹², Գառնիի շենգավիթյան մշակույթի բնակավայրը¹³, Էլառը¹⁴, մ.թ.ա. III հազարամյակի կեսի Ջյանբերդը (Հարավային Ղոյթուր)¹⁵, Ջաղացատեղին, Այրումը (շագլամա 2 և շագլամա 3)¹⁶: Կիկլոպայան պատերի մնացորդներ բացվել են Կարսի շրջանի վաղբրոնզիդարյան հուշարձաններում¹⁷:

Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Ախուրյան գետի ափերի երկայնքով, հյուսիսից հարավ ձգվում են ամբողջությամբ կամ մասամբ կիկլոպայան շարվածքով կառուցված, պատմահնագիտական, ճարտարապետական առումներով, ժամանակաշրջանով և պահպանվածությամբ տարբեր Եղնաջուր, Գառնաառիձ, Բերդաշեն, Աղվորիկ, Մեծ Մեպասար, Փոքր Մեպասար, Ջրաձոր, Բան-

⁵ Гэзаян А., Пиотровский Б., Циклопические крепости Закавказья, ГАИМК, №1-2, 1932, стр. 61-64 ; Гюзаян Л. Крепости доурартского и урартского времени. Проблемы истории материальной культуры, 1932, № 5-6, стр. 51-59; Мещанинов И., Циклопические сооружения Закавказья. Изд.-во ГАИМК, XIII, 1932, стр. 4-7; Есаян С., Древняя культура Северо-Восточной Армении, Изд.-во АН Арм. ССР, Ер., 1976, стр. 15.

⁶ Кушнарера К. Тазкендский могильник в Армении, СА, №1, 1960, стр. 139.

⁷ Куфтин Б. Археологические раскопки в Триалети, Изд.-во Академии Наук Груз. ССР, Тбилиси, 1941, стр. 108.

⁸ Есаян С., 1976, նշվ. աշխ., էջ 15 :

⁹ Карапетян Л., Раскопки Кармирбердской (Тазакендской) крепости. СА, 1972, №2, стр. 170.

¹⁰ Археология СССР, т.1, Эпоха бронзы лесной полосы СССР, Изд.-во Наука. М., 1987, стр. 30.

¹¹ Բայրության Ե., Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմները. ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», Գիրք II, Եր., 1937, էջ 210; Խանգաղյան Է., Գառնի IV, (1949-1966թթ. պեղումների արդյունքները), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, էջ 23 :

¹² Խանգաղյան Է., նշվ. աշխ., էջ 23:

¹³ Есаян А., նշվ. աշխ., էջ 15; Խանգաղյան Է., նշվ. աշխ., էջ 7 :


¹⁴ Խանգաղյան Է., Էլառ-դարանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1979, էջ 13 :

¹⁵ Խանգաղյան Է., 1969, էջ 7; Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա., Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում: ՀՍՍՀ ԳԱ, Լրաբեր, հասարակական գիտությունների, 1977, № 4, էջ 79-80:

¹⁶ Есаян С., 1976, стр. 17-26.

¹⁷ Խանգաղյան Է., 1969, էջ 23:

դիվան, Կապս, Վահրամաբերդ, Տիրաշեն, Ողջի, Շիրակավան, Ջրափի-1 (Ղալաշի), Ջրափի-2 (Չալ թափա) և Հայկաձոր հնավայրերը (տե՛ս քարտեզ): Ներկայացնենք ուսումնասիրվածության տարբեր մակարդակ ունեցող վերոնշյալ կիկլոպյան կառույցները:



Ախուրյանի ակունքի մոտ նրա մեջ թափվող Եղնաջուր գետակի ափին՝ բլրի վրա է գտնվում վաղբրոնզիդարյան նորահայտ բնակավայրը (բարձ. 2142մ):

Բարդ ռելիեֆով քարաշատ տարածքում կառուցված բնակավայրի պաշտպանական պարզ համակարգը ներկայացնում են բլրի գագաթն ու լանջերը օղակող մի քանի քարաշարքերը¹⁸: Ախուրյանի ակունքի մոտ են գտնվում նաև Գառնառիճ նորահայտ վաղբրոնզիդարյան հնավայրը և Արփի լճի ափամերձ Բերդաշեն գյուղում փոքր թմբի վրա բարձրացող, կիկլոպայան շարվածքով գոտևորված վաղբրոնզիդարյան ամրացված բնակավայրը:

Աշոցքի սարահարթի վրա, Ախուրյանին ափամերձ, կառուցողական և ճարտարապետական լուծումների ընդհանուր գծերով կուր-արաքսյան մշակույթի հուշարձան Մեծ Մեպասարում (ըստ վերջին պարբերացման՝ մ. թ. ա. XXIX-XXVI-XXV դդ.) առկա են լեռնային բնակավայրի կարևորագույն հատկանիշները՝ արհեստական դարավանդացում, շինարարության նպատակով կառուցապատման կազմակերպում ըստ դարավանդների, կառույցների հարակցում լանջի կտրվածքին: Տեղանքի ռացիոնալ օգտագործումը և ճարտարապետական լուծումները համապատասխանում են տվյալ ժամանակաշրջանի շինարարական արվեստում ընդունված չափանիշներին: Մեծ Մեպասարն ունի հարթակներն իրարից բաժանող զանգվածեղ, կիկլոպայան շարվածքով պատեր: Նման շարվածք ունեն սարի հարավային և հարավարևմտյան կողմում լանջը գոտևորող քարերի մեկական շարքերից պահպանված հատվածները, նաև հնավայրը հյուսիսային կողմում լանջի եզրագծով ճեղքված, բազալտի քարերով շարված պարսպի հատվածն ու վերջինիս ուղղահայաց դրված հենապատերը¹⁹: Շիրակի վաղբրոնզիդարյան բնակավայրերից հարթակներն իրարից բաժանված զանգվածեղ, կիկլոպայան շարվածքով պատեր ունեն Հառիճը, Հոռումը, Քեթին, Կառնուտը²⁰ և Տիգնիսը²¹:

Փոքր Մեպասարի ամրոցը գտնվում է Մեծ Մեպասարի դիմաց՝ Ախուրյանին ափամերձ նույնանուն գյուղի հյուսիսային կողմում բարձրացող արևելքարևմուտք ձգվածությամբ բլրի գագաթին (բարձր. 2042մ), (նկ. 1): Բլրի հարավային լանջից դեպի գագաթ տանող թեք ճանապարհը երկու կողմից առնված է ժայռաբեկորների ուղիղ գծով շարքերի մեջ: Գագաթի ձվածիր հարթությունը եզրագծով առնված է մի ծայրով գետնի մեջ ուղղաձիգ տեղադրված բազալտի ժայռաբեկորներով կիկլոպայան շարվածքի մեջ: Կողք կողքի կիպ դրված, 60-70սմ բարձրությամբ կիկլոպայան շարվածքը, մոտ. 200 մ ընդհանուր երկարությամբ, բացառությամբ արևելյան կողմի, լավ պահպանված է և մոտավոր ճշտությամբ ուրվագծում է պարսպապատի հատակագիծը: Գագաթի արևելյան մասում պարսպապատով օղակված միջնաբերդն է: Պարսպից ներս կացարանների պատերի մնացորդներ են: Կիկլոպայան շարվածքով պատերը դրված են ժայռեղեն հիմքի վրա, գտածոները

¹⁸ 2013թ. Աշոցքում Լ. Եզանյանի և Հ. Խաչատրյանի կողմից իրականացված հնագիտական հետախուզությամբ հայտնաբերվել են Եղնաջուր և Գառնառիճ վաղբրոնզիդարյան հնավայրերը: Եղնաջուրը վերաբերում է վաղ բրոնզի վաղ փուլին: Նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում:

¹⁹ Պեղումներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Լ. Եզանյան):

²⁰ Хачатрян Т., Древняя культура Ширака, Изд. Ереванского университета, Ер., 1975, стр. 38-39.

²¹ Թորանյան Թ., նշվ. աշխ., էջ 312-314; Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 34-39:

ուշմիջնադարյան խեցեղենի բեկորներ են: Այստեղ ևս որպես շինանյութ ծառայել է տեղի ժայռաբեկորներից ճեղքումով անջատված բազալտը:



Նկ. 1. Փոքր Սեպասարի ամրոցը

Աշոցքի սարահարթը հյուսիսից գոտևորող սարի հարավային լանջին, ծովի մակերևույթից 2108մ բարձրության վրա են գտնվում Աղվորիկի երկու ամրոցները, որոնք զբաղեցնում են համանուն գյուղի թիկունքում արևելք-արևմուտք ձգվածությամբ բլուրների գագաթների ու լանջերի մեծ ու փոքր հարթությունները: Ամրոցների ավերակները պահպանվել են:

Արևելյան ամրոցը զբաղեցնում է մոտ 400 հա տարածք, կառուցված է բարձրադիր և հարավային կողմից դժվարամատչելի տեղանքում (նկ. 2): Ամրոցի միջնաբերդը քիչ ձվածիր է, ունի 23,5 և 17,5մ չափեր: Պատերի լայնությունը 3,5մ է: Միջնաբերդն առնված է կրկնակի պարսպի մեջ: Պատերի ծուծը լցված է միջին մեծության, կլորավուն, գրեթե միաչափ քարերով: Պատերի պահպանված բարձրությունը տեղ-տեղ 2-3մ է: Հարավային կողմում պատերը կտրուկ թեքությամբ իջնում են կտրտված լանջով, որտեղ հստակ գծագրվում են առանձին մուտքերով շինությունների՝ մինչև 1մ բարձրությամբ պահպանված պատերը: Ամրոցի արևմտյան կողմում հարթակների ձևով ցած իջնող կիկլոպյան շարվածքով կառույցների պատեր են: Միջնաբերդի արտաքին պարսպից հետո բավական ընդարձակ տարածք է, որտեղ պահպանված են պարսպին կից տների փլվածքները: Աղվորիկի վաղ միջնադարյան ամրոցը գտնվում է 80 կացարաններից կազմված բնակավայրի կենտրոնական մասում: Մակերեսին նույնքան կացարաններ են ուրվագծվում Ազատանի վաղ երկաթի ժամանակաշրջանի ամրոց- բնակավայրում²²: Բլրի հյուսիսային կողմում, արտաքին պարսպին կից կառույցների ստուգողական փոստ-

²² Խաչատրյան Հ., Պաշտպանական կառույցների գործառնության ղասակարգում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIX, Գյումրի, 2016, էջ 28:

րակների նյութերը փաստում են, որ վաղ միջնադարում ամրոցը բնակեցվել է, և կյանքն այստեղ շարունակվել է մինչև ուշ միջնադար:



Նկ. 2 Աղվորիկի ամրոցը

Ամրոցի հյուսիսային կողմում դրված ստուգողական խրամատից գտնվել է վաղբրոնզիդարյան խուփի բեկոր²³: Ելնելով տեղանքից, վաղբրոնզիդարյան բնակավայրերին բնորոշ առանձնահատկությունից և նշված գտածոյից՝ Աղվորիկը սովորաբար ժամանակաշրջանում կարող էր լինել ամրացված բնակավայր: Միջնաբերդի փոքր չափերը և նյութի բացակայությունը ենթադրել են տալիս, որ այն կարող էր լինել դիտակետ-աշտարակ, որի շուրջը փռված էր բնակավայրը: Աղվորիկն այս իմաստով համադրելի է Ախուրյանի վերին հոսանքում, բլրաշարերով գոտևորված Գառնատիճ (բարձր. 2042մ) նորահայտ վաղբրոնզիդարյան հնավայրի հետ, որտեղ փոքր բլրակի վրա կիկլոսայան շարվածքով, ծուծը մանր քարերով լցված պատեր ունեցող փոքր դիտակետ-աշտարակն է, շուրջբլուրը՝ բնակավայրը: Միջնաբերդի և կացարանների մակարդակների տարբերությունը մոտ 2մ է: Արփի լճի ափամերձ Բերդաշեն (բարձր. 2016մ) գյուղի մեջ պահպանվել է հարթության վրա իշխող դիրք զբաղեցրած, փոքր բլրակն օղակող կիկլոսայան պատերով վաղբրոնզիդարյան հնավայրը:

Աղվորիկ-2: Արևելք-արևմուտք ձգվող բլրաշարերն իրարից բաժանված են հեղեղատով, որից արևմուտք տեղանքը թեքությամբ բարձրանում է դեպի հաջորդ բլրի գագաթին կառուցված ամրոցը: Պահպանված են գագաթի հարավային կողմը երկարությամբ եզերող ուղղաձիգ պարսպապատը և դրան հյուսիսային կողմից հավելված ուղղանկյուն հենապատերը: Գետնախարսխային մասերը կառուցված են ձեղքված բազալտի հսկա բեկորներից: Պարսպապատից հյուսիս ընկած տա-

²³ Աղվորիկի պեղումներ: Նյութերը հրատարակված չեն:

փարակի վրա գծագրվում են քարերի կորագիծ շարքեր: Վերգետնյա նյութը բացակայում է: Ամրոցի թվագրման բացը կարող է լրացվել միայն պեղումներով:

Ախուրյանի վերին հոսանքում՝ Ամասիայի դիմաց՝ կիրճ իջնող ափամերձ սարահարթի շարունակությունը կազմող հրվանդանի վրա է գտնվում Բանդիվանի միջնադարյան ամրոցը (նկ. 3) (բարձր.1970մ), որի արևելյան պարսպի հիմքերի մոտ գտնված, նաև հրվանդանի արևմտյան զառիթափ լանջով ցած սահած վաղբրոնզիդարյան խեցեղենի բեկորները փաստում են վաղ բրոնզի դարաշրջանում նրա բնակեցված լինելը:



Նկ. 3 Բանդիվանի ամրոցը

Ջրածորի «Մեծ Բերդ» ամրոցը (բարձր.1819) կոնաձև բլրի վրա է (նկ. 4): Գյուղը փռված է բլրի հարավային լանջին, որտեղ բացվել է մ.թ.ա. III հազարամյակի մշակութային շերտ՝ մեջն իջեցված անտիկ թաղումներով²⁴: Բլրի արևմտյան լանջով անցնում է կողք կողքի դրված քարերի շարք: Մինչև գագաթ հասնելը տարբեր բարձրություններում բլուրն օղակող պարսպապատերից թափված քարերի կուտակումներ են: Բլրի գագաթին դրված է եղել երկրաչափական կետ, որից պահպանվել է բետոնի լիցքը: Արևմտյան կողմում՝ գագաթի բետոնյա հարթակից քիչ ներքև, ուրվագծվում է մոտ 50մ տրամագծով միջնաբերդի պատի կորագիծ հատված: Արևմտյան կողմում՝ փլվածքների մեջ, նկատվում են շրջանաձև աշտարակների պատերի ստորին շարքերը: Վերգետնյա գտածոները միջնադարյան խեցեղենի բեկորներ են:

²⁴ Հակոբյան Հ., Վարդանյան Ռ., Ջինջիրջյան Վ., Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրածոր և Հողմիկ գյուղերի տարածք), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում I, Հայաստանի ԳԱ հրատ., Եր., 1993, էջ 107:



Նկ. 4 Ջրածորի ամրոցը

Գագաթից մոտ 9մ ներքև երկրորդ հարթակն է, որի եզրերն օղակող թափված քարերի տակ տեղ-տեղ շարվածք է երևում: Հյուսիսային կողմում փլվածքների տակից երևացող պարսպի հատվածն ունի կանոնավոր շարվածք, ելնելով ռելիեֆից, երկրաչափական կոր գծագրություն: Ամրոցի կառուցման համար բազալտե ելուստավոր ժայռաբեկորները կտրտվել և հավասարեցվել են՝ ստեղծելով աստիճանաձև հարթակներ: Ժայռաբեկորներից տարբեր մեծության կոպիտ մշակված քարերն օգտագործվել են կառույցների և պարսպի պատերի համար:

Ըստ հնագիտական հետախուզության նախնական տվյալների՝ Ջրածորը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում: Փլված պարսպի քարերի և հողի մեջ գտնված նյութերը վերաբերում են մ.թ.ա. 9-8-րդ դարերին: Փլված պարսպի տակ գտնված ուրարտական զենքերը ենթադրել են տալիս ուրարտացիների հարձակումների մասին: Ըստ նախնական տվյալների՝ Ջրածորի «Մեծ բերդը» եղել է ամրոց-բնակավայր, որտեղ կյանքը պարբերաբար ընդհատվել է և որոշակի ընդմիջումով վերսկսվել միջնադարում:

Ախուրյանի միջին հոսանքում, Կապս (բարձր.1808մ) գյուղի հյուսիսային կողմում գտնվող բարձունքի հարավահայաց ու արևելահայաց լանջերին և նրանց ստորոտին բացված բնակավայրն ու դամբարանը թվագրվում են մ. թ. ա. IV-III հազարամյակների սահմանազիխով²⁵: Հրվանդանների վրա կառուցված Վահրամաբերդ (բարձր. 1607մ), Տիրաշեն (բարձր. 1544մ) միջնադարյան ամրոցների մերձակայքում վաղբրոնզիդարյան բնակավայրերի հետքերը թույլ են տալիս ենթադրել, որ մ.թ.ա. III հազարամյակում դրանք եղել են ամրացված:

²⁵ Պետրոսյան Լ., Եզանյան Լ., Խաչատրյան Հ., Վաղբրոնզիդարյան հուշարձաններ Կապսում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XII, Գյումրի, 2009, էջ 156:

Ախուրյան գետի միջին հոսանքում, ավիամերձ դարավանդի լանջերն ու գագաթի հարթությունը զբաղեցնում է մ. թ. ա. III հազարամյակի III քառորդով թվագրվող, անխաթար պահպանված առանձին հատվածներով Հին Շիրակական բազմաշերտ հնավայրը (բարձր. 1489մ)²⁶: Հնավայրի դիրքը ենթադրել է տալիս, որ այն կառուցվել է ընդունված չափանիշներով և եղել է ամրացված բնակավայր: Պեղումներով պարզվել է, որ կյանքն այստեղ սկիզբ առնելով մ.թ.ա. III հազարամյակից՝ շարունակվել է մինչև մ.թ.ա. I հազարամյակի առաջին քառորդը, որից հետո՝ մ.թ.ա. VIII-VI դդ., հնավայրի այդ հատվածը վերածվել է դամբարանադաշտի²⁷: Շիրակավանում, վաղբրոնզիդարյան հեռացված շերտի վրա բացվել է միջին բրոնզի կացարան²⁸:

Ջրափիի «Ղալաչի» ամրոցը (բարձր.1486մ) գտնվում է Ախուրյանի ստորին հոսանքում՝ գետի երկու ավերը կապող Չրփիի կամուրջի դիմաց: Անցյալ դարի 70-ական թվականներին՝ Ախուրյանի ջրամբարի շինարարության ժամանակ, ՄՄՀՄ-Թուրքիա սահմանի դիտակետ-աշտարակն ավից հեռացվել և տեղակայվել է այս բլրի վրա՝ խաթարելով հնավայրի մշակութային շերտերը: Բլրի արևմտյան լանջը և ստորտը լվանում են Ախուրյանի ջրերը: Աշնանը՝ ջրի մակարդակի իջնելու հետ, բացվում են վաղբրոնզիդարյան նյութերով հագեցած շերտը և լանջն օղակող շարվածքի արևմտյան հատվածից պահպանված քարերի շարքը: Վերջինս թույլ է տալիս ենթադրել, որ վաղ բրոնզի դարում հիմնված այս բնակավայրը ևս եղել է ամրացված: Ինչպես ցույց են տալիս այստեղ իրականացվող պեղումները, բլուրը բնակեցված է եղել և՛ վաղ բրոնզի դարաշրջանում, և՛ մ.թ.ա 9-8-րդ դդ.: Խաթարված մշակութային շերտերով սարի տարբեր հատվածներում անտիկ և միջնադարյան խեցեղենի բեկորների փաստումը ցույց է տալիս, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև անտիկ ժամանակաշրջանում և միջնադարում:

Ջրափիի «Չալ թափա» ամրոցը գտնվում է Գյումրի-Արմավիր մայրուղու աջ կողմում՝ Ախուրյան գետից ոչ հեռու, արևելքից արևմուտք ձգված երեք բլուրներից կենտրոնականի գագաթին (բարձր. 1585մ) (նկ. 5): Ամրոցը կառուցվել է գագաթի փոքր հարթության վրա: Բլրի արևելյան կողմում գրեթե ուղղահայաց կտրված լանջն է, հարավից և արևելքից իջնում է փոքր տափարակը, իսկ արևմուտքում բլրաշարի բարձրադիր երրորդ բլուրն է: Ժամանակի ավերումների արդյունքում պատերից թափված քարերով լցված ամրոցի կիկլոպյան շարվածքով պատերի արտաքին կողմը մաքրելուց հետո հստակեցվեց Ջրափիի ամրոցի կառուցապատման ձևը: Ռելիեֆին հարմարեցված, հասակագծում երկրաչափական կոր գծագրությամբ, խոշոր և անտաշ քարերով, կիկլոպյան շարվածքով պատերը դրված են բլրի գագաթին, ժայռեղեն հիմքի վրա: Հյուսիսային և արևելյան դժվարամատչելի կողմում պարսպապատն է:

²⁶ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակական (1977-1981թթ. պեղումների արդյունքները), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2002, էջ 5-15:

²⁷ Նույն տեղում, էջ 6:

²⁸ Նույն տեղում, էջ 15:

* Հայկի համալսարանի և Շիրակի երկրագիտական թանգարանի համատեղ արշավախմբի պեղումներ: Նյութերը հրատարակված չեն:



Նկ. 5 Ջրափի

Պարիսպն ունի մեծազանգված անկանոն, անտաշ քարերով, առանց շաղախի, երկկողմ, ծուծը և դաստարկ խոռոչները մանր քարերով լցված կանոնավոր շարվածք: Պատերի լայնությունը 1,70մ է: Ելնելով արևմուտքից վտանգի առավել մեծ հավանականությունից՝ պաշտպանական նկատառումներով ամրոցի արևմտյան կողմն ամրացված է պարսպին կից, երկայնական առանցքով հյուսիս-հարավ ուղղված, 70-սմ բարձրությամբ պահպանված պատերով, իրար հաջորդող, հատակագծում ուղղանկյուն կառույցներով: Պարսպից թափված քարերը գրեթե ամբողջությամբ ծածկել են կից կառույցները: Պարսիպի արտաքին կողմում հավելված կառույցների պատկերն այսպիսին է: Առաջինն ունի 2,60մ լայնություն, հյուսիսային պատի երկարությունը 1, 60մ է, արևմտյան պատը բացակայում է: Հաջորդ երկու փակ ուղղանկյունները համապատասխանաբար ունեն 5,70մ x2,44մ և 5,60մ x 2,90մ չափեր: Այնուհետև պարսպի 3,60մ երկարությամբ հատվածը հյուսիսից և հարավից սահմանափակված է 2,90մ և 2մ երկարությամբ պատերով, իսկ արևմտյան կողմը բաց է: Սրան հաջորդում են ուղղանկյան մեջ առնված, 1,40-1,50մ տրամագծով, իրար կից շրջանաձև չորս կառույցներ: Ամրոցի ճարտարապետական նկարագիրն ամբողջացնել հնարավոր է միայն փլվածքները մաքրելուց և պահպանված կառույցների պատերը բացելուց հետո :

Ջրափիի պաշտպանական համակարգի մեջ կարևորվել է մուտքը, և անվտանգությունն ապահովելու նպատակով այն տեղադրվել է ամրոցի հարավային հարթ կողմում: Պատերից ներս շինությունների հետքեր կան: Գտածոները միջնադարյան խեցեղենի մեկ-երկու բեկորներ են: Հատակագծային որոշակի պատկեր տվող, մասամբ կանգուն պատերով ամրոցի կառուցման ժամանակը փաստող հնագիտական նյութերը բացակայում են: Այն հավանաբար հիմնվել է զուտ պաշտպանական նպատակներով, երկրի նորմալ զարգացման պայմաններում՝ խաղաղ

տարիներին դիտակետ է եղել, իսկ վտանգի ժամանակ՝ պատուպարան մերձակա բնակավայրերի բնակչության համար:

Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Հայկաձոր գյուղի վարչական տարածքում, Ախուրյանի ափին, Հռոմոսի վանքի դիմացի հրվանդանի վերին դարվանդի վրա է գտնվում մ. թ. ա I հազարամյակի ամրոց-բնակավայրը (նկ. 6): Ամրոցի արևմտյան պարսպի արտաքին կողմում բացվել է ՅՄ բարձրությամբ պահպանված մի հատվածը աշտարակի անկյան մասում: Պարիսպը կառուցված է տուֆի և բազալտի խոշոր քարերից: Պարսպապատի բարձրանալուն զուգընթաց՝ շարվածքի քարերի չափերը փոքրանում են: Հայտնաբերված նյութերը վերաբերում են մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսին, նաև անտիկ և միջնադարյան են²⁹:



Նկ. 6 Հայկաձոր

Հայաստան-Թուրքիա սահմանային գոտու Երեւոյք-Բագրավան հատվածում 2013թ. իրականացված հնագիտական հետախուզության ժամանակ հայտնաբերվեց Ախուրյանի կիրճի բարձրադիր ափի եզրին, ժայռեղեն հիմքի վրա դրված, արևելք-արևմուտք ուղղաձիգ գնացող, սև տուֆի մեծազանգված, կոպիտ մշակմամբ քարերով կիկլոպյան երկերես շարվածքով պատ: Պատի հյուսիսային կողմը ժայռեղեն հարթ մակերևույթ է, իսկ հարավային երեսին կից, զառիթափ լանջով իջնող կառույցներ են: Վերգետնյա նյութը բացակայում է: Պատկերը նույնն է, ինչ Աղվորիկ-2 հնավայրում:

Ինչպես ցույց են տալիս Ախուրյան գետի ափամերձ ամրացված բնակավայրերի և ամրոցների պեղումների ու մեր կողմից իրականացված հնագիտական հետախուզության արդյունքները՝ գետի երկայնքով ձգվող բերրի սևահողերով և

²⁹ Խաչատրյան Հ., Հայկաձորի ամրոց-բնակավայրի 2011թ. պեղումները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIV, Եր., 2011, էջ 158-159:

ջրային ռեսուրսներով հարուստ տարածքները հնուց ի վեր նպաստավոր էին մարդու բնակության համար: Լեռնային և նախալեռնային շրջաններում բնակավայրերի ընտրության համար սրանք կարևոր նախադրյալներ են: Նշված հանգամանքները մեծապես ազդել են հուշարձանների բնույթի և տեղադրության վրա: Վաղ բրոնզի դարաշրջանում սկզբնավորվում է կիկլոպայան շարվածքով ամրացված բնակավայրերի կառուցումը: Այդ բնակավայրերը հիմնականում առանձնանում են ինչպես տեղի ընտրության, այնպես էլ ճարտարապետական պլանավորման և դրանց կառուցման համար մշակված որոշակի սկզբունքներով: Նախալեռնային շրջանները ծածկվում են կիկլոպայան շարվածքով ամրացված բնակավայրերով: Այդ կառույցների առանձնահատկություններից մեկը ծովի մակերևույթից 1500-2100մ բարձր, գետի ափին կամ ափամերձ գառիթափ բարձունքների և հրվանդանների վրա կառուցված լինելն է:

Ամրացված բնակավայրերի առկայությունն անշուշտ պայմանավորված էր պաշտպանվելու անհրաժեշտությամբ, և դրանք իրականացվել են դեռևս վաղ բրոնզի դարում ձևավորված ամրաշինական կառույցների շինարարական ավանդույթներին՝ տեղանքի ռացիոնալ օգտագործման և նախագծային լուծումներին համապատասխան: Ոչ պակաս կարևոր է եղել նաև Ախուրյանի ափին գտնվելու աշխարհագրական շահեկան դիրքը: Գետի բարդ ռելիեֆով տարածքում մ.թ.ա. III-I հազարամյակների, ինչպես նաև միջնադարյան ամրացված բնակավայրերը և ամրոց-բնակավայրերը կառուցված են դժվարամատչելի տեղանքում՝ գետի երկայնքով ձգվող, կիրճով եզերված բնական ամրությունների վրա՝ ժայռային հրվանդանի, ափամերձ սարի, բլուրի կամ բարձունքի գագաթին և լանջերին: Տեղանքի ընտրությունն ինքնանպատակ չէր: Բացի անառիկ դիրք ապահովելուց՝ տեղանքը նաև շինանյութի աղբյուր էր: Ռելիեֆի ուրվագիծը կրկնող, անմշակ հսկայական քարերի՝ առանց կապակցող շաղախի շարվածքի օգտագործմամբ կիկլոպայան պարիսպներն օղակում են սարի կամ բարձունքի գագաթը, կարող են նաև տարբեր մակարդակներում գոտևորել նրա լանջերը:

Սարը կամ բարձունքը, որի վրա կառուցված են ամրացված բնակավայրեր և ամրոցներ գոտևորված են կողք կողքի դրված քարերի մեկական շարքով: Դրանք կարող են լինել երեքից մինչև յոթ³⁰: Անկանոն, հաճախ ցցուն քարերով նման շարվածքներն անշուշտ կարող էին որոշ չափով դժվարացնել ամրոցի պարիսպներին հասնելը՝, նաև լանջի կտրուկ հատվածներում արգելափակ լինել հողի սահքի դեմ: Կարծում ենք՝ գոտևորումը կատարվել է դիցաբանական որոշակի ընկալումներով: Հնդեվրոպական *k^(h)el ոչ միայն լեռան իմաստ է արտահայտում,

³⁰ Թորամանյան Թ., 1942, էջ 13:

*Նման շարվածքները՝ որպես արգելապատ, կիրառվել են նաև XX դարում, և դրա օրինակներն առկա են Շիրակի մարզի Հարթաշեն և Զույգաղբյուր գյուղերի տարածքներում: Այստեղ 1941-1945թթ. Հայրենական պատերազմի տարիներին, հակառակորդի զրահատեխնիկայի հնարավոր շարժրնթացը կասեցնելու նպատակով բլուրների լանջերով կառուցվել են 200-400մ երկարությամբ եռաշարք արգելապատեր:

այլ նաև՝ բարձունքի³¹: Լեռն ընկալվում է որպես տիեզերքի մոդել: Համաշխարհային լեռը եռաշերտ է, նրա գագաթին ապրում են աստվածները, նրա տակ՝ մեռյալների թագավորությանը պատկանող չար ոգիները, միջնամասում՝ մարդկային ցեղը: Լեռան, սարի կամ բարձունքի գագաթին միանում են երկինքն ու երկիրը: Ամրացված բնակավայրերը և ամրոցները կառուցվել են սարի կամ բարձունքի վրա ոչ միայն պաշտպանական, այլև երկնքին մոտ լինելու նպատակով, որի իմաստաբանության հենքը հնդեվրոպական նախնական հավատալիքներում աշխարհի եռամաս ընկալումն է: Քարերի գոտևորող շարքով սահմանազատվել են սարի կամ բարձունքի՝ որպես տիեզերքի մոդելի կամ տիեզերական այան, կառուցվածքի բոլոր հիմնական տարրերը՝ երկինքը, երկիրը, ստորերկրայքը:

Մ.թ.ա. III-I հազարամյակներին վերաբերող ուսումնասիրված կիկլոպյան կառույցները, նաև տվյալ ժամանակաշրջանին պատկանելը վերգետնյա նյութերով փաստող հնավայրերի տեղադրությունը և պահպանված պատերի հատվածները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք եղել են ամրացված բնակավայրեր:

Կազմավորման հենց սկզբից մշակված են կառուցողական որոշակի սկզբունքների կիրառմամբ հատակագծային և ծավալային կոմպոզիցիաներ, կոնստրուկտիվ համակարգեր: Ամրաշինական բոլոր կառույցներում կոմպոզիցիոն-կառուցվածքային միևնույն սկզբունքն է՝ շրջափակված տարածք, որի ներսում միջնաբերդն է կամ բնակավայրը:

Ախուրյանի երկայնքով ձգվող կիկլոպյան կառույցներն երկու տիպի են. մեծազանգված քարերով կառուցված պատեր, որոնց վրա չկան գործիքների հետքեր և ուղղակի քարերի կուտակումներ են, նաև կանոնավոր, երկու կողմից լարածիզ ուղղություն ունեցող պատեր՝ ծուծը լցված մանր քարերով: Ըստ գործառույթի առանձնահատկությունների՝ ամրաշինական կառույցները, ամրոց-բնակավայրեր են կամ ամրոց-պատասպարաններ: Առաջինները մշտապես բնակեցված են եղել, երկրորդները պահակակետ-դիտակետեր են, և անկախ կառուցողական և ճարտարապետական ձևերի տարբերություններից, նույն գործառույթն են ունեցել: Ախուրյան գետի ափամերձ կիկլոպյան կառույցներն ինչպես ներքին կազմակերպման, այնպես էլ ճարտարապետաշինարարական առումներով տեղանքի բարդ ռելիեֆին համապատասխանելու ու միջավայրին զուգակցվելու բարձր վարպետությամբ ուրույն տեղ ունեն Հայաստանի ամրաշինական կառույցների մեջ: Կառուցման կիկլոպյան եղանակն այնուհետև պարբերաբար կիրառվել է ժամանակագրական տարբեր փուլերի հուշարձաններում՝ արտացոլելով տեղական՝ վաղբրոնզիդարյան ամրացված բնակավայրերի ճարտարապետության կառուցողական սկզբունքների և շինարարական ավանդույթների զարգացման ներքին օրինաչափությունները:

Ընդունված է, որ Հայաստանում վկայված շինարարական այս եղանակի ձևավորման տարբեր փուլերն ընդգրկել են մ.թ.ա. III հազարամյակի առաջին-երրորդ քառորդները, այնուհետև այն պարբերաբար կիրառվել է մինչև ուշ բրոնզի

³¹ Гамкрелидзе Т., Иванов Вяч., *Индоевропейский язык и индоевропейцы, Изд.-во Тбилисского университета, Тбилиси, 1984, т. II, стр. 669.*

դարաշրջանի վերջը³²: Ըստ պեղված հնավայրերի շերտագրական տվյալների՝ ամրացված բնակավայրերում և ամրոցներում կյանքը որոշ ընդհատումներով շարունակվել է՝ ընդգրկելով վաղ բրոնզից միջնադար ընկած ժամանակաշրջանները: Միջինբրոնզիդարյան կառույցներ չեն փաստվել՝ հավանաբար տարածաշրջանի դեռևս ոչ բավարար ուսումնասիրվածության պատճառով: Հատկապես շատ ամրոցներ են կառուցվել մ.թ.ա. II հազարամյակի վերջում և մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին՝ երկրագործության, անասնապահության և մետաղագործության հիմքի վրա զարգացող տնտեսության վերելքի պայմաններում: Մ.թ.ա. I հազարամյակի Ջրաձոր, Շիրակավան, Ջրափի (Ղալաչի), Հայկաձոր ամրոց-բնակավայրերը կառուցված են խոշոր և անտաշ ժայռաբեկորներից, ձգվում են տեղանքի ռելիեֆին համապատասխան կոր գծագրությամբ, որպես կանոն, բաղկացած են երկու մասից՝ շրջապատի նկատմամբ իշխող դիրք ունեցող սարի կամ բլրի վրա կառուցված միջնաբերդից և լանջին կամ ստորոտին փոված բնակավայրից:

Կառուցողական նման սկզբունքը՝ որպես մշակութային ժառանգություն, փոխանցվում է հետագա դարաշրջաններ՝ յուրաքանչյուր փուլին բնորոշ որոշակի առանձնահատկություններով: Կիկլոսայան շատ ամրոցներ, նախաուրարտական կամ ուրարտական ժամանակաշրջաններից սկսած, երկար ժամանակ ամայացած են եղել և վերստին բնակեցվել են միջնադարում: Ուշ միջնադարում այդ բնակավայրերը, կորցնելով նախնական գործառույթը, վերածվել են փոքր գյուղատեղիների:

Կիկլոսայան շարվածք կիրառվել է նաև միջնադարյան ամրաշինական կառույցներում: Միջնադարում երկիրը հուսալի բերդերով և ամրոցներով պատելու ծրագիր է կազմել Մուշեղ Մամիկոնյանը: Այն իրականացվել է միայն Բագրատունիների օրոք³³, երբ Աշոտ Երկաթից սկսած՝ արաբներին վտարելուց հետո ամեն կերպ ամրացվում է երկիրը. կառուցվում են նոր ամրոցներ, վերաշինվում հները, ամրոցների են վերափոխվում եկեղեցիները (Կուսայրի, Ախուրիկ, Երազավորս), նաև վերականգնվում են կիկլոսայան կառույցներ (ինչպես, օրինակ՝ Ջրափիի և Հայկաձորի մ.թ.ա. II-I հազարամյակներում լքված ամրոցները): Միջնադարյան ամրոցները հյուսիսից կատարվող հարձակումների ժամանակ հավանաբար իրենց վրա են կրել թշնամու հարվածները և Շիրակավան, Երազավորս, Անի մայրաքաղաքների պաշտպանության համար որոշակի դեր կատարել: Ենթադրվում է, որ Երազավորս մայրաքաղաքի պաշտպանության համար նման դեր կատարել է Տիգնիսը³⁴:

Ամրացված բնակավայրերը գոյատևման ողջ ընթացքում ունեցել են նատակյաց երկրագործական-անասնապահական բնույթ: Դրանց բնակիչների տնտեսական ինտենսիվ կյանքը փաստում են կացարանները, ժամանակաշրջանը բնութագրող տարատեսակ և տարաբնույթ գտածոները, նաև կենդանական ոսկորների առատությունը:

³² Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 65:

³³ Հարությունյան Ս., Երազավորսի 1977թ. պեղումները, ՊԲՀ, 1, 2012, էջ 193:

³⁴ Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 312-314, էջ 114-119: Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 193:

Հայկական լեռնաշխարհը տարածաշրջանի տարբեր էթնոսների հաղորդակցման, մշակութային փոխառնչությունների կարևոր կամուրջ էր Հին Արևելքի երկրների և Կովկասի միջև: Միջազգետքից հնուց ի վեր Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհի ապրանքներ էին հասնում³⁵: Վաղ բրոնզի դարաշրջանում բարձր զարգացած անասնապահությամբ, երկրագործությամբ և մետաղամշակմամբ հինարևելյան մշակույթի համեմատաբար լուրջ օջախ Հայաստանի նյութական մշակույթում նման փոխադարձ կապեր բացահայտող բազմաթիվ գուգահեռներ կան:

Ամրացված բնակավայրերն ու ամրոց-բնակավայրերը կապվել են տվյալ ժամանակաշրջաններում գործած առևտրային ճանապարհների հետ: Շիրակի հնագույն ճանապարհների մասին ամենավաղ գրավոր վկայությունը ուրարտական աղբյուրներում է³⁶: Էրիախի երկիրը Մեծ և Փոքր Կովկասի մշակույթի փոխադարձ կապի կարևորագույն կենտրոններից մեկն էր³⁷: Մայոտիս-Բաբելոն մայրուղու շիրակյան ճյուղը գործում էր դեռևս մ.թ.ա 6-5-րդ դարերում՝ իր նշանակությունը պահելով նաև հետագայում³⁸: Պևտինգերյան տախտակների (Tabula Peutingeriana) մեջ բերված Արտաշատից Շիրակ, այնտեղից Վրաստան և Աբխազիա գնացող ճանապարհի մի հատվածը մատենագիտական աղբյուրներում կոչվում էր «ճանապարհ Աշոցաց» կամ «պողոտայ Աշոցաց»³⁹: Շիրակով և Աշոցքով անցել են առևտրական կարևոր, տարանցիկ մայրուղիներ, որոնց հանգուցակետերի վրա էլ հիմնվել են նաև ամրոց-բնակավայրերը և ամրացված բնակավայրերը:

Իրականացված հնագիտական հետախուզությունը թույլ չի տալիս սպառնալից պատասխան տալ դրանց գործառույթի, ինչպես նաև հիմնադրման և գոյատևման ստույգ ժամանակաշրջանների մասին: Ախուրյանի ափամերձ կիկլոպյան շարվածքով ամրացված բնակավայրերի և ամրոց-բնակավայրերի զարգացման ընթացքը, կատարված վերակառուցում-վերափոխումները, դրա հետևանքով նրանց ճարտարապետական տեսքի փոփոխությունները և բազմաթիվ այլ հարցեր կարող են հստակեցվել միայն պեղումներով:

³⁵ Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Изд.-во АН Арм. ССР, Ер., 1964, стр. 25.

³⁶ Арутюнян Н., Биайнили (Урарту), военно-политическая история и вопросы топонимики. Изд.-во Академии Наук Армянской ССР, Ер., 1970, стр. 189-2005.

³⁷ Мартиросян А., О древнем поселении около Ленинакана, Известия АН Арм.ССР, 1952, №10, стр. 87-97.

³⁸ Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Вв.до н.э.- XVв н.э.). Эривань, 1930, стр. 8, 22; Акопян А., Армения в торговле Запада с Востоком(первые века н.э.), СА, 1964, №2, стр. 70-90; Զարդարյան Մ., Շիրակը անաշտիկիական ինտեգրացման համակարգում (մ.թ.ա. 1-ին հազարամյակում), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը 2-րդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 11:

³⁹ Մանանդյան Հ., Երկեր, հ.Ե, Եր., 1984, էջ 161:

ЦИКЛОПИЧЕСКИЕ СООРУЖЕНИЯ ПРИБЕРЕЖЬЯ РЕКИ АХУРЯН

*Резюме**Л. Еганян*

В рамках изучения темы «Оборонительные сооружения бассейна реки Ахурян» рассматриваются сооружения циклопической кладкой разных эпох: Егнаджур, Бердашен, Мец Сепасар, Агворик, Покр Сепасар, Джрадзор, Капс, Ширикаван, Джрапи-1, Джрапи-2, Айкадзор и т.д..

Это- укрепленные поселения и крепости расположены на вершинах гор, холмов и на возвышенностях. Их стены выложены сухой кладкой, которая в научной литературе именуется циклопической.

Заложенные в эпоху ранней бронзы, укрепленные поселения выявляют одиноковую культуру и относятся к III тыс. до н.э. Слоев, свидетельствующих о функционировании этих укрепленных поселений в эпоху средней бронзы, не наблюдается. Возможно, это связано с малоизученностью региона. Циклопические крепости в основном относятся к IX-VIII вв. до н.э. По предварительным данным жизнь в этих крепостях возобновилась в средневековье. В этот период также были сооружены новые циклопические крепости.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եգանյան Լարիսա Գրիշայի- պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: smuseum@web.am.

Համագասայ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐԸ

Պաշտպանական ամրությունների կառուցումը Ախուրյանի ափամերձ տարածքներում նոր թափ է ստանում Բագրատունյաց ժամանակաշրջանում: Շիրակի թագավորության կազմավորումը, Անիի մայրաքաղաք դառնալը, երկրի տնտեսական, ռազմական հզորացումը, Ախուրյանի ափերով դեպի Անի տանող առևտրական ուղիների անվտանգության ապահովումը կենսական անհրաժեշտություն են դարձնում մայրաքաղաքի ընդարձակ պաշտպանական համակարգի ստեղծումը և առևտրական ուղիների վրա հսկողություն սահմանելը (քարտեզ):

Այս ժամանակաշրջանի պաշտպանական կառույցները տեսականորեն կարելի է բաժանել 3 հիմնական խմբի.


1. Արտաքին պարսպից և միջնաբերդից կազմված ամրաշինական կառույցներ. Այս խմբի տիպական կառույցներից են Մաղասբերդը, Տիգնիսը, Արալըղի բերդը (նկ. 1-3): Սրանք կառուցված են Բագրատունյաց ժամանակաշրջանում: Մաղասբերդի հիմնումը Զաքարիա Սարկավազը վերագրում է 7-րդ դարին. «Թագաւորն Յունաց Մօրիկ էր ազգաւ Հայ՝ յԱրարատ գաւառէ՝ յՕշական գեղջէ. եւ բարւոյ պատահեալ թագաւորեաց ի Կոստանդնուպօլիս ամս ԽԲ: Սա առաքեաց ի հայրենի երկիրն իւր ի Հայս՝ այր ոմն հայ ազգաւ՝ Մաղասս անուն՝ շինել քաղաք մի յաշխարհին Հայոց յանուն իւր: Եւ նա երթեալ գտանէ տեղի մի ի Շիրակ գաւառի՝ մերձ ի յԱնի հարաւակողմն՝ ի վերայ Ախուրեան գետոյ՝ ի մէջ երկուց լեռանցն՝ ի տափարակ տեղի, որ Գ կողմն բարձր քարափք էին. եւ յարեւմտեան կողմն փոքր ինչ դիւր եւ սակաւ ինչ գառ ի վայր. եւ հաւանեալ տեղոյն՝ պարսպեալ գայն, եւ կախեալ դռուն՝ անուանեաց Մաղասսբերդ: Եւ մինչ գոյր իշխանութիւն աշխարհիս ի ձեռն քրիստոնէից, տիրեցին քրիստոնէայք Մաղաս բերդին»¹: Սակայն, եթե նույնիսկ բերդը հիմնված լինի 7-րդ դարում, ամենայն հավանականությամբ, այժմեական տեսքը ստացել է Բագրատունյաց ժամանակաշրջանում: Մաղասբերդը հնագիտորեն ուսումնասիրված չէ, և վաղ միջնադարում դրա գոյությունը փաստող նյութական ապացույցներ չունենք: Ֆրանսիացի գիտնականների վերջին ուսումնասիրության արդյունքում հուշարձանը մանրամասն չափագրվել և նկարագրվել է, սակայն հնագիտական պեղումներ չեն իրականացվել²:

Անիից հյուսիս՝ Ախուրյանի ձախ ափին, կառուցվել են Տիգնիս և Արալըղի՝ ներկայումս Թուրքիայի Չեթինդուրակ գյուղի տարածքում գտնված բերդերը: Արալըղի բերդը պայթեցվել և ամբողջովին ոչնչացվել է անցյալ դարի 70-ական թվականներին: Բարեբախտաբար, այն ժամանակին չափագրվել է Թորոս Թորա-


¹ Զաքարեայ սարկավազի Պատմագրություն, Վաղարշապատ, 1870, գլուխ Թ:

² Philippe Dangles, Mahasberd retrouvée, college de france – cnrs centre de recherche d'histoire et civilisation de byzance, travaux et memoires 18, Paris 2014a., p. 205-221:


մանյանի կողմից³: Այս իրար շատ նման բերդերն ունեն 8 հզոր աշտարակներ՝ 4 անկյուններում և մեկական՝ երկայնակի հատվածների կենտրոնում: Բազրատունյաց ժամանակաշրջանի բերդերի համար աշտարակների այս թիվը և տեղադրությունը տիպական են:




³ Թորանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր. 1948, էջ 176, նկ.160:



Նկ. 1



Նկ. 2 Մաղաս բերդ



Սկ. 3 Արալ

2. Առանց արտաքին պարսպի բերդեր. Ախուրյանի ավամերձ տարածքում մեզ հայտնի են երկու այդպիսի ամրաշինական կառույցներ՝ Վահրամաբերդը և Տիրաշենի բերդը (նկ. 4): Երկուսն էլ գտնվում են Ախուրյանի ձախ ավին՝ Մարմաշենի վանքային համալիրից հարավ: Առաջինը կրում է Վահրամ Պահլավունու անունը, երկրորդը գտնվում է նրա ավատի՝ Տիրաշեն միջնադարյան գյուղի մոտ: «Տիրաշեն տեղի ի նախագրեալ արձանագրի Ապուղամբենց՝ է դաստակերտ նոցին Տիրաշեն, գոր ի վերայ հողոց կալուածոց վանացն շինեցին՝ ի բնակութիւն մարդկան, վասն որոյ եւ մարթ է անուն կոչել զվերին Ղանլրճա գետոյ՝ որ ի բարձու քարափան կայ, իբր 70 տամբք, առ քարհատիք, իսկ զՍտորինն՝ որ է գիւրի կայ յեզր Ախուրենոյ՝ 40 տամբք Հայոց, համարել բուն Մարմաշեն»⁴:

Անիից դեպի հյուսիս բերդերի և ամրոցների բավականին խիտ ցանցի ստեղծմանը, մեր կարծիքով, նպաստել է նաև Վահրամ Պահլավունու Մարմաշեն-Տիրաշենի ավատը, ուր նրա կողմից կառուցված նույնանուն վանքային համալիրի տարածքում են գտնվում Պահլավունի տան ընտանեկան գերեզմանները: Այս երկու բերդերը, ի տարբերություն Տիգնիսի և Արալըղի, կառուցված են նեղ, երկայնակի ձգված դարավանդների վրա, և բերդապարիսպները եզերում են դարավանդնե-

⁴ Ալիշան Ղ., Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց հավաքեաց Հ.Ղեւոնդ Ալիշան Յուխտէն Սխիթարաց, Վենետիկ, Ս.Ղազար, 1881, էջ 151:


րի գաղթաբազմի լանջերը: Երկուսում էլ երկայնակի ձգվող կենտրոնական միջանցքից դեպի աջ և ձախ բացվում են սենյակներ: Ամենայն հավանականությամբ դրանք ունեցել են զորանոցային գործառույթ: Ընդհանրապես Ախուրյանի ավազանի զարգացած միջնադարի բոլոր պաշտպանական կառույցների հարևանությամբ կան մեկ կամ երկու բնակավայրեր: Հավանաբար խաղաղ ժամանակ կայազորը բնակվել է հարևան բնակավայրում, իսկ բերդում, որտեղ պետք է պահպանվեին զենքի և պարենի պաշարները, պահակետային ծառայություն է իրականացվել: Այդ մասին են վկայում նաև Վահրամաբերդի պեղված սենյակներից հայտնաբերված մեծ և միջին չափի կարասների մնացորդները⁵: Ամրաշինական կառույցների այս տեսակը կարելի է դասակարգել որպես զորանոցային տիպի բերդեր:



Նկ. 4 Տիրաշեն


⁵ Պեղումներն իրականացրել է Ս. Հարությունյանը, նյութերը հրատարակված չեն, պահպանվում են Շիրակի երկրագիտական թանգարանում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ախուրյանի ավամերձ հատվածներում գտնվող այս ամրաշինական կառույցները, որոնցից են Կուսմայրին, Երազգավորսը (նկ. 5), Ախուրիկը (նկ. 6): Դրանք 7-րդ դարի եկեղեցիներ են, որոնք խոնարհված են եղել: Անի-Շիրակի թագավորության շրջանում, երբ եկեղեցաշինությունը Անիում և թագավորության այլ վայրերում մեծ թափ է ստանում, դրանք չեն վերականգնվում, այլ կառուցվում է արտաքին պարիսպ, եկեղեցու պահպանված մասին հավելում են աշտարակներ և այն վերածում բերդի: Սրանցից առավել ուսումնասիրվածը Երազգավորսի բերդն է:



ERAZGAVORS - ARMENIE - PLAN GENERAL - ECH. 1/200^e - RELEVÉ ADUT 07 - MISSION ANI - DESSIN PH. DANGOLES

Նկ. 5 Երազգավորս



AKHURUK - ARMENIE - REGION DU SHIRAK - ISOLÉ FORTIFIÉ - PLAN - ECH. 1/50^e - RELEVÉ ADUT 07 - MISSION ANI - DESSIN PH. DANGOLES

Նկ. 6 Ախուրիկ

Եկեղեցին, ըստ հնագետ Ս.Հարությունյանի, ավերվել է արաբական արշավանքների ընթացքում⁶: Երազգավորսի այս փոքր բերդի արտաքին պարիսպը կառուցված է բերդաշինության նույն սկզբունքով՝ մեկական կյոր աշտարակներ 4 անկյուններում և պարսպի երկայնակի հատվածների կենտրոնական մասերում: Եթե խոշոր բերդերը՝ Տիգնիս, Մաղաբերդ և այլն, կառուցված են համեմատաբար անմատչելի բարձունքների վրա, ապա բերդի վերածված եկեղեցիները հարթ տարածքում են: Այս հանգամանքը և դրանց փոքր չափերը կասկածի տակ են դնում դրանց ռազմական նշանակությունը: Ամենայն հավանականությամբ, դրանք եղել են զենքի և պարենի պահեստարաններ, ունեցել են փոքր կայազոր և Ախուրյանի երկու ափերի երկայնքով ձգվող ճանապարհների ապահովությունը պահպանելու գործառույթ: Այստեղ կարող էին հանգրվանել նաև Անի գնացող կամ այնտեղից մեկնող վաճառականներն ու ճանապարհորդները: Ցավոք, տեղեկություններ չունենք Բագրատունյաց շրջանի փոստային և սուրհանդակային կայի կազմակերպման վերաբերյալ: Սակայն սրանց խտությունը Անիի և Պահլավունյաց ավատ Մարմաշենի միջանկյալ տարածքում հուշում է, որ դրանք կարող էին սուրհանդակային արագ կապն ապահովող, օրինակ՝ հոգնած ձիերը փոխելու, սուրհանդակների հանգրվանելու և հանգստանալու իջևաններ լինել: Ախուրյանի ափամերձ մեծ և փոքր բերդերի այս շղթայում դրանց իրարից հեռավորությունը չի գերազանցում 5 կիլոմետրը:

3. Պարսպաստ վանքային համալիրներ. Միջնադարյան խոշոր վանքային համալիրները, բացի կրոնական և մշակութային գործառույթներից, եղել են առևտրատնտեսական կենտրոններ: Այստեղ են կուտակվել վանքապատկան հարստությունները, պարենի պաշարները և այլն: Վանքերում են հանգրվանել բազմաթիվ վաճառականներ, ճանապարհորդներ, ուխտավորներ: Ախուրյանի ավագանի խոշոր վանքային համալիրները, որոնցից են Հոռոմոսը և Մարմաշենը, ունեցել են հզոր պարիսպներ: Հոռոմոսի սրբատաշ պարիսպը գրեթե ամբողջությամբ քանդվել է անցած դարի 90-ական թվականներին: Վանքի և նրա պարսպի սրբատաշ քարերը պոկվել և տեղափոխվել են թուրքերի կողմից այլ կառույցներում օգտագործելու համար: Ներկայումս պահպանված է միայն հարավարևելյան հատվածը (նկ. 7):

Մարմաշենի վանքի պարսպից պեղումներով բացված է միայն հյուսիսային կողմի ստորին շարքերի մի հատված: Այն կառուցված է տուֆե զանգվածեղ, կոպտատաշ քարերով: Մարմաշենի պարսպի նկարագրությունը տվել է նաև Թորոս Թորամանյանը. «Այս երեք եկեղեցիները շրջապատված են եղած ընդարձակ պարիսպով և պարիսպի մեջ մեծ ու փոքր բնակարաններով, որոնց հիմքերը երևում են այժմ, արևմտյան կողմեն պարիսպը մասամբ մնում է խոշոր սրբատաշ քարերով»⁷, «Ուշադրության արժանի է եկեղեցվո շրջապարիսպները ահագին ընդարձակությամբ, արևելյան կողմեն հասնում է Ախուրյան գետի դարավանդին

⁶ Հարությունյան Ս., Երազգավորսի 1977թ. պեղումները, Պատմաբանասիրական հանդես, թիվ 1, 2012, էջ 192:

⁷ Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 137:

գլուխը, իսկ հյուսիսային և հարավային կողմերեն մոտավորապես 30-40 մետր հեռավորության վրա շրջապատում է, իսկ արևելյան կողմեն հայտնի չէ, թե ո՛ր է հասնում սահմանը: Այնուամենայնիվ հետաքրքրական է տեսնել քարերու անօրինակ խոշորությունը, մաքուր տաշվածքը և կանոնավոր շարքերը»⁸:



Նկ. 7 Հոռոմոս

Այս վանքային պաշտպանական համալիրների ռազմական հնարավորությունների վերաբերյալ գրավոր աղբյուրներում շատ սուղ տեղեկություններ են պահպանվել: Մասնավորապես մեզ հայտնի է 1064թ. Մելիքշահի կողմից Մարմաշենի պաշարման և համառ դիմադրությունից հետո գրավման մասին⁹: Այսպիսով, այս վանքային, պաշտպանական համալիրները եղել են ամուր և մարտունակ:

Առաջին հայացքից Ախուրյանի ավազանի՝ Անիից հյուսիս տեղակայված բերդերի այս խիտ ցանցը պետք է պաշտպաներ մայրաքաղաքի մատույցները, թույլ չտար թշնամուն մոտենալ Անիին, սակայն ռազմական գործողություններին դրանց ակտիվ մասնակցության, Անիի պարիսպներին հասած թշնամական գործերին թիկունքից հարվածելու մասին նույնիսկ կցկտուր տեղեկություններ չկան: Մեզ հայտնի բոլոր ճակատամարտերը տեղի են ունենում Անիի մոտ: Ստեղծվում է տպավորություն, որ Անին գրավել ցանկացող զորաբանակները, նպատակ ունենալով մայրաքաղաքը, չցանկանալով ուժեր և ժամանակ վատնել այդ բերդերի գրավման վրա, պարզապես շրջանցել են դրանք, իսկ բերդերը, լինելով պաշտպանական կառույցներ, միաժամանակ պատսպարաններ շրջակա բնակչության համար, հարձակողական գործողությունների ունակ չեն եղել: Մայրաքաղաքի ան-

⁸ Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 175:

⁹ Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիա, Պատմության ինստիտուտ, հատոր 3, Եր., 1976, էջ 155:

կումից հետո որպես ռազմական միավորներ դրանք կորցնում էին իրենց նշանակությունը: Հավանաբար այդ բերդերն առանց ավերվելու ձեռքից ձեռք են անցել: Այսպիսով, քննարկված ամրաշինական կառույցները ըստ գործառույթի կարող են դասակարգվել 3 խմբերի.

1. Անիի մատույցներում գտնվող, արտաքին պաշտպանական համակարգով հզոր բերդեր՝ Մաղաբերդ, Տիգնիս, Արալըղ:
2. Չորանոցային տիպի փոքր բերդեր՝ Վահրամաբերդ, Տիրաշեն, Ախուրիկ, Երազգավորս, Կումայրի:
3. Բերդապարսպով վանքային համալիրներ՝ Հոռոմոս, Մարմաշեն:

Ամրաշինական կառույցների նման դասակարգումից բխում է դրանց պատկանելության հարցը: Եթե պարսպապատ վանքային համալիրների պատկանելությունը հարցեր չի առաջացնում, ապա մնացած բերդերը, մեր կարծիքով, եղել են արքայապատկան և իշխանապատկան: Կասկածից դուրս է, որ Անին և նրա միջնաբերդը պատկանում էին արքունիքին: Նման մի ակնարկ կա Արիստակես Լաստիվերցու մոտ: Խոսելով 1064 թվականին Անիի՝ Ալփ-Արսլանի կողմից գրավման մասին՝ պատմիչը Անի ամրոցը դիտարկում է որպես կենտրոնական ամրություն, իսկ Անիի մոտակայքում գտնվող բերդերը՝ նրա զավակներ. «...մանավանդ Անի ամրոցն ու շրջապատի իր դուստրերը»¹⁰ : Պատմիչն անկասկած նկատի ունի Անիի մերձակայքում գտնվող, գրեթե տիպային կառուցվածք ունեցող խոշոր բերդերը:

Մրանց հետ համեմատած՝ երկրորդ խմբի՝ Չորանոցային տիպի ավելի փոքր բերդերը, որոնք ունեն թե՛ տիպային (Վահրամաբերդ-Տիրաշեն), թե՛ կառուցապատման սկզբունքի ընդհանրություններ (Ախուրիկ, Երազգավորս, Կումայրի), իշխանապատկան են, առավել ևս, որ գտնվում են Պահլավունիների ավատում և կառուցված են նույն ժամանակաշրջանում:

СРЕДНЕВЕКОВЫЕ КРЕПОСТНЫЕ СООРУЖЕНИЯ БАССЕЙНА РЕКИ АХУРЯН

___ Резюме ___

___ А. Хачатрян ___

В период развитого средневековья, с восстановлением армянского государства, при правлении династии Багратидов, начинается бурное развитие экономики и культуры страны. Столица Ани становится важным военнополитическим, производственным и торговым центром. Развитие города и торговли диктуют необходимость создания новых крепостных сооружений, которые должны были обеспечить безопасность столицы и торговых путей. Крепостные сооружения этого периода по типу, функциям и по принадлежности можно разделить на 3 основные группы:

¹⁰ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Եր., 1971, էջ 99:

1. Большие крепости, состоящие из внешней оборонительной стены и цитадели с восемью башнями Тигнис, Аралыг, Магасберд. Эти крепости защищали ближние подступы к Ани с севера и с юга.

2. Сторожевые крепости без внешней оборонительной стены: Ваграмаберд, Тирашен. В эту группу входят также полуразрушенные церкви 7-ого века, которые в период Багратидов восстанавливаются, как маленькие крепости с двумя башнями и внешней оборонительной стеной, усилены 8-ми башнями. По нашему мнению, они служили как запасники провианта и оружия, обеспечивая безопасность дорог, являлись кратковременным приютом для купцов, путешественников и т.д. Они имели постоянный гарнизон, который в мирное время жил в населенных пунктах по соседству.

3. Большие монастыри с мощными оборонительными стенами как Оромос и Мармашен.

Крепости первой группы были сооружены правящей династией и принадлежали царской семье. Они, по свидетельству средневекового летописца Аристакеца Ластиверци, являлись «дочерьми» цитадели города Ани. Крепости второй группы имели княжескую принадлежность. Все упомянутые прибрежные крепости находились в вотчине знатного рода Пахлавуни и были основаны ими же. Принадлежность последней группы сомнений не вызывает. Они были основаны церковью и принадлежали духовной власти.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Խաչատրյան Համազասպ Հակոբի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.*

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՇՈՒՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ*

Ալեքսանդրապոլը ձևավորվել է Արևմտյան Հայաստանի քաղաքային մշակույթի ավանդույթների անմիջական ազդեցությամբ և իրավամբ համարվում է դրանց ժառանգորդը: 19-րդ դարի 30-ական թվականներին հիմնականում Կարինից և Կարսից այստեղ վերաբնակվածները իրենց հետ բերել էին ավանդույթներ, որոնք այս նոր հայկական քաղաքային միջավայրում հասնելու էին ինքնատիպ դրսևորումների: Հայկական համբավավոր քաղաքները միջնադարում ապրել են ծաղկուն կյանքով և XIX դարում հասել տնտեսական ու մշակութային զգալի ձեռքբերումների. «Մինչև XIX դ. կեսերը Արևմտյան Հայաստանի առևտրաարհեստավորական կենտրոնները՝ Կարին, Կարս, Վան, Երզնկա, Բայազետ և այլք, իրենց զարգացման մակարդակով և քաղաքային տնտեսության համախառն արդյունքով գերազանցում էին ոչ միայն արևելահայկական քաղաքներին, այլև բուն օսմանյան տերության և հարևան Պարսկաստանի ու Կովկասի բազմաթիվ քաղաքներին: Արևմտահայ գաղթականներն իրենց հետ բերեցին վերը նշված կենտրոնների (Կարինի և Կարսի արհեստագործական և Բայազետի առևտրական) բազմադարյան ավանդույթները և նոր բնակավայրերում՝ Ախալցխայում, Ախալքալաքում, Նոր Բայազետում և հատկապես Ալեքսանդրապոլում պարարտ հող գտան ու առավել նպաստավոր պայմաններ ստացան դրանք խորացնելու համար»:¹

Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթի կարևորագույն բաղադրիչների՝ առաջնային արտադրության, կենսապահովման, ազգագրական դիմանկարի և կենսամշակութային համալիրի կարևոր առանձնահատկությունները հանգամանալի ներկայացված են «Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ» աշխատության մեջ:²

Արհեստներն ու առևտուրը ալեքսանդրապոլցիների տնտեսական կենցաղի հիմնական բաղադրիչներն էին: Կարինցի, կարսեցի և բայազետցի գաղթականների շնորհիվ քաղաքը շատ արագ վերածվեց Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի արհեստավորաառևտրական խոշոր կենտրոնի: Կարինցիների և կարսեցիների շնորհիվ քաղաքում հիմք դրվեց բազմաճյուղ և բարձրարվեստ արհեստների, իսկ ձեռներեց և հմուտ բայազետցիների շնորհիվ ծաղկեց առևտուրը: «Ձևավորվելով

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ 15SH-010 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ – XX դարասկիզբ): ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 10, Գյումրի, 2007, էջ 77:

² Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմագագրական ուսումնասիրություն) // Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ, պրակ 2, Երևան-Գյումրի, 2014:

արևմտահայ արհեստավորաստեղծական խոշոր կենտրոններից սերված գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց դեռևս միջնադարից եկող այն բոլոր համաքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին և Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և հասարակական կառույցների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին»:³

Որպես հայ քաղաքային մշակույթի կարևոր բաղադրիչ՝ Ալեքսանդրապոլում ինքնատիպ զարգացում ապրեց աշուղական ավանդույթը, որը խոր արմատներ ուներ հատկապես Հայաստանի կենտրոնական քաղաքներում և XIX դարի սկզբում վերջնահաստատվել էր որպես մասնագիտացված արվեստի տեսակ կամ արհեստ: Եթե փորձենք մոտենալ այդ ավանդույթի ակունքներին, ապա վստահությամբ պետք է նշենք հայ միջնադարյան արվեստում զարգացման մի քանի փուլեր ապրած *գուսանական արվեստի* ավանդույթների ժառանգականության մասին: Պատահական չէ, որ IX-XIII դդ. Հայաստանում տարածված արհեստների մեջ, որոնք կապված չեն արտադրության հետ, տեղ է գտել նաև *գուսանը*, որը 15-րդն է Վ.Թովմասյանի աշխատության մեջ բերված՝ հիշյալ ժամանակաշրջանի արհեստների ցանկում:⁴ Անցումը *աշուղական* ավանդույթին, ըստ ամենայնի, չի խանգարել պահպանելու արհեստի գործառույթն ու ներքին կանոնակարգը: Վերջինս լիարժեքորեն համապատասխանում է հայկական համաքարային կառույցի առանձնահատկություններին և, հետևաբար, դեռևս միջնադարում գործել է հատուկ կանոնագրերով: Դրանք, ցավոք, մեզ չեն հասել, սակայն հենց դրանք են նպաստել այդ ինքնատիպ արհեստի պահպանմանն ու զարգացմանը:


Հայկական համաքարային կազմակերպությունների, դրանց կից գործող «Եղբայրությունների» մասին հայագիտության մեջ շատ հանգամանալի ուսումնասիրություններ են կատարվել (Ս.Եղիազարով, Լ.Խաչիկյան, Բ.Առաքելյան, Վ.Աբրահամյան, Վ.Գրիգորյան, Կ.Սեդրոսյան, Գ.Աղանյան, Կ.Բազեյան և այլք): Դրանք հավաստում են, որ. «XVIII-XIX դարերում արհեստավորական կազմակերպությունները Արևմտյան Հայաստանում կոչվել են էսնաֆություններ, իսկ Արևելյան Հայաստանում՝ համաքարություններ: Մակայն նրանք իրենց գրավոր կանոնագրերի մեջ շարունակում են պահպանել «Եղբայրություն» անվանումը»:⁵ Անդրադառնալով այդ կազմակերպությունների ներքին կառուցվածքին, ներհամաքարային փոխհարաբերություններին, հետազոտողները նշում են, որ ընդհանուր բաղադրիչներով ու բնորոշ գծերով այս կազմակերպություններն ունեցել են շատ ընդհանրություններ, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել յուրաքանչյուր համաքարության ընդհանուր կանոնակարգային սկզբունքների մասին: Այս մասին հստակորեն խոսում է Խ.Մառանկոզյանը. «Թէ Կարսի, թէ Ախալցխայի և թէ Ախալքալաքի արհեստավորների էսնաֆական կարգերը հարկաւ շատ միանման են միմեանց,

³ Աղանյան Գ., *Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIX դ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Եր., 2008, էջ 49:*

⁴ Աբրահամյան Վ., *Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., Եր., 1956, էջ 252:*

⁵ Նույն տեղում, էջ 245:

որովհետև այդ տեղերի ամբողջ ժողովուրդը իր այդ սովորությունները առել է Էրզրումից: Վերջին երկու քաղաքների հայ բնակիչները գաղթել են յիշեալ քաղաքից 1828-30 թուականներին, իսկ Կարսը մինչև վերջին ռուս-տաճկական պատերազմը շարունակ գտնվել է Էրզրումի էսնաֆական կարգերի ազդեցության տակ: Կարսի արհեստաւորների թիւը սակաւ լինելու պատճառով՝ համայնական կարգերն էւս այնքան մանրամասնությամբ չեն պահպանվել՝ որքան այդ եղել է Էրզրումում»:⁶



Մրճարան Կարինում՝

Այսպիսով, կարևորվում է Կարինի դերը հայոց համքարական ավանդույթների զարգացման և դրանց տարածման գործում:

Ալեքսանդրապոլը առավել սերտ առնչություններ է ունեցել Կարսի հետ: XIXդ. վերջում, հատկապես Կարս-Ալեքսանդրապոլ և Կարս-Սարիղամիշ երկաթուղիների շահագործման շնորհիվ, առավել ամրապնդվել են միջքաղաքային տնտեսական կապերը: Դրանց մեծ չափով նպաստել են Կարսի արհեստառևտրական հարուստ ավանդույթները, որոնք պահպանվել են նույնիսկ ռազմաքաղաքական ծանր պայմաններում: Քաղաքում զարգացման բարձր աստիճանի են հասել շուրջ վեց տասնյակ արհեստներ,⁷ «որոնց ճնշող մեծամասնությունն առկա է նաև Կարինի և հատկապես Ալեքսանդրապոլի արհեստների ցուցակներում.

⁶ Մառանկոզեան Խ., Էրզրումի եւ Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, N65:

* Bayrak M. Alevi-Bektaşî edebiyatında ermeni aşıkleri (aşuğlar). Ankara, 2005, s. 25.

⁷ Մորպետ, Բնչ ժառանգեցինք, ձեռագիր, Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, գործ 176 /ա/, Լենինական, 1933:

մի հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է Կարին-Կարս-Ալեքսանդրապոլ արհեստավորական կապերի ու ավանդույթների մեծ ընդհանրությունը»:⁸

Կարսի արհեստների ցանկը բերված է Ատրպետի անչափ արժեքավոր՝ «Ինչ ժառանգեցինք» ձեռագիր աշխատության մեջ: Այդ ցանկում նշված է *երա-ժիշտ* ընդհանրական անունը,⁹ որը, կարծում ենք, պետք է վերագրել հիմնականում աշուղներին՝ իրենց երաժշտախմբերի անդամներով՝ սազանդարներով, գուռնաչիներով և այլ կատարողներով: Կարսեցի հայ աշուղներին մենք անդրադարձել ենք և ներկայացրել նրանցից առավել համբավավորների գործունեությունը:¹⁰ Այստեղ դարձյալ կարևորում ենք այն իրողությունը, որ նրանց հիմնական մասը կամ տեղափոխվել է Ալեքսանդրապոլ, կամ էլ միաժամանակ հանդես է եկել երկու քաղաքներում: Պատահական չէ, որ ալեքսուցիների արհեստների ու զբաղմունքների բազմազանության մեջ իրենց կայուն տեղն էին զբաղեցնում աշուղները՝ սազանդարներով ու չալոջիներով:¹¹

Այսպիսով, որպես հայկական արհեստաշատ քաղաք, Ալեքսանդրապոլը նաև *աշուղական ավանդույթի* ժառանգորդն էր, հետևաբար աշուղական համաքարության կենսագործունեությանը նպաստող բարերար մթնոլորտն ապահովողը: Ալեքսանդրապոլի աշուղական համաքարությունը ընդհանուր շատ կողմերով է ներկայացրել Գ.Լևոնյանը. «Տվյալ քաղաքի բոլոր աշուղներն ունեին իրենց արհեստակցական միությունը, որն ուներ իր կանոնադրությունը և իր վարչությունը՝ գլխավորությամբ ամենի կողմից քվեարկությամբ ընտրված *ուստաբաշու*: Վարչության կից կար փոխատու դրամարկղ, որի եկամուտը գոյանում էր անդամների ամսավճարներից: Իրենք՝ աշուղները, մշտական, որոշակի եկամուտ չունեին, այլ բավարարվում էին սրճարանի այցելուների կամավոր և պատահական նվիրատվություններով, մեկ էլ հարսանիքներին, խնջույքներին, ուր հրավիրվում էին երգելու եւ նվագելու»:¹²

Գ. Լևոնյանը, աշուղական համաքարության մեջ կարևորելով ուստաբաշու դերը, խոսում է միայն աշակերտներ պատրաստելու գործում նրա ակտիվ մասնակցության մասին: Նա չի անդրադառնում համաքարության ներքին կառուցվածքին ու կանոնակարգին: Այստեղ ցանկանում ենք ներկայացնել Գ.Լևոնյանի աշխատության մեջ բերված ուստաբաշու ընտրության արձանագրությունները,

⁸ Բազեյան Գ., XIX դարավերջի Կարսի արհեստներն ըստ Ատրպետի «Ինչ ժառանգեցինք» աշխատության, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 45:

⁹ Նույնը:

¹⁰ Հարությունյան Հ., Կարսի և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթների փոխառնչությունները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.16, Գյումրի, 2014, էջ 72-79:

¹¹ Բազեյան Գ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմագագրական ուսումնասիրություն) // Շիրակի հնագիտական եւ պատմագագրական ուսումնասիրություններ, պրակ 2, Երևան-Գյումրի, 2014, էջ 24:

¹² Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը, Եր., 1944, էջ 20:

որոնք եզակի են իրենց փաստագրական նշանակությամբ ու կրում են շատ արժեքավոր տեղեկություններ վերոնշյալ երևույթի մասին:

Առաջինը կոչվում է՝ «Արձանագրություն ուստաբաշու ընտրության»:

Բովանդակությունն այսպիսին է.

«Հազար ութհարյուր իննսուն և մեկ թիվ 15 փետրվարի

Ալեքսանդրապոլ քաղաք

Մենք ի ներքո ստորագրյալներս, Ալեքսանդրապոլում գտնվող աշուղներս փոխադարձ համաձայնությամբ մեր միջից ընտրեցինք արհեստավորաց գլուխ (ուստաբաշի) պ. Մերովբե Ստեփանյան Լևոնյանին – Ջիվանի և նրա երկու օգնականների Համբարձում (Համբո) Ադամյանին և Գրիգոր (Գոգոր) Տայյանին: Նմանապես ընտրեցինք մեր մեջ հավաքված գումարի համար գանձապահ՝ Անտոն Մատեաի Հովհաննիսյանին, նույնպես ուստաբաշու հրամանները կատարելու համար Մուշեղ Մելքոնյանին: Մենք պարտավորվում ենք կատարելու մեր ընտրելիների բարի խորհուրդները, որի համար և ստորագրում ենք»:¹³

18 ստորագրություն ընդգրկող այս արձանագրությունը ներկայացվել է գավառական իշխանություններին: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, այն չի հաստատվել, ամենայն հավանականությամբ, *աշուղ* բառի անհասկանալի լինելու պատճառով և երկրորդ քաղմասի պրիստավին ներկայացվել է մի նոր փաստաթուղթ, որն ի վերջո հաստատվել է քաղաքային իշխանությունների կողմից: Այն կոչվել է Համախոսական վճիռ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1892 ամի 24-րդ օրն փետրվարի, մենք ներքոստորագրյալներս ասիական երգիչներս Ալեքսանդրապոլ քաղաքի հավաքվածներս, այսօր ժողովում, մեր արհեստականության մեջ կարգապահություն վերականգնեցնելու համար ընտրեցինք մեր միջից արհեստավորների գլխավոր (ուստաբաշի) մեր համաքաղաքացի Մերովբե Ստեփանյան (Լևոնյանին) – Ջիվանի և նրա օգնականներ Համբարձում Ադամյանին և Անտոն Անտոնյանցին, և մենք պարտավորվում ենք օրենքի բոլոր կանոնների համաձայն հնազանդ գտնվել:

Առ որ ստորագրեցինք ի ք. Ալեքսանդրապոլ»:¹⁴

Այսպես կոչված, 25 *ասիական երգիչների* թվում էին Մկրտիչ Տայյանը (աշուղ Ջամալին), Վարշամ Տրդատյանը (աշուղ Պայծառեն), Գրիգոր Տայյանը (աշուղ Շերամ) և աշուղ Ֆիզահին:¹⁵

Ինչպես տեսնում ենք, աշուղական վճիռը ներկայացվել է իշխանություններին՝ վավերացնելու համար: Բերված արձանագրություններում, բացի ուստաբաշուց, հիշատակվում են օգնականներ, որոնց գործունեությանը Գ.Լևոնյանը չի անդրադարձել: Մինչդեռ այդ օգնականների շնորհիվ է, որ համաքաղաքությունը լիարժեքորեն գործել է: Այս մասին շատ հստակ տեղեկություն է տալիս ալեքսանդրապոլցի նշանավոր աշուղ Խայաթն իր հուշագրության մեջ. «Ամեն մի համքյար իր մեջ եղած խելահաս, բանիմաց մարդկանցից մեկին որոշում և ընտրում էր ուստա-

¹³ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 20-21:

¹⁴ Նույնը:

¹⁵ Նույնը:

պաշի, հետո ընտրում էին թիկնապահ (օգնական), մեկ իկիտպաշի (ցրիչ) և մի գանձապահ: Հարկավոր դեպքում այդ թիկնապահները պետք է ուստապաշու մոտ լինեին որպես խորհրդատու: Օրենքի համաձայն՝ պայմանը գրում էին երեք տարի ժամանակով: Գործակից բոլոր վարպետները, այսինքն՝ հեմքերը պայմանի տակ ստորագրում էին ու ներկայացնում էին կառավարությանը վավերացնելու նրա հեմքերական լիազորությունը»:¹⁶

Համքարության լիարժեք գործունեության համար անհրաժեշտ էին նաև աշակերտներ, որոնց ուսումնառությունն ու կարգավիճակը նույնպես խստիվ կանոնակարգված էր. «Ոչ մի վարպետ իրաւունք չունէր աշակերտ վարձել առանց ուստաբաշու գիտութեան: Աշակերտի ծառայութեան համար ժամանակամիջոց չէր որոշվում, այլ դա կախված էր սովորելիք արհեստի դժուարութիւնից և նոյն իսկ աշակերտի անձնական ընդունակութիւնից»:¹⁷ Այսպես էր ընդունված Կարսում և այսպես՝ Ալեքսանդրապոլում:

Անչափ հետաքրքիր կանոնակարգ կամ ծես է կատարվել աշակերտին վարպետի կոչում շնորհելու ժամանակ: Ըստ Գ.Լևոնյանի՝ աշակերտի ուսումնառությունը կարող էր տևել 4-5 տարի: Բավարար հմտություններ ձեռք բերելուց հետո աշակերտը իր վարպետի համաձայնությամբ դիմում էր ուստաբաշուն՝ քննություն կատարելու խնդրանքով: Ընդունված էր քննությունն անցկացնել այն նույն սրճարանում, որտեղ հանդես էր գալիս տվյալ աշակերտի վարպետը՝ համքարության մյուս բոլոր վարպետ-աշուղների ներկայությամբ: Քննվող աշակերտը պետք է ելույթ ունենար ինչպես աշուղական դասական ստեղծագործությունների՝ երգերի, այնպես էլ նվագարանային ստեղծագործությունների՝ մուղամների¹⁸ կատարմամբ: «Երբ այս բոլորը հավանություն էր գտնում վարպետների կողմից, և նա արժանանում էր նրանց խրախուսական խոսքերին, այն ժամանակ ուստաբաշին կանչում էր նրան իր մոտ և երեսին մի ուժեղ ապտակ հասցնում, առաջին անգամ նրան կոչելով *վարպետ*: Երիտասարդ վարպետը նախ համբուրում էր ուստաբաշու ապա և վարպետի ձեռքը ու խորը գլուխ տալով շնորհակալություն հայտնում ներկա եղող մյուս վարպետներին»:¹⁹

Ալեքսանդրապոլում ընդունված է եղել կոչում շնորհած վարպետին հատուկ *վկայական* հանձնելու ավանդույթը: Վկայականի մի նմուշ տեղ է գտել

¹⁶ Խայաթ Չահրիյան, *Հիշողություններ աշուղների մասին, 1930, անտիպ ձեռագիր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF 1, էջ 7826:*

¹⁷ Մառանկոզեան Խ., *Երգրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, N66*

¹⁸ Գ. Լևոնյանը նշում է. «Այնուհետև նվագում և երգում էր որևէ արևելյան եղանակ, ցույց տալու իր շնորհքը եւ պատրաստությունը նվագի եւ երգեցողության մեջ» (Լևոնյան Գ., 1944, էջ 23): Մինչդեռ աշուղ Շերամը իր ինքնակենսագրության մեջ **նվագի** փոխարեն հստակորեն նշում է մուղամի կատարողական արվեստի մասին: *Տե՛ս Շերամ, Ինքնակենսագրություն (ձեռագիր), Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Շերամի ֆոնդ, N 1: Հարությունյան Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. X, Գյումրի, 2007, էջ 92:*

¹⁹ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 23:

Գ.Լևոնյանի աշխատության մեջ: Այն շնորհիվ է աշուղ Ֆիզահիի աշակերտին՝ Ֆեյրատուն՝ 1884 թվականին.

«Ի հազար ութն հարյուր ութսունչորս ամի 18 ապրիլի Ալեքսանդրապոլ.

Ես ի ներքո ստորագրյալս Ալեքսանդրապոլի բնակիչ Գեորգ Կարապետյանս (աշուղ Ֆիզահի) տալիս եմ գայս վկայականս սույն գավառի Դիրեքլար գյուղի²⁰ բնակիչ Խաչատուր Գևորգյանին առ այն զի, նա ծառայելով ինձ մոտ աշուղության արհեստին – հավատարմությամբ, այժմ սովորած լինելով, արժան համարեցինք ուստա հանել և ներկա եղյալ ի ներքո գրյալ վարպետների հետ օրհնեցինք մեր աննաֆական կարգով տվինք աշուղության մախլասս աշուղ Ֆեյրատի: Այլն խնդրում ենք ամենակարողն աստված շնորհե նորան համեստություն և բարի անուն ի պարծանս յուր և մեր արհեստավորաց. Ամեն:

Առ որ ստորագրեմք. Գևորգ Կարապետյանց – աշուղ Ֆիզահի, Մերովբե Լևոնյան – աշուղ Ջիվանի, Մկրտիչ Տայյան – աշուղ Ջամալի, Կարապետ Կարապետյան – աշուղ Ջահրի, Լևոն Լուսավորչյան – երգիչ, Հարություն Հաշտյան – երգիչ:

Ներկա եղյալ Խաչատուր քահանա Քյալաշյանց

Կնիք քահանայի»:²¹

Ինչպես և մյուս բոլոր համքարությունները, այնպես էլ աշուղականը լիարժեք կառույց չէր համարվի, եթե չունենար իր *հովանավոր սուրբը* /պատրոն-փիրը/ կամ *նախահայրը*: Աղբյուրների մեծ մասում հիշատակվում է Հովհաննես Մկրտչի անունը, որը եղել է մուրագատու սուրբ, որի օրհնությունն ստանալու համար բոլոր աշուղները պարտադիր ուխտագնացություն են կատարել Սշո Սուրբ Կարապետ վանք, գիշերել այնտեղ՝ ակնկալելով սրբազան երագատեսություն:²²

Հուշագիր աղբյուրներից մեկում, որպես աշուղների հովանավոր սուրբ, նշվում է Դավիթ մարգարեի անունը այն առումով, որ նա սաղմոսարան է նվագել և, հետևաբար աշուղների արհեստի նախահայրը պետք է համարվեր:²³ Այս մասին այլ հիշատակություններ չկան, հետևապես մենք հակված ենք առավել հավաստի համարելու Հովհաննես Մկրտչի հովանավորչության խորհուրդը: Ըստ ամենայնի, սրբի հիշատակի եկեղեցական տոնը ևս նշելի է եղել աշուղների համար և ըստ համքարաց կարգի կատարվել է տոնախմբություն:

Այսպիսով, աշուղական համքարությունը կազմակերպել ու կանոնակարգել է աշուղների աշխատանքը քաղաքում՝ նպաստելով նրա զարգացմանն ու բնականոն գործընթացին:

²⁰ Այժմ Շիրակի մարզի Կառնուտ գյուղի նախկին անվանումն է:

²¹ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 25-26:

²² Շերան, նշվ. աշխ., էջ 25: Խայաթ Ջահրիյան, նշվ., աշխ., էջ 7826:

²³ Թամրազյան Մ., Ալեքսանդրապոլի աշուղները, 1930, անտիպ ձեռագիր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF1, էջ 7611:

Բնականաբար, արևմտահայ աշուղական ավանդույթը նորովի է զարգացել Ալեքսանդրապոլի մշակութային համատեքստում: Հակիրճ անդրադարձանք աշուղի *մշակութային տարածքին* ու նրա ծավալած գործունեությանը:

Աշուղը կարող էր ունենալ այլ զբաղմունք և ընդգրկվել մեկ այլ համաքառության մեջ: Այս դեպքում նրա գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր ներքաղաքային ելույթներով:

Աշուղը սրճարանում կամ համապատասխան քաղաքային վայրում մասնակցում էր մրցույթների: Վերջիններիս պարտադիր մասնակցում էր քաղաքային բնակչությունը:

Աշուղը կարևոր մասնակցություն ուներ քաղաքային տոնախմբությունների ժամանակ: Դրանք հիմնականում եկեղեցական տոնածիսական համախմբումներ էին կամ այլ իրադարձություններ:

Աշուղը պարտադիր մասնակից է եղել ընտանեկան բազմազան հավաքույթներին ու իրադարձություններին: Ալեքսանդրապոլում ընդունված է եղել նաև ընտանեկան աշուղի գործառույթը:

Աշուղը մասնակցել է քաղաքի համերգային կյանքին՝ բեմական ելույթներով և այլն:

АШУГСКАЯ ТРАДИЦИЯ В ГОРОДСКОЙ КУЛЬТУРЕ АЛЕКСАНДРОПОЛЯ

___ *Резюме* ___

___ *А. Арутюнян* ___

Как город, прославленный многочисленными ремеслами, Александрополь унаследовал от центральных армянских городов (Карин, Баязет, Карс) ашугскую традицию – важную составную городской культуры. Переходящая ашугская традиция Карин-Карс-Александрополь развивалась в основном уставными нормами цеха ашугов, обогащаясь характерными чертами местной культуры.

В статье в целях поиска глубокой оценки ашугского искусства рассмотрены разнообразные проявления творчества ашугов в городской культуре Александрополя.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հարությունյան Հասմիկ Հայկի – արվ.գիտ. թեկն., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, E-mail: hasmik.har@mail.ru

«ՆԱՐԵԿ»-Ի ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Գր. Նարեկացու «Մատյան»-ը «ներքին մարդու» տիրույթում է մեկնաբանում մեծ աղոթասացի հղացքներն ու գաղափարները՝ մարդկայինի ու աստվածայինի փոխհարաբերության, աստվածային սկզբի ներանձնավորման, անհատի խորհրդակիր վերառաքումների և իր ստեղծածի հարակայության մասին: Նարեկացուն չի բավարարում միայնակ փրկությունը. նա ցանկանում է փրկված լինել բոլորի հետ՝ մարդկության նահապետից սկսած մինչև իր վերջին շառավիղը: Ներանձնականի ու վերանձնականի միաձույլ խոստովանությունները՝ իբրև համընդհանուր մեղա, հնչում են ոչ միայն սեփական անձի, այլև ուրիշների փրկության համար: Մեղաների լեզվով Նարեկացին մեզ սովորեցնում է Աստծո հետ խոսելու արվեստը: Եվ այսպես ծավալվում է հազարամյա խոսքի առեղծվածը, որի հուզական ու իմաստային ներգործության նպատակը հիանալիորեն ձևակերպել է հեղինակը՝ «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Եվ հենց իր ստեղծագործական փորձով նա մարդկանց հանձնարարում է ոչ միայն աստվածաշնչյան հայտնի աղոթքներ, այլև ինքն է հորինում քարոզներ ու ճառեր՝ որպես միջոց իր տեսական ըսկըզբունքի հիմնավորման: Անշուշտ, Նարեկացին, որ հետամուտ էր մարդկանց հոգիների վրա ազդելու նպատակին, պետք է ամեն ինչ սկսեր հուզական աշխարհից՝ սրտից: Սրտից սկսելով՝ «Նարեկը» ճանապարհ է բացում դեպի մեծ կյանք, լույս է սփռում արասների վրա, դառնում ուղեցույց դեպի բյուրավոր մեղքերի ու անհուն ցավերի աշխարհը: Ըստ էության, «Նարեկը» աղոթք է ապաշխարության, ճանապարհ մեղքից մինչև զղջում և կատարելություն: Այն նաև համամարդկային ֆենոմեն է. անգամ օտարերկրացին կարող է նրա ազդեցությունն իր վրա զգալ՝ թեկուզև չհասկանալով բառերը, քանի որ խոսքն իր ազդեցությունը թողնում է՝ արմատավորվելով մարդու ենթագիտակցության մեջ:

Հանճարի հետ ունեցած առնչությունները շարունակվում են, քանի որ ամեն անգամ տեղի է ունենում հազարամյա խոսքի ու նորագույն սերունդների հոգեկան աղերսը:

«Նարեկը» համարել են «դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել են մաքրվել հոգով, ազատվել մեղքերից և հասնել կատարելության: Գրքին վերագրվել է բուժիչ զորություն, իսկ հեղինակի անունը սրբացվել է ու բարեխոս համարվել Աստծո մոտ մեղավոր հոգիների փրկության համար:

Երկի առանձին գլուխներ ու հատվածներ ընդգրկվել են ոչ միայն եկեղեցական-արարողական գրքերում (*Ժամագիրք, Պատարագամատույց և Մաշտոց*), այլև ախտարական բնույթի ժողովածուներում (*Ուրբաթագիրք, Հմայիլ և Կիպրիանոս*)¹: Հավատացել են, որ դրանց ընթերցումով կարող են փրկվել չար ոգիներից,

¹ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 242:

ջերմատազնայ ախտերից: Մեր օրերում «նարեկաբուծությունը» կիրառվում է հոգեթերապիայի մեջ: Այդպիսի բուժման մեթոդով բժշկվում են մարդու հոգին ու մարմինը: Այն խաղաղեցնում է մարդու հոգին, վերացնում վախերն ու պարզեցնում միտքը: Այլ կերպ ասած՝ հարկ է մեռած գիրը դարձնել կենդանի խոսք, քանի որ «խոսքը հզորագույն բուժական միջոց է:

Հոգեբույժ-հոգեթերապևտ Արմեն Ներսիսյանն իր բժշկական պրակտիկայի ընթացքում հանգել է այն մտքին, որ հնարավոր չէ մարդուն բուժել առանց ճանաչելու նրա հոգին և հոգու կարիքները: Այդ գիտակցումը նրան տանում է դեպի Նարեկացու Աղոթամատյանը, որտեղ ինքն իր համար հայտնաբերում է նարեկյան աղոթքների հոգեներոզ գործունեությունն ու բժշկարար ներգործությունը: Այդուհետ Նարեկը հիվանդների հետ խոսելու լեզուն է և բալասանը, մարդկային ցեղի ամենամեծ մխիթարիչը: Վերադառնալով իր բնօրինակին՝ որպես Աղոթագրքի, Նարեկը դարեր շարունակ կենարար, բուժարար ազդեցություն է ունեցել մարդու հոգու վրա: Նրա յուրաքանչյուր աղոթքը սպեղանի է որևէ հիվանդության, նաև անտեսանելի հիվանդությունների դեմ: Այս վերակենդանացնող Աղոթագրքով մենք կարող ենք բուժվել ոչ միայն մարմնական ցավերից, այլև գոռոզամտությունից, երկվությունից, տազնապաներից: Ավելին, այն ոչ միայն բուժում է, այլև կանխարգելում մի շարք հիվանդություններ, բարձրացնում մարդու իմունային համակարգը:

Նարեկը Աստվածաշունչը հասկանալի ձևով մեկնում է և անցկացնում մարդու ներքին տիրույթ, որպեսզի հասկանանք ճշմարտություններն ու իմաստությունները: Նարեկյան այլաբանությունը տանում է հասկացման: Բացում է բոլոր մեղքերի պատուհանները, զոջանքի ուղիով հանգստացնում, խաղաղեցնում է մեր հոգիները, ապահովում ինքնատեսում, հոգևոր աճ, ինքնափոփոխություն, ներքին զննում, ես-ի կարծրատիպը փոխելով՝ առաջացնում նոր վիճակ: Ամեն դեպքում մարդը պետք է պատրաստ լինի փոփոխություններին. փոփոխության պոտենցիալը նրա մեջ կա, և Նարեկն օգնում է, որ այն բացվի: Այն ամեն մեկի վրա անհատական ազդեցություն ունի: Հոգին տեղաշարժելու, աղտեղությունը, խավարի բեռը թեթևացնելու համար հարկ է տեսնել սեփական ներաշ: Մարդը իր պատկերն է տեսնում Նարեկի մեջ:

Երբ մարդը խորը դեպրեսիայի մեջ է, նորօրյա բժշկությունը թերի՝ սոսկ դեղորայքային բուժում է առաջարկում: Հոգեթերապիայի մեջ Նարեկը գազաթնակետ է և խոսքի ազդակ՝ հոգու վրա ուղղված: Մ. Աբեղյանն այսպես է բնութագրել, թե Նարեկացին աշխարհի ամենահին հոգեբույժն է, իսկ Նարեկը՝ հոգեբուծության գիրք:

Հոգու բոլոր կրքերը բոլոր ազգերի մեջ նույնն են, հետևաբար Նարեկը ոչ թե հայկական ֆենոմեն է, այլ համամարդկային, այսինքն՝ ուղղված համայն մարդկությանը: Պ. Մևակի խոսքերով՝ ««Նարեկ»-ը ... ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիվանդի ճա-

կատի վրա կամ բարձի տակ, ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտովել»:²

Ընդ որում, ախտարական ժողովածուներում կան ցանկեր՝ «Ձանագանութինն Նարեկայ գրքոյն... թէ ամեն մէկ գլուխ ի՛նչ գործոյ ասել օգտակար է» բովանդակությամբ: Նարեկի բոլոր գլուխներին տրվել է կիրառական նշանակություն՝ այս կամ այն ցավի, պատահարի ու աղետի դեպքում կարդալու համար: Այսպես՝ 33-րդ գլխի երկու հատվածներ աղոթքի ժանրի ընտիր դրսևորումներ են և ներառվել են 12-րդ դարի վերջին քառորդից առաջ Հայոց Պատարագի արարողության մեջ կատարվել *իրրեւ աղօթք, որ նախքան գայատարագն մատուցանի*: Որոշ գլուխների տարբեր հատվածներ դիտվել են որպես առանձին աղոթքներ ու կատարվել են ժամակարգության ընթացքում: Մի քանի գլուխներ հարում են ներբողին, թեպետև նրանց կապը երկի ներքին հյուսվածքին մնում է ամուր:³

Նարեկի մասին ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքները, ինչպես նաև զրույցները վկայում են նրա հրաշագործ գործությունը:

Տակավին կենդանության օրոք Նարեկացի արտերևույթը չարախոսությունների պատճառ էր: Այն ժամանակ եպիսկոպոսները, վարդապետներն ու իշխանները հավաքվեցին և պատվիրակ ուղարկելով՝ նրան կանչեցին և ասյանի առջև դատեցին, որպեսզի եթե հանցավոր է, հանդիմանեն կամ արքտրեն. «Երբ եկան զինք տանելու, Ս. Գրիգոր գուարթադէմ անոնց առջև ելաւ եւ անայլայլ դէմքով դիմաւորեց պատուիրակները և զհտնալով անոնց դիտաւորութիւնը եւ ուզելով իմաստութեամբ յանդիմանել եկողները, ըսաւ անոնց. «Նախ հաց ուտենք, յետոյ կերթանք»: Եւ այն, որ աղանիի հեգութիւն ունէր և իսպառ հրաժարած էր խորտիկներէն, տապկել տուաւ աղանիներ եւ դրաւ եկողների առջև, որ ուտեն: Եւ օրն էր Ուրբաթ: Իսկ եկողները աւելի եւս գայթակղելով՝ ըսին. «Ներողութիւն, վարդապէ՛տ, այսօր Ուրբաթ չէ՞»: Իսկ նա, որպէս անտեղեակ, ըսաւ. «Ներեցէք, երբայրներ, մոռցեր էի, թէ այսօր ինչ օր էր»: Եւ ըսաւ տապկուած աղանիներուն՝ «Ելէք գացէք ձեր տեղերը, ձեր երամին մէջ, որովհետեւ այսօր պահք է»:

Եւ իսկոյն աղանիները թեւեր առնելով՝ թռան ամէնուն առջեւ»:⁴

Եկողները, տեսնելով այս հրաշքը, ահով ու ապշությամբ լցվեցին և ոտքերն ընկնելով՝ թողություն խնդրեցին նրանից:

Իր նշանագործության համար Գրիգորին անվանեցին երկրորդ սքանչելագործ, ոմանք նույնիսկ՝ երկրորդ լուսավորիչ:

Հայամավուրքը պատմում է Գրիգորի մասին, որ նրա գերեզմանն անգամ ունակ էր սքանչելագործության. կարող էր շունչ հաղորդել անշունչ հոգիներին: Սրբի հոգեշնորհ գործությունը շարունակում էր թևածել մահվանից հետո անգամ: Մինչ այսօր էլ նրա նշխարները ուխտատեղի են ու բազում հրաշքներ են գործում:

Աներկբա է, որ անձն ու գործը նույնացվել են, Մատյանը համարվել է ավելի գորավոր, քան եկեղեցական ծիսամատյանները:

² Սևակ Պ., Հայ գրականության քրեստոմատիա, Եր., 1991, էջ 146:

³ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 242:

⁴ Վարք Մրբոց, Պէրոյթ, Տպարան Ատլաս, 1975, էջ 593:

Մեծն են շնորհքն այս սովերի./Քան գայլ գրոց յեկեղեցի,-

Գրել է ԺԴ-ԺԵ դդ. մատենագիր Գր. Խլաթեցին, իսկ Մատթեոս Ջուղայեցին խոստովանել է. «Մին փոխ (այսինքն՝ գլուխ) Նարեկացի լաւ է, քան զամենայն սաղմոս Դաւթի»:⁵

Նարեկի լուծմունքի հիմքում Մբ Գիրքն է իբրև կարգավորիչ ու ճշմարտության չափանիշ: Նարեկը հանդես է գալիս քրիստոսակերպ հրաշագործություններով իբրև տեսանող և նրա խոսքի տարամետ ըմբռնումները ոչ միանշանակ են. ոչ թե որոշակի իմաստի են միտված, այլ տիեզերական խորհուրդներ ու գաղափարներ են՝ ուղղված աշխարհին: Բովանդակության համապարփակությունն ու բազմանշանակայնությունը դա են վկայում:

Ըստ Նարեկացու՝ կամովին տանջահարության դատապարտվածը խոստովանում է, որ զղջացող անհատի փրկության միակ ճանապարհը ինքնակշտամբանքն է, ինքնապարսավումը...

Մատյանը որքան անհատական, նույնքան ընդհանրական է. Նարեկի համընդհանուր արժեքը բովանդակ քրիստոնեության փրկագործման համար է: Նարեկացին մերթ կշտամբանքով իր անձն է դատապարտում, մերթ խոստովանում մեղքերը, մերթ իր սխալների համար հուսահատ հառաչում և ի վերջո փրկության հույսի նվազ է հնչեցնում: Ինչպե՛ս ներկայանալ Աստծո դատաստանին, խոսքի ո՛ր եղանակն ընտրել:

Նարեկը, հառաչանքի անձայր ծովն ընկած, երբեմն դադարներ է տալիս, մի պահ անջատվում է ինքն իրենից, շունչ քաշում, որպեսզի նորից իր լուծն առնի ու շարունակի իր տառապանքի երկարուձիգ ճանապարհը:

Տեսագործական հայեցակետից նարեկյան աղոթքները հարկ է կարդալ ոչ թե շուրթերով, այլ արթուն սրտով՝ փորձելով վերագտնել Աստծո հետ հաղորդակցվելու արվեստը: *Մատյանի* մեջ Նարեկացին գերադասում է ուղղակի բառի գործնական կիրառությունը, մտքի անցումներն սքողելով գեղագիտական, հուզական լիցքերով: Եվ ավելին՝ նրա խորհրդածությունները խոսքեր են՝ ուղղված Աստծուն սրտի խորքերից: Հանդես գալով իր անունից՝ եզակի առաջին դեմքով, նա կանգնում է մեն-մենակ Արարչի առջև: Երկրորդ անձը Աստվածն է՝ մարդկային գիտակցության ամենաթանկագին վկան ու զրուցակիցը:

Նարեկացու մեթոդաբանության առանցքը հոգևոր վարժանքն է ու պայծառացման ուղին. «Ամեն օր թոխչի պատրաստվել: Եվ եթե այնքան թռուցիկ է ակընթարթն այդ, թող որ այն խորհելի դառնա: Ամեն օր հոգևոր մի վարժանք»:⁶

Գուցե հնարավոր կլիներ խոսել մտավոր վարժանքների մասին, որովհետև այս փորձառությունների մեջ միտքը ինչ-որ չափով դառնում է հիմնական նյութ, հենք, որ փորձում է ինքն իրեն վերափոխել: Մակայն *միտք* բառը բավականաչափ հստակ ցույց չի տալիս, թե որքան մեծ տեղ է հատկացված երևակայու-

⁵ /Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, աշխատասիրությանը՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, ՀՄՄՀ հրատ., Եր., 1985, էջ 9:

⁶ ԱննիՄահե և Ժան – Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և «Մատյան ողբերգության»-ը, Եր., 2004, էջ 274:

թյանն ու խոկումին: Հոգևոր վարժանքները մեծապես նպաստում են կրքերի թերապիային և անմիջապես ներագրում կենսակերպի վրա: Նարեկացու մտքի վարժանքները աշխարհընկալման և ինքնության վերափոխում ու փոփոխություն են նշանակում:

Հոգևոր բառը թույլ է տալիս հասկանալ, որ այս վարժանքները ոչ միայն մտքի, այլև անհատի ողջ հոգեկան աշխարհի խտացումներն են Աստծո գոյության ճզմող իրողության առջև: Մնում է միայն փշրել, հաջորդաբար քանդել և կրկին հանգուցել սկզբնական պատկերի համաձայն՝ մարդկային գոյի առեղծվածը: Հետևաբար մարդկային ճիգը պետք է մշտապես նորոգվի և նոր ճանապարհով:

Խնդրո առարկան ոչ միայն միտքն է, այլև երևակայությունը, զգայունակությունը, անհատի ողջ հոգեկան աշխարհը, որ բարձրանում է օբյեկտիվ ոգու կյանքի մակարդակին, ասել է թե՛ հաստատվում է ամբողջի հեռանկարի մեջ:

Նարեկից պետք է ակնկալել ոչ թե որոշակի տեսություն կամ շարունակական խորհրդածություն, այլ հավատքի փորձ, ներքին խորը մի փոխակերպում, աշխարհայացքի արմատական վերափոխում, աշխարհի, իր անձի և Աստծո նոր ընկալում: Բնավ չնահանջող սթափությամբ հարկ է խզել սխալների ու կրքերի անցյալի հետ առնչության եզրերը, հղանալ արարչագործության ու փրկության ընդհանուր պատմությունը: Մա հնարավոր է միայն հոգեբանական որոշակի տրամադրվածության դեպքում, որին հանգում ենք գիտակից, ազատ ընտրությամբ:

Մաքուր բանականությունը գործում է վերացական ժամանակահատվածում համասեռ ու շարունակական, ինչպես հավերժությունը: Գոյություն ունի մեկնելու և ժամանելու ժամանակ, թեկուզև բախտացի: Մատյանում՝ ընդհակառակը, ժամանակը թվում է կանգ է առել, այսինքն՝ իրականում ժամանակը, որպես այդպիսին, այլևս գոյություն չունի: Կյանքի ժամանակը նվազելով վերածվում է թռուցիկ ակնթարթի, որ բաժանում է հանգիստը փորձությունից, իրականությունը՝ նիրհից, և երբ սթափվում ենք, դա արդեն իսկ հավերժությունն է: Անցում է կատարվում առարկայական ժամանակից, որը միաժամանակ անեզրական է և այնքան խստորեն հաշվարկված: Ներքին ժամանակը, որ առաձգական է, ծավալվող և կծկվող, ըստ ցանկության արդեն իսկ ինչ-որ ներքին ուղի է ենթադրում, որի մեջ ժամանակը ջնջվում է կարծես հավերժության առաջ: Ժամանակը հոգու փրկության համար անհրաժեշտ ճկունությամբ օժտելու մեջ է: Նախևառաջ վերջնաբար այն պահին, որ բաժանում է վերջին դատաստանը հավերժությունից: Ըստ Նարեկացու՝ այն պետք է օժտել աստվածային շնորհի անվերջանալի ազատությամբ: Եթե աշխարհն ինչ-որ տեղ հասել է իր լրումին, ուրեմն ամեն ինչ ասված է: Մակայն Նարեկի մեկ բառը բավական է, որ ամեն ինչ կրկին հնարավոր դառնա:⁷

Խոստովանությունից հետո, երբ թողություն է շնորհվում մեղքերին և ձեռքերով վերականգնվում է Աստծո պատկերը, երբ անկեղծությունը հասնում է վերջին սահմանին, և երբ հասնում ենք ամբողջապես այդ ողջախոհության ջանքերով ներթափանցված մի կյանքի ավարտին, ժամանակը, որ սկզբնապես կույ էր

⁷ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, նշվ. աշխ., էջ 278:

եկել, կրկին ընդլայնվում է գիտակցության շնորհիվ: Մահը կարճատև նիրհում կլինի, և նույնիսկ եթե վախճանը պահպանում է իր վեհ հանդիսավորությունը, նոր աշխարհի հայտնության իր տիեզերական որակը, այն մեզ համար կլինի միայն հաստատումը ի սկզբանե շնորհված ներման:

Ամեն դեպքում Նարեկը Աստծո հետ ծավալած երկխոսություն է վերժամանակյա մենության մեջ: Այն՝ իբրև հիվանդին առողջացնելու միջոց, առ այսօր համագոր այլընտրանք չունի: Նարեկաբուծությունն արդեն կիրառվում է հոգեթերապիայի մեջ՝ որպես բիբլիոթերապիայի միջոց: Նարեկյան տողերը իրենց բուժիչ և հանգստացուցիչ ներգործությունն են ունենում հիվանդների վրա Անկախ ազգությունից «Նարեկի» ընթերցանությունը բարերար է ազդում ոչ միայն հայերի, այլև այլազգիների վրա, որոնք նարեկաբուծությամբ ապաքինվում են: «Ուժեղ վիբրացիան պատում էր իմ մարմինը, ես չէի հասկանում ոչինչ, բայց ես զգում էի ամեն բառը. ես առաջադիմում էմ, իմ ամբողջ մարմինն է առաջադիմում: Դա յուրահատուկ աղոթք էր»⁸. այսպիսին է օտարազգիներից մեկի խոստովանությունը: Մյուսի խոստովանությամբ. «Միայն նստելով ու լսելով՝ ես զգում էի ֆիզիկական հակազդեցություն, զգում էի իմ գլխի հետևում ճնշում, ձեռքերիս մեջ՝ այրում և բացի այդ՝ լավ քնում էի: Ես տրամաբանորեն չեմ կարող բացատրել այդ ամենը»⁹:

Այսպիսով՝ գործառնական առումով կարևորը ոչ այնքան Նարեկացու «Մատյան»-ի բառերի իմաստն է, այլև բառերում ամփոփված տիեզերական տեղեկույթը, որը շրջապատին է փոխանցվում ընթերցանության ժամանակ առաջացող ձայնային տատանումների՝ վիբրացիաների ձևով: Այդ տատանումների հանճարեղ հեղինակ Նարեկացին, ստեղծագործական ներշնչանքի պահին տեղեկույթը ստացել է տիեզերքից, հանձնել թղթին, հետո՝ ընթերցողին: «Նարեկ»-ում կան աղոթքներ, որոնք մարդուն զղջման և հոգու թեթևացման են տանում: Դրանք օգտակար են հատկապես այն մարդկանց համար, որոնք հասել են կյանքի մայրամուտին և տանջվում են՝ չհասկանալով տանջանքի բուն պատճառները: Այդ աղոթքներն օգնում են մարդուն տեսնելու իր հոգու խորքը, վերաիմաստավորելու իր կյանքը, բացահայտելու իր մեղքերն ու զղջալու, ապա հանգիստ խղճով հոգին ավանդելու: Նարեկն ազդում է ն՝ մարմնի, և՛ հոգու վրա, ընդհանրապես, մարդ իր խնդիրները լուծելու համար նախևառաջ պետք է ձերբազատվի բացասական էներգիայից: Ինչպես հաճախ մաքրում ենք մեր մարմինը, հոգին էլ ժամանակ առ ժամանակ մաքրվելու կարիք ունի, քանի որ մի օր կարող է հիվանդանալ, որից էլ ի հայտ են գալիս բոլոր երևացող հիվանդությունները: Նարեկաբույժը կարծում է, թե հիմա հոգու սովի ժամանակաշրջան է, և մարդուն խոսք է պետք, բարի, ճշմարիտ խոսք: «Նարեկը» հենց այդ խոսքն է՝ ուղենիշը դեպի Աստված:

Ինչ խոսք, Նարեկ կարդալիս քրիստոնյային առաջին հերթին օգնության է գալիս աստվածային շնորհը, ինչպես բյուրավոր լույսերը, որ մաքրագործում են հոգին: Աստծո պատկերն ու նմանությունը վերականգնվում են զղջանքի ու հաղորդության շնորհիվ: Աստվածային խորհրդին հաղորդակից լինելուց առաջ

⁸ <https://www.youtube.com/watch?v=C4jTbY1zw9s>

⁹ Նույնը:

հարկ է ձերբազատվել բոլոր մեղքերից՝ պահպանելով, սակայն, խոնարհ համերաշխություն մյուս մեղավորների հետ: Նրանում յուրաքանչյուր բառ և դարձվածք ունի իր կայուն ինտոնացիան և կայուն ենթատեքստը, որոնք ընկալվում են առանց արտահայտչական միջնորդավորումների: Մրանով հանդերձ, անչափ կարևոր է ստեղծել լաբորատորիա, որպեսզի հետազոտություններով ու վիճակագրական տվյալներով հաստատենք Նարեկով բուժվածների վիճակի ապաքինումը:

Այսպիսով, շնորհիվ Նարեկի մեր ընդերքից պոկում, դուրս ենք բերում զգրելիք, մաղձը, մաքրագործվում ենք՝ հենց ավերակների վրա բարձրացնելով երգի ծննդյան տաղեր: Ջրհեղեղն ու հրաբուխը համոտեսած՝ փերթ-փերթ ծվեմներ ենք թողնում հոգու և մարմնի: Բայց և մեծերի՝ մեզ ավանդած արժեհամակարգով ամփոփվում ենք, ամբողջանում, ապավինում նրանց հոգևոր ընթացքին: Ու թե ծնվել ենք՝ ներշնչանքի մուսաներից շոյված-փայփայված, փորձում ենք Երկնքի առաջ ամուլ չմնալ:

Չլինի հանկարծ, լույս վայելելուն անվարժ, անընտել,

Մի մոմի նման հալվելով իսպառ ջնջվեմ մեջտեղից:

Բոլոր ժամանակներում Երկինքը ճանաչողի ճշմարիտ սրդողություն. նարեկյան վիճակի առեղի ճնշում, որ մեզ երգել սովորեցրեց ցավի մեջ և բարձրանալ երկրայինի կարտոններից ու մեղքերից, ինքնաանգոսնումից ու ինքնախարազանումից դեպի աստվածային ոլորտ: Թվում է՝ ինքնին երբեք չենք հասնի Աստծուն, այլ միայն Նարեկացու միջոցով ու Նարեկի միջնորդությամբ:

Եվս մի սահման. Նարեկացու անսահմանը՝ «անմատչելի հեռավոր և անընդգրկելի մերձավոր», ինչպես նրա և բոլորիս երկրպագյալը՝ Երկնքի տյառնորդին, որին հետապնդում ու չենք հասնում, մոտենում ենք ժամանակների հրայրքոտ թափով ու էլի մնում կեսճանապարհին՝ աստվածային ճանաչման հրճվանքը լիովին չապրած-չըմբռնելուց: *Տոնելի խոնարհ, անքնին, անպարփակելի, անըմբռնելի, անճառ, անպատում, անտեսանելի ու անզննելի, անշոշափելի, անորոնելի, անսկիզբ, անվերջ ու անժամանակ...*

Անսպառ է Աստված: Խոսքի սահմաններից դուրս է և Նարեկացու անսպառ լինելը, քանզի ինչից էլ սկսենք, միևնույնն է, սկսելու ենք նրա մենախոսության ժայթքումից և շարունակելու ենք նրա ժայթքում-մենախոսությունից՝ բռնկումների ու շիկացումների շարահար շղթայով:

Հազարամյակ առաջ հոգևոր շարժման ընդերքում հրի ու կրակի մի սյուն, որը պիտի կողմնորոշեր սերունդների ուր գնալը՝ «ընտիր խրճերի երջանիկ բերքով»՝ գանձարանային միավորներով՝ քարոզներով ու հորդորակներով, տաղերով ու մեղեդիներով, հանճարեղ խոռվքի Աղոթամատյանով:

Բացառիկ է Նարեկացի երևույթը՝ նրա խորքն ընկնելը, «բանական գոհի» անարյուն ընծայաբերումը սրտից սիրտ. մեզնից Նարեկացի և նրանից բոլոր կողմերը, իմանալի հավիտենության սահմաններից էլ այն կողմ՝ մարդու բանական աշխարհի արթնացման երգը, նրա ներաշխարհի ու բնության փառերգությունը, շավրից դուրս նոր շավիղ բացելը:

Նարեկացին ինքն իր դեմ ոգորող է, ինքնամորթիկ՝ «աղամյան մեղքերից» ծանրացած, որը մորկում է մեղսաքավմամբ հոգու պատկերով մնամվել Մարդ-Աստծուն, վերստին Մարդուն և Աստծուն համապատիվ, մույն հոգևոր մաքառմամբ համազգաց:

Սա մեր հաղթանակն է, Նարեկացու մեր հաղթանակը և պարտվածի մեր գորահանդեսը: Նրա շնորհիվ զղջման, ապաշխարանքի, լալյաց երգերից հույզերի պատարագով հասնում ենք մինչև ինքնամաքրման զլխասպտույտ ճերմակը, բացում մտքի

ու ոգու զննանները, բացում մարզարեների իմաստությունները, փորձում տարերքի բռնությունը, ինքներս մեր մեջ խոսում Աստծու հետ, «Գիշերային աղոթքով» ձգտում փրկվել դիվանհա, աներևույթ ուժերի փորձություններից ու հավատալ, հավատալ մարդկանց միջից բարձրացող լույսին, երազի պայծառ տեսիլին:

МЕТОДОЛОГИЯ, ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ОСНОВЫ “НАРЕКА”

___ *Резюме* ___

___ *К. Саакян, Р. Оганесян* ___

Статья посвящена личению Нареком, которое сейчас используется в психотерапии, как один из средств библиотерапии. Все главы Нарека имеют практическое значение, как текст против той или иной болезни, при катастрофе и бедствии. Чтение Нарека положительно влияет не только на больных армян, но и на иностранцев, которые лечением Нарекком исцеляются. Этим методом исцеляется не только человеческое тело, но и душа. Важным является не столько смысл слов “Книги”, сколько космическая обобщенная информация, которая передается окружающим посредством вибраций, идущих от голосовых колебаний во время чтения. Гениальным авторам этих колебаний, в данном случае Г.Нарекаци, в момент творческого вдохновения эту информацию получал из космоса, передал бумаге, потом – читателю. А так как все страсти души у всех народов одинаковы, следовательно Нарек феномен не армянский, а общечеловеческий, направленный всему человечеству.

Տեղեկություններ հեղինակների մասին

Մահակյան Գարինե Արամի – ի. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,

E-mail: sahakyanani@mail.ru

Հովհաննիսյան Ռոզա Պողոսի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոն, E-mail: vard-rosa@mail.ru

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

ՕՐՈՐՈՑԱՅԻՆԸ ԵՎ ԱՂՈԹՔԸ ՈՐՊԵՍ ՔՆԱՍՈՒՄԻ ՏԵՔՍԵՐ՝ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Օրորոցայինի և գիշերային աղոթքի տեքստերին կարելի է տալ մեկ ընդհանրական անվանում և բնորոշել որպես *քնամուտի տեքստեր*: Քնամուտի տեքստերը անգլերենում բնորոշվում են *bedtime, sleeping կամ slumber* անվանումներով: Թեև օրորոցայինի և աղոթքի ժանրային սահմանումները որոշ հստակություն մտցնում են տեսակների առանձնացման հարցում, սակայն դրանք հաճախ պայմանական են:

Քննենք մեր խնդրին առնչվող *օրորոցային (lullaby)* և *աղոթք (prayer)* եզրերը: Անգլերենը, ինչպես նաև հայերենը, հնդեվրոպական այն լեզուներից են, որոնք ունեն առանձին եզրույթներ՝ *օրորոցային և աղոթք* հասկացությունները նշելու համար: Թեև վերոնշյալ եզրերը տարբեր ընկալումներ ունեն ժողովրդական գիտակցության մեջ, սակայն նրանց բառային վերլուծությունը հաճախ միմյանց մերձեցնում է: Հետաքրքրական է այն, որ *lullaby* բառը ունի *քնել տանը* նշանակությունը: 18-րդ դարի բառարանագիրներից մեկը տվել է վերոնշյալ բառի հետևյալ մեկնությունը. *lull*-արմատը՝ *քնել, քնեցնել*, իսկ *by* վերջածանցն ունի *house, home* իմաստները¹:

Ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի՝ *օրորը* առաջացել է *օր-* «շարժել» կրկնված արմատից, որը պահպանվել է *օրել, օրուիլ, ճիօր* ձևերի մեջ²: Հավանական է, որ *օրոր, օրոցք (որից էլ՝ օրորոցային)* բառերի հիմքում *օրը* հենց լուսաբացից մինչ գիշեր ընկած ժամանակահատվածն է, որը մարդու ընթացիկ կյանքի գործունյա հատվածն է: Սա նշանակում է, որ օրորոցայինը, հանգիստ քուն պարզևեղուց բացի, նաև մանկանը երկար կյանք մաղթելու բանաձև է, խոսքաձև, աղոթք:

Թեև սակավ կիրառությամբ, *օ՛ր, օ՛ր*-ով կրկնակներ հանդիպում են օրորոցային մի շարք տեքստերում: Ահավասիկ՝ Կոմիտասի գրառած «Օրոր»-ը.

Արուսյակս *օ՛ր, օ՛ր,*

Պըզտըտիկս *օ՛ր, օ՛ր,*

Անուշիկս *օ՛ր, օ՛ր,*

Մեկ հատիկս *օ՛ր, օ՛ր/ընդգծումը* մերն է³:

Կամ՝

¹ Warner Marina, *No Go The Bogeyman, Scaring, Lulling, And Making Mock*, London, 1998, p.204.

² Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1926, հ 4, էջ 620:*

³ Հայկական օրորոցային գոհարներ /հավաքեց և կազմեց Համասփյուն Մանուկյանը/, Եր., 2015, էջ 17:

Օրո՛ր, օրո՛ր,
Օր փառավոր,
Տուր ամեն օր
Օրո՛ր, օրո՛ր:⁴

Lullaby բառանվան համարժեք *cradle* բառը անգլերեն-հայերեն բառարաններում նաև ունի *հայրենիք*, *օրրան* իմաստները: *Քանի որ Cradle և օրրան* բառերը նույնարժեք են, գալիս ենք այն համոզման, որ երեխան ընկալվում է որպես տուն լցնող, ամբողջացնող ներկայություն, այստեղից հետևում է, որ երեխայով է սկսվում հայրենիքը: Օրորոցայինի իմաստն ու նշանակությունը նաև այն է, որ երեխային մանուկ հասակից տալիս ենք այն ըմբռնումը, որ ինքը և իր հայրենիքը նույնացած են:

Թեպետ *lullaby* և *cradle song* բառամիավորներն ընկալվում են որպես հոմանիշներ՝ երեխայի քունը ապահովող հանգիստ, խաղաղ երգեր, սակայն կան ժողովածուներ, որոնք վերնագրային մակարդակում տարբերակում են վերոնշյալ եզրերը՝ *The Lullaby Treasury: Cradle Songs from around the World/Petra Rosenberg/*, *Baby book of lullabies and cradles/Yvonne Gilbert/*: Հաշվի առնելով *cradle* բառանվան իմաստածավալային ընդգրկունությունը՝ *օրորոց*, *ծննդավայր*, *մանկություն* իմաստներով՝ կարող ենք փաստել, որ *Cradle song*-ը թե՛ օրորոցի մոտ երգվող, թե՛ հայրենիքի մասին պատմող երգատեսակ է:

Ուշագրավ է, որ *օրորոցային* և *աղոթք* բառային միավորները և վերջիններիս անգլերեն *lullaby* և *prayer* համարժեքները օրոր և աղոթք տեքստերի արտասանման ընթացքում մեծ մասամբ չեն հնչում, փոխարենը *օրո՛ր, օրո՛ր, որդի՛ս: քնի՛ր, քալե՛ս /Sleep my child/* կամ աղոթքի տարրեր հիշեցնող բառեր են ասվում:

Բառային (=բառաիմաստային) մակարդակում նկատելի է օրորոցայինի և աղոթքի ընդհանրություն: Ըստ երգահանների՝ մանուկ Հիսուսը ‘ba-bay’ է ասել, և մայրը փոխադարձաբար ասել է by by (Ba երեխաների կողմից արտաբերվող ընդհանուր հնչյուն է)⁵, և այստեղից է առաջացել bye bye բառը: Bye-bye-ը՝ որպես երեխաներին ծանոթ հնչյունների կուտակում, ասվում է մանկանց հասցեագրված տեքստերում, մասնավորապես օրորոցայիններում: Ենթադրաբար *lullabye* բառը ինչ-որ չափով առնչություն ունի վերը բերվածի հետ: Չի բացառվում, որ ռուսական օրորոցայիններում կիրարկվող баю– баѣ-ը աղերսներ ունի վերոբերյալի հետ: Անգլիական օրորոցայիններում ևս bye, bye հանդես է գալիս որպես կրկնակ: Հայերեն օրորոցային տեքստերում հաճախ bye bye-ի հայերեն *բայ, բայ/Բա՛յ, բա՛յ բալաս, բա՛յ, Բա՛յ, բա՛յ, դուզիս բա՛յ՛/* ձևն է հիշատակվում: Սա վկայում է, որ bye bye-ը՝ որպես բանաձևային միավոր, ամրակայված է թե՛ անգլալեզու, թե՛ հայ ժողովուրդների լեզվամտածողության մեջ:

Անգլերենում *prayer* բառը ունի 1. *աղոթք* և 2. *աղոթք անող* նշանակությունները: Մինչդեռ հայկական լեզվամշակույթում ունենք առանձին եզրեր *աղոթք*,

⁴ Գրիգորյան Ռ., *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Եր., 1970, էջ 89:

⁵ Messenger Davies Children. Media and Culture. McGraw Hill Open University Press, 2010, p. 24.

⁶ Գրիգորյան Ռ., նշվ. աշխ., էջ 84:

աղոթող, աղոթիչ, աղոթասաց հասկացությունների համար: Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ *աղոթողը* աղոթքի միջոցով բժշկություն անողն է, իսկ *աղոթիչը* աղոթք անողն է:⁷ Մեզ հուզող խնդրի տեսանկյունից առանցքային է *աղոթասաց* բառը. աղոթասացը աղոթք կարդացողն է, ասացողը/օրորասացի նմանությամբ/, որը աղոթքը կարդում է ոչ միայն իր, այլ նաև ունկնդրի (իմա՝ երեխայի) համար:

Արդյոք օրորասացությունն ու աղոթասացությունը կարևոր են երեխայի քունը ապահովելու համար. նրանք առանձին են հանդես գալիս, թե՞ միջտեքստային և միջթեմատիկ կապ կա նրանց միջև:

Մեր կատարած բանագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրորոցայինը և աղոթքը կարող են որպես առանձին տեսակներ հանդես գալ քնամուտի տեքստերի տիրություն: Հաճախ էլ օրորոցային տեքստը կարող է փոխարինվել աղոթք տեքստով կամ հակառակը: Ըստ էության, օրորոցայինը, ի մասնավորի՝ օրհնանք-մաղթանք օրորոցայինի տեսակը, ինչ-որ առումով աղոթք տեքստ է: Մեր առաջադրած հարցին, թե ինչով կփոխարինեն օրորոցային երգատեսակը, բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներն ընդգծել են հասկապես աղոթք տեքստերը կամ աղոթք համարվող շարականները, հոգևոր բնույթի երգատեսակները:

Օրորոց բառը «Հայերեն գավառական բառարան»-ում ունի «*օրորածն աման մ'է, որուն մեջ կը դնեն լցուած մասուրաները*» բացատրությունը: Այստեղից էլ՝ *Մսէ օրորոց դառնալ*⁸ արտահայտությունը, որ նշանակում է ամբողջ օրը ոտքի վրա աշխատել: Մեր պատկերացրած օրորոցում տեղավորված է մարդու կյանքը, հետևաբար այն անընդհատ շարժման մեջ է: Հնարավոր է, որ *Մսէ օրորոց դառնալը* նշանակում է մարմնական կառույց, որի մեջ տեղավորված է կյանք՝ անդադար շարժման մեջ, այսինքն՝ աշխատավոր, բանող մարդ:

Հոգևոր երգը մանկաշխարհ տեղափոխելու և քնամուտի տեքստ դիտարկելու տեսակետից բանասացներից մեկը կարևորում է վերջինիս հոգևոր հանգրստության գործոնը և երեխայի քունը ապահովելու համար հորդորում է ասել Նարեկացու աղոթքները⁹:

Օրորոցային և աղոթք տեքստերը ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Օրորոցայինի և աղոթքի պարագայում համապատասխանաբար ունենք թե՛ *օրորասաց-աղոթասաց/lullaby singer-prayer/* և թե՛ *հասցեատեր /addressee/*, քանի որ վերոնշյալ տեքստերը բանավոր ավանդում ունեն: Օրորասացի և աղոթասացի դերում կարող են լինել երեխայի մայրը, մեծ մայրը, բացառիկ դեպքերում՝ հայրը կամ մեծ հայրը, թեև դարեր ի վեր մանուկների խնամքն ու դաստիարակությունը վստահված են մայրերին:

⁷ Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Եր., 1976, էջ 26.

⁸ *Աճառեան Հր., Հայերեն Գաւառական բառարան, Լազարեան ճեմարան Արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 1139:*

⁹ *Բանասաց Աննա Լիպարիտի Մահակյան: Ծնվել է 1951թ., Լենինականում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Մշո գավառից (հեղինակի դաշտային գրառումներից):*

Աղոթքի տեքստը, ի տարբերություն օրորոցայինի, ենթադրում է եռակողմ շղթա. աղոթասաց-Աստված-ունկնդիր երեխա /խոսքը բարձրաձայն ասվող աղոթքի մասին է/: Քնամուտի օրորոցայինի և քնամուտի աղոթք տեքստերի ուսումնասիրության տիրույթը տարողունակ է՝ ա/ երբ երեխաներին է հասցեագրված, բ/ երբ երեխան (ավելի հասուն) ինքն է տեքստ արտաբերողը:

Երկու տեքստերի դեպքում էլ ունենք *ժամանակային/time/* հստակություն. դրանք *նախաքնային տեքստեր են/presleep text/*. Հոգեբանական տեսանկյունից երեխան մինչ գիշերային քուն մտնելը գտնվում է հատուկ նախաքնային, տրանսային վիճակում. մարմինը հետզհետե թուլանում է, աչքերն սկսում են փակվել՝ ուշադրությունը կենտրոնացնելով երգողի *ձայնին*: Այդ կենտրոնացմանը օգնում է նաև այն հանգամանքը, որ երգողի ձայնը իշխում է շրջապատող *լռության և մթության* ֆոնին:¹⁰

Այս առումով օրորոցայինը և աղոթքը կարելի է բնորոշել որպես տրանսային տեքստեր /trance text/, որոնք երեխային տանում են քնի «աշխարհ». խոսքային մակարդակում այդ ամենը կատարվում է ռիթմի և հանգի միջոցով: Երկու տեքստերի դեպքում էլ գերկարևորվում է ռիթմայնությունը: Ե՛վ ռիթմը, և՛ հանգը նպատակադիր են. ունեն խաղաղեցնող, քնեցնող գործառույթ: Ահավասիկ հետևյալ օրինակները՝ քաղված անգլիական և հայկական աղբյուրներից.

HUSH! My dear, lie still and slumber,
 Holy angels guard *thy* bed!
 Heavenly blessings without number
 Gently falling on *your* head. /օրորոցային/
 Նա-նա-նա, նանե՛ր, նանե՛ր,
 Միրուն լաճուս քունը տաներ... /օրորոցային/
Matthew, Mark, Luke, and John,
Bless the bed that I lie on.
Before I lay me down to sleep
I give my soul to Christ to keep.
Four corners to my bed,
Four angels overspread:
One at the head, one at the feet,
And two guard me while I sleep. Amen./աղոթք/.

Հանգը, ռիթմը, մեղեդայնությունը բխում են օրորոցային և աղոթք ժանրերի առանձնահատկություններից: Նշված երեք բաղադրիչները ապահովում են քնամուտ տեքստերի լեզվական «երաժշտությունը»: Տեղին է մեջբերել Ս. Վարդանյանի այն հայեցակետը, որ լեզվական «երաժշտության» տիրապետումը սկսվում է վաղ մանկությունից, նույնիսկ օրորոցից. «Լսելով մայրական խոսքն ու նրա «երաժշտությունը»՝ երեխան դեռևս օրորոցում համապատասխան վերաբերմունք է արտահայտում: Եթե մայրական խոսքը ջերմ ու փաղաքշական է, ապա

¹⁰ Осорина М. Секретный мир детей в пространстве мира взрослых. СПб.: «Литер», 1999, стр. 20.

այն երեխայի գոհունակությունն է առաջացնում, մինչդեռ բարկացկոտ ու սաստող տոնը կարող է դժգոհության և լացի տեղիք տալ: Հենց այս հասակում է նրա խոսքի վրա դրվում մայրենի լեզվի «երաժշտության» կնիքը, որը նա կրում է ամբողջ կյանքի ընթացքում»¹¹:

Ե՛վ օրորոցայինը, և՛ աղոթքը կարող են հանդես գալ բանավոր և գրավոր ավանդումով: Պետք է նշել, որ աղոթքը կարող է լավել մեկից, որը մի ուխտ է անում, խոստանում է մի բան անել, եթե Աստծուց ստանա այս կամ այն բարիքը: Այս համատեքստում աղոթքը կարելի է բնութագրել որպես *խոստում տեքստի մի տեսակ*. «Եվ Աննան մտավ Աստծո տաճարը և աղոթեց ու դառնորեն լաց եղավ և ուխտ անելով ասաց. Ո՛վ Զորաց Տեր, եթե քո աղախնի նեղությանը նայես և հիշելով նրա խնդրանքը մի արու գավակ տաս, ես նրան Տիրոջը կնվիրեմ, մինչև իր կյանքի վերջը, և նրա գլխին ածելի չի դիպչի» (Ա. Թագավորաց 1:1-18):

Մեր կողմից նշված քնամուտի տեքստերը կարող են համարվել թե՛ որպես *երգային/song texts*, թե՛ որպես *պատումային/narrative*/տեքստեր:

Կը յիշենք ի մանկութենէ ննջել է առաջ *երգուած* աղոթքը՝ ուղղեալ հրեշտակներին.

Հրեշտակ գուարթուն, հզօր պահապան մեր,

Որ գտին ողջոյն զմեզ խնամեցեր...

Քուն քաղցր անփորձ՝ շնորհես մեզ այս գիշեր:

*Եվ զծնոդս հոգւոց եւ մարմնոց կեցո:*¹²

Մանուկների կյանքում երգերի դերակատարության մասին Կոմիտասն արտահայտվում է այսպես. «Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ *երգերով*: Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է: Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողության ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»¹³:

Ավելին, օրորոցայինը և աղոթքը *պահպանողական տեքստեր/conservative text*/են թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ: Այս առումով դրանք կարող ենք համարել տեղեկատվական գործառույթ ունեցող տեքստեր: Հասկանալի է, որ թե՛ օրորում և թե՛ աղոթքում անփոփոխ են մնում կրկնատողերը, օրոր և աղոթք հիշեցնող բառային միավորները (*Hush, hush, Նանա՛, նանա; օրոր, օրո՛ր*):

Քնամուտի տեքստերի ամենաեական կողմերից է գործառութային /functional/ հստակությունը, այն է՝ քնի միջավայրի ստեղծումը:

Օրորասացի և աղոթասացի տեքստը կարող է ինքնարտահայտման յուրահատուկ միջոց լինել: Թե՛ օրորասացը, թե՛ աղոթասացը հանդես են գալիս նաև մի կարևոր գործառութով՝ մանուկ ունկնդրին փոխանցել ազգային ոգին ու նկարա-

¹¹ Վարդանյան Ս., Լեզվական «երաժշտության» նշանակությունը լեզվաբանության ուսումնասիրության ոլորտում, *Բանբեր ԵՊՀ*, 3 (69), Եր., 1989, էջ 187:

¹² Հայագգի Սուրբեր, *Շնորհք արքեպ. Գալուստեան, Երրորդ հրատարակութիւն, Գանձասար*, Եր., 1997:

¹³ Թերլեմեզյան Լ., *Կոմիտաս. հողվածներ և ուսումնասիրություններ*, Եր., 1941, էջ 63:

գիրը՝ հայրենասիրություն, քրիստոնեական դաստիարակություն, ավանդական բարքերի պահպանում: Օրորը և աղոթքը երկու ենթահամակարգեր են, օրորասացը կամ աղոթասացը պայմանականորեն ստեղծում է այնպիսի աշխարհ, որտեղ բնականաբար ապահովված են և՛ քնող երեխան, և՛ ինքը, և՛ այն միջավայրը, որտեղ նրանք գտնվում են:

Ըստ էության, աղոթքի ներթափանցումը քնամուտ տեքստ բացատրվում է նաև այն հանգամանքով, որ դարեր շարունակ աղոթքը կիրարկվել է թե՛ անգլիական, թե՛ հայկական սովորութամշակութային կենցաղում: Մեր կարծիքով, պատմողը կամ երգողը ավելի ապահով է զգում իր լավ իմացած նյութով, որը կարող է հարմարեցնել տվյալ իրավիճակին, տվյալ պահի իր հուզաշխարհին ու հոգեվիճակին՝ այսպիսով, կատարելով տեքստի հարմարեցում /text adaptation/. Աղոթք տեքստը հարմարեցնել օրորոցայինին կամ հակառակը:

Օրորոցայինի և աղոթքի ընդհանրություններից է նաև արտատեքստային տարրերի առկայությունը (extratextual elements): Արտատեքստային տարրեր ասելով նկատի ունենք հարալեզվական միջոցների (ոչ խոսքային) կիրառում՝ ձեռքի շարժում, դիմախաղ և այլն: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը դրանց միջոցով է կատարվում:¹⁴ Մեր կարծիքով, օրորոցային տեքստը նույնպես պահանջում է վերը նշված երեք բաղադրիչները: Սրանով հանդերձ՝ միանգամայն ընդունելի է Վ. Հումբոլդի այն ձևակերպումը, որ լեզուն միջնորդ է մարդու ներքին և արտաքին աշխարհների միջև. «մտքի ներքին ինքնակառուցողական գործունեությունը» կապվում է արտաքին աշխարհի հետ լեզվի միջոցով¹⁵:

Երկու տեսակի տեքստերը ունեն նաև *կերպարային/personage/* ընդհանրություններ: Աղոթք և օրորոցային տեքստերում (ի մասնավորի՝ օրինանք օրորներում) հստակ նկատելի է, որ մայրը դիմում է մանկապահպան հովանավոր գերբնական կերպարների՝ Աստծո, Քրիստոսի, Սուրբ Աստվածամոր, հրեշտակների, սրբերի ապավինությանը¹⁶: Օրինակ՝

Sleep, little baby of mine
Soft on your pillow so white;
Jesus is here,
To watch over you, dear,
And nothing can harm you tonight¹⁷.
Sleep my love, and peace attend thee
All through the night;
Օրոր, օրոր օրերուդ,
Թևս դեմ բերեմ շարերուդ,

¹⁴ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 40:

¹⁵ Ջահուկյան Գ., *Լեզվաբանության պատմություն*, Հ. 1, Եր., 1960, էջ 338:

¹⁶ *Sté u Matikyan H. Personification as a major trope of lullaby texts, /Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, 1, Գյումրի, 2016, p. 41- 48/:*

¹⁷ *Nelson Thomas, Bedtime Prayers for the Family, Thomas Nelson Inc, W Publishing Group, 2005, p. 156.*

Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի:¹⁸

Մայրը օրոր և աղոթքի տեքստերում հաճախ արտահայտում է իր հնարավորությունների սահմանափակ լինելը, հետևաբար վերերկրային կամ գերբնական ուժերին նա խնդրում է իր զավակի համար ապահովել բարօրություն, ծաղկում, հետագա քայլերի գորացում: Նա բովանդակային պլանում հույզերի ու ապրումների ենթահղումներով ստեղծում է իրականից վեր մեկ այլ իրականություն:

Որպես մանկանոցի պահապաններ՝ *հրեշտակները/angels/* նույնպես հիշատակվում են քնամուտի տեքստերում: Բանահյուսական տարբեր օրորոցային տեքստերում «հրեշտակ» բառը կարող է լինել երեխային ուղղված դիմելաձև, օրինակ՝ *Sleep my angel, sleep; Goodnight my angel*, քնի՛ր իմ հրեշտակ, քնի՛ր: Հաճախ էլ հայերեն օրորներում «Անգելա» բառն է հիշատակվում. ենթադրաբար այս անունը առնչվում է նրա մաքրամաքուր էության, հրեշտակային բնության հետ: Ըստ ժողովրդական պատկերացման՝ եթե երեխան չքնի, ապա քնի հրեշտակը կխռովի:

Օրորոցայինը և աղոթքը կարող են լինել *ժողովրդական և հեղինակային*: Ժողովրդական աղոթք տեքստը, օրորոցայինի նման տարբերակային է: Մեջբերենք ժողովրդական քնամուտ աղոթք տեքստի համանման երկու տարբերակ.

*Ճրագ մարավ,
Հրիշտակ զարթավ,
Գալոց,
Չար խափանոց, ամեն:*

Կամ՝

*Ընցավ չար,
Խանգավ ճրագ,
Չարթավ պախապան խրիշտակ՝
Օգնական պախապան մեր տան տեղաց՝:*

Ժամանակի հոլովություն հեղինակային որոշ օրորոցային և աղոթք տեքստեր կարող են ստանալ ժողովրդական կարգավիճակ և համարվել բանավոր ստեղծագործություններ: Վերոնշյալի վառ ապացույցն են Վ. Օդենի, Ու. Բլեյքի, Ռ. Պատկանյանի, Կոմիտասի օրորոցայինները և Նարեկացու աղոթք տեքստերից մի քանիսը: Օրինանք-մաղթանք օրորի տեսակը բարդ կառուցվածք ունի²⁰, բայց իր գործառության ամբողջության մեջ շատ մոտ է աղոթք տեքստին: Օրինանքի կարևոր գործոնը իմաստաբանական հատկանիշն է: Ըստ Հր. Աճառյանի՝ օրինանք, օրինել բառերի արմատը ծագել է պահլավերեն *afriam*-օրինեմ, գովեմ ձևից:²¹ Ըստ բնույթի՝ աղոթքները լինում են հավատի և փառաբանության, զղջման և

¹⁸ Գրիգորյան Ռ., նշվ. աշխ., էջ 55:

¹⁹ Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ /աշխատությանը՝ Ս. Հարությունյանի/, Եր., 2006, էջ 168:

²⁰ Տե՛ս Մատիկյան Հ., Օրորոցայինը որպես տեքստ, «Հասկեր» մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, Հովհ. Թումանյանի թանգարան, Եր., էջ 43-65:

²¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 6, էջ 1611-1617:

ապաշխարության, դավանանքի և այլն: Իրենց նշանակությամբ էլ կոչվում են «խրնդրվածքներ», «օրհնություններ» և «գոհություններ»: ²² Այսինքն՝ օրհնության համարժեքը գովաբանությունն է: Կարծում ենք՝ օրորոցային օրհանք-մաղթանք տեքստերում միահյուսվում են թե՛ երեխային օրհնելը, թե՛ գովերգելը, թե՛ աղոթք ասելը:

Երկու տեքստերի հիմնական տարբերությունը պայմանավորված է հասցեատիրոջ տարիքային գործոնով: Օրորոցայինը վաղ մանկական տարիքի երեխաներին հասցեագրված տեքստ է, մինչդեռ աղոթքը հարատև է, այն կարող է մարդուն ուղեկցել ամբողջ կյանքում: Օրորոցային և աղոթք տեքստերը ունեն նաև *միջավայրային տարբերություն*. օրորոցային տեքստում միջավայրը պարզ է, իսկ աղոթքի դեպքում կարելի է առանձնացնել ընդհանրական (եկեղեցի) և անհատական աղոթքի վայր: Այս առումով օրորոցայինը անհատական աղոթքի մի ձև է:

Ամփոփելով նշենք, որ ժանրային ներթափանցումը վերոնշյալ տեքստերում այդքան էլ անկանխատեսելի չէ: Ըստ էության երկու տեսակի տեքստերի խաչաձևումը անխուսափելի է: Օրինակ, քնամուտի տեքստերից օրորոցայինը կարող է հանդես գալ որպես աղոթք տեքստ: Աղոթք տեքստն էլ իր հերթին կարող է հանդես գալ որպես օրորոցային տեքստի միջուկային մաս:

КОЛЫБЕЛЬНАЯ И МОЛИТВА КАК ПРЕДСОННЫЕ ТЕКСТЫ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ

___ *Резюме* ___

___ *А. Матикян* ___

Тексты колыбельных и ночных молитв можно характеризовать как предсонные тексты. В данном контексте возможно взаимопроникновение жанров колыбельной и молитвы. Колыбельная, как предсонный текст, проявляется как текст молитвы и наоборот. Предсонные тексты имеют тематические и функциональные общие черты. Основной общей характерной чертой, рассмотренных в статье колыбельных-молитв, является обеспечение сна ребенка.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մատիկյան Հասմիկ Համլետի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
ինստիտուտի կենտրոն, E-mail: hasvrej@msil.ru*

²² «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 40:

Աննա ԱՍՈՅԱՆ

ՀՈՒՇԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Յուրաքանչյուր տարածաշրջանի կարևոր խնդիրներից են իր իսկ պատմության փաստագրումը, պահպանումն ու տեղի մշակութային առանձնահատկությունների ներկայացումը: Ցանկացած բնակավայրի ու տարածաշրջանի ինքնությունն ու ինքնատիպությունն ընդգծվում են նաև այդ վայրից սերած կամ կարևորագույն գործունեություն ծավալող խոշոր անհատականություններին նվիրված թանգարաններով: Այսինքն՝ «հուշայնացումը թանգարաններում սոցիալական նշանակության տեղեկատվության փաստագրման և փոխանցման մակարդակներից է»¹:

Փաստ է, որ յուրաքանչյուր թանգարանում կարևորվում է բնօրինակ առարկան, ըստ այդմ՝ հուշային թանգարանում բացառիկ արժեք ունի հուշային իրը: Ինչպես յուրաքանչյուր թանգարան, այդ թվում՝ նաև հուշայինը, լինելով մշակութային փորձի փոխանցման աղբյուր, այցելուին հնարավորություն է տալիս հաղորդակցվելու պատմության մեջ ուրույն հետք թողած նշանավոր անձանց կյանքին ու գործունեությանը, նրանց հուզող խնդիրներին, ապրումներին ու պահանջներին, դրանով հանդերձ՝ անցյալը դարձնել ներկա մշակույթի սեփականությունը: Հուշային թանգարանները մյուսներից տարբերվում են ցուցադրության կազմակերպման և մեկնաբանման առանձնահատկություններով, հատկապես հուշային հիմքով. այն է՝ պատմական վայր, տարածք, շենք, սենյակ, հուշային հավաքածու կամ առանձին վերցրած իր և այլն: Հուշային թանգարանում հնարավոր է տեսնել կենցաղի բազմաշերտությունը, պատմության կնճռոտ էջերը, նշանավոր անձանց ինքնատիպ ու բովանդակալից կենսագրությունը:

ՀՀ-ում գործող հուշային թանգարաններից համեմատական վերլուծությամբ կոլեկտարկենք անվանի արվեստագետների չորս տուն-թանգարաններ, որոնցից երկուսը գտնվում են Գյումրիում, երկուսը՝ Երևանում: Ըստ այդմ՝ քննության կառնվեն.

- երկու տարբեր քաղաքներում բնակված նույն մտավորականի ընտանիքին պատկանող առանձնատներում ստեղծված հուշային թանգարանների առանձնահատկությունները՝ Ավետիք Բսահակյանի Գյումրու և Երևանի տուն-թանգարանների օրինակով,

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Чувилова И. Мемориальные музеи и проекты в современном социокультурном пространстве. /Молодежь и социум. Научно-методический журнал, спецвыпуск, 2012, стр.19.

- հիմնական գործունեությունը հայրենիքից հեռու ծավալող նշանավոր արվեստագետների հայաստանյան հուշային թանգարանները՝ քանդակագործ Մերգել Մերկուրովի Գյումրու և կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի Երևանի տուն-թանգարանների օրինակով:

Նշված համատեքստում դիտարկվում են թանգարանների ստեղծման պատմությունը, հավաքածուները, ցուցադրությունը և գործունեությունը: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Հայ գրականության դասական Ավետիք Բասիակյանի (1875-1957) Գյումրու տուն-թանգարանը գործում է 1975թ.: Այն մեծ քնարերգուի հայրական տունն էր՝ կառուցված 1829թ.²: 1988թ. երկրաշարժից վնասված տուն-թանգարանը հիմնովին քանդվելով և նույն ոճով կառուցվելով՝ 2002թ. վերաբացվել է իր նոր ցուցադրությամբ: Այս տանն է ծնվել, ապրել և իր կյանքի վաղ շրջանում ստեղծագործել Վարպետը: Հուշատունը ներկայացնում է ոչ միայն Բասիակյանների օջախը, այլև Գյումրու ավանդական կենցաղը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին³: Հավաքածուն կազմում է ավելի քան 700 թանգարանային առարկա: Տուն-թանգարանում ներկայացված են Բասիակյանների հյուրասենյակը, ննջասենյակը, Վարպետի աշխատասենյակը, խոհանոցը, մառանը և թոնրատունը: Կահավորանքը, այդ թվում՝ գրասեղանը, մանկական օրոքոցը, եվրոպական ոճի մեծ հայելին, գրադարանը և այլն, հնարավորություն է տալիս ծանոթանալու նաև բարեկեցիկ կյանքով ապրող գյումրեցու կենցաղին և նիստուկացին:

Ավ. Բասիակյանի երևանյան տուն-թանգարանը⁴, որը բացվել է 1963թ., սև տուֆ քարե, հայկական մաստուռ հիշեցնող երկհարկանի առանձնատուն է (Ճարտարապետ՝ Պ. Մսրյան), որը բանաստեղծին նվիրել է կառավարությունը 1945թ.՝ ծննդյան 70-ամյակի առթիվ: 1946 թ-ից բանաստեղծն իր ընտանիքով բնակվել է այստեղ՝ անցկացնելով կյանքի վերջին տարիները: Նրա մահից հետո կառույցը մասնակի փոփոխության է ենթարկվել. երկրորդ հարկի հետին մասում կառուցվել են մեծ սրահ և աշխատասենյակներ, տան փայտե պատշգամբը և սանդուղքը քարապատվել են: Վերանորոգվել է երկու անգամ, այժմյան ցուցադրությունը երրորդն է (1963, 1989, 2009): Տուն-թանգարանի հուշային հատվածն են կազմում առաջին հարկի աշխատասենյակը, ննջարանը, հյուրասենյակը: Ներկայացված գրքերը՝ անձնական գրադարանից, անձնական տարբեր իրերով գրասեղանը, բազմոցը, մահճակալը, անձնական հագուստներով զգեստապահարանը, այցելուին տեղափոխում են իսահակյանական ժամանակները: Հուշային հատվածի շարունակությունն է ծաղկաշատ այգին՝ գրողի տնկած թթենիով և ընկուզենիով:

Երևանյան տուն-թանգարանի հիմնական ֆոնդը կազմում է 10 հազարից ավելի թանգարանային առարկա, որից անձնական իրերը՝ մոտ 1500-ը, այդ թվում՝ հագուստ, կենցաղային իրեր, կահույք և այլն, շուրջ 300-ը՝ ձեռագրեր, պահպան-

² Հայաստանի և Արցախի թանգարանները, տեղեկագիրք, Եր., 2016, 268 էջ, էջ 189:

³ Մնացականյան Ս., Գյումրու Ավ. Բասիակյանի հուշատուն-թանգարան, Թանգարան գիտատեսական և մեթոդական հանդես, Եր., 2009, էջ 226-227, էջ 226:

⁴ www.isahakyanmuseum.am

վում է նաև բանաստեղծի անձնական գրադարանը՝ մոտ 4000 գիրք: Այստեղ Ավ. Բսահակյանը ներկայացված է մայրաքաղաքային իրականության մեջ: Հատկանշական է, որ թեև երևանյան թանգարանում մանրամասնորեն ներկայացված են բանաստեղծի կյանքն ու գործունեությունը, այսուհանդերձ՝ ցուցասրահի նյութերում առավելապես շեշտադրվում են Վարպետի արտասահմանյան ուղևորությունները՝ կապված ուսման, հասարակական-քաղաքական գործունեության հետ:

Երկու թանգարանները լրացնում են իրար՝ ամբողջական պատկերացում տալով մեծ քնարերգուի կյանքի և գործունեության վերաբերյալ և առավել բազմակողմանի են բացահայտում հեղինակին՝ մի կողմից՝ ներկայացնելով բանաստեղծի ստեղծագործական գործունեության սկիզբը, մյուս կողմից՝ արդեն հասուն, կայացած մտավորականին: Եթե Գյումրիում Ավ. Բսահակյանը ներկայացված է որպես տոհմիկ գյումրեցի՝ իր գերդաստանով, սովորություններով, տեղի վարքուբարքով, ապա Երևանում Ավ. Բսահակյանն առավել ընկալվում է որպես ստեղծագործող անհատականություն և ակտիվ հասարակական գործիչ:

Տուն-թանգարանները տարբերվում են կահավորանքով. չնայած երկուսն էլ կահավորված են բնական փայտի կահույքով, սակայն տարբեր ժամանակների կնիքն ունեն: Եթե Գյումրու տան կահույքը, սպասքն ու ասեղնագործությունները որոշակի պատկերացում են տալիս տեղի շնորհաշատ վարպետների արհեստավորական ավանդույթների և բնակարանի հարդարման մշակույթի վերաբերյալ, ապա Երևանյան թանգարանում անմիջապես այքի է զարնում խորհրդային մտավորականի կենցաղին բնորոշ այդ տարիներին արտադրվող գործարանային պարզ, կիրառական կահույքը: Երկուսն էլ առանձնատներ են՝ իրենց բակով, բանաստեղծի կիսանդրիով, ծաղկանոցով: Երևանյան տանը խոհանոցային կենցաղը բացակայում է, մինչդեռ Գյումրունը հին քաղաքի փոքր մասունք է:

Ուսումնասիրության դիտակետում գտնվող հաջորդ տուն-թանգարանը նշանավոր քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Մերգեյ Մերկուրովի (1881-1952) տուն-թանգարանն է՝ բացված 1984թ. նրա հայրական տանը, որին ավելացվել է փոքրիկ ներքին այգի: 1988թ. երկաշարժը վնասել էր շինությունը, և 2003թ. վերանորոգումից հետո տուն-թանգարանը հանրությանը ներկայացել է իր երկրորդ՝ մշտական ցուցադրությամբ: Այժմ տուն-թանգարանը դարձյալ վերանորոգվում է, և մեր ուսումնասիրությունն արդեն նախկին ցուցադրությանն է առնչվում: Մ. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնական ֆոնդը կազմում է 2654 թանգարանային առարկա, այդ թվում՝ քանդակագործի կերտած հետմահու դիմակները (մահադիմակներ), քանդակներ, լուսանկարներ, անձնական գրադարանից գրքեր, փաստաթղթեր, անձնական իրեր:

Մշտական ցուցադրության հիմքում արվեստագետի կերտած մահվան դիմակներն ու լուսանկարներն էին (ձևավորումը՝ Կ. Նիզարյանի): Երեք սրահներում ներկայացված էին Ալեքսանդրապոլում ծնված և Եվրոպայում կրթություն ստացած, հայրենիքից երկար տարիներ հեռու ապրած հունահայ արվեստագետի կենսագրության գլխավոր իրադարձությունները, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի մշակութային-քաղաքական միջավայրը՝ Խրիմյան Հայրիկ, Հովիհ.

Թումանյան, Վ. Ավանեսով, Լ. Տոլստոյ, Ա. Մակարենկո, Ս. Էյզենշտեյն, Ա. Սկրյաբին, Ս. Գորկի, ինչպես նաև՝ Գ. Պլեխանով, Վ. Ի.Լենին, Ֆ. Ձերժինսկի, Ս. Կիրով, Ա. Ժդանով և ուրիշներ (շուրջ 70 դիմաքանդակ)⁵: Ցուցադրությունն առանձնանում էր ինքնատիպությամբ և, մի արվեստագետի բնորոշմամբ, այն իր կառուցվածքով ավելի նման էր թատերական տեսարանի, քան ժամանակակից թանգարանային ցուցադրության⁶: Ցուցադրության հայեցակարգում հիմնական շեշտը դրված է արվեստագետի կերտած մահվան դիմակներով անցողիկի և հավերժի փիլիսոփայական ընկալումների վրա, որը ներկայացվում է ցուցափեղկերի կառուցվածքի (բուրգ, զիկկուրատ, քառակուսի, շրջան) և դրանց մեջ տեղադրված դիմակների հիերարխիկ ներկայացման միջոցով⁷:

Աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի (1903-1978) տուն-թանգարանը բացվել է 1984թ.՝ նրան Խորհրդային Հայաստանի կառավարության նվիրած միհարկանի առանձնատան հիման վրա (ճարտ.՝ Մ. Գրիգորյան, 1947թ., նախագծային աշխատանքներն ավարտել է ճարտ. Էդ. Ալթունյանը): Առանձնատունը պահպանվել է անփոփոխ, իսկ նրան համալրող տուն-թանգարանի երկհարկանի շենքը կառուցվել է այգու տարածքում: Կոմպոզիտորը հիմնականում ապրել և ստեղծագործել է Մոսկվայում, իսկ երևանյան տանն ապրել են նրա մայրը և կրտսեր եղբոր ընտանիքը: Ա. Խաչատրյանը սիրում էր իր երևանյան տունը, հաճախ էր այցելում և այստեղ ընդունում իր հյուրերին: Տուն-թանգարանը վերանորոգվել է, և 2008թ. բացվել է ներկայիս մշտական ցուցադրությունը: Տուն-թանգարանի հիմնական ֆոնդային հավաքածուն ընդգրկում է մոտ 13 հազար թանգարանային առարկա, որից 606-ը անձնական իրերն են, այդ թվում՝ հագուստը, կահույքը, անձնական ռոյալը, դիպլոմներ, շքանշաններ, կենցաղային իրեր և այլն: Այստեղ պահպանվող 11 ստեղծագործությունների ձեռագրերից 10-ն ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողությունը» ծրագրի միջազգային ռեեստրում⁸:

Հուշատունը և մշտական ցուցադրության տասը սրահները ներկայացնում են կոմպոզիտորի կյանքն ու ստեղծագործական ուղին: Տուն-թանգարանի հուշային հատվածում ցուցադրվող անձնական իրերը, ռոյալը, կոմպոզիտորի մոսկովյան բնակարանից և մերձմոսկովյան ամառանոցից տեղափոխված կահույքը և անձնական իրերը պատկերացում են տալիս Ա. Խաչատրյանի ապրած ժամանակաշրջանի կենցաղի, նախասիրությունների, ստեղծագործական սովորությունների, հետաքրքրությունների վերաբերյալ: Ցուցասրահներում մանրամասնորեն ներկայացվում են նրա կյանքի կարևոր իրադարձությունները, ստեղծագործական հաջողությունները, նշանավոր «Գայանե» և «Մպարտակ» բալետները:

⁵ Մանրամասն տե՛ս Պիկիչյան Հ., Թանգարանն իբրև պատմական հեռանկարի կազմակերպման միջավայր, Թանգարան գիտատեսական և մեթոդական հանդես, Եր., 2009, էջ 17-25/, էջ 22-23: Տե՛ս նաև թանգարանի կայքը www.merkurov.am

⁶ Գալստյան Վ., Խորհրդային արվեստի «դիմակագերծում». Մերգեյ Մերկուրովի տուն-թանգարանի (Գյումրի) ցուցադրության Կամո Նիզարյանի հեղինակային ձևավորումը, Թանգարան գիտատեսական և մեթոդական հանդես, Եր., 2010, էջ 60-62/, էջ 61:

⁷ Մանրամասն տե՛ս Պիկիչյան Հ., նշվ. աշխ.:

⁸ www.akhachaturianmuseum.am

Յուցադրության շնորհիվ՝ այցելուներն առավել համակողմանի են ծանոթանում Ա. Խաչատրյան մտավորականին, կոմպոզիտորին, դիրիժորին, մանկավարժին և հասարակական գործչին: Ա. Խաչատրյանն ակտիվ համերգային գործունեություն է ծավալել՝ հյուրախաղերով հանդես գալով աշխարհի 50-ից ավել երկրներում: Նշանավոր մարդկանց հետ հանդիպումների լուսանկարներն ամբողջացնում են կոմպոզիտորի շրջագայություններն աշխարհով մեկ: Յուցադրության վերջին սրահի գազաթնակետն է կոմպոզիտորի անունով երկնքում աստղի անվանակոչությունը, որը ևս մեկ անգամ փաստում է նրա հոչակն ու ստեղծած երաժշտության անմահությունը: Հատկանշական է, որ այցելուին ոչ միայն տեղեկություններ են տրվում Խաչատրյանների տոհմիկ ընտանիքի, բնակավայրի ու տան մասին, այլև հնարավորություն է ստեղծվում հաղորդակցվելու 20-րդ դարի սկզբի թիֆլիսյան բազմազգ մշակույթին, պատկերացում կազմելու քաղաքային ճարտարապետության մասին:

Ամփոփելով պետք է նշել, որ ընդհանրապես տուն-թանգարանների հուշային հատվածները, ինչպես նաև մշտական ցուցադրության այն սրահները, որոնք մշակութային բազմաբովանդակ վավերագրեր են պարունակում տվյալ ժամանակաշրջանի, միջավայրի առանձնահատկությունների բացահայտման ու ներկայացման առումով, ցայտուն արտացոլում են ժամանակի ականավոր անհատներին և նրանց շրջապատող իրականությունը, կենցաղը, արդյունաբերությունը, տնտեսությունը, գեղագիտական չափանիշները, նորաձևությունը, միջանձնային հարաբերությունները: Այսպես օրինակ՝ Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի ցուցադրության առաջին սրահում, որը նվիրված է կոմպոզիտորի մանկությանը, ներկայացված է մի փայտյա կառույց, որը նրա թիֆլիսյան տան պատշգամբի նմանողությամբ է ստեղծված: Սա այցելուի համար դիդակտիկ նյութ է թիֆլիսյան քաղաքային ճարտարապետության ու կենցաղի որոշ դրվագներն առավել տեսանելի ընկալելու համար: Ի հավելումն դրա՝ մշտական ցուցադրության մեջ տեղ գտած լուսանկարներով այցելուն ամբողջական պատկերացում է կազմում կոմպոզիտորի արմատների, ընտանեկան կյանքի, Թիֆլիսում և Մոսկվայում ուսումնառության տարիների, համերգային շրջագայությունների, 20-րդ դարի առաջին կեսերին բնորոշ կրթական միջավայրի և այլնի մասին:

Եթե նկարիչ-քանդակագործ Ս. Մերկուրովի տուն-թանգարանը, նշանավոր արվեստագետի կյանքն ու գործունեությունը ներկայացնելով հանդերձ, առավելապես արվեստի թանգարան է, քանի որ հավաքածուից ելնելով՝ շեշտը դրված է ոչ թե հուշային-անձնական իրերի, այլ ստեղծագործությունների վրա, ապա Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի հուշային հատվածն առավել հարուստ է և լիարժեք պատկերացում է տալիս աշխարհահռչակ կոմպոզիտորի կյանքի բնական միջավայրի, միայն ստեղծագործական գործունեությունը բացահայտող երկրորդ հարկի ցուցադրությունն է առավելապես հարում արվեստի թանգարաններին: Ա. Խաչատրյանի թանգարանի ցուցադրության հիմքում դասական մոտեցումներն են՝ համարված ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններով, որի շնորհիվ այցելուն հնարավորություն է ստանում տեսնելու նրա բալետները և

ունկնդրելու երաժշտությունը, իսկ Ս.Մերկուրովի թանգարանի ցուցադրության մեջ կարևոր տեղ է հատկացվել նյութի մատուցման խորհրդանիշների լեզվին:

Երկու թանգարանների շենքերի համեմատությունը ևս ուշագրավ է: Այսպես՝ եթե Ս. Մերկուրովի տուն-թանգարանի շենքը 19-20-րդ դդ. Գյումրու քաղաքային ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից է, ապա Ա. Խաչատրյանի թանգարանինը խորհրդային շրջանին բնորոշ երևանյան առանձնատան օրինակ է, որը թանգարանի վերածվելուց հետո որոշակի ձևափոխություններ է կրել, օրինակ՝ կառույցի բարձրացող հինգ կամարները կամերտոն են խորհրդանշում՝ հուշելով, որ երաժշտի տուն-թանգարան է:

Առանձնակի պետք է նշել մայրաքաղաքային տուն-թանգարանների նմա-նությունները կենցաղավարման, ինչպես օրինակ՝ ջեռուցման խնդիրների լուծման առումով. երկու առանձնատներն էլ տաքացվել են պատի ներկառուցված վառարաններով: Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում պահպանվել են երկու, իսկ Ա.Խաչատրյանի տուն-թանգարանում՝ մեկ վառարան: Թե՛ քանաստեղծը և թե՛ կոմպոզիտորը պաշտամունքի հասնող վերաբերմունք են ունեցել իրենց մայրերի հանդեպ: Այդ են վկայում Ա. Խաչատրյանի աշխատասենյակի ռոյալի վրա դրված մոր՝ Ղումաշի դիմանկարը և Ավ. Իսահակյանի մոր՝ Ալմաստի դիմանկարը, որը կախված է ննջարանում:

Մեր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ թեև նշված թանգարանները հուշային տիպին են պատկանում, այսուհանդերձ խիստ բազմազան են: Այսպես՝ Ավ. Իսահակյանի տուն-թանգարանները, լիարժեք ներկայացնելով փիլիսոփա-քնարերգուին, այնուամենայնիվ տարբեր են, քանի որ Գյումրու տուն-թանգարանը բանաստեղծին ներկայացնում է առավելապես Գյումրվա մշակույթի ֆոնին, իսկ երևանյան տուն-թանգարանում շեշտադրվում է նրան՝ իբրև հասարակական գործչի ներկայացնելը և առավել մանրամասն է բացահայտում բանաստեղծի գործունեությունն արտերկրում: Ավ. Իսահակյանի երևանյան թանգարանում շատ են այն առարկաները, որոնք նվիրատվություններ են իր հոբբեյանի և բազմաթիվ այլ առիթներով, որոնք ևս մեկ անգամ փաստում են հասարակության տարբեր շերտերի շրջանում բանաստեղծի նկատմամբ խորին հարգանքի և հեղինակություն մասին:

Գյումրիում տեղական հմուտ վարպետների պատրաստած կահկարասի է, Երևանում՝ խորհրդային շրջանին հատուկ տիրաժավորված կահույք՝ զերծ ճոխություններից: Պետք է նկատել, որ Գյումրու կահույքը, ասեղնագործ սփռոցը տոհմիկ գյումրեցու մշակույթը բնութագրող արժեքներ են:

Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում հառնում է խորհրդային արվեստագետի կերպարը: Նրա օգտագործած կահույքը պարզ է, իսկ գրասեղանը առանձնանում է իր տեսակով և յուրահատկությամբ: Ննջարանում ցուցադրված խալաթը, կնոջ թանկարժեք օձանելիքը ևս հուշում են տանտիրոջ խորհրդային վերնախավի ներկայացուցիչ լինելը:

Դիզայներ Կ. Նիզարյանը Ս. Մերկուրովին ներկայացրել է որպես փիլիսոփա-մտավորական: Ցուցադրված են խորհրդային վերնախավի դիմաքանդակ-

ները (Վ. Լենին, Գ. Պլեխանով, Ֆ. Չերժինսկի, Ս. Կիրով և ուրիշներ), իսկ մոնումենտալ քանդակները՝ լուսանկարների միջոցով:

Ա. Խաչատրյանը՝ որպես հայրենիքից դուրս ապրած երաժիշտ, հուշային հատվածում ներկայացված է դասական տարբերակով, իսկ ցուցասրահներում ներմուծված նորագույն տեխնոլոգիաները նոր ժամանակների վկայություն են: Եթե Ս. Մերկուրովի տուն-թանգարանում ցուցադրությունը հագեցած է սիմվոլներով, որով փորձ է արվում բացահայտելու նրա ապրած ժամանակաշրջանը, և նախնական գիտելիք չունեցող այցելուի համար առանց էքսկուրսավարի ամբողջությամբ ընկալելի չէ արվեստագետի կերպարը, ապա Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի ցուցադրությունն ավելի պարզ ու հասանելի է յուրաքանչյուր այցելուի՝ անկախ ունեցած գիտելիքից:

Նշված տուն-թանգարաններն ակտիվ գործունեություն են ծավալում՝ իրականացնելով հավաքչական, գիտահետազոտական աշխատանքներ, դաս-պարապմունքներ, գրքերի, խոսասալիկների շնորհանդեսներ, գրողների, երաժիշտների, արվեստագետների հոբելյարներ, համերգներ, ինչպես նաև կրթական ծրագրեր, որոնց հիմքում հուշային միջավայրն է:

ОСОБЕННОСТИ МЕМОРИАЛЬНЫХ МУЗЕЕВ НА ПРИМЕРАХ МУЗЕЕВ ГЮМРИ И ЕРЕВАНА

___ *Резюме* ___

___ *А. Асоян* ___

В мемориальных музеях у посетителей есть возможность познакомиться не только с жизнью и творчеством известных людей, но так же составить представление о социальной и политической жизни данного периода, образа жизни и о других культурных особенностях. В статье проведено сравнительное исследование некоторых мемориальных музеев в Гюмри и в Ереване. Среди них Дома-музеи Аветика Исаакяна в Гюмри и в Ереване, Дом-музей скульптора Сергея Меркурова в Гюмри и Дом-музей Арама Хачатуряна в Ереване. Рассматриваются история создания и деятельность музеев, коллекции и экспозиции.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Ասոյան Աննա Պետրոսի - Երևանի պետական համալսարանի
մշակութաբանության ամբիոն, E-mail:anna_asoyan@yahoo.com*

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

*ԱՊՀ ԵՎ ՄԵՆԶԲԱԼԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԿԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ
(XX դարի վերջ-XXI դարի սկիզբ)*

Հայտնի է, որ բնակչության էթնիկական տեղաշարժերի և վերարտադրության վրա ազդեցություն են թողնում բնապատմական, սոցիալ-տնտեսական, էթնոքաղաքական, սոցիալ-մշակութային և հոգեբանական, իսկ նրա քանակական արժեքների վրա՝ սեռատարիքային կառուցվածքը, ամուսնությունները, միգրացիան և այլ էթնոժողովրդագրական գործոնները¹: Նշված տեսանկյուններով էլ փորձ է արվել դիտարկել ԱՊՀ երկրների բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները հետազոտվող ժամանակահատվածում: Հետխորհրդային տարիներին ԱՊՀ երկրների բնակչության ազգային կազմն ու թիվը կրել են բավականին կտրուկ և բարդ փոփոխություններ՝ պայմանավորված ԽՍՀՄ-ի լուծարումով, հասարակարգի փոփոխությամբ, սոցիալ-տնտեսական բարեփոխումներով, միջէթնիկական հակամարտություններով, ինչպես նաև տարվող ոչ արդյունավետ էթնոժողովրդագրական քաղաքականությամբ: Այդ իսկ պատճառով ԱՊՀ երկրների, հատկապես մայրաքաղաքների բնակչության էթնոժողովրդագրական իրավիճակի փոփոխությանը վերաբերող թվային տվյալները որոշ դեպքերում հակասական են ու մոտավոր և լրացուցիչ դժվարություններ են ստեղծում հաշվարկներ կատարելիս: Այսպես, ՄԱԿ-ի և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից բնակչության թվին վերաբերող հրապարակված վիճակագրական տվյալներն իրարից տարբերվում են: 2015թ. դրությամբ, ըստ ՄԱԿ-ի գնահատման, Ադրբեջանի բնակչության թիվը կազմում է 9,8 մլն մարդ, իսկ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից բերված տվյալով՝ 9,6 մլն, ՌԴ-ինը՝ համապատասխանաբար 143,5 և 146,3 մլն մարդ, Ուզբեկստանի Հանրապետությանը՝ 29,9 և 31,0 մլն, Մոլդովայի Հանրապետությանը՝ 4,1 և 3,6 մլն և այլն²: Այսպես, Մոլդովայի բնակչությունը նշված ժամանակահատվածում պակասել է 18,4%-ով, Ուկրաինայինը՝ 17,3-ով, Հայաստանինը՝ 17,1-ով, Բելառուսինը՝ 7,0-ով և Ռուսաստանինը՝ 1,5%-ով, մինչդեռ Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի բնակչության թիվն ավելացել է 1,5 , Ադրբեջանինը և Ղրղզստանինը՝ 1,3 անգամ³:

¹ Шувалов Е. География населения, М., 1977, стр. 22.

² United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2015). World Population Prospects: The 2015 Revision, DVD Edition. POP/DB/WPP/Rev.2015/POP/F01-1 - <http://esa.un.org/unpd/wpp/DVD/>; Межгосударственный статистический комитет СНГ. Население и социальные индикаторы стран СНГ и отдельных стран мира 2011-2014. М., 2015. С. 7. - <http://www.cisstat.com/>.

³ <http://www.demoscop.ru>

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմենք ԱՊՀ երկրների և նրանց մայրաքաղաքների բնակչության թվի շարժընթացի մասին, ներկայացնենք այն աղյուսակով (նպատակահարմար ենք համարում, որ բնակչության թվին վերաբերող տվյալները ներառեն ոչ միայն ԱՊՀ պետությունները, այլև Մերձբայթյան երեք հանրապետությունները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան): Հիշատակենք, որ տարածքային կորուստներով պայմանավորված՝ Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի և Ադրբեջանի բնակչության թվերը մոտավոր են. ներառված չէ կորսված տարածքներում բնակվողների թիվը, իսկ Ղազախստանի մայրաքաղաքի բնակչության թվի էական տարբերությունը պայմանավորված է մայրաքաղաքի փոփոխությամբ: Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների բնակչության ընդհանուր թիվն ավելացել է 8,4 մլն մարդով, տարեկան 0,1% միջին աճի պայմաններում, այդ թվում մայրաքաղաքների բնակչության թիվն ավելացել է 4,3 մլն մարդով: Բնակչության աճի 51,2%-ը բաժին է ընկել մայրաքաղաքներին: Արժե հիշատակել, որ աճ գրանցվել է հիմնականում մահմեդականներով բնակեցված հանրապետություններում (Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Տաջիկստան և Ղրղըզստան): Համեմատության համար նշենք, որ 1989թ. Խորհրդային Միության հիմնականում մահմեդականներով բնակեցված հանրապետությունների բնակչության թիվը կազմել է 56,4 մլն մարդ, ինչը ամբողջ բնակչության թվի 19,7%-ն է, նույն ցուցանիշը 2016թ. համապատասխանաբար՝ 78,9 մլն է կամ 26,8%:

Ներկայացվող ժամանակահատվածում ԱՊՀ հանրապետությունների մայրաքաղաքների բնակչության թիվը, բացառությամբ Երևանի, աճել է: Աճի ամենամեծ ցուցանիշ գրանցվել է Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, որի բնակչության թիվն ավելացել է 3,4 անգամ, իսկ Մոսկվայի բնակչության թիվը 2005-2015թթ. ընկած ժամանակահատվածում ավելացել է 13,7% (տես աղյուսակ 1):

Վերլուծելով մարդահամարների արդյունքները և ԱՊՀ ու Մերձբայթյան երկրների պաշտոնական թվային ցուցանիշները՝ հանգում ենք այն հետևության, որ մահմեդականների թիվը ԽՍՀՄ-ում 1989թ. կազմել է 58,1 մլն, ինչը կազմել է ամբողջ բնակչության թվի՝ 20,4%-ն է, իսկ XXIդ. առաջին տասնամյակում նույն տարածքի վրա՝ համապատասխանաբար 84,1 մլն և 28,6%: Այսինքն՝ կարճ ժամանակահատվածում մահմեդականների թիվը շեշտակի ավելացել է, ինչն առաջին հերթին պայմանավորված է բնական աճի բարձր ցուցանիշով: Մահմեդականների թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմում սունիները: Նույն ժամանակահատվածում քրիստոնյաների թվի շարժընթացն ունեցել է հետևյալ պատկերը: 1989թ., համամիութենական մարդահամարի արդյունքի համաձայն՝ քրիստոնյա ազգաբնակչության թիվը կազմել է՝ 224,5 մլն և 78,6%-ը, իսկ XXIդ. առաջին տասնամյակում՝ 200,3 մլն: Այսինքն՝ քրիստոնյաների թիվը պակասել է 24,2 մլն. մարդով կամ 10,8%-ով: Ներկա միտումների շարունակման դեպքում XXIդ. կեսին ԱՊՀ երկրների ազգաբնակչության մոտ կեսը կկազմեն մահմեդականները, ինչը, կարծում ենք, էլ ավելի է խորացնելու էթնոդավանաբանական հակամարտությունները:

Աղյուսակ 1

ԱՊՀ և Մերձբալթյան պետությունների և նրանց մայրաքաղաքների բնակչության թվի շարժընթացի ու աճի գործակցի փոփոխությունը (1989 և 2016թթ.)⁴:

Երկիր	ԱՊՀ բնակչության թիվը (հազ. մարդ)		ԱՊՀ Մայրաքաղաքների բնակչության թիվը (հազ. մարդ)		ԱՊՀ բնակչության տարեկան միջին աճը %-ով	ԱՊՀ մայրաքաղաքների բնակչության տարեկան միջին աճը %-ով
	1989թ.	2016թ.	1989թ.	2016թ.		
1 ՌԴ	147400	146390	8967	12108	-0,02	+1,3
2 Ուկրաինա	51707	42462	2603	2866	-0,6	+0,3
3 Բելառուս	10200	9499	1613	1959	-0,2	+0,8
4 Ուզբեկստան	19905	30575	2079	2371	+2,0	+0,5
5 Ղազախստան	16536	18044	1132	862	+0,3	+10,1
6 Վրաստան	5443	3920	1263	1082	-1,0	-0,5
7 Ադրբեջան	7038	9962	1759	2204	+1,6	+1,0
8 Մոլդովա	4338	4064	722	678	-0,2	-0,2
9 Ղրղզստան	4290	6089	626	923	+1,5	+1,8
10 Տաջիկստան	5109	8769	605	789	+2,6	+1,1
11 Հայաստան	3449	3037	1218	1074	-0,4	-0,4
12 Թուրքմենստան	3534	5477	405	743	+2,0	+3,1
13 Լիտվա ⁶	3690	2803	583	523	-0,9	-0,4
14 Էստոնիա	1573	1304	503	419	-0,6	-0,6
15 Լատվիա	2680	1933	915	641	-1,0	-1,1
Ընդամենը	285921	294328	24993	29241	+0,1	+0,7

Մահմեդականների թվում գերակշռող են սունիները, իսկ քրիստոնյաների թվում՝ ուղղափառները: Մահմեդականների թվի աճ գրանցվել է ինչպես մահմեդական մեծամասնություն կազմող հանրապետություններում, այնպես էլ քրիստոնյա մի շարք հանրապետություններում: ԱՊՀ և Մերձբալթյան հանրապետությունների էթնոդավանաբանական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում: Ներկայացվող ժամանակահատվածում շեշտակի ավելացել է կրոնական, մասնավորապես քրիստոնեական և մահմեդական աղանդների և հոսանքների թիվը: Շատ դեպքերում խնդիրներ են առաջանում ավանդական եկեղեցու և կրոնական աղանդների միջև:

Աղյուսակ 2-ից երևում է, որ քրիստոնյաների թվի շեշտակի նվազում և մահմեդականների թվի շեշտակի աճ գրանցվել է Ղազախստանում, միջինասիական հանրապետություններում և Ռուսաստանում: Քսան տարիների ընթացքում Ղազախստանում քրիստոնյաների թիվը պակասել է 4,2 մլն մարդով կամ 2,1 ան-

⁴ Այս և մյուս աղյուսակները կազմելիս օգտագործվել են *Население СССР: По данным Всесоюзной переписи населения Н 31 1989 г. /Госкомстат СССР. М.; Финансы и статистика, 1990; Межгосударственный статистический комитет СНГ. Население и социальные индикаторы стран СНГ и отдельных стран мира 2011-2014. М. 2015; <http://www.cisstat.com/> նյութերը:*

գամ, միջինասիական հանրապետություններում համապատասխանաբար՝ 2,4 մլն մարդով կամ 2,6 անգամ և ՌԴ-ում՝ 12,7 մլն-ով կամ 9,7%-ով: Քրիստոնյաների թվի էական նվազում գրանցվել է Տաջիկստանի և Ղրղզստանի հանրապետություններում, ինչը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-տնտեսական ծանր վիճակով, այլև միջէթնիկական հակամարտություններով: Անկախացման տարիներին կրոնական, մասնավորապես ծայրահեղ մահմեդականության գործոնի ազդեցությունը թվարկված պետություններում նկատելիորեն աճել է:

Աղյուսակ 2

ԱՊՀ և Մերձբալթյան հանրապետությունների բնակչության
էթնոդավանաբանական կազմի շարժընթացը

	Երկիր	Քրիստոնյա բնակչություն		Մահմեդական բնակչություն		Այլ դավանանքի բնակչություն	
		Մարդ	%	մարդ	%	Մարդ	%
Ադրբեջան							
1	1989թ.	1357465	19,3	5598469	79,9	65244	0,8
	2009թ.	926747	10,3	7974500	89,5	21200	0,2
Վրաստան							
2	1989թ.	4838835	89,6	413306	7,7	148700	2,7
	2009թ.	3430697	92,3	242098	6,6	41009	1,1
Ուկրաինա							
3	1989թ.	50504283	98,3	340877	0,6	541517	1,1
	2009թ.	46739741	98,8	398603	0,9	151187	0,3
Մոլդովա							
4	1989թ.	4034340	93,0	151830	3,6	151770	3,4
	2009թ.	2338590	83,3	210560	14,8	54672	1,9
Բելառուս							
5	1989թ.	9981946	98,5	28716	0,3	130327	1,2
	2009թ.	9218350	99,5	20400	0,2	22977	0,3
Լիտվա							
6	1989թ.	3645306	99,2	6791	0,2	22705	0,6
	2009թ.	2998096	98,5	3682	0,1	41651	1,4
Լատվիա							
7	1989թ.	2607172	97,8	-	-	59300	2,2
	2009թ.	1921128	96,7	-	-	12898	3,3
Էստոնիա							
8	1989թ.	1534024	97,9	-	-	18411	2,1
	2009թ.	1284921	97,6	-	-	27027	2,4
Ղազախստան							
9	1989թ.	8403708	51,0	7764279	47,2	296477	1,8
	2009թ.	4229098	23,9	13217903	74,9	223578	1,2
Ուզբեկստան							
10	1989թ.	1967053	9,9	17087713	89,4	134311	0,7
	2009թ.	967437	3,2	28863472	96,3	163691	0,5
Թուրքմենստան							
11	1989թ.	422983	11,9	3085524	87,7	14210	0,4
	2009թ.	209300	4,0	245700	95,0	55500	1,0
Ղրղզստան							
12							

	1989թ.	1125894	26,4	3113506	73,2	18355	0,4
	2009թ.	381674	6,3	5620849	93,5	16957	0,2
Տաջիկստան							
13	1989թ.	476333	9,4	4602492	90,4	13778	0,2
	2009թ.	37235	0,4	7521386	99,5	5881	0,1
Հայաստան							
14	1989թ.	3219916	97,5	84860	2,5	-	-
	2009թ.	3016692	99,9	2162	0,1	-	-
Ռուսաստանի Ղաշնություն							
15	1989թ.	130549824	88,4	13795314	10,3	2676731	1,3
	2009թ.	117811966	82,3	21231420	15,7	3813150	2,0

Հիմնականում քրիստոնյաներով բնակեցված 6 պետություններում է, որ բնակչության բացարձակ թիվը նվազել է՝ Մոլդովայում 6,3%-ով, Ուկրաինայում՝ 26,6 %-ով, Հայաստանում՝ 11,9-ով, Բելառուսում՝ 7,1-ով, Վրաստանում՝ 28-ով և Ռուսաստանում՝ 1,8%-ով: Բնակչության թիվը պակասել է նաև նախկին Միության՝ քրիստոնյաներով բնակեցված բալթյան երեք հանրապետություններում: Բացառությամբ Ռուսաստանի, ԱՊՀ մյուս հինգ, հիմնականում քրիստոնյաներով բնակեցված հանրապետություններում բնակչության թվի նվազման միտումը կայուն և երկարատև բնույթ է կրում: Նախկին միության հանրապետությունների մայրաքաղաքներում իրավիճակն ունի հետևյալ պատկերը. հետազոտվող ժամանակահատվածում ավելացել է բոլոր հանրապետությունների, բացառությամբ Թբիլիսիի, Երևանի, Քիշինևի և բալթյան երկրների մայրաքաղաքների բնակչության թիվը: Բնակչության թվի աճի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում: 1989-2016թթ. Աստանայի բնակչության թիվն աճել է 3,7 անգամ, Մոսկվայինը, Բաքվինը և Ղուշանբեխինը՝ 1,3 անգամ:

Այժմ վերոնշյալ երկրներում ազգային կազմի փոփոխությունների մասին. Տարածաշրջանում բնակվող ազգությունների թվաքանակը հիմնականում պայմանավորված է էթնոհակամարտություններով, էթնոժողովրդագրական և էթնոմիգրացիոն գործոններով: Ըստ էության, ազգությունների տերիտորիալ պահանջները միմյանց նկատմամբ բերում է հակամարտությունների խորացման⁵: Այդպիսի հակամարտություններից են ռուս-ուկրաինականը, վրաց-աբխազականը և վրաց-օսեթականը: Էթնիկական հակամարտության պատճառ կարող է հանդիսանալ սովյալ հանրապետությունում որևէ էթնոսի անկախ էթնոտերիտորիալ միավոր ստեղծելու ցանկությունը: ԱՊՀ-ում այդպիսիներից է Արցախի և Ադրբեջանի հակամարտությունը:

Ս. Ալեքսերը տարբերակում է էթնիկական հակամարտությունների հետևյալ տեսակները՝ էթնոտերիտորիալ, էթնոտնտեսական, էթնոսոցիալական, էթնոքաղաքական, էթնոմշակութային, էթնոկրոնական, էթնոժողովրդագրական, էթնոմիգրացիոն և այլն⁶: ԱՊՀ և Մերձբալթյան հանրապետություններում թվար-

⁵ Лучшева Л. Современные концепты причин этнических конфликтов. Вестник экологии, право и социологии. N 1, М., 2015, стр. 208.

⁶ Նույնը:

կաճ հակամարտությունների բոլոր տեսակներն առկա են, և դրանք իրենց ազդեցությունն են թողնում ազգությունների թվաքանակի վրա:

Աղյուսակ 3-ից երևում է, որ ռուսների թիվը պակասել է ոչ միայն իրենց հայրենիքում, այլև ԱՊՀ և Մերձբայթյան հանրապետություններում: Ըստ 1989թ. Համամիութենական վերջին մարդահամարի՝ ռուսների թիվը կազմել է 145,1 մլն, որից 119,8 մլն կամ 82,5%-ը բնակվել է ՌԽՖՍՀ-ում, իսկ 25,3 մլն (17,5%-ը) Միության մյուս հանրապետություններում, 2009թ. համապատասխանաբար՝ 126,3 մլն (91,6%) և 10,5մլն(8,4%):

Աղյուսակ 3

ԱՊՀ երկրների բնակչության էթնոլեզվական կազմի շարժընթացը
(XXII. վերջ-XXI. սկիզբ)

	Էթնոլեզվական խմբեր	1989թ.	2009թ.	Տարբերությունը 2009թ.-ին 1989թ. համեմատ	Տարեկան միջին աճը %
		հազ.մարդ	հազ.մարդ	հազ.մարդ	
	Ընդամենը	285743	294328	+ 8585,0	0,1
I.	Հնդեվրոպական լեզվաբնույթ	217962,0	198167,5	-19745,5	-0,4
1	Սլավոնական լեզվախումբ	201278	176635	-24643,0	-0,6
	Ռուս	145155	126377	-18778,0	-0,6
	Ուկրաինացի	44186	40266	-3920,0	-0,4
	Բելառուս	10036	8479	-1557,0	-0,7
	Լեհ	1528	765	-763,0	-2,5
	Բուլղարացի	373	273	-100,0	-1,3
2	Իրանական լեզվախումբ	5136,4	8994,2	+3857,8	+3,8
	Տաջիկ	4218	8126	+3908,0	+4,6
	Օսեր	598	576	-22,0	-0,2
	Քուրդ	153	59,1	-93,9	-3,1
	Թաիշ	22	112,0	+90,0	+20,5
	Եզդի	45,4	47,4	+2,0	+0,2
	Այլ	100,0	73,5	-26,5	-1,3
3	Հայկական խումբ	4623	4468	-155,0	-0,2
4	Բայթյան խումբ	4526	4010	-516	-0,6
5	Ռոմանական խումբ	3498	2889	-609,0	-0,9
6	Գերմանական խումբ	2039	457,5	-1581,5	-3,8
7	Հունական խումբ	358	116,3	-241,7	-3,4
8	Հնդարիական խումբ /գնչու/	262	287,7	+25,7	+0,5
10	Հրեական խումբ	1378	309,8	-1068,2	-3,9
II	Այթյան լեզվաբնույթ	50379,6	73165,4	+22785,8	+2,3
11	Թուրքական խումբ	49195,6	71778,9	+22583,3	+2,3
	Ուզբեկ	16698	28119	+11421,0	+3,4
	Ղազախ	8136	13560	+5424,0	+3,3
	Ադրբեջանցի	6770	9271	+2501,0	+1,8
	Ղրիմի թաթար	272,0	258,2	-14,0	-0,2
	Թաթար	6649	6043,0	-606,0	-0,4
	Ղարափափախ	424,0	509,1	+85,1	+1,0
	Գագաուզ	198	242,4	+44,4	+1,1
	Թուրքմեն	2729	4217	+1488,0	+2,7
Ղրղրզ	2529	4415	+1886,0	+3,7	

	Չուվաշ	1842	1601	-241,0	-0,6
	Բաշկիր	1449	1610	+161,0	+0,5
	Թուրք	208,0	465,1	+253,5	+6,1
	Ղունգան	69,0	133,8	+64,8	+4,7
	Կումիկ	282,0	503,0	+221,0	+3,9
	Այլ	990,6	831,3	-159,3	-0,8
12	Սոնդուլյան խումբ	1184,0	1386,5	+202,5	+0,8
	Բուրյաթ	421	461,3	+40,3	+0,4
	Կալմիկ	174	183,3	+9,3	+0,3
	Յակուտ	382,0	478,0	+96,0	+1,2
	Տուվացի	207,0	263,9	56,9	+1,4
III	Ուրալյան լեզվաընտանիք	4522,3	3425,7	-1096,6	-1,2
13	Ֆիննաուգրական խումբ	4411,7	3331,6	-1080,1	-1,2
	Սորովա	1154	745,1	-408,9	-1,7
	Հունգարացի	171,0	156,6	-14,4	-0,4
	Էստոնացի	1027	926,5	-100,5	-0,5
	Ուլմուրս	747	552,2	-194,8	-1,3
	Այլ	1533,9	1139,4	-394,5	-1,2
IV	Կովկասյան լեզվաընտանիք	7396,4	8074,4	+678	+0,4
15	Քարթվելյան խումբ	3997,0	3441,5	-555,5	-0,7
16	Նախական խումբ	2724,0	3805,8	+1081,8	+2,0
	Չեչեն	957	1464,1	+507,1	+2,6
	Ավար	601	654,0	+53,0	+0,4
	Ինգուշ	237,0	459,9	+222,9	+4,3
	Լեզգի	466	489,7	+23,7	+0,2
	Այլ	463,0	738,1	+275,1	+3,0
17	Աբխազաադիգեյական խումբ	675,4	827,1	+151,7	+1,1
		391	516,8	+125,8	+1,6
	Ադիգեյ	125	124,8	-0,2	-
	Չերքեզ	55,4	73,1	+17,7	+1,6
	Աբխազ	105	112,4	+7,4	+0,5
	այլ էթնոսներ	4712,0	9034,2	+4322,2	+4,6

Տեղաբնիկ ազգությունների տեսակարար կշիռն իրենց հանրապետություններում տարեցտարի ավելանում է, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության: ԱՊՀ հանրապետություններից ամենամիատարր էթնիկ կազմ ունեցող հանրապետությունը Հայաստանն է: Եթե 1989թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով հայերը կազմել են Հայկական ԽՍՀ ազգաբնակչության 93,3%-ը, ապա 2011թ.՝ 98,1%-ը: Իսկ նույն ցուցանիշը մյուս հանրապետություններում 1989թ. չի գերազանցել 85%-ը:

Դիտարկենք ԱՊՀ մի շարք հանրապետությունների բնակչության էթնո-ժողովրդագրական լուրջ փոփոխությունները: Վերջին 60 տարիների ընթացքում Ադրբեջանում տեղի են ունեցել ադրբեջանցիների թվի քանակական աճ և բազմազգ հանրապետությունից միատարրացման անցնելու գործընթաց: 1959թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով նրանց թիվը կազմել է հանրապետության ամբողջ բնակչության թվի 67,5%-ը⁷, 1989թ.՝ 82,7%⁸, 1999թ.՝ 90,6%⁹ և

⁷ <http://fca.narod.ru>

⁸ <http://demoscope.ru>

2009թ.՝ 91,6%¹⁰: 1989-2009թթ. ընկած ժամանակահատվածում, հայ-ադրբեջանական հակամարտությամբ պայմանավորված, այնտեղ հայեր գրեթե չեն մնացել, իսկ ռուսների թիվը պակասել է 3,3 անգամ՝ 392 հազարից հասնելով 119 հազարի¹¹: 1980-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ-ում քանակով երկրորդ ազգությունը հայերն էին, երրորդը՝ ռուսները, իսկ այժմ երկրորդը՝ լեզգիներն են: Հատկանշական է, որ ներկայացվող ժամանակահատվածում, պաշտոնական վիճակագրության համաձայն, շեշտակի ավելացել է իրանալեզու թալիշների թիվը: 1989թ. Համամիութենական մարդահամարի տվյալների համաձայն՝ այն կազմել է մոտ 21,1 հազար, իսկ 2009թ.՝ 112 հազար մարդ¹²: Հասկանալի է, որ թալիշների թվի ավելացումը բնակչության բնական աճի և ներգաղթի հաշվին չէր կարող լինել: Հայտնի է, որ խորհրդային տարիներին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում իրականացվել է ազգային ուժացման քաղաքականություն¹³: Այսպես, Ուզբեկստանում բնակվող տաջիկների մեծ մասի անձնագրերում ազգության դիմաց գրվել է ուզբեկ: Ինչպես տաջիկներն էին ասում. «Անձնագրով ուզբեկ ենք, իսկ ազգությամբ՝ տաջիկ»¹⁴: Նշենք, որ Ուզբեկստանի իշխանությունների նման վերաբերմունքը տաջիկների հանդեպ 1980-ական թվականների վերջին հանգեցրեց նրանց բողոքին, ինչն առիթ հանդիսացավ ուզբեկ-տաջիկական բախումների¹⁵: Նույնպիսի վիճակ առկա էր նաև Ադրբեջանական ԽՍՀ-ում: Անկախացման տարիներին թալիշների ճնշող մեծամասնությունը մարդահամարի անցկացման ժամանակ հայտնել էր, որ թալիշ է, սակայն նրանց «ադրբեջանացումը» ներկայումս ակտիվ գործընթաց է այդ երկրում:

Բելառուսում 1989-2009թթ. նվազել է բելառուսների բացարձակ թիվը, իսկ տեսակարար կշիռը՝ մեծացել: Այդ հանրապետությունում շեշտակի նվազել է հրեաների թիվը՝ մոտ 1,1 մլն-ից իջնելով 12,9 հազարի¹⁶: Նվազման հիմնական պատճառը նրանց արտագաղթն է՝ գլխավորապես Իսրայել: Բացի հրեաներից՝ նվազել է ռուսների և լեհերի թիվը, իսկ թուրքմեններին ու չինացիներինը ավելացել է¹⁷:

Առավել բարդ և լրջագույն էթնիկական տեղաշարժեր են գրանցվել Ղազախստանի Հանրապետությունում: Այդ երկրում տարեցտարի ուժեղանում է տեղաբնիկ էթնոսի միատարրացման գործընթացը: Այսպես, ըստ 1959թ. Համամիութենական մարդահամարի տվյալների՝ ղազախները կազմել են ամբողջ բնակչու-

⁹ <http://www.cisstat.com>

¹⁰ Նույնը:

¹¹ *Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав населения по республикам СССР, М., 1991, стр. 156; Censuses of Republic of Azerbaijan 1979, 1989, 1999, 2009, Azstat.org*

¹² Նույնը:

¹³ *Рахимов Р., К вопросу о современных таджикско-узбекских межнациональных отношениях, стр. 13-25, Советская этнография N 1, М.1991г.*

¹⁴ *Նույն տեղում, էջ 12:*

¹⁵ *Նույն տեղում, էջ 13:*

¹⁶ *Белстат. Предварительные итоги переписи населения Беларуси 2009 г.*

¹⁷ Նույնը:

թյան թվի 30%-ը¹⁸, 1989թ. համապատասխանաբար 39,4%¹⁹ և 2009թ.՝ 63,1%²⁰: Ներկայացվող ժամանակահատվածում շեշտակի նվազել է գերմանացիների և ռուսների թվաքանակը, ինչը պայմանավորված է 1990-ական թթ. արտագաղթով:

Այսպիսով՝ XXդ. վերջին և XXIդ. սկզբին ԱՊՀ և Մերձբալթյան հանրապետություններում, էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ գործոններով պայմանավորված, տեղի են ունեցել էթնիկական կազմի էական փոփոխություններ: Ներկայացվող ժամանակահատվածում շեշտակի նվազել է սլավոնական ժողովուրդների՝ մասնավորապես ռուսների թիվը և ավելացել է մահմեդականների՝ հատկապես թուրքալեզու ժողովուրդների թվաքանակը: Ներկա միտումների պահպանման դեպքում բացառված չէ, որ XXIդ. կեսին քրիստոնյաների և մահմեդականների, սլավոնական և թուրքալեզու ժողովուրդների թիվը հավասարվի:

СДВИГ ЭТНИЧЕСКОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ СТРАН СНГ И РЕСПУБЛИК ПРИБАЛТИКИ (Конец XX в. и начало XXI в.)

___ *Резюме* ___

___ *А. Бояджян* ___

В конце XX в. и в начале XXI в. в этническом составе стран СНГ и в республиках Прибалтики произошли значительные изменения, обусловленные этнодемографическими, социально-экономическими, геополитическими и другими факторами. В указанный период резко понизилась численность славянских народов, в частности число русских, и значительно увеличилось число мусульман – особенно тюркоязычных народов. При сохранении нынешних тенденций не исключается, что в середине XXI в. число христиан и мусульман, славянских и тюркоязычных народов сравняются.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բոյաջյան Արտաշես Գևորգի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
E-mail: a.bojajyan@mail.ru

¹⁸ Всесоюзная перепись населения 1959 года. Национальный состав населения по республикам СССР, Казахская ССР.

¹⁹ Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав населения по республикам СССР, М.1991г., стр. 156.

²⁰ <http://demoscope.ru>

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանկավարժական գիտությունների զարգացմանը հետևող և պատմափիլիսոփա հայ գործիչները 19-րդ դարի երկրորդ կեսին հատուկ խնամածությամբ աշխատում էին ստեղծել մի սոցիալական միջավայր, որտեղ իր արժանի տեղն ունենար քաղաքացիական բարձր գիտակցությամբ անհատը: Գրագետ, տեղեկացված հայ քաղաքացիական հասարակությունն առաջնորդելու փափագը նրանց դադար չէր տալիս:

Ազգի արժանապատվությունը և ինքնագնահատականը բարձրանում են, եթե նրա ներկայացուցիչները լավ ծանոթ են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությանը, այսինքն՝ պատմական հիշողության կրող են: Ազգին իր բնավորության լավագույն գծերին կապող միջոցներից են գրադարանները («թանգարան», «ընթերցարան», «մատենադարան-ընթերցարան», «գրադարան-ընթերցարան», «գրատուն-ընթերցարան»): Դա ըմբռնել էր նաև Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական միտքը. քաղաքի վերաբնակեցման օրերից այստեղ մշակութային բարիք էին ստեղծում Հայաստանեայց առաքելական եկեղեցու սպասավոր հոգևորականները: Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ Սուքիաս վարդապետ Պարզանցի նախաձեռնությամբ 1873-1877թթ. ընթերցարան է բացվում հոգևորականների համար: Երկար ընդմիջումից հետո Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ Աշոտ վարդապետ Շախյանի հովանավորությամբ 1895-1896թթ. գրադարան-ընթերցարան է բացվում հոգևորականության համար Ալեքսանդրապոլի Սբ Աստվածածին եկեղեցու գավթում:¹ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանի կարգադրությամբ գրադարանին է հատկացվում Սբ Աստվածածնի պատկերից ստացվող եկամտի 1/10 մասը (տարեկան մոտ 300-400 ռուբլի): Գրադարանի պահպանությանն էին ուղղվում նաև քաղաքի (տարեկան 2ռ.) և գյուղերի (տարեկան 1ռ.) քահանաներից ստացվող անդամավճարները: Գրադարան-ընթերցարանն իր նախորդից ժառանգել էր 300 գիրք: Ստացվում էին 10 անուն հայերեն և ռուսերեն պարբերական հրատարակություններ, գնվել էր 200 ռուբլու ընտիր գրականություն:²

Հարուստ գրադարաններ ունեին նաև Ալեքսանդրապոլի բազմաթիվ հայտնի ընտանիքներ (Գորոեաններ, Կոստանեանցներ, Դրամբեանցներ) ու անհատներ: Գրադարաններ ունեին քաղաքի պետական և Մայր Աթոռ Սբ Էջմիածնի իրավասության շրջանակներում գործող գրեթե բոլոր դպրոցները, քաղաքային ակումբը: Այդտեղ կարելի էր գտնել դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գեղարվեստական գրականություն, պարբերական հրատարակություններ

¹ Վ. Ս., *Ալեքսանդրապոլ, 5 մարտի, «Նոր Դար», Թիֆլիս, 1896, № 47, էջ 3:*

² *Նույնը:*

(թերթեր, ամսագրեր, հանդեսներ, տարեգրքեր), ոչ մեծ քանակությամբ գիտական գրականություն՝ հիմնականում հայերենով և ռուսերենով:

Ալեքսանդրապոլում քաղաքային եկամուտների հաշվին առաջին գրադարան-ընթերցարանը բացվել է 1901թ. հունվարի 14-ին:³ Ալեքսանդրապոլի 20 տարի հարցը մամուլում («Մշակ», «Մեղու Հայաստանի», «Նոր Դար») արծարծելուց և Երևանի նահանգապետի հետ բանակցություններից հետո միայն կարողացան բացել այդ գրադարան-ընթերցարանը: Հարցի լուծման ձգձգումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ռուսական կայսրությունում գրադարանները ենթարկվում էին Ժողովրդական լուսավորության և Ներքին գործերի նախարարություններին, իսկ պետական այդ մարմինների պաշտոնյաներն առանձնակի «ջերմությամբ» նվազեցնում էին կայսրությունում ապրող ազգերի, այդ թվում հայերի սոցիալական և մշակութային դերակատարությունը:

Ալեքսանդրապոլի գրադարան-ընթերցարանների կազմակերպիչները մշակութային-լուսավորական ընկերություններն էին, մասնավոր անձինք, կրթական գործիչները և հոգևորականները: Մինչև 1901թ. բացված գրադարան-ընթերցարանները չունեին եկամտի կայուն աղբյուրներ, գրքային հավաքածուները համարվում էին մեծ դժվարությամբ:

Քաղաքի գրադարան-ընթերցարանները սպառում էին Մ. Էջմիածնի, Կ. Պոլսի, Թիֆլիսի, Վենետիկի, Մոսկվայի, Վիեննայի, Նոր Նախիջևանի, Ս. Պետերբուրգի, Երևանի, Շուշիի, Բաքվի, Զմյուռնիայի, Փարիզի, Ալեքսանդրապոլի, Թեոդոսիայի տպագրական արտադրանքը:

Ալեքսանդրապոլում բացված գրադարան-ընթերցարանները լուծում էին հետևյալ խնդիրները.

1. հասարակության մեջ առաջադիմական մտքերի գեներացում,
2. աշխատանքից հետո արհեստավորների և առևտրականների ժամանցի կազմակերպում,
3. կիրթ հոգևոր առաջնորդների պատրաստում,
4. ազգին նվիրյալ սերնդի դաստիարակում:

Մատենադարանում և Հայաստանի ազգային արխիվում պահվող ներքոբերյալ 7 փաստաթղթերից 6-ը առաջին անգամ լուսաբանում են Ալեքսանդրապոլի Հոգևոր դպրոցի և 1873-1877թթ. հոգևորականների համար բացված ընթերցարանների գործունեությունը: Վերջինը «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղի կազմած գրատուն-ընթերցարանի կանոնադրությունն է, որը, սակայն, չհաստատվեց Երևանի նահանգապետի կողմից: Այս արխիվային վավերագիրը կարևոր է նրանով, որ հետագայում դրվեց Ալեքսանդրապոլի քաղաքային գրադարան-ընթերցարանի կանոնադրության հիմքում:

³ «Նոր Դար», 1901, № 12, էջ 2:

№1

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ի 19 ապրիլի 1873 ամի
յԱղէքսանդրապօլ

№30

Նորին Վեհափառութեան Սրբազնակատար Կաթողիկոսի ամենայն Հայոց և Օսյրագոյն պատրիարքի Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի Տեառն Տեառն Գեորգայ Դ-ի
ի Փոխանորդէ վիճակին Աղէքսանդրապօլու
Յայտարարութիւն

Ըստ կանոնադրութեան վիճակային Հոգևոր դպրոցի քաղաքիս արդէն հաստատեցելոյ Հայրապետական կոնդակաւ վեհապետիդ՝ թէն դպրոցն ունի զիրաւունս բանալ զմատենադարան ի պէտս ընթերցանութեան աշակերտելոցն և ուսուցաց, սակայն ցանկալով իմ տարածանել հայազգի ժողովրդեան քաղաքիս զվոյթ և զեռանդն ընթերցասիրութեան յ2-ն այսր ապրիլի ժողով կազմեալ յակնաւորաց հասարակութեանն խմբագրեցաք զնորոգ կանոնադրութիւն մատենադարանի ըստ որոյ ստանան իրաւունս և բնակիչք տեղոյս նիւթականապէս տարեկան տրուվք օգնել բարգաւաճութեան գրանցի դպրոցին և բարոյապէս շահիլ զհրահանգութիւն վարուց և զարգացման մտաց վերծանութեամբք գրոց և լրագրաց: Զյիշատակեալ կանոնադրութիւնն ի միասին ընդ յանձնատական թերթին ստորագրեցելոյ յուսումնասէր պատուելեացն Հայոց Աղէքսանդրապօլու ըստ այսմիկ մատուցեալ Վեհաստիճան Քահանայապետիդ Ազգիս, ամենախոնարհաբար խնդրեմ զբարեհաճ տնօրէնութիւն Տեառնդ իմոյ առ ի հաստատել զայն և վերադարձուցանել ի գործադրութիւն ընդ յատկացեալ հովանաւորութեամբ ազգայնամ պաշտպանութեան Ձերոյ նպատակաւ անարգել և անխափան շարունակութեան նորին:

Ձերում Վեհափառ Տէրութեան ամենախոնարհ ծառայ Սուրբիս վարդապետ Պարզեանց

Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 224, վավերագիր 3, թղթապանակ 1: Բնագիր: Ձեռագիր:⁴

№2

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Աղէքսանդրապօլու վիճակային դպրոցի ընթերցարանի կանոնադրութիւնը

1. Աղէքսանդրապօլու Հայազգի հասարակութիւնից ամէն ոք կարող է անդամ համարուիլ վիճակային դպրոցի ընթերցարանին, ով որ կվճարէ տարեկան երեք ռուբլի: Այսպիսի անդամք տեղական Փոխանորդի հրաւիրանօք դպրոցի Հոգաբարձուաց հետ ի միասին խառն ժողով կազմելով, յորում կնախագահէ Փոխանորդը, իրանց միջից ձայնից առաւելութեամբ կընտրեն մի մասնաժողով չորս հոգուց բաղկացած և նրան կյանձնեն ընթերցարանի կառավարութեան հոգսը: Ընթերցարանը կգտնուի դպրոցի շինութեան սենեակների մէկի մէջ և կլինի անվարձ: Դպրոցի կառավարութիւնը կյանձնէ մասնաժողովին և հարկաւոր թուով ժապաւինեալ մատեններ, դպրոցական կնքով դրոշմուած:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

⁴ Արխիվային այս վավերագրի թերթերի համարակալումը պայմանական է՝ կատարված մեր կողմից: Բնօրինակի թերթերը համարակալած չեն:

2.Մասնաժողովի անդամք կընտրուին մի տարի ժամանակով: Դոքա իրանց միջից մեկին կընտրեն զանձապահ և կըվարձեն մի մատենապահ, պատասխանատու մնալով նոցա թերութեանց մասին եթէ պատահի: Իւրաքանչիւր ամսում մի նախապէս որոշեալ օր նիստ կունենան և կվերազննեն նախընթաց ամսում կատարուած գործերը և իրանց արած նկատողութիւնքը օրագրութեան մէջ կանցնեն: Տարին մէկ անգամ և այն տարուայ վերջին լիակատար հաշիւ կտան խառն ժողովին, որից յետոյ կլինի նոր ընտրութիւն մասնաժողովի, որի հին անդամներն ևս կարող են ընտրելի համարուիլ:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

3.Խառն ժողովը իւրաքանչիւր տարուայ վերջին կընտրէ նոր մասնաժողով, քանի մի պայմաններ աւելացնելով կամ պակասեցնելով եթէ արժան դատէ: Ամէն մի տնօրէնութիւն, որ կհայի ընթերցարանի ծախուց արդէն յայտնի եղածից աւելացմանը, պէտք է խառն ժողովի թոյլտուութեամբ լինի:

ԱՆԴԱՄ

4.Երկու կարգի անդամք կարող են լինել. ա) Տարեկան թոշակատու, որոնք տարեկան երեք բուրի կանխիկ կվճարեն և բ) ամսական թոշակատու, որոնք ամսական քսան և հինգ կոպէկ կանխիկ կվճարեն: Առանց վարձի կարողէն շահուիլ ընթերցանութեամբ՝ մասնաժողովին արդէն ծանօթ՝ անկարող անձինք մասնաւորապէս և ուսումնարանաց ուսանողք կամ ուսանողուհիք ընդհանրապէս: Ամսական թոշակատու անդամները ձայն ունենալու իրաւունք չունին ժողովների մէջ:*

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԸ և ԵԼՔԸ

5.Ընթերցարանի մուտքն է անդամների տարեկան և ամսական տուրքերը և կամաւոր նուէրները: Տարեկան ծախքը պէտք է հաւասարի տարեկան եկամտի երեք չորրորդական մասին, որից մի չորրորդականը անակնկալ ծախքերի համար, որ կարող է անել մասնաժողովը, իսկ մէկ յաւելուած չորրորդական մասը կյետաձգուի ամէն տարի, որ դորանից կազմուի մի տոկոսաբեր դրամազուլիս: Եթէ երբ և իցէ այդ դրամազուլիսը հասնի այնպիսի մի քանակութեան, որ նորա տարեկան շահը կարողանայ լցուցանել ընթերցարանի տարեկան ծախքը, այնուհետև հասարակութեան բոլոր անդամներն կարող են օգտուել ընթերցարանից ձրիապէս իսկ ընթերցարանի անդամները կընդհատեն իրանց սովորական տուրքը: Բայց սորա հակառակ եթէ պատահի որ ընթերցարանի թոշակատու անդամոց թիւը, կամ տարեկան եկամուտը, այնքան նուազի, որ չծածկէ տարեկան ծախքը. այնուհետև ընթերցարանը իւր բոլոր հարստութեամբ կենթարկուի հոգևոր դպրոցի կառավարութեան միակ իշխանութեան և տնօրէնութեան:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՔԵՐԻ

6.Ընթերցանելի գրեանք ընդհանրապէս պէտք է լինի այնպիսիք, որոնք արգելուած չլինեն քաղաքական կամ Հոգևոր իշխանութեան հրամանով: Գրքերի ընտրութիւնը կլինի տարին մէկ անգամ հետևեալ կերպով. մասնաժողովը աչքի առաջն ունենալով իւր դրամական կարողութիւնը կընտրէ ամենահարկաւոր գրքերը միշտ նախապատուելով առաւել ընթերցանելիքը և մի ցուցակ կազմելով կառաջարկէ խառն ժողովին. խառն ժողովը կարող է խափանել այս կամ այն գրքի բերել տալը և առաջարկել նորա տեղ աւելի կարևորագոյնը: Բայց այս տեսակ վճիռները պէտք է լինին ձայների առաւելութեամբ, ներկայ պէտք է լինի

*Ծանօթ. Մի անգամ ընդ միշտ ո՛չ պակաս քան յիսուն մանէթ նուէր տուողը կհամարուի Վշտական պատուաւոր անդամ ընթերցարանի:

անդամների մեծ մասը կամ գոնե ո՛չ պակաս երրորդ մասից, որոնց հետ հաւասար ձայն ունեն և մասնաժողովի անդամք*:

ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

1. Մասնաժողովն պետք է ունենայ տպագրուած տոմսակներ իւրաքանչիւր Անդամի տալու թէ՛ որպէս ստացական և թէ՛ որպէս նշան իրանց օգտուելու ընթերցարանից: Այդ տոմսակի վերայ տպուած կլինի անդամի պարտաւորութիւնը, թէ գիրքը չպետք է կեղտոտացնէ, վերան բան գրէ, պատռէ, կորցնէ և այլն թէ այսպիսի թերութեանց համար պարտաւորէ վճարել գրքի գինը: Այդ տոմսակի վերայ կգրուի Անդամի անուան համարը և գանձապահի ստորագրութեամբ կը յանձնուի նորան:

2. Մասնաժողովի անդամք իրաւունք չունեն սեպիական անունով բերել տալու ընթերցարանի վերաբերելիքները, այլ պետք է ապսպրուին հասցէիս «ի մատենադարանն վիճակային Դպրոցին Հայոց Աղէքսանդրապօլու». եթէ ուղարկուածները բաց ծրարներն ինչպէս են պարբերական հրատարակութիւնք, այդպիսիք մատենապահը կստանայ և առանց յետաձգութեան ցուցակագրելով կդնէ սեղանների վերայ. իսկ եթէ կնքուած ծրար է կամ նամակ փոստայի յայտարարութեամբ կամ առանց նորան այդպիսիք պետք է ստանայ գանձապահը և մասնաժողովի ներկայութեամբ բանայ:

3. Բոլոր ընթերցանելի գրեանքը և տուն տանելի պարբերական հրատարակութիւնքը պետք է կազմած լինին: Անդամներից ոչ ոք, թէ և մասնաժողովից լինէին, իրաւունք չունեն ո՛չ մի նոր ստացած պարբերական հրատարակութիւն տուն տանելու: Այսպիսիք միայն ընթերցարանուը կարելի է կարողալ մինչև նոցա կազմուելը, որ ըստ մեծութեան կարող է մի ամսականից սկսեալ մինչև մի տարեկանը միասին կազմել:

4. Իւրաքանչիւր անդամ մի անգամէն մի գիրք միայն կարող է տանել ընթերցարանից քանի հատորից էլ որ բաղկացած լինի և այն պահել ոչ աւելի երկու շաբաթից, որից յետոյ պետք է գիրքը վերադարձնէ մատենապահին, եթէ հարկաւոր լինի էլի մինչոյն գիրքը շարունակաբար կարող է տանել դարձեալ երկու շաբաթով, որից յետոյ այլևս զիջողութիւն չի՛ լինի: Եթէ ոք անդամներից առանց մատենապահի թոյլատուութեան երկու շաբաթից աւելի կպահէ, իւրաքանչիւր աւելորդ աւուր համար կվճարէ երեք կոպէկ: Բացառութիւն կլինի այնպիսիների համար որոնք երկու անգամ երկու շաբաթից աւելի պահելու թոյլատուութիւն ստացած կըլինին մասնաժողովից:

5. Ընթերցարանի գրեանց ցուցակը կտպագրուի իւրաքանչիւր տարին մի անգամ և կբաժանուի անդամներին մի մի հաստ, որոյ համար որպէս զին տպագրութեան կըստացուի տասն կոպէկ:

6. Ընթերցարանի դահլիճում պետք է առ ձեռն գտնուի հին և նոր գրեանց ցուցակը ցանկացող կընտրին նորա միջից իրանց հարկաւոր գիրքը, և նորա համարը յայտնելով մատենապահից կստանան իրանց ուզած գիրքը:

7. Ընթերցարանը շաբաթուան ընթացքում երկուշաբթի օրից մինչև ուրբաթ օրը, բաց պետք է լինի առաւօտեան ութ ժամից մինչև տասնմէկը. շաբաթ օրն երեկոյեան 3-ից մինչև 10 ժամը. իսկ կիրակէ օրը առաւօտեան 8 ժամից մինչև 11 և զկնի ճաշուն 3-ից մինչև 10 ժամը:

ՄՄ, Կաթ. դիվ., թղթ. 224, վ.3, թ. 6: Բնագիր: Ձեռագիր:

* Ծանօթ. Մասնաժողովը միանգամ ընդմիջտ իրաւունք ունի Ռուսաստանի սահմաններում հրատարակուող բոլոր Հայ պարբերական թերթերը բերել տալու: Ուստի վերոյիշեալ ընտրութիւնը վերաբերում է գրքեր և օտար լեզուով և կամ արտասահմանում տպուող Հայ լեզուով պարբերական հրատարակութիւններ բերել տալուն: Նա կարող է բերել տալ սակայն մի որևիցէ այլ շարադրութիւն ևս, երբ նոցա համար արդէն ստորագրութեամբ յայտնած կլինին իւրեանց ցանկութիւնը, ընթերցարանի անդամներից գոնէ տասն հոգի:

№3

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՂԵՐԱԿԱՆ ԴԱՍԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մատենադարանի ընթերցանութեան կղերական դասուց Ալեքսանդրապոլ քաղաքի և հոգաբարձութեան որբոց և այրեաց հոգևորականաց վիճակի նորին

Կանոնադրութիւն

Յօդուած 1.

Մատենադարան ընթերցանութեան կղերական տասուց Հայոց Ալեքսանդրապոլու բացեալ լինի ի գաւիթ կամ ի շրջապարսպի միոյ յեկեղեցեաց Հայոց քաղաքիս ըստ արժանադատութեան Տէր փոխանորդի վիճակիս:

Յօդուած 2.

Ի մատենադարանին գտանելոց են զանազանատեսակ ընտիրընտիր մատեանք նախնի և արդի հեղինակութեանց, մանաւանդ կրօնական և բարոյական, սոյնպէս և ազգի ազգի լրագիրք և ամսագիրք Հայոց հրատարակեալք ի սահմանս Տաճկաստանի և Ռուսաստանի միայն թէ չիցեն նոքին արգեալք ի գրաքննական ժողովոյ Պետութեանն Ռուսիոյ և ի մերս Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան:

Յօդուած 3.

Մատենադարանն ընթերցանութեան հիմնի վասն այնք պատճառի և նպատակի, զի քահանայք և այլ եկեղեցական սպասաւորք Հայոց տեղոյս զպարապորդ ժամս իւրեանց չանցուցին ընդունայն ժամավաճառութեամբ ի գայթազդութիւն կրօնասէր ժողովրդոց, այլ ընթերցանութեամբ զանազան օգտաւտ մատենագրութեանց և հրատարակութեանց՝ համաձայն իսկական և սեպուհ պարտաւորութեանց իւրեանց:

Յօդուած 4.

Ի պէտս պահպանութեան մատենադարանին որոշի բաժանորդադրամ վասն իւրաքանչիւրոց քահանայից ամսական տասն կոպէկ, զորս պարտին անտրտունջ հատուցանել կամ յամիս յամսոց և կամ որ առաւել լաւն է ի քառամսեկէ ի քառամսեակ քառասուն կոպէկ կանխիկ. իսկ ստորին եկեղեցական պաշտօնայք ազատին յայսմիկ պարտաւորութենէ, միայն եթէ կամիցին՝ կարէն ըստ կարեաց իւրեանց յօգուտ մատենադարանին առնել զդրամական կամ զայլ կամաւոր նուիրատութիւնս:

Յօդուած 5.

Բացի բաժանորդադրամոց՝ յօգուտ մատենադարանին որոշին նաև դրամք զանձանակաց (րապաղ) շրջեցելոյ յամենայն եկեղեցիս քաղաքիս յաւուրս շաբաթուց, կիրակեկից և այլ նշանաւոր տօնակատարութեանց վասն քահանայական դասուց սոյնպէս և խաչահամբոյրք, որք ի նշանաւոր աւուրս տէրունական և սրբոց տօնից ի բարեպաշտ ժողովրդականաց արկանին ի գանձանակս եղեալս առ տօնելիօք յայնոսիկ աւուրս, ես և արտաքոյ սովորական հասութեանց անակնկալ նուէրք յատկացեալք ի ժողովրդոց յանուն միաբանութեան քահանայից վասն յիշատակութեան հոգւոց ննջեցելոց ի ժամ հաշտարար սուրբ պատարագի:

Յօդուած 6.

Ընդհանուր մուտք մատենադարանին բաժանին ի չորս հաւասար մասունս, յորոց երեք մասն յամի ամի գործադրին ի պէտս գնոց գրեանց, ամսագրոց, լրագրաց և այլոց կարևորաց, իսկ մնացորդ մի մասն պահպանի վասն կազմելոյ զդրամագլուխ:

Յօդուած 7.

Քահանայք կարին նաև ի սեփական մատենից իւրեանց բերել ի մատենադարան և թողուլ անդր ի ժամանակաւորապէս կամ ի մշտենջենաւորապէս ընթերցանութիւն ինքեանց և այլոց ընկերակցաց իւրեանց: Այսպիսի մատեանք գրին յառանձին ժապաւինեալ տումարի եղելոյ ընդ ձեռամբ մատենադարանապետի: Ժամանակաւոր դիտմամբ մատենաբերք երբ և

կամիցին՝ կարին դարձեալ տանել ի տունս իւրեանց ըստ պատշաճին ստորագրելով ի տումարին գտագմանէ:

Յօդուած 8.

Քահանայք կարին տանել ի մատենադարանէ՝ զգանազան գրեանս, զլրագիրս և զամսագիրս ի տունս իւրեանց սակս ընթերցանութեան: Վասն մեծադիր մատենից ընթերցման ի տունս՝ տուեալ լինի ժամանակ եօթնեակս երկու կամ երեք և առ առաւելն մի ամիս, վասն փոքրադիր գրեանց՝ մի եօթնեակ, իսկ վասն լրագրաց և ամսագրաց ո՛չ աւելի քան զառուրս երկու:

Յօդուած 9.

Ստացողք ի մատենադարանէ՝ զգրեանս, զլրագիրս և զամսագիրս պարտին մաքուր և ամբողջ վերադարձուցանել անոր և այն ոչ յետոյ քան զորոշեալ ժամանակամիջոցս, ապա թէ ոչ ի տեղի պատառելոց և կորուսելոցն զնորն զնեցիկն, կամ զգինսն նոցիկն մատուցին, իսկ վասն ոչ դարձուցանելոյ զայնոսիկ ի կանոնաւորեալ ժամանակին՝ տացին տուգանս մատենադարանին ըստ որոշման մասնաժողովոյն:

Յօդուած 10.

Ի համայն միաբանութենէ դասուց քահանայից ընտրին չորեքին քահանայք օրինաւոր քուէարկութեամբ, որք կազմին զմասնաժողովս վասն երեք ամեայ ժամանակաւ հոգալոյ զամենայն պէտս մատենադարանին և զապրուստ որբոց և այրեաց Հոգեւորականաց և տնտեսելոյ զկառավարութիւն նոցիկն ըստ հրահանգութեանց կանոնաց ետելոց ի սմին:

Յօդուած 11.

Մատենադարանն ի պէտս գործադրութեան իւրոյ պարտի ունիլ զիւրն կնիք զայսու վերնագրութեամբ, «Կնիք մատենադարանին կղերական դասուց Հայոց Աղէքսանդրապօլու»:

Յօդուած 12.

Զօր ամենայն կարեն քահանայք զալ ի մատենադարանն և ընթեռնուլ յորոշեալ ժամս, իսկ եթէ ոք ի քահանայից առանց յարգելի պատճառանաց եօթնեակ մի չգայցէ ի մատենադարանն վասն ընթերցանութեան, ենթարկեցի ընդ նկատողութեամբ մասնաժողովոյն որ յառաջնում նուագի խրատէ զայնպիսին ազդարարութեամբ և յերկրորդումն արկանէ ընդ տուգանօք յօգուտ մատենադարանին իսկ երրորդումն՝ յայտնէ զայնմանէ Փոխանորդին կամ Հոգևոր կառավարութեանն՝ վասն խրատելոյ զնա պատշաճաւոր կարգաւ:

Յօդուած 13.

Ի մատենադարանին ընթերցանութիւն լինի ի ծածուկ և ի ձայն բարձր, երբ ընթեռնու մի ոմն բարձրաձայն և այլ ամենայն՝ որք անոր իցեն լսեն լռութեամբ: Ի քննութիւն ինչ իմաստից գրուածոյ հարկադրին չմխիլ կրիւք բանակորութեան, այլ հանդարտութեամբ վիճել ընդ միմեանս զի մի ճշմարտութիւն բանից որպէս ընդ թանձրամած ստուերաւ քողարկեցի ընդ իսաւարաւ կրից: Զանցառուք զայսու կանոնս և անկցին ընդ պատասխանատուութեամբք և ընդ տուգանօք:

Յօդուած 14.

Խստիւ արգելեալ լինի գործադրել ի մատենադարանին բաց ի գրոյ զայլ ամենայն ըմպելիս՝ մանաւանդ զօղի և զգինի, անհնազանտք այսմ կանոնի ենթարկին ընդ դատապարտութեամբ մասնաժողովոյն և տուգանեցի մատենադարանին:

Յօդուած 15.

Մասնաժողով մատենադարանի ընթերցանութեան կղերական դասուց՝ որպէս ի վերայ անոր գրեցաւ ընտրի ի միաբանութենէ քահանայից և հաստատի ի պաշտօն ի փոխանորդէ վիճակիս կամ ի Հոգևոր կառավարութենէ Հայոց քաղաքիս, ընտրողք պարտին արձանագրել յընտրողական թերթ զանուանս այնոցիկ՝ որք ստացեալ իցեն զառաւելագոյն քուէս, զորս և առաջի առնել Փոխանորդի վիճակիս կամ Հոգևոր կառավարութեանն ի հաստատութիւն: Նախորդ անդամք մասնաժողովին համարին վերընտրելի:

Յօդուած 16.

Մասնաժողովն պարտի պահանջել և ստանալ ի մէն մի քահանայից զբաժանորդադրամս անպակաս, հսկել ի վերայ այլոց աղբերաց եկամտից մատենադարանին գտանել ի նորոյ զայլ միջոցս և զաղբիւրս արդեանց. ունիլ ընդ տեսչութեամբ և ընդ պատասխանատուութեամբ իւրով զանկորուստ պահպանութիւն եկամտից մատենադարանին. տալ բերել ընդ ձեռն զանձապետին զանագան գրեանս և լրագիրս և ամսագիրս վասն ընթերցանութեան հոգևորական դասուց և հոգալ զայլ ամենայն ծախս վերաբերեալս բարեկարգ պահպանութեան մատենադարանին:

Յօդուած 17.

Մասնաժողովն պարտի տալ ընտրել միաբանութեան քահանայից ի միջոց իւրմէ և կամ ի նոցունց զգանձապետ մի օրինաւոր քուէարկութեամբ, զստացողն առաւելագոյն քուէից ըստ կարգին հաստատել ի պաշտօն զանձապետութեան ըստ այսմ յօդուածոյ հրահանգութեան տայ ընտրել նաև զմատենապահ մի և հաստատել ի պաշտամանն:

Յօդուած 18.

Մասնաժողովն տայ զանձապահին զերկոսին մատենան ժապաւինեալ և վաւերացուցեալ ստորագրութեամբ անդամոց իւրոց և դրօշմամբ կնքոյ մատենադարանին, յորոց ի միումն պարտի զանձապահն գրել զանուանս անդամակից քահանայից և զքանակութիւնս տարեկան բաժանորդադրամոց հանդէպ անուանց իւրաքանչիւրոցն. իսկ ի միսումն զամենայն մուտս ի բաժանորդադրամոց, ի զանձադրամոց, և ի խաչահամբորից և յայլոց նուիրատուութեանց յօգուտ մատենադարանին, նոյնպէս և զամենայն ելս նորա:

Յօդուած 19.

Ըստ հրահանգութեան վերոյգրեալ յօդուածոյ ի մասնաժողովոյն տվեալ լինին նաև մատենապահին երեքին ժապաւինեալ մատենանք, յորոց ի միում գրին յականէ յանուանէ ըստ տեսակաց և ըստ թուոցն ուրոյն ուրոյն ամենայն գրեանք, լրագիրք և ամսագիրք պատկանեալ մատենադարանին՝ թէ յարդեանց նորա գնեալ իցեն այնոքիկ և թէ ընծայեալք ի քահանայից և յայլոց բարեպաշտից մշտնջենաւորաւ: Յերկրորդումն՝ միմիայն ընծայեալ գրեանք և այլ կարևոր իրեղէնք առանձնակի, եւս և առ ժամանակեայ դիտմամբ եղեալք ի մատենադարանին վասն ընթերցանութեան, իսկ յերրորդումն անուանք մատենից և արտագրութիւնք այնոքիկ, որք ստացեալ իցեն ի մատենադարանէ զայնոսիկ մատենանս դիտմամբ ընթեռնելոյ ի տունս իւրեանց և վերադարձուցանելոյ նշանակելով զժամանակ ստացման և մատուցման:

Յօդուած 20.

Որպէս զանձապահն նոյնպէս և մատենապահն երբ ի պատճառս հիւանդութեան կամ բացակայութեան ի քաղաքէս անձեռնհաս զոցին վարեալ զպաշտօնս իւրեանց, կարին ժամանակաւորապէս յանձնել զայն այլոց քահանայից՝ որոց ինքեանք արժան դատեսցին և հաւատասցին զի յայսպիսի դէպս պատասխանատուութիւնք ի մասին կանոնագանցութեանց, մնան ի վերայ ինքեանց, զորմէ և նախապէս պարտին ազդ առնել մասնաժողովոյն վարչութեան մատենադարանին:

Յօդուած 21.

Գանձապահն և մատենապահն ամըստամէ փոփոխին և ի տեղի նոցա այլք ընտրին և հաստատին ի պաշտօն իւրեանց համաձայն մտաց յօդուածոց ի վեր անդր գծագրելոյ, որք և կարին վերաընտրելի լինիլ:

Յօդուած 22.

Ի մասնաժողովի ամենայն խնդիրք վերաբերեալք մատենադարանին վճռին առաւելութեամբ ձայնից գրաւոր կարգաւորութեամբք. ի դէպս հաւասարութեանց ձայնիցն՝ երկարանչիւր կողմն և պարտի յայտնել զիւր կարծիս Փոխանորդի վիճակիս, իսկ ի ժամանակս

բացակայության նորա առաջնակարգ անդամոց Հոգևոր կառավարությանն, և նոքա այս է Փոխանորդն կամ Տեղապահն՝ գորոյ և պաշտպանիսցէ զկարծիս ըստ այնմ վճռի:

Յօդուած 23.

Ի վերայ մասնաժողովոյն դնի սեպուռի պարտաւորութիւն վասն առաւել ևս և փայլեցուցանելոյ զյարգ և զպարտիս կոչման Հոգևորական դասուց յաչս ժողովրդականաց, յոր միտս պարտի դարձուցանել զառանձին իմն մտադրութիւն առ շարժումնս նոցին յուղղութիւն վարուց և բարուց, և որ մեծնէ առ պարտաճանաչութիւնս իւրաքանչիւրոց վերաբերութեամբ եկեղեցական և ծխական անձանձրոյթ հոգատարութեանց և հանգամանաց թէ յեկեղեցուց և թէ արտաքոյ նորին և զնշմարանաց՝ եթէ անձեռնհաս գտցի առտնին միջոցաւ բարութելոյ, պարտի ազդ առնել Փոխանորդի վիճակիս և կամ Հոգևոր Ատենին յարժանաւոր տնօրէնութիւն:

Յօդուած 24.

Մասնաժողովն պարտի քաղելով ի սուրբ գրոց և հրահանգութեանց Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան զվստմ և զսուրբ պարտաւորութիւնս հոգևորական կոչման սրբազնագործ պաշտօնէից ցուցակագրել մի առ մի, գոր և մուծանել յորմն մատենադարանին առ մշտապէս և անխափան արժարածումն նոցին ի միտս պարտաւորելոց:

Յօդուած 25.

Մասնաժողովն կարէ խաղաղութեամբ վերջաւորել զվէճս ծագեալս ի միջի քահանայից և տիրացուաց ի մասին եկեղեցական կարգաւարութեանց, ծխոյ և քահանայական հասութոյ. ուստի, յայսպիսի դէպս քահանայք և տիրացոյք պարտին նախապէս դիմել առ մասնաժողովն որ պարտի արդարութեամբ վճռել զգործն, գորմէ բողոքեալ են, և գոր կողմն և յանցաւոր գտցէ, ունի զիրաւունս ստանալոյ ի նմանէ տուգանս յօգուտ մատենադարանին, որքան և արժան դատեսցի կամ ներեսցեն նիւթական միջոցք տուգանաւորելոցն յայսպիսի դէպս եթէ մասնաժողովն անմարթասցի վերջացուցանել խաղաղութեամբ զգործն՝ յայտնեսցէ զայնմանէ Փոխանորդին և կամ Հոգևոր կառավարութեան:

Յօդուած 26.

Մասնաժողովն ի տարին երիցս՝ այսինքն վերջ իւրաքանչիւր քառամսեկի, պարտի զննել զհաշիւս մատենադարանին, գործել զվերահասութիւն ամենայն ելից և մտից ևս և գրական և այլատեսակ գոյից նորա և ի վերջ իւրաքանչիւր տարւոյն ներկայացուցանել զհաշիւ ողջոյն միաբանութեան քահանայից և ապա Փոխանորդի վիճակիս կամ Հոգևոր կառավարութեան:

Յօդուած 27.

Մասնաժողովն վարչութեան մատենադարանին սահմանէ զարկղ մի ընդ իւրով տեսչութեամբ, յորում ժողովին արդիւնք գանձանակաց շրջեցելոց յեկեղեցիս Հայոց քաղաքիս և զհիւօրէից վիճակիս յօգուտ և ի նպաստ չքաւոր որբոյ և այրեաց հոգևորականաց հայոց վիճակիս:

Յօդուած 28.

Նպաստակարօտ որբք և այրիք հոգևորականաց պատշաճաւոր վկայականաւ վասն չքաւորութեան իւրեանց և անօգնականութեան յայլ ուստիքէ և օրինաւոր խնդրագրաւ դիմին ի Հոգևոր կառավարութեան Հայոց Աղէքսանդրապօլու, որ տնօրինէ զարժանն և գրէ մասնաժողովոյ մատենադարանին տալ ի գանձանակէ գտարեկան զսննդադրաւ ըստ արժանւոյն և ըստ ներելոյն դրամական միջոցաց արկղն խնամատարութեան:

Յօդուած 29.

Ի Հոգևոր կառավարութենէ տուեալ լինի մասնաժողովոյն ժապաւինեալ մատեան վասն գրելոյ զմուտս և զելս արկեղն որբոց և այրեաց և մասնաժողովն պարտաւորի ամբաստամէ

առաջի առնել Ատենի նորին զճիշտ հաշիւ մտից և ծախուց պատշաճաւոր յայտարարութեամբ:

Յօդուած 30.

Մասնաժողովն պարտի խորհել զեղանակաց աճեցուցման արդեանց խնամատարութեան որբոց և այրեաց հոգևորականաց և ամբաստամէ առաջարկել Հոգևոր կառավարութեան վասն կարգելոյ զբարեյոյս անձինս ի քահանայից զհիղորէից վիճակիս ի գործ հաւաքելոյ ի ժամ կալոցի զբարեպաշտական տուրս յօգուտ որբոց և այրեաց և տալոյ նոցա առ այս պէտս ժապաւինեալ մատեան, զոր յետ նպաստահաւաքութեանն նան պարտէ մասնաժողովն առաջի առնել Հոգևոր կառավարութեանն ի վերազննութիւն:

Յօդուած 31.

Մասնաժողովն կարէ յաւելուլ զթիւ անդամակցաց իւրոց ընդունելով զգիւղական քահանայս և զայլ քաղաքաբնակ և զհիւարբնակ անձինս եթէ գտանիցին ցանկացողք ի նոցանէ:

Յօդուած 32.

Մատենապահն յորոշեալ ժամանակս ընթերցանութեան պարտի գտանել ի մատենադարանն և եթէ անձեռնիսս իցէ յանձնել իւր զպաշտօն հերթապահ քահանային ժամարարի, առ ի բերել ի փոստայէ զլրագիրս և զամսագիրս և զայլ պատկանելիս մատենադարանին, կամ ինքնին զնալ և ընդ ձեռն հերթապահ ժամկոյնի տալ բերել, և արտագոյ մատենադարանին չբանալ զծրարս այնոցիկ և չտալ այլում ումէք ընթեռնելոյ նախքան չհասուցանելն զայնս ի մատենադարանն:

Յօդուած 33.

Օրարք հաղորդագրութեանց մատենադարանին ուղղին առ պատկանելիսն ուղղակի ի մասնաժողովոյն և ստացեալ լինին յայլուստ գրեանք, լրագիրք և նուէրք, նոյնպէս յանուն նորին և ոչ գանձապահի կամ միումն յանդամոց:

Յօդուած 34.

Հերթապահ ժամկոչն վարէ նան զպաշտօն ծառայի ի մատենադարանին կղերական դասուն առանց վարձուց:

Յօդուած 35.

Եթէ յապագային գործադրութեամբ կանոնադրութեանցս ընդ յառաջ ելցին կարիք յաւելլոյ կամ փոփոխելոյ զինչ ինչ յօդուածս սորին, յայնժամ մասնաժողովն կարէ դիմել զայնմանէ առանձին առաջարկութեամբ առ փոխանորդն վիճակիս և կամ յԱտենան Հոգևոր կառավարութեան ի պատշաճաւոր տնօրէնութիւն:

ՄՄ, Կաթ. դիվ., թղթ. 224, վ. 3, թ.3-5: Պատճեն: Ձեռագիր:

№4

ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆՂԱԿՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

5 (7) մայիսի 1873 ամի

Բարեշնորհ Սուքիաս վարդապետի Պարզեանց ուսումնասէր փոխանորդի վիճակին Հայոց Աղէքսանդրապոլի

Յամին արկեալ մեր զերկոսին կանոնադրութիւնս Ձեր ուղղեալս առ մեզ ի յայտարարութիւնս Ձեր ընդ համարօք 30 և 33 ի մասին բանալոյ զգրասենեակս ընթերցանութեան վասն հոգևորականաց և աշխարհականաց տեղոյդ գտաք զայնս վայելչապէս յօրինեալս և յամենայնի համաձայնս բարեսէր նպատակաց մերոց առ ընդհանրացուցանելոյ զընթերցասիրութեան եռանդ ի ժողովրդեան մերում նա մանաւանդ ի դասս հոգևորականաց:

Միայն գյօղուածն 25 աւելորդ իմն համարելով ի բաց թողութ քանզի հոգևոր խնդրոցն այնոցիկ լուծումն և վճիռ ելանէ ըստ սահման իրաւանց մասնաժողովոյ և պարտի անշուշտ համարիլ ուղղակի պարտք Հոգևոր կառավարութեան տեղոյն:

Ուստի վերադարձուցանելով յետս առ Ձեզ զկանոնադրութիւն զայնոսիկ, պատուիրեմք ունիլ զայն ի պարտ և պատշաճ կիրառութեան և յորդորեմք զՁեզ միտ դնել յաւետ զի գծագրեալ կանոնադրութիւնքն այնոցիկ ի քարտիզի գրաւորապէս, չլինիցին դիւրագայթ ձեռնարկք ևեթ ի գործադրութեան զիրկ բոլորովին յօգտամատոյց արդեանց, այլ տայցեն զարդիւնաշատ պտուղս յառաջադիմութեան ի միջի սիրեցեալ ժողովրդեան մերոյ որ յԱղէքսանդրապօլ: Գուն գործեսջիք նոյնպէս պարտաւորելոյ զեկեղեցականաց դասս հաստատուն մնալ յընթերցասիրութեան և անձանց իւրեանց օրինակաւ յայն գրաւել զմիտս հասարակ ժողովրդեան:

Բայց առաւել քան զամենայն զգոյշ լինել այնմ, զի միգուցէ անհանդարտութեան և խռովասիրութեան պատճառս տայցեն յաճախակի գումարմունքն այնոցիկ և փոխանակ օգտի յառաջ գայցեն երկպառակութիւնք և տարաձայնութիւնք, որպէս մարթ է տեսանել, յայլն այլ քաղաքս. ուստի կանխաւ հարկ ի վերայ Ձեր դնի բացայայտ բանիք մեկնաբանել զամենայն պարտականութիւնս և զնպատակ ժողովելոցն ի մի վայր, որով միայն կարելի է ակն ունել արդիւնաւորութեան այսր բարեմիտ ձեռնարկութեան:

Ողջ լէր ի Տէր

ՄՄ, Կաթ. դիվ., թղթ.222, վ.8, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:

№5

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՂԵՐԱԿԱՆ ԴԱՍԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՍՈՒՏՔԻ ՑՈՒՑԱԿ

Ցուցակ համառօտ մտից մատենադարանի կղերական դասուց Հայոց Աղէքսանդրապօլու սկսեալ ի մեկօրէն սեպտեմբերի 1873 ամի մինչ ցտասն և մի օրն մարտ ամսոյ ներկայ 1875 ամի

1. Ստացեալ տրէթականս ի բարեկրօն քահանայից երից եկեղեցեաց Հայոց քաղաքիս վասն չորից այն է սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամսոց 1873 ամի ընդամենն 11 արծաթ մանեթ 60 կոպէկ:
2. Ի 1874 ամի վասն յունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամսոց 10 մ. 40 կ.:
3. Ի նոյն թիւ վասն մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամսոց 8 մ.:
4. Ի նոյն թիւն վասն երրորդ տրէթի 8 մ.:
5. Ի 1875 ամի ներկայ տրէթականս ստացեալ է 5 մ. 60 կ.:
6. յԱւագ եկեղեցւօջ ընդ ձեռն զանազան անձանց շրջեցուցեալ զանձանակն գոյացեալ է ընդամենն 101 մ. 56 կ.:
7. Ի տօնեցեալ սրբոց մասանց հուպ եղեալ զանձանակն գոյացեալ է 40 մ. 88 կ.:
8. Ի զանազան անձանց ստացեալ նուէրս ի շինութիւն նոյն մատենադարանին 35 մ. 60 կ.:
9. Ի պրիկազէ տոկոսադրամ 27 արծաթ մանեթ, գումար 248 մ. 64 կ.:
10. Ի զանազան տեղեաց գոյացեալ յօգուտ որբոց և այրեաց հոգևորականաց 121 մ. 9 կ.:

Բոլոր գումարն 369 մ. 73 կ.:

ՄԱՏԵԱՆՔ

11. Գտանի ի մատենադարանի թուով 86 հատոր զանազան տեսակ մատեանք թէ ընծայեալք և թէ արդեամբ նոյնոյ գնեցեալք:

12. Ի 1874 թիւ ստացեալ մի մի օրինակ լրագիրք, որք են 1. Արարատ ամսագիր, 2. Մեղու Հայաստանի ի Տփլիս, 3. Մշակ շաբաթաթերթ ի Տփլիս, 4. Մասիս լրագիր ի Պօլիս և 5. Դպրոց ի Վաղարշապատ ընդ ամէն 5 օրինակք:

13. Երկու հատ ի հասարակ փայտէ վասն մատենից և այլոց իրեղինաց պահարանք:

14. Մի հատ յընկուզ փայտէ դիւան, երկու բազկաթոռք, վեց հատ ի հասարակ փայտէ գեղեցկաշէն աթոռք երկու հատ հասարակ աթոռք, երեք հատ փոքրադիր գրասեղանք, և երկու հատ հասարակ երկար նստարանք և մի ժեշտեայ վառարան:

Ի վերգրեցեալ 14 համարաւ մուտքն ըստ ժապահինեալ տումարայ ուղիղ է:

Յիսկականին ստորագրեալ են Անդամք մասնաժողովոյ

Թաղէոս քահանայ տէր Յօհաննիսեան
Դաւիթ քահանայ Տէր Միմեօնեանց
Աղէքսանդր քահանայ Տէր Ամատունեանց
Մարտիրոս քահանայ Տէր Պօղոսեան

Ուղիղ է. Անդամ կառավարութեան Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ.56, ց.4, գ.2690, թ.5: Բնագիր: Ձեռագիր:

№6

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՂԵՐԱԿԱՆ ԴԱՄԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԾԱԽՄԻ ՑՈՒՑԱԿԸ

Ծախուց եղելոց ի շինութեան և ի յայլ պիտանաւորութեան մատենադարանի
հոգևորականաց ի մէկօրէն սեպտեմբերի 1873 ամի

1. Տուաւ ի գին գնեցեալ վասն մատենադարանի մի դիւանի, վեց հատ գեղեցկաշէն աթոռաց, երկու հատ բազկաթոռաց, երկու հասարակ աթոռաց, և երկու երկար նստարանաց ևս երեք փոքրադիր գրասեղանաց ընդամէն 23 արծաթ մանէթ 50 կոպէկ:

2. Գնեցան վասն գործադրութեան ի մատենադարանի զանազան իրեղինս. այն է կնիք, թուղթ, զմուռ, տետրակք, փակք և այլք այնպիսիք և տուաւ գին նոցա ընդ ամէն 6 մ. 36 կ.:

3. Տուաւ վարձք մասիս լրագրոյ վասն երկուց անցեալ և ներկայ ամաց 27 մ. 40 կ. վասն դպրոցի լրագրի 6 մ. և վասն ներկայ տարուոյ Մշակ և Լոյս անուն լրագրաց 9 բուրի, որ եղև ընդամէն 42 մ. 40 կ.:

4. Ի շինութիւն կամ ի վերանորոգութիւն մատենադարանի ծախեցաւ 38 մ. 73 կ.:

5. Տուաւ ի Տփլիս քաղաքի գնեցեալ 24 հատ զանազան մատենից գին 38 մ. 20 կ.:

6. Տուաւ ի զանձանակադրամոց որբոց և այրեաց զանազան չքաւոր այրի երիցուհեաց և որբոց հանգուցեալ քահանայից յընթացս 1874 ամի ընդամէն 34 մ. 19 կ. և մի սօմար ցորեան գումար 179 մ. 28 կ.:

Ի վեր վեց համարաւ գրեցեալ ծախսն համեմատութեամբ ընդ իսկականին ուղիղ է:

Յիսկականին ստորագրեալ են Անդամք մասնաժողովոյ

Թաղէոս քահանայ տէր Յօհաննիսեան
Դաւիթ քահանայ տէր Միմեօնեանց
Աղէքսանդր քահանայ տէր Ամատունեանց
Մարտիրոս քահանայ տէր Պօղոսեան

Ուղիղ է. Անդամ կառավարութեան Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ.56, ց.4, գ.2690, թ.6: Բնագիր: Ձեռագիր:

№7

«ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՍԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՏՈՒՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

[15 ապրիլի 1891թ.]

**Կանոններ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Աղէքսանդրապոլ քաղաքի
գրատուն-ընթերցարանի համար***

- §1. Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը բաց է անում Գրատուն-Ընթերցարան Աղէքսանդրապոլ քաղաքում Ընկերության կանոնադրության 2-դ յօդ. Ե. կետի հիման վրայ:
- §2. Գրատուն-Ընթերցարանի նպատակն է ընթերցանության տարածումն հասարակության բոլոր դասակարգերի մէջ:
- §3. Գրատուն-Ընթերցարանն ունի պարբերական հրատարակություններ և հին ու նոր մատենագրության և գիտության վերաբերեալ գրքեր հայերէն և ի հարկին, միջոցները ներածին չափ և օտար լեզուներով:
- §4. Գրքերի և պարբերական հրատարակությունների ընտրությունը և Գրատուն-Ընթերցարանը լաւ վիճակի մէջ պահելու հոգսը վերապահվում է Բարեգործական Ընկերության Աղէքսանդրապոլի Տեղական Վարչութեանը: Վարչությունը ընտրում է իւր միջից կամ Ընկերության անդամներից Գրատուն- Ընթերցարանի համար մի վերահսկող տնօրէն:
- §5. Գրքերի և պարբերական հրատարակությունների պահպանության, բաժանորդներին տալու և յետ ստանալու պարտականությունը յանձնվում է գրապահին, որին ընտրում է Տեղական Վարչությունը և որը Վարչութեան ընտրած տնօրէնի անմիջական հսկողութեան տակ է գտնվում:
- §6. Գրատուն-Ընթերցարանի համար պահանջելիք ծախքերը յընթացս ամսուայ մինչև 10 րուբլի կարող է անել տնօրէնը, առանց թոյլտուութիւն խնդրելու Վարչութիւնից, բայց ծախքերի հաշիւը պիտի ներկայացուի Վարչութեանը ի հաստատութիւն ամիսը մի անգամ:
- §7. Գրատուն-Ընթերցարանի բաժանորդագինը որոշվում է տարեկան երեք րուբլի, ամսական քառասուն կոպէկ և օրական 5 կոպէկ բաժանորդ գրուողները ստանում են տպած անդորրագրեր տնօրէնի ստորագրութեամբ և Վարչութեան կնքով վաւերացրած: *(Գրատուն-ընթերցարանի բաժանորդագինը որոշվում է տարեկան երկու րուբլի, ամսական քսան կոպէկ և օրական երեք կոպէկ):*
- §8. Լրագրերը մնում են ընթերցարանի սենեակում մի շաբաթ, իսկ ամսագրերը մինչև հետևեալ համարի ստացուելը: Գրատուն-Ընթերցարանից դուրս տարուող պարբերական հրատարակությունները և գրքերը յիշատակվում են մատենում, և ստացողը ստորագրում է:*
- §9. Գրքեր և պարբերական հրատարակություններ Գրատուն-Ընթերցարանից դուրս տանելու համար բաժանորդները պիտի թողուն 3ր. գրաւական. իսկ եթէ վերցրած գիրքը կամ պարբերական հրատարակությունը արելի արժէ քան երեք ռուբլի, այն ժամանակը վերցնողը թողում է լրացուցիչ գրաւական՝ գրքի արժէքի համապատասխան: Միանուագ քանի՛ հատ գիրք և պարբերական հրատարակություն կարելի է տալ ամեն մի բաժանորդի և յատկապէս ո՛րքան ժամանակով, սահմանում է ինքը Վարչությունը

* Լուսանցքի վրայ տեղական վարչությունը կը նշանակէ համապատասխան յօդուածի հանդէպ տեղական հանգամանքներին պատշաճաւոր համարուածների փոփոխությունները (փաստաթղթում այդ տեղերը դարձրել ենք շեղատառ-Գ. Ա.):

* Ծանօթութիւն. Ընկերութեան անդամները, ուր էլ որ ստորագրուած լինեն իբրև անդամ Ընկերութեան ազատ են յիշեալ վճարներից, եթէ ներկայացնեն գրապահին իրանց անդամագրութեան անդորրագրերը:

* Ծանօթութիւն. Վարչությունը որոշում է, թէ յատկապէս ինչ գրքեր չպիտի դուրս տարուին ընթերցարանից. օրինակ բառարաններ, քարտէզներ, հազուագիւտ գրքեր, և այլն:

իւրաքանչիւր տարի: (Գրքեր և պարբերական հրատարակություններ Գրատուն-Ընթերցարանից դուրս տանելու համար բաժանորդները պիտի թողուն մի թուրքի գրաւական, իսկ եթէ վերցրած գիրքը կամ պարբերական հրատարակությունը աւելի արժէ քան մի թուրքի, այն ժամանակ վերցնողը թողում է լրացուցիչ գրաւական գրքի արժէքի համապատասխան):

- §10. Տուն տարած գրքեր և պարբերական հրատարակությունները ժամանակին յետ չը դարձնողը ուշացման համար իւրաքանչիւր օր վճարում է յօգուտ Ընթերցարանի՝ գրքերի համար 5 կոպէկ, իսկ լրագրի համար 2 կոպէկ: Իսկ եթէ վերցուած գիրքը կամ պարբերական հրատարակությունը փչացուի և կամ իսպառ չվերադարձուի, տանողը կըզրկուի գրաւականից:
- §11. Ալեքսանդրապոլի վարչութիւնն է սահմանում Ընթերցարան յաճախողների նկատմամբ ներքին բարեկարգութեան հրահանգներ, որպէս նաև Ընթերցարանի բացման օրերի և ժամերի որոշումներ և թէ որքան ժամանակ կարելի է պահել տարուած գրքերը:
- §12. Ընթերցարանի բոլոր հասոյթները ստացուելուն պէս գրվում են Վարչութեան տուած ժապաւինեալ մատեանի մէջ գրապահի ձեռքով, իսկ վճարողին տրվում է անորո՞րագրական մատեանից ստացագիր, որի բունը մնում է մատեանումը: Մուտքը և ելքը ստուգում է տնօրէնը առ նուազն շաբաթը մի անգամ և նորա օրինաւորութիւնը հաստատում է իւր ստորագրութեամբ: Տնօրէնը պիտի ստանայ և վերադարձնէ գրաւականները: Գրաւական յետ վերցնողը իւր ցանկութեան մասին յայտնում է գրապահին առնուազն մի օր առաջ:
- §13. Բոլոր գրքերի և պարբերական հրատարակությունների համար կազմվում է ընդհանուր ցուցակ, որի մէջ նշանակվում են գրքերի և հրատարակությունների գները և նրանց համեմատ նշանակած գրաւականի չափը:
- §14. Գրաքննութեամբ թոյլ չտուած գրքերը չպէտք է գտնուին Գրատուն-Ընթերցարանում:
- §15. Տեղական Վարչութիւնը իւր ընդհանուր հաշուի մէջ մանրամասնաբար հաշիւ է ներկայացնում Գրատուն-Ընթերցարանի մասին, նորան կցելով նաև տարուայ մէջ ձեռք բերուած գրքերի ցուցակը:
- §16. Ներկայ կանոնները և Գրատուն-Ընթերցարանի վերաբերեալ հրահանգները պիտի կախուած լինին Ընթերցարանի սրահում ի գիտութիւն:
- ՀԱԱ, ֆ. 28, ց.1, գ.278, թ.29: Տպագիր օրինակ:

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О БИБЛИОТЕК-ЧИТАЛЬНЯХ АЛЕКСАНДРОПОЛЯ

___ Резюме ___

___ Г. Айвазян ___

Опубликованные документы впервые освещают деятельность библиотек-читален Александрополя, действовавших на платной основе. Библиотеки открывались по инициативе духовенства и деятелей образования. В фондах библиотек-читален города находились учебники, художественная и научно-популярная литература, собрания периодических изданий.

Տեղեկություններ հեղինակի մասին

Այվազյան Գևորգ Սամվելի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: avg.84@mail.ru

Մուսաննա ԱՂԱՍՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՅԻ ԱՆՏԻՊ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ նշանավոր տեղագիր-հեղինակ, պատմաբան, վիմագրագետ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը¹ (1833-1911) բացառիկ ներդրում ունի հայ վիմագրագիտության զարգացման գործում: Նա հավաքել է ավելի քան 600 արձանագրություն, որոնք ամփոփված են երեք տպագիր և յոթ անտիպ ուսումնասիրություններում:

Անտիպ ուսումնասիրություններից է հարյուր հիսուն տարվա վաղեմություն ունեցող «Ստորագրութիւն Օշական գեղջ և նորաբաց դպրոցին յանուն Ս. Մեսրոպբայ թարգմանչին» ձեռագիրը, որը պահվում է Հայաստանի ազգային արխիվի պահոցներում: Այն պատրաստ է եղել տպագրության դեռ 1864թ., սակայն անհայտ պատճառներով չի հրատարակվել:

Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկի՝ Օշականի պատմությանն ու կոթողներին անդրադարձել են հայ մատենագիրները (Կորյուն, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի, Առաքել Դավրիժեցի), XIX դարի տեղագիրները (Հովհաննես Շահխաթունյանց, Ղևոնդ Ալիշան), նշանավոր ճարտարապետներ Թ. Թորամանյանը, Վ. Հարությունյանը, հնագետները, գրվել են ուսումնասիրություններ, հոդվածներ, որոնք, մեկը մյուսին լրացնելով, ամբողջացնում են Օշականի պատմությունը²:

Անմասն չէ նաև Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի գործը, որտեղ նա գերծ է մնում պատմական փաստերից և ավելորդ է համարում «ձանձրացուցանել լսողաց ականջն»³: Ձեռագրի շարադրանքն աշխարհաբարով է, որպեսզի յուրաքանչյուրը «կարողանայ հեշտութեամբ հասկանալ»⁴:

Ինչպես նշում է Ս. Սմբատյանցը, XIX դարի 60-ական թթ. Օշական գյուղը պատկանում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և ուներ 175 տուն հայ բնակիչ⁵: Գյուղը զարդարում էին պտղատու, հատկապես խաղողի այգիները, որոնք իրենց առատությամբ ու բերքատվությամբ երկրորդն էին Աշտարակից հետո⁶: Այգիները ոռոգվում էին Քասաղի ջրով, Տկահանի առուն չէր գործում 1860-ական թվականներից: Գյուղի տարածքում Քասաղ գետի վրա աշխատում էր 31 ջրաղաց, գետը

¹ Մեսրոպ Սմբատյանցի կենսագրությունը տե՛ս Ադամյան Ս., Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի վիմագրագիտական գործունեությունը, Էջմիածին, 2007, ԺԱ, էջ 103-110:

² Բարայան Ֆ., Օշական գյուղի Ս. Մաշտոց եկեղեցու պեղումների մասին, Էջմիածին, 2014, Գ, էջ 122-128:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 429, ցուցակ 1, Մեսրոպ Սմբատյանցի արխիվ, գործ 167, Օշական գյուղի դպրոցի և Ս. Մաշտոց եկեղեցու վերականգնման մասին (այսուհետ՝ գործ 167), 1864թ., թերթ 7բ:

⁴ Գործ 167, թերթ 6ա:

⁵ Գործ 167, թերթ 7ա:

⁶ Նույն տեղում, թերթ 11ա:

լիքն էր ձկնատեսակներով, «կարծես թե Աստուած բնութեան ձեռքով մի առանձին շնորհ է արել Օշականայ բնակչաց»⁷:

Օշականում խաչաձևվում են տարբեր ժամանակաշրջանների մշակութային շերտերը՝ սկսած Ք. ա. II հազարամյակից մինչև ուշ միջնադար՝ բնակավայրեր, ուրարտական դամբարաններ, վաղ միջնադարյան դոյակ-ամրոց, «գիւղի չորս կողմերն լիքն են մատուռներով, խաչքարերով, գերեզմանաքարերով և էլի շինուածքներով ու նշաններով»⁸: Գետի վրա հնգաթռիչք մի կամուրջը կառուցել է Նահապետ Եդեսացի կաթողիկոսը (1691-1706 թթ.)՝ անագին քարափներ ճեղքելով⁹: Հետագայում կամուրջը նորոգվել է Միմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներին¹⁰, իսկ Ներսես Աշտարակեցու կոնդակի համաձայն՝ 1853թ. նորոգվել են կամրջի վնասված եզրերի պատվարները և երկու թռիչքը¹¹ (նկ. 1):

Գյուղի արևելյան բլրակի գագաթին, որն անվանում են Դիդի կոնդ կամ Ցլու գլուխ, պահպանվել են Վահան Ամատունի իշխանի պալատական շինության հիմնաքարերը¹²: Պալատի տարածքում՝ ավերակ եկեղեցու տեղում, XIII-XIV դդ. կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը, որն ուխտատեղի է Կրկնագատիկին: Վերջին անգամ նորոգվել է 1980-ական թթ.-ին¹³ (նկ. 2):

Դիդի կոնդի արևմտյան բլրալանջին կա Թուխ Սանուկ (XVII-XVIII դդ.) մատուռը, որը Մետրոպ Սմբատյանցի գրառումներում հիշատակվում է Սբ Սահակ: Մատուռը նախատեսված է եղել ննջեցյալների հիշատակի համար իբրև պատարագատեղի կամ հանգստարանի եկեղեցի: Մինչ օրս տեղացիները հաճախում են այնտեղ տաղավար տոներին հաջորդող մեռելոցներին: Վերջին անգամ մատուռը նորոգվել է 2006 թ. (նկ. 3):

Մ. Սմբատյանցը գրառել է մի վիմագիր մատուռի խորանի հարավային պատից: Ստորև ներկայացնում ենք հեղինակի կողմից արված վերծանությունը:

1. *Ով սուրբ քահանայ զսգէտ շինող սբ զսուրբէն յիշեա ի քում պատարագիդ¹⁴:*

⁷ Գործ 167, թերթ 13բ:

⁸ Նույն տեղում, թերթ 17ա:

⁹ Աշխատանքը պետք է իրականացնէր Էջմիածնի Սինողը, որը միջոցներից զրկված լինելու պատճառով չկարողացավ այն ավարտին հասցնել: Գործ 167, թերթ 15ա: Կամրջի արձանագրությունն է. «Յիշատակ է կամուրջս Տեառն Նահապետ կաթողիկոսին Սուրբ Էջմիածնի. ՌՃԾԵ- 1706»: Գործ 167, թերթ 14ա: Յովհ. եպ. Շահխաթունեանց, Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւտացն Արարատայ (այսուհետ՝ Ստորագրություն), աշխատասիրությամբ Ս. Տեր-Ստեփանյանի (վերահրատարակություն), Մայր Աթոռի Ս. Էջմիածին, 2014, էջ 260: Ղևոնդ Այիշան, Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց (այսուհետ՝ Այրարատ), Վենետիկ-Ս. Ղազար, ՌՅԼԹ-1890, էջ 192:

¹⁰ Նորոգության արձանագրությունն է. «Նորոգեցաւ կամուրջս ի ձեռամբ ՏՌՆ Միմեոնի սրբազան կաթողիկոսին սբ Էջմիածնի Երևանցոյ. Բ ՌՄԲԷ-1778 թվին մերոյ»: Գործ 167, թերթ 14բ: Յովհ. եպ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 260: Այիշան, նշվ. աշխ., էջ 192:

¹¹ Գործ 167, թերթ 14բ:

¹² Նույն տեղում, թերթ 9ա:

¹³ Հովհաննիսյան Լ., Օշական, Եր., 2014, էջ 47:

¹⁴ Գործ 167, թերթ 9բ: Մենք անդրադառնում ենք միայն Մ. Սմբատյանցի կողմից հիշատակվող վիմագրերին:

Ըստ բնագրի՝ (5 տող, նկ. 4). ՈՎ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱ ՁՏԳԵՏ ՇԻՆՈՂ ՍՈՐԱ ՋՈՌԻԲ/ԵՆ ՅԻՇԵԱԻ ՔՈ ՍԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ:

Մատուռի հարավային կողմում կանգուն է ծաղկանկար մի խաչքար, որի բարձրությունը պատվանդանի հետ մոտ 4,5 մետր է: Խաչքարի պատվանդանի վրա Մ. Սմբատյանցը անթերի կարդացել է.

2. ԹՎ ՉԺԴ ԵՍ ԳԱՆԱԳԱՆՍ ԴՎԻՆԱԳԻ, ԿԱՆԳՆԵԳԻ ՍՈՐԲ ԵՂԱՆՍ ԲԱՐԵԽԱՍՍ ԴՍԱՆԻ ԻՆՈՅ ԵՍՏՈՒՆԻՆ, ՈՐ ՎՈՒՅԵՍԱԻ Ի ՔՄ¹⁵:

Ըստ բնագրի՝ (6 տող, նկ. 5). ԹՎ ՉԺԴ (1265) ԵՍ ԳԱԻ/ԱԶԱՆՍ ԴՎՆԱ/ՑԻ, ԿԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ/ ԵՇԱՆՍ ԲԱՐԵՆԱԻՍ/ ԴՍԵՐ ԻՍՈՑ ԵՍԻՆ/ՈՒՋԻՆ, ՈՐ ՓՈՒՅԵՍԱԻ Ի ՔՄ:

Գյուղի հյուսիսային մասում կանգուն է Մանկանոց կամ Մբ Միոն քառախորան եկեղեցին (VII դար), որի հարավային պատից Մ. Սմբատյանցը թերություններով գրառել է նվիրատվական մի արձանագրություն¹⁶, ըստ որի՝ եկեղեցու ուխտի օրն էր Վարդավառը: Այսօր եկեղեցին ուխտատեղի է Մբ Հարության տունին՝ Զատիկին:

Օշականի ձորամիջի կամրջից քիչ հեռու՝ բարձրության վրա է գտնվում փոքրիկ Մբ Սարգիս մատուռը, որտեղ ամփոփված է ինչ-որ ճգնավորի աճյուն¹⁷: Այն հայտնի է նաև Թարգմանչաց ուխտատեղի անվամբ: Մատուռի մի մասը սրբատաշ քարից է, մյուսը՝ ժայռափոր, վերջին անգամ այն վերանորոգվել է 1960-70-ական թթ.: Մատուռի մուտքի կամարին և շարունակաբար բարավորին կա ՈՄԴ-1205 թ. արձանագրություն (նկ. 6), որը «եղծեալ գոյով և մանաւանդ տեղին վտանգաւոր կալոյ ընդ երկար՝ մնաց անվերձանելի»¹⁸: Մ. Սմբատյանցն այստեղից վերծանել է մի վիմագիր, որը տեղում չգտանք: Ավելին՝ վիմագրում հիշատակվում է, որ մատուռը կոչվում է Մբ Հարություն, որը չենք հանդիպում այլ աղբյուրներում:

3. Ի թուին Հայոց ՌՄԴ (1605) սպասաւոր նահատակ Թոմա ծառայս ԱՅ շինեցի սբ Յարութիւնս¹⁹:

Օշականն ավելի քան 1500 տարի սրբավայր և ուխտատեղի է աշխարհասփյուռ հայության համար: 440 թ. փետրվարին Մեսրոպ Մաշտոցի մարմինն ամփոփվում է Ամատունիների իշխանական կալվածքում՝ Օշականում: 443 թ. Մ. Մաշտոցի դամբարանի վրա իշխան Վահան Ամատունու նախաձեռնությամբ կառուցվում է գմբեթավոր եկեղեցի, որը կանգուն է եղել հավանաբար մինչև XIII դարը: XIX դ. տեղագիրները հիշատակում են չորս նվիրատվական արձանագրություն, որոնք գտնվել են եկեղեցու հյուսիսային²⁰, հարավային²¹ կամարներին, սեղանի արևմտյան ճակատին²² և բուրվառանոցի պատին²³: Ցավոք, այդ արձանա-

¹⁵ Գործ 167, թերթ 10ա: Յովհ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 259: Ալիշան, Այրարատ, էջ 191:

¹⁶ Շահխաթունեանց Յովհ., նշվ. աշխ., էջ 261: Գործ 167, թերթ 17ա:

¹⁷ Շահխաթունեանց Յովհ., նշվ. աշխ., էջ 260:

¹⁸ Նույնը:

¹⁹ Գործ 167, թերթ 16ա:

²⁰ Նույն տեղում, թերթ 18բ: Ալիշան, նշվ. աշխ., 190:

²¹ Գործ 167, թերթ 19բ: Ալիշան, նշվ. աշխ., էջ 190:

²² Շահխաթունեանց Յովհ., նշվ. աշխ., 258: Գործ 167, թերթ 19ա: Ալիշան, նշվ. աշխ., էջ 189:

գրություններից ոչ մեկը չի պահպանվել: Դրանք մնացել են ծեփի կամ հետագայում արված մանրանկարների²⁴ տակ: Հայտնի է, որ Հովսեփ Օրբելուն զայրացրել է այն, որ «1912 թ. Օշականում Գրերի գյուտի տոնակատարության նախընթաց օրերին ծեփով սվաղել և ծածկել էին հին արձանագրությունները»²⁵:

Մեզ հայտնի է 1414 թ. Օշականում գրված ձեռագիր մի ճաշոց, որն ունի XVI-XX դդ. հիշատակարաններ, իսկ գրիչը Սարգիս Թմոքեցին է²⁶: Փաստորեն, Օշականը գրչության կենտրոն չի եղել:

Այսպիսով, մինչև XVII դարը եկեղեցու մասին ընդամենը երեք գրավոր հիշատակություն կա:

XVII դարում Սբ Մաշտոց եկեղեցին կիսավեր էր, և 1639-1645 թթ. Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ նորոգվել է, բայց արձանագրություն չի պահպանվել «շինութեան կամ նորոգութեան ժամանակի համար, որից կարելի լինէր իմացել թուականն և շինողաց կամ նորոգողաց անուանքն»: Ինչպես վկայում է Մեսրոպ Սմբատյանը, եկեղեցին նորոգվել է պարբերաբար, դա երևում էր շինության արտաքին պատերից, սակայն որևէ արձանագիր չի պահպանվել:

XIX դարի կեսերին Սբ Մաշտոց եկեղեցին կիսավեր էր: Թեև 1840 թ. մասնակի նորոգվել էր Երևանի թեմակալ առաջնորդ Հովհ. Շահխաթունյանցի կողմից, սակայն ժամանակի ընթացքում քայքայվել էր արևմտյան պատը, խոնարհվել էր տանիքը, պահպանվել էր միայն ավագ խորանը, հարավային և հյուսիսային պատերի մի մասը: Եկեղեցին զուրկ էր զարդից և անոթներից, ավելին «գիտուն և հասկացող քահանայ չունենալովն դատարկ է մնացել բիւնը»²⁷:

1851թ. Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը, լինելով Օշականում և տեսնելով եկեղեցու անմխիթար վիճակը, խոստացավ վերաշինել այն: Սակայն ոչ՝ նրա, ոչ՝ էլ Մատթեոս Ա (1858-1865թթ.) կաթողիկոսի կողմից այն իրականության չդարձավ: Ի վերջո, 1875-1879թթ. Գևորգ Դ կաթողիկոսի և Օշականի ազգաբնակչության նախաձեռնությամբ հիմնանորոգվեց՝ պահպանելով 443թ. կառուցված վկայարանը:

Սբ Մաշտոց եկեղեցին ունի ընդարձակ սրահ, կամարաձև, մեծ լուսամուտներ, «Եւ արդարն արժանի էր այնչափ երախտաւոր թարգմանչի անունն՝ այնպիսի չքնաղ եկեղեցի կառուցել»²⁸ (նկ. 7): Սբ Մեսրոպի գերեզմանը ամփոփվել է բեմի ստորին կամարահարկ փոքրիկ խորանում: Բացի այդ հին եկեղեցու քանդելու ընթացքում արևելյան պատի մոտ սուրբ սեղանի հարևանությամբ հայտնա-

²³ Գործ 167, թերթ 20ա: Ալիշան, նշվ. աշխ., էջ 189:

²⁴ 1964-1966 թթ. Հենրիկ Մամյանի և Հովհ. Մինասյանի կողմից կատարվել է եկեղեցու պատերի նկարագրողումը:

²⁵ Գրիգորյան Գր., Հայկական վիմագրություն, էջ 27-28:


²⁶ Ձեռագիր 6255, Յուզակ ձեռագրաց, հատոր Բ, էջ 280: Թմոկ գյուղը եղել է Մյունյաց աշխարհի Գեղարքունի գավառում: Ստ. Օրբելյանը հիշատակում է Թմոկ: Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր Բ, ԵՊՀ հրատարակչություն, 1988, էջ 460:

²⁷ Գործ 167, թերթ 21բ:

²⁸ Նույն տեղում, թերթ 48ա:

բերվել է քարե արկղ, որի մեջ արծաթյա փոքրիկ տուփ մասունքներով²⁹: Ցավոք, հեղինակը չի նշում, թե հետագայում ինչ ճակատագրի են արժանացել մասունքները:

Մ. Սմբատյանցի վերոնշյալ ձեռագրում պահպանվել են եկեղեցու հասակագիծն ու նախագիծը, որը ներկայացնում ենք ստորև: Ըստ հաստակագծի՝ եկեղեցու հյուսիսարևմտյան պատին կից է քառակուսի մի շինություն, որը ներկայումս չկա, հավանաբար քանդվել է XX դարում: Իսկ եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում առկա հինգ լուսամուտներն ավելացել են մեկով, որոնք սակայն չեն ծառայում լուսավորության համար: Դրանք ներսից քարապատ են և արված են կառույցի արտաքին տեսքը պահպանելու համար: Փակվել է եկեղեցու հարավային մեկ մուտքը:



Մբ Մաշտոց եկեղեցու նորոգման մասին է վկայում արևմտյան մուտքի վերնամասում փորագրված հիշատակությունը (6 տող, նկ. 8).

4. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍՐԲԱԶԱՆԱԿԱՏԱՐ ՀԱՅ/ՐԱԴԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ/ ՎԷՐԱԿԱՌՈՅՑ Ի ՀԻՄԱՆՑ ԶԱՅՄ ԵԿԵՂԵՑԻ ՕՇԱԿԱՆ/ ԳԵՂՋ ԵՒ ԶՐԱՄԲԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՄԵՍՐՈՎՂԱՅ ԹԱՐԳ/ՄԱՆՉԻ ՄԵՐՈՅ, ՈՐ Ի ՄՄԱ ՏՐՕՔ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ / ՅԱՄԻ 1879 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՅԻԹ³⁰:

Նորոգվել է նաև ավագ խորանի սեղանի խաչկալը՝ սրբատաշ քարով և զարդարված զանազան սրբապատկերներով: Խաչկալի արձանագիրը եղել է հյուսիսային կողին, որը մեզ չի հասել:

5. *Շինեցաւ խաչկալս արդեամբ Երեմիա եպիսկոպոսիս, որ ի սոյն գեղջէս Օշականայ յազգէ Մուրադկեանցի յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց ի հայրապետութեան ՏՈՒՆ Սիմէոնի սրբագան կաթողիկոսի. ի ՌՄԻ (1771) թուին³¹:*

Ինչպես նշում է Մ. Սմբատյանցը, Մբ Մաշտոց եկեղեցու հարավային պատի մեջ տեղադրված է եղել մի խաչքար, որի ստորին մասը՝ անձանագիր վարդյակը, գտնվում է Առաջնորդարանի սրահներից մեկում (նկ. 9): Վիմագիրը

²⁹ ՀԱԱ, գործ 63, Պատմական տեղեկանք՝ Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու կառուցման մասին, թերթ 3բ:

³⁰ ՀԱԱ, գործ 167, թերթ 53ա:

³¹ Նույն տեղում, թերթ 21բ:

շրջանաձև ելնդագիր է, թվականը փորագրված է վարդյակի անկյուններում: Նախորդ հրատարակիչ վիմագրագետ Ա. Մանուչարյանը նշում է, որ վիմագիրը թվական չունի, իսկ Ջաքարը ներկայանում է իբրև «դարուղնաբ», այսինքն՝ կաթողիկոսի հարկային ներկայացուցիչ³²: Մեր կողմից ընթերցվել է «եղբարն», որն ավելի հավանական է:

6. *ԹՎ ՌԼԷ (1588). ՄԲ ԽԱՅՍ ԲԱՐԷԽԱՍԱ ԱՌԱՔԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ*³³:

Ըստ բնագրի (1 տող, նկ. 10)՝ ՌԼԷ (1588). ՄԲ ԽԱՅՍ ԲԱՐԷԽԱՍԱ ԱՂՌԱՔԵԼ ՎԱԼԹՈՂԻԿՎԱՂՍԻՆ ԵՂԲԱԻՐՆ ՋԱՔԱՐԻՆ:

Վիմագրում նշվում է Առաքել աթոռակցի մասին, որը ծնունդով Էջմիածնից էր, 1576 թվականից եղել է Գրիգոր XII Վաղարշապատցի կաթողիկոսի օգնականն ու գործակիցը: Առաքել Ա աթոռակցի գործունեության շնորհիվ է պահպանվել Երևանի Երկու երես կոչված եկեղեցին (հավանաբար եղել է ներկայիս Ե. Չարենցի անվան դպրոցի տեղում), քանի որ պարսից Ֆերհադ փաշան Երևանի բերդը կառուցելու նպատակով քանդում էր եկեղեցիները՝ քարերն օգտագործելով շինարարության մեջ³⁴: Առաքել Դավրիժեցին էլ նշում է. «Ի հայրապետութեան տեսան տէր Առաքելին Էջմիածնի Սուրբ աթոռոյն»: Փաստորեն, Գրիգոր կաթողիկոսն արդեն ծեր էր, և կաթողիկոսական գործառույթները վարում էր Առաքել աթոռակիցը³⁵:

Այսպիսով, Մ. Սմբատյանցի այս անտիպ ուսումնասիրության շնորհիվ մեզ է հասել 14 արձանագրություն, որից հինգը չեն պահպանվել: Ավելին, մեկ վիմագիր պահպանվել է միայն Մ. Սմբատյանցի գրառումներում:



նկ. 1



նկ. 2

³² Մանուչարյան Ա., *Աթոռակից կաթողիկոսների վիմագիր հիշատակություններ, Էջմիածին, 2016, մայիս, էջ 115*:

³³ *Գործ 167, թերթ 10ա*:

³⁴ *Հարությունյան Ա., Միմոնյան Ա.*, Ջորավոր Ավետարանը, Եր., 2016, էջ 13:

³⁵ *Օրմանյան Մ.*, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը, սկիզբն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած (վերահրատարակություն), հատոր Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 2667-2668:



նկ. 3



նկ. 4



նկ. 5



նկ. 6



նկ. 7



նկ. 9



նկ. 8

**НЕИЗДАННЫЕ ИССЛЕДОВАНИЯ
АРХИЕПИСКОПА МЕСРОПА СМБАТЬЯНЦА***Резюме**С. Адамян*

Исследования средневековых памятников и особенно церквей и летописей в Ошакане начались в 19 веке, где важное значение было уделено летописям Ованнеса Шахатуньянца и великого учёного Хевонда Алишана. До нас дошли также неизданные рукописи архиепископа Месропа Смбатьянца, которые по неизвестным причинам не были опубликованы и остались в его архивных фондах. Великий эпиграфист архиепископ Месроп Смбатьянец (1833-1911) стоит в ряду лучших исследователей, благодаря которому из разных местностей Западной Армении до нас дошли более 700 летописей. В 1868-70 годах, получив должность зам. епархиального начальника, он предпринял строительство церкви С. Маштоц, оставил свидетельство о строительстве церкви, одновременно изучил памятники. Благодаря его рукописям, до нас дошли 15 летописей (одно было у подножья креста), из коих 6 не сохранилось. В статье они были представлены с расшифровкой автора, которые были сравнены с оригиналом, после чего с нашей стороны были внесены небольшие поправки. "Подпись" была написана до окончания строительства церкви С. Маштоц и 4 рукописи, которые были до этого, не сохранились или не были видны из-за работ, которые проводились в знаменательные годы внутри самой церкви. По этой причине мы придаем большое значение роли этих рукописей и надеемся, что они будут опубликованы, а эпиграфические надписи будут восстановлены благодаря армянским исследователям.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Աղախյան Սուսաննա Խաչատուրի – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, E-mail: susannaiae@mail.ru*

Ինքա ԱՎԱԳՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱԳԾԻՑ

2016թ. Գյումրու համայնքապետարանի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում կազմակերպվեց որոնողական գիտարշավ, որի նպատակն էր հանրապետական և տեղական հուշարձանների հաշվառումը, անձնագրավորումը և այդ հուշարձանների կարգավիճակի ճշտումը¹: Ուսումնասիրվող տարածքի համար ընտրվեց Ռուսթավելի, Շիրազի, Վարպետաց և Աբովյան փողոցների միջև ընկած քառակուսին: Արգելոց-թանգարանի այս հատվածում խիստ վթարային շենքերի քանակը համեմատաբար քիչ է, և այն համարվում է Գյումրու զբոսաշրջային կենտրոնը (լուս. 9): Այս պահի դրությամբ տարածքում կան հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների կարգավիճակ ունեցող կառույցներ, որոնք հաշվառված են «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի» հուշարձանների ցուցակում²: Նաև ճշտվելու է կարգավիճակը տեղական նշանակության մի քանի հուշարձանների, որոնք այժմ հնարավոր է, որ դասվեն հանրապետական հուշարձանների շարքին:

Ուսումնասիրված շենքերը, ըստ արտաքին և ներքին հարդարման, կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբի մեջ կարելի է առանձնացնել այն հուշարձան շենքերը, որոնց միայն արտաքին տեսքն է պահպանվել: Այս շինությունները ժամանակի ընթացքում կորցրել են Ալեքսանդրապոլի շինություններին բնորոշ ներքին հարդարանքը: Փոխվել են այդ կառույցների լուսամուտները, դռները, փայտե առաստաղները փոխարինվել են բետոնյա առաստաղներով: Երկրորդ խմբի մեջ մտնող կառույցների թե՛ արտաքին, թե՛ ներքին հարդարանքներում պահպանվել են Ալեքսանդրապոլի ավանդական ուրվագծերը: Այս շենքերի տերերը, որպես օրենք, երկար ժամանակ տներում ապրելով, ջանացել են պահպանել հնից եկածը: Մեզ համար իսկական բացահայտում էր այն փաստը, որ այսօրվա դրությամբ կարող ենք առանձնացնել նաև շինությունների երրորդ խումբը: Վերջինիս մեջ առանձնացվել են այն կառույցները, որոնք պահպանել են ավանդական ներքին հարդարանքը, սակայն անշուք արտաքինի պատճառով չեն դասվել քաղաքային նշանակության հուշարձանների շարքին:

Մտորն բերում ենք Աբովյան և Վարպետաց փողոցներում գտնվող հուշարձան-տների նկարագրությունը.

¹ Մեր երախտագիտությունն ենք հայտնում Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն Ս. Տեր-Մարգարյանին և ավագ գիտաշխատող Պ. Զաքարյանին լուսանկարները տրամադրելու և աշխատանքը սատարելու համար:

² Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Հրատարակության 8-րդ տարի, № 52 (351), 29 սեպտեմբերի, 2004:

Աբովյան թիվ 210 (պետական ցուցակ №4.472): Հուշարձանը կառուցվել է 1890-ական թթ.: ՀՀ պաշտոնական տեղեկագրում հուշարձանը թվագրվում է XX դ. սկզբով, ինչը հակասում է տան տերերի՝ Շատվորյանների հայտնած տեղեկություններին: Ըստ տանտիրոջ բանավոր հաղորդման՝ գերդաստանը բնակվում է այս տանը մոտ 120 տարի: Գնել է Շատվորյան Արշակը 1890-ական թթ.: Պահպանվել են «բոխչա թավանը», գեղեցիկ շքամուտքը, ներսի չորս և դեպի բակ տանող՝ ոճով տարբեր փայտե նախշազարդ գեղեցիկ դռները: Միջանցքի հատակը պատված է Արտաշես Տայանի գործարանում պատրաստված նախշասալիկներով (պահպանության աստիճանը՝ վատ): Պատուհանները փոխված են: Ծածկափեղկերը բացակայում են: Տունը ունի փայտե հարթ առաստաղով նկուղ: Կառույցի գեղեցիկ ճակատը կառուցված է Ալեքսանդրապոլի սև տուֆից:

Աբովյան թիվ 202 (196, 198, 200) (պետական ցուցակ №4.470): Հուշարձանը կառուցվել է XX դ. սկզբին: Տունը պատկանել է Ավետիսյանների ընտանիքին: Պահպանվել են ներսի յոթ փայտե դռները, «բոխչա թավանը» և փայտե հատակը: Երկրորդ հարկում պահպանվել է թաղակապ կցակառույցը, որտեղ առկա են բուխարու հետքերը: Նկուղները թաղակապ են: Ըստ տանտիրուհու՝ Աննա Հովհաննիսյանի հայտնած տվյալների՝ տան իսկական տիրոջը աքտրել են Միբիբ, որից հետո տունը մեկ ուրիշից գնել է Աննա Հովհաննիսյանի սկեսրայրը: Այս կառույցը ևս ունի տեղական սև տուֆից պատրաստված ճակատ:

Աբովյան թիվ 206, 208 (204) (պետական ցուցակ №4.471): Հուշարձանը կառուցվել է XX դ. սկզբին: Այժմ տունը պատկանում է Կուրդիսյանների ընտանիքին: Ըստ տանտիրուհու պատմածի՝ տունը եղել է քաղաքի հայտնի մեծահարուստ Պապիկյան եղբայրների սեփականությունը: Կառուցող քարտաշ որմնադիրները նույնպես Պապիկյանների տոհմից էին: Տունն ունի երկու հոյակապ նախշազարդ շքամուտք և երկու գեղեցիկ շքապատշգամբ, որոնք տեղադրված են տան երկրորդ հարկի արևելյան սրբատաշ ճակատի վրա: Ներքին բակի կողմից պահպանվել են փայտե պատշգամբի որոշ դետալներ: Այս պատշգամբի հիմնական պատի անկյունները ունեն ոչ սուր, այլ, եռանկյունաձև շարվածք, ինչն ավելի ակնհասձո է դարձնում պատերի ճարտարապետական հորինվածքը: Պահպանվել են երկրորդ հարկի մետաղյա վառարանը, բուխարին, որի ծխատարը անցնում է նկուղից մինչև տանիք: Եզակի է նաև փողոցի կողմից պատշգամբ տանող դռան ծածկափեղկերի առկայության փաստը: Տան զարդաքանդակված դռները, ծածկափեղկերը, փայտե հատակը և առաստաղը՝ «բոխչա թավան» մաքրվել են ներկից և գտնվում են հոյակապ վիճակում: Նկուղը թաղակապ է՝ լավ պահպանված: Բակում կա սրբատաշ քարով շարված ջրհոր, որի ջուրը վատորակ է: Բացակայում է ջրհորի բերանին դրված բիլագուկը: Կառույցն ունի տեղական սև տուֆով շարված գեղեցիկ ճակատ և բազալտից հիմնախարիսխ (ցուկոյ): Հանվել են դռներից և ծածկափեղկերից մի քանիսը, որոնք լավ պահպանվել են ներսի սենյակներում: Մետաղյա վառարաններից պահպանվել է միայն մեկը՝ երկրորդ հարկում: Վերանորոգման փուլում է փայտե պատշգամբը: Պահպանվել են տան նախկին տիրոջ՝ Պապիկյանի Թիֆլի-

սի առևտրային ուսումնարանի ավարտական լուսանկարը (1911թ.), որոշ ազգագրական իրեր՝ պղնձե հավանգ, պղնձե թասեր, նաև՝ քանդակազարդ հին հայելի:

Աբովյան թիվ 111 (պետական ցուցակ №4.39): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին: Պահպանվել են ներսի քանդակազարդ դռները, հինգ պատուհանների ծածկափեղկերը, թաղակապ կիսանկուղը, որը մուտք ունի Աբովյան փողոցից: Տան շքամուտքը բարձր է՝ դիմացը կառուցված հարթակով: Մուտքի դռան վերևում պահպանվել է մետաղական կռածո ձևավոր հենքի վրա կառուցված «բոխչա թավանով» հովածածկը: Կառույցի ճակատը սև տուֆից է կառուցված, որի շարքերի կարերն ընդգծված են սպիտակ «ղայթանով»³: Այս տանն է նկարահանվել «Խնձորի այգին» ֆիլմը:

Աբովյան թիվ 121 (պետական ցուցակ №4.40): Սա նախկին Սահականուշյան դպրոցն է, որ կառուցվել է 1882թ. մահտեսի Կարապետի Յուզբաշյանի նվիրատված և քաղաքի բնակիչների հանգանակած գումարներով: Այս մասին արձանագրությունը պահպանվել է շենքի՝ տեղական սև տուֆից կառուցված արևմտյան ճակատի վրա. «Սահականուշեան Օրիորդաց Ուսումնարան Հայոց Աղէքսանդրապօլու, Կառուցեալ արդեամբ Ուսումնարանին, օժանդակութեամբ Մահտեսի Կարապետի Իւզբաշեանց և նուիրանօք ժողովրդոց ի Հայրապետութեան Տ.Տ. Գեորգայ Դ-ի յամի 1882 ՌՅԼԱ» (լուս. 12):

Աբովյան թիվ 216 (պետական ցուցակ №4.943): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին քաղաքի հայտնի մեծահարուստ Ռաֆայելյանների կողմից և օգտագործվել է որպես խանութներ: 1970-ական թթ. շենքը վերածվել է Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի և նույն նպատակով էլ օգտագործվում է մինչև օրս: 1980-ական թվականներին լրակառուցվել է 2-րդ հարկը: Կառույցն ունի սև տուֆից կառուցված հոյակապ ճակատ:

Ռուսթավելի թիվ 22 (պետական ցուցակ №4.38): *Ռուսթավելի թիվ 24* և *Աբովյան թիվ 184 տների հետ* այն պատկանել է Արաբաշյաններին: Հուշարձանը կառուցվել է XIX դ. II կեսին: Պահպանված է փայտե «բոխչա թավանը», որի վրա բյազ է քաշված: Ունի լավ պահպանված չորս փայտյա ձևավոր դռներ, պատուհանների լավ պահպանված ծածկափեղկեր: Լուսամուտները կամարաձև են: Պահպանվել է փայտյա շքամուտքը, որը փակ է և չի օգտագործվում: Պահպանվել են թիվ 24 տան փայտե նախշազարդ մոդեռն ոճի դուռը, երկու մետաղյա կռածո նախշազարդ պատշգամբները, որոնք անմխիթար վիճակում են: Կա նաև երրորդ պատշգամբը, որը գտնվում է ճարտարապետական այլ հորինվածքով դեկորի վրա: Տան հին «բոխչա թավանը» չի պահպանվել, բացառությամբ միջանցքի մի փոքր հատվածի: «Եռանկյունի» ֆիլմի որոշ կադրերում նկարահանվել է այս հուշարձանի պատշգամբը:

Ռուսթավելի թիվ 30 (պետական ցուցակ №4.945): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին: Կառուցվել է որպես շահութաբեր տուն: Հեղափոխությունից հետո ազգայնացվել է և օգտագործվել որպես բազմաբնակարան բնակելի տուն: 1988թ.

³ Խոսքը «ղայթան դարզի» մասին է, երբ կիս շարված քարերի միջև ընկած տարածությունը ներկել են սպիտակ ներկով, որը պարան էր հիշեցնում:

երկրաշարժից վթարվել է: 2000 թ. սկզբներին շենքի մի հատվածը վերանորոգվել և օգտագործվում է որպես Մհեր Մկրտչյանի հուշաթանգարան: Առկա է լավ պահպանված թաղակապ կիսանկուղը: Կառույցի արևելյան շքեղ ճակատը կառուցվել է Ալեքսանդրապոլի սև և կարմիր տուֆերի համադրությամբ, իսկ հյուսիսային ճակատը՝ տեղական սև տուֆով:

Աբովյան 186 (պետական ցուցակ №4.50): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին՝ 1890-ական թթ.: Հավանաբար, Ղարսից գալով, Ղազարյանների տոհմի ավագը գնել է այս տունը: Ղազարյանները այստեղ ապրում են շուրջ 120 տարի: Պահպանվել են փայտե շքամուտքը, ներսի նախշազարդ չորս դռները, «բոխչա թավանը», լուսամուտների ծածկափեղկերը և պատի մեջ փորված փայտե պահարանի (դուլար) դռները:

Շիրազի՝ նախկին Գորկու թիվ 30 (պետական ցուցակ №4.946): Տունը կառուցվել է XIX դ. վերջին-XX դ. սկզբին, ժամանակին քաղաքում հայտնի մեծահարուստ Դրամփյան ընտանիքի կողմից որպես շահութաբեր տուն: Ունի թաղակապ կիսանկուղ, որտեղ երկար տարիներ գործել է «Գյումրի» ռեստորանը: Խիստ անմխիթար վիճակում են կառույցի մի շարք սենյակների փայտյա առաստաղները, դռները, պատուհանները և պատշգամբը: Կառույցն ունի տեղական սև տուֆից շքեղ ճակատ: Հուշարձանի հյուսիսային պատին առկա են լվացարանի հայելու նմանվող ձվաձև քանդակազարդ դեկորներ: Ասում են, թե դա է պատճառը, որ կառույցը քաղաքի բնակիչները անվանել են «Բարիլույսի» շենք:

Վարպետաց՝ նախկին Շահումյան թիվ 87 (պետական ցուցակ №4.953): ՀՀ պաշտոնական տեղեկագրում թվագրվում է XIX դ. վերջով: Հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի պապենական տունն է, կառուցվել է սև տուֆից:

Վարպետաց փողոց թիվ 101 (պետական ցուցակ №4.873): Հուշարձանը կառուցվել է 1886թ., տեղական կարմիր և սև տուֆերի համադրությամբ (հիմնախարիսխում՝ կարկանդակի շարվածք⁴): Կառուցվել է Քեշիշյան ընտանիքի կողմից: Առկա են քանդակազարդ դռներ, փայտյա առաստաղներ, թաղակապ փոքր նկուղ: Հեղափոխությունից հետո ազգայնացվել է: 1980-ական թվականներին շենքը ազատվել է բնակիչներից, վերականգնվել է և մինչև այժմ օգտագործվում է որպես Հովհ. Շիրազի հուշաթանգարան:

Վարպետաց փողոց թիվ 148 (պետական ցուցակ №4.375): Հուշարձանը կառուցվել է 1880թ.: Տունը պատկանել է Ալեքսանդրյան ընտանիքին:

Վարպետաց թիվ 160, 162, 164 (պետական ցուցակ №4.221, №4.222): Շինությունները կառուցվել են XIX դ. վերջին: Թիվ 160 տունը Ալեքսանդրապոլի սև տուֆով կառուցված ճակատ ունի, որը փողոցի կողմից գտնվում է հողաշերտի մեջ, և երևում են նրա սրբատաշ քարերի միայն յոթ շարքերը:

Վարպետաց 99: Հուշարձանների ցուցակում բացակայում է: Ս. Մաթևոսյանի կարծիքը, թե «Այստեղ [Գյումրիում-Ի.Ա.] կան հայկական դասական կոթողներին համարժեք կառուցվածքներ, որոնք ճարտարապետական մտահղացմամբ

⁴ Մաթևոսյան Ս., Լենինականի XIX դարի քաղաքատիպ բնակելի տները, ՊԲՀ, թիվ 3, 1972, էջ 171:

սերտ կապ ունեն միջնադարյան հայ մշակույթի, հատկապես Անիի ճարտարապետության հետ և ներկայացնում են նրա շարունակությունը մեր օրերում»⁵, կարծում ենք, կարող է իրավամբ վերաբերել Վարպետաց փողոցի տներից մեկում բացահայտված աղոթարանին: Այն ունի արևմուտք-արևելք ուղղվածություն: Տունը, որի նշանավոր փայտե դարպասը չի պահպանվել, նկարահանվել է «Կտոր մը երկինք» հանրաճանաչ ֆիլմում (լուս. 6, 10), սակայն պահպանվել է ոչ պակաս արժեքավոր՝ փայտե երկփեղկ գամերով դուռը (172սմ X 88 սմ), գամերը 24-ն են (յուրաքանչյուր փեղկի վրա 12-ը (լուս. 8): Այդ դուռը տանում է դեպի միջանցք, որտեղ բնակվում են երկու ընտանիքներ: Երկու բնակարանների միջև գտնվում է փոքր ներքին բակը, որը մի քանի տարի առաջ, ըստ բնակիչների պատմածի, տանում էր դեպի խորդանոց: Մեփականատիրոջ բնակարանի և խորդանոցի վերանորոգման ժամանակ էլ բացահայտվել է, որ յոթանասուն և ավելի տարիներ որպես խորդանոց ծառայած կառույցն աղոթարան է: Հատակագծում կառույցն էրկեր⁶ է հիշեցնում, որի կողմերի երկարությունը 1,28մ X 1,43մ X 1,44մ X 1,40մ X 1,28մ X 3,45մ է:

Աղոթարանի գմբեթը խիստ վթարային վիճակում է՝ փլուզված: Պատերի պահպանված բարձրությունը 2,5մ X 3մ: Մեփականատերերը այն ծածկել են ժամանակակից ծածկով: Պահպանված հատվածի ներքին չափերն են 2,55մ X 3,90մ: Աղոթարանի պատերի մեջ պահպանվել են չորս որմնախորշեր՝ ընծայարաններ (55սմ X 40 սմ) (լուս. 1, 2): Նմանօրինակ որմնախորշ կա նաև Չիթոդցյանների տան նկուղային հարկի պատերից մեկում: Աղոթարանի ներքին հինգ շարքերը սրբատաշ տուֆից են, որոնց վրա համեմատաբար մանր կոպտատաշ տուֆաքարերով շարքերն են: Այս շինարարական հնարքը հանդիպում է նաև Հայաստանի միջնադարյան այլ հուշարձաններում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի Ամարասի վանքում:

Դեռևս 1850-ական թթ. Ալեքսանդրապոլի տների արտաքին ճակատները երեսապատում են սրբատաշ քարով, շարքի քարերը ընդգծում սպիտակ «ղայթաններով»⁷: Ուշագրավ է աղոթարանի մուտքի կամարը (լայնությունը 3,45 մ), որը պատրաստվել է Ալեքսանդրապոլի կարմիր և սև տուֆերից՝ հերթականությամբ իրար ազուցվելու եղանակով (լուս. 3, 4) և ընդգծված է սպիտակ յուրօրինակ «ղայթանով»: Աղոթարանի պահպանված մասի հիմնական շինանյութը սև տուֆն է, որոշ մանրամասներ արված են կարմիր տուֆից: Այսպիսի մանրամասներից է աղոթարանի մուտքից դեպի ձախ, հյուսիսային պատի մեջ գտնվող կամարը (լուս. 7), որը ամբողջապես կարմիր տուֆից է և եզրագծում է քառակուսի հատակագծով բուխարին (48 սմ X 80 սմ) (լուս. 5): Բուխարին վերնի մասում գտնված է: Ավելի վաղ թվագրությամբ նմանօրինակ բուխարիներ կան Հայաստանի միջնադարյան այլ հուշարձաններում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի Ամարասի վան-

⁵ Տե՛ս Մաթևոսյան Ս., XVIII-XIX դդ. Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985:

⁶ Երկեր՝ սենյակի կիսաբոլոր կամ բազմանկյունի կարկառամաս: Տե՛ս Գարապետյան Ս., Ռուս-հայերեն-անգլերեն ճարտարապետական շինարարական տերմինների բառարան, Եր., 1991: Гарибян А., Русско-армянский словарь, Ер., 1977.

⁷ Մաթևոսյան Ս., Լեռնականի XIX դարի քաղաքատիպ բնակելի տները, էջ 171:

քում: Մուտքի կամարի շինարարական տեխնիկան, որ բնորոշվում է իրար մեջ ամրացող կարմիր և սև քարերի հերթագայությամբ, հանդիպում է Հայաստանի մյուս շրջաններում, պատմական Ջավախքում՝ Ախալքալաքի և Ախալցխայի գյուղերում, մասնավորապես Կարգախում և թվագրվում է XIX դ. առաջին կեսով: Ամենայն հավանականությամբ, Վարպետաց 99 հասցեում բացահայտված աղոթարանը ևս, որպես Ալեքսանդրապոլի հին կառույցներից մեկը, կարող ենք թվագրել նույն շրջանով:



1. Աղոթարանի որմնախորշերը



2. Աղոթարանի որմնախորշերը



3. Աղոթարանի մուտքի կամարի տեսքը ներսից



4. Կամար՝ իրար ագուցված կարմիր և սև տուֆաքարերով



5. Ջնռված բուխարի



6. «Կտոր մը երկինք» ֆիլմում նկարահանած փայտե դարպասը. տեսարան փողոցից դեպի ներս, որտեղից երևում է գամերով փայտե դուռը



7. Աղոթարանի բուխարու կամարը



8. Գամերով դուռ



9. Փորագրությամբ փայտե պուճը



10. «Կտոր մը երկինք» ֆիլմում նկարահանած փայտե դարպասը, տեսարան ներսից դեպի դուրս



11. Ուստանասիրված քառակուսու հատակագիծը (հեղինակ՝ Ս.Տեր Սարգսյան)
▲-Աղոթարանի մուտավոր տեղադրությունը:



12. Սահականուշյան օրիորդաց ուստմարանի արձանագրությունը

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ՆՎԻՐՅԱԼԸ. ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՍԵՐԳԵՅ ՄԻՐՉՈՅԱՆ

Կան մարդիկ, որոնց կյանքն ու ստեղծագործությունը սերտաճել են Գյումրու պատմությանը... Ստեղծագործողների համեստ կենսակերպը զերծ է եղել հանրային ուշադրությունից, նրանք չեն խոսել իրենց կատարած գործի մասին, իրենց չեն համարել արվեստի հիմնասյուներից: Մակայն նրանց կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ նվիրում, նվիրում հարազատ քաղաքին, մարդկանց, արվեստին: Նման արվեստագետներից է Սերգեյ Հրանտի Միրզոյանը: Մարդ, որը մեծապես նպաստել է Գյումրու մշակութային կյանքի նկարագրի ձևավորմանը:

Սերգեյ Միրզոյանը ծնվել է 1925թ. Լենինականում, կարսեցի ժամագործ Հրանտ Միրզոյանի ընտանիքում: Նկարչական շնորհքը նա ժառանգել էր մորից՝ Շուշանիկ Միրզոյանից, որն ասեղնագործում էր ու տիկնիկներ պատրաստում: Պճնված այդ տիկնիկները այսօր գտնվում են թոռան՝ Հրանտ Միրզոյանի արվեստանոցում՝ իբրև հայ կնոջ անկրկնելի ճաշակի ու վարպետության վկայություններ: Միրզոյանի պատանեկությունը համընկավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ կիսաքաղց ու բոքիկ տղաները երագում էին միայն մոտալուստ հաղթանակի մասին: Այդ դաժան տարիներին Միրզոյանի համար նկարչությունը դառնում է կյանքի իմաստ՝ ամբողջությամբ համակելով նրան: 1940-ական թթ. Լենինականի Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցի տնօրենն էր Շանթ Սարգսյանը՝ պատկառելի մի մտավորական. նա պատերազմի դժվարին տարիներին իր աշակերտներին հաղորդակից դարձրեց արվեստի լույսին: «Դու կգաս ինձ փոխարինելու». Շանթ Սարգսյանի այս խոսքերը Միրզոյանի համար դարձան կանխատեսական: Մակայն առջևում դեռ Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանն էր, Գեղարվեստաթատերական ինստիտուտը, որտեղ նա ուսանելու էր հայկական գրաֆիկայի և գեղանկարչության հիմնադիրներին՝ Մարտիրոս Սարյանին ու Հակոբ Կոջոյանին: Միրզոյանին հիացնում էր նրանց պարզ, անմիջական և միևնույն ժամանակ պահանջկոտ բնավորությունը: Նկարիչը մեծ երախտագիտությամբ է հիշում Հ. Կոջոյանին, որը սովորեցնում էր ուսանողներին տեսնել, զգալ, սիրել գույնն ու գիծը...

1955թ. Միրզոյանը վերադառնում է հայրենի քաղաք, որտեղ դասավանդում է նկարչական դպրոցում՝ ընդհանուր առմամբ մանկավարժական գործունեությանը նվիրելով 40 տարուց ավելի: Այս տարիների ընթացքում նա նկարել է սովորեցրել երիտասարդների մի քանի սերունդների, որոնցից շատերը հետագայում իրենց կյանքն ընդմիջտ կապեցին արվեստի հետ (Հ. Ղուկասյան, Գ. Մանուկյան, Գ. Սարգսյան, Կ. Ալեքյան և այլք):

Լենինականի Մերկուրովի անվան նկարչական դպրոցը ուներ բարի ավանդույթներ. այն հիմնադրվել էր 1921թ.: Տարբեր տարիներին դպրոցը ղեկավարել են Ա. Բրուսյանը, Շանթ Սարգսյանը, Հակոբ Անանիկյանը... 1977-1987 թվականներին նկարչական դպրոցի տնօրեն է նշանակվում Սերգեյ Միրզոյանը:

Այսօրվա հեռավորությունից կարելի է ասել, որ դրանք եղել են դպրոցի լավագույն տարիները: Նկարչական դպրոցը գտնվում էր Ալեքսանդրապոլի առաջին քաղաքագլուխ Գեղամ Տեր-Պետրոսյանի մոդեռն ոճի առանձնատանը (քաղաքային զբոսայգու դիմացի սև շենքը): Ճիշտ է, այն այնքան էլ հարմարեցված չէր դպրոցի պարավաններին, սակայն հանդիսավոր դասականության ոգին, որ տիրում էր այնտեղ, ստեղծագործելու էր մղում: Այդ տարիներին էլ ձևավորվում է նկարչական դպրոցի դասավանդող կորիզը: Ուլթեր այդ տարիներին հաճախել են նկարչական դպրոց (դրանց թվում նաև՝ տողերիս հեղինակը), հիշում են այն բարյացակամ ու ստեղծագործական մթնոլորտը, որ տիրում էր դպրոցում: Միրզոյանը աշակերտների հետ նկարում էր, ճեպանկարներ անում, որոնք էլ արվեստանոցում վերածվում էին կտավների:

1960-ական թթ. Լենինականում նկատվում է մշակութային կյանքի որոշակի աշխուժություն. Ռաֆայել Եղոյանի ճարտարապետական կառույցները, Հակոբ Անանիկյանի ազգագրական թեմայով կտավները, Շանթ Սարգսյանի գողտրիկ բնանկարները, Հակոբ Զիվանյանի կոթողները քաղաքում ձևավորում են ստեղծագործական մթնոլորտ, որտեղ ներգրավված էր նաև Սերգեյ Միրզոյանը:

Միրզոյանը հիմնականում նկարել է բնապատկերներ և դիմանկարներ: Իրապաշտական ոճով նրա գծանկարներն ու յուղաներկ աշխատանքները պարուրված են յուրահատուկ ջերմությամբ և լուսավոր զգացողությամբ: Դրանք կատարված են նուրբ գունային հարաբերությունների կիրառմամբ: Պատկերելով իր ժամանակակիցներին՝ նա ընտրում է որոշակի տիպարների («Ընկերոջ դիմանկարը», «Մելառ Վաղոն» «Ազգականուհու դիմանկարը»): Այս դիմանկարները փոքր-ինչ իդեալականացված են (միգուցե արտահայտում են ժամանակի ոգի^ն), սակայն զգացվում են նկարչի պինդ գծանկարը, աշխարհին բարի այքերով նայելու մղումը: Առավել հաջողված են Միրզոյանի քաղաքային բնապատկերներն ու գեղջկական հովվերգական տեսարանները. նկարիչն ասես զգում է բնության հարափոփոխ ընթացքը: Նրա «Ոսկե աշուն»՝ չափերով ոչ մեծ կտավների շարքը պատկերում է բնության գողտրիկ որևէ անկյուն՝ ողողված աշնանային ոսկեգույնի խելահեղ շուրջպարով: Սակայն ասես «գարմանալով» իր իսկ համարձակությունից՝ նկարիչը ծառերի ոսկեգույնը հավասարակշռում է մոխրագույն երկնքի և մուգ կանաչ ֆոնի հետ: Այս երկու կտավները ավելի շուտ բացառություն են Միրզոյանի այս շրջանի ներկայնակի համար: Լակոնիկ ուրվագծով, պարզ, անպաճույճ կոմպոզիցիոն կառուցվածքով, խամրած գունաշարով այդ գործերը մոտ են Հակոբ Անանիկյանի ստեղծագործություններին: Նմանությունը պատահական չէ. այն բխում է մտածողությունից, որը դիպուկ է, սուր և սեղմ: Այս գծերն էլ կանխորոշում են Շիրակի նկարչական դպրոցին բնորոշ արտահայտչականությունը:

Միրզոյանի ստեղծագործության մեջ կա սիրելի մի թեմա, որին նա հաճախ է անդրադարձել իր ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում, անգամ խորհրդային տարիներին, երբ մեծ մասամբ խուսափում էին իրենց կրոնական համոզմունքների դրսևորումից: Նա ոչ միայն չէր թաքցնում իր կրոնական հայացքները, այլև պարբերաբար անդրադառնում էր դրանց իր ստեղծագործություններում:

րում: Եկեղեցին, ինչպես նկատել էր Ջիվանին իր հայտնի բանաստեղծության մեջ, Գյումրու խորհրդանիշն էր, քաղաքի հոգևոր գորավիզը, պատմությունը: Միրզոյանի 1970-ական թթ. նկարած «Յոթվերքը եկեղեցու բակը» խառը տեխնիկայով ստեղծված նկարը պարուրված է բանաստեղծական շնչով: Խոր աշնանային տերևաթափ ծառերով, գողտրիկ գետնավոր տներով բակը ամբողջանում է եկեղեցու բնապատկերի հետ. ամեն ինչ շնչում է հանգստությամբ ու ներդաշնակությամբ: 1987թ. յուղաներկի տեխնիկայով կատարված «Յոթվերքը» յուրօրինակ կանխատեսական խորհուրդ է քաղաքի համար: Այն ասես հրաժեշտ է Լենինականին, որն ընդամենը մեկ տարի անց՝ ավերիչ երկրաշարժին, կվերածվի ավերակների: Նկարն աչքի է ընկնում արարման զարմանալի ազատությամբ, պինդ քսվածքներով, վառ գունային հակադրություններով: Տեսարանն ընտրված է բարձր դիտակետից: Նկարն ընկալվում է ամբողջական, մոնումենտալ:

Երկրաշարժից հետո միառժամանակ Միրզոյանը չէր ստեղծագործում. նա ասես կորցրել էր հոգևոր կապը իր սիրելի քաղաքի հետ: Նկարիչը անվերջ մտորում էր, վերհիշում անցած օրերը: Եվ ինչպես լինում է նման դեպքերում, հենց նկարչությունն էլ հարություն է տալիս նրան: Նա սկսում է նկարել վառ, ակտիվ գույներով, աննախադեպ ամուր քսվածքներով: Նրա վրձինն ասես նոր թափ է ստանում, թեմաները դառնում են ընդգրկուն: Ամենասովորական թեմաներն անգամ նրա վրձնած կտավներում ընկալվում են հուզական և պոետիկ: «Մեր բակը» նկարը պատկերում է քաղաքի՝ արևով լուսավորված մի գողտրիկ անկյուն: Հին, մաշված դռան դիմաց քուջուջ են անում հավերք: Նկարում կա լռության ու ունայնության զգացողություն: Գունաշարի առումով սա առավել հասուն և գեղեցիկ ստեղծագործություններից է. այն անցում է կատարում բաց դարչնագույնից շագանակագույնի: 1997թ. ստեղծված «Մուրբ Նշան եկեղեցին» Միրզոյանի լավագույն ստեղծագործություններից է, ասես նրա այցեքարտը արվեստում: Գիշերային երկնքի մուգ կապույտ ֆոնին հստակ ուրվագծվում է արծաթափայլ եկեղեցին: Նա կանգուն է՝ ի հեճուկս բոլոր փորձությունների ու աղետների: Եկեղեցու վսեմ և հպարտ նկարագիրը հավատ է ներշնչում. քանի դեռ կանգուն է եկեղեցին, կգոյատևի նաև քաղաքը...

Ավարտելով իր մանկավարժական գործունեությունը՝ ավեզարդ նկարիչն անցավ վաստակած հանգստի: Մակայն նա մինչև կյանքի վերջին օրը վայր չդրեց իր վրձինը: Հաճախ Միրզոյանը վերցնում էր ներկապնակը և գնում ծերանոց՝ նկարելու նրա բնակիչներին: Նկարչի այցելությունները ուրախություն ու սփոփանք էին բերում ծերերին: Երբ խնդրեցի ցույց տալ այդ դիմանկարներից որևէ նմուշ, նա չկարողացավ, որովհետև բոլորը բաժանել էր...



ПРЕДАННЫЙ ИСКУССТВУ СЕРГЕЙ МИРЗОЯН

___ Резюме ___

___ А. Маргарян ___

В 1960-х годах в попытке придания армянскому изобразительному искусству “человеческого лица” в немалой мере проявились и в творчестве ленинканского художника Сергея Грантовича Мирзояна.

Наша публикация посвящена творчеству того, кто в большей степени способствовал созданию городской культуры.

В основном Мирзоян создавал пейзажи и портреты. Выполненные в реалистической манере графические рисунки и картины маслом наполнены особенной теплотой и ощущением света. После землетрясения какое-то время Мирзоян не занимался творчеством: он словно потерял духовную связь с любимым городом.

Впоследствии он вновь начал рисовать яркими, активными (насыщенными) цветами, беспрецедентными густыми мазками. Завершив свою педагогическую деятельность, седовласый художник до последнего дня своей жизни не расставался с кистью. Часто Мирзоян брал свою палитру и шел в дом престарелых изображать его обитателей.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգարյան Արար Մամվելի - արվ. թ., Երևանի գեղարվեստի ակադեմիայի

Գյումրու մասնաճյուղ, E-mail: araxmargaryan@dmil.com

Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՆՈՒԲՅԱՆ ԳԵՏԻ ՎԵՐՆԱՀՈՎՏԻ ԱՍՐՈՑՆԵՐԸ

«Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները» պետական ֆինանսավորմամբ իրականացվող թեմայի շրջանակներում ձեռնամուխ եղանք հետախուզական այցեր կատարելու Ախուրյան գետի ակունքներում և վերնահովտում՝ Արփի լճի արևելյան, հյուսիսարևելյան ափին և Ամասիա գյուղի շրջակայքում (Քարտեզ 1): Հետախուզական աշխատանքների շնորհիվ փաստագրվել են մի շարք նոր հուշարձաններ, որոնք մտնում են Ախուրյան գետի ամրաշինական համակարգի մեջ:

Ձորակերտ: Ձորակերտ գյուղը գտնվում Արփի լճի հյուսիսարևելյան կողմում, քարքարոտ ու բլրոտ վայրում: Գյուղի հյուսիսարևելյան հատվածում գտնվում է «Պուլոզ սար»-ը, որի գագաթին են կիկլոպյան շարվածքով ամրոցի մնացորդները: «Պուլոզ սարի» ամրոցը գտնվում է ծովի մակերևույթից 2140 մ բարձրության վրա¹ (նկ. 1-2): Բլուրի գագաթը արհեստական հարթեցված է, որտեղ նկատվում են եռաշարք պարիսպների հետքեր, իսկ պարիսպների մեջ՝ 7-9 շրջանաձև հիմքով սենյակների մնացորդներ: Պարսպի առաջին շարքից պահպանվել է միայն բլրի հարավահայաց կողմում՝ 0.8 մետր բարձրությամբ (նկ. 3): Բլրի լանջերին և գագաթնամերձ հատվածում մեծ քանակությամբ առկա են միջնադարյան խեցանոթների վերգետնյա բեկորներ: Գյուղացիների վկայությամբ, համայնքում շինարարությունների ժամանակ մեկուկես մետր խորության մեջ բացվել էին կարասներ, որոնք կտրվել են: Սրանք, ըստ երևույթին, եղել են կարասային թաղումներ, քանի որ, նույն գյուղացիների վկայությամբ, կարասների մեջ կային մարդկային ոսկորների մնացորդներ: Գագաթ բարձրացող հողե ճանապարհի ձախ կողմում՝ ավազի հանքի կտրվածքի վերին մասում, հողի մակերևույթից 60 սմ խորության մեջ պահպանվել են արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, հարթ ծածկասալերով, երկու կիսավեր սալարկղային դամբարաններ (նկ. 4):

Ավազահանքից հյուսիս՝ գագաթ գնացող հատվածում կա դեպի հարավ բացվող քարանձավ, որը, գյուղացիների վկայությամբ, ժամանակին ունեցել է մեծ չափեր, սակայն աստիճանաբար փլվել է և մուտքը փակել: Քարանձավի մուտքի մոտ և լանջին նույնպես առկա են միջնադարյան խեղեցենի բեկորներ: Բլրի հարթեցված գագաթին տուֆից ու որձաքարից կիկլոպյան շարվածքով կառուցված է պարիսպ, որի մեջ ընթերցվում է բնակավայրը: Պատերի պահպանված բարձրությունը հասնում է մինչև 1 մետրի, հաստությունը՝ 1.20 մ (նկ. 5-6): Բլրի արևելյան, արևմտյան և հյուսիսային կողմերում նկատվում են շրջանաձև հիմքով աշտարականման կառույցների մնացորդներ: Վերգետնյա նյութը միջնադարյան է: Հուշարձանի թվագրության ճշգրտության համար անհրաժեշտություն կա կատարելու հետախուզական պեղումներ:

¹ Աշխարհագրական կոորդինատներն են՝ 41.05՝ 44.39 N և 43.39՝ 51.18:

Բերդաշեն: Բերդաշենը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: Գյուղի եզրին՝ Ամասիա-Բերդաշեն ճանապարհի աջ կողմում, բլրի վրա գտնվում են միջնադարյան ամրոցի մնացորդներ: Ձվաձև բլրի (հյուսիս-հարավ՝ 43 մ, արևելք-արևմուտք՝ 30 մ) վրա կառուցված, դիմացի կողմից հարթեցված, ներսի կողմից՝ անմշակ, որձաքարից պարիսպն ունի տեղ-տեղ հասնող 1.2 մ բարձրություն (նկ. 7), հարավարևելյան հատվածում պահպանված պարսպի երկարությունը հասնում է մինչև 25 մետրի (նկ. 8): Դատելով պահպանված մնացորդներից՝ մուտքը եղել է արևելյան կողմից: Անմիջապես բլրի ստորոտին ընկած են միջնադարյան տապանաքարերը, որոնցից մեկին եպիսկոպոսական գավազան է պատկերված: Հաստ ճիմահողի և հուշարձանի խաթարվածության պատճառով վերգետնյա նյութերը խիստ սակավ են: Պարսպի մոտից հավաքած խեցեղենը վերաբերում է վաղ և զարգացած միջնադարին: Հուշարձանի թվագրության ճշգրտության համար անհրաժեշտություն կա կատարելու հետախուզական պեղումներ:

Ամասիա գյուղի մոտ կատարված աշխատանքների արդյունքում փաստագրվել են Ամասիա-Բերդաշեն ճանապարհի աջ կողմում գտնվող, շրջանաձև հիմքով մի քանի կառույցների մնացորդներ և այլ կառույցներ (նկ. 9): Սրանք գտնվում են ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: Վերգետնյա նյութը վերաբերում է վաղ միջնադարին:

Դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերված ամրաշինական կառույցները լուսանկարվել, մանրամասն նկարագրվել, նախնական թվագրվել և քարտեզագրվել են:



Քարտեզ I

Ախուրյան գետի ափունքներում և վերնահովտի՝ Արփի լճի արևելյան, հյուսիսարևելյան ափի և Ամասիա գյուղի շրջակայքի հնագիտական հուշարձանները



Նկար 1 Զորակերտի «Պուլոզ սարի» ամրոցը



Նկար 2 «Պուլոզ սարի» ընդհանուր տեսքը



Նկար 3. Զորակերտի ամրոցի պարսպի առաջին շարքից պահպանված հատված



Նկար 4 Սալարկղային թաղումներ «Ուլոզ սարի» հարավարևմտյան կողմում



Նկար 5 Զորակերտի ամրոցի արևմտյան պարսպի մնացորդները



Նկար 6 Զորակերտի ամրոցի հարավահայաց պարսպի մնացորդները



Նկար 7 Բերդաշենի ամրոցի ընդհանուր տեսքը



Նկար 8 Բերդաշենի ամրոցի պարսպը հարավից



Նկար 9 Ամասիա գյուղի մերձակայքում գտնվող շրջանաձև կառույցը

**ФОРТИФИКАЦИОННЫЕ СООРУЖЕНИЯ ВЕРХОВЬЯ
БАССЕЙНА РЕКИ АХУРЯН***___ Резюме ___**___ Б. Варданян ___*

Вокруг озера Арпи, у истока верховья реки Ахурян, были проведены разведочные работы, во время которых были найдены новые фортификационные сооружения. Так, на восточном берегу озера Арпа, на территории с. Бердашен, найдено фортификационное сооружение, высота стен которого местами достигает до 1.2 метра, а длина - 25 метров. У подножия холма были зафиксированы раннехристианские захоронения в каменных ящиках. На северо-восточном берегу озера Арпа, на территории с. Зоракерт, были зафиксированы по сей день неизвестные фортификационные сооружения: могильник и пещера, превращенная в жилище. На территории с. Амасия найдено несколько кругообразных сооружений и другие археологические памятники. Из всех мест, где велись разведочные работы, был собран подъемный материал, который относится к раннему и развитому средневековью. Все новонайденные памятники сфотографированы, описаны и задокументированы, предварительно датированы и нанесены на карты.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Վարդանյան Բենիկ Վարդանի - ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: vbenik@yahoo.com*

Մարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՆԸՆԿԱԸՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԴԱՆԿԱԸՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽՈՒՄ 1639-1700 թթ.

Հայկական ձեռագրային մշակույթի կարևորագույն և ուշագրավ դրսևորումներից են մանրանկարչությունն ու զարդանկարչությունը: Վերջիններս սկզբնավորվել են հայոց գրերի գյուտի ստեղծումից (405) հետո և արտացոլվել ձեռագիր մատյաններում: Առաջինը ներառում է գրչագիր մատյաններում արված գծանկարները, գունանկարներն ու գրքերի ձևավորումը՝ անվանաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր, սրբապատկերներ, պատմողական թեմատիկ տեսարաններ և այլն, երկրորդը՝ անվանաթերթերի վրա, խորաններում, լուսանցքներում, տերունական և սյուժետային մանրանկարների մանրամասներում, զարդաշրջանակների վրա արված զարդանկարները: Վերջիններս պատկերազարդվել են գուաշով, ջրաներկով, սոսնձաներկերով, ոսկով, երբեմն՝ արծաթով և այլն:

Հայկական մանրանկարչությունն ու զարդանկարչությունն աչքի են ընկնում ոճերի և դպրոցների բազմազանությամբ: Ամենից շատ պատկերազարդվել են Ավետարանները, ապա՝ Աստվածաշունչները և ծիսական-կրոնական մյուս ժողովածու-մատյանները (Մաշտոց Ձեռագ, Շարակնոց և այլն):

Դեռևս միջնադարում¹ Արցախում նկարազարդված ձեռագրերը կարելի է բաժանել երկու խմբի. առաջինի մեջ դասակարգվում են այն ձեռագրերը, որոնց բնորոշ են հայկական արվեստին ներհատուկ գծեր: Այս խմբի մանրանկարները բնութագրվում են հետևյալ ձևով. խորաններն ու անվանաթերթերն ունեն կոթողային ամուր կառուցվածք՝ հստակ նկարված զարդերի դեկորատիվ բնույթով: Հասկապես սպավորիչ են մարդկանց կերպարները, որոնցում նկարիչը կարողանում է հաղորդել հուզական լիցք և լավատեսական տրամադրություն²: Նկարների գունային կառուցվածքը դրսևորված է պարզ և մատչելի ձևով: Երկրորդ խմբի ձեռագրերն ունեն միառժամանակ մանրանկարներ: Վերջիններս հայ մանրանկարչության մյուս դպրոցների աշխատանքներից առանձնանում են պատկերագրական տարբերակների իրենց յուրահատկություններով և թեմատիկայի ընտրությամբ:

¹ Տարբեր դարաշրջաններում բազմաթիվ հայ գրչօջախներ և մանրանկարչական կենտրոններ ստեղծվել են Հայաստանում և հայկական գաղթօջախներում (Ղրիմ,Բոսալիա, Նոր Զուդա, Կ.Պոլիս, Կաֆա և այլուր): Արցախում մանրանկարչական արվեստը հայտնի է եղել դեռևս վաղ անցյալում, իսկ բուն վերելքն սկսվել է 13-րդ դարից: Արցախում գործել են մի շարք գրչակենտրոններ,որոնցից մի քանիսն իրենց գործունեությունը ծավալեցին նաև նոր շրջանում: Գրչակենտրոնները սերտ կապի մեջ էին գտնվում Հայաստանի մյուս շրջանների (նաև՝ հայկական գաղթավայրերի) հետ: Մանրամասն տե՛ս Հակոբյան Հ., Արցախի միջնադարյան արվեստը, Եր., 1991:Армянская миниатюра, Ер., 2007, стр. 51, 59: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դդ, Եր., 1974:

²Armenian miniatures of the 13th and 14th centuries, Er., 1984, p.37.

Արցախում ստեղծված ձեռագիր գրքերն իրենց զարդամոտիվներով նման են պատմական Հայաստանի մյուս նահանգներում՝ Սյունիքում, Գուգարքում, Այրարատում, Վասպուրականում պատրաստված մատյաններին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մանրանկարչության և զարդանկարչության մեծարժեք նմուշներ ենք հանդիպում ծաղկողների՝ Գրիգոր քահանայի, Ղազար սարկավազի (Քարահատ գյուղում, 1655³, 1691⁴), Ավետիս քահանայի (Պապաջան կամ Պապճան գյուղում, 1659⁵), Մովսես երեցի, Տեր Բարսեղի (Օար գավառում, 1653-1654⁶, 1684⁷), Գրիգոր երեցի (Գանձասարում, 1657⁸), Գայանեի (Ավետարանոցում, 1660⁹), Գրիգորի (Զարեքա վանքում, 1665¹⁰), Նիկողայոսի (Գետաշենում, 1667¹¹), Գրիգոր երեցի (Գանձակում, 1667¹²), Հովհաննեսի, Բարսեղ քահանայի, Ղազար Սարկավազի (Հարցհանգիստ կամ Հերցանկիս գյուղում, 1669¹³, 1683¹⁴) և ուրիշների ստեղծագործություններում:

1639-1700 թթ. Արցախի մանրանկարչական արվեստի թեմատիկան զանազան էր. ուշագրավ էին պոլիտային մանրանկարներն ու սրբերի դիմանկարները: Իրենց հետաքրքրությամբ առանձնանում են «Ավետում», «Ծնունդ», «Մկրտություն», «12 առաքյալներ», «Խաչելություն», «Վերջին դատաստան», «Ավետարանիչ», «Անվանաթերթ Մատթեոսի», «Մարիամ Աստվածածին», «Խորան¹⁵», «Կիսախորան», «Լուսանցազարդ», «Հիսուս Քրիստոս», «Խորհրդավոր ընթրիք» և այլ մանրանկարներ¹⁶:

Արցախի մանրանկարչական արվեստին առնչվող կարևոր նյութեր են պահվում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հարուստ հավաքածուներում: Մատենադարանի հետևյալ թվահամարների՝ 223 (Մուլթանեցիք,

³ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. N 3196:

⁴ Նույն տեղում, ձեռ. N 10660:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 3542:

⁶ Նույն տեղում, ձեռ. N 3647:

⁷ Նույն տեղում, ձեռ. N 2067:

⁸ Ն. արքեպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, հ. VII, Երուսաղեմ, 1974, էջ 366:

⁹ Ոսկեան Հ., Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 32:

¹⁰ ՄՄ, N 986:

¹¹ Եզանյան Օ., Էջմիածին, 1971, N 9, էջ 54:

¹² ՄՄ, ձեռ. N 6771:

¹³ Նույն տեղում, ձեռ. N 10966:

¹⁴ Նույն տեղում, ձեռ. N 3994:

¹⁵ Խորան են կոչվում գլխավորապես ավետարանների սկզբներում նկարված սյունազարդ դրվագները, որոնք ծառայում են իբրև համեմատության տախտակներ՝ ավետարանների նույնաբովանդակ գլուխների համար: Ավետարաններում ուշագրավ են պատկերազարդված կանոնական խորանները: Խորան է անվանվում նաև քրիստոնեական տաճարի այն մասը, ուր տեղադրվում է պատարագի Ավագ սեղանը, որտեղից էլ՝ Ավագ խորան:

¹⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց մասնաւոր անձանց (խմբագրութեամբ Օնիկ Եզանյանի), Բանբեր Մատենադարանի, 1980, թ. 13:

1647թ.), 337 (Պապաջան, 1662 թ.), 968 (Սուլթանեցիք, 1678 թ.), 986 (Չարեքա վանք, 1665թ.), 1032 (Գյուլիստան, 1692թ.) ներքո գտնվող ձեռագրերն ունեն կիսախորաններ, բազմաթիվ լուսանցազարդեր: Իր զարդանախշային մոտիվներով այքի է ընկնում N 2067 (Օար, 1684 թ.) ձեռագիրը, որում առկա են «Կիսախորան»¹⁷, «Ճակատազարդ»¹⁸ մանրանկարները: Ձեռագիրը լուսանցազարդ է՝ կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, վարդագույն, դարչնագույն բուսական նախշերով. այն զարդագիր է:

Զարդարանքի հարստությամբ, ստեղծագործական մեծ երևակայությամբ ու բովանդակալից զարդամոտիվներով են կերտված Ավետարանոցի «Մաշտոց Ձեռագր»-ը¹⁹ (1641 թ.), Քարահատի «Ավետարան» -ը²⁰ (1655 թ.), Համտիվնա գյուղի (Գանձակում) «Ավետարան»-ը²¹ (1671թ.), Պապճան գյուղի (Վերին Զագամ) «Կարմիր Ավետարան»-ը²² (1659թ.), Դաստավորի (նաև՝ Դաստիփիւր) «Մաշտոց»-ը²³ (1673-1674 թթ.), Մոս գյուղի (Օար գավառում) «Ավետարան»-ը²⁴ (1653-1654 թթ.): Առաջինում հետաքրքիր և ավանդական ներշնչանքով են պատկերված «Կիսախորան»²⁵, «Ճակատազարդ»²⁶, «Լուսանցազարդ»²⁷, «Տաճար»²⁸, երկրորդում՝ «Տերունական», «Ավետարանիչ», «Կիսախորան», երրորդում և չորրորդում՝ «Ավետարանիչ», «Կիսախորան», հինգերորդում՝ «Հիսուս Քրիստոս», «Կիսախորան», վեցերորդում՝ «Ավետարանիչ», «Կիսախորան», մանրանկարները: Ձեռագրերը լուսանցազարդ են:

Հարկ է նշել, որ հայկական ձեռագրերում կատարված բուսական զարդամոտիվներից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը, որոնց մասին լայն պատկերացում է տալիս Ա. Մնացականյանը: Օր.՝ «կենաց ծառը» զարդարվեստում երևան է եկել ամենաբազմազան ձևերով, հատկանշականն այդ ծառերի համար խիստ ոճավորված և ընդհանրացված մոտիվներն են, որտեղ պահպանված են լինում բույսի ամենազվիսավոր օրգանները: Դրանցից հատկապես ընդգծված են լինում հատիկի (սերմի), ծաղկի և վարսանդապտղային օրգանների գաղափարապատկերները²⁹: Ծառի խորհուրդը պտղաբերությունն է: Ա. Մնացականյանը, ինքնատիպ վերլուծելով ծաղկի խորհուրդը, նշում է. «Ծաղիկը, որպես աճման և պտղաբերության երևույթներն ընդհանրացնող հասկացություն, առօրյա կյանքում ևս հսկայական տարածում է գտել: Երբ երիտասարդները հասունացել են ամուսնա-

¹⁷ ՄՄ, ձեռ. N 2067, թ. 12ա:

¹⁸ Նույն տեղում, թ. 201ա, 367ա:

¹⁹ Նույն տեղում, ձեռ. N2404:

²⁰ Նույն տեղում, ձեռ. N3196:

²¹ Նույն տեղում, ձեռ. N 3541: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Եր., 1965, էջ 1037:

²² ՄՄ, ձեռ. 3542:

²³ Նույն տեղում, ձեռ. 3576:

²⁴ Նույն տեղում, ձեռ. N 3647:

²⁵ Նույն տեղում, ձեռ. N2404, թ. 6ա:

²⁶ ՄՄ, N2404, թ. 102բ, 127ա, 159ա:

²⁷ Նույն տեղում, թ. 45ա, 138ա:

²⁸ Նույն տեղում, թ. 201բ:

²⁹ Մանրամասն տե՛ս Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 2:

նալու համար, նրանց համեմատել են արդեն ծաղկելու պատրաստ բույսերի և ծառերի հետ. առանձին ուշադրության արժանի են, օրինակ, Համբարձման տոներին և հարսանիքների ժամանակ տեղի ունեցող մի շարք արարողությունները»³⁰:

Բերենք մեկ այլ օրինակ. գույգ ծաղիկների մոտիվին կենցաղում համապատասխանում է այն սովորությունը, որի համաձայն՝ հարսանիքի ժամանակ հարսին ու փեսային կոչում են «երկու ծաղիկ» և խմում նրանց աճման ու պտղաբերության կենացը:

Ընդգծենք, որ Արցախի վարպետները մանրանկարներում կիրառում են ավելի պարզ ձևեր՝ խուսափելով բարդ ձևաչափերից: Այս սկզբունքը պահպանվել է նաև գունային ֆոններում. գունաշարն ամփոփում է գորշ գույներ: Հիմնականում մանրանկարներում օգտագործվել էին չորս կամ հինգ գույներ՝ կարմիր, կանաչ, կապույտ, մանուշակագույն, դեղին (ի դեպ, նշենք, որ այդ գույների սկզբունքայնությունը եկել էր միջնադարից): Կերպարների դեկորատիվ-գարդային ձևերը հյուսագարդ լայն շրջանակների հետ միավորված են մեկ ամբողջականությամբ: Չարդանկարներում պահպանվում են հայկական գարդարվեստի ավանդական ձևերն ու եղանակները:

Հրավարող Հակոբյանն Արցախի մանրանկարչության մասին իրավացիորեն նշում է. «Արցախի մանրանկարների ոճը ընդհանուր գծերով կապված է տեղի ազգային արվեստի ավանդույթների հետ: Բազմաթիվ գույափոփոխումներ կարելի է տանել տվյալ ժամանակաշրջանում ստեղծված որմնանկարների, բարձրաքանդակների, ինչպես նաև եկեղեցիների ու վանքերի դեկորատիվ հարդարանքների միջև»³¹:

Մեծ հետաքրքրություն ունեն ավետարանիչների դիմանկարներն ու հոգևոր թեմատիկայով մանրանկարները: Այս տեսակետից հատկանշական են N 3856 (Քարատակ, 1669 թ.), N 3994 (Հարցահանգիստ կամ Հերցանկիս, 1683թ.) ձեռագրերը, որոնցում աչքի են ընկնում չորս ավետարանիչների դիմանկարները: Նրանց դեմքերն առանձնանում են ներքին ոգեղեն արտահայտչականության խորությամբ: Հետադարձությամբ գունային երանգներով են պատկերված «Խորան» և «Կիսախորան» մանրանկարները: Ձեռագրերի թերթերը պարուրված են տարբեր բովանդակությամբ գարդապատկերներով: Այս տարբերակներից է N 10660 ձեռագիրը (Քարահատ, 1691), որի՝ 1բ, 65բ, 106բ, 183բ էջերում պատկերված է «Ավետարանիչ» մանրանկարը:

Տարբեր իմաստներ խորհրդանշող գարդապատկերներ են պատկերված N 4053 (Օտրա երկիր, 1663 թ.), N 4176 (Վարանդա գավառի Լիզներ գյուղ, 1652թ.) ձեռագրերում՝ «Ավետարան»-ներում:

Հոգևոր թեմատիկայով մանրանկարներ ունեցող ձեռագրերից է N 5636 (Քարահատ, 1676 թ.), որում ուշագրավ են «Եվսեբեոսի եղբորն ուղղված խոսքը»³², «Ղուկասի, Հովհաննեսի», «Մատթեոսի կանոնները»³³, «լուսանցագարդ»³⁴, «Ավե-

³⁰ Մնացականյան Ա., Հայկական գարդարվեստ, էջ 10:

³¹ Հակոբյան Հ., Արցախի մանրանկարչական արվեստը, Եր., 2014, էջ 18:

³² ՄՄ, ձեռ. N 5636, թ. 1բ:

³³ Նույն տեղում, թ. 4ա, 5ա, 6բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա:

տարանիչ»³⁵, «Մբ Մարկոս ավետարանիչ»³⁶, «ռամիկ (գյուղացի)՝ մուրճը ձեռքին, դիմացը՝ թռչուն»³⁷, «Տաճար»³⁸, «Մբ Ղուկաս ավետարանիչ»³⁹, «առաքյալ խաչը ձեռքին»⁴⁰, «Մբ Մարիամ»⁴¹, «Խորան»⁴², «Կիսախորան»⁴³ մանրանկարները: Ձեռագրում՝ գեղեցիկ, գունային տարբեր երանգներով ներկայացվում են մի շարք զարդապատկերներ՝ թռչուն⁴⁴, զարդանախշ⁴⁵, ծաղիկ⁴⁶, մոմակալ⁴⁷, աստղ կամ արև⁴⁸, զարդանախշ՝ մեջն առկա է երկու փոքր սև խաչ, կողքին՝ թռչուն⁴⁹, ծաղկեփունջ⁵⁰, տերևներ⁵¹, ծաղիկ՝ դիմացը թռչուն⁵², կենաց ծառ⁵³, եկեղեցի՝ հենված պատվանդանի վրա⁵⁴, խաչ՝ ներկված կարմիր գույնով՝ պատվանդանի վրա, կողքին՝ թռչուն⁵⁵, ավետարանիչ⁵⁶, զարդանախշ՝ վերնի հատվածում կապույտ ներկված խաչ՝ դիմացը՝ թռչուն⁵⁷, ջրջանաձև ծաղիկ⁵⁸, տաճար⁵⁹, ծաղիկ⁶⁰, ծաղկեփունջ՝ վրան փոքրիկ թռչուն⁶¹ և այլն:

Ավետարանիչ, կիսախորան, լուսանցազարդ մանրանկարների օրինակներ են N 4228 (Գյուլստան, 1681թ.), N 5072 (Շաստախ, 1661 թ.), N 6705 (Ղարամուրատի Հարանց վանք, 1679թ.), N 6746 (Դաստիփիւր, 1671-1673թթ.), N 6771 (Գան-

³⁴ ՄՄ, ձեռ. N 5636, թ. 18բ, 19բ, 20բ, 21ա, 23ա, 24ա, 25բ, 29ա, 38ա, 43ա, 45ա, 54բ և այլն:

³⁵ Նույն տեղում, թ. 16բ, 154բ, 173ա:

³⁶ Նույն տեղում, թ. 101բ:

³⁷ Նույն տեղում, թ. 106բ:

³⁸ Նույն տեղում, թ. 142բ:

³⁹ Նույն տեղում, թ. 159բ:

⁴⁰ Նույն տեղում, թ. 161բ:

⁴¹ Նույն տեղում, թ. 162ա:

⁴² Նույն տեղում, թ. 4բ, 5ա, 6բ, 8ա, 9բ, 10ա:

⁴³ Նույն տեղում, թ. 3ա, 102ա:

⁴⁴ Նույն տեղում, թ. 21ա, 56բ, 67բ, 76ա, 105բ, 111բ, 130բ, 147բ, 165բ, 198բ, 210ա:

⁴⁵ Նույն տեղում, թ. 22բ, 26բ, 29ա, 37ա, 39ա, 39բ, 41ա, 43ա, 45ա, 46բ, 48ա, 49ա, 51ա, 75ա, 88ա, 90ա, 92ա:

⁴⁶ Նույն տեղում, թ. 23ա:

⁴⁷ Նույն տեղում, թ. 31 ա:

⁴⁸ Նույն տեղում, թ. 32ա:

⁴⁹ Նույն տեղում, թ. 35բ:

⁵⁰ Նույն տեղում, թ. 38ա, 121ա, 122ա, 146բ:

⁵¹ Նույն տեղում, թ. 54բ, 74ա:

⁵² Նույն տեղում, թ. 60ա:

⁵³ Նույն տեղում, թ. 71ա, 136ա, 137բ:

⁵⁴ Նույն տեղում, թ. 81ա:

⁵⁵ Նույն տեղում, թ. 93բ:

⁵⁶ Նույն տեղում, թ. 98ա:

⁵⁷ Նույն տեղում, թ. 112բ:

⁵⁸ Նույն տեղում, թ. 116բ:

⁵⁹ Նույն տեղում, թ. 142բ:

⁶⁰ Նույն տեղում, թ. 183 ա, 201ա, 203 ա:

⁶¹ Նույն տեղում, թ. 194բ:

ձակի Գուլյար գյուղ, 1667թ.), N 7687 (Պապճան գյուղ, 1661թ.), N 7980 (Գանձակ, 1639թ.), N 8549 (Պապաջան, 1668 թ.), N 8678 (Չարեքա վանք, 1662,1715 թթ.), N 9448 (Քարահաս, 1665թ.) ձեռագրերը:

Զարդանկարչության ուշագրավ նմուշ են N 7606 (Խզնավար, 1652 թ.), N 8504 (Գանձասար, 1660թ., 1664 թ.) ձեռագրերը, որոնց մանրանկարներն աչքի են ընկնում կիսախորանների կոթողային ինքնատիպ կառուցվածքով, դեկորատիվ նախշերի հստակ գծագրված տարրերով:

Իր բազմաբովանդակ մանրանկարներով աչքի է ընկնում N 7840 (Խանածած⁶², 1693 թ.) ձեռագիրը, որոնցում հատկանշական են՝ «Ավետում»⁶³, «Մուռն»⁶⁴, «Մուռք Երուսաղեմ»⁶⁵, «Խորհրդավոր ընթրիք»⁶⁶, «Խաչելություն»⁶⁷, «Հարություն»⁶⁸, «Հիսուս Քրիստոս»⁶⁹, «Տերունական»⁷⁰, «Երևումն հրեշտակի»⁷¹, «Խորան»⁷², «Ավետարանիչ»⁷³, «Անվանաթերթ»⁷⁴, «լուսանցազարդ»⁷⁵ և այլն: Ձեռագրի զարդանկարչությունը բազմազան է: Հետաքրքիր գունային (կարմիր, կապույտ, նարնջագույն, կանաչ) երանգներ ունեն 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 26ա, 27բ, 28ա էջերում առկա խորաններում պատկերված թռչունների տարբեր տեսակների (սիրամարգ, աղավնի, արծիվ), կենաց ծառի, կենդանիների (ատույծ, կապիկ) զարդամոտիվները: 67բ, 94բ, 105բ, 113բ, 124ա, 131ա, 139բ, 141բ, 143բ, 154բ, 159բ, 206ա և այլ էջերում պատկերված ծաղկազարդերի ծաղկաթերթիկներն իրենց վրա կրում են տերևի գաղափարանշանը՝ կազմելով ավելի բարդ հասկացություն: Այս տեսակետից առանձնապես ուշագրավ են այն ծաղկազարդերը, որոնք միաժամանակ ցույց են տալիս բողբոջների, ճյուղերի, պտուղների, հատիկների և բուսական այլ օրգանների գաղափարաձևերը: Առկա են կենաց ծառ⁷⁶, տերև⁷⁷, սիրամարգ⁷⁸, խաչ⁷⁹, տա-

⁶² Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Եր., 1970, էջ 621:

⁶³ ՄՄ, ձեռ. N 7840, թ. 3բ:

⁶⁴ Նույն տեղում, թ. 4ա:

⁶⁵ Նույն տեղում, թ. 9բ:

⁶⁶ Նույն տեղում, թ. 10ա:

⁶⁷ Նույն տեղում, թ. 13բ:

⁶⁸ Նույն տեղում, թ. 14ա:

⁶⁹ Նույն տեղում, թ. 15բ:

⁷⁰ Նույն տեղում, 16ա:

⁷¹ Նույն տեղում, թ. 17բ:

⁷² Նույն տեղում, թ. 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 26ա, 27բ, 28ա:

⁷³ Նույն տեղում, թ. 32բ, 112ա, 113 ա, 117բ, 172բ, 265բ:

⁷⁴ Նույն տեղում, թ. 33ա, 118ա, 119ա, 173ա, 266ա:

⁷⁵ Նույն տեղում, թ. 34բ, 35բ, 36բ, 37բ, 40ա, 41բ, 42բ, 45բ, 47ա, 50ա, 51բ, 53բ, 55ա, 120բ, 121բ և այլն:

⁷⁶ ՄՄ, ձեռ. N 7840, թ. 89ա:

⁷⁷ Նույն տեղում, թ. 90բ, 91ա:

⁷⁸ Նույն տեղում, թ. 91բ, 152բ, 158ա:

⁷⁹ Նույն տեղում, թ. 97ա, 327ա:

ճար⁸⁰, աղավնի⁸¹, զանգակատուն⁸² և այլ զարդամոտիվներ: Հավելենք, որ կենդանակերպի նկարագարդն առկա է եղել դեռևս վաղ միջնադարում⁸³:

Հիսուս Քրիստոսի ծննդյան և կյանքի որոշ դրվագներ են ներկայացված N 8965 (Քարահատ, 1675թ.) ձեռագրի մանրանկարներում՝ «Ավետում», «Մկրտություն»⁸⁴, «Հիսուսին տանջելը և խաչին բարձրացնելու պահը»⁸⁵, «Խաչելություն»⁸⁶ և այլն: Հետաքրքիր գունային ֆոներով պատկերված են «Տերունական», «Ավետարանիչ», «Իգնատիոս վարդապետի», «Գանձասարի Սիմեոն կաթողիկոսի», «Վերջին դատաստան», «Անվանաթերթ Մատթեոսի», «Խորան», «Կիսախորան» մանրանկարները: Ձեռագիրը լուսանցագարդ է՝ բույսերի և կենդանիների բազմաթիվ նկարներով⁸⁷: Նման թեմատիկայով օժտված է ձեռ. N 10743 (Քարահատ, 1662), որում պատկերված են «Հիսուս բազմած զահին»⁸⁸, «Ծնունդ»⁸⁹, «Կիսախորան»⁹⁰, «Ճակատագարդ»⁹¹: Այն լուսանցագարդ է:

N 9043 (Գյուլիստան, 1689 թ.), N 10472 (Գյուլիստան, 1686 թ.), N10863 (Պարտավ, 1671թ.) ձեռագրերը լուսանցագարդ են, իսկ N10882 (Շատախ, 1644 թ.) ձեռագիրը՝ ճակատագարդ⁹²: Նախշերի տեսակներն ունեն վառ արտահայտված ազգային բնույթ:

N 10966 ձեռագրում (Հարցանկիս, 1669թ.) ինքնատիպությամբ առանձնանում են «Մարկոս»⁹³, «Հովհաննես»⁹⁴, «Կիսախորան»⁹⁵, իսկ N 11060 ձեռագրում (Հարցանկիս, 1666թ.)՝ «Խորան»⁹⁶, «Կիսախորան»⁹⁷ մանրանկարները: Զարդանկարներն արտացոլված են լուսանցքներում:

⁸⁰ Նույն տեղում, թ. 155ա, 247ա:

⁸¹ Նույն տեղում, թ. 234ա:

⁸² Նույն տեղում, թ. 239բ:

⁸³ Մանրամասն տե՛ս Հայկական մանրանկարչություն (կենդանագարդեր), Եր., 1996:

⁸⁴ Նույն տեղում, ձեռ. N 8965, թ. 4ա:

⁸⁵ Նույն տեղում, թ. 5ա:

⁸⁶ Նույն տեղում, թ. 9ա:

⁸⁷ Նույն տեղում, թ. 30բ, 31ա, 31բ, բ, 32բ, 34ա, 35ա, 36ա, 36բ, 37բ, 39ա, 40ա, 43ա, 45ա, 46բ, 50ա, 52ա, 53ա, 54բ, 56բ, 58բ, 60ա, 61ա, 65 բ, 67բ, :

⁸⁸ Նույն տեղում, ձեռ. 10743, թ. 3բ:

⁸⁹ Նույն տեղում, թ. 113 բ:

⁹⁰ Նույն տեղում, թ. 4ա, 114ա, 114բ, 173ա:

⁹¹ Նույն տեղում, թ. 12բ, 27ա, 47ա, 100ա, 144բ, 250ա:

⁹² Նույն տեղում, ձեռ. 10882, 2 ա, 142բ:

⁹³ Նույն տեղում, ձեռ. N10966, թ. 76բ:

⁹⁴ Նույն տեղում, թ. 221բ:

⁹⁵ Նույն տեղում, թ. 77ա, 131ա, 222ա:

⁹⁶ ՄՄ, ձեռ. N11060, թ. 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ, 314ա, 315բ, 316բ, 317բ-318ա:

⁹⁷ Նույն տեղում, թ. 10ա, 97ա, 154ա, 243ա:

МИНИАТЮРА И ОРНАМЕНТАЦИЯ В АРЦАХЕ В 1639-1700 гг.

___ *Резюме* ______ *М. Арутюнян* ___

Несмотря на трудный исторический период, миниатюрная живопись и украшения живописи продолжали развиваться в Арцахе и в 1639-1700гг. Они в основном создавались в рукописях, которые хранятся в Матенадаране.

Тематика миниатюрного искусства была разнообразной. Среди них были замечательные сюжетные миниатюры и портреты святых: “Благовещение”, “Рождение”, “Крещение”, “12 апостолов”, “Распятие”, “Евангелист”, “Титульная страница Матфея”, “Дева Мария”, “Алтарь”, “Иисус Христос” и т.д.

Формы декоративного искусства были отражены в одежде, домах, инструментах, человеческих телах, книгах, а также в различных исторических и архитектурных памятниках, *могильных* камнях.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Հարությունյան Մարինե Գրիգորի - պ.գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
E-mail: marina-arutunyan@mail.ru*

«Գիտական աշխատություններ» ՀՀ ԳԱԱ
 Շիրակի հայագիտական
 հետազոտությունների կենտրոն:
 խմբ.՝ Ս.Հայրապետյան, -Գյումրի:
 2016, հատոր XIX, 320 էջ:



Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XIX հատորը՝ 20 տպագրական մամուլ ծավալով, պրոֆ. Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Հատորում տեղ են գտել 38 գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ՝ նվիրված հայագիտության տարբեր ոլորտներին:

Հնդեվրոպական շումերական առասպելաբանական փոխառնությունների պարզաբանման հարցերում առանձնահատուկ դեր է վերապահված Մեծ Հայքի Բարձր Հայքաշխարհին: Ս.Պետրոսյանի «Հնդեվրոպական և շումերական Հողմի աստծու բնօրրանը» հոդվածում հայկական և միջագետքյան առասպելաբանական նյութի տիպաբանական և լեզվաբանական վերլուծությունների հիման վրա ցույց է տրված, որ շումերաքաղական առասպելաբանության առանձին

կերպարների և նրանց հարակից նյութի խորքային շերտերի բացահայտումն ու իմաստավորումն անհնար է մինչև վերջ իրականացնել՝ առանց հաշվի առնելու հասկացությունների այն զուգորդումներն ու համադրումները, որոնք ծնվել են Հայկական լեռնաշխարհում, հնդեվրոպական ընդհանրության ակունքներում և արտացոլվել հայկական առասպելաբանաստեղծական պատկերացումներում և հայոց լեզվում:

Հեղինակի մյուս՝ «Շիրակում և Վանանում օձի և օձամանուկի պաշտամունքի շուրջ» հոդվածում /համահեղինակ՝ Լ.Պետրոսյան/, անդրադարձալով Էթիոնի երկրի բնակչության հնդեվրոպական ծագումն հաստատող պատմական ու լեզվաբանական բնույթի փաստերին և նկատի առնելով այն իրողությունը, որ Հնադարյան Շիրակն ու Վանանը ընդգրկված են եղել այս նույն մշակութային տարածքում, քննվում են Ախուրյանի ավազանի բնակչության օձապաշտության կարևոր նյութերն ու վարկածները:

Հայոց հնագույն հավատալիքներին է առնչվում նաև Լ.Եգանյանի հոդվածը, որի քննության առարկան Մեծ Սեպասարի մ.թ.ա. XXVIII-XXIV դդ. մի կառույցի մեջ՝ կրկնակի սալահատակի տակ բացված հորի բերանին գտնված անթուրծ կավից կուռքն է: Ըստ հեղինակային վարկածի՝ անթուրծ կավից կուռքը կնոջ խիստ սիմվոլիկ ձևով և յուրօրինակ նախշագարդմամբ խորհրդանշում է բնության պտղաբերող ուժերի և մայր աստվածուհու պաշտամունքը, ներկայացնում է մեռնող և վերածնվող բնության մարմնավորում, ստորերկրայք իջած, հողից ուժ առնող ու վերադարձող պտղաբերության անտեսանելի աստվածությունը:

Հայոց պաշտպանական կառույցների դասակարգումը, որը դիտարկվում է Հ. Խաչատրյանի հոդվածում, հնարավորություն է տալիս պնդելու, որ պաշտպանական ամրություններից ամենատարածվածը ամրոցներն

են: Վերջիններին մասին հիշատակությունները միջնադարյան պատմագրության մեջ ամփոփել է Բ. Վարդանյանը:

Ի. Ավագյանի «Պատահական գտածոներ Շիրակի Սպանդարյան գյուղի դամբարանադաշտից» հաղորդումը նվիրված է Բ. Խ. X-VII դդ. վերաբերող հնագիտական նյութերի նկարագրությանն ու թվագրմանը:

Հատորում մեծ տեղ են գրավում պատմագիտական հոդվածները՝ անդրադառնալով հայոց պատմության և մասնավորապես պատմական Շիրակի տարբեր ժամանակաշրջանների, խնդրահարույց դրվագների պարզաբանմանն ու աղբյուրագիտական հիմնավորմանը: Դրանց թվում են Ա. Մանուչարյանի «Եկեղեցու ներսում արատավոր երևույթների դեմ պայքարի արտացոլումը Շիրակի վիմագրերում», Ա. Հարությունյանի «Հոռոմ գյուղը և Մբ Հոփսիմե նորահայտ արձանագրությունը», Հ. Մուրադյանի «Շորագյալի գավառակի /Արևմտյան Շիրակ/ վարչաժողովրդագրական նկարագիրը 1830-1870թթ.», Հ. Մելիք-Ադամյանի «XX դ. գերմանացի ճանապարհորդների բնագիտական և մշակութաբանական ուսումնասիրությունները Շիրակում», Ս. Հասան-Ջալալյանի /«Արցախ-Խաչենի գահերեց իշխան Ջալալ IV Հասան-Ջալալյանի հանդիպումը Իրանի Շահ Աբաս I-ի հետ», Ա. Ակոպովի «Տայքի պատկանելության հարցը վրացագիտության մեջ» հոդվածները:

«Գիտական ժողովածուներ» պարբերականի հատորներում պարբերաբար ներկայացվել են հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրներ արծարծող այլազգի գիտնականների հոդվածներ: Սույն հատորում ընդգրկված է Ա. Կանդորի «Հայերը չերքեզական հեծելազորային գնդի մարտական տարեգրության մեջ /1914-1916 թթ./», հոդվածը, որը նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմում չերքեզական հեծելազորային գնդում հայերի մասնակցության խնդրին: Աշխատանքում լայնորեն օգտագործված են հյուսիսկովկասյան արխիվների նորահայտ նյութեր, ինչպես նաև անձնական բազմաբնույթ գրական աղ-

բյուրներ և ռուս հեղինակների հետազոտություններ:

Հոդվածների մի զգալի մասը՝ որպես գիտական զեկուցումներ, կայացվել է 2016թ. ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնում անցկացված «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» միջազգային 9-րդ գիտաժողովի աշխատանքների ընթացքում: Դրանց մեջ զգալի են Ալեքսանդրապոլի պատմությանն ու քաղաքային մշակույթին նվիրվածները. ««Շրբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի 1914-1916 թթ. գործունեության լուսաբանումն արևելյան մամուլի էջերում» /Ա. Հայրապետյան/, «1918-1920 թթ. Ալեքսանդրապոլը ԱՄՆ Պետդեպարտամենտի և Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում» /Գ. Մախմուրյան/, «Ալեքսանդրապոլի հասարակական միտքը հայոց պետականակերտման գաղափարախոսության համատեքստում» /Գ. Այվազյան/, «Երեխաների սոցիալականացման ձևերն ու եղանակները Ալեքսանդրապոլում» /Գ. Բազեյան/, «Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը աշուղ Խայաթի հուշերում» /Հ. Հարությունյան/, «Գյումրու Մբ ՅոթՎերք և Մբ Նշան եկեղեցիների արտաքին և ներքին հարդարանքը» /Բ. Վարդանյան/:

Հատորում կարելուք տեղ են զբաղեցրել նաև Ալեքսանդրապոլի մշակութային ավանդույթների ժառանգորդ Լենինականի քաղաքային կյանքին, ժողովրդագրությանն ու այլ խնդիրների նվիրված հրապարակումները: Ա. Բոյաջյանը, Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի օրինակով անդրադարձել է XX դ. առաջին քառորդին ՀՍԽՀ բնակչության սոցիալական կազմի փոփոխություններին՝ եզրահանգելով, որ բնակչության սոցիալական կազմի և իրադրության արմատական տեղաշարժերով պայմանավորված առաջին հերթին հասարակարգային և տնտեսահարաբերությունների փոփոխություններով, որոնք կապիտալիստական կարճատև հարաբերությունները փոխարինեցին նորով՝ սոցիալիստականով:

Ալեքսանդրապոլի գավառում հեղկոմներից

խորհուրդների անցման շրջանում Խորհրդային պետականաշինության հիմնախնդիրներն են արժարժվել Կ.Ալեքսանյանի հոդվածում: Թ.Ադանյանը կատարել է 1926թ. Լենինականի և 1988թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծություն՝ փորձելով հասկանալ նույն խնդրի լուծմանն ուղղված ռազմավարությունների, գործընթացների ու կոնկրետ գործողությունների ընդհանրություններն ու տարբերությունները երկու երկրաշարժերից հետո: Կ.Սահակյանի և Ռ.Հովհաննիսյանի ուսումնասիրության առանցքում Գյումրին է՝ որպես ազգային ինքնության ու արժեքների կրող ստեղծարար քաղաք: Հ.Պիկիչյանն ընդհանրացրել է 20-րդ դարի 80-ական թվականներին Շիրակի երաժշտական կենցաղում տեղ գտած երևույթները՝ դիտարկելով ժողովրդական և արհեստավարժ երաժիշտների, նվագարանագործ վարպետների գործունեության հիմնական ոլորտները, ինչպես նաև հանրության ոչ բոլոր շերտերի համար բաց, այսպես կոչված, ընդհատակում գործող, մարզինալ երաժշտական միջավայրերի, կատարողների և երգացանկի նկարագիրը՝ համեմատելով երևանյան իրականության հետ: Գյումրու գերեզմանատների հուշարձանների տիպարանական և գեղարվեստական առանձնահատկություններն են ներկայացված Ա.Հայկազուն-Գրիգորյանի հոդվածում:

Հայ ազգագրության, բանահյուսության, արվեստի, թանգարանագիտության մասնահատուկ խնդիրներ են արժարժել իրենց հրապարակումներում Ա.Մալոյանը /«Դիտարկումներ ուժացած հայերի ևս մեկ էթնոգրականական խմբի մասին», Հ.Գալստյանը /«Թպղան հայ ժողովրդական հավատալիքներում և սնահավատական գրույցներում», Մ.Խենյանը / «Խորհրդատու և նվիրատու թռչունը Կարսի հրաշապատում հեքիաթներում», Է.Խենյանը /«Անեծք-սպառնալիքների և օրհնանք-բարեմաղթությունների կիրառումը Կարսի հեքիաթներում», Լ.Գևորգյանը /«Ազգագրության բացօթյա թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները»/:

Հայ լեզվաբանության արդի խնդիրներ են արժարժում Մ.Խաչատրյանի, Ս.Եղիազարյանի, Ա.Ավագյանի, Հ.Մատիկյանի, Ա.Հովհաննիսյանի հրապարակումները:

Հատորի հրապարակումների ցանկում առանձնահատուկ տեղ է գրավում Ա.Տազեյանի հաղորդումը՝ նվիրված Բեյրութում 1970 թվականից հրատարակվող «Հայկազեան հայագիտական հանդես»-ի առաքելության, ներկա հիմնախնդիրներին և ապագա միտումներին:

Հատորը եզրափակվում է «Գիտական լրատու» խորագրի հարուստ տեղեկատվությամբ, նաև՝ հրատարակված բոլոր նյութերի անգլերեն ամփոփումներով:

Լույս տեսավ Կենտրոնի գիտաշխատող պատմ. գիտ. թեկնածու Ինգա Ավագյանի «Հիշողություններ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը», որը հեղինակի՝ «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի հինգերորդ գիրքն է:



Ինչպես և նախորդ չորսը, այն ևս ստեղծվել է իրական դեպքերի և փաստերի հենքի վրա: Գրքում մշակվել, պատմական փաստերին համադրվել են թե՛ Արևմտյան

թե՛ Արևելյան Հայաստանում 1915-1920 թթ. Հայոց եղեռնը վերապրած երզնկացի 16-ամյա պատանու՝ կոտորածից մազապուրծ Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հիշողությունները, որոնք ունեն պատմական, փաստագրական, աղբյուրագիտական և գեղարվեստական արժեք:

Գիրքը հազեցած է գիտական մեկնաբանական ծանոթագրություններով, պատմական քարտեզներով, լուսանկարներով, ինչպես նաև նրա խոսքում օգտագործված օտար բառերի և արտահայտությունների բառարանով:

Գիրքը հասցեագրված է Մեծ եղեռնի թեմայով զբաղվող գիտական հաստատություններին, պատմաբաններին, աղբյուրագետներին, ազգագրագետներին, բանասերներին, ժողովրդագրությամբ զբաղվողներին և ընթերցող լայն շրջանակներին:

Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Հ ն դ վ ա ծ ն ե ր

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ

Առած-ասացվածքները, երդումները և դարձվածները որպես կայուն բանաձևերի ատաղձ Կարսի հեքիաթներում6

Աշոտ Հայկազուն ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խաչատակի աստիճանաձև հորինվածքների խորհրդաբանական ստուգաբանությունը, երկիր-երկինք բնափիլիսոփայական ընկալումների համատեքստում16

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ներգալ – Ս. GUR առասպելաբանական կերպարի հենքի մասին28

Դավիթ ԳԱՍՊԱՆՅԱՆ

Հայկական վերածնունդ (ժամանակը և առանձնահատկությունները)41

Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ

Ազգային-ազատագրական պայքարի և հայկական պետականության վերականգնման գաղափարները Ա.Ահարոնյանի երկերում62

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ

Ծննդավայրի և մանկության պատկերը Հովհ. Գրիգորյանի «Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում70

Գարիկ ՄԿՐՏՉՅԱՆ

Մշո և Կարնո բարբառների տիպաբանությունը (ընդհանրություններ և տարբերություններ)80

Մարգուշ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Նորակազմ բայական կայուն կապակցություններ «Ազգ» շաբաթաթերթում (2015-2016 թվականներ)89

Հովիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ, Վարդան ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մակդիրը բանաստեղծի ստեղծագործական տեսադաշտում96

Քրիստինե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Փոխաբերությունը Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում101

Շուշանիկ ՏԵՐ-ԱԴԱՍՅԱՆ

Ըղձական եղանակի իմաստային և գործառական առանձնահատկությունները գերմաներենում.....107

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Օրոնտես-Երվանդի ռազմական և վարչական միջոցառումները Հայաստանի հյուսիս-արևմուտքում113

Տաթևիկ ՄԱՐԳՍՅԱՆ

Անեցիների գաղթը Դրիմ և դրա թվագրումը121

Տատյանա ՆԵՎՍԿԱՅԱ, Աշխեն ՀԱԿՈՒՅԱՆ

Հայերի դերը Հյուսիսային Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացման գործում XVIII դ.-XX դարասկզբին.....132

Հասմիկ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը՝ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (1773-1800)139

Արկաղի ԱԿՈՊՈՎ

XIX դարի II կեսի ռուս-թուրքական պատերազմները և Տայքը146

Աննա ՇՊՈՐՏ

Խարկով հայկական համայնքը (XIX դ. երկրորդ կես – XXI դ. սկիզբ).

Էթնոժողովրդագրական բնութագիր155

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հայ-վրացական քաղաքական հարաբերությունների լուսաբանումը

Մարտիրոս Հարությունյանի նամակներում (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. ապրիլ)162

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից (*Արամայիս Ազնավուրյան*)170

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Խորհուրդների առաջին ընտրություններն Ալեքսանդրապոլի գավառում

1921թ. դեկտեմբերին183

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

Ախուրյան գետի ափամերձ կիկլոպյան կառույցները190

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ախուրյանի ավազանի միջնադարյան ամրաշինական կառույցները206

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշուղական ավանդույթը Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթում216

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

«Նարեկ»-ի մեթոդաբանությունը, տեսագործական հիմքերը.....224

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

Օրորոցայինը և աղոթքը՝ որպես քնամուտի տեքստեր անգլերենում և հայերենում232

Աննա ԱՍՈՅԱՆ

Հուշային թանգարանների առանձնահատկությունները՝

Գյումրու և Երևանի թանգարանների օրինակով240

Հրապարակումներ և հաղորդումներ

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

ԱՊՀ և Մերձբալթյան հանրապետությունների բնակչության էթնիկական կազմի

շարժընթացը (*XX դարի վերջ-XXI դարի սկիզբ*)247

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

Արխիվային փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գրադարան-ընթերցարանների մասին.....256

Մուսաննա ԱՂԱՍՅԱՆ

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի անտիպ ուսումնասիրության մասին270

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագծից278

Արաքս Մարգարյան

Արվեստի նվիրյալը. գեղանկարիչ Սերգեյ Միրզոյան287

Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ախուրյան գետի վերնահովտի ամրոցները291

Մարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մանրանկարչությունն ու զարդանկարչությունը Արցախում 1639-1700 թթ.297

Լրատու.....305

Ամփոփում (անգլերեն).....309